

ՊՈՂՈՍ ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՉԸ**  
**ԵՎ ՌՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ**

19-րդ դարի

90-ական թվականներին

ԵՐԵՎԱՆ 2003

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԱՄԻՈՆ

9(47.925)  
Ղ-50

ՊՈՂՈՍ ՍԻՍՈՆՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ**

ԵՎ ՌՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏԵԸ

19-րդ դարի

90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

4686

Մեծարգո Մ. Կ. Զաւարուբե  
 ախրով ու անկողնի խնամքով:  
 շնորհակալ եմ ձեր ջանքերով իմ  
 Կարգմանը մեքանս ըստ  
 ու յարկերի իմ ինքնակամակարգման  
 անկողնի խնամքով խնամքով:  
 Մ. Արմաշյան

23.09.2003 թ.



ԵՐԵՎԱՆ 2003

Երաշխավորվել է Խ. Արուստյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի կողմից

ՀՏԴ 941(479.25):947  
ԳՄԴ 63.3(2Հ)52+63.3(2Ո)  
Ս 504

Գրքի խմբագիր՝  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Վալտեր Արտաշեսի Դիլոյան

Սիմոնյան Պ.  
Ս 504 Հայկական հարցը և ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին.— Եր.: Ձանգակ-97, 2003.— 448 էջ:

Մենագրությունը նվիրված է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վիլայեթներում թուրքական կառավարության սանձազերծած հայկական զանգվածային կոտորածների նկատմամբ ռուս հասարակական-քաղաքական տարբեր խմբավորումների դիրքորոշման լուսաբանմանը:

Հեղինակը փորձ է կատարել ցույց տալու, որ հակառակ Մերձավոր Արևելքում իր ռազմաքաղաքական շահերով ղեկավարվող ցարիզմի, որը այս փուլում որդեգրել էր ոչ հայամետ ընթացք, և որին հետևում էին պահպանողական ու հետադեմ ուժերը, ռուս առաջադեմ մտավորականները, սոցիալական լայն շերտերը, ծավալելով մարդասիրական ակտիվ գործունեություն, օգնեցին երկրում հայամասսո հասարակական կարծիքի ձևավորմանը: Նյութական ու բարոյական օգնություն ցույց տալով՝ սատարեցին ու անխուսափելի կործանումից փրկեցին կոտորածներից մազապուրծ տասնյակ հազարավոր արևմտահայ մերկ ու սովալլուկ գաղթականներին:

Մենագրությունը կհետաքրքրի ինչպես մասնագետներին, այնպես էլ ընթերցող լայն շրջաններին:

Ս 0503020913 2003  
0003(01)-2003 ԳՄԴ 63.3(2Հ)52+63.3(2Ո)

ISBN 99930-2-727-8

© Սիմոնյան Պողոս  
© «Ձանգակ-97» հրատարակչություն

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Թուրքական հոռի վարչակարգի արյունոտ ճիրաններում արյունաքամ արևմտահայության համար 19-րդ դարի վերջին երկու տասնամյակները եղան ծանր փորձությունների, օրհասական տագնապներով լեցուն անհույս սպասումների, ազատության բուռն ձգտումների ու հերոսական մաքառումների տարիներ:

Այդ ընթացքում առավել քան երբևէ, հայ ժողովրդի վրա ավելի ծանրացավ սուլթանական բռնատիրության լուծը՝ իր ահարկու սարսափներով ու զանգվածային կոտորածներով:

Թուրքական իշխանությունները, Արևմտյան Հայաստանի բռնազավթման ժամանակներից սկսած, հայ ժողովրդի նկատմամբ գործադրել են ազգային ու կրոնական հալածանքի, սոցիալական բիրտ ու դաժան շահագործման, բռնի դավանափոխության ու հարկադրական տեղահանումներով հայի հայրենիքը հայաթափելու զանգվածային բռնարարքներով ուղեկցվող քաղաքականություն: Անլուր շահագործման ու հարստահարության ենթարկվող արևմտահայության համար ազգային արժանապատվության ոտնահարումն ու նվաստացումը, կյանքի ու գույքի անապահովությունը, բռնի ծուլումն ու տեղահանությունները դարձել էին սովորական երևույթ: ԵՎ այդ ամենը առավել դաժանությամբ արտահայտվեցին, երբ Աբդուլ Համիդ 2-րդը ազգային ազատագրական շարժումների և ներքին սոցիալական ցնցումների ու տերությունների արտաքին միջամտության հետևանքով թուլացած Օսմանյան կայսրության վերակենդանացման և իր երերացող գահի ամրապնդման նպատակով սկսեց իրար դեմ լարել թուրքահպատակ ժողովուրդներին, բուռն թշնամանքով հակադրել միմյանց:

Ձինելով մահմեդական ազգաբնակչությանը և բորբոքելով՝ նրա կրոնական մոլեռանդությունը ուղղեց քրիստոնյա հպատակների, մասնավորապես հայ ժողովրդի դեմ: Առավել ծանրացավ ու ահագնացավ միմյուս այդ էլ օրհասական կացության մատնված արևմտահայության վիճակը:

Օսմանյան կայսրության հզորությունը վերականգնելու նպատակով Աբդուլ Չամիդ 2-րդը աշխատում էր թուրքալեզու և թուրքացեղ ժողովուրդների միավորումով ստեղծել համաթուրքական պետություն: Նրա այդ նպատակի իրականացման ճանապարհին, ռուսական կայսրության և թուրքապատակ մահմեդական ժողովուրդների միավորման սահմանագծում գտնվում էր Չայաստանը, հայ ժողովուրդը: Վերջինիս դիտելով իր մտադրությունների իրագործման ճանապարհին որպես վճռական խոչընդոտ, ինչպես նաև պետությունների կողմից թուրքիայի ներքին գործերին արտաքին միջամտության հիմնական պատճառ, հայաստաց սուլթանը աստիճանաբար ձևավորեց ու հասունացրեց իր ուղեղում փայլատակող հրեշավոր այն միտքը, որ Չայկական հարցը կարելի է ու հնարավոր է լուծել արևմտահայերի բնաջնջման, Չայաստանը հայաթափելու միջոցով:

Թուրքական իշխանությունների հայահաված քաղաքականությունը թևակոխեց մի նոր փուլ, նախորդի համեմատությամբ ավելի բիրտ ու դաժան շահագործման, ազգային հալածանքների ու հարստահարության, վայրի կանաչականությունների, կրոնական անհանդուրժողականության ծանր մղձավանջային մի ժամանակաշրջան (1, 367): Թուրքական ջարդարար մոլուցքը գործի դրվեց անսանձ դաժանությամբ: Արևմտյան Չայաստանում և կայսրության մյուս հայաբնակ վիլայեթներում ծայր առան արյունածոր կոտորածները (2, 1880, 72):

Չայ ժողովրդի համար ստեղծված այդ ողբերգական վիճակը նկատի ունենալով՝ ռուս անվանի մտավորական Վ. Բրյուսովը նշում էր, որ մարդկության պատմության մեջ անհնարին է մատնացույց անել մեկ այլ ժողովուրդ, որը կրած լինի մարդկային ու նյութական այնքան մեծ կորուստ, որքան հայ ժողովուրդը, և մի երկիր, ուր հոսած լինի նույնքան արյուն, որքան Չայաստանում (6, 9):

Չայ ժողովրդի դառնաղետ պատմության արյունածոր էջերը ավելի մթազնվեցին 90-ական թվականների երկրորդ կեսից սկսած, երբ թուրքական իշխանությունների նախորդ տասնամյակներում գործադրած հակահայկական քաղաքականության հետևանքով առավել քան սեղմվեց արևմտահայությանը խեղդող օղակը (1, 54): Թուրքական իշխանությունների որդեգրած այդ քաղաքականության հետևանքով առավելապես խորացան հայ գյուղացիության ազգային ու սոցիալական ճնշումն ու շահագործումը, ուժգնացան բռնի դավաճանափոխությունը ու կրոնական անհանդուր-

ժողականությունը: Չայ բնակչության գույքի բռնագրավումն ու հողագրկումը կատարվում էր գլխապտույտ արագությամբ: Նրա վրա էլ ավելի ծանրացան բազմազան և բազմաբնույթ օրինական ու անօրինական հարկերն ու տուրքերը (8): Քրդական ցեղերի, Բալկաններից ու Կովկասից Արևմտյան Չայաստանում և հայահոծ նահանգներում վերաբնակված մահմեդականների (մուհաջիրների) կողմից հայկական գյուղերի զավթումը, բնիկ ազգաբնակչության բռնի տեղահանումն ու նրանց ունեցվածքի բռնազավթումը դարձան սովորական երևույթ (10, 89): Արևմտահայության հանդեպ թուրքական իշխանությունների քաղաքական նոր կողմնորոշմանը զուգընթաց փոփոխության ենթարկվեց նրանց վերաբերմունքը քրդական աշիրաթապետների ու քոչվոր ցեղերի նկատմամբ: Նախկինում նրանց դեմ գործադրվող ամհանդուրժողականությունն ու հետապնդումները, նրանց բռնի ուժով հպատակեցնելու, կառավարությանը ենթարկելու ձգտումը աստիճանաբար մեղմացավ: Ավելին, այժմ նրանց հանդեպ սկսեցին կիրառել սիրաշահելու, հայերի դեմ գործադրած վայրագ գործողությունները խրախուսելու և հովանավորելու քաղաքականություն (10, 88): Քրդական ցեղերը զգալով իրենց անպատժելիությունը՝ հայերի դեմ սկսեցին գործել ավելի համարձակ ու վստահ: Նրանք անարգել գրավում էին հայերի ունեցվածքը, հողատարածքները, բնակության վայրերը:

Չայ բնակչությունը ստիպված էր հեռանալ պապենական վայրերից, ուր անմիջապես հաստատվում էին խաշնարած քրդերը և, ինչպես իրենք էին ասում, «նստում այնտեղ» (10, 78):

Սուլթան Աբդուլ Չամիդը, օգտվելով Մերձավոր Արևելքում տերությունների միջև եղած հակամարտություններից՝ Արևմտյան Չայաստանում և կայսրության հայաշատ վիլայեթներում սանձազերծեց հայ բնակչության զանգվածային ջարդեր: Թուրք ջարդարարներն ու արևմտյան գաղութարարները, համագործակցած իրար հետ, արևմտահայությանը «պատճառեցին չտեսնված դժբախտություններ ու անհամար ողբերգություններ» (1, 365):

Սկսած այն պահից, երբ Չայկական հարցը ներքաշվեց միջազգային դիվանագիտության օրակարգ, սուլթանը ձեռնամուխ եղավ այն թուրքական ձևով լուծելու միջոցառումներ մշակել՝ աշխատելով «խախտել արևմտահայերի հավաքական գոյությունը, նրանց ցրել մահմեդական ծովում» (2, 53):

Մերձավոր Արևելքում ռուս-անգլիական սրված հակամարտությունների

ոլորտում հայտնված Հայկական հարցը սուլթանի կողմից խորամանկորեն օգտագործվում էր, նրանց հակասությունները բորբոքելով իրագործել իր առջև դրված հայասպան հրեշավոր ծրագիրը: Նա ավելի էր սրում ու խորացնում տերությունների միջև եղած լարվածությունը:

19–րդ դարի 90–ական թվականներին ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կտրուկ շրջադարձ կատարվեց: Օսմանյան կայսրության մասնատմանը միտված ավանդական վճռական գործողությունների փոխարեն, ելնելով իր ռազմաքաղաքական շահերից, ցարիզմն սկսեց պաշտպանել նրա տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, որը խիստ բացասական անդրադարձավ Հայկական հարցում Ռուսաստանի ավանդական հայամպաստ կողմնորոշման վրա: Ռուսական դիվանագիտությունը մի կողմից ձգտում էր թույլ չտալ սրել և միջազգային քննարկման առարկա դարձնել Հայկական հարցը, իսկ մյուս կողմից չէր ցանկանում իսպառ կորցնել թուրքահպատակ արևմտահայության վրա իր ունեցած ազդեցությունը (11, ժ. 24, ռ. 328): Սակայն քաղաքական շահերի թելադրանքով՝ սուլթանի վրա գերակա ազդեցության հաստատմամբ Անգլիային տարածաշրջանից դուրս մղելու համար նա Հայկական հարցում վարում էր զգուշավոր, իսկ սուլթանի հանդեպ՝ թողտվության քաղաքականություն:

Ցարիզմի նման շրջադարձը հետևանք էր երկրի ներսում Ալեքսանդր 3–րդ կայսեր կողմից բացարձակ հետադիմական վարչաձևի հաստատման, որը իր արտահայտությունը գտավ նրա ազգային քաղաքականության բնագավառում: Այդ պահից սկսած՝ իշխանությունները և նրանց խոսափող հետադեմ մամուլը կատաղի արշավանք ձեռնարկեցին կովկասահայության դեմ՝ նրան մեղադրելով անջատողականության ու հեղափոխական լինելու մեջ: Բնականաբար, երկրի ներսում իր հպատակ ազգերի և ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարը, ինչպես նաև ռուս ժողովրդի հեղափոխական շարժումները ճնշող ցարիզմը չէր կարող հովանավորել ու աջակցել թուրքական բռնապետության դեմ ազատագրական գոտեմարտի ելած արևմտահայությանը: Մերձավորարևելյան քաղաքականության բնագավառում տեղի ունեցած շրջադարձի համար, անշուշտ, կային նաև լուրջ ու վճռական արտաքին գործոններ:

Քննարկվող փուլում Մերձավոր Արևելքում տերությունների, մասնավորապես Ռուսաստանի ու Անգլիայի հակամարտությունները ծայրահեղորեն սրվեցին: Եգիպտոսը, Միջագետքը և Արևմտյան Հայաստանի վրայով դեպի

Պարսից ծոց տանող ճանապարհները իր ձեռքին պահելու, ինչպես նաև Հնդկաստանի շրջակա տարածքները ռուսական ազդեցությունից պաշտպանելու համար Անգլիան աշխատում էր թուրքիային ուղղել Ռուսաստանի դեմ, թուլացնել վերջինիս ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Բացի այդ, 90–ական թվականներին տերությունների միջև պայքարը նոր թափ ստացավ Հեռավոր Արևելքում, ուր նրանք զբաղված էին Չինաստանի բաժանմամբ: Այդ տարածաշրջանում ցարիզմը կենսական շահեր ուներ, ուստի արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը Մերձավոր Արևելքից աստիճանաբար տեղափոխվեց Հեռավոր Արևելք, սակայն Սև ծովի նեղուցների ու կայսրության անդրկովկասյան սահմանների ապահովությունը նրա համար շարունակում էին մնալ առաջնային: Ցարիզմը չունեւ բավարար ռազմական միջոցներ Սև ծովի նեղուցները բռնազավթելու համար, որովհետև այդ դեպքում նրա դեմ հանդես էր գալու եվրոպական տերությունների համագործակցությունը: Պատմական փորձը ցարիզմին հուշում էր խուսափել թուրքիայի հետ նրա առճակատումից, որի դեպքում տերությունները հանդես էին գալու թուրքիայի թիկունքում՝ ընդդեմ Ռուսաստանի, ուստի ցարիզմը աշխատում էր սուլթանի վրա ազդեցություն հաստատելով ապահովել իր ռազմանավերի ազատ ելքը նեղուցներով, որովհետև Բալկանների վրայով դեպի Միջերկրական ծով տանող ուղիները փակվել էին Ռուսաստանի առջև, երբ 1885 թ. Բուլղարիայի երկու մասերի վերամիավորման ընթացքում ռուսական դիվանագիտությունը ճիշտ չկողմնորոշվեց ու թույլ տվեց աններելի սխալներ, որի հետևանքով խզվեցին ռուս–բուլղարական հարաբերությունները (14):

Եվ, վերջապես, մի կարևոր հանգամանք ևս մտահոգում էր ցարիզմին: Տերությունների մրցապայքարը կարող էր հանգեցնել Օսմանյան կայսրության մասնատմանը, ուստի ցարիզմը այդ փուլում գերադասում էր ավելի թույլ Օսմանյան կայսրության անխախտ գոյությունը, քան նրա հնարավոր մասնատումից ստանալով որոշակի տարածք ու իր սահմանների հարևանությամբ եվրոպական որևէ հզոր տերության հաստատման վտանգը: Նման երկվությունը ցարիզմի առջև խնդիր էր դնում չսրել Հայկական հարցը և այդ առիթով վատացնել իր հարաբերությունները սուլթանի հետ, հետևաբար շտապեց վերջինիս հավաստիացնել, որ «Ռուսաստանը չի ցանկանում ստեղծել միջազգային Հայկական հարց» (12, ժ. 344, ռ. 28):

Տերությունների մերքին հակամարտություններին ու նրանց դիվանագի-

տական խարդավանքներին քաջածանոթ սուլթան Չամիղը գործում էր հաշվեկատու ու հետևողական: Թուրքական իշխանությունները մինչ արևմտահայության դեմ վճռական հարձակման անցնելը երկրում հակահայկական հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև եվրոպական հասարակայնությանը ապակողմնորոշելու ու հետագա պատասխանատվությունից խուսափելու նպատակով թուրքական ու թուրքամետ ծախու մամուլի միջոցով կեղծ ու մտացածին տեղեկատվություններ էին տարածում Թուրքիայում հայկական հուզումների ու նախապատրաստվող համընդհանուր ապստամբության մասին: Ձայնակցելով պաշտոնական շրջաններին՝ թուրքական պատմագիտությունը ինչպես 19-րդ դարի 90-ական թվականներին, այնպես էլ հետագայում և մասնավորապես 20-րդ դարի 30-ական թվականներին հանրապետական Թուրքիայի «Պատմության ընկերության» շուրջը համախմբված պատմաբանները, նաև թուրքամետ այլազգի բազում պատմաբաններ ու հրապարակախոսներ, ղեկավարվելով որոշակի քաղաքական շահերով, միտումնավոր կերպով շրջանցում ու անտեսում էին թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով ստեղծված արևմտահայության ծանր ու անելանելի ողբերգական վիճակը: Կեղծելով պատմական իրականությունը և այն ներկայացնելով ծուռ հայելու մեջ՝ նրանք ճգնում էին հիմնավորել, որ հայերը Թուրքիայում ապրում էին բարեխնամ կառավարության հոգածության ներքո, բարեկեցիկ կյանքով, մահմեդական ազգաբնակչության հետ օգտվում էին նույն իրավունքներից և իրավահավասար էին օրենքի առջև (15): Հանրահայտ ճշմարտություն է, որ քաղաքականությանը ենթակա ու նրան ծառայող պատմագիտությունը ճշմարիտ ու անկողմնակալ լինել չի կարող, այստեղից էլ անցյալի, ինչպես նաև մերօրյա թուրքական պատմագիտության, պետական ու քաղաքական գործիչների Հայկական հարցում իրարամերժ, ոչ իրատեսական, պատմական ճշմարտությունից հեռու, արհեստածին ու չիմնավորված, կեղծ ու ստահող հակազիտական անհեթեթ տեսակետների ու վարկածների առատությունը:

Միտումնավոր կերպով ձևախեղելով Հայկական հարցի բովանդակությունը, զրկելով այն ազգային ու սոցիալական հիմքից թուրք պատմաբանները ձգտում էին հիմնավորել, որ այն ներմուծվել է դրսից, մասնավորապես մեղադրում էին Ռուսաստանին և Անգլիային, որոնք, նրանց կարծիքով, Թուրքիայի ներքին գործերին միջամտելու նպատակով կյանքի են կոչել

Հայկական հարցը: Առանձնապես ընդգծվում էր Լոնդոնի անգլո-հայկական կոմիտեների ծավալած գործունեությունը և հայ ազիտատորների քարոզչությունը Հայաստանում, որոնք հեղափոխական գաղափարներ են տարածում քրիստոնյա ազգաբնակչության մեջ ու թշնամանք սերմանում մահմեդականների նկատմամբ, առաջ են բերում հուզումներ: Հետևաբար, եզրակացնում էին նրանք, արևմտահայերի ազատագրական շարժումները բնականոն չէին և չէին բխում նրանց սոցիալական ծանր վիճակից, ուրեմն հայերը սուլթանական բարեխնամ կառավարության հանդեպ թշնամանք ունենալ չէին կարող (17): Հայկական հարցում նման անհեթեթ դատողություններ է կատարում պատմաբան, պետական գործիչ, խոշոր պաշտոնյա Սադի Քոչաշը իր «Հայերը պատմության մեջ և թուրք-հայկական հարաբերությունները սկսած սելջուկների ժամանակից» ծավալուն գրքում: Կատարելով իր կառավարության քաղաքական պատվերը՝ նա աշխատում էր հիմնավորել, որ դարեր շարունակ, սկսած սելջուկների արշավանքների ժամանակներից, թուրքական պետությունը հայ հպատակների նկատմամբ եղել է հոգատար, որ հայերը օգտվել են մահմեդական ազգաբնակչությանը վերապահված արտոնություններից, թուրքերի հետ ապրել են հաշտ ու խաղաղ, սակայն վերջին տարիներին, երբ Հայկական հարցի առիթով մեծ տերությունները սկսեցին միջամտել Թուրքիայի ներքին գործերին, խախտվեց խաղաղությունը, մահմեդականները սկսեցին վատ վարվել հայերի հետ, հայերը ապստամբեցին կառավարության դեմ, իսկ կառավարությունը երկրում կարգը վերականգնելու ու խաղաղություն հաստատելու համար պատժեց նրանց (18, 48):

Թուրք պատմաբան Էսատ Ուրասը այդ հարցում աշխատում է ավելի ինքնատիպ լինել: Նա գտնում է, որ հատկապես հայ հոգևորականները, դաշնակցական ու հնչակյան ազդեցիկ ու հեղինակավոր գործիչները, կատարելով մեծ տերությունների, հատկապես Ռուսաստանի կամքը, իրենց հետևից էին տանում հայ հասարակ մարդկանց ու դժբախտության մատնում ողջ ժողովրդին (19, 64): Մեկ այլ թուրք պատմաբան Ջեմալ Կուտայը, արդարացնելով հայերի նկատմամբ կառավարության ջարդարարական գործողությունները, կատարում է անհեթեթ եզրակացություն, գտնելով, որ եթե հայերը գործեին խելամիտ ու հավատարիմ մնային կառավարությանը, չդիմեին Ռուսաստանին, արյունահեղություն չէր լինի (20, 92):

Ցարական պաշտոնական շրջանները և հետադիմական մամուլը, մաս-

նավորապես «Գրաժանին», «Մոսկովսկիե վեդոմոստի», «Նովոյե վրեմյա» լրագրերը, որոնք հանդիսանում էին ցարիզմի գաղափարական անխոնջ պաշտպանները, հայկական զանգվածային կոտորածների ընթացքում թուրքական իշխանությունների հետևողությամբ մեղադրում էին արևմտահայերին: Իրենց պաշտպանության տակ վերցնելով թուրք ջարդարարների՝ ճգնում էին հիմնավորել, որ հայերն են առաջինը զենքի դիմել (12, Ժ. 3448, ռ. 8–12): Ղրանով նրանք պաշտպանում ու արդարացնում էին կոտորածների կազմակերպիչ արյունարբու սուլթանին ու նրա հանցագործ կառավարությանը:

Անցյալի հայ որոշ պատմաբաններ ևս տուրք են տվել նմանատիպ խորապես կեղծ ու հակագիտական տեսակետների (21): Նրանք, անտեսելով արևմտահայերի ողբերգական կացությունը, անկարող լինելով ճիշտ մեկնաբանել հայ ժողովրդի ազատագրական շարժման դրդապատճառները, բացահայտել նրա սոցիալ–տնտեսական արմատները, ընդգծում են, որ այդ ամենի պատճառը հայկական վիլայեթների կենտրոնից հեռու գտնվելը, նրանից կտրվածության ու տեղերում սուլթանական իշխանության թույլ լինելն է: Ըստ այդ հեղինակների՝ պետք է կարծել, թե ծայրագավառներում սուլթանի իշխանության ուժեղացմամբ հնարավոր էր ոչ միայն թեթևացնել արևմտահայերի վիճակը, փրկել նրանց ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև կստեղծվեին նրանց համար բարեկեցիկ կյանքի պայմաններ, ծաղկման շրջան: Նմանատիպ մտավարժանքները հետևանք էին իրականում արևմտահայության առօրյա դժոխային կյանքի պայմանների անտեսման կամ դրա մասին սակավ տեղեկատվության: Այլապես, ինչպես կարելի է շրջանցել այն պարզ ու անհերքելի ճշմարտությունը, որ հայ բնակչության կոտորածների հրեշավոր ծրագրերը ու դրանք կենսագործելու ցուցմունքները տրվում էին սուլթանական կառավարության և անձամբ սուլթանի կողմից (22, 1896, 302): Եղ. քահանա Գեղամյանցը և Կ. Թումայանը, անտեսելով պատմական իրողությունը, ընդդեմ պատմական ճշմարտության մշում էին, որ հայերը Թուրքիայում ապրում են հարուստ ու բարեկեցիկ կյանքով, բնականաբար նրանց պատմական ճակատագրի հետագա զարգացումը պետք է ընթանա Օսմանյան կայսրության հովանու ներքո: Իսկ ինչ վերաբերում է արևմտահայության ազատագրական պայքարին, ապա նրանք գտնում էին, որ արևմտահայերը թուրքական լծից իրենց ազատագրությունը սպասում էին Անգլիայից (23): Վերջին տեսակետն էին պաշտպանում նաև

հայ ազգային քաղաքական կուսակցությունների ղեկավարները (24):

Հարկ է նշել, որ Ռուսական և ՌԳԿ կուսակցությունները 19–րդ դարի 90–ական թվականներին արևմտահայության ազատագրության խնդրում մեծ գործ կատարեցին: Նրանք ընդարձակեցին ազատագրական շարժման աշխարհագրությունը, ձևավորեցին ու ամբողջականացրին ազատագրական շարժման գաղափարախոսությունը, ակտիվացրին ժողովրդի հայրենասիրական վերելքը, նրանցից շատերը հերոսության հրաշքներ գործեցին, ժողովրդի ազատագրության համար անվարան իրենց կյանքը զոհասեղանի վրա դրեցին, սակայն, ընդհանուր առմամբ, չմեղանչելով ճմարտության առջև, նշենք, որ նրանք իրենց գործունեության այս փուլում ճիշտ չկողմնորոշվեցին թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ճիշտ ու նպատակային ուղիների որոնման խնդրում: Այլ երկրների ազատագրական պայքարի ձևերն ու մեթոդները արհեստականորեն աշխատում էին հարմարեցնել հայ իրականությանը՝ հաշվի չառնելով տեղական պայմաններից բխող և գոյություն ունեցող ակնբախ առանձնահատկություններն ու դրանց անխուսափելի հետևանքները: Այստեղից էլ նրանց անձնուրաց հերոսության բազում արարքներն անխուսափելիորեն ազատագրական պայքարի մեծաթիվ նվիրյալների կյանք էին խլում, առիթ էին ստեղծում իշխանությունների դեմ պայքարի միասնական ճակատի մասնատման համար (25), հարուցում էին թուրքական իշխանությունների կողմից էլ ավելի վայրագ կոտորածներ ու մեծ ողբերգություններ: Նրանք, բորբոքելով կրոնական ու ազգայնական կրքեր, ավելի էին սրում հայ ժողովրդի դեմ մահմեդական ցեղերի կրոնական մոլեռանդությունը, իսկ դրանից ճարպկորեն օգտվում էր սուլթանը՝ կազմակերպելով նորանոր կոտորածներ:

Բ. Իշխանյանը ճգնում է հիմնավորել, որ Արևմտյան Հայաստանի ազգային ազատագրական պայքարի համար համապատասխան նախադրյալներ գոյություն չունեին: Հետևաբար, եզրակացնում է նա, ազգային–ազատագրական շարժման գաղափարախոսությունը տեղում ձևավորվել չէր կարող, ուրեմն, նրա կարծիքով, այն ներմուծվել է դրսից, Արևելյան Հայաստանից (26, 103–104): Այդ ակնառու, խորապես սխալ տեսակետը պաշտպանում է նաև Ս. Իզմիրլյանը (27): Նա աներկբայորեն ընդգծում է, որ հեղափոխությունը թուրքահայերը չեն հորինել (27, 16):

Պոռֆեսոր Լեոն արևմտահայության ազատագրական շարժման խնդրին

նախապես տվել է ճիշտ մեկնաբանություն, սակայն հետագայում տուրք տալով խորհրդային պատմագրության մեջ տիրապետող վուլգար սոցիոլոգիզմի հակազիտական տեսության ազդեցությանը, հանգեց այն սխալ կարծիքին, որ Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժան գաղափարախոսությունը ձևավորվել է արևելահայ մտավորականների կողմից՝ ռուսական նարոդնիկական հայացքների ներմուծման հետևանքով:

«Թուրքահայ յեղափոխությունը բխում էր այդ սոցիալիզմից (ռուսական նարոդնիկությունից—Պ. Ս), այդ յատուկ ռուսական վարդապետությունից, և այսպես էր նա ոչ միայն 60-ական թվականներին, այլև, ինչպես կտեսնենք նաև հետոյ, մինչև վերջ» (25, 11),— գրում էր նա: Արևմտահայ ազատագրական շարժման գաղափարախոսության տեղում ծագման հնարավորությունը մերժելով՝ Լեոն ժխտում էր թուրքական իշխանությունների հակահայ բիրտ ու դաժան քաղաքականության հետևանքով ստեղծված արևմտահայության թշվառ ու անել կացությունը: Նման մոտեցումը, անշուշտ, սխալ էր ու հակազիտական:

Չի կարելի համաձայնվել նաև արևմտահայերի ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորման խնդրում Ա. Բ. Կարինյանի հետ, երբ նա առաջադրում է այն տեսակետը, թե իբր Արևմտյան Հայաստանում հեղափոխական գաղափարները ներմուծվել են դրսից (28):

Թուրքիայում արևմտահայերի «խաղաղ, հարուստ ու բարեկեցիկ» ապրելաձևի վերաբերյալ սխալ, ու մտացածին տեսակետ է զարգացրել Բ. Բորյանը (29):

Ի հակադրություն վերը նշած պատմաբանների՝ Հ. Փաստրմաճյանը արդարացի կերպով հայ ժողովրդի ազգային—ազատագրական պայքարը դիտում է որպես պատասխան ու հետևանք հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած բարբարոսությունների, որոնք հայ բնակչությանը դրել էին «արցունքների, արյան ու հուսահատության մեջ» (30): Թուրքիայում հայերի բարեկեցության մասին եղած տեսակետները ակնավոր պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը իրավացիորեն համարում է հորինված հեքիաթ: «Շատ պատմաբանների վրա ըստ երևույթին ազդել է թուրք պատմաբանների այն կեղծ քարոզչությունը,— գրում է Մ. Գ. Ներսիսյանը,— ըստ որի հայերը իբր մինչև XIX դարի երկրորդ կեսը ունեցել են ապահով կյանք ու լայն իրավունքներ, որ իբր Բ. Դուռը դիմել է ճնշումների միայն այն ժամանակ, երբ «ոչ երախտապարտ» հայերը սկսել են խռովու-

թյուն ու ապստամբություններ Օսմանյան պետության դեմ... պետք է վճռականորեն հերքվի այս շինծու ու արտառոց հեքիաթը... Օսմանյան կայսրության մեջ,— շարունակում է նա,— հայերը ապրել են ստրկական ու ճորտական վիճակում... նրանք մշտապես ենթարկվել են քարդեհի, բարբարոսական ճնշումների ու անտանելի կեղեքումների» (3, 131):

Թուրքական բռնատիրության տևական դարերը անկարող էին մեռցնել ազատաբաղձ հայ ժողովրդի ազատ ու ինքնուրույն կյանքով ապրելու ծգտումը, սակայն միայն սեփական ուժերով անհամեմատ ուժեղ թուրքական տիրապետությունից ազատագրվելու անհնարինության պատճառով հայ ժողովուրդը դարավոր ազատագրական պայքարի ընթացքում հավատով էր նայում դեպի հզոր Ռուսաստանը՝ նրանից «սպասելով իրական օգնություն» (31, 125), հավատացած լինելով, որ «հայ ժողովրդի ազատագրության խնդրում վճռական խոսքը պատկանում է Ռուսաստանին», (12, ձ. 1625, յ. 37), որ նրա օգնությամբ է հնարավոր ազատագրվել օտարի ծանր լծից: Եվ այդ լուսավոր հավատը ծնունդ է տվել դարավոր անցյալ ունեցող հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը, հայ ժողովրդի ազգային—ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշմանը: Այդ հիմնահարցը պատմագրության կողմից հիմնավորապես ուսումնասիրվել և ստեղծվել է գիտական հարուստ ու ծավալուն գրականություն: Այդ ասպարեզում մեծ ներդրում են կատարել նշանավոր պատմաբաններ Ա. Գ. Հովհաննիսյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ծ.Պ. Աղայանը, Մ. Գ. Ներսիսյանը, Զ. Տ. Գրիգորյանը, Վ. Ա. Պարսամյանը, Ա.Գ. Աբրահամյանը, Պ. Տ. Հարությունյանը, Գ. Ա. Գալոյանը, Վ. Կ. Ոսկանյանը, Վ. Ա. Դիլոյանը և ուրիշներ (32): Հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման խնդիրը և այդ մասին հայ պատմագրության մեջ ձևավորված տեսակետները հանգամանալից քննարկվել ու լավագույնս արժեքավորվել են Ն. Սարուխանյանի աշխատություններում (16): Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո իրականացվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը: Հայ ժողովրդի մի հատվածը թոթափեց շահական Պարսկաստանի դարավոր լուծը և իր բախտը առհավետ կապեց ռուս մեծ ժողովրդի հետ:

Արևմտահայերը, տևական ծանր ու դժվար պայքար մղելով թուրքական բռնապետության դեմ, շարունակում էին հավատարիմ մնալ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշմանը, դարավոր ստրկական լծից իրենց ազատագրության հույսը կապելով Ռուսաստանի հետ, քանի որ, ինչ-

պես իրավացիորեն գրում է Ջ. Կիրակոսյանը, թուրքական բռնապետության դեմ պայքարող բոլոր թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները Ռուսաստանը համարում էին իրենց բնական դաշնակիցը, որովհետև նա օբյեկտիվորեն նպաստում էր այդ գործընթացին (33, 357):

Գոյության տարրական իրավունքներից զրկված ու թուրքական իշխանությունների բիրտ կամայականություններին ենթակա արևմտահայերի համար Ռուսաստանի կազմում գտնվող արևելահայերի իրավական վիճակը դարձել էր իրենց ապագայի նվիրական երազանքը: Այդ պատճառով էլ համառ պայքար մղելով թուրքական բռնապետության դեմ՝ արևմտահայերը ձգտում էին «ազատագրվել թուրք փաշաների լծից և ռուսական կառավարության կազմում վերամիավորվել իրենց արևելահայ եղբայրների հետ» (39): Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ ռուսական արքունիքը և կառավարական մյուս հիմնարկները իրենց խնդրագրերով ողողած արևմտահայերը արտահայտում էին միևնույն ցանկությունը, այն է՝ անցնել Ռուսաստանի հովանու ներքո (34):

Թուրքական իշխանությունների անհանդուրժողական վերաբերմունքն ու ֆիզիկական բնաջնջման ենթարկվելու մշտական սպառնալիքները, եվրոպական տերությունների կեղծ ու անիրական խոստումները ավելի ամրացրին ու խորացրին Ռուսաստանի օգնությամբ թուրքական լծից ազատագրվելու արևմտահայերի ձգտումները: Այդ խորապես ճիշտ տեսակետն էր պաշտպանում մեծամուն վիպասան Բաֆֆին՝ ընդգծելով, որ արևմտահայերի «հայացքը ուղղված է դեպի Ռուսաստանը» (35, 114):

Արևմտահայության դեմ թուրքական իշխանությունների համատարած հարձակումների ընթացքում, երբ միջազգային դիվանագիտության խորքային փոփոխություններն ու ալեբախումները նորանոր անակնկալներ էին մատուցում հայ ժողովրդին, սպառնում նրա գոյությանը, հույժ կարևորվում էր նրա քաղաքական կողմնորոշման հարցը: Եվ դա բնական էր, որովհետև պատմության բոլոր շրջադարձերի ընթացքում, ինչպես նաև մեր օրերում, երբ առավել չափով ահագնանում է արտաքին սպառնացող վտանգը, նոր իմաստ է ստանում մեր իմաստուն նախնիների նախանշած ու դարերի մեջ պատմության կենսափորձով հիմնավորված, առավել իրատեսական ռուսական կողմնորոշումը: Այս փուլում առավել քան երբևէ արևմտահայերը հանդես եկան թուրքական լուծը Ռուսաստանի օգնությամբ թոթոփելու հաստատված զնախանությանը (36, ֆ. 48, գ. 21, 13): «Թուրքահայերը,– կարդում

ենք ռուսական արխիվային վավերագրում,–Ռուսաստանը դիտում են որպես իրենց բնական դաշնակիցը» (13, Ժ. 2882, ռ. 1–2):

Թուրքահպատակ ժողովուրդների ազատագրության խնդրում Ռուսաստանի հույժ կարևոր դերի մասին պրոֆ. Է. Դիլունը գրում է. «Նա (Ռուսաստանը,– Պ. Ս.) միայնակ սուլթանի քրիստոնյա ժողովուրդների համար ավելի շատ բան է արել, քան մյուս բոլոր եվրոպական տերությունները միասին վերցրած» (10, 205):

Քաջ գիտակցելով Ռուսաստանի պատմական առաքելության կարևորությունը արևմտահայերի կյանքում և գնահատելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը՝ Ա. Չոպանյանը իրավացիորեն ընդգծում է. «Հայերը Ռուսաստանի հովանու ներքո ստացան հավասարության երաշխիք օրենքի առջև: Նրանք զարգացան և մտավորապես և թե տնտեսապես...» (3): Գիշտ կռահելով եվրոպական տերությունների դիվանագիտական խարդավանքները՝ նա գրում էր, որ նրանք կեղծ խոստումներով անկարող էին ճիշտ ու արդարացի լուծում տալ Հայկական հարցին ու օգուտ բերել արևմտահայության պատմական ճակատագրին, որ հայ ժողովրդի ազատագրության իրական ու ճիշտ ուղին ռուսական կողմնորոշումն է (38, 1889, 4–84):

Այդ գաղափարն էր պաշտպանում ու մասսայականացնում գրող և հասարակական գործիչ Ա. Արփիարյանը (5, 1879, 77): Նա ճիշտ էր ընկալում թուրքական լծից արևմտահայության ազատագրության խնդրում Ռուսաստանի կարևոր դերը, միաժամանակ քննադատում ու քողազերծ էր անում արևմտահայ վերնախավի այն ներկայացուցիչներին, որոնք հավատալով արևմտյան տերությունների սին խոստումներին, հայ ժողովրդի ազատագրությունը կապում էին նրանց հետ՝ ապակողմնորոշելով հայ ազգաբնակչությանը ազատագրական պայքարում ճիշտ ու հավատարիմ դաշնակից ընտրելու խնդրում: Պատասխանելով նման վայ գործիչներին ու ծաղրելով նրանց մոլորությունները՝ Ա. Արփիարյանը նշում էր, որ նրանք, բացի Ռուսաստանի դեմ հոխորտալուց, ոչինչ չեն արել, իսկ տեսնելով հայ ժողովրդի ծանր վիճակը՝ շարունակում են իրենց հույսը կապել Արևմուտքի հետ (5, 1879, 80): Անվանի գրողը խորաթափանցորեն տարանջատում էր Հայկական հարցում ռուս ժողովրդին ժողովուրդների բանտ ցարիզմից ու արդարացիորեն հայ ժողովրդի բախտը կապում էր ռուս ժողովրդի ճակատագրի հետ: Նա դատափետում ու անարգանքի սյունին էր գամում այն հայ գործիչ-

ներին, որոնք ցարիզմը նույնացնում էին ռուս ժողովրդի հետ (39, 1887, 3870): «Ռուս ժողովուրդը,–գրում է նա,–հավան չէ յուր չինովնիկներու հայտայաց քաղաքականութեան: Թեպետև կատկովներ, մալխանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ իրենց հարվածները կտեղան հայոց դեմ, բայց ողջամիտ լուսավորյալ մասը բոլորովին տարբեր կմտածեն: Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մ' է...» (39, 1887, 3870):

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդներին Ռուսաստանի ցույց տված, իրական օգնության ու նրա առաջադիմական դերն է ընդգծում նաև պրոֆ. Լեոն (40, 45):

«Բուլղարիան ազատողը,– գրում է նա,– Գլադստոնը չէր, այլ այն ծանր ու արյունահեղ պատերազմը, որ Ռուսաստանից միջոցներ ու հարյուրհազարավոր մարդիկ խլեց» (40, 45): Ռուսաստանը արևմտահայ ունեզրկված ու նվաստացած, թուրքական փաշաների տիրապետության ծանրության ներքո կքած հայ հասարակ բնակչության համար հանդիսանում էր հույսի դուռ, փրկության եզերք: Եվ երբեք էլ պատահական չէր, որ Ռուսաստան ներգաղթող հայերը, դիմելով ռուսական բանակի զինվորներին, ասում էին. «Ավելի լավ է մեր գլուխները կտրեք, քան թե մեզ նորից հանձնեք թուրքերին» (41, 161):

Մեծանուն բանաստեղծ Յովհ. Թումանյանը թուրքական բռնատիրական լծից հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր էր համարում միայն Ռուսաստանի օգնությամբ: Նա ի մի բերելով մեր ժողովրդի անցյալի պատմության դառն փորձը ու նկատի ունենալով եվրոպական տերությունների կեղծ ու խարդախ խոստումները՝ իրավացիորեն ընդգծում էր, որ հայ ժողովուրդը իր ազատագրման հույսերը և կյանքի ապահովությունը պետք է կապի միայն Ռուսաստանի հաջողությունների հետ (42, 226):

Հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռուսաստանի վճռական դերն էր ընդգծում նաև մեծատաղանդ գրող Գր. Զոհրապը: «Հայկական հարցում,–գրում է նա,– մեր գլխավոր հենարանը Ռուսաստանն է, հարևանության իրավունքով և շահագրգռվածության աստիճանով» (43, ֆ. 1, ց. 1, գ. 685, ք. 33):

Ռուսաստանի օգնությամբ թուրքական բռնատիրությունից հայ ժողովրդի ազատագրության բաղձանքները իրենց հատուկ արտահայտությունն են գտել ծայրագույն վարդապետ Եղ. Մուրադյանի «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի տնօրեն և խմբագիր իշխան Է. Է. Ուխտոմսկուն հասցեագ-

րած նամակում: «Թուրքական տիրապետության տակ գտնվող հայերը,– գրում է նա,– նույնիսկ անգրագետ գյուղացիները երբեք չեն կորցնում իրենց հույսը, որ արևելյան քրիստոնյաների մեծ ազատարարը իրենց նույնպես օգնության կգա, կթեթևացնի իրենց դրությունը, և իրենք նա կապրեն ազատ ու ապահով» (22, 1897, 55):

Յարիզմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ, հետևաբար նաև Հայկական հարցում քաղաքական շրջադարձը անցյալի պատմագրության կողմից մեր կարծիքով լուսաբանվել է թերի ու միակողմանի: Պատամարանները, բացահայտելով Հայկական հարցում ցարիզմի որդեգրած նոր կողմնորոշումը, շրջանցել են այդ խնդրի հետ սերտորեն առնչվող ռուս առաջադեմ մտավորականների, հասարակական սոցիալական լայն շերտերի կողմից արևմտահայերի նկատմամբ ցուցաբերած ջերմ համակրանքը, բարոյական աջակցությունն ու նյութական օգնության հանգամանքները (55): Ավելին, նրանցից ոմանք, նկատի ունենալով Արևելյան Հայաստանում ցարական բյուրոկրատական ապարատի հաստատած ծանր ռեժիմը, նույնացրել են սուլթանիզմի ու ցարիզմի քաղաքականությունը Հայկական հարցում, չեն նկատել, ավելի ճիշտ չեն ցանկացել ընդգծել հայ ժողովրդի ճնշման ու շահագործման ձևերի ու մեթոդների խնդրում երկու տիրապետողների միջև եղած էական տարբերությունը, առաջադրել են հակագիտական տեսակետներ (44, 62): Նրանք և նրանց համախոհները չեն ցանկանում նկատել, որ այդ փուլում արևմտահայության նկատմամբ առավել հստակությամբ էր ընդգծվում պետական պաշտոնական և դրան տրամագծորեն հակադիր ռուս հասարակայնության բարյացակամ ու մարդասիրական կողմնորոշումը: Մ. Օրմանյանը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման օբյեկտիվ անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով իրավացիորեն ընդգծում է Ռուսաստանի կազմում արևելահայության տնտեսապես ու քաղաքականապես զարգացման համար ստեղծված լայն հնարավորությունները: «Ռուսաստանի միջամտությունը Թուրքական Հայաստանի գործերում,– նշում է նա,– մեզ ցանկալի է և օգտակար: Ես չեմ բաժանում հայկական ուրոշ շրջանների պեսիմիստական հայացքները, անգամ, եթե Ռուսաստանի կողմից օկուպացիայի կամ անեքսիայի ենթարկվեն հայկական մարզերը: Ռուսահայերը,–շարունակում է Մ. Օրմանյանը,–ռուսական քաղաքական կյանքի պայմաններում հնարավորություն ունեն զարգանալու և կուլտուրապես, և տնտեսապես, և ազգայնորեն» (45, 149): Հետևաբար, հայ ժո-

4686

դովրդի ճակատագրի խնդրում ցարիզմին ու սուլթանիզմին նույնացնելը միանգամայն կեղծ է ու հակազիտական:

Չայ ժողովրդի ռուսական կողմնորոշման խնդիրը իր հույժ կարևորությամբ դարձել է մեր ժողովրդի ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի պատմության անբաժան բաղկացուցիչ մասը: Այն մշտապես կենսունակ հիմնահարց է: Նրա լուսաբանումը հատկապես կարևորվում է հայ ժողովրդի պատմության բոլոր վճռական շրջադարձերի ընթացքում, մասնավորապես երբ մեծանում ու ահագնանում է աշխարհաքաղաքական այս տարածաշրջանում հայ ժողովրդին սպառնացող արտաքին վտանգը:

Վաստակաշատ պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը առանձին սիրով ու խորաթափանցությամբ է ուսումնասիրել ու հիմնավորել այդ խնդիրը: Նա, նկատի ունենալով Չայաստանի ու հայ ժողովրդի շուրջը մեծ տերությունների բազում անակնկալներով հարուստ բազմաբարդ խաղերն ու դիվանագիտական խարդավանքները, քողազերծ անելով պատմագիտության ասպարեզում անհաջող փորձ կատարող ժամանակակից դիլետանտ պատմաբաններին, որոնք քաղաքական նկատառումներով փորձում են հարցակազմի տակ վերցնել հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունն ու դրա հայանպաստ հետևանքները, միանգամայն արդարացի կերպով ընդգծում է, որ այժմ «հայտնվել է մասնագիտական իմացությունից կատարելապես զուրկ, բայց իրեն ըստ ամենայնի ամեն ինչի մասնագետ համարող դիլետանտների մի ամբողջ խումբ, որը հավակնում է վերածնել 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ էֆենդիների և հետադիմական գործիչների տեսակետները՝ հայ ժողովրդի շահերին իբր ռուսական կողմնորոշումը խորթ և վնասակար լինելու, արևմտահայության բարվոք վիճակը սուլթանական ուղորմածության հետ կապելու, արևմտահայության օսմանյան տիրապետության տակ գտնվելու «բարիքների» և լայն իրավունքներից ու արտոնություններից օգտվելու և այլնի վերաբերյալ (3, 305): Միսալ և ոչ գիտական մոտեցումով նրանք հաճախակի ժխտում են հայ ժողովրդի կողմնորոշման գաղափարը՝ անտեսելով, որ արևմտահայությունը անկրկնապես էր թվական գերակշռություն ունեցող մահմեդական ազգաբնակչության շրջապատում, չէր կազմում միաձույլ ու հզոր հավաքական ուժ և անկարող էր միայն իր սեփական ուժերով ազատագրվել իրենից անհամեմատ ուժեղ բռնապետության լծից: Արդարացիորեն մերժելով արևմտյան կողմնորոշումը գերադասող պատմաբանների ոչ իրատեսական, հայ ժողովրդի համար պատմության

կենսափորձով հիմնավորված կորստաբեր տեսակետները, ընդգծելով, որ հայ ժողովրդի անցյալի առաջավոր հասարակական-քաղաքական գործիչների համոզմունքով Չայական հարցի միակ ու իրատեսական լուծումը հնարավոր է Ռուսաստանի օգնությամբ, Մ. Գ. Ներսիսյանը կատարում է միանգամայն ճիշտ ու հիմնավոր եզրահանգում. «Անցյալի մեր գործիչները,–գրում է նա,–այս հարցում ևս շատ ավելի իրատես էին, քան այսօրվա ուռա–հայրենասիրության քարոզիչները» (3, 306):

Թուրքական բռնապետության դեմ արևմտահայության մղած ազատագրական պայքարի հերոսական դրվագներով հարուստ իրադարձությունները, ինչպես նաև 90–ական թվականներին սուլթանական ջարդարարների կողմից սանձազերծած կոտորածների և այդ հարցում եվրոպական տերությունների դիրքորոշման համակողմանի ուսումնասիրությունն ու լուսաբանումը կատարվել է անցյալի ու մերօրյա հայ և այլազգի պատմաբանների կողմից (46): Սակայն կոտորածներից մազապուրծ Ռուսաստանի սահմանն անցած հայ գաղթականների և ընդհանրապես արևմտահայերի նկատմամբ ռուսական հասարակայնության սոցիալական ամենալայն շերտերի ցուցաբերած աջակցության, նյութական ու բարոյական օգնության հանգամանքները, հետևաբար այդ փուլի առանձնահատկություններից բխող հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների պատմությունը խորությամբ ու հիմնավոր չեն քննարկել: Նրանք այդ խնդրին անդրադարձել են միայն այնքանով, որքանով այն առնչվել է իրենց ուսումնասիրության հիմնահարցի հետ (47):

Չանգվածային ջարդերից մազապուրծ Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականների նկատմամբ ռուս առաջադեմ մտավորականության աջակցության, նրանց սատարելու ու բարոյական օգնության խնդրին անդրադարձել են Ա. Ն. Մնացականյանը (48), Ա. Ս. Չամբարյանը (9), Կ. Զ. Թառոյանը (49), Մ. Գ. Ներսիսյանը (4) և ուրիշներ: Ա. Ն. Մնացականյանի «Չայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» ուսումնասիրությունը հիմնականում նվիրված է 20–րդ դարասկզբի Չայոց Մեծ եղեռնի ժամանակաշրջանի իրադարձություններին, որը մեր ուսումնասիրության շրջանակներում չի ներառվում: Հեղինակը միայն թռուցիկ կերպով շոշափել է նաև 1894–1896 թթ. կոտորածների հարցը, անդրադարձել այդ խնդրում ռուս մտավորականների արձագանքներին, սակայն ուսումնասիրության մեջ չեն լուսաբանվել ռուս հասարակայնու-

թյան սոցիալական լայն շերտերի կողմից արևմտահայ փախստականներին ցույց տրված նյութական ու բարոյական օգնության և Հայկական հարցում նրանց հայանպաստ կողմնորոշման մանրամասները:

Նույնը պետք է ասել Մ. Մուրադյանի Հայկական հարցին նվիրված ուսումնասիրության մասին (50), որում, սակայն, հեղինակը խնդրո առարկա հիմնահարցին անդրադարձել է մասամբ, հարևանցիորեն:

Բազմավաստակ պատմաբան Ա. Ս. Համբարյանը, քննարկվող հիմնահարցին անդրադառնալով արխիվային վավերագրերի ու այլ փաստական նյութերի հիման վրա, լուսաբանել է հայ գաղթականներին ռուս առաջադեմ մտավորականների ցույց տված բարոյական ու նյութական օգնությունը, ընդգծելով, որ արևմտահայությունը ստեղծված ամենածանր պահին հայացքը ուղղեց դեպի Ռուսաստան, ուր ժողովրդական լայն զանգվածները, նույնիսկ կառավարական ոլորտի բարձր պաշտոնյաները օգնության ձեռք մեկնեցին դժբախտության մեջ հայտնված հայ գաղթականներին (57, 1987, 1, 5–6):

Ակադեմիկոս Մ. Գ Ներսիսյանը, անդրադառնալով արևմտահայերին ցուցաբերած ռուս առաջադեմ մտավորականության բարոյական աջակցության խնդրին՝ իրավացիորեն բարձր գնահատականի է արժանացնում նրանց կողմից «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թ. տերությունների միջամտությունը» և «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուների հրատարակումը: Նկատի ունենալով ժողովրդական լայն զանգվածների ինքնաբուխ օգնության պատրաստականությունը՝ Մ. Գ. Ներսիսյանը ընդգծում է, որ այն չէր սահմանափակվում միայն Ռուսաստանի սահմանն անցած գաղթականներին ցույց տրված նյութական օգնությամբ, նրանց մտահոգում էին նաև Արևմտյան Հայաստանի որբացած հայ երեխաները: Ռուսական հասարակությանը համակած օգնության գործը այնպիսի մեծ հնչեղություն ունեցավ, որ Կ. Պոլսից Ա. Ի. Նելիդովը «հարկ համարեց,–նշում է Մ. Գ. Ներսիսյանը,–հրապարակորեն շնորհակալություն հայտնել ռուս հասարակությանը և մամուլին այն սրտացավ ուշադրության ու եղբայրական օգնության համար, որ ցուցաբերվեց արևմտահայության նկատմամբ» (4, 159):

Արևմտահայ գաղթականներին ռուս հասարակության կողմից ցույց տված օգնության հարցին է անդրադարձել պրոֆեսոր Կ. Զ. Թառոյանը (49, 1978, 228–234): Նա իրավացիորեն գրում է. «Հայ գաղթականներին օգնե-

լու, նրանց համար ապրելու և աշխատանքի պայմաններ ստեղծելու գործում դրսևորվեց ռուս ժողովրդի անշահախնդիր բարեկամությունը: Ռուսական կայսրության տարբեր կենտրոններում,–շարունակում է նա,–կազմակերպվում են բարեգործական ընկերություններ, որոնք եռանդուն աշխատանք են ծավալում հայ գաղթականների համար նյութական միջոցներ հայթայթելու» (49, 1978, 1, 232): Հեղինակը, լուսաբանելով արևմտահայերին ռուս ուսանող երիտասարդության ցույց տված բարոյական աջակցությունը, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում այն հիմնավորող արխիվային վավերագրեր:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, մեզ հետաքրքրող հիմնահարցի հետ կապված որոշ խնդիրներ լուսաբանվել են առանձին հոդվածներով, սակայն 19–րդ դարի 90–ական թվականներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս հայաբնակ վիլայեթներում մասսայական կոտորածների ու Հայկական հարցում ռուս հասարակայնության սոցիալական ամենալայն շերտերի մոտեցումները, առանձնապես կոտորածներից մազապուրծ արևմտահայ տասնյակ հազարավոր փախստականներին ապաստան տալը, բարոյական աջակցությունն ու նյութական օգնությունը, կայսրության հսկայածավալ տարածքներից ժողովրդական լայն զանգվածների ինքնաբուխ նվիրատվության և ռուս առաջադեմ մտավորականների հայանպաստ գործունեության արդյունքում ստեղծված միջոցներով մերկ ու սովալլուկ փախստականների կենսապայմանների բարելավումը, Արևմտյան Հայաստանում հայ որբերի համար ապաստարանների հիմնումն ու տեղերում տուժածներին մարդասիրական օգնության կազմակերպումը, ինչպես նաև երկրի ներսում ցարական իշխանությունների ու նրանց կամակատար խավարամիտ մամուլի հարձակումներից կովկասահայությանը պաշտպանելն ու նրանց զորավիգ լինելու ռուս հասարակայնության պատրաստականությունը և հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման հարցերը մինչև օրս ամբողջական ու համակողմանի չեն ուսումնասիրվել: Ամվանի պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը, լինելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների խոր գիտակ, նկատի ունենալով Ռուսաստանի ու ռուս ժողովրդի բացառիկ դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում ու ընդգծելով 19–րդ դարի 90–ական թվականներին հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման առավել կարևոր լինելու հանգամանքը, իրավացի է՝ շեշտելով, որ այդ փուլը «դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության ա-

ռարկա» (3, 95): Ուստի արևմտահայ գաղթականներին ռուս հասարակայնության ամենալայն սոցիալական շերտերի աջակցության, նյութական ու բարոյական օգնության մանրամասների և այդ խորապատկերի վրա նշված փուլում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերություններում եղած թյուր ու սխալ տեսակետները շտկելու և այդ հարաբերությունների ճիշտ մեկնաբանման համար ձեռնամուխ եղանք սույն հիմնահարցի ուսումնասիրությանը՝ ցանկանալով մեր համեստ ներդրումով լրացնել հայ պատմագիտության այդ բացը, միաժամանակ շեշտելով, որ երբեք հավակնություն չունենք կարծելու, թե մեր աշխատանքը տվյալ հիմնահարցի մասին ամբողջական ու ավարտուն խոսք է:

Մեր հետազոտության նպատակն է ցույց տալ, որ դարեր շարունակ թուրքական բռնապետության տակ հեծող արևմտահայության նկատմամբ կիրառվող մշտական կեղեքումներն ու ազգային կրոնական հալածանքները 19-րդ դարի 90-ական թվականներին թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության ուժգնացման հետևանքով ավելի էին ահագնանում ու թուրք կառավարիչների ուղեղում ձևավորվում էր Հայկական հարցը արևմտահայերին իսպառ բնաջնջելու միջոցով լուծելու հրեշավոր գաղափարը, որը շուտով բարձրացվեց պետական քաղաքականության աստիճանի, ընդունեց կանխամտածված ու նախօրոք ծրագրված բնույթ և դրսևորվեց 19-րդ հարյուրամյակի վերջին տասնամյակում զանգվածային ջարդերի ձևով:

– Բացահայտել հայկական կոտորածների նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշումը, Թուրքիայի, հետևաբար արևմտահայության հանդեպ ցարիզմի ավանդական քաղաքականության բնագավառում կատարված շրջադարձը, որը տրամագծորեն հակադիր էր Ռուսաստանի Հայկական հարցում հայանպաստ կողմնորոշմանը, ուստի չէր արտահայտում ռուս ժողովրդի հավաքական կամքն ու ցանկությունները, ընդգծելով այդ խնդրում կառավարության երկվությունը, որ մի կողմից՝ չէր ցանկանում արևմտահայերին հովանավորելով վատացնել հարաբերությունները սուլթանի հետ, վերջինիս մղել տերությունների՝ մասնավորապես Անգլիայի գիրկը և իր Անդրկովկասի տիրույթների հարևանությամբ Անգլիայի հնարավոր ներկայության հետևանքով Ռուսաստանի համար ստեղծել անապահով վիճակ, իսկ մյուս կողմից՝ աշխատում էր չկորցնել թուրքահպատակ քրիստոնյա ժողո-

վորդների, մասնավորապես արևմտահայության վրա ունեցած իր ավանդական ազդեցությունը:

– Ընդգծել, որ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության օրակարգ մտցնելու պահից սկսած՝ տերությունները, ձևախեղելով նրա բովանդակությունը, այն ծառայեցրել են որպես սուլթանի վրա ճնշում գործադրելու և նրանից իրենց համար շահավետ արտոնություններ կորզելու դիվանագիտական միջոց:

– Ցույց տալ որ ի հակադրություն այս փուլի ցարիզմի ոչ հայանպաստ կողմնորոշման, որքան ահագնանում էր թուրքական ջարդարարների կողմից արևմտահայության ֆիզիկական բնաջնջման վտանգը, այնքան ավելի էր կարևորվում հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշման անհրաժեշտությունը.

– Լուսաբանել 1894–1896 թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածներից մազապուրծ ռուսական սահմանն անցած տասնյակ հազարավոր մերկ ու սովալլուկ արևմտահայ փախստականներին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում որբ երեխաներին ու տեղում տուժածներին ռուս ժողովրդի սոցիալական բոլոր շերտերի ու առաջադեմ մտավորականների աջակցությունը, բարոյական ու նյութական օգնությունը, ընդգծելով, որ այդ խնդրում ցարիզմն ու նրա կամակատար հետադեմ ուժերը և ժողովրդական լայն զանգվածները ունեին տրամագծորեն հակադիր կողմնորոշում,

– Հիմնավորել երկրի ներսում ցարական իշխանությունների ու նրանց խոսափող, խավարամիտ մամուլի հարձակումներից կովկասահայությունը պաշտպանելու ռուս առաջադեմ մտավորականների պատրաստակամությունն ու նրանց գործադրած ջանքերը,

– Ցույց տալ, որ ռուս առաջադեմ մտավորականության գործունեության հետևանքով երկրում ձևավորվեց հայանպաստ հասարակական կարծիք, որի ակտիվ ներգործության հետևանքով պաշտոնական մամուլը և նրան հետևող ոչ պաշտոնական մամուլի որոշ օրգաններ իրենց վերաբերմունքը մեղմացրին հայ ժողովրդի նկատմամբ:

Ուսումնասիրության շարադրման ընթացքում մեզ հետաքրքրող հիմնահարցերին զուգընթաց ներառնվել են նաև այլ խնդիրներ, ստեղծվել է հարցերի լայն շրջանակ, որով համակողմանի ու ընդգրկուն է դառնում 90-ական թվականներին համիդյան կոտորածների ընթացքում ռուս հասարակական մտքի հայանպաստ կողմնորոշման, արևմտահայերին ռուսական հա-

սարակայնության սոցիալական ամենատարբեր շերտերի ցուցաբերած բարոյական ու նյութական օգնության ամբողջական պատմությունը:

Հետազոտության մեթոդոլոգիական ելակետը հիմնահարցի համակողմանի ընկալման, գիտական սկզբունքների ու նրա պատմաքննական մեթոդների հետևողական կիրառումն է: Շարադրման ընթացքում հետևելով դեպքերի հաջորդականությանն ու իրադարձությունների տրամաբանական ընթացքին, համադրելով տարբեր բնույթի սկզբնաղբյուրներ, բաղդատելով հիմնահարցի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ՝ ձգտել ենք անկողմնակալորեն լուսաբանել զարգացման առաջընթացի ուղին, նրանց փոխկապակցության մեջ բացահայտել պատմական ճշմարտությունը, այդ ընթացքում հավատարիմ մնալով իրատեսության, անաչառության ու հետազոտման պատմաքննական սկզբունքներին:

Հետազոտության գիտական նորույթը հիմնահարցի ամբողջական ու համակողմանի ընկալման և նրա նորովի գիտական, իրատեսական ու պատմաքննական մեկնաբանությունն է:

Փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտել ենք 1890–ական թվականներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայահոծ վիլայեթներում իշխանությունների սանձազերծած զանգվածային կոտորածներից մազապուրծ ռուսական կայսրության սահմանն անցած տասնյակ հազարավոր մերկ ու սովալլուկ հայ գաղթականներին ռուս ժողովրդի աջակցությունը, նյութական ու բարոյական օգնությունը, երկրում հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորումը և այդ ամենը անցկացնելով ռուս հասարակական մտքի ոսպնյակով՝ ներկայացվել է նրա գնահատմամբ: Հիմնահարցի լուսաբանման ընթացքում աշխատել ենք տարրորոշել ու իրար հակադրել Հայկական հարցում ցարական–պաշտոնական և ժողովրդական լայն զանգվածների ու առաջադեմ մտավորականների տրամագծորեն հակադիր մոտեցումները, որի ընթացքում հստակ ու պարզորոշ, առավել ցայտուն ու ընդգծված է արտահայտվել վերջիններիս հայանպաստ կողմնորոշումը, հայ գաղթականներին նրանց նյութական ու բարոյական օգնությունը, համակրանքն ու սրտացավ աջակցությունը: Հիմնավոր ու վճռականորեն մերժել ենք քննարկվող փուլում Հայկական հարցում ցարիզմի որդեգրած կողմնորոշումը, որը տրամագծորեն հակադիր էր թուրքական լծից արևմտահայության ազատագրման բաղձանքներին ու բնավ էլ չէր արտահայտում ռուս ժողովրդի հավաքական կամքն ու ցանկությունները, սակայն

անցյալի պատմագրության կողմից հանիրավի վերագրվում էր նաև ռուս ժողովրդին, ծնունդ տալով կեղծ ու հակագիտական, արհեստածին տեսակետների, որով խաթարվում էին հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունները:

Հայանպաստ հասարակական կարծիքի, Հայկական հարցի ռուս ժողովրդի իրատեսական ընկալման, նրա մտածելակերպի, Թուրքիայում հայկական կոտորածների նկատմամբ նրա դիրքորոշման կարևորության հիմնավորումն ու լուսաբանումը մեր ուսումնասիրության հիմնական առանցքն է:

Ռուս առաջադեմ մտավորականները, ակտիվորեն արծագանքելով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող արյունալի իրադարձություններին, հայ–ռուսական բարեկամական հարաբերությունների անցյալի հարուստ դրվագներով ու հայ ժողովրդի անդավաճան հավատարմության և անձնուրաց նվիրվածության օրինակներով հիմնավորում էին հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման օրինաչափությունը և մատնանշում դժբախտության մեջ հայտնված հայ ժողովրդին պաշտպանելու, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը: Նրանք ընդգծում էին հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր մի խնդիր, որին վաղնջական ժամանակներից իր պատմության դառն կենսափորձով հանգել էր ողջ հայությունը, այն է՝ հայ ժողովրդին կարող է իրատեսորեն օգնել միայն Ռուսաստանը (51): Հետևաբար հիմնահարցի համակողմանի լուսաբանումը ոչ միայն գիտական, այլ նաև հույժ կարևոր քաղաքական արժեք ու արդիական հնչեղություն ունի:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանը և հայ ժողովուրդը ինչպես անցյալում, կրկին հայտնվել են տարածաշրջանում շահեր ու հետաքրքրություններ ունեցող գերտերությունների հակամարտությունների ոլորտում: Միաժամանակ աշխարհաքաղաքական այս տարածաշրջանը, մասնավորապես Հարավային Կովկասը, շարունակում է մնալ որպես ազգամիջյան հակամարտությունների եռացող կաթսա, ուր առկա են ազգամիջյան բախումները և չլուծված տարածքային խնդիրները: Քննարկվող փուլում, ինպես նաև 20–րդ դարի առաջին քառորդին, այժմ ևս հույժ կարևորվում ու քաղաքական արժեք է ձեռք բերում ճիշտ կողմնորոշման, հավատարիմ դաշնակից ունենալու խնդիրը:

Պատմության անցյալի դասերի ընկալումն ու ճիշտ կիրառումը բնակա-

նաբար կբացառեն ճակատագրական սխալները, կապահովեն բնականոն կապը ապագայի հետ: Ուստի հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գիտական ու հիմնարար հետազոտումն ու լուսաբանումը մեր օրերում ճանաչողական ու գիտագործնական արժեք ունի:

Հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-ռուսական հարաբերությունների զարգացման միտումները, Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված համագործակցության պայմանագրերի ամբողջական համալիրը, Հայաստանում Ռուսաստանի ներկայությունը, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը հաղորդում են նոր որակ, նաև քաղաքական նոր բովանդակություն: Տարածաշրջանում ու նրա շուրջը ձևավորվում են տերությունների նոր համագործակցություններ, մասնավաճառ Հայաստանի աշխարհագրական դիրքը նկատի ունենալով: Ինչպես արդարացի ու իրատեսորեն ընդգծում է ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, «Պետք է զգույշ լինել հատկապես այսօր, երբ ժամանակակից պանթուրքիստները Կովկասը զավթելու նոր ծրագրեր են կազմում» (4, 125): Հետևաբար այդ առումով ավելի է ընդգծվում սույն ուսումնասիրության գործնական նշանակությունը, որովհետև այն նպատակ է հետապնդում հայ-ռուսական հարաբերությունների անցյալի դրական հարուստ փորձը գործնականորեն կիրառել արդի ժամանակաշրջանում: Այն կարող է մեծապես նպաստել հիմնախնդիրներ վերաբերող նոր ուսումնասիրությունների համար: Աշխատանքը խիստ օգտակար ու անհրաժեշտ է հասարակական-քաղաքական գործիչների համար, որպեսզի անցյալի պատմության դասերի ընձեռած հնարավորությունների ճիշտ կիրառումով, հարուստ ու իմաստավորված փորձով ձեռք բերված նվաճումներով կառուցվեն հայ ժողովրդի համար այնքան անհրաժեշտ ու կարևոր հայ-ռուսական հարաբերությունները: Անշուշտ, սույն ուսումնասիրությունը օգտակար կարող է լինել ուսանողական գիտական շարադրությունների, կուրսային ու ավարտական աշխատանքների կատարման ընթացքում:

Հետազոտության աղբյուրագիտական հենքը բազմաբնույթ է: Այն ներառում է Մոսկվայի և Երևանի արխիվներից վերցված տարատեսակ վավերագրեր, պարբերական մամուլի նյութեր, հրապարակախոսական հոդվածներ, հրատարակված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, ժամանակակիցների հուշագրություններ, հրապարակի վրա եղած պատմագիտական մեմագրություններ և այլն:

Մեր կողմից դրանք խմբավորվել են հետևյալ կերպ.

1. Արխիվային վավերագրեր. Հիմնահարցի լուսաբանման համար առավել արժեքավոր նյութեր ենք քաղել Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի (այնուհետև՝ АВПРИ) “Политархив”, “Канцелярия”, “Турецкий стол”, “Посольство в Константинополе”, “Армянский вопрос”, “Секрет. арх. мид”) ֆոնդերից: Դրանք Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում ծառայության մեջ գտնվող ռուս դիվանագետների՝ Կ. Պոլսի Ռուսաստանի դեսպանին ու արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված հաշվետվություններ ու գաղտնի ծառայության գործակալների՝ Արևմտյան Հայաստանի տարածքի, արևմտահայության սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նրա քաղաքական վիճակի, հայ-թուրքական, հայ-քրդական հարաբերությունների, հայկական մասսայական կոտորածների մասին զեկուցագրեր են: Այդ ֆոնդերի առանձին թղթապանակներում մանրամասնությամբ լուսաբանվում են Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները. հայ գյուղացիության սոցիալական, ազգային ու կրոնական հալածանքները, արևմտահայերի բռնի մահմեդականացման ու հազարավոր մարդկանց այդ հողի վրա խոշտանգումների պատմությունը, թուրքական կառավարության հակահայ քաղաքականության բազմաբնույթ կողմերը, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ու դրանից հետո ռուս զինվորներին ցույց տրված նյութական ու բարոյական օգնության, Ռուսաստանի ու ռուսների նկատմամբ արևմտահայերի ունեցած համակրանքի համար մահմեդական մոլեռանդ ազգաբնակչության և իշխանությունների վրեժխնդրության ու արյունալի հաշվեհարդարի իրողությունները:

Նշված ֆոնդերում քննարկվում են Ռուսաստանի և մյուս տերությունների կողմից Հայկական հարցը իրենց քաղաքական շահերին ծառայեցնելու ձևերն ու նրանց գործելակերպը, համիդյան կոտորածների մանրամասները: 19-րդ դարի 70–80-ական թվականները ներկայացնող վավերագրերում ցարական դիվանագետների ու գաղտնի գործակալների վերաբերմունքը Հայկական հարցում արտահայտվում է մեղմ ու բարյացակամ, սակայն հետագայում, մասնավորապես 90-ական թվականներից նրանց մոտ Հայկական հարցի բովանդակությունը աստիճանաբար ներկայացվում է ձևախեղված, հաճախակի այդ հարցում կրկնվում են թուրքական տեսակետները: Ջեկուցագրերի բովանդակությունը հարմարեցված է ցարիզմի արտաքին քաղաքականու-

թյան ուղղվածությանը. կոտորածների ու անկարգությունների խնդրում մեղադրվում են հայերը, որոնք ներկայացվում են որպես հեղափոխական և անկարգության հրահրողներ, կեղծ ու մտացածին է ներկայացվում հայ ազգաբնակչության թվաքանակը: 90-ական թվականներին ցարական դիվանագետները թուրքական աղբյուրների հետևողությամբ ազգաբնակչության ընդհանուր կազմում հայ բնակչությանը ներկայացնում են որպես չնչին փոքրամասնություն, մինչդեռ 80-ական թվականների սկզբներին, ի հակադրություն թուրքական աղբյուրների, հաճախ նաև մերժելով նրանց հաղորդած պաշտոնական տվյալները, գտնում էին, որ հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանում, նաև որոշ վիլայեթներում կազմում է հարաբերական մեծամասնություն: Ձեկուցագրերի բովանդակության վրա 80-ից մինչև 90-ական թվականները բացասական են ներգործել ինչպես ժամանակի, այնպես էլ ցարիզմի՝ մերձավորարևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած քաղաքական շրջադարձի գործոնները, որոնք վկայում են ցարիզմի կողմից Հայկական հարցում նոր կողմնորոշման էական կողմերը, նրա ոչ հայանպաստ էությունը: Այնուամենայնիվ, ցարական դիվանագետների զեկուցագրերում հաճախակի տեղ են գտել արևմտահայության ճակատագրի հանդեպ մտահոգության ու տագնապի պահեր, անգամ կոտորածներից տուժածներին ցույց տված նյութական ու բարոյական օգնության օրինակներ, առանձնապես Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Ի. Ջինովսի գործունեության շրջանում:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Մոսկվայի կենտրոնական պետական արխիվի (այսուհետև՝ ԱՐԽԱՄ), ՀՀ պետական կենտրոնական պատմական արխիվի (ՀՀ ՊԿՊԱ), ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու փաստաթղթերի ուսումնասիրման պետական կենտրոնական արխիվի (այսուհետև՝ ՀԲԿՓՈՒՊԿԱ) և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվի ֆոնդերից քաղված նյութերը:

2. Քննարկվող ժամանակաշրջանի պարբերական մամուլը, որը հայկական կոտորածներին և ընդհանրապես Հայկական հարցին արծագանքել է ըստ իր հասարակական-քաղաքական ուղղվածության.

ա) պաշտոնական, նաև ոչ պաշտոնական պահպանողական «Մոսկովսկիե վեդոմոստի», «Պրավիտելստվեննիյ վեստնիկ», «Գրաժդանին», «Նովոյե վրենյա», «Կրեմլ», «Սվետ», «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», որոնք Հայկական հարցը լուսաբանում են՝ հետևելով կառավարության քաղաքական ընթացքին: Ընդհուպ մինչև 80-ական թվականների երկրորդ կեսը

նրանք բարյացակամ էին տրամադրված հայ ժողովրդի հանդեպ: Նրանց էջերում հաճախակի լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, արվեստին ու գրականությանը նվիրված հարցեր, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի կատարած ծառայությունն ու նրա ունեցած դերը: Հետագայում, մասնավորապես 90-ական թվականներին, աստիճանաբար նրանց տոնը արևմտահայության հանդեպ փոխվեց, ընդունեց թշնամական բնույթ: Հայկական հարցում ցարիզմի արտաքին քաղաքականության կողմնորոշումը հիմնավորելու նպատակով մամուլի այդ օրգանները աշխատանք ծավալեցին կովկասահայության դեմ՝ մեղադրելով հայերին հեղափոխականության ու անջատողականության մեջ:

90-ական թվականներին հայկական զանգվածային կոտորածների ընթացքում ռուս առաջադեմ մտավորականության գործունեության հետևանքով երկրում ձևավորված հայանպաստ հասարակական կարծիքի ազդեցության ներքո «Պրավիտելստվեննիյ վեստնիկ» և «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրերը հայ ժողովրդի հանդեպ իրենց խիստ տոնը մեղմացրին, իսկ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի շուրջը համախմբված առաջադեմ մտավորականների, մասնավորապես նրա տնօրեն, իշխան Է. Է. Ռիստոմսկու ջանքերով այն վերածվեց հայանպաստ գործունեության ծավալման օջախի:

բ) Պահպանողական-առաջադիմական «Վեստնիկ Եվրոպի», «Ռուս», «Նովոյե սլովո», «Ռուսսկոյե սլովո», «Ռուսսկիյ վեստնիկ», «Սլովո», «Ռուսսկայա միսլ», «Բիրժեվիե վեդոմոստի», Հայկական հարցը մասնավորապես զանգվածային կոտորածների իրադարձությունները մեկնաբանում են հաճախ անկողմնակալ, նույնիսկ հայանպաստ կողմնորոշումով: Քննադատում են եվրոպական տերությունների, մասնավորապես Անգլիայի՝ Հայկական հարցում գործադրած դիվանագիտական խարդավանքները, ռուս-անգլիական հակամարտությունների ոլորտում ընդգրկված Հայկական հարցը դիտում են անգլիական կառավարության կողմից արհեստականորեն առաջադրված խնդիր, Ռուսաստանի դեմ Անդրկովկասի սահմանների հարևանությամբ խոչընդոտներ հարուցելու համար: Միաժամանակ պետք է ընդգծել, որ մամուլի այդ օրգանների շուրջը համախմբված առաջադեմ մտավորականներից շատերը ունեին հայամետ կողմնորոշում ու իրենք էին եղանակ ստեղծում այդ բնագավառում:

գ) Առաջադիմական «Նեդելյա», «Դեն», «Դելո», «Լուչ», «Նովոստի» լրագրերի էջերից Հայկական հարցը չէր իջնում: Հրապարակվող լրագրային

ու հրապարակախոսական հողվածներում սուր քննադատության է ենթարկվում կառավարության ու նրա ծայնափող մամուլի ոչ հայանպաստ դիրքորոշումը և առանձնահատուկ համակրանքով են ներկայացվում հայ ժողովրդի պատմության, արվեստի ու գրականության հարցերը, հիացմունքով են արձագանքել թուրք ջարդարարների դեմ արևմտահայության ազատագրական պայքարի հերոսական դրվագներին, Սասունի ու Ջեթունի հայ բնակչության խիզախ մաքառումներին: Սամուլի այդ օրգանների գործունեության արդյունքում աստիճանաբար երկրում ձևավորվեց հայանպաստ հասարակական կարծիք, որը վճռական դեր խաղաց կոտորածներից մաքապուրծ Ռուսաստանի սահմանն անցած հազարավոր հայ գաղթականներին ապաստան տալու, նյութական ու բարոյական օգնության կազմակերպման գործում: Առանձնապես պետք է առանձնացնել ու հարգանքի տուրք մատուցել հայանետ հրապարակախոսներ Վ. Գոլմստրեմին, Է. Է. Ուխտոմսկուն, Ա. Ն. Սազոնովին, Վ. Գոլցևին, Կ. Կոտովիչին, որոնք իրենց ակտիվ ու նպատակաուղղված արդյունավետ գործունեությամբ, հայ ժողովրդին օգնելու և աջակցելու նպատակով կողմնորոշեցին ռուս ժողովրդին Հայկական հարցում կեղծ ու սխալ ուղուց հայանպաստ ճիշտ հունը ուղղելու գործում:

3. Պետական բարձրաստիճան պաշտոնյաներ Լամզդորֆի (52), Վիտտեի (53), Միլոկովի (54) հուշագրությունները:

Նշված գործերում բավականին արժեքավոր տեղեկություններ են պահպանված Հայկական հարցի, Թուրքիայի հակահայկական քաղաքականության, ցարիզմի՝ Հայկական հարցում նոր կողմնորոշման, ինչպես նաև եվրոպական տերությունների ներքին հակամարտությունների ու հայկական կոտորածների ընթացքում նրանց դիրքորոշման մասին:

4. Պատմական ժամանակաշրջանը ընդգրկող և Հայկական հարցի հետ առնչվող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ: Այս հարցում կարևոր տեղ ունեն և առանձնահատուկ ընդգծվում են հայ և ռուս մտավորականների համատեղ ջանքերով լույս աշխարհ եկած մոսկովյան հայտնի երկու ժողովածուները. «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների 1895 թվականի միջամտությունը» և «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»: Օգտագործել ենք նաև «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», Ժնև, 1907, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթե-

րում», Երևան, 1972, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, «Թուրքական աղբյուրներ», հ. 4, Երևան, 1972:

“Сборник дипломатических документов”, Петроград, 1915 г. “Будущее устройство Армении” (по официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующие реформы в Армении), Петроград, 1915 г., “Колониальный восток”, М. 1924; “Из истории агрессивной внешней политики германского империализма”, М. 1952; “Геноцид армян в Османской империи” документы и материалы под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван 1966; История международных отношений 1871—1917гг. ч. I, М. 1947; Армянский сборник (Ю. Веселовский, А. Дживелегов, Кара—Мурза С. И другие), М. 1911; “Сборник материалов по русско—турецкой войне 1877—1878”, вып. I, СПб, 1896. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), Сборник, Составитель, ответ. редактор, автор предисловия проф. В. Микаелян, Ереван, 1995.

5. Պատմական ժամանակաշրջանը լուսաբանող պատմագիտական գործեր, հիմնահարցի հետ առնչվող հարուստ գրականություն, որը նշված է մատենագրության բաժնում:

6. Հետազոտության հիմնահարցը լուսաբանող գեղարվեստական գործեր (56):

7. Լայնորեն օգտագործել ենք հայկական պարբերական մամուլը. «Մշակ», «Արձագանք», «Մուրճ», «Փորձ», «Արոր», «Անահիտ», «Մասիս», «Արարատ», «Իրավունք», «Կոհակ», «Հնչակ», «Դրոշակ», «Արևելք», «Խոսք», «Մեղու», «Նոր դար», «Ռազմիկ», «Նոր հոսանք» լրագրերի ու ամսագրերի բազմաթվանդակ նյութերը: Ի դեպ, Հայկական հարցի վերաբերյալ ռուսական մամուլում հրապարակված բազմաթիվ հողվածներ, որոնք թարգմանաբար հրապարակվել են հայկական լրագրերում, օգտագործվել են մեր կողմից՝ նշելով ռուսերեն բնօրինակը:

Վերը նշված աղբյուրների համալիր ուսումնասիրությունը լայն հնարավորություն է ընձեռել լուսաբանելու Հայկական հարցում ռուսական հասարակայնության սոցիալական լայն շերտերի հայանետ դիրքորոշումը, հասարակական մտքի ակտիվ ներգործության արդյունքում պաշտոնական շրջանների դիրքորոշման մեղմացման, ռուս ժողովրդի կողմից արևմտահայերին ցույց տված սրտացավ աջակցության, հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման, նյութական ու բարոյական օգնության մանրամասները:

### Ծանոթություններ

1. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850–1870 թթ.), Երևան, 1955:
2. «Լրաբեր», 1946, թիվ 10:
3. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850–1890 թթ.), Երևան, 2002:
4. Ներսիսյան Մ. Գ., Պատմության կեղծարարները, Երևան, 1998:
5. «Մշակ»:
6. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, М., 1918.
7. Саркисян Е. К., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, стр. 64. նաև Խաժակ, Հարկերը Թուրքիայում, Բազու, 1903: Համբարյան Ա. Ս., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914), Երևան, 1965:
8. Տե՛ս Համբարյան Ա. Ս., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914), Երևան, 1965:
9. “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году”, М., 1896.
10. Архив внешней политики Российской империи (АВПРИ), ф. “Канцелярия”.
11. АВПРИ, ф. “Политархив”.
12. АВПРИ, ф. “Турецкий стол”.
13. Н. С. Киняпина, В. А. Георгиев, М. Т. Панченкова, Шеремет В. И., Восточный вопрос во внешней политике России (конец XVIII—начало XX вв.), М., 1978.
14. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, «Թուրքական աղբյուրներ», հ. 4, Երևան, 1972:
15. Джемал—паша, Записки 1913—1919, Армянский вопрос, Тифлис, 1923 նաև Gamuran Gürün Le Dossier Armenien; Istanbul 1984
16. Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչխորհրդային պատմագրության մեջ, Երևան, 1971, նույնի Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
17. Bilal \*im\*ir, The Cenesis of The Armenian Question, Ankara, 1984.
18. Ko\*а Sadi, Tarih Boyunca Ermeniler ve Türk—ermenı ili\*irileri, Ankara, 1967.
19. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Istanbul, 1976.
20. Cemal Kutay, Karabekir Ermenistan nasıl yok etti?, Istanbul, 1956.
21. Ա—դո, Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները, Երևան 1912, Ս. Գաբրիելյան, Հայկական ճգնաժամ և վերածնունդ, Բոստոն, 1905, Խաժակ, Հարկերը Թուրքիայում, Թիֆլիս, 1903, նույնի հայերը Թուրքիայում, Բազու, 1903:
22. «СПб. ведомости».
23. Գեղամյանց եղ., Հայերի ազատագրական շարժումները ժՅ դարում կամ Հայկական հարցի 5—րդ շրջանը, Բազու, 1915, Կ. Թումանյան, Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, Լոնդոն, 1900:
24. Վարանդյան Մ., Գ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Պարիզ, 1932. հ. 2, Գահիրե, 1950, Ա. Կիսուր, Հայ ազատագրության ճանապարհին, Պեյրուք, 1949, Արզումանյան Մ. Վ., Դարավոր գոյամարտ, Երևան, 1982, էջ 182:
25. Տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա., Փարիզ, 1934:
26. Իշխանյան Բ., Թուրքահայերի հարցը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 103—104:
27. Իզմիրլյան Ս., Դատողություններ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, հ. 2, Բեյրութ, 1966:
28. «Նորք», գիրք 1, 2. 1926:
29. Борьян Б, Армения, Международная дипломатия и СССР, ч. 1, М.—Л. 1928.
30. Pastermadjian H., Histoire de l’Armenie Depuis les origines jusqu au traite de Lausanne, Paris 1964
31. Սարուխան Ա., Հայկական հարցը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Թիֆլիս, 1912:
32. Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, 1957, գ. 2, Երևան, 1959: Ионнасян А. Р., Иосиф Емин, Ереван, 1945; նույնի Россия и армянское освободительное движение в 80—ых годах XVIII столетия, Ереван, 1947; Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1890 թթ., Երևան, 2002, նույնի՝ Հայ—ռուսական հարաբերությունների պատմությունից գ. 1, Երևան, 1956; նույնի՝ Հայաստանի տնտեսական վիճակը 1860—1890 թթ., «Լրաբեր», թիվ 10, 1946; նույնի՝ Հայ—ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մի քանի հարցերի մասին, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1—2, 1994: Գրիգորյան Զ. Տ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, նույնի՝ Присоединение Восточной Армении к России в начале XIX в., М., 1959; նույնի Военное содружество армянского и русского народа в начале XIX в., Ереван, 1957; Պարսամյան Վ. Ա., Գրիբոյեդովը և հայ—ռուսական հարաբերությունները, Երևան, 1947; նույնի՝ Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, Երևան, 1978: Պողոսյան Ա. Մ., Հայ—ռուսական բարեկամական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1974: Աբրահամյան Ա. Գ., Էջեր Անդրկովկասի ժողովուրդների և հայ—ռուսական հարաբերությունների պատմություն-

մից, Երևան, 1953: Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954; Ոսկանյան Վ. Կ., Հայ-ուսական հարաբերությունների հիմնախնդիրը խորհրդային պատմագրության մեջ, «Տեղեկագիր», թիվ 4, 1958: Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 1971, Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981, Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ուսական հարաբերությունները, Երևան, 1989:

33. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Երևան, 1978:
34. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 416, թ. 1-2, գ. 122, թ. 1, գ. 134, թ. 1-2, գ. 139, թ. 15-17, գ. 170, թ. 1-2, գ. 157, թ. 1-16, գ. 154, թ. 1-2, "Геноцид армян в Османской империи", Сборник документов и материалов под редакцией профессора М. Г. Нерсисяна, Ереван, 1966, նաև «Մշակ», 1879, թիվ 20:
35. Րաֆֆի, Թուրքահայերը, Թիֆլիս, 1894:
36. ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (ՊԿՊԱ), ֆ. 48, գ. 21, թ. 13:
37. Չոպանյան Ա., Հայերը թուրքական լծի տակ, Բոստոն, 1918:
38. «Անահիտ» (Փարիզ):
39. «Մասիս»:
40. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
41. "Сборник материалов по русско-турецкой войне 1877-1878", вып. 1, СПб, 1896.
42. Հովհաննես Ռունանյան, Երկերի ժողովածու հ. 4, Երևան, 1951:
43. ՀՀ ՊԿՊԱ (ֆ. 1, ց. 2, գ. 685):
44. Покровский М. Н., Дипломатия и войны царской России в. 19-ом столетии, М., 1923.
45. «Պատմության հարցեր», միջբուհական գիտական աշխատությունների ժողովածու, հ. 1, Երևան, 1978:
46. Ներսիսյան Ս. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, նույնի՝ Հայաստանի տնտեսական և քաղաքական վիճակը 1860-1880 թթ., ՀՍՍՀԳԱ, «Տեղեկատու», թ. 10, 1946, նույնի՝ Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982: Համբարյան Ա. Ս., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914 թթ), Երևան, 1967; նույնի՝ Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990, Саркисян Е. К., Политика османского правительства в Западной Армении, и вели-

кие державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972; Степанян С. С., Армяне в политике империалистической Германии, Ереван, 1975, Մարկոսյան Ս. Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջին, Երևան, 1968, Ղազարյան Հ. Ս., Արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը 1800-1870 թթ., Երևան, 1967, Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, Վարդանյան Հ. Գ., Արևմտահայության ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Երևան, 1967, Հակոբյան Ս. Ս., Հայաստանը իմպերիալիստական տերությունների պլաններում, Երևան, 1967, Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Երևան, 1980, նույնի՝ Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, Հովհաննիսյան Ռ.Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյալ» կազմակերպությունը, Երևան, 1965, Кургинян Е. А., Армянская проблема в международных отношениях 1870-1896 гг., Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, М., 1969; Карамян К., Положение западных армян, Армянский вопрос и международная дипломатия в последней четверти XIX и начале XX вв. (Автореферат на соискание ученой степени доктора исторических наук), Ереван, 1972; Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976: Բայրամյան Լ. Ա. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Երևան, 1982, Պողոսյան Հ. Ս., Սասունի պատմությունը, Երևան, 1985, Киракосян А., Великобритания и Армянский вопрос (90-ые годы XIX века), Ереван, 1999; Թառոյան Կ. Ջ, ժողովրդական շարժումները Սասունում 1890-1904 թթ., Երևան, 1966, նույնի՝ Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, Երևան, 1980, նույնի՝ Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Երևան, 2001, Սիմոնյան Հ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, Արզումանյան Ս. Վ., Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, Туляк В. Г., Россия и Армянский вопрос, Ереван, 1998, Սկրտչյան Լ., Ջեթրունի ապստամբությունը 1895-1896 թթ., Երևան, 1995, Կիրակոսյան Ա, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, Мегрелидзе Ш. В., Закавказье в русско-турецкой войне 1877-1878 гг, Тбилиси, 1972, Пейдж Н. А., Армянский вопрос и державы в середине 90-ых годов XIX века; в книге "Проблемы истории СССР" вып. 4, М. 1974; Մուրադյան Ս. Ս., Հայկա-

- կան հարցը և ռուս հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը, Երևան, 1998:
47. Մարկոսյան Ա., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968, Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, Саркисян Е. К., Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972, Мегрелидзе Ш. В., Закавказье в русско-турецкой войне 1877-1878 гг, Тбилиси, 1972:
  48. Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965:
  49. «Պատմության հարցեր», I:
  50. Մուրադյան Մ. Ա., Հայկական հարցը և ռուս հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը, Երևան, 1998:
  51. Стен Гольмстрем В., Распятие, "СПБ, ведомости", 1897, № 289; И камни вопиют, "СПБ, ведомости", 1896, № 32, 33; Горенко Л., Об армянах, "Сибирский вестник" 1897, № 17; Комаровский Л. А., Об армянском вопросе, сб. "Братская помощь пострадавшим в Турции армянам" отд. II М., 1898, стр. 153-157; Сазонов А. Н., Европа и Турция в армянском вопросе, "Русская мысль" 1896, кн. 11, кн. 12; Грен А. Н., Роль армян во всемирной истории; "Россия и Азия" 1898, № 5-6; Котович К. "Армянский вопрос", "Новости", 1895 № 235, 236; Долгоруков П., Армянский вопрос и Русское общество, "Армянский вестник" 1916, № 1.
  52. Из дневка Ламздорфа В. И., "Вопросы истории", 1977, № 6.
  53. Витте С. Ю., Воспоминания, т. 2, М., 1960.
  54. Милюков П. Н., Воспоминания, М., 1990.
  55. Մարկոսյան Ա., Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, Саркисян Е. К., Политика Османского правительства в Западной Армении и великие державы в последней четверти XIX и начале XX в., Ереван, 1972:
  56. Шуф Вл., Сворогов (роман в стихах), СПб, 1898, кн. 40; Алибекова Е. К., Пора, "Русский труд" 1898, кн. 40; Морозов Е., Привет, сб. "Братская помощь" стр. XXXI, նաև "Русские писатели об Армении" (составители Арешян С. и Туманян Н.) Ереван, 1946, стр. 76.
  57. «Սովետական մանկավարժ»:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԹՈՒՐԵՒԱՅԻ ՀԱԿԱՅԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԳՆԱՑՈՒՄԸ 1880-1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

#### 1. Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի վատթարացումը. ազգային ու կրոնական հալածանքների ուժեղացումը

1878 թ. Բեռլինի վեհաժողովում տերությունների ընդունած չարաքաստիկ 61-րդ հոդվածը դառնալից ու ողբերգական հետևանքներ ունեցավ արևմտահայության հետագա ճակատագրում: Բեռլինի կոնգրեսը ոչինչ չտվեց արևմտահայությանը, սակայն նրանք ձեռք բերեցին բացարձակ թշնամիներ ի դեմս թուրքական իշխանությունների, որոնք՝ տասը տարիների ընթացքում ուժասպառ արին ու արյունաքամ դարձրին արևմտահայերին: Ռուս-թուրքական պատերազմի արդյունքներից, ինչպես նաև տերությունների հնարավոր միջամտության տազնապից գազազած թուրք կառավարիչները արևմտահայության նկատմամբ ավելի խորացրին բռնություններն ու հալածանքները: 1898 թ. դեկտեմբերի 24-ի թվակիր նամակով պատրիարք Աշրոպյանը Մ. Օրմանյանին հայտնում էր, որ Աբդուլ Համիդը անձնական զորույցի ընթացքում հայտնել է իրեն «նզովք կոնեն ինժի հաջորդելիք սուլթաններուն վրա, որ մինչև աշխարհիս երեսեն բովանդակ իսլամության ջնջումը պատերազմեն հայոց անկախության դեմ» (2, 571): Թուրքական իշխանությունների հետագա հայահալած գործունեության համար համիդյան այդ դատողությունները դարձան ուղեցույց, նախապատրաստեցին Հայկական հարցի լուծման թուրքական ծրագիրը: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Ա. Վանդալը իրավացիորեն կամխատեսում էր, որ թուրքական կառավարությունը նպատակաուղղված գործողություններ կծավալի արևմտահայության ֆիզիկական բնաջնջումով միջազգային դիվանագիտության օրակարգից հայկական հարցը հանելու համար (3, 8):

Թուրքական իշխանությունների բիրտ օրենքները վաղնջական ժամանակներից անլուր հալածանքների ու ողբերգությունների աղբյուր են եղել հայ ժողովրդի համար: Արևմտյան Հայաստանում նրանց վարած քաղաքականությունը միշտ էլ ունեցել է հակահայկական ուղղվածություն, սակայն 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո արևմտահայության ազգային ու սոցիալական ճնշումը, կրոնական անհանդուրժողականությունն ու հալածանքները, մշտական դարձած թալանն ու հարստահարությունները ուժեղացան, ազգային ճնշման քաղաքականությունը նոր երանգ, նոր իմաստ ստացավ (4, 120): «Չենք սխալվի,– գրում է անվանի պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը,– եթե ասենք, որ սուլթանական կառավարության՝ մինչև 1850–ական թթ. վարած ազգային ճնշման ու հալածանքների քաղաքականությունն այն չէր, ինչ նա դարձավ 1860–ական թթ. սկսած» (4, 186):

Անշուշտ, ռուս–թուրքական այդ պատերազմը խոր ու մնայուն հետք թողեց երբեմնի հզոր, սակայն իր դարն ապրած, ներքին ու արտաքին ցնցումներից տրոհվող ու բզկտված Օսմանյան կայսրության մարմնի վրա, ավելի խստացրեց նրա մասնատման գործընթացը: Հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային ազատագրական պատերազմները ճանապարհի հարթեցին նոր, անկախ ինքնուրույն պետությունների կազմավորման համար, ավելի խորացավ թուրքական գառամյալ կայսրության ճգնաժամը, սուլթանական գահի կործանման վտանգն ավելի մեծացավ (6, 235): Անգլիացի ռազմական պատմաբան Լիդլ Հարթի պատկերավոր արտահայտությամբ Օսմանյան կայսրության «Եվրոպայի ծայրին տեղավորված գլուխն ու պարանոցը գտնվում էին կտրվելու վտանգի տակ, իսկ նրա երկարաձգված մարմինը հակված էր կաթվածի» (7, 36):

Կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումների հետևանքով Թուրքիայից նրանց անջատումը, ինքնուրույն անկախ ազգային պետությունների կազմավորումը, կայսրության եվրոպական տարածքների կորուստը, նրա անհամեմատ թուլացումն ու եվրոպական տերությունների Թուրքիայի՝ ներքին գործերին միջամտելու մշտական վտանգը ստիպում էին սուլթանին դիմելու վճռական գործողությունների, կանխելու կայսրության ներքին ճգնաժամը և հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների հնարավոր բռնկումը՝ իր առջև խնդիր դնելով կրճատել, իսկ բարենպաստ պայմանների

առկայության դեպքում բնաջնջել կայսրության քրիստոնյա ազգաբնակչությանը (8, 23):

Թուրքական կայսրության, ինչպես նաև եվրոպական տերությունների ակտիվ գործունեության առանցքում, ընդհուպ մինչև 19–րդ դարի 70–ական թվականները, գտնվում էին Բալկանները, սակայն ռուս–թուրքական 1877–1878 թթ. պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո Թուրքիայի և տերությունների վճռական գործողությունների կենտրոնը տեղափոխվեց դեպի Արևելք: Բալկաններում որոշ իմաստով Արևելյան հարցն իրեն սպառեց, այժմ տերությունների դիվանագիտության մեջ ավելի ցցուն դարձավ Հայկական հարցը (9, 8): Այդ պատճառով Բ. Դուռը ամուր կառչեց իր ասիական տարածքներից՝ ձգտելով թուրքացեղ ու թուրքալեզու ժողովուրդների միավորումով կանխել կայսրության կործանումը, ստեղծել համաթուրանական պետություն (10, 1887, թիվ 156): Ուստի «եթե եվրոպական տարածքներում նրանց ոտքի տակի հողը խլվեց,– գրում է «Ռուսակայա միսլ» հանդեսը,– ապա ասիական տարածքներում նրանք ձգտում էին համախմբել ու գործադրել իրենց ողջ վայրի հզորությունը» (11, 1896, 11, 109): Համատարած թուրքական պետության ճանապարհին ընկած և այդ գործընթացին հակադրվող քրիստոնյա ժողովուրդների ճակատագիրն արդեն կանխորոշված էր: Հայաստանը գտնվում էր թուրքական կայսրության և Ռուսաստանի սահմանային այն հատվածում, որով իրարից անջատվում էին երկու տերությունների կազմում գտնվող թուրքալեզու ժողովուրդները, ուրեմն՝ «Հայաստանը այդ տարածքում չպետք է զորեղանար» (12, 2805, 1913): Ամիրաժեշտ էր այդ միավորումը խանգարող տարրերի ձուլումը կամ նրանց ֆիզիկական բնաջնջումը: «Ավելի բարձր մշակույթ ունեցող քրիստոնյա ժողովրդին ձուլել,– գրում է Լ. Մկրտչյանը,– փաստորեն անհնարին էր, և սուլթանն ընտրում է մյուս՝ բնաջնջման միջոցով հարցը լուծելու ճանապարհը» (13, 47): Ուստի թուրքական իշխանություններն այդ խոչընդոտը վերացնելու համար ծրագրեցին գաղտնի ու բացահայտ կոտորել հայ ժողովրդին, որով ինքնըստինքյան, առանց արտաքին միջամտության ու հակազդեցության կվճռվեր այդ հարցը: Այն իրագործելու համար Բ. Դուռը և սուլթանը ստեղծեցին կուռ ու ամբողջական համակարգ:

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման միջոցով կայսրության հետագա հզորացման անհրաժեշտության մասին է վկայում թուրք պաշտոնյա Նեջիպ փաշան:

«Երբ 1840 թ. Սիրիան վերադարձվեց Թուրքիային,— գրում է Ֆ. Դ. Գրի-նը,— Դամասկոսի փաշալիկության նահանգապետ նշանակված Նեջիպ փաշան բրիտանական հյուպատոսարանի մի գործակալի հետ զրույցի ընթացքում, չիմանալով նրա դիրքը, ասել է. «Թուրքական կառավարությունը Սիրիայի իր տիրույթները կարող է պահպանել միայն քրիստոնյաներին կոտորելու միջոցով» (14, 288): Նեջիպ փաշայի առաջադրած պետության պահպանման, հզորացման ու հետագա գոյատևման ծրագիրը հավանության արժանացավ թուրքական իշխանությունների կողմից ու աստիճանաբար դրվեց գործողության մեջ:

Այդ խնդրի արմատական լուծմանն էին միտված թուրք պետական գործիչ Ա. Ֆուադ փաշայի խորհուրդները սուլթանին ուղղված կտակում: «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է,— գրում էր Ա. Ֆուադ փաշան,— Մեր նախահայրերու գործած անըմբռնելի սխալները այսօր մեզ կդնեն չափազանց տագնապալից կացության մեջ: Մեր բոլոր ջանքերը,— շարունակում է թուրք գործիչը,— պետք է ձգտին դեպի մեկ նպատակ, որ է մեր ցեղերի համաձուլումը: Առանց այդ համաձուլումին կայսրության միությունը անկարելի կըթվի...»: Իր խոսքերը մասնավորեցնելով հայ ժողովրդի խնդրին՝ նա գտնում է, որ «հայերը հակում ցույց կուտան դեպի ոտնձգություն, և խելացիություն է անոնց եռանդը չափավորել» (15, 1910, թիվ 67, 181): Ուրեմն «անբուժելի հիվանդ» Օսմանյան կայսրության զառամյալ մարմինը վերակենդանացնելու համար, որպես ապաքինման միջոց, առաջարկվում էր նրա երակներում ներարակել կայսրության հպատակ քրիստոնյա ցեղերի խաղաղ ձուլման ու ֆիզիկական բնաջնջման ընթացքում հոսող կենարար արյունը: Աբդուլ Յամիդը, ինչպես նկատում է Պ. Ն. Միլյուկովը, «Հայկական հարցը վերացնելու համար որոշեց գլխովին ոչնչացնել հայերին» (16, 120): Արևմտահայության դեմ արմատական ու վճռական գործողությունների ծրագիր էր առաջարկում բարձրաստիճան պետական պաշտոնյա Քյամիլ փաշան (17, 1897, 7–8, 204): Թուրքահպատակ քրիստոնյա ազգաբնակչության ֆիզիկական բնաջնջման, Օսմանյան կայսրության վերածնման ու հզորացման մասին թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մտորումները դարձան Աբդուլ Յամիդ 2–րդի ու նրա կառավարության հայակործան ծրագրի հիմնադրույթները:

Ռուսական արխիվային վավերագիրը թուրքական հայաջինջ քաղաքականության մասին նշում է. «Պետական բարձր պաշտոնյաները բացահայտ

հայտարարում են, որ այստեղ իբր թե պատրաստվում է երկրորդ Բուլղարիա, և նրանք անցյալի փորձով իմաստնացած կարող են խեղդել կառավարության վտանգավոր տարրերին, այդպիսով մեկ անգամ և ընդմիշտ վերջ դնել «Հայկական հարցին» (18): «Մշակ»-ը, անդրադառնալով այդ խնդրին, գրում էր. «Նա (սուլթանը – Պ. Ս.) ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում, որպեսզի Բեռլինի դաշնագիրը ստորագրած պետություններին ասի «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես «գոյություն չունի» Հայկական հարց» (10, 1895, թիվ 9):

Սուլթան Աբդուլ Յամիդը հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման ծրագիրը իրագործելու ճանապարհին առաջին հարվածը ուղղեց հայ ժողովրդի մշակույթի, դպրոցների ու կրոնական հաստատությունների (20, Ժ. 1627, ռ. 3), ինչպես նաև հայ ժողովրդի բնօրրանի, հայ հայրենիքի Հայաստան անվան դեմ, աշխատելով այն ջնջել հայի հիշողությունից, արգելեցին այն գործածել» (21): Թուրքական պետական պաշտոնյաները,— գրում է Ռուլեն Ժեկմենը,— մտադրվեցին ջնջել «Հայաստան» աշխարհագրական անունը, այն փոխարինեցին «Քրդստան անվամբ» (14, 57): Արգելվեց հայոց պատմության դասավանդումը, անցյալի հայ հերոսների, մասնավորապես Վարդան Մամիկոնյանի դիմանկարի և Հայաստանի ավերակների վրա լացող կնոջը պատկերող կտավի մասսայականացումը (19, Ժ. 1627, ռ. 5): Առանձնապես սուլթանը հատուկ ուշադրություն դարձրեց թուրքական իշխանության դեկավար մարմիններում եղած հայ պաշտոնյաներին մահմեդականներով փոխարինելու խնդրին (21, Ժ. 3184, ռ. 193–205): Մահմեդական հոգևորականությունն ավելի մոլեռանդությամբ սկսեց վերաբերվել քրիստոնյաների ու մասնավորապես հայ եկեղեցու նկատմամբ, (21, Ժ. 3184, ռ. 206) սահմանափակվեց պատրիարքի իրավունքները (27, 1889, թիվ 3), մտցվեց ավելի խստացված գրաքննություն: Այս մասին հարուստ տեղեկություններ են պահպանված Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում հիմնված ռուսական հյուպատոսությունների աշխատակիցների ու Կ. Պոլսի դեսպանության միջև եղած գրագրություններում, հյուպատոսների զեկուցագրերում (21, Ժ. 1625, ռ. 2–3): Նրանցում հստակ ու պարզորոշ ընդգծվում է այն միտքը, որ թուրքական իշխանությունները ձգտում են արյան մեջ խեղդել արևմտահայությանը, ինչպես անցյալում կատարել են Բուլղարիայում, ոչնչացնել կայսրության նկատմամբ թշնամաբար տրամադրված տարրերին, տերություններին զրկել Թուրքիայի ներքին գործերին միջամտելու հնարավորությունից,

«արմատախիլ անել հայերին, նրանց պահանջներն էլ արմատախիլ անելու համար» (28, 116): Հայկական հարցը հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմամբ լուծելու թուրքական ծրագրի գոյությունը հավաստում է նաև ամերիկացի պատմաբան Վ. Լանգերը՝ նշելով, որ «սուլթանը որոշեց վերջ տալ Հայկական հարցին հայերին ոչնչացնելու միջոցով» (115, 203): Իր դարն ապրած և ֆեոդալա-ճորտատիրական հարաբերությունների խիտ ցանցում գտնվող Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի 2-րդ կեսին ներքին ու արտաքին ուժերի երկուստեք բախման արդյունքում ենթարկվեց հզոր ցնցումների, ու նրա «զառամյալ մարմնի» վրա առաջացան խոր ճեղքվածքներ: Բ. Դուռը նկատի ունենալով կայսրության համար ստեղծված ներքին ու արտաքին անբարենպաստ պայմանները և անկարող լինելով զարգացման բնականոն ճանապարհով հաղթահարել ակնհայտ դժվարությունները՝ վճռական գործողություններ ծավալեց արևմտահայության դեմ: Արևմտահայության տնտեսական քայքայման, հարստահարման, Արևմտյան Հայաստանի հայաթափման և հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման միջոցով Աբդուլ Համիդը ցանկանում էր հզորացնել իր իշխանությունը (10, 1895, 9):

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայկական որոշ տարածքների միացումը Ռուսաստանին, հայ ժողովրդի դեպի հյուսիսի հզոր տերությունից ունեցած ակնկալիքները, դրա հետևանքով Արևմտյան Հայաստանի հնարավոր ամբողջական անջատման հեռանկարը հանգիստ չէին տալիս Աբդուլ Համիդին: Նման ելքը կլիներ Թուրքիայի «վերջնական կործանումը, - գրում էր Ալըզյանը, - դրա համար էլ, ասում էր սուլթանը, մենք բոլոր միջոցներով պետք է խանգարենք դրան» (29, 64): Պետության համատարած թրջացման, կայսրության հետագա հարատևման, այլացել ու այլադավան ժողովուրդների՝ առաջին հերթին արևմտահայության ֆիզիկական բնաջնջման խնդիրը դառնում էր հետագա գործունեության օրախնդիր, պետական ծրագիր, (30, 350-35), որը սկսած 1880-ական թվականներից վճռական ու անշեղ հետևողականությամբ աստիճանաբար կենսագործվեց Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ բոլոր վիլայեթներում (31, 53):

Հայկական հարցի միջազգայնացումից հետո Աբդուլ Համիդը և իր կառավարությունը երկրում հայ ժողովրդի դեմ վճռական գործողություններ ծավալելու և այդ հարցում հասարակական կարծիք ձևավորելու համար քաղաքական նկատառումներով Թուրքիայի ներքին գործերին արտաքին

միջամտության միակ ու հիմնական պատճառը համարում էին Հայկական հարցը: Այդ խնդրի նման մտացածին ու ստահող մեկնաբանությունը որդեգրվեց ու իր հետագա զարգացումը ստացավ թուրքական պատմագրության կողմից (32): Սակայն իրականում թուրքական իշխանությունները կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրած բռնությունների, տեղահանության ու անխնա կոտորածներով արդեն 19-րդ դարի 60-70-ական թվականներին թուլացրել էին երկրի ներուժը և պայմաններ էին ստեղծել արտաքին միջամտության համար՝ աստիճանաբար երկիրը վերածելով տերությունների տնտեսական կցորդի (38, 76): Յուրաքանչյուր անգամ տերությունների միջամտությունը, որը թելադրված էր նրանց հատուկ շահերով ու հետաքրքրություններով, քայքայում ու թուլացնում էր Թուրքիայի տնտեսությունը, մոտեցնում կայսրության փլուզման պահը: Տերությունների՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտության ընթացքում Հայկական հարցը օգտագործում էին սուսկ որպես առիթ, իսկ իրականում նրանց հիմնական խնդիրը հանգում էր Օսմանյան կայսրությունից որոշ տարածքներ զավթելուն: Հետևաբար թուրքական իշխանությունները, Հայկական հարցը ներկայացնելով որպես արտաքին միջամտության հիմնական պատճառ, նպատակ ունեին կոծկել արևմտահայության նկատմամբ գործադրված չարագործությունները և հիմնավորել հակահայկական քաղաքականության ուժգնացումը:

Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը, զրկված լինելով անձի ու գույքի պաշտպանության իրավունքից, որպես ռայա, դարեր շարունակ ենթարկվել է ազգային ու կրոնական հալածանքների, սոցիալական դաժան շահագործման ու կեղեքման, տնտեսական հարստահարման և ունեզրկման: Թուրք իշխողները, քրդական բեկերն ու աղաներն իրենց հարստությունն են դիզել հայ հողագործի աշխատանքի արդյունքը սեփականացնելով, նրա արյուն-քրտինքով իրենց բարեկեցությունն են ապահիվել: Հայ գյուղացու աշխատանքով է երկիրը շենացել, ու նրա ջանքերով է կյանքը հարատևել մեր նախնիների սրբազան հողում: Թուրքական իշխանությունները լավ հասկանում էին, որ հայի տոկոսությունն ու անասանությունը, դիմացկունությունը պայմանավորված է հայրենի հողի հետ նրա ամուր կապով, հող հայրենիի նկատմամբ նրա անսասան հավատով: Ուստի նրանք իրենց հարվածն ուղղեցին հայ գյուղացիության դեմ՝ նպատակ ունենալով նրան կտրել հողից, հողազրկել, տնտեսապես քայքայել:

Արևմտյան Հայաստանում մինչև 19-րդ դարի 2-րդ կեսը հողատիրության հիմնական ձևը մնում էր թիմարական համակարգը (33), որը ձևավորվել էր դեռևս թուրքական կայսրության հզորության ժամանակաշրջանում, երբ նոր տարածքների գրավման ընթացքում խոշոր չափի հողահատկացումներ էին կատարվում սուլթանի մոտիկ մարդկանց, որոնք, տիրելով հողին՝ կոչվում էին թիմարիոտներ: Նրանք պարտավոր էին արշավանքներին մասնակցել իրենց միջոցներով հանդերձավորված որոշակի քանակի զինվորներով: Թիմարական հողատիրության ընդարձակման ու թիմարիոտների իրավունքների մեծացմանը զուգընթաց աստիճանաբար թուլանում էր կենտրոնի հետ նրանց կապը, նրանք դառնում էին ինքնիշխան իրենց տիրույթներում: Այդ գործընթացն ավելի ակնառու դարձավ, երբ կայսրության հզորության թուլացումով արտաքին արշավանքներում զգալի անհաջողություններ սկսվեցին:

Արևմտյան Հայաստանում հողին հիմնականում տիրում էին քրդական աշիրեթապետները, որոնցից հայերը, որպես ռայա, դրվել էին կախման մեջ, հարկ էին վճարում քրդական բեկերին և աղաներին (38, 117): 18-րդ դարում, երբ թուրքական կայսրությունը թուլացավ, քրդական աշիրեթապետներն իրենց հայտարարեցին անկախ, վերածվեցին ինքնուրույն իշխանությունների: «Սուլթանները վաղուց արդեն տեսնում էին,– գրում է Ն. Գոլբորոդկոն,– որ թուրքական ֆեոդալների մեծացող ազդեցությունը կենտրոնական կառավարության նկատմամբ դառնում է վտանգավոր» (34, 135): Բ. Դուռը երկար ժամանակ միջոցներ էր որոնում թիմարիոտների անկախությանը վերջ տալու համար: Ի վերջո Բ. Դուռը կենտրոնական իշխանության ուժեղացման, թիմարիոտների իրավունքների սահմանափակման ու վերացման, ժայռամասերն իրեն ենթարկելու համար 1834 թ. վերացրեց թիմարական հողատիրությունը, ողջ հողատարածքները հայտարարվեցին պետական սեփականություն: Պետությունն իրավունք վերապահեց գյուղացուն իր կտոր հողի համար սահմանված վարձագինը վճարելով պետական զանձարանում, ստանալ թուղթ, որը կոչվում էր թափու, որով և ազատ իրավունք էր տալիս նրան ինքնագլուխ մշակելու իր հողը: Սակայն դարեր շարունակ հողի ու հայ գյուղացու նկատմամբ անսահման իրավունք ունեցող քուրդ ազնվականները չէին հաշտվում նոր վիճակի հետ: Քուրդ կալվածատերերը, աշխատելով վերահաստատել ու պահպանել իրենց նախկին իրավունքները, պայքարում էին ոչ թե պետության դեմ, որը զրկել էր նրանց

նախկին արտոնություններից, այլ թափուի իրավունք ստացած հայ գյուղացու դեմ, հարկադրում էր նրան, որ նա շարունակի իր նախկին ճորտային կացությունը, հակառակ դեպքում, սպառնում էր նրան վտարել թափուի իրավունքով ստացած հողից: Քուրդ կալվածատերը հարկադրում էր հայ գյուղացուն նախկինի նման հարկ վճարել, իսկ պետությունը, որպես հողի սեփականատեր, պահանջում էր հողահարկ, տասանորդ: «Այսպիսով,– ամփոփում է Լեոն,– երկու կեղեքիչները դաշտում կանգնած էին գյուղական մի հատ արօրի վրայ» (28, 120): Հայ գյուղացու տնտեսական հարստահարությունները, նրա ստրկական կացությունը ամենից առաջ հիմնված էին այն առանձնահատուկ հողային ու հարկային հարաբերությունների վրա, որ տիրապետող դարձան հայկական վիլայեթներում 1840-ական թվականներից սկսած: Քուրդ կալվածատերերը, շրջանցելով թիմարական հողատիրության վերացման մասին օրենքը, հայ հողագործին հարկադրում էին վճարել այն հողի համար, որ նա մշակում էր, սակայն որի նկատմամբ օրենքով ինքը իրավունք չուներ (35, 124, 6, 12): Մահվան սպառնալիքով ստիպում էր գյուղացուն կատարել իր ցանկությունները, իսկ պետական հարկահաններն ու ոստիկանները ոչ միայն տասանորդն էին գանձում, այլ նաև իրենց կամայականություններով հարստահարում ու ետին աղքատության էին մատնում գյուղացուն, որը ստիպված էր «յուրահատուկ տուրք վճարել ավելի ծույլ թուրքերին և առավելապես լեռնաբնակ կիսաքոչվոր քրդերին» (19, Ժ. 3433, ռ. 64): Աստիճանաբար թուրք-քրդական նախկին հակամարտությունները դարի 70-ական թվականներից սկսեցին մեղմանալ: Իշխանությունները հողային հարաբերությունների միջոցով ցանկանում էին իրականացնել քաղաքական նպատակ, այն է՝ քրդական տարրը հողին ամրացնելով, դարձնելով նստակյաց՝ ռուս-թուրքական սահմանագլխին իր համար ստեղծել ամուր հենարան՝ ի հեճուկս ռուսամետ ու կառավարությանն անհավատարիմ հայերի (28, 40): Թուրքական կառավարիչները քրդական կալվածատերերին ուժեղացնում էին՝ իրենք ևս շրջանցելով թափուի իրավունքը: «Հաճախ հայի վրա թափու արած հողը,– գրում է Լեոն,– թափու էր արվում և քրդի վրա: Ո՞վ պիտի տիրեր: Ի հարկե ուժեղը, քուրդը: Պատահում էին և դեպքեր, երբ ամբողջ հայ գյուղեր թափու էին արվում մի քուրդ բեգի վրա» (28, 41): Թուրքական իշխանությունները ու քրդական կալվածատերերը լռին համաձայնությամբ հայ գյուղացուն ստիպում էին շարունակել իր ճորտային կախվածությունը, հարկ վճարելով և քրդերին, և պետությանը:

«Յուրաքանչյուր հայ ընտանիք,– գրում է երգրումի գլխավոր հյուպատոս Սաքսիմովը 1894 թ. օգոստոսի 20–ին,– իր ամբողջ ունեցվածքով և հողատարածքով գտնվում է ճորտային կախվածության մեջ որևէ քուրդ աղայից: Այդ աղան հայից տարեկան երեք անգամ հարկ է հավաքում «փեշ» անվամբ: Յուրաքանչյուր ընտանիք իր քուրդ աղային տալիս է մի կաթնատու ոչխար, ամռանը մի ոչխար ևս «փրչով» անվամբ, աշնանը տալիս է հավաքած բերքի մի մասը և մսատու մի գառ» (19, Ժ. 1630, Ն. 255): Եվ քանի որ թուրքական կառավարությունը չէր կարող և չէր ցանկանում պաշտպանել վարձակալ հողագործին իր «նախկին կատաղած տիրակալի դեմ» (28, 122), ու հայ գյուղացին իրավունք չունենալով լինել հողի սեփականատեր, հողագործությամբ զբաղվելու համար ճորտական ծառայություն էր կատարում իր նախկին քուրդ կալվածատիրոջ համար, ամբողջ ընտանիքով դառնալով նրա սեփականությունը, որպեսզի վերջինս նրան պաշտպաներ ուրիշներից (19, Ժ. 1630, Ն. 255), միաժամանակ հարկ էր վճարում պետությանը այն հողի համար, որի տերը ինքը չէր (14, 76): Նման երկակի ծառայական պարտականությունները, միաժամանակ անպաշտպան ու ապագայի անհեռանկար վիճակը հայ գյուղացիությանը մատնում էր հուսահատության: Այդ մասին Ռոլեն Ժեկնենը գրում է. «Ազգաբնակչության դժգոհության հիմնական պատճառը հանգում է հետևյալին. բացի պետական հարկերից, նրանք պետք է վճարեն հարկ նաև քրդերին, կրեն հարկերի բաշխման չարաշահումները, իրենց նկատմամբ քրդերի, թուրքերի, զինվորների և ոստիկանների վատ վերաբերմունքը, բոլոր տեսակի ոճրագործությունները, որ մահմեդականը կարող է առանց պատժի կատարել քրիստոնյայի նկատմամբ» (14, 61): «Քուրդ կալվածատերը, շարունակելով պահպանել իր անսահմանափակ իրավունքները, դարձել էր ավելի սանձարձակ, ու նրա կամայականությունները սահման չէին ճանաչում: Նրա իրավունքները տարածվում էին հայի ընտանեկան կյանքի բոլոր բնագավառներում: Հայը, երբ ամուսնացնում էր իր դստերը, պարտավոր էր իր աղային վճարել 3 թուրքական լիրա» (20, Ժ. 45, Ն. 16): Քուրդ աղան կամ բեկն իր ցանկությամբ իրենց ենթակա հայ գյուղացիներին կարող էին զնել և վաճառել: «Եթե քուրդը դժգոհ է իր հայից,– կարողում ենք վավերագրում,– նա վաճառում է նրան մեկ այլ քրդի: Հայի զինը բարձր էր, եթե նա շատ երեխաներ ուներ» (19, Ժ. 1630, Ն. 254):

Թուրքիայում հայ ժողովրդի վիճակը միշտ էլ ծանր է եղել: Թուրք տիրողները ճնշել են ու վիրավորել նրա ազգային արժանապատվությունը և, որ-

պես ռայա, նրան համարել են երկրորդական կարգի մարդ: 80–ական թվականներից սկսած՝ հայ գյուղացու կեղեքումը ընդունում է ահռելի չափեր և տարեցտարի խորանալով ու ահագնանալով՝ ավելի սոսկալի էր դառնում: Քրդական հարստահարումներին զուգընթաց իշխանություններն իրենց հերթին էին հարկ պահանջում, չնայած քրդական թալանից ոչինչ չէր մնացել հայ գյուղացուն: Իսկ երբ հայ գյուղացիները ծայրահեղ աղքատության մեջ հարկահաններին խնդրում էին սպասել մինչև բերքի հավաքելը (14, 133), խստագույնս պատժվում էին, այդ պարագայում «սուլթանի քրիստոնյա հպատակը զրկվում էր ոչ միայն իր սեփականությունից, այլ նաև ապրելու իրավունքից» (36, 326–327):

Թուրքիայում բնակչությունից հարկերի հավաքման համակարգում վճռական գործոն էր կրոնը: Հայ գյուղացին, ի տարբերություն մահմեդականների, ավելի շատ հարկեր էր վճարում (37, 55): Ըստ շարիաթի՝ այլադավանները վճարում էին ջիզիե, խարաջ, խամս և ուշր, մահմեդականները՝ գաքյաթ: Բացի նշված հարկերից, հայ բնակչությունը վճարում էր նաև այլ բազմաթիվ հարկեր, այդ թվում՝ հողագործության, անասնապահության, առևտրի, անշարժ գույքի, կենցաղային զանազան սովորությունների համար (38, 50): Ըստ կրոնական պատկանելության՝ քրիստոնյան բազմամուն և բազմաթիվ հարկեր էր վճարում: Այս փաստը հավաստում է Է. Դիլոնը: Նա գրում է. «Քաղաքներում քրիստոնյաների և մահմեդականների հարկագանձման տարբեր չափերի մասին համապատասխան օրինակ բերելու համար բավական կլինի ասել, որ Էրզրումում, ուր գոյություն ունի մահմեդական 8000 տնտեսություն, մահմեդականները վճարում են 395. 000 դուրուշ մինչդեռ քրիստոնյաները, որոնք կազմում են 2000 տնտեսություն, վճարում են 430. 000 դուրուշ» (14, 338–339): Հայ գյուղացին, պետական հարկերից բացի, հարկ էր վճարում աղաներին, դերեբեյներին: Ավատական դասը զենքի ուժով ստիպում էր հայերին վճարելու նաև չնախատեսված ու պատահական բազմաթիվ հարկեր (14, 132): Ավելի ծանր էին արտակարգ հարկերը, որոնք գանձվում էին սուլթանի արտասահմանյան ուղևորությունների, պատերազմների և այլ առիթներով: Ամեն տարի իշխանություններն աննախադեպ հարկեր էին սահմանում: 1880 թ. Մուշում հայ ազգաբնակչությունից պահանջվեց վճարել նախորդ երկու տարիների հարկը, չնայած դեռևս 1878 թ. պատերազմական կարիքներով թելադրված 2 տարվա հարկն արդեն գանձվել էր: Դրանով չբավարարվելով՝ կառավարությունը «ապագա երեք

տարիներու տուրքերն ալ այժմեն կանխիկ կպահանջե...» (10, 1878, թիվ 134): Հարկերի ու տուրքերի ծանրությունից տնքացող հայ գյուղացիության համար ստեղծվել էր ծանր մղձավանջ, անհույս ապագա: Նրա աղքատ ու սովալլուկ կենցաղի, ծայրահեղ չքավորության ու անմխիթար բնակարանային պայմանների մասին վավերագրում կարդում ենք. «Գյուղերում խրճիթները մեծամասամբ աղքատիկ են, համարյա չեն համապատասխանում մարդկային կացարան անվանը: Նրանք իրենցից ներկայացնում են քարակույտեր, որոնք ծածկված են մի քանի տախտակներով, որոնց միջև բացվածքները չափազանց փոքր են, որ ծուխը ներսից դուրս գա, չափազանց մեծ են, որ անձրևի կաթիլները ներս հոսեն» (25, Ժ. 5, Ն. 273): ճակատագրի դառն հեգնանքով հայ գյուղացին պարտադրված էր հարկ վճարել այն հողի համար, որը վաղուց ի վեր խլել էին նրանից ու հատկացրել մահմեդական վերաբնակիչներին, (14, 75–76) այն ոչխարների համար, որոնք արդեն ծնունդ կեր չլինելու պատճառով սատկել էին, և այն անասունների համար, որոնք վաղուց քրդերի ավարն էին դարձել:

Իշխանությունները հայերից առավել չափով հարկեր հավաքելու իրենց գիշատիչ գործողություններով երկրում արհեստական սով էին կազմակերպում (10, 1892, թիվ 11): Սովը հնձում էր հայկական գյուղերը, հարյուրավոր տների դռներ փակվում էին ընդմիջտ, իսկ մնացած բնակիչները ստիպված էին հեռանալ հայրենի վայրերից (10, 1880, թիվ 64): Թուրքական իշխանությունների տեղական ամենաթող մարմինները, կաշառակեր պաշտոնյաները չէին խորշում ու հափշտակում էին թշվառ գյուղացիներից սովի առիթով բարեգործական ընկերությունների կողմից նրան հատկացված չնչին միջոցները (14, 76): Հարկերի նման ծանրությունն ու գանձման անօրինականությունը (14, 76): Հարկերի նման ծանրությունն ու գանձման անօրինականությունը նկատի ունենալով՝ Էրզրումի ռուսական հյուպատոսը գրում էր. «Հարկերն ու տուրքերն իրենց գանձման չափով ու կամայականություններով դարձել են անտանելի» (26, Ժ. 5618, Ն. 68): Այդ անօրինականության հիմնական աղբյուրը Ռուլեն ժեկմենը իրավացիորեն համարում է կառավարությանը, որը գիշատիչ կերպով թալանելով հայ գյուղացիությանը, պայմաններ էր ստեղծում երկրի հայաթափման համար (14, 78): Արծազանքելով այդ խնդրին՝ «Մշակը» գրում էր. «Ճշմարտացի է այն առածը, որ «Այն մարդը, որ իր ունեցվածքը թույլ կտա գողանալ, գողի ընկերակիցն է» և հետևաբար այն անձը, որ անհոգությամբ թույլ կտա, որ գողերը անպատիժ մնան, և դրանով քաջալերում է նրանց իրենց գործի մեջ, նույն գողն է: Ուրեմն, – եզ-

րակացնում է «Մշակ»–ը կառավարության գլխավոր հարստահարող լինելը անուրանալի է, քանի որ քրդերի ու պաշտոնյաների կողմից կատարված հարստահարությունները քաջալերում է, անգամ պաշտպանում» (10, 1880, թիվ 67): Հետևաբար, ամենամյա հարկերի ծանրացման, նոր անօրինական հարկերի սահմանման ու այդ պատճառով հայ ազգաբնակչության դրության վատացման, վերջինիս անպաշտպանվածության համար, ողջ պատասխանատվությունը կրում է կառավարությունն իր բազում գործակիցներով (14, 72–73): Ա. Կիտուրը իրավացի է, նշելով, որ «Կառավարությունը կաշառակեր, տգետ և մոլեռանդ պաշտոնյաներից բաղկացած ըլլալով, ոչ միայն անկարող, այլև մասնակից էր չարագործներու արարքներուն» (40, 17): Այդ խնդիրը նույն կերպ է մեկնաբանում նաև Ռուլեն ժեկմենը: «Այստեղ, – գրում է նա, – թալանում են ժողովրդին ու այն չեն դիտում հանցագործություն, քանի որ իշխանություններն ամբողջությամբ զբաղված են դրանով» (14, 73): Հարկազանձման ընթացքում պաշտոնյան թալանում էր ժողովրդին ու մի մասն էր միայն բաժին հանում կառավարությանը: Կառավարության գործակալները, համագործակցելով կենտրոնական ու տեղական իշխանությունների հետ, քրիստոնյա, մասնավորապես հայ բնակչությունից հարկազանձումը կատարում էին շորթումներով ու չարաշահություններով: Թուրքիայում քրիստոնյա ազգաբնակչությունը ենթարկվում էր «ամենամեծ նյութական զոհաբերությունների, որովհետև օրինականացված տուրքը միայն աննշան մասն է կազմում կամայական հարկումների, որոնցով տեղական իշխանությունները պարբերաբար հարկադրում են բնակիչներին» (41, 194): Ոստիկաններն ու զինվորները, շրջագայող պաշտոնյաները հարկազանձման ընթացքում զբաղեցնում էին գյուղացիների բնակարանները, վերցնում էին նրանցից ամեն ինչ առանց որևէ փաստաթուղթ տալու, իսկ եթե տալիս էին, ապա այն միայն կեղծ էր լինում, առանց ստորագրության, կամ էլ նշվում էր վերցրած դրամի միայն մի մասը: Պաշտոնյաները, օգտվելով գյուղացիների անգրագիտությունից, չէին տալիս համապատասխան ստացական, որպեսզի «երկրորդ անգամ գանձեին նույն հարկը» (14, 73): Հայ գյուղացու վիճակն ավելի էր ծանրանում, երբ տարերային աղետներն ու լրացուցիչ ձմեռը հաջորդում էին միմյանց: Սկսված սովը հազարավոր կյանքեր էր հնձում: «Օգնություն հասցնելը անհնարին է, – գրում է Ռուլեն ժեկմենը: – Վանի ու Բաշկալեի միջև ընկած գյուղերում օրական մեռնում են 55 մարդ, Ալաշկերտի շրջանի 9 գյուղերում մահացությունը կազմում է 109 մարդ... Ա-

լաշկերտի ու Բայազետի ծայրամասերում մահացել են 2000–ից 3000 մարդ, մոտավորապես նույնքան մարդ Բոհտանի, Ջեզիրեի կայնականություններում, չհաշված ճանապարհներին մահացած մի քանի հարյուր մարդկանց» (14, 75): Կառավարությունը ավելի էր ծանրացնում բնակչության առանց այդ էլ աղետալի վիճակը: Մասնավորապես Ռուսաստանին սահմանակից տարածքների հայ բնակչությունից սկսեցին գանձել երեք տարվա հարկ միանգամից: Տնտեսական ու սոցիալական այդ ծանր կացության մասին Ռոլեն ժեկմենը գրում է. «Այժմ իրերի վիճակը ավելի վատ է, քան ենիչերիների ժամանակ: Կառավարության պաշտոնյաների, աղաների ու բեկերի կողմից ճնշված, շահագործված, քայքայված ու հողազրկված քրիստոնյաները արյուն–արցունք են թափում» (14, 89):

Հայ գյուղացու կատարած ծանր պարհակների մասին կարելի է ամփոփ կարծիք կազմել Ֆ. Դ. Գրինի կողմից ներկայացված տվյալներից: Ջեզիրեի կայնականության Մանսուրիե գյուղի բնակիչները 1893 թ. ընթացքում «Կառավարությանը և քոչվոր քրդական առաջնորդ Մուստաֆա փաշային վճարել են հետևյալ տուրքերը.

Ընդամենը՝

1. Հարկեր կառավարությանը
  - ա) լրացուցիչ հարկեր – 3000 ղուրուշ
  - բ) կրկնակի հարկեր – 4000 ղուրուշ
  - գ) մթերքներ, գյուղացիներից գանձված – 2000 ընդ. 9000 ղուրուշ
2. Հարկեր Մուստաֆա փաշային
  - ա) լրացուցիչ եկամուտ. տասանորդից – 1500 ղուրուշ
  - բ) ցանքատարածքների վնաս – 2000 ղուրուշ ընդ. 3500 ղուրուշ

Ամբողջ 1893 թ. գյուղացիներից լրացուցիչ գանձում՝ 12. 500 ղ. Օրինական հարկերը՝ 1893 թ. 14. 000 ղուրուշ»:

Այդ անօրինական հարստահարության համար բնակչությունը կառավարությանը Մուստաֆա փաշայի դեմ բողոք ներկայացրեց, սակայն այդ ամսին իմանալով՝ վերջինս իր ոչխարների հսկայական հոտերը արածացրեց գյուղացիների ցանքատարածություններում՝ պատճառելով 2000 ղուրուշի վնաս: Կառավարությունը բնակչության բողոքը թողեց անպատասխան, ոչինչ չձեռնարկեց: Հարկերի ու տուրքերի ծանրության, դրանց ուղեկցվող

թալանի ու սպանությունների ավելի խոսուն օրինակ են հանդիսանում Բերվարի շրջանի երեք գյուղերում քրիստոնյա բնակչության նկատմամբ կատարված դեպքերը.

«Քրդերի բռնությունները.

ա. սպանություններ. 8 մարդ որոշակի անուն, ազգանվամբ, շատերը, որոնց ազգանունը հայտնի չէ:

բ. թալան. 9 լիրա, ևս 10 լիրա, ևս 15 լիրա, իսկ ավելի մանր գումար վերցնում են մշտապես» (14, 258–260):

Պետության և քրդական աղաների կողմից հայ բնակչության ճնշման, շահագործման ու հարստահարության, գյուղացու արյուն–քրտինքի յուրացման միայն մասնավոր դեպքն է, սակայն այն հատկանշական է ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող հայ գյուղերի ու գյուղացիության համար: Այդ վիճակին էին հարյուրավոր գյուղեր, միայն նրանց անվանումն էր տարբեր»: Թուրքիայում հայ գյուղացիության դառն ու ողբերգական վիճակը պայմանավորված էր ոչ միայն բազմաթիվ ու բազմաճյուղ հարկերի ծանրությամբ, այլ նաև նրա տնտեսական դրության վրա կործանարար ազդեցություն ունեցող հարկազանձման գիշատիչ ձևերով, և մանավանդ առավել դաժան վարձակալման համակարգով (34, 22): Խոշոր չարիք էր հարկերի գանձման համակարգը, որովհետև բոլոր կարգի ու տեսակի հարկահավաքների պաշտոնը վաճառվում էր ամենուր:

Հարկազանձման իրավունքը պետությունը վաճառում էր աճուրդով: հատկապես այդ իրավունքից օգտվում էին քուրդ բեկերը, որովհետև աճուրդի կայացման նախօրյակին լուրեր էին տարածում այս կամ այն ազդեցիկ քուրդ մեծահարուստի տվյալ հարկի գանձման իրավունքի ձեռք բերման մտադրության մասին, այլևս ոչ ոք չէր համարձակվում այդ մասին մտածել անգամ:

Տասանորդի իրավունքը ձեռք բերած վարձակալը այն վերավաճառում է միջնեկ վարձակալին, իսկ վերջինս՝ ավելի փոքրերին: Բնակչությունից գանձվող հարկի չափը սահմանում էին վարձակալները, որքան իրենց կամքն էր թելադրում, որովհետև մեկ տարվա ընթացքում գյուղացիների ունեցվածքը դիտվում էր նրանց սեփականությունը ու բնակչության հետ վարվում էին ծայրահեղ դաժանությամբ: Հարկահանի տրամադրության տակ էին դրվում վիլայեթի վարչության բոլոր պաշտոնյաները, վերջիններս նույնպես այդ խնդրում ունեին իրենց մասնաբաժինը (14, 263):

Չարկի չափը (գումարային առումով) կամ հարկի փոխարեն վերցվող գյուղատնտեսական մթերքների գինը որոշում էին հարկահավաքները, այստեղ ևս խաբելով գյուղացիներին, գրպանում էին նրանց ունեցվածքը: Տասանորդը պետության կողմից սահմանված բերքի 1/10 մասն էր, սակայն այն անվերջ բարձրացվում էր, բերքահավաքի ժամանակ, հաճախ նկատի ունենալով հողի բերրիությունը, կազմում էր բերքի 1/7 մասը (38, 56): Սակայն նրանց այդ վարմունքի դեմ բողոքն ավելորդ փորձություն ու հոգս էր պատճառում բնակչությանը, քանի որ դատարանը և մյուս մարմինները պաշտպանում էին հարկահանին ու նրա մարդկանց, արդյունքում տևական քաշքշուկից հետո գյուղացին ստիպված էր հարկը վճարել 3 անգամ ավելի (42, 1913, թիվ 4–5, 790–792):

Չայ գյուղացին աշխատում էր օրնիբուն, արյուն–քրտինքով ոռոգում հողը, սակայն անարդյունք: Նրանից խլում էին բոլորը, նա անկարող էր օգտվել իր աշխատանքի արդյունքից (43, 27): Նրա բերքից ստացված հացահատիկը տուն չէր հասնում, մնացած չնչին մասը չէր բավարարում ընտանիքի խղճուկ պահանջները: «Խեղճ գյուղացին ամռան կիզիչ արևուն կիզիչ ճառագայթներուն առջև իր ընտանիքով կտառապի և իր քրտամբ գերկիրը կոռոզի, «կալուց կընե»,– գրում էին 1880 թ. փետրվարին Մուշի հայերը Ներսես Վարժապետյանին: Բայց ահա վաշխառուն, կամ իր սպասավորը մահվան հրեշտակի նման խեղճ երկրագործին գլուխը կը տնկվի, կուտե, կխմե և նրա ամբողջ ընտանիքը չարաչար կերպով իրան ծառայեցնելուց յետոյ, կըբաժանի իրրև վարձ իր առած ստակին՝բերքին կէսը, տէրությունը կառնե իր տասնորդը առավել չափով, քյուրդը կը հափշտակե հայիոյանաց և սատանայաց քաղաքականությանը, հայ երկրագործը շատ անգամ... իր կալոցին հետևյալ օրը իր օրապահիկ սննդեան համար չունենար և ոչ մի հատ ցորեան...» (28, 49):

Չարկահանը գյուղ էր մտնում մի ամբողջ ոհմակով, ոստիկան, զինվորներ, պաշտոնյաներ և, իհարկե, նաև ծառաներ, որոնք կերակրվում ու հարստանում էին թշվառ գյուղացիների հաշվին: Չարկագանձումը տևում էր երկար ու ուղեկցվում արյունալի ողբերգություններով:

Այդ ընթացքում ծաղկում էր կաշառակերությունը, որը թուրքական կյանքի անբաժան ուղեկիցն էր:

Օրինականության պահպանման դեպքում հայ գյուղացին ի վիճակի էր պետության կողմից սահմանված հարկերը վճարել, սակայն պաշտոնյաների կամայականությունները ու չարաշահումները ուժասպառ էին անում

նրան: Գյուղացու և պետության միջև մշտապես հանդես էին գալիս հարստահարողների ու գափողների ոհմակներ, որոնց դեմ գյուղացին անզոր էր, իսկ պետությունը ոչ թե չէր կարող, այլ չէր ցանկանում պաշտպանել հայերին և հովանավորում էր քուրդ բեկերին ու թուրք պաշտոնյաներին՝ հայի ունեցվածքին տիրանալու, նրան պատվազրկելու և նվաստացնելու համար: «Ենթադրենք ընտանիքը պետք է վճարի,– գրում է է. Դիլոնը,– 5 ֆունտ, որը նա կատարում է պարտադիր կերպով: Սակայն ոստիկանը պահանջում է ևս 3 կամ 4 ֆունտ իր համար»: Սկսվում է նրանց միջև սակարկություն. առաջարկվում է 1 ֆունտ, որին ոստիկանը չի համաձայնվում և հեռանում է, սակայն երկու օր անց ներկայանում ու պահանջում է ամբողջ հարկը, ի վերջո, գալիս են համաձայնության, բայց գյուղացին այդ պահին 3 ֆ. վճարել չի կարող, խնդրում է մի քանի օր ժամանակ: Ոստիկանը անդրդվելի է. փողի փոխարեն պահանջում է հայի աղջկան, կամ կնոջը: Քղի Կազայի Մելիկան գյուղի մի խումբ հայեր էրզրումի արքեպիսկոպոսին ուղղված գրության մեջ նշում են. «Մի քանի օր առաջ 7 ոստիկան, որոնք նույնիսկ չունենալով հարկահավաքման առիթ, ներկայացան մեր գյուղ, ծեծեցին բնակիչներին, վիրավորեցին քրիստոնեական կրոնը, բռնաբարեցին մեր կանանց ու աղջիկներին: Այնուհետև նրանք բռնեցին բողոքող երեք մարդու, կապեցին իրար և կախեցին ոտքերից գլխիվայր: Այդ դրությամբ նրանք թողեցին դժբախտներին, մինչև որ քթանցքներից արյուն հոսեց: Այդ ընթացքում ոստիկանները հրապարակայնորեն հայտնեցին, որ իրենց գործողություններում ղեկավարվում են ոստիկանապետի հատուկ հրահանգավորումով» (14, 340):

Օսմանյան կայսրության կողմից արևմտահայությանը պարտադրված բազմաթիվ հարկերից ամենածանրը զինվորական տուրքն էր (բեդելի ասկերիե), որը նախկինում կոչվում էր ջիզիե–գլխահարկ: Մահմեդական սուրբ գրքով թույլատրվում էր քրիստոնյային (ռայային), եթե մահմեդականությունը ընդունեն, ազատվել գլխահարկից (36, 328): Թուրքահպատակ բոլոր քրիստոնյա ժողովուրդներին օրենքով արգելվում էր բանակում ծառայությունը, որի համար արական սեռի 20–40 տարեկան հասակ ունեցող, զենք կրելու ունակ տղամարդիկ պետք է պետության կողմից սահմանված որոշակի հարկ վճարեին (44, 72): Զինվորական տուրքը գանձվում էր ոչ թե անհատական, այլ գյուղական համայնքի հաշվով պետության կողմից նախապես հաստատված գումարի չափով, անկախ այն բանից, թե հարկման ենթակա անձինք արդեն մահացել են, կամ երկար ժամանակով մեկնել են արտագ-

նա աշխատանքի, նույնիսկ եթե ընդհանրապես վերաբնակվել են այլ երկրներում: Հարկազանծման ընթացքում պաշտոնյաների չարաշահությունների հետևանքով յուրաքանչյուր 180 արական շունչ ունեցող հայ գյուղական համայնք վճարում էր 5000 դուրուշ (38, 46): Այնուհետև հարկազանծման ենթարկվեցին նորածնից սկսած բոլոր չափահաս տղամարդիկ:

Օսմանյան կայսրությունում դեռևս վաղնջական ժամանակներից քրիստոնյա ռայան, մասնավորապես հայը, զրկված էր ամենատարրական իրավունքներից: Միլիոնավոր քրիստոնյաներ չէին կարող համարվել պետության քաղաքացիներ, որովհետև տիրողների կրոնին չէին պատկանում: Քրիստոնյայի վկայությունը դատարանում մահմեդականի դեմ չէր ընդունվում (46, 152): Անատոլիայի գլխավոր հյուպատոս Վիլսոնը այդ մասին գրում է. «Քրիստոնյայի վկայությունը իրականում ոչ մի ուժ չունի: Եթե մահմեդականի և քրիստոնյայի ցուցմունքները հակասում են, ապա վերջինիս ցուցմունքին ոչ մի ուշադրություն չեն դարձնում: Օրինակ, երեք քրիստոնյա ճանապարհորդում են միասին: Նրանցից մեկը մեծ ճանապարհի վրա հարձակման գոհ է դառնում, ըստ որում, երեքն էլ ճանաչում են թալանողին: Այդ գործի կապակցությամբ սկսված դատական գործընթացում գողը հիմնավորում է իր ալիբին երկու մամեդական կեղծ վկաների միջոցով, և դատարանը արդարացում է նրան» (14, 82): 1860 թ. Անգլիայի արտաքին գործերի քարտուղար Ռասելը մայրո կոկսին գործուղեց թուրքիա՝ քրիստոնյաների վիճակը պարզելու համար: Նրա այն հարցին, թե «թույլատրվո՞ւմ է քրիստոնյայի վկայությունը դատարանում, պատասխանեցին՝ քրիստոնյաների միջև վարություն՝ այո, իսկ մուսուլմանների՝ ոչ» (14, 134): Քրիստոնյաների և մահմեդականների միջև իրավական անհավասար վիճակը ձևավորվել էր մահմեդական սուրբ գրքի սկզբունքներով: Բեյրութի գլխավոր հյուպատոս Ռոջերդը Լորդ Լայնոսին հայտնում էր. «Մահմեդական դատարաններում Ղուրանը և նրա Սկզբունքները հանդիսանում են միակ իրավաբանական կոդեքսը, որով մահմեդականի դեմ քրիստոնյայի վկայություն չի թույլատրվում: Եթե թույլատրվի,՝ շարունակում է նա,՝ ապա մահմեդական կրոնի հիմնական սկզբունքը փուլ կգա» (14, 134): Ուստի թուրքիայում հայը զրկված էր դատարանում հանդես գալու, ինչպես նաև ինքնապաշտպանության, զենք ունենալու ու կրելու իրավունքից: Թուրքահպատակ քրիստոնյաները պարտավոր էին հասարակական ու անձնական խնդիրներում զիջել իսլամ դավանողներին:

Հետևաբար, առօրյա ծագած բոլոր վեճերի ընթացքում հայի վկայությունը բացառվում էր, դատական բոլոր քաջքուկները ավարտվում էին հօգուտ մահմեդականի: Դատարանում հայը կարող էր ներկայացնել անգամ 50 վկա, միննույն է, արդարություն ակնկալել չէր կարող, մինչդեռ եթե վճարեր ու որպես վկա դատարանում նրան պաշտպանեին երկու մահմեդական, դատը կշահեր (25, Ժ. 5, ռ. 18): Եթե մահմեդականի դեմ քրիստոնյան գործ է հարուցել, ու մահմեդական վկան չի ներկայացել դատարան, ապա գործը կարճվում է վկա չլինելու պատճառով: «Մի քրիստոնյա գյուղացի,՝ գրում է Մալքում Մակբուլը,՝ անցյալ ծնռանը կորցրել էր իր երեք ձիերը, որոնք հետո գտավ հարևան գյուղի մահմեդականի տիրույթում»: Գործը քննության ենթարկվեց: Քրիստոնյան կարող էր որպես վկա ներկայացնել իր գյուղի բոլոր բնակիչներին, որոնք կարող էին հաստատել, որ իրոք այդ ձիերը պատկանում են իրեն, սակայն նրանից պահանջեցին ներկայացնել երկու մահմեդական վկաների, իսկ քրիստոնյայի գյուղում մահմեդականներ չէին ապրում: «Չկա թուրք, չկան նաև ձիերը» եղավ դատարանի եզրակացությունը (14, 134–135): «Քրիստոնյայի վկայությունը ընդդեմ մահմեդականի, գրում է Քլիֆորդ Լլոյդը,՝ ոչ մի դեպքում չի թույլատրվում, բայց մահմեդական մի սրիկայի կողմից չապացուցված ու չհաստատված վկայությունը բավական էր, որպեսզի քրիստոնյան բանտարկվի կամ մահապատժի ենթարկվի» (14, 137): «Բավական էր, որ մարդ լիներ քրիստոնյա, որպեսզի նրան դատարանում պարտված ճանաչեին և բոլոր դեպքերում արժանի դարձնեին կախաղանի, եթե հակառակ կողմում մահմեդական էր»,՝ կարդում ենք վավերագրում (19, Ժ. 658, ռ. 65): Հայը դատարանում երբեք արդարության հասնել չէր կարող, իսկ եթե հանդես էր գալիս ընդդեմ մահմեդականի, ապա մշտապես գտնում էին բավարար պայման, որպեսզի տուժողը լիներ հայը: Նման բոլոր իրավիճակներում գործում էր «Հայ է, ուրեմն մեղավոր է» սկզբունքը: Հայ բնակչությունը գտնվում էր ռազմագերու կարգավիճակում: Սիսիսիսի էր թուրքիայի քրիստոնյա հպատակ բնակչության նկատմամբ կառավարության կողմնորոշումը: Մանավանդ XIX դարի 80–90–ական թվականներին թուրքական կայսրության թուլացման, ներքին ու արտաքին դրության վատացման հետևանքով երկրում տիրող քաոսի պայմաններում, երբ կառավարության վարից մինչև վերը պաշտոնյաները զբաղվում էին կաշռակերությամբ, դատարանները վերածվել էին առք ու վաճառքի ասպարեզի, ցանկացած գործի վարույթի ընթացքում «թագավորում է ամենաբա-

ցահայտ, ամենալափրշ կերպով կատարվող կաշառակերությունը» (47, 24): Դատարաններում վճիռները միշտ կատարվում էին նրա օգտին, ով ամենից շատ և ճարպկորեն էր կարողանում տեղավորել իր փողերը», իսկ ավագակություններն ու ամեն տեսակի ճնշումներն ու անարդարությունները մնում էին անպատիժ: Այդ էլ հանդիսանում էր այն իրավահավասարության աղբյուրը, որի պայմաններում, նույնիսկ առօրյա ծագած վեճերի լուծման ընթացքում, ոչ մի մահմեդական քրիստոնյայի վկայությամբ չէր դատապարտվում (14, 138): Թուրքական դատարանում, որպես վկա, կարող էր լինել ցանկացած մահմեդական, դռնապանից մինչև բարձր պաշտոնյան, իսկ քրիստոնյան՝ երբեք: «Սլավոնները և թուրքերը» գրքի հեղինակ Ռայթը վկայում է, որ դատավորները հրաժարվում էին թույլատրել բրիտանական հյուպատոսին վկայություն տալ, որովհետև նա քրիստոնյա է, իսկ նրա փոխարեն թույլատրել է մահմեդական ծիսականին: Դատական համակարգում ամեն ինչ արվում էր, որպեսզի այլադավանը երբեք չչափի դատը մահմեդականի նկատմամբ, նույնիսկ պաշտոնականացված էր այսպես կոչված երզնազանցությունը, երբ դատական վարույթին որպես վկա ներկայանում էին քաղաքի սրճարանից կամ մեկ այլ վայրից երկու մահմեդական, կեղծ երդում էին տալիս, իսկ դատավորը դրա հիման վրա կատարում էր դատական եզրակացություն: Այս դեպքում ևս տուժողը հայն էր (14, 137): Թուրքիայում հայը զրկված էր անձի ու արժանապատվության իրավունքից: Քրդական երկու ավագակախումբ, ցանկանալով վրեժխնդիր լինել միմյանցից, հարձակվում են հայկական Գավառ գյուղի վրա և «գրավելով մի քանի կանանց, օրը ցերեկով նրանց նկատմամբ գործադրում են դաժան բռնարարք: Նույնը կրկնեցին 10 օր անց, այս անգամ Զարդարիչ գյուղում, որը գտնվում է Խարբերդից ոչ շատ հեռավորության վրա: Այստեղ ևս զոհը երիտասարդ հայ կինն էր» (14, 81): Այս մասին 1891 թ. նոյեմբերի 19-ին Խարբերդից հաղորդում է բրիտանական փոխհյուպատոսը, հույս հայտնելով, որ ձերբակալված հանցագործ քրդերը կստանան արժանի պատիժ, սակայն կատարվում է բոլորովին հակառակը: Քրդերը ազատ են արձակվում, քանի որ ընդդեմ նրանց ոչ մի ցուցմունք չի տրվում, այսինքն՝ չի գտնվում մահմեդական վկա, իսկ քրիստոնյայի վկայությունը մահմեդականի դեմ չի ընդունվում: Այսպիսով, եզրակացնում է փոխհյուպատոս Վիլսոնը, «Քրիստոնյաների վիճակը իրենց սեփական շահերի հարաբերությամբ օրենքի առջև նույնն է, ինչ օտարերկրացունը, իսկ մահմեդականների շահերի առումով, նույնա-

նում է ստրուկի վիճակի հետ» (14, 147): Մահմեդական կրոնի համաձայն քրիստոնյաները ալլահի ստրուկներն են, իսկ թուրքական կայսրությունը ղեկավարվում էր իսլամի սուրբ գրքի դոգմաներով, դատարանները կառուցվում էին նույն սկզբունքներով: Դատարանների նման կառուցվածքը և դատավարության կամայականությունները, վկաների համակարգը պայմաններ էր ստեղծում երկրում բոլոր տեսակի անօրինականությունների ու չարաշահումների համար: Հիմնականում տուժողը քրիստոնյան էր, այս պարագայում առավել խստությամբ՝ հայերը: Դատարանի միջոցով հիմնավորվում, արդարացի ու օրինական էին համարվում մահմեդականների բոլոր արարքները, հանցագործությունները, որոնք կապված էին քրիստոնյաների հետ. կյանքի ու պատվի ոտնահարում, գույքի հափշտակում, հողերի բռնի զավթում (48, 11): Թուրքիայում մահմեդականների իրավունքները վեր էին ամեն ինչից, և դրանք փոփոխության ենթակա չէին, ինչպես չէր կարելի փոփոխել սուրբ գրքի որևէ սկզբունք, հետևաբար զուր էին արևմտահայության հույսերը բարեփոխումների միջոցով իր ստրկական վիճակի բարելավման խնդրում: «Քրիստոնյաները և մահմեդականները մահմեդական կառավարման ընթացքում չեն կարող լինել իրավահավասար, – գրում է Է. Դիլոնը, – որովհետև այդ հակառակ կլիներ իսլամին» (14, 108):

Թուրքական կայսրությունում հայ ժողովրդի ստրկական ողբերգություններով լի, նվաստացուցիչ ու դառնաղետ կյանքի դժնդակ առօրյայի ամենածանր փորձություններից էր իշխողների կամքով դարերի ընթացքում հաստատված ու սովորության ուժ ստացած օթևանի իրավունքը: «Քրիստոնեական հավատի յուրաքանչյուր տնատեր, – գրում է Մալքուն Մակբունը, – որպես սուլթանի հպատակ, օրենքին համաձայն, պարտավոր է անհատույց երեք օր պահել մահմեդական ճանապարհորդին կամ չինովնիկին, որը կպահանջի այդ, սկսած փաշայից մինչև վերջին աղքատը» (14, 140): Յուրաքանչյուր քրիստոնյա պարտավորված էր անտրտունը կատարել մահմեդական անկոչ հյուրի բոլոր ցանկությունները, վերջինս հյուրընկալողին դիտում էր որպես իր ստրուկի, իսկ նրա ընտանիքը՝ իր սեփականությունը: Երեկոն իջնելու հետ միասին տղամարդկանց առաջարկվում էր թողնել բնակարանը, իսկ կանայք մնում էին հյուրերի տրամադրության տակ: Անզեն հայի ընտանիքում ամենահետին աղքատության մեջ գտնվող մահմեդականը, հասարակ ոստիկանը, որ իր պետի ներկայությամբ խոնարհ էր ու համեստ, հայի ընտանիքում իրեն զգում էր որպես անհեղ սատրապ, որի կամքը պարտավոր էին կատարել

բոլորը, որովհետև նա զինված էր (14, 141): Հայի ունեցվածքի, կանանց ու աղջիկների նկատմամբ գիշատչի հոգեբանությամբ դաստիարակված թուրք պաշտոնյաները, ոստիկաններն ու զինվորները, նրանք, ովքեր զինված էին, օրնիբուն զբաղված էին հայկական ընտանիքների քայքայման, կանանց ու աղջիկների կլկման, ընտանիքների սրբությունների պղծման, իրենց անասնական կրքերին հագուրդ տալու անբարոյական գործողություններով: Մահմեդական հյուրը պատվիրում է ամեն ինչ իր զգայական ցանկությունները կատարելու համար: Ի՞նչ կարող էր անել անզեն հայը, աննշան դիմադրությունն ավարտվում էր ողբերգությամբ, քանի որ մահմեդականը հայի կյանքը և նրա կանանց դիտում էր իր օրինական որսը և ամեն մի դիմադրություն քրիստոնյայի կողմից համարվում էր հանդուգն խռովություն, որը պետք է պատժվեր տեղում: Ընտանիքի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու փորձ կատարած ամուսինը հոշոտվում էր գազաճաբար, պատվախնդիր կինը նետվում էր եփրատի ալիքների մեջ, կամ էլ դիմադրելով դահճին, սպանվում էր տեղում: Բրիտանական հյուպատոսը 1891 թ. մարտի 7-ին երգրումից հաղորդում է. «Տասնհինգ օր առաջ Պատմոսում Հուսեյն աղան իր ազգակիցներով ներխուժում է Գասպար անվամբ մի հայի տուն, նպատակ ունենալով փախցնել նրա գեղեցիկ կնոջը: Տան բնակիչները օգնության են կանչում, որի հետևանքով Հուսեյնը հանում է ատրճանակը, կրակում և տեղում սպանում է կնոջը» (14, 142): Հայերի հանդեպ թուրք պաշտոնյաների գործադրած արյունալի արարքները անպակաս էին, ամեն օր, ամեն ժամ հար և նման գործողություններով կրկնվում էին հայկական գյուղերում, ուր տազնապ էին ապրում բնակիչները, երբ տեսնում էին թուրքական զինվորի կարմիր զլխարկը և լավ ծանոթ համազգեստը:

Թուրքիայում «Times»-ի թղթակիցը 1877 թվականի փետրվարի 7-ին տեղեկացնում է ծննդյան տոնի օրը թուրք ոստիկանի Բրանկորստ գյուղում կատարած չարագործության մասին: Գյուղապետը հայտնում է նրան, որ իր տանը արդեն հյուրընկալվել են երկու այլ մահմեդական: Վիրավորված անկոչ հյուրը թամբում է գյուղապետին, ապա ստիպում խոտ ուտել: «Տանուտերը գյուղում որոշ նշանակություն ունեցող մարդ է,– գրում է թղթակիցը,– կառավարությունը նրան վստահում է տարեկան միջին հաշվով գանձել 200. 000 դուրուշ հարկ, և չնայած դրան, նա այնուամենայնիվ, երբեք չէր համարձակվել բողոքել իրեն հասցված վիրավորանքի համար, որովհետև ոչ մի բան նրան չէր փրկի ոստիկանի կամ նրա ցեղակիցների վրեժխնդրությունից» (14, 145): Հայ ժողովուր-

դի այդ անելանելի դրության մասին Ն. Ն. Գոլբորոդկոն իրավացիորեն գրում էր, որ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին, որովհետև նա զրկված էր զենք ունենալու և այն կրելու իրավունքից (34, 222): Թուրքահպատակ հայերի զենք կրելու հարցը քննարկման առարկա է եղել դեռևս 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրում, ուր Բ. Դուռը, ինչպես այդ հարցում, այնպես էլ մյուս բոլոր հարաբերությունների խնդրում խոստացավ քրիստոնյաների համար ստեղծել մահմեդականների հետ հավասար պայմաններ, սակայն այդ խոստումը, ինչպես սուլթանի բոլոր խոստումները մնացին որպես մեռած տառ: ԵՎ դա զարմանալի չէր, որովհետև օրենքներն ու խոստումները քրիստոնյաների դրության բարելավման մասին «չարժեն այն թղթին, որի վրա դրանք գրված են,– գրում է Է. Դիլոնը,– քանի դեռ նրանց գործադրումը թողնվում է թուրքերին առանց որևէ հսկողության» (14, 138): 1877 թ. 4. Պոլսում մեծ տերությունների խորհրդակցության ժամանակ, ինչպես նաև 1878 թ. Բեռլինի կոնգրեսում տերությունները կրկին անգամ հարց բարձրացրին՝ առաջարկելով թուրքահպատակ քրիստոնյաներին թույլատրել զենք կրել: Անգլիայի արտգործնախարար լորդ Դերբին դեմ արտահայտվեց՝ նշելով, որ քրիստոնյաներին զինելու դեպքում տեղի կունենա անխուսափելի ընդհարում: «Այսպիսով,– գրում է Մալքում Մակքուլը,– նա այդ պատճառաբանությամբ անզեն ու անպաշտպան քրիստոնյաներին թողեց զինված մուսուլմանների կամայականությամբ» (14, 138): Մյուս տերությունները դիմեցին սուլթանին, իսկ վերջինս գտնելով, որ այն որպես կրոնական դոգմա, վեր է իր իրավասություններից, հարցը հանձնեց մուսուլմանական բարձր հոգևորականության և իրավաբանների վճռին: Նրանք որոշեցին, որ այն արգելվում է սուրբ օրենքով և փոփոխության ենթակա չէ (49, 1914, 2, 143–151): Եվրոպական տերություններն իրենց բարոյական պարտքը կատարելով լռեցին, իսկ հայերը հանձնվեցին զինված մահմեդականների ողորմածությանը: Հայերին զրկելով զենք կրելու իրավունքից՝ թուրքական իշխանությունները միաժամանակ իրաժարվում էին նրանց պաշտպանել քրդերից ու չերքեզներից (50, 43), որի հետևանքով հայերը իսպառ զրկվում էին ինքնապաշտպանության բոլոր հնարավորություններից: Հայը զրկված էր ապրելու իրավունքից: Նրան բանտարկում, թալանում, սպանում էին մահմեդականները և մնում էին անպատիժ: Թուրքական պաշտոնյաների և ոչ ոքի չենթարկվող վայրի քրդերի հանցագործությունների զոհը լինում էին անզեն հայերը: «Չնայած լավ հայտնի է, որ քրդերն ապրում են քրիստոնյաներին թալանելով,– նշում է Մալքում Մակքուլը,–



համապատասխան իրենց իրավունքին, օրենքին և հավատին: Թուրքական տիրապետության միտումն այն է, որ անբարոյականացնի, տանջի, ավերի...» (14, 145): Նվաճված երկրների, մասնավորապես քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ թուրքական իշխողների գործադրած բռնությունների, սոցիալական ու ազգային ճնշման ու հարստահարման, նրանց ֆիզիկական բնաջնջմանն ուղղված հակաազգային ու հակաժողովրդական քաղաքականության ու նրանց հաստատած բիրտ ու դաժան վարչակարգի համակողմանի ու սպառնիչ բնութագիրը տվել է անվանի պատմաբան, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը: «Իրենց գրաված բոլոր երկրներում,– գրում է նա,– օսմանյան սուլթանները հաստատում էին կամայականության, բռնության, բացարձակ ստրկացման և անլուր ճնշումների ռեժիմ: Նվաճված ժողովուրդների համար թուրքական տիրապետությունը բերում էր ռազմաֆեոդալական դաժան շահագործում, սոցիալական անասելի թալան ու կողոպուտ, արտատնտեսական ճնշման ամենավայրենի ձևեր, ազգային–կրոնական բարբարոսական հալածանքներ ու հարստահարություններ» (52, 10): Այսպիսով՝ Բ. Դուռը և սուլթանը Հայկական հարցը թուրքական ձևով լուծելու նպատակով ավելի ու ավելի էին սեղմում արևմտահայության խեղդող օղակը: Հողագրկման, հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավմանը զուգընթաց ավելի էին ուժգնացնում սոցիալական ճնշումն ու ազգային և կրոնական հետապնդումները: Ձինելով մահմեդական խառնամբոխին՝ նրանք զրկում էին հայերին զենք ունենալու և այն կրելու իրավունքից: Թուրքական կառավարությունը հետևողականորեն քայլ առ քայլ կյանքի էր կոչում արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ծրագրի հիմնադրույթները:

## **2. Արևմտահայության ֆիզիկական բնաջնջմանը միտված միջոցառումները**

Հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, Արևմտյան Հայաստանի հայաթափման նպատակով թուրքական իշխանությունները որոշեցին խախտել արևմտահայության հավաքական գոյությունը, նրան ցրել մահմեդական ծովում: Բ. Դուռը, 19–րդ դարի 60–70–ական թվականներից սկսած, Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում կատարեց վարչատարածքային մի շարք վերափոխումներ, նպատակ ունենալով աշխարհագրական տեղանունների թուրքացմամբ սեփականացնել հայկական տարածքները, հայի

արյան ու պատմության միջից հանել հայ անունը, ջնջել անցյալի հիշողությունը, իսպառ մոռացության մատնել պատմությունը, հայ ժողովրդին ցրել թուրքական կայսրությունով մեկ:

Օսմանյան կայսրությունը շուրջ երկու դար բաժանված էր էլայեթների կամ փաշայությունների: Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվել էին Երզրումի, Կարսի, Բայազետի, Վանի, Մուշի, մասամբ Դիարբեքիրի և Սվազի փաշայությունները, որոնք մտնում էին Երզրումի սերասքյարության մեջ և վարչականորեն ենթարկվում էին նրան (52, 33): Հայկական Կիլիկիան մտնում էր Ադանայի էլայեթի մեջ: 1856 թ. սուլթանական Հաթը հյուսնայունը առաջադրեց վարչատարածքային բաժանման նոր սկզբունք, որի հիման վրա 1864 թ. Վիլայեթի մասին հրապարակված նոր օրենքով կայսրությունը բաժանվեց վիլայեթների: Արևմտյան Հայաստանի հիմնական տարածքը մինչև 1868 թվականը ընդգրկված էր Երզրումի վիլայեթի կազմում, որի մեջ վարչական փոքր միավորի կարգավիճակով ընդգրկված էր Մուշը, Չըլդըրը, Երզնկան, Կարսը, Վանը, Բայազետը (53, 207): Օսմանյան կայսրությունում վարչատարածքային բաժանումների կատարման ընթացքում, ընդհուպ մինչև 19–րդ դարի 80–ական թվականները, պահպանվում էին էթնիկական և աշխարհագրական–տարածքային առանձնահատկությունները: Իշխանությունների համար հայ ազգաբնակչության հավաքական գոյությունը, ազգաբնակչության կազմում նրա մեծամասնության լինելը դեռևս քաղաքական բովանդակություն չուներ, ուստի հայաբնակ շրջանները միավորվում էին ազգային միասնական տարածքներում, իսկ քրդաբնակ շրջանները, ուր մինչև 19–րդ դարի 70–ական թվականները քրդական աշիրաթները կենտրոնական իշխանության նկատմամբ պահպանում էին իրենց կիսանկախ վիճակը, միավորվում էին առանձին վարչական տարածքի մեջ, հայկական շրջանների հետ չէին միավորվում (43, 191): Այդ փուլում իշխանությունները հիմնականում զբաղվում էին բնակչությունից հարկահավաքման, կառավարման համակարգի բարելավման, իշխանության կենտրոնացման և անհնազանդ քրդական ցեղերի հպատակեցման, նրանց կենտրոնական իշխանությանը ենթարկելու խնդրով: 1878 թ. Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին 6 վիլայեթ. Վանի, Երզրումի, Բիթլիսի, Սեբաստիայի (Սվազի), Դիարբեքիրի և Խարբերդի, իսկ Կիլիկիայի տարածքում՝ Հալեպի և Ադանայի վիլայեթները (4, 18):

Սակայն, սկսած 1880–ական թվականներից, կայսրության վարչատա-

րածքային վերածնունդները նոր իմաստ ու բովանդակություն ստացան: Իշխանությունները զանց առնելով վարչատարածքային միավորների ստեղծման նախկինում եղած աշխարհագրական, էթնիկական, սոցիալական առանձնահատկությունները, Արևմտյան Հայաստանում հայերով խիտ բնակեցված շրջանները կամայականորեն կտրատում ու միացնում էին մահմեդական խիտ բնակչություն ունեցող տարածքներին: «Թուրքական իշխանությունները,– կարդում ենք վավերագրում,– Արևմտյան Հայաստանում նպատակ ունեին հայերով բնակեցված տարածքներում հաստատել մահմեդական ազգաբնակչության գերիշխանությունը, դրանով հայերին զրկել տեղական կառավարմանը մասնակցելու իրավունքից» (20, Ժ. 282, Պ. 75–76), ինչպես նաև անհնարին դարձնել 61–րդ հոդվածով ստանձնած պարտականությունը, հայկական շրջաններում ռեֆորմների իրագործումը: Ուստի այսուհետև կայսրության տարածքում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, վարչատարածքային բոլոր վերածնունդների ընթացքում «Թուրքական կառավարության գործողությունների հիմքում,– գրում է Թուրքիայում ռուսական ռազմական գործակալ Նովիկովը,– ընկած էր այն սկզբունքը, որ այնպես բաժանել Հայաստանն առանձին շրջանների, որպեսզի հայ ազգաբնակչությունը զրկվի մեծամասնություն լինելուց» (23, Ժ. 118, Պ. 92–94): 1880 թ. կատարված վարչատարածքային նոր վերաբաժանման ժամանակ արմատական քրդաբնակ շեքիարին միացվեց Վանին, իսկ Դերսիմը՝ Խարբերդին (54, 6–9): Վանի և Խարբերդի վիլայեթներում խախտվեց ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը, այնուամենայնիվ, այդ երկու վիլայեթներում էլ դեռևս հայերը կազմում էին մեծամասնություն, որն ընդունում են նաև թուրքական աղբյուրները (11, 1897, թիվ 11, 118): Աշխատելով այդ ճանապարհով արհեստականորեն նվազեցնել հայ ազգաբնակչության թիվը, իշխանությունները 1889 թ. կրկին վարչատարածքային նոր վերածնունդ կատարեցին (55): Մուշի վիլայեթին, ուր ճնշող մեծամասնություն էին կազմում հայերը, միացվեց քրդական ազգաբնակչությամբ գերակշիռ Բիթլիսը: Քրդաբնակ Դերսիմը միացվեց Խարբերդին, ստեղծվեց Մամուրեթ–ուլ–Ազիզ վիլայեթը (56, 43): Սակայն այդ վերածնունդները դեռևս չէին կարող նպատակային լինել, քանի որ բոլոր վիլայեթներում անխտիր հայերը կազմում են ազգաբնակչության հարաբերական մեծամասնությունը: Սկսած 1880 թ. հունիսի 11–ի տերությունների կողմից Բ. Դռանը հայկական բարենորոգումների իրագործման մասին համաձայնության թուրքական

պատասխան գրության ներկայացման պահից՝ Արևմտյան Հայաստանի տարածքում վարչատարածքային միավորների վերածնունդն ազդեցիկ հաճախակի դարձավ: Իշխանություններն այժմ դեկավարվում էին միայն մեկ սկզբունքով, այն է՝ վերածնունդների արդյունքում խախտելով արևմտահայության հավաքական գոյությունը, հավաստիացնել տերություններին, որ հայերը կազմում են ազգաբնակչության փոքրամասնությունը, հետևաբար 61–րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները իրագործել անհնարին է:

1886 թ. Արևմտյան Հայաստանը ենթարկվեց նոր վարչատարածքային բաժանման: Ձևավորվեցին Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքի, Տրապիզոնի, Մամուրեթ–ուլ–Ազիզի, Խարբերդի վիլայեթները (57, 11–14): «Համաձայն այդ ռեֆորմների,– գրում է Ս. Պողոսյանը,– Սասունը բաժանվեց 4 գավառների, Խուսն ու Մուտկանը մտան Բիթլիսի, Շատախն ու Բռնաշենը՝ Մուշի, Խուլբը, Տավրոսիկը և Խիանքը՝ Կենճի, Փսանքը և Ռնդուանը՝ Սղերդի, իսկ Ֆարգինը, որ Խուլբ ու Խիանքի կենտրոնն էր, միացվեց Դիարբեքիին» (58, 99): Թուրքական կառավարության նման գործելակերպը բացատրվում է նրանով, որ խիտ հայաբնակ շրջանները չէր կարելի միավորել մեկ ընդհանուր վարչական տարածքում, օրինակ, եթե Սասունը ընդգրկվեր մեկ սանջակի մեջ, ապա նրանում հայ ազգաբնակչությունը կկազմեր ճնշող մեծամասնություն, որի համար էլ անհրաժեշտ եղավ այն բաժանել մանր միավորների ու ներառել խիտ քրդաբնակ շրջանների մեջ: 1895 թ., երբ Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ մյուս նահանգներում իշխանությունները սանձազերծել էին հայկական արյունալի ջարդեր, Բ. Դուռը կրկին հայկական տարածքներում վարչական նոր վերափոխումներ իրականացրեց: Այժմ ձևավորվեցին Էրզրումի, Վանի, Սեբաստիայի, Խարբերդի, Տրապիզոնի, Մամուրեթ–ուլ–Ազիզի վիլայեթները, որոնց մեջ ներառնվեցին թուրքական և քրդական բնակչությամբ խիտ բնակեցված տարածքներ: Վերածնունդ ենթարկվեցին նաև Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները: Հայաբնակ վայրերը միացվեցին Քրդստան կոչվող վարչական միավորին: Առանձնապես քրդաբնակ շրջաններ Դերսիմը միացվեց Խարբերդին, իսկ Շեքիարը՝ Վանին: Կիլիկիայում Հալեպը և Ադանան մնացին անփոփոխ (58, 151): Վարչատարածքային այդ վերածնունդներով սուլթանն աշխատում էր տերություններին համոզել, որ արդեն ձեռնամուխ է եղել բարենորոգումների կենսագործմանը, որ տեղերում ստեղծվել են հանձնաժո-

ղովներ, կազմվում են ծրագրեր, սակայն երբ տերություններն իրենց շահերին ինտամուտ մոռացության էին տալիս հայկական խնդիրը, սուլթանը մի կողմ դնելով բարենորոգումների հարցը, առաջ էր վարում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման ծրագիրը (10, 1877, 166), առաջմ հայերի թվի արհեստական պակասեցման ճանապարհով:

Արևմտահայության թվաքանակի արհեստական պակասեցման ու ազգաբնակչության կազմում նրա տոկոսային հարաբերության նվազեցման փորձերը թուրքական կառավարության կողմից առաջին անգամ արծանագրվեցին Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու առիթով թուրքական կառավարությանը ուղղված տերությունների 1880 թ, հունիսի 11-ի համաճարային արտգործնախարար Աբեդին փաշայի պատասխան զեկուցագրում: «Ձերդ գերագանցություն,- գրում էր նա,- վերջացնելով ես պետք է վճռական կերպով հաստատեմ, որ Վանի, Դիարբեքի Բիթլիսի, Էրզրումի, Սվազի հայ բնակչության պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել. հայերի թիվն ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17%-ի, մյուս ոչ մահմեդական համայնքներինը՝ 4%-ի, իսկ մահմեդականներինը՝ 79%-ի» (14, 95): Աբեդին փաշայի այդ հաղորդագրությունը դարձավ վճռական ելակետ Արևմտյան Հայաստանում հայերի թվի մասին: Հետայսու թուրքական պաշտոնական շրջանները, ինչպես նաև թուրքամետ որոշ ուժեր, հետագայում թուրքական պատմագրության ներկայացուցիչները գտնում էին, որ Արևմտյան Հայաստանում ապրում են շուրջ 660000-780000 հայ (14, 8):

Քանի դեռ Հայկական հարցը չէր միջազգայնացվել ու չէր մտել տերությունների դիվանագիտության մեջ և նրանց կողմից չէր օգտագործվել որպես արտաքին միջամտության գործոն, Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի թվաքանակին հատուկ նշանակություն չէր տրվում: Մարդահամարն ուներ միայն սոցիալ-տնտեսական նշանակություն: Դրանով կարգավորվում էին ազգաբնակչության կողմից պետությանը տրվող բազմազան և բազմատեսակ հարկերն ու տուրքերը, սակայն 80-ական թվականներից սկսած՝ այն ստացավ քաղաքական բովանդակություն ու նոր իմաստ ձեռք բերեց:

Թուրքիայում մինչև 19-րդ դարի 40-ական թվականները մարդահամար չի կատարվել: Երկրի ազգաբնակչության թիվը որոշվում էր հարկահանության արդյունքում ստացված եկամուտների չափով, ուստի այդ թվական

տվյալները հաճախ իրական ու ստույգ չէին:

1844 թ. Թուրքիայում անցկացվեց առաջին մարդահամարը եվրոպական մասնագետների մասնակցությամբ (14, 8), սակայն այն թերի էր ու լեցուն բազում սխալներով, որոնք պայմանավորված էին մի շարք պատճառներով: Բնակչության թվի հաշվարկը կատարվում էր ըստ տների թվի և ընտանիքի անդամների քանակի, ինչպես հայկական, այնպես էլ մահմեդական բնակչության համար, ընդունվում էր կամայական թիվ: Բնակչությունը մշտապես տազնապի մեջ էր՝ վախենալով, որ մարդահամարից նոր հարկեր կնշանակվեն, ուստի դրանից ազատվելու համար նրանք կեղծում էին իրենց իսկական թիվը (60, 12): Մարդահամարից առանձնապես խուսափում էին պետական բազմաթիվ հարկերի ծանրության տակ կքած հայ գյուղացիները: Նրանք իրենց ընտանիքի անդամների թիվը թաքցնում էին անգամ իրենց նոտարից (61, 11, 1913, 117), իսկ հաճախ ընդունում էին տարբեր հյուպատոսությունների հովանավորությունը Թուրքիայում հաստատված զինաթափման իրավունքից օգտվելու համար (62, 15-16): Մարդահամարի տվյալները թերի ու ստույգ չէին նաև այն պատճառով, որ բազմաթիվ լեռնային շրջաններ, ուր ապրում էին հայերը, որոնց քրդերը դիտում էին իրենց սեփականությունը և հարկ էին պահանջում հայերից, արգելում էին պետական պաշտոնյաներին մուտք գործել այդ վայրերը (63, 6): Հետևաբար, լեռնային շատ բնակավայրերում հայերը դուրս էին մնում մարդահամարից: Մարդահամարի կատարման համար տեղերում չկային պաշտոնական գրանցման հիմնարկներ:

Պաշտոնյաները մարդահամարի ընթացքում կամայական մոտեցում էին ցուցաբերում ազգաբնակչության թվի նկատմամբ ու հաճախ անիրական, մտացածին տվյալներ էին հաղորդում կենտրոնական հանձնաժողովին (14, 11): Դրան ավելացրած նաև այն, որ կենտրոնական հանձնաժողովի պաշտոնյաները իրենք ևս ճիշտ չէին ներկայացնում ազգաբնակչության թիվը: Այնուամենայնիվ, 1844 թ. մարդահամարի տվյալներով Թուրքիայում ապրում էին 2400000 հայ, որից 2000000՝ ասիական Թուրքիայում, իսկ 400000-ը՝ Կ. Պոլսում և կայսրության եվրոպական տարածքներում: Նույն թիվն է ընդունում նաև թուրք պատմաբան Ի. Չարքը (64), իսկ թուրքական մեկ այլ աղբյուր ընդունում է 3600000 (39, 48): Թուրքիայում հայոց թվի ուսումնասիրության համար գոյություն ունեն բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք, ըստ ծագման, կարելի է բաժանել 3 խմբի.

#### 1. Թուրքական

## 2. Հայկական

### 3. Ռուսական և արևմտաեվրոպական:

Սկսած 1880 թվականից՝ թուրքիայում ամենամյա մարդահամարի արդյունքները հրապարակվում էին սալնամեներում (տարեգիրք ազգաբնակչության թվաքանակի մասին – Պ. Ս.): Արևմտյան Հայաստանի և կայսրության մյուս հայաբնակ վիլայեթների հայ ազգաբնակչության թիվը երբեք չէր գերազանցում Աբեդին փաշայի կողմից շրջանառության մեջ դրված թվից: Շուտով այն ամրագրվեց ֆրանսիացի հետազոտող Վ. Քինեի աշխատությունում: Վ. Քինեն թուրքիայում երկարամյա հետազոտության ընթացքում, օգտագործելով բացառապես միայն թուրքական աղբյուրներ և Հայկական հարցում հետևելով թուրքական իշխանությունների պաշտոնական ընթացքին, գտնում է, որ Օսմանյան կայսրությունում ապրում են 1300000 հայ, որից 665000–ը՝ արևելյան 6 վիլայեթներում (65, 74): Նման մոտեցումը դարձավ ոչ միայն թուրքական պաշտոնական, այլ նաև օտար թուրքամետ ուսումնասիրողների ընդունելի տեսակետը:

«Թուրքական կառավարությունը 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմից առաջ արհեստականորեն մեծացնում էր հայերի թիվը,– գրում է Ա. Ս. Համբարյանը,– նրանցից շատ հարկեր ու տուրքեր հավաքելու, իսկ հետո աշխատում էր փոքրացնել այն՝ Հայկական հարցը միջազգային դիվանագիտությունից հանելու նպատակով» (33, 43):

Թուրք պատմաբանները գտնում են, որ հայերը թուրքիայում մշտապես կազմել են միանշանակ փոքրամասնություն, տարածված են եղել կայսրության բոլոր շրջաններում (66, 199): Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Քյամուրան Գյուրյունի հետազոտությունը (55), որի մեջ աչքի է զարնվում ուսումնասիրման հիմք հանդիսացող աղբյուրների բազմազանությունը: Պատմաբանը, կատարելով իշխանությունների քաղաքական պատվերը, կուտակված հարուստ փաստական նյութը, թուրքական, հայկական, ռուսական և եվրոպական սկզբնաղբյուրներից քաղված տվյալները ի սպաս է դրել հիմնավորելու թուրքիայում հայերի փոքրամասնություն լինելու պաշտոնական վարկածը: «Հայերը,– գրում է Ք. Գյուրյունը,– Բեռլինի կոնգրեսում ներկայացրել էին ազգաբնակչության թվեր, որոնք իրական չէին: Նրանք ուզում էին ցույց տալ, որ արևելյան վիլայեթներում հայերն ավելի շատ էին, քան մահմեդականները» (55, 107): Մատնացույց անելով Վ. Պոլսի պատրիարքարանի կողմից Բեռլինի կոնգրեսի քննարկմանը

ներկայացված «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի» փաստաթուղթը, որում հայերի թիվը նշվում է 3000000, նա գտնում է, որ այդ թիվն ամբողջ աշխարհում ապրող հայերի մասին է, մինչդեռ թուրքիայում հայերը կազմում են այդ ամբողջության մեկ փոքրիկ մասը միայն:

Քյամուրան Գյուրյունը հայերի թվի վերաբերյալ իր տեսակետը հիմնավորում է ֆրանսիացի հետազոտող Վ. Քինեի Հայկական հարցում ունեցած հայեցակետով, որ իրականում հայկական աղբյուրների տվյալները, թուրքիայում 2500000–3000000 հայերի գոյության մասին կեղծ են, մտացածին ու հավատ չեն ներշնչում: Ըստ նրա՝ «Ճշմարտությունն այն է, որ թուրքիայում գոյություն են ունեցել ընդամենը 1300000 հայ, որից արևելյան 6 վիլայեթներում՝ 665000 հայ»: Նա գտնում է, որ չկար մահանգ, կազա, նույնիսկ փոքրիկ մի տարածք, ուր հայերը կազմեն մեծամասնություն (55, 134):

Չափազանց հարուստ է Ք. Գյուրյունի աշխատության աղբյուրագիտական բազան: Նա օգտվել է Վ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տեղեկագրերից, տվյալներ է քաղել հայազգի առանձին պատմաբանների ուսումնասիրություններից, բրիտանական կառավարության ամենամյա հրապարակված «Կապույտ գրքերից», ինչպես նաև բրիտանական հյուպատոսների զեկուցագրերից ու նշանավոր ճանապարհորդ, աշխարհագետ Յ. Ֆ. Լինչի ուսումնասիրությունից: Սակայն փաստական հարուստ նյութի վերլուծության ընթացքում հայերի թվի հարցը որոշելիս հեղինակը ղեկավարվել է ոչ թե ազգային խմբերի թվաքանակն առանձին ներկայացնելով, այլ առաջնորդվելով կրոնական սկզբունքներով, միևնույն խմբում միավորում է տարբեր ցեղեր ու ժողովուրդներ: Այսպես, օրինակ՝ մահմեդականների մեջ միավորվում են թուրք, քուրդ, արաբ, լազ, չերքեզ և այլ էթնիկական խմբեր, իսկ քրիստոնյաների պարագայում նրանցից անջատում է կաթոլիկներին, բողոքականներին, չի նշվում անգամ այն պարզ ճշմարտությունը, որ կաթոլիկներն ու բողոքականները նաև հայեր են: Հայերի թվաքանակի քննարկման ընթացքում Ք. Գյուրյունը օրթոդոքս, բողոքական, կաթոլիկ բնակչությանը համարում էր ավելի շատ «հույն, քան հայ» (55, 111): Ելնելով դրանից՝ նա Վանի վիլայեթի բազմաթիվ հայկական գյուղերի բնակիչներին դիտում էր ասորի, նեստորական: Այդ պատճառով հազարավոր հայեր մարդահամարի ընթացքում ներառվում էին քրիստոնյաների մեջ, սակայն դուրս էին մնում հայերի ընդհանուր թվից: Վերը նշված սկզբունքով Ք. Գյուրյունը գտնում էր,

որ Վանի վիլայեթում մահմեդականները կազմում էին 305615, իսկ հայերը՝ 94424 (55, 118): Մինչդեռ Յ. Ֆ. Բ. Լինչը, ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանում, ականատեսի հավաստի վկայությամբ նշում է, որ «Վանում հայերը կազմում են մեծամասնություն» (43, 546): Նրան լրացնում է Մակ Կոլը, գրելով. «Հայերը թվական գերազանցություն ունեն թուրքերի նկատմամբ» (46, 103):

Հետազոտության այդ սկզբունքը Բ. Գյուրյունը հավասարապես կիրառում է հայաշատ մյուս տարածքներում հայերի թվի որոշման ընթացքում: Ըստ նրա՝ թուրքական կայսրությունում ազգաբնակչությունը 1880–1900 թթ. ուներ հետևյալ կազմը.

մահմեդականներ՝ 14856118, հայեր՝ 1475011, որից՝ 635000 ասիական թուրքիայում, հրեաներ՝ 123947, օտարերկրացիներ՝ 170822, ընդամենը՝ 17911751 (55, 108):

Բերված թվերը, ըստ նրա, հիմնավորում են, որ հայերը կազմում են ազգային փոքրամասնություն ինչպես կայսրության ողջ տարածքում, այնպես էլ արևելյան 6 վիլայեթներում առանձին վերցրած: «Մենք նախօրոք տեսանք,– գրում է Բ. Գյուրյունը, որ թուրքիայի հայ բնակչությունն այդ ժամանակաշրջանում հասնում էր 1300000: Ողջ ազգաբնակչության 6,9% էր կազմում» (55, 125): Խոսելով հայ ժողովրդի բնական աճի մասին՝ նա գտնում է, որ «1895–1896 թթ. թուրքիայում տեղի ունեցած ապստամբությունների հետևանքով հազարավոր հայեր (այդ մասին գրում են նաև հայ հեղինակները), օտարազնացության մեծ հոսք առաջացրին: Պատերազմի հետևանքով մինչև 1912 թ. նաև բալկանյան պատերազմների ընթացքում,– շարունակում է Բ. Գյուրյունը,– թուրքիայից խլված տարածքներում շատ հայեր մնացին, և նրանց թիվը շատ պակասեց» (55, 124):

Արևմտյան Հայաստանում հայերի փոքրամասնության մասին թուրքական վարկածն իր արտահայտությունն է գտել թուրք պետական գործիչ Սադի Քոչաշի ուսումնասիրությունում (68): «Հայերն այս տարածքներում (Հայաստան էթնիկական անվանումը նա չի ընդունում – Պ. Ս.),– գրում է Ս. Քոչաշը,– ապրող մարդկանց մեջ մի ամբողջություն, մեծամասնություն չեն կազմել» (68, 15): Այնուհետև գտնում է, որ հայերը ցրված են ողջ թուրքիայի տարածքում, քանի որ նրանք հիմնականում զբաղվում են առևտրով (68, 65): Այս նույն կարծիքին է նաև մեկ այլ թուրք պատմաբան՝ Թաֆֆիթ Գյուլբիլգինը: Ըստ նրա՝ արևելյան վիլայեթներում ապրում էին ընդամենը

4000000 մարդ, որից 600000 հայ: Ինչպես տեսնում ենք, այս հեղինակը հայերի թիվն ավելի պակաս է ներկայացնում, քան թուրքական պաշտոնական աղբյուրները: Հետևաբար, ըստ Թ. Գյուլբիլգինի, հայերը բոլոր վիլայեթներում միասին վերցրած, կազմում էին ազգաբնակչության չնչին մասը, մոտավորապես 3,5%–ը (69, 114): Արևմտահայության թվաքանակի խնդրում թուրքական պատմագրության կեղծարարությանը բնորոշ է նաև էսատ Ուրասին, որը պաշտպանելով պաշտոնական տեսակետը, գտնում է, որ թուրքիայում ամենուր հայերը կազմել են չնչին փոքրամասնություն, քանի որ չի եղել ոչ մի վիլայեթ, նույնիսկ ամենափոքր մի տարածք, ուր հայերը մեծամասնություն կազմեին: Ըստ նրա, անգամ Սվազում, ուր «հայերը հոծ էին բնակեցված, մահմեդականները կազմում էին 840000, իսկ հայերը՝ 170000, այսինքն՝ ազգաբնակչության ընդամենը 15%–ը» (70, 145): Սակայն «Համաձայն թուրքական սալնամեների,– գրում է Ա. Համբարյանը,– 70–ական թվականներին, այսինքն՝ ռուս–թուրքական պատերազմի նախօրեին Ասիական թուրքիայում (ոչ միայն Արևմտյան Հայաստանում) կար 17216000 մարդ, որից 3600000 հայեր» (33, 43): Իսկ երբ քաղաքական նկատառումներով թուրքական կառավարությունը սկսեց արհեստականորեն պակասեցնել հայերի թիվը, ամբողջ երկրում, նաև երկրից դուրս թուրքամետ շրջաններում տիրապետող դարձավ այն կարծիքը, որ «Հայերը մեծամասնություն են կազմում միայն Բիթլիսում, Անկարայում և Ալեքսանդրեթում: Իսկ այդ երեք քաղաքներն իրարից այնքան հեռու են, որ դրանք մեկ նահանգի մեջ միավորելն անհնարին է,– շարունակում է աղբյուրը,– Հայերը ցրված են ամբողջ երկրի, ավելի ճիշտ ամբողջ երկրագնդի վրա... Այսօր գոյություն չունի ոչ մի կետ, որ կարողանա Հայաստան կոչվել» (66, 199): Պատմաբան Բիլյալ Շիմշիրը այդ մասին գրում էր. «Իհարկե, հայկական փոքրամասնություն ապրում էր այնտեղ (նա «Հայաստան» տեղանուն չի ընդունում – Պ. Ս.), բայց հայերը ցրված էին, միախառնված մուսուլմանների հետ, ոչ մի տեղ նրանք համահավաք մեծամասնություն չէին կազմում» (71, 18):

Թուրքական իշխանությունները, ղեկավարվելով քաղաքական նպատակներով ազգաբնակչության մարդահամարի տվյալներում, հայերի թիվը ներկայացնում էին կամայական, մտացածին թիվ՝ 726750 մարդ, սակայն իրականում, Արևմտյան Հայաստանում և թուրքիայի մյուս վիլայեթներում հայերի թիվը մոտավորապես կազմում էր շուրջ 3000000, երբ այն հաշվարկվում էր հարկազանձման (մասնավորապես զինվորական հարկի) ար-

դյունքներով, նույնիսկ կրոնական սկզբունքով հաշվարկման դեպքում հայ ազգաբնակչությունը հայկական վիլայեթներում կազմում էր մեծամասնություն.

թուրքեր – 666. 000

քրդեր – 424. 000

մահմեդական այլ ցեղեր – 88. 000

ընդամենը՝ 1.178.000

հայեր – 1.018.000:

Հայերը կազմում էին 45.2%, մահմեդականները՝ 45.1%, իսկ այլ կրոնի ներկայացուցիչները՝ 9.7% (72, 105):

Ի մի բերելով 1882–1914 թթ. 4. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից հայերի թվի մասին հաղորդած ամենամյա տվյալները, Հ. Շահրիկյանը գտնում է, որ թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականության, հայկական մասսայական կոտորածների, հայ ժողովրդի բնական աճի նվազեցման հետևանքով, նախորդ տասնամյակների համեմատությամբ, հայերի թիվը նվազել է շուրջ 1 միլիոն մարդով (72, 108):

Ե. Խաթանեսյանն իր «Հայոց թիվը» աշխատությունում պնդում է, որ հայկական կոտորածներից հետո ընդհուպ մինչև 1915 թ. Արևմտյան Հայաստանում ապրում էին 1300000–ից մինչև 1500000 հայ, իսկ Օսմանյան կայսրության ողջ տարածքում՝ 2333000 հայ (63, 13–14):

Թուրքական ֆեոդալաբռնատիրական վարչակարգն իր տիրապետության ընթացքում կտրուկ կրճատեց արևմտահայության թվաքանակը: Եթե 17–րդ դարում հայերը կազմում էին ազգաբնակչության 98%–ը, մահմեդականները՝ 2%–ը, ապա 1915–1916 թթ. Հայոց Մեծ եղեռնի նախօրեին այդ թվերը համապատասխանաբար ենթարկվեցին փոփոխության. հայերը կազմում էին 41%, իսկ մահմեդականները՝ 59% (80, 39): Արևմտահայության նման տոկոսային հարաբերությունը նկատի ունենալով և բաղդատելով այն արևելահայության հետ և ընդգծելով սուլթանական ու ցարական վարչակարգերի այդ հարցում ունեցած բոլորովին տարբեր մոտեցումները և ցույց տալով սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության հետևանքները՝ անվանի պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը իրավացիորեն գրում է, «Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հայ բնակչության թիվն Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում անընդհատ աճել է, իսկ

Արևմտյան Հայաստանում ընդհակառակը՝ գնալով նվազել է» (52, 36): Արևմտահայության թվի խնդրում ռուսական աղբյուրներն ունեցել են երկակի մոտեցում՝ ելնելով Հայկական հարցում ցարիզմի կողմնորոշումից: Մինչև 19–րդ դարի 80–ական թվականները ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական շրջանները անկողմնակալ էին և ինչպես թուրքական, այնպես էլ հայկական աղբյուրների կողմից Օսմանյան Թուրքիայում 2500000–ից մինչև 3000000 միլիոն հայերի մասին տվյալները դիտում էին հավաստի, գտնելով, որ Ռուսաստանին սահմանակից հայկական տարածքներում հայերը կազմում են ազգաբնակչության մեծամասնությունը (24, Ժ. 28, ռ. 16): Սակայն 80–90–ական թվականներին Մերձավոր Արևելքում քաղաքական նոր կողմնորոշման պատճառով Հայկական հարցի միջազգայնացումը և այդ առիթով Թուրքիայի ներքին գործերին արտաքին միջամտությունը ցարիզմի համար նպատակահարմար չէին: Հետևելով կառավարության քաղաքական նոր ընթացքին՝ ռուսական պաշտոնական շրջանները, նրանց հետևողությամբ նաև մամուլի որոշ օրգաններ Օսմանյան կայսրությունում հայերի թվի խնդրում որդեգրեցին թուրքական իշխանությունների միտումնավոր կողմնորոշումը, ընդունելով, որ հայերը կազմում են ազգաբնակչության չնչին փոքրամասնությունը (19, Ժ. 3448, ռ. 5–7): Թուրքական իշխանությունների հետևողությամբ ժխտում էին Հայաստան էթնիկական–աշխարհագրական անվանումը, այն փոխարինում էին Քրդստանով: Ռուսական բանակի գնդապետ Պ. Ի. Ավերյանովը այդ մասին գրում էր. «Հայաստան անունը այդ բնակչության ցեղային կազմով չի արդարացում իրեն: Այն ազգագրական մեծ հիմքով կարելի է անվանել «Քրդստան» (73, 17): Հայաստանում 61–րդ հողվածով նախատեսված բարենորոգումների անիրագործելիությունը հիմնավորելու թուրքական կողմի ձգտումը ամբողջությամբ պաշտպանություն գտավ ու հավանության արժանացավ ցարական արքունի խորհրդական Պուտյատայի, Ջելենոյի և մյուս հակահայ գործիչների կողմից: Նրանք միանշանակ գտնում էին, որ հայերը կազմում են փոքրամասնություն ու ցրված են Օսմանյան կայսրության ողջ տարածքում, չկա մի կետ, որ իրավամբ Հայաստան կոչվի (19, Ժ. 3448, ռ. 61–63): Ցարական պաշտոնական շրջանների այդ կողմնորոշումը պաշտպանում էին նրանց ծայրափողը հանդիսացող «Նովոյե վրեմյա», «Գրաժդանին», «Կրեմլ» լրագրերը և վերջիններիս հետևող ոչ պաշտոնական մամուլի մի քանի օրգաններ: Նրանք, աշխատելով ռուսական հասարակության մեջ

ստեղծել ոչ հայանպաստ կարծիք, քաղաքական միտումով թխված հակահայ բովանդակություն ունեցող հողավաճներում զարգացնում էին այն տեսակետը, որ հայերը անզլիասեր են, Անզլիայի օգնությամբ ցանկանում են Ռուսաստանի անդրկովկասյան սահմանի հարևանությամբ ինքնավար Հայաստան ստեղծել, իսկ այդ խնդիրը դիտում էին անհավանական, քանի որ, ըստ նրանց, հայերը ազգաբնակչության փոքրամասնություն են կազմում (12, 1885, 2780):

Ի հակադրություն ցարական պաշտոնական շրջանների ու նրանց համախոհ պահպանողական ու հետադեմ մամուլի պնդումների, ռուսական առաջադիմական շրջանները և ժողովրդական-դեմոկրատական հայացքների հետևորդ մամուլի օրգանները, քննարկելով Հայկական հարցում ցարական ու սուլթանական պաշտոնական շրջանների փոխհամաձայնեցված գործելակերպը, գտնում էին, որ հատկապես Արևմտյան Հայաստանում հայերը կազմում են ազգաբնակչության մեծամասնությունը, հայկական 6 վիլայեթներում ապրում են 2500000 հայ (75, 1896, Ժ. 171), որ հայերը կազմում են 38%, մահմեդականները՝ 25,4%, մյուս ոչ մահմեդականները՝ 35,7% (49, 1915, 2, 143): 1912 թ. բալկանյան պատերազմների ու տերությունների միջև նոր հարաբերությունների ձևավորման հետևանքով Մերձավոր Արևելքում նոր իրադրության ստեղծմանը զուգընթաց, փոփոխության ենթարկվեց Հայկական հարցում ցարիզմի նախորդ էտապում ունեցած դիրքորոշումը: Երբ կրկին ռուսական կառավարությունը արևմտահայության խնդրում վերադարձ կատարեց ավանդական հայամետ քաղաքական հունը, ու նորից Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցը դիտվեց օրինաչափ, նրանց իրագործումը անհրաժեշտ, ցարական դիվանագիտությունը, բնականաբար, հակված էր ընդունելու, որ հայկական 6 վիլայեթներում հայերը կազմում են ազգաբնակչության մեծամասնությունը (61, 1913, 1, 112): Կրկին Ռուսաստանում իշխանությունների կողմից շրջանառության մեջ դրվեցին արևմտահայության թվի մասին եղած նախկին տվյալները: Նույնիսկ «Նովոյե վրեմյան» այժմ այն կարծիքին էր, որ բարենորոգումները թելադրված են թշվառության մատնված արևմտահայությանը փրկելու անհրաժեշտությունից, որ «Ռուսաստանը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է իր վրա վերցնել դժբախտ հայ ժողովրդի ազատագրության փառավոր միսիան» (12, 1913):

Օսմանյան կայսրությունում հայերի թվի մասին համեմատաբար անկողմնակալ ու անաչառ են եղել եվրոպական որոշ ճանապարհորդներ ու ու-

սումնասիրողներ: Նրանք լինելով անկախ՝ չեն արտահայտել որևէ պետության քաղաքական շահերն ու նկրտումները:

Միջազգային իրավունքի ինստիտուտի անդամ Մ. Գ. Ռոլեն ժեկմենը, մանրամասնությամբ ուսումնասիրելով Թուրքիայում 1844 թ. մարդահամարի արդյունքները, թուրքական պաշտոնական տվյալների հիման վրա գտնում է, որ «Օսմանյան հպատակ հայերի թիվն այդ ժամանակ կազմում էր 2400000, որից 400000 եվրոպական Թուրքիայում, իսկ 2000000 Ասիայում»: Այնուհետև հակադրվելով Օսմանյան կայսրության ողջ տարածքում հայերի ցրված լինելու մասին թուրքական ու թուրքամետ շրջանների կեղծ ու ստահող տեսակետին՝ նա ընդունում էր, որ «հայերի մեծ մասը բնակվում է իրենց պատմական հայրենիքի տարածքում» (14, 9): Հետևաբար, ընդգծում է նա, Արևմտյան Հայաստանում հայ բնակչությունը կազմում է հավաքական ամբողջություն: Անտարակույս, Ռոլեն ժեկմենը ընդունում և հիմնավորում էր Արևմտյան Հայաստանում հայերի մեծամասնություն լինելու հանգամանքը: Նույն կարծիքն է պաշտպանում նաև իռլանդացի հետազոտող, լեզվաբան, լրագրող Է. Դիլոնը (14, 398), ինչպես նաև ֆրանսիացի հետազոտող Ա. Ուբիշինին (76, 22):

Լ. դը Կոնտանտոնը այն կարծիքին է, որ Փոքր Ասիայում ընդհանուր ազգաբնակչությունը կազմում էր 17474421 մարդ, որից մուսուլմաններ՝ 12991128, թուրք և ծուլված այլ ազգեր՝ 7815785, քուրդ, թուրքմեն և այլ ցեղեր՝ 1793327, քրիստոնյա՝ 3849595, ուղղափառներ՝ 1859288, կաթոլիկ՝ 5689, մեստորական՝ 232522, հայեր՝ 1133779 (60, 20):

Թուրքական վիճակագրությունը նա դիտում է ոչ արժանահավատ՝ նշելով որ «Հայերն Արևմտյան Հայաստանում չեն կարող փոքրամասնություն լինել, քանի որ այստեղ մահմեդականները կազմում են ընդամենը 41,3%-ը» (60, 17): Ուստի մերժելով հայերի փոքրամասնություն լինելու մասին թուրքական պաշտոնական շրջանների կեղծ ու ստահող տեսակետը, նա գրում է. «Այդ տվյալները թուրքական կառավարական շրջաններն օգտագործում են, որպեսզի հիմնավորեն, որ Արևմտյան Հայաստանում հայերին տեղական ինքնակառավարման մարմիններում և վարչությունում չի կարելի մահմեդական ազգաբնակչությանը հավասար իրավունքներ վերապահել, քանի որ մահմեդականները հանդիսանում են Թուրքիայում ազգաբնակչության գերազանցող մեծամասնությունը» (60, 19):

Մերձավոր Արևելքի ու Միջագետքի ժողովուրդների պատմամշակութային ու էթնիկական տարածքների, նրանց էթնիկական կազմի և թվաքանակի

ծավալուն ուսումնասիրությամբ դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին աչքի ընկավ ֆրանսիացի հետազոտող Էլիզե Ռեկյուն: Նա, իր ծավալուն ուսումնասիրության մեջ անդրադառնալով մեզ հետաքրքրող խնդրին, նշում էր, որ Թուրքիայում հայերի թիվը կազմում է 2520000 մարդ (77, 70): Նույնքան է ընդունում հայերի թիվը նաև ֆրանսիացի մեկ այլ հետազոտող՝ Մորիս Պերնոն (80): Առավել հաստատուն կարծիք է հայտնում Կարլայլ Մակկոանը՝ գտնելով, որ հայերի թվական գերազանցությունը հայկական 6 վիլայեթներում ակնհայտ է (67, 103): Նույն կարծիքին է նաև նշանավոր ճանապարհորդ, աշխարհագետ Յ. Ֆ. Բ. Լինչը՝ ընդգծելով, որ Արևմտյան Հայաստանում ապրում են 1108000 հայ (43, 103):

Արևմտահայության թվի հարցը քննության է առել ֆրանսիացի հայտնի պատմաբան Ժակ դը Մորգանն իր «Հայ ժողովրդի պատմությունը» աշխատությունում: Նա ընդունում է, որ Թուրքիայում 1882 թ. մարդահամարից հետո մինչև 1897 թ. հայերի թիվը կազմում էր 2600000, որից 1570000 բուն Հայաստանում, 103000՝ Կիլիկիայում և Թուրքիայի մյուս մասերում, իսկ 1895-1912 թթ. կազմում էին ազգաբնակչության 38%-ը, թուրքերը՝ 25,4%-ը, քրդերը՝ 26,5%-ը (78, 351):

Այսպիսով՝ տարբեր ծագում և ազգային պատկանելություն ունեցող սկզբնաղբյուրների բաղադրումը պարզորոշ ցույց է տալիս, որ մինչև 19-րդ դարի 70-ական թվականները Օսմանյան կայսրությունում հայերը կազմում էին 2500000-ից 3000000, որից արևելյան 6 վիլայեթներում, որը հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի հիմնական տարածքը՝ 2000000, իսկ մյուս մասը կայսրության մյուս տարածքներում, և որ Արևմտյան Հայաստանում հայերը կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը: Եթե հայերի թվի խնդրում նկատի ունենանք հայկական աղբյուրների, մասնավորապես Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ամենամյա մարդահամարի տվյալների նրան վերագրվող չափազանցման ձգտումը, որն այնքան էլ հավանական չէ, և թուրքական պաշտոնական սալնամեների՝ կառավարության հակահայ քաղաքականության արդարացման նպատակով հայերի թվի արհեստական նվազեցմանն ուղղված միտումը, ապա հենվելով օտար անաչառ ու անկողմնակալ աղբյուրների տվյալների վրա, ձգտելով նրանց համադրմամբ ու քննական վերլուծմամբ բացահայտել օբյեկտիվն ու ճշմարտացին, հայերի թվաքանակի հարցում, կարծում ենք, որ չենք սխալվի, քանի որ բերված բոլոր արդյունքներում, մասնավորապես թուրքական

սալնամեներում հայերի թիվը ընդհուպ մինչև 19-րդ դարի 70-ական թվականները կազմում էր 2300000-ից մինչև 2600000: Անտարակույս հայ ժողովրդի համար Թուրքիայում կյանքի նպաստավոր պայմանների առկայության և բնական աճի անխաթար ընթացքի դեպքում այդ թիվն ավելի մեծ կլիներ: Օտար աղբյուրներում, Վ. Քինեից բացի, հայերի թիվը ողջ Թուրքիայում 2000000-ից ներքև չի տատանվում, իսկ Արևմտյան Հայաստանում պահպանվում է 1500000 թիվը:

Հետևաբար, թուրքական կառավարությանը չհաջողվեց մասսայական կոտորածներով, բռնի տեղահանություններով ու կրոնափոխությամբ, վարչատարածքային անվերջ վերածնունդներով, Կովկասից ու Բալկաններից մահմեդական ազգաբնակչությանը հայկական տարածքներում, Արևմտյան Հայաստանում վերաբնակեցմամբ փոխել ազգաբնակչության ազգային կազմը հոգուտ մահմեդականների: Այդ են վկայում ինչպես հայկական, այնպես էլ սովոր թվով օտար անկողմնակալ աղբյուրները: Նրանց հավաստի տվյալների համաձայն՝ հայկական 6 վիլայեթներում մինչև 1912 թ. ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունն ուներ հետևյալ պատկերը (79, 15).

Ազգաբնակչ.	Վիլայեթներ						Ընդամենը	%
	Էրզրում	Վան	Բիթլիս	Խարբեռլ	Ղիարբեքիր	Սեբաստիա		
Հայ	215000	185000	160000	168000	105000	165000	1018000	389
Թուրք	240000	47000	40000	102000	45000	192000	666000	254
Քուրդ	75000	72000	77000	95000	55000	50000	424000	163

Թուրքական իշխանությունները, 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, արևմտահայության թվի արհեստական նվազեցման միջոցով ցանկանում էին նախ՝ բացառել հայկական վիլայեթներում բարենորոգումների անհրաժեշտությունը, զրկել հայերին տեղական կառավարման մարմիններում պաշտոնավարման օրինական իրավունքից և ապա՝ ժխտել 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս հայաշատ վիլայեթներում իշխանությունների ծրագրած ու իրագործած զանգվածային կոտորածների հետևանքով արևմտահայության կրած մարդկային ու նյու-

թական մեծ կորուստները: Մասսայական կոտորածների ու ամենամյա մարդահամարի կեղծ ու մտացածին տվյալներով նվազագույնի հասցնելով արևմտահայության թիվը, ընդունելով, որ հայկական 6 վիլայեթներում 1914 թ. նախօրյակին կազմում էր ընդամենը 665000, ճգնում են հիմնավորել և համաշխարհային հանրությանը համոզել, որ ցեղասպանություն տեղի չի ունեցել, հայերի և մահմեդականների միջև պատահել են ընդհարումներ, այդ ընթացքում եղել են երկուստեք զոհեր, փորձ են անում արդարացնել թուրքական իշխանությունների հայաջինջ գործողությունները և իրենց ջարդարար նախնիներին անմեղ ներկայացնելով՝ խույս տալ պատմության արդարացի հատուցումից:

Արևմտահայության հավաքական գոյությունը խախտելու հայ ազգաբնակչության փոքրամասնություն լինելու կառավարական պաշտոնական մտացածին կեղծ վարկածը հիմնավորելու և Հայաստանը հայաթափելու նպատակով թուրքական իշխանությունները Բալկաններից, Կովկասից ու փոքր Ասիայի խորքերից հարյուրհազարավոր մահմեդականների վերաբնակեցրին Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս հայաբնակ վիլայեթներում (81, 106): Թուրքական կառավարության գործակալները ծիածանի բոլոր գույներով նկարագրում էին հայկական վիլայեթների ու հայերի հեքիաթային հարստությունների մասին զուրկ պատմություններ: Վերաբնակիչներին լավագույն ապագայի խոստումներ էին տալիս, բնակության նոր վայրերում հարուստ ու շքեղ, բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Միայն Կարսից ու Արդահանից ներգաղթածների թիվը կազմում էր 50–60000 մարդ (18, 116): Լեյտենանտ Կիտչեները հայտնում էր, որ Ադա–Բագարի շրջանում, ուր քաղաքային բնակչությունը կազմում է 11800 մարդ (8000 հայեր են) և գյուղական բնակչությունը 17000, միանգամից թափվել են 25000–ից մինչև 30000 չեքեզ, իսկ 1879 թ. հոկտեմբերին Էրզրումի վալին մայրոք Տրոստերին տեղեկացնում է, որ սպասվում է 10000 տնտեսություններ, որոնք կազմում են 50–60000 մարդ: Այդ նույն ժամանակ «Կավկազ» լրագրի թղթակիցը գրում է, որ ռուսական բանակի կողմից Կարս քաղաքը գրավելուց հետո այնտեղից դուրս եկած վերաբնակիչների թիվը կազմում է 41691 մարդ (14, 67): Մահմեդական վերաբնակիչների խնդրում թուրքական իշխանությունները ուշադրություն չէին դարձնում, թե նրանց ինչպես և որտեղ են տեղավորելու: Տրապիզոնի բրիտանական փոխյուպատոսի հաշվումներով 1879 թ. ապրիլ–հունիս ամիսների ընթացքում Սև ծովի թուրքական

նափի տարբեր տեղերում, մասնավորապես Տրապիզոն, Սամսուն, Ուզնա վայրերում թուրքական նավերով ափ են իջեցվել 5933 լազերի, իսկ 1880 թ. միանգամից ժամանել են տարբեր նավերով 1000, 1500–3000 մարդ: Վերաբնակիչները ողողել էին Արևմտյան Հայաստանի բոլոր ճանապարհները: Բրիտանական դիվանագետ մայրոք Տրոստերը հայտնում է, որ ինքը Վանի ճանապարհին հանդիպել է հազարավոր վերաբնակիչների, իսկ Լեյտենանտ Չերմսայը Սիվաս–Էրզնկյան ճանապարհին նկատել է վերաբնակիչների 600 սայլերից բաղկացած մի խմբի: Բոլոր տղամարդիկ զինված էին, մինչդեռ հայերը զրկված էին զենք կրելու իրավունքից: Կարճ ժամանակ անց մահմեդական վերաբնակիչները զգացին, որ իշխանությունները, որոնք նախապես մեծ խոստումներ տալով իրենց՝ հրապուրեցին դեպի Փոքր Ասիայի խորքերը, չեն կատարում իրենց ստանձնած պարտավորությունները: զաղթականների մոտ ծայր առած տրտուները աստիճանաբար վերածվում էր բողոքի: Անգլիական փոխյուպատոս Սոյուարդը 1880 թ. օգոստոսի 18–ի հաշվետվության մեջ մանրամասն տեղեկություններ է հայտնում Կոստոյից Կոնիա գաղթածների մասին, որոնց «չէր տրվել ոչ մի օգնություն: Մի շարք գյուղերում բնակիչներն անգամ հրաժարվում էին նրանց օգնել մթերքներով» (14, 69): «Գաղթականներից շատերը մահացել էին սովի պատճառով»: Հյուպատոսի հարցին, թե ինչու են թողել իրենց բնակության նախկին վայրերը, նրանք պատասխանում են. «Ինչպես մենք կարող էինք ապրել քրիստոնյա պետության հպատակության տակ»: Սակայն երկար գրույցի ընթացքում նրանք բացահայտում են իրենց վերաբնակեցման պատճառը: «Մեզ հրավիրել են պետական պաշտոնյաները» (14, 69–70),– հայտնում են նրանք:

Կյանքի վատ պայմանները, կառավարության անուշադրությունը, նաև անհեռանկար ապագան արդեն գաղթականների մեջ ցանկություն են առաջացնում վերադառնալ իրենց բնակության նախկին վայրերը: Կ. Պոլսում անգլիական դեսպանության քարտուղար Ստ. Ջոնը այցելում է Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող գաղթականների ճամբարը: Նրան հայտնում են, որ իրենք վերաբնակվել են Բաթումից, մոտավորապես 7000 մարդ, որոնցից 211 մարդ արդեն մահացել էին, շատերը չունենալով բնակարան՝ ապրում էին ծառերի տակ: Սակայն թուրքական իշխանությունները ամենահրապուրիչ խոստումներով, մահմեդականներին վերաբնակեցնելով Արևմտյան Հայաստանում, մոռացության էին մատնում նրանց: Ստեղծված պայմաններում նրանցից

շատերը ցանկանում էին կրկին վերադառնալ իրենց բնակության նախկին վայրերը, որին դեմ էին իշխանությունները, քանի որ Բ. Դուռը նպատակադրվել էր եկվորների ու տեղաբնիկների փոխադարձ ինքնառնչման փրկել կայսրությունը (4, 68): Թուրքական իշխանություններն աշխատում էին հակասություններ բորբոքելով տեղաբնիկների, մասնավորապես հայերի և եկվոր մահմեդականների միջև, ստեղծել անկայուն վիճակ, որի ընթացքում կշահեր կառավարությունը, որովհետև սկզբից նեթ գիտեր, որ այդչափ վայրի հորդաները, զրկվելով կյանքի համար բավարար պայմաններից, ենթարկվելու են իրենց ինքնապաշտպանության բնական ձգտումներին, սկսելու են թալանել, սպանել ամենուր, ուր որ հնարավորություն կլինի: Թուրքական կառավարությունը նրանց առջև խնդիր է դրել. մեռնել սովից կամ ապրել թալանով: Ոտքից գլուխ զինված մահմեդական գաղթականները հայ անգն բնակչության համար, իրոք դարձան կատարյալ աղետ: Հայ «դժբախտ գյուղացիությունն ավելի ևս փոքրանում, նոսրանում ճկում էին նորեկ զանգվածների ճնշման տակ... Այս խոշոր ներգաղթը թյուրք կառավարության դրդունով էր կատարվում՝ մահմեդական ազգաբնաչությունը մեծացնելու նպատակով» (28, 116): Թուրքական պաշտոնյաները, որոնք գաղթականների հոժ խմբերին առաջնորդում էին դեպի հայկական տարածքները, կառավարությունից ցուցում էին ստացել նրանց զինել ու տեղավորել հայկական գյուղերի հարևանությամբ:

Թուրքական իշխանությունների այդ հայադավ ծրագրի մասին ռուսական վավերագրում կարդում ենք. «Ուժեղացնելով բռնությունները նպատակ էին հետապնդում ստիպել հայերին վերաբնակվել, որպեսզի պետության կողմից գրավված հողերի վրա բնակվեին մահմեդական վերաբնակիչները: Այդպիսով, աստիճանաբար երկրամասը բնակեցնել մահմեդականներով» (25, Դ. 5, Ն. 72):

Բ. Դուռը երկրի հայաթափման գործընթացն արագացնելու նպատակով տեղական իշխանություններին ցուցում էր տալիս Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնած հայերին արգելել հայրենիք վերադառնալ, իսկ նրանց հողերն ու ունեցվածքը հանձնել մահմեդական վերաբնակիչներին: Ուշադրություն չդարձնելով գաղթականների կյանքի ու ապրելու պայմանների բարելավման խնդրի վրա՝ թուրք պաշտոնյաները չարաշահություններով մեծ գումար էին գրպանում ինչպես հայերից, այնպես էլ մահմեդականներից: Հայերից սպառնալիքով գումար էին կորզում, որպեսզի չերքեզները

րին նրանց բնակության վայրերում չտեղավորեն, իսկ չերքեզներից՝ նրանց լավ ու բերրի հողատարածքներ հատկացնելու խոստումների համար: Գաղթականների բերումով արևմտահայության դառնաղետ կյանքի մասը կազմող, անվերջ ավեր ու թալան, անարգումներ ու սպանություններ նյութող քուրդ ու թուրք հարստահարիչներին եկան լրացնելու նաև մահմեդական ավագակաբարո վերաբնակիչները, որոնք երկիր մուտք գործելու պահից սկսեցին թալանել ու սպանել տեղաբնիկ հայերին: Բրիտանական հյուպատոսության գործակալ լեյտենանտ Կիտչեները 1879 թ. սեպտեմբերի 3-ի զեկուցագրում նշում է. «Չերքեզներն անպատիժ կողոպտում են մեծ ճանապարհի վրա և տներում: Նրանք տերերին քշում են իրենց սեփական հողից, հափշտակում բերքը, մինչդեռ հողի տերերը պետք է հողային հարկ վճարեն կառավարությանը, այն հողերի համար, որ իրենք օգտագործել չեն կարող» (14, 62): Աղա-Շիլե գյուղի բնակիչները հայտնում են, որ իրենցից չերքեզները բռնությամբ վերցրել են 7 000 ղուրուշ, Աղա-Բազարի գյուղացիներից գողացել են ձիերը, հափշտակել նրանց ունեցվածքը, տիրել են հայ հարուստների կրպակները, Ֆերզին գյուղի բնակիչներին ամբողջությամբ հողազրկել են: Այնուհետև լեյտենանտ Կիտչեները ներկայացնում է գողացված իրերի, անասունների, ձիերի երկար մի ցուցակ: Թալանի ու ունեզրկման ենթարկված բնակչության բողոքն անտեսվում էր իշխանությունների կողմից, որովհետև թուրքական կառավարությունը ցանկանում էր քայքայել, ոչնչացնել քրիստոնյա բնակչությանը: Եկվորներին զրկելով ապրելու բոլոր միջոցներից՝ թուրքները էր նրանց ապրել թալանով (14, 69): Թուրքական իշխանությունները հովանավորում էին վերաբնակիչներին հայ բնակչության դեմ գործած բոլոր չարաշահումների, նրանց կողմից հայերի հողի ու գույքի գրավման հարցում, որպեսզի հայերը, անկարող լինելով, հեռանան պապեմական վայրերից, իսկ նրանց հողի վրա բնակեցվեն մահմեդականները (22, Դ. 142, Ն. 25): Չերքեզների վերաբնակեցման հետ միասին լայն ընթացք ստացավ ու ծավալվեց ստրկավաճառությունը: Լեյտենանտ Կիտչեները 1879 թ. օգոստոսի 29-ին Աղա-Բազարից հայտնում է «Արևելքի մասը կազմող վայելքի հիմնական միջոցներին տիրանալն ու վաճառքը համարյա բացահայտ տեղի է ունենում ամեն օր աղջիկների ու երիտասարդ մարդկանց առևանգումի ձևով» (14, 66): Կայսերից փոխհյուպատոս Ստյոպարովը հայտնում է, որ միայն Ազիզի շրջանում չերքեզների գողացած ստրուկների քիվը հասնում է 2000: Հյուպատոսը, հայտնելով ստրուկ աղջիկների ու տղա-

ների վաճառքի արժեքը, նշում է, որ տղամարդու գինը կազմում է 20–30 լիրա, իսկ կանանց գինը՝ 20–100 լիրա, պայմանավորված էր նրանց գեղեցկությամբ (14, 66–67): Կառավարությանը հայտնի էին ստրկավաճառության մանրամասները, ինչպես նաև աղջիկներին ու պատանիներին հարեմներում փակելու մասին, սակայն դատարաններն անտեսում էին բնակչության բողոքները, պաշտոնյաներն աչք էին փակում, քանի որ իրենք ևս մասնակցում էին չերքեզների այդ խժոժություններին: Կիտչեները ուսումնասիրելով Ամասիայի հայ համայնքի կողմից ներկայացված բողոքները և հատկապես ուշադրություն դարձնելով նման մի բողոքի դատարանում քննարկման վրա՝ հայտնում է, որ նման առևանգումների գործերից մեկի քննարկման ընթացքում դատարանի նախագահը, որն այդ գործն էր մեկնաբանում, ինքն էլ մեղադրվողից նույն պահին գնել էր մի կին և մի աղջիկ, որոնց համար վճարել էր 5000 դուրուշ:

Ռուլեն ժեկմենը գրում է. «Բեյերի նման ուժեղ ազդեցության գաղտնի պատճառների մասին մեր աչքերը բացում է մի գեկուցագիր: Պարզվում է, որ նրանք չերքեզ աղջիկներ են վաճառում Կոստանդնուպոլսի փաշաներին» (14, 66):

Թուրքական իշխանությունները չերքեզների վերաբնակեցմամբ որոշակիորեն կատարեցին Արևմտյան Հայաստանի հայաթափման իրենց ծրագիրը: «Չերքեզների մասին գանգատները լսվում են ամենուրեք,– կարդում ենք վավերագրում,– նրանց գործողությունները Շեյրանում, Գերջանիսում, Բայբուրդում, Դերջանում կարող են առաջ բերել այդ վայրերի հայերի և հույների ընդհանուր գաղթ» (19, Ժ. 8, Ն. 9): Շարունակելով այդ խնդրի քննարկումը՝ էրզրումի փոխիյուպատոսը 1886 թ. հունվարի 31–ի, Կ. Պոլսի ռուսական դեսպանին հաղորդում է. որ կյանքի պայմանների վատթարացման հետևանքով հայերը ընտանիքներով գաղթում են Ռուսաստան: Թուրքական իշխանությունները շտապ կարգով հայերի կողմից լքված հողերի վրա տեղավորում են մահմեդական վերաբնակիչներին (մուհաջիրներին): Հայ ժողովրդի դեմ լարած թուրքական իշխանությունների թակարդը՝ մահմեդականների՝ վերաբնակեցման գործը, ավելի է վատթարացնում արևմտահայության վիճակը: Մուհաջիրների հարևանությունը տեղում մնացած հայերի համար դառնում է խիստ վտանգավոր, քանի որ նրանք բացահայտ հովանավորվելով իշխանությունների կողմից, հափշտակում են հայերի ունեցվածքը: Քրիստոնյաների կյանքն ավելի անապահով է դառնում,

քան մի քանի տարի դրանից առաջ էր (19, Ժ. 1627, Ն. 32):

Թուրքական իշխանությունները արևմտահայության տնտեսական քայքայմանն ու հարստահարմանը միտված իրենց ձեռնարկումների ընթացքում գործադրում էին բոլոր հնարավոր ու անհնարին ձևերն ու միջոցները: Այդ, ինչպես նաև երկրի հայթափմանն ուղղված, իշխանությունների ակտիվ ու հիմնավոր ձեռնարկումներից էին հայերի հացահատիկի դաշտերի, շուկաների, կրպակների, խանութների, հասարակական այլ հաստատությունների հրկիզումը: Հրդեհների բոցերում այրվում, մոխրանում էին աշխատավոր հայի արդար ու շինարար ձեռքերի և ստեղծագործ մտքի տասնյակ տարիների արյուն–քրտինքով արարած միջոցները:

Հայ վաճառականների ու հմուտ արհեստավորների տնտեսական առաջընթացը, նրանց շրջահայեցությունն ու բարեկեցությունը միշտ էլ հարուցել են մահմեդական բնակչության նախանձն ու ատելությունը: Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում առևտուրը գլխավորապես կենտրոնացված էր հայ վաճառականների ձեռքին, իսկ հայ արհեստավորները ընդհանրապես մրցակից չունեին (59, ց. 1, գ. 133, թ. 10):

Թուրք առևտրական դասը, ունենալով մեծ արտոնություններ, միաժամանակ առանձին տեղական ու կենտրոնական իշխանությունների կողմից վայելելով նրանց հովանավորությունը, այնուամենայնիվ, տնտեսական բնագավառում հայ առևտրականների հետ համեմատած անմրցունակ էր, ուստի իշխանությունների տեղական մարմինների ու ծախու պաշտոնյաների օգնությամբ մահմեդական մոլեռանդ ամբոխին ուղղում էին հայ վաճառականների ու նրանց ունեցվածքի դեմ: 1876 թ., ըստ «Մշակի», դեկտեմբերի 13–ին, իսկ ըստ Հ. Ղազարյանի՝ նոյեմբերի 30–ին (82, 322), հրդեհ ծագեց վանի շուկայում, որի բոցերում այրվեցին 2000 խանութ և կրպակ, որոնց 80%–ից ավելին պատկանում էին հայերին (18, 334): Հրդեհի պատճառած նյութական վնասը շատ մեծ էր:

Հրդեհի ընթացքում իշխանությունները ոչ միայն միջոցներ չէին ձեռնարկում այն հանգցնելու, այլ նաև չէին թույլատրում հայերին հրդեհի բոցերից դուրս հանել իրենց ունեցվածքը: Մահմեդական ամբոխը, որ միշտ սովոր էր թալանի ու անաշխատ եկամուտի, օգտվում էր իշխանությունների թողությունից, հաճախակի նրանց ակտիվ օգնությամբ թալանվում էին հրդեհից փրկված խանութները: Հարյուրավոր հայ մեծահարուստ առևտրականներ զրկվեցին իրենց հարստությունից, սնանկացան, մատնվեցին ծայրա-

հեղ աղքատության: Նույնատիպ հրդեհ բռնկվեց 1882 թ. Բաղեշում, ապա Եվրոկիայում (19, 338):

Սուլթանական կառավարությունը եվրոպական տերություններին խոստումներ էր տալիս բարենորոգումների կենսագործմամբ լավացնել ազգաբնակչության վիճակը, սակայն իրականում բոլոր հայաբնակ շրջաններում մարդասպանությունները, գույքի հափշտակումը, թալանն ու ավերը, եկեղեցիների ու վանքերի ավերումը, եկեղեցական գույքի բռնագրավումը, սրբապղծությունը, մշտական դարձած հրկիզումներն ավելի էին շատանում (59, ց. 1, գ. 133, թ. 11): Արևմտյան Հայաստանի քաղաքներում շուկաների, հայ առևտրականների խանութների ու կրպակների հրդեհումները և դրանց մշտապես ուղեկցվող թալանը մահմեդական ամբոխի ու նրանց հետ համագործակցող պաշտոնյաների կողմից շարունակվեցին 80-ական թվականների երկրորդ կեսին, մասնավորապես Կարինում, Դիարբեքիում, ինչպես նաև Մարզվանում (19, Ժ. 3438, Ն. 252):

Արևմտահայության համար ստեղծված ծանր իրավիճակը նկատի ունենալով Է. Դիլոնը իրավացիորեն նշում էր. «Հայկական հինգ մահաճգնեղում հաստատվել է կառավարման գազանային համակարգ, որի համեմատությամբ հարավային մահաճգնեղի ստրկական համակարգի դաժանությունները հանդիսանում են չնչին չարաշահություններ» (14, 329):

Թուրքիայում քրիստոնյան, մանավանդ հայը, երբեք էլ չի ունեցել կյանքի ու գույքի անվտանգության երաշխիք: 80–90-ական թվականներին իշխանությունների ընդգծված հակահայ քաղաքականության ուժեղացման հետևանքով աստիճանաբար ավելի էր վատանում ու ծանրանում արևմտահայության վիճակը, ընդունելով ծայրահեղ սպառնալի չափեր: «Ամենուր, յուրաքանչյուր քայլի վրա,– 1879 թ. մարտի 16–ին գրում է կապիտան Տրոտտերը,– բռնակալության ու կործանման հանճարը դրսևորվում է հազարավոր ձևերով... այդ աղաները և բեյերը, որոնք դուրս են գալիս ամեն տեսակի բռնություններ նյութելու, հարձակվում են ռայայի վրա կամայական հարկերի ողջ ծանրությամբ, անարգանքով, շորթումներով, ու ջարդերով» (53, 67):

Հայերի դեմ գործադրած մահմեդական վերաբնակիչների բռնարարներն ու թալանը, պաշտոնյաների կամայականություններն ու չարաշահությունները, որոնք հովանավորվում ու խրախուսվում էին իշխանությունների կողմից, արդեն հստակորեն ընդգծում էր այն իրողությունը, որ Աբդուլ Հա-

միդը նպատակադրված հակահայ քաղաքականությամբ աշխատում էր քայքայել ու ոչնչացնել հայ ժողովրդին: Շուտով Աբդուլ Համիդը դեմ նետեց տարիներ շարունակ Եվրոպային մոլորեցնող իր խորամանկ գործողությունների ծխածածկույթը, տերությունների հանցագործ անտարբերության պայմաններում ու նրանց համաձայնությամբ սկսեց հայկական մասսայական կոտորածների իրագործումը: Վճռական գործողություններ ծավալելով արևմտահայության դեմ, թուրքական իշխանությունները խորամանկորեն հպատակ մյուս ժողովուրդների, մասնավորապես քրդական աշիրաթների դեմ մղվող պայքարի ճակատը սկսեցին նեղացնել, դաշնակցել վերջիններիս հետ ու բորբոքելով նրանց կրոնական մոլեռանդությունը, առատորեն զինել նրանց, ուղղել անգն հայ ժողովրդի դեմ:

Օսմանյան կայսրության կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանում ու կայսրության արևելյան մյուս վիլայեթներում իշխանությունները երկար ժամանակ զբաղված էին իրենց անկախ գոյությունը պաշտպանած քրդական անհնազանդ աշիրաթների հպատակեցման խնդրով (37, 81): Այդ նպատակի իրագործումը թուրքական կառավարությունից պահանջեց տևական ժամանակ և հսկայական միջոցներ: Իշխանությունները գործի դրեցին խոշոր զորական ուժեր, ինչպես նաև թուրքական նենգ ու խարդախ դիվանագիտության «բաժանիր, որ տիրես» ավանդական հին ու հզոր զենքը:

Քանի դեռ թուրքական կառավարության համար ամենակարևոր հարցը քրդական ցեղերի հպատակեցումն էր ու պետության նկատմամբ նրանց հարկային պարտականությունների կատարումը, արևմտահայության հարցը իշխանություններին այնքան էլ չէր զբաղեցնում (37, 82): Սակայն, նկատի ունենալով այդ տարածաշրջանում կենտրոնական կառավարության դեմ հայերի և քրդերի միջև հնարավոր դաշինքի ստեղծման անկանխատեսելի հետևանքները և ակնդետ հետևելով նրանց հարաբերությունների զարգացման ընթացքին, զգուշանում էր, ու որպեսզի այդ վտանգը չզորեղանար, աշխատում էր սեպ խրել երկու դարավոր հարևան ժողովուրդների հարաբերությունների մեջ (83, 161): Թուրքական կառավարությունը մշտապես զգում էր նման համագործակցության վտանգը ու առաջ մղելով կրոնական գործուն, բորբոքելով քրիստոնյաների դեմ մահմեդական ազգաբնակչության մոլեռանդությունը, նրանց միջև ծագած թեկուզ տնտեսական բնույթի պայքարին հաղորդում էր խաչի ու իսլամի հակադրության իմաստ (84,

44), այդ ընթացքում հովանավորելով մահմեդականներին, կազմակերպում էր քրիստոնյա բնակչության կոտորածներ, հագուրդ էր տալիս խաժամուժի թալանչիական ձգտումներին և այդ ճանապարհով վերացնում էր իր դեմ ծագած ժողովրդական հուզումների վտանգը: Բ. Դռան այդ խարդախ գործելակերպի մասին Ք. Միքայելյանը գրում է. «Որպեսզի քրդերը հեռու մնան անկախության ձգտումից, կառավարությունը նրանց աշխատում է զբաղեցնել ուրիշ խնդիրներով: Այսպես, օրինակ՝ նա դրդում է քրդերին նեստորականների դեմ, մահմեդականներին զինում է քաղղեացիների դեմ, իսկ վերջիններին՝ եգիպտացիների դեմ: Նա, այսպիսով, առաջ է բերում խռովություններ այն միակ նպատակով, որ իրեն պահի գերագույն իշխանությունը, որպեսզի հպատակ աղանդները չմիանան ընդհանուր թշնամու դեմ (85, 114): Հայերի ու քրդերի միջև եղած բարիդրացիական հարաբերությունները հանգիստ չէին տալիս օսմանյան իշխանություններին, որովհետև հայ-քրդական համագործակցությունը վտանգի էր ենթարկում արևելյան վիլայեթներում օսմանյան կայսրության գոյությունը (58, 141): Հետևաբար այդ երկու ժողովուրդների հնազանդեցումը Բ. Դռունը աշխատում էր կատարել առանձին-առանձին, նրանց հակադրելով միմյանց: Կենտրոնական իշխանության դեմ 1845–1846 թթ. Բաղիր խանի, 1854–1855 թթ. Եզդանշիրի գլխավորած քրդական հուժկու ելույթները ճնշելու ընթացքում թուրքական կառավարությունն օգտագործեց ոչ միայն խոշոր գորամիավորումներ, այլ նաև խորամանկորեն կաշառելով նրանց առաջնորդներից շատերին, ջլատեց նրանց միասնությունը և լավագույն ապագայի հրապուրիչ խոստումներով ազդեցիկ աշիրաթապետներին իր կողմը գրավեց, (86, 37) չնայած վերջիններս իրենց թուրքամետ կողմնորոշման համար մշտապես արժանանում էին իրենց ցեղակիցների արհամարհանքին, հեղինակագրկվում ու մեկուսացվում էին (19, մ. 4, ռ. 96–97): Շարունակվող քրդական ընդվզումները այլևս թուրքական կառավարությանը այնքան չէին մտահոգում, որքան դարի առաջին կեսին: Այժմ Բ. Դռունը իր հարվածն ուղղեց արևմտահայության դեմ, համագործակցելով քրդական աշիրաթապետների հետ, որոնց հրապուրում էր հարուստ նվերներով, ինչպես նաև բարձր պաշտոնների նշանակումով (87, 38): Հայ-քրդական հակամարտությունները խորացնելու նպատակով սուլթանը քրդական աշիրաթապետներին խրախուսում էր շրջանցել թիմարային հողատիրության վերացման օրենքը, բռնագրավել հայկական հողերը, հայերից պահանջել հողահարկ: Հայ հողագործը շարունա-

կում էր կախման մեջ մնալ քուրդ կալվածատիրոջից, չնայած վերջինիս այդ իրավունքը 1834 թ. թիմարային համակարգի վերացման օրենքով արգելվում էր: Բ. Դռունը քրդերին հայերի դեմ ուղղելու, նրանց միջոցով արևմտահայությանը տնտեսապես քայքայելու, հարստահարելու, երկիրը հայաթափելու, ինչպես նաև հայերին բնաջնջելու համար չտեսնելու էր տալիս, երբ քուրդ կալվածատերերը մշտապես շրջանցում էին վերը նշված օրենքը: «Օսմանյան կառավարությունը, հայերին հարկադրելով պետությանը հարկեր վճարել,– գրում է Ս. Պողոսյանը,– նրանց չազատեց քուրդ աղաների գանձած հարկերից: Աշիրաթապետներից յուրաքանչյուրն ուներ իր գյուղերն ու նույնիսկ շրջանները, որտեղ նրանք միահեծան տեր ու տիրակալներ էին» (58, 141): Հայերը բազմաթիվ ու բազմամուն հարկեր էին վճարում պետությանը և միաժամանակ հարկադրված էին նույնքան ծանր պարտականություններ կատարել վայրենաբար քրդական ցեղերի համար: Աբուլ Համիդի կառավարությունը մեծ իրավունքներով էր օժտել քրդական վերնախավին, թույլատրում էր անարգել գրավել հայերի հողերը, նրանց գնել ու վաճառել հողի հետ, իշխանությունները զգուշացված էին չպատժել քուրդ ավազակներին (88, 41–42): Թուրքական իշխանություններն ու քրդական ցեղերը միավորվելով անպատիժ թալանում ու հարստահարում էին հայ գյուղացիությանը (10, 1879, 8): Թուրքական կառավարությունը, ձերբազատվելով իր համար վտանգավոր քրդական խնդրից, նրանց իր կողմը գրավելու ամենահարմար միջոցը համարեց «թույլատրել քրդերին շահագործել ու հարստահարել հայ երկրագործ բնակչությանը, ինչպես իրենք էին ցանկանում» (28, 40–41): Մոլեռանդ քրդական ու թուրքական մասսաները պատրաստակամ էին կատարելու կառավարության յուրաքանչյուր առաջադրանքը, որը կերաշխավորեր նրանց հեշտ ճանապարհով ձեռք բերել առատ եկամուտ (5, 11): Սուլթան Համիդը հաճախ կառավարության դեմ ըմբոստացող քրդական ցեղերի շարժումներին հաղորդում էր հակահայ բովանդակություն, նրանց ուղղում էր հայերի դեմ: Այդ մասին Ա. Նովիչևը գրում է. «...ծանր էր հայ գյուղացիների վիճակը, որոնք իրենց անպաշտան լինելու և ազգային ճնշման հետևանքով, հանդիսանում էին շահագործման ամենահարմար օբյեկտը: Դրան ավելացրած նաև այն,– շարունակում է հեղինակը,– որ քուրդ բեկերը հայերին կողոպտելու համար ոչ միայն չէին պատժվում սուլթանական կառավարության կողմից, այլև ամեն կերպ խրախուսվում էին, քանի որ սուլթանը ձգտում էր դրանով իր կողմը գրավել հա-

ճախակի ապստամբող Քուրդիստանի բեյերին», (81, 175): Այդ մասին «Մշակ»-ը նշում է, որ սուլթանը իր ձեռքին «գործիք դարձրեց ամբողջ քուրդ ազգաբնակչությանը և նրա համար ոչինչ չխնայեց: Ավազակաբարո և վայրենի քրդերին սանձարձակ իրավունք տվեց հայերին կողոպտելու, սպանելու, հայի գույքը, ինչքը սեփականացնելու, նրա պատիվը բռնաբարելու:

Մեծամեծ քուրդ բեկերին ու թռուռներին խան կարգելով մյուս քրդերի վրա, որոնք զորք անուն են կրում, և նրանց դպրոց՝ Կ. Պոլիս տանելով՝ իր հաշվով զինվորական ու ուրիշ դպրոցներում ընդունեց, միայն թե քրդերը ձեռք վերցնեն իրենց հարևան հայերից, երես դարձնեն, կողոպտեն նրանց: Եվ մեծամեծ քուրդ աղաներն ու աշիրաթները, բեկերը և թռուռները իրենց շեյխերով ուրախությամբ հանձն առան կատարելու սուլթանի բոլոր ցանկությունները (10, 1895, 100): Հայերի հողագրկումն ու տնտեսական քայքայումը իշխանություններն իրականացնում էին քրդերի ձեռքով: Նրանց էր հանձնարարված հայկական շրջաններում պետական հարկազանձման իրավունքը, որից օգտվելով, աշիրաթապետները պետությանը տրվող իրենց հարկի փոխարեն հայերից բազմապատիկ անգամ ավելի էին գանձում (89, 107): Ռոլեն ժեկմենը, լուսաբանելով արևմտահայության ծանր կացությունը, քրդական հարստահարությունների, տնտեսական քայքայման ու անօրինականության համար հիմնականում մեղադրում է իշխանության տեղական մարմիններին, նրանց անկարողության համար: Սակայն հարցի նման մեկնաբանությունը, ըստ մեզ, միակողմանի է ու թերի, քանի որ իշխանության տեղական մարմինները կատարում էին կենտրոնական կառավարության ցուցումները, մինչդեռ Ռոլեն ժեկմենը կարծում է, որ իշխանության տեղական մարմինները, լինելով թույլ ու անկարող ողջ Հայաստանում ու ամբողջ Փոքր Ասիայում, չեն կարող զսպել քրդերին, որոնք անարգել գրավում են հայերի հողերը, որոնց սեփականատերն ու մշակողը դարեր շարունակ եղել են հայերը: Քրդական աղաներն ու բեկերը իշխանությունների հովանավորությամբ շրջանցելով բարենորոգումների մասին մանիֆեստները, սեփականացնում են քրիստոնյա ազգաբնակչության հողատարածքները, խաղողի այգիները, դրանք համարելով իրենց կալվածքը, քրիստոնյա ազգաբնակչությանը վերաբերվում են որպես իրենց ստրուկների (14, 31):

Իշխանությունները հայկական հողերի զավթման գործընթացն ավելի ակտիվացրին հատկապես 70-ական թվականների վերջերին: Դեռևս 19-րդ դարի 30-40-ական թվականներին կայսրությունում իրագործվող ազրարա-

յին ռեֆորմների ընթացքում հողատարածքների վերաբաժանման ժամանակ քրիստոնյա ազգաբնակչությանը, մասնավորապես հայերին, հողակտոր էին հատկացնում մահմեդականների հողատիրություններով շրջապատված վայրերում, իսկ հայերի նման հողակտորների զավթումը դառնում էր հեշտ գործ, մասնավաճ որ իշխանությունները ոչ միայն չէին պաշտպանում հայերին, այլև խրախուսում էին նրանց հարստահարողներին:

Այդ ընթացքում երբեք ուշադրության չէին արժանանում ժողովրդի արդար բողոքները, դրանք մնում էին անպատասխան: «Իսմայիլը և նրա եղբայրները,– կարդում ենք վավերագրում,– գրավեցին Խարաբա գյուղը, իսկ բնակիչներին դարձրին իրենց ծառա: Գյուղացիների հողը սեփականացրին դատարանի կողմից տրված կեղծ փաստաթղթի հիման վրա» (14, 31): Հայերի կողմից ավելի քան 50 տարվա ընթացքում մշակված հողատարածքը Մշո շրջանի Մորենիկ գյուղում զավթեց Կարինի վիլայեթի Իսմայիլ փաշան, իսկ դատարանը, շրջանցելով հայերի արդարացի բողոքը, վեճը լուծեց հօգուտ մահմեդականի: Հայերը մշտապես ենթակա էին քրդական ցեղերի ու պաշտոնյաների բռնություններին ու կամայականությանը: Արդարադատության մասին խոսք լինել չէր կարող: Խնուսի օկրուգի Գովանդուկ գյուղում քրդերի ավազակային հարձակման ընթացքում տեղի ունեցած ընդհարման հետևանքով սպանվեցին մեկ քուրդ և երկու հայ: Քրդերը պատասխանավորյան չենթարկվեցին, իսկ հայերից բանտարկվեցին 17 մարդ (14, 337): Անօրինականությունների դեմ հայ բնակչության բողոքները մշտապես մնում էին անհետևանք, իսկ եթե երբևէ քննարկվում էին, ապա դատարաններում տուժողները լինում էին միայն հայերը (21, 318, 4, 2, 34): Հայկական 258 գյուղերի, 22 եկեղեցիների ամբողջական ավերման, հողագրկման, եկեղեցիները մզկիթների վերածման մասին հարուստ տվյալներ է հաղորդում Ռոլեն ժեկմենը: Քրդական վերնախավի ներկայացուցիչները, ստանալով պաշտոններ, այն օգտագործում էին հայերի նկատմամբ անօրինականություններ ու չարաշահումներ կատարելու նպատակով: «Աբդի Բեյը, ստանալով մյուդիրի պաշտոնը, միանում է մի քանի ավազակների հետ և բռնությամբ տիրանում է Դիարբեքի վիլայեթի Շաբերտի շրջանի հայերի հողերին, գողանում է ամասուններ, կործանում է հայկական եկեղեցին Խուսբում և այն վերածում է իր համար բնակարանի: Մեկ այլ օտտոմանյան պաշտոնյա՝ Իբրահիմ զադե–Ռաշիդ էֆենդին, որը գործուղվել էր Վանի վիլայեթ, 18 հայերից բռնագրավված հողերը նրանց վերադարձնելու, իշխանություններ

րից գաղտնի նա այդ հողատարածքները ձևակերպում է մի քրդի անվամբ» (14, 32): «Քերեվազի որդի Անդոն,— գրում է է. Դիլունը,— մեծ թալան ու ավերածություն կատարեց Մանկասար գյուղում՝ սպանելով անմեղ մարդկանց», սակայն իշխանությունները անուշադրության մատնեցին հայերի արդար բողոքը, իրենց պաշտպանության տակ առան հանցագործին՝ հայտարարելով, որ «քրդերը սուլթանի ծառաներն են, այդպես վարվելը նրանց իրավունքն է: Քրիստոնյաների նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների համար նրանք պատասխանատվության չեն ենթարկվում»: Օգտվելով անպատժելիությունից՝ նրանք սկսեցին գործել անկախ ու սանձարձակ: Նրանք անարգել գրավում էին հայկական գյուղերը, բնակչությանը արտամղում պապենական վայրերից: Քրդական հարստահարությունների մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տեղեկագրերում: 1873 թ. ընթացքում քրդերը թալանել են 17 գյուղ Մանջանի շրջանում: Տարել են 799 ոչխար, 251 կտոր գործվածք, 55. 550 դուրուշ արժողությամբ 221 զույգ զգեստ, 1972 բատման (1 բատմանը հավասար է մոտ երեք կ/գրամի – Պ. Ս.), սննդի պաշարեղեն (48, 29–30):

Արևմտյան Հայաստանում հաստատված քառսն ու անիշխանությունը քրդերին հնարավորություն էին ընձեռում իրենց ավազակություններին տալ օրինական ձև: «Մաբուբանի շրջանում ապրող քրդերը,— գրում է Ռուլեն Ժեկմենը,— 1874 թ. հարձակվում են Մշո Աձնուրի վանքի գյուղացիների վրա, երկար ժամանակ ապրում են նրանց հաշվին, հեռանալով նրանց պարտավորեցնում են ամեն տարի իրենց վճարել 400 դուրուշ, 4 կով, 20 ոչխար, 4 բաթման թուրուն, 4 բաթման յուղ, 9 չարեկ հացահատիկ» (14, 33):

Յուրաքանչյուր նման բռնարարքի համար հայերի բողոքներին թուրք պաշտոնյաները խրախուսում էին քրդերին, հայտարարելով. «Գնացեք ռուսական կոնսուլին բարև արեք, իր իսկ սիրույն այդ բաներ կանեք, որ ցուցանեն մեզ իր տերության գործությունը» (10, 1879, 69): Քուրդ հարստահարողները, օգտվելով սուլթանի հովանավորությունից, աշխատում էին հայերի դեմ կատարած ոճրագործություններով դուր գալ նրան: «Երեք տարվա ընթացքում,— գրում է «Մշակ»-ի թղթակիցը,— թուրք պաշտոնյան 36 հայաբնակ գյուղեր այրեց» (10, 1880, 70): Դրանից քաջալերված՝ քրդերն անլուր բռնություններ էին գործադրում հայերի հանդեպ: «Այժմ,— գրում է «Հնչակ»-ի թղթակիցը,— այդ վայրենի ցեղերն ավելի են շփացել ու քաջալերված իրենց ցեղապետներու, սուլթանի և տերության կողմն վայելած շռայ-

լեալ թուրքական պատիվներեն ու արտոնություններեն ավելի անպատասխան ու համարձակորեն ի գործ կդնեն իրենց նողկալի արիեստը, ասպատակելով ու գրավելով շրջակա հայ գյուղացոց հողերը» (27, 1891, թիվ 12), ու ոտնահարելով հայի ընտանեկան պատիվը՝ տրորում են նրա անձը, հալածում նրան երկրից (27, 1891, 34): Բախտի քմահաճույքին թողնված հայ գյուղացիները անլուր տանջանքի ու հարստահարությունների էին ենթարկվում: Իշխանությունների ուժգնացող հակահայկական քաղաքականությունը և քրդերի ձեռքով արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը իրականացնելու նրանց նպատակները նկատի ունենալով «Արծազանք»-ի թղթակիցը գրում էր. «Հայտնի փաստ է, որ թուրք կառավարությունը ամենայն ջանք գործ է դնում Տաճկահայաստանում եղած հայ տարրը նվազեցնելու համար» (90): Այդ նպատակին ուղղված առաջին վճռական քայլերը կատարվեցին դեռևս 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ, երբ իշխանությունները անվերադարձ քրդական ցեղերին բաժանեցին 20. 000 մարտիկի հրացան: Այդ զենքը, որը կոչված էր ծառայելու առաջացող ռուսական բանակներին դիմակայելու համար, ուղղվեց անգն հայ ազգաբնակչության դեմ: Այս մասին աղբյուրը նշում է. «Հայերով բնակեցված ամբողջ երկիրը ուժեղ տուժեց: Մի քանի շրջաններ, ինչպես Բասենը, Ալաշկերտը, Դիադինը, Բայազետը 7 ամսվա ընթացքում 5 անգամ ձեռքից ձեռք անցան և ամեն անգամ գյուղական բնակչությունը ենթարկվում էր ռեկվիզիցիայի: Օտտոմանյան բանակներին հետևող քրդական զինված ջոկատները կատարում էին չտեսնված ամայացում և բռնություններ»: Սահմանային շրջանների հայ գյուղացիները մեծ տագնապ էին ապրում, երբ երևում էին քրդական այդ ջոկատները ու անխնայ կոտորում բնակչությանը (14, 51): Քրդերի այդ ամայացնող գործողությունները շարունակվեցին մասնապատերազմի ավարտից հետո: Քրդերին սիրաշահելու նպատակով կառավարությունը պատերազմի ընթացքում բաժանած մարտիկի հրացանները ետ չվերցրեց: Այն օգտագործվեց արևմտահայ անգն բնակչության ֆիզիկական բնաջնջման համար: Անշուշտ, կառավարության խորամանկ ձեռնարկումները քրդական ցեղապետները շատ լավ էին հասկանում: «Ձեր խնդիրը Երևան գալուց զկնի,— ասում է քուրդ ցեղապետ Հուսեյն աղան Ա. Թոխմախյանին,— թուրքերը մեծ բարեկամություն սկսեցին ցույց տալ մեզ, և մեր ձեռքով կամենում են կրակ բռնել, այդ աշխարհը սրբել հայերից: Դրա համար,— շարունակում է նա,— շատ մեծ գաղտնի աշխատանքներ են եղել և լինում են» (91,

պատահական չէր, որ Հ. Լայարդը հայտարարում էր. «Վաղ է դեռ բարենորոգումներ մտցնել Հայաստան» (96, 229):

Հայաջինջ իր ծրագրի իրականացման գործում սուլթանը, հետամուտ լինելով անգլիական խորամանկ դիվանագիտության խարդավանքներին, որն ընթանում էր իրեն ցանկալի հունով, նրանց խորհրդով միտք հղացավ ստեղծելու քրդական զինված զնդեր, որոնք խաղաղ ժամանակ պետք է լինեին «Հայոց հարցի խորտակիչներ» (28, 118), իսկ Ռուսաստանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում՝ ակտիվ զորական ուժ: 1891 թ. ձմռան ամիսներին սուլթանական կառավարությունը ձեռնամուխ եղավ քրդական ցեղախմբերին զինելու, նրանցից «համիդիե» հեծելազորի կազմավորման աշխատանքներին: Կազմվեցին շուրջ 33000 հոգուց բաղկացած 30 մման զնդեր: Յուրաքանչյուր զնդում ընդգրկված էին 550 հոգի (90, 1891, 3): Է. Դիլոնը այդ զնդերի ստեղծման հանգամանքները լուսաբանելով ու ցույց տալով իշխանությունների հետապնդած նպատակը՝ իրավացիորեն ընդգծում է, որ դրանով Բ. Դուռը ձգտում էր «հեռացնել հայերին սահմանային շրջաններից, ինչպես, օրինակ՝ Ալաշկերտից, նրանց փոխարինել մահմեդականներով, որպեսզի նրանց թիվը բոլոր հինգ նահանգներում պակասի այն չափով, որպեսզի վերանա հայ բնակչության համար հատուկ բարենորոգումների իրագործման անհրաժեշտությունը և որպեսզի Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում քրդերը գործեն կազակներին հակադիր ուժ» (14, 332): Սակայն իրականում քրդական այդ զնդերի ստեղծումը ոչ թե պաշտպանական նպատակ էր հետապնդում, այլ դրանք ընդդեմ հայերի թալանի ու սպանության հատուկ կազմակերպություն էին (60): Բնաջնջման ծրագիրը դրվում էր գործողության մեջ ավելի բացահայտ ու առավել վճռական: Համիդիե զնդերում ընդգրկված քրդերը մնում էին իրենց բնակավայրերում, կառավարությունից ստանում էին զենք, օժտված էին անձեռնմխելիությամբ, ապահովված էին ռոճիկով: Արդու Համիդը քրդական զինված զնդերին լիազորեց ամեն տեսակի արտոնություններով, որով, անշուշտ, նա հազուրդ էր տալիս քրդական աշիրեթապետների իշխանատենչ ձգտումներին, ուստի սուլթանի այդ ձեռնարկումները նրանց մոտեցրեց, ու արևմտահայության դեմ նրանց հետագա գործողություններն իրականացվում էին փոխըմբռնումով (97, 64): Համիդիե զնդերի ստեղծմամբ ձևավորվեց հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման ակտիվ համակարգ, որով նրանց իրավունք էր վերապահում անարգել կոտորել հայերին: Էրզրումի անգլիական հյուպատոս

Համփսոնը 1891 թ. փետրվարի 18-ին տեղեկացնում էր իր կառավարությանը, որ «Քրդերին զինելու որոշումը այստեղ դիտվում է մեծ երկյուղով: Այդ զգացմունքն ուժեղանում է քրդերի վարքի պատճառով: Նրանցից շատերը բացեիբաց հայտարարում են, որ իրենք նշանակված են հայերին սանձահարելու համար և երաշխավորություն են ստացել, որ դատական պատասխանատվության չեն ենթարկվելու քրիստոնյաների նկատմամբ ճնշումներ գործադրելու պատճառով և հավաստում էին, որ «կառավարությունից հրաման է ստացվել կոտորել հայերին» (59, գ. 3, 83):

«Համիդիե» զնդերի առաջնորդների պաշտոնում սուլթանի իմացությանը ու նրա հովանավորությամբ առաջ քաշվեցին բազում հանցագործություններով հայտնի քրդեր: Էրզրումից հյուպատոս Համփսոնը Վ. Ուայթին 1891 թ. հունվարի 16-ի զեկուցագրով տեղյակ է պահում, որ Պատնոսի մյուդիր Հուսեյնը, որը նախկինում իր չարագործությունների համար բրիտանական դիվանագետների ակտիվ գործունեության հետևանքով խիստ պատժվել է և գտնվում է Էրզրումում, այժմ սուլթանի կողմից ներում ստանալով, կարգվել է քրդական հեծելազորի հրամանատար, անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացնել 2000 զինվոր (14, 165):

«Հուսեյն աղան,– գրում է փոխհյուպատոս Դեվին,– 5–6 տարիների ընթացքում հանդիսացել է Ալաշկերտի քրիստոնյա բնակիչների սարսափը»: Նրա պատճառով Ալաշկերտից հազարավոր հայեր վերաբնակվեցին Ղարա–Քիլիսա, իսկ Հուսեյնը և նրա մտերիմները «շրջապատեցին քրիստոնյա եպիսկոպոսի տունը և պահանջեցին, որ հայերը վերադառնան իրենց բնակության նախկին վայրը... Հուսեյնը,– շարունակում է Դեվին,– զբաղվել է գողությամբ ու թալանով: Նա այրել է 9 գյուղ, սպանել է տասնյակ մարդկանց, բացի դրանից, կտրել է 11 մարդու աջ ձեռքը, քիթը, ականջները: Նա գողացել է ավելի քան 2600 ոչխար, 9 ձի, շատ խոշոր եղջերավոր անասուններ... Մեկ տարի առաջ նա փախցրեց և բռնաբարեց Պատնոսից 5 քրիստոնյա աղջիկների: Նա առանց որևէ պատճառի բանտարկել է 20 հայի՝ մեղադրելով նրանց ռուսահայերի հետ հարաբերության մեջ: Նա բռնությամբ ծայրամասային գյուղերից հավաքեց 1000 ոչխար, Պատնոսից ու Կիզիլկալայից 7 զույգ եգներ... Եվ այդ թալանչին, մարդասեր սուլթանի կողմից հրավիրվում է Բոսֆորի իր պալատը և հանձնում է նրան բարձրագույն պաշտոն, քրդական ավազակախմբի հրամանատար» (14, 168): Քրդական վերնախավին իր կողմը գրավելու նենգադավ գործը սուլթանն ավելի է խորացնում:

«Կարնո ճանապարհի վրա, մինչև Վան պատահած բոլոր ավազակապետ քյուրդերն փոխանակ ձերբակալելու, մեծ պատվով քաջալերեց և խրախուսեց զիրենք իրենց ընթացքին մեջ: Հայտարանի Ալի աղայի մանչ Մուսա աղան, որ 35 գյուղ հրկեզ անելով և անթիվ կողոպուտներով ձգեր Պարսկաստան փախեր էր, փոխանակ պատժելու զայն, դարձյալ կանչեց և յուր հոր տեղ էլադասի կարգեց՝ ամսական 2000 դուրուշ ոսկի դրամ հատկացնելով» (10, 1879, 207): Մեկ այլ համիդիե գնդի հրամանատար է նշանակվում սուլթանի կողմից միրանլի քոչվոր քրդական ցեղի առաջնորդ Մուստաֆա աղան: Դիարբեքիից բրիտանական փոխհյուպատոսը նրա մասին հայտնում է. «Այդ մարդու նախընթաց կյանքը հասարակության մեջ մեծ հույսեր չի առաջացնում նրա գործողությունների ազնվության վերաբերյալ: Նա մեղադրվել է հրդեհումների, սպանությունների, թալանի և ամեն տեսակ ոճրագործությունների համար... հափշտակել է տասնյակ հազարավոր մանր եղջերավոր անասուններ... Նրա նշանակումը մեծ սարսափ է առաջացրել քրիստոնյաների մոտ: Նրանք,– ավելացնում է փոխհյուպատոսը,– արդարացի կերպով նշում են, թե քանի որ այդ հրոսակախմբերը խաղաղ ժողովրդի համար միշտ էլ սարսափ ու պատուհաս են եղել, որ ոչ ոք չգիտե, թե ինչ կարող են անել նրանք որպես զինված զորք» (14, 169): Թե ինչ նպատակով էին ստեղծվել ու ինչ կարող էին անել այդ «համազգեստավոր ավազակները», պատասխանում է Մակքոլը, գրելով «Իրագործելով իր «երջանիկ իդեան», սուլթանը արծակեց իր քրդերին դժբախտ հայերի վրա, բռնության ու արյունահեղության ակնհայտ մտադրությամբ» (14, 169):

Թուրքական իշխանություններն ամբողջ երկրով մեկ թմբկահարում էին այն գաղափարը, որ հայը իրավագուրկ է տիրող մահմեդականի կողմից, հայի ունեցվածքի զավթումն ու նրա նկատմամբ բռնության գործադրումը չի հարուցում պետության միջամտությունը: Իշխանությունները խրախուսում էին հայերի դեմ քրդերի գործած բռնություններն ու սպանությունները, մարդասպաններին անպատիժ արձակում: Թալանն ու ասպատակությունները, հայերի գույքի գրավումն ու հողագրկումը, ընտանեկան սրբությունների ոտնահարումն ու սպանությունները դարձան սովորական երևույթ (99, 18): Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում հարյուրավոր գյուղեր ենթարկվում էին համիդիե գնդերի անպատիժ կամայականություններին (100, 21): Հայերը հանձնվել էին քրդերի ողորմածությանը: «Եթե մեկ տարի առաջ չկար ոչ կյանքի և ոչ գույքի ապահովություն,– գրում էր կապիտան Էվերետը,– ապա

այժմ այն ավելի է պակասել: Արդարադատության մասին խոսք անգամ լինել չի կարող: Հանցագործությունները, բռնություններն ու սպանությունները կրկնապատկվել են» (14, 168): Հայերը Թուրքիայում գրկված էին մարդկային տարրական իրավունքներից: Հայ է, ուրեմն մեղավոր է: Այս մոտեցումը կայսրությունում ստացել էր օրենքի ուժ: Եթե անգամ մեծ տերությունների հյուպատոսների պնդումով թուրքական դատարանում քննարկում էին հայերի դեմ քրդերի գործած հանցանքները, ապա սուլթանը հովանավորում էր քրդերին, որի համար էլ չարագործ քրդերի մասին «բողոքները անլսելի ու ապարդյուն կը մնային» (98, 1909, 17): Թուրքական կառավարության կողմից հպատակ ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության նկատմամբ որդեգրած քաղաքականության մասին Ջ. Կիրակոսյանը գրում է. «Թուրքական կառավարությունն ավերել, ամայացրել, մոխրով էր ծածկել պտղավետ այգիները, արգավանդ դաշտերը, ամբողջ երկրամասեր, մարդկային դիակներից լեռնակույտեր էր ստեղծել, իր կոտորածներով, արյան վտակներով ոռոգել էր իր ավերած բնակավայրերը» (47, 18):

Աբդուլ Համիդին թեև քաջ հայտնի էր, որ կայսրության համար ստեղծված ծանր պայմանները թուրքական իրականությանը բնորոշ սոցիալ–տնտեսական, քաղաքական և ազգային հարաբերությունների բնագավառում գոյություն ունեցող ներհակությունների արդյունքն էին, սակայն, այնուամենայնիվ, երկրի տնտեսության կայունացման ու արտաքին հնարավոր միջամտությունը կանխելու միջոցը համարում էր արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը: Այդ նպատակով նա իր առջև ծառայած դժվարությունները հաղթահարելու համար սկսեց հայերի դեմ մահմեդական ազգաբնակչության մոլեռանդությունը բորբոքել՝ ձգտելով բնաջինջ անել արևմտահայությանը, բարենորոգումների նրա պահանջը արմատախիլ անելու հետ միասին (101, 372): Խաբելով ու մոլորեցնելով տերությունների կառավարություններին կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների անցկացման կեղծ ու պատիր խոստումներով՝ սուլթանը համառ հետևողականությամբ առաջ էր վարում արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ծրագիրը:

«Ոչնչացման ծրագիրը,– գրում է Է. Դիլոնը,– ակնհայտորեն գործում է կանոնավոր և հաջող: Քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն ուրիշների ձեռք են անցնում գրեթե նույնքան արագ, ինչքան զավեշտական օպերայի դեկորները... Ռուսաստանին սահմանակից Ալաշկերտի պրովինցիայում Ղարաքիլիսեից դեպի արևելք գոյություն ունեն հինգ գյուղ՝ Քեթեր,

Մանկասար, Ջաջան, Ջիրո, Քուրկերան: Քուրդ էյուբ փաշան,— շարունակում է է. Դիլոնը,— իր երեք որդիներին... ուղարկում է այդ գյուղերը գրավելու: Այն ժամանակ այդ գյուղերում ապրում էին 400 տուն կամ մոտավորապես 3000 մարդ, հայ քրիստոնյաներ: Այժմ այդ գյուղերում մեկ հայ էլ չի մնացել... Բիթլիսի վիլայեթում (Մուշի սանջակի Բուլանըղի կազայում) գտնվում է Խաչ անունով գյուղը: Այժմ այդ գյուղը Կիսալուսնի գյուղ է: Այն միջոցները, որոնցով կատարվել է այդ հանկարծակի կերպարամափոխությունը նույնն են, ինչ որ վերը նկարագրածը: Մուհամեդ էմինը բերում է քրդերի խուժան և գրավում գյուղը» (102, 41): Իշխանությունները համագործակցում էին նրանց հետ: Թուրքական կառավարությունն աստիճանաբար սրելով հայ-քրդական և ընդհանրապես, հայ և մահմեդական ազգաբնակչության հարաբերությունները, խորացնելով ու խստացնելով հակահայ քաղաքականությունը՝ երկրում հաստատեց ահաբեկման, տագնապի ու հալածանքի մթնոլորտ: «Այժմ,— հայտնում են Մուշից տառապյալ հայերը 1895 թ. նոյեմբերի 22-ի գրությամբ,— հայ բնակչությունը և քաղաքում և գյուղում գտնվում է տագնապի մեջ անենօրյա տարածվող ահավոր ահաբեկումներից: Կյանքը, ունեցվածքը և պատիվը գտնվում են վտանգի մեջ: Շուկաներն ու հասարակական վայրերը փակ են: Գյուղերի միջև հաղորդակցությունը խզված է: Այստեղ ու այնտեղ տեղի են ունենում մասսայական թալան ու բռնություններ» (10, 1880, 5):

Վանում ռուսական փոխխուլպատոս Տումանսկին 1901 թ. նոյեմբերի 27-ի գրությամբ հայտնում է Կ. Պոլիս դեսպան Ջինովսկին. «Վերջին ժամանակներս Մուշի և Սասունի քրիստոնյա բնակչության վիճակը ծայրահեղ չափերի է հասել: Մուշի հարթավայրում բազմաթիվ հողատարածքներ, որոնք պատկանում էին հայերին, բռնիորեն խլվել է նրանցից: Իշխանությունները նպատակադրված,— ավելացնում է Տումանսկին,— մի քանի տարի շարունակ հողահարկ չեն վերցրել հայերից, այնուհետև ողջ հողահարկը փոխանցեցին մահմեդականներին և հողի սեփականության իրավունքը հաստատեցին նրանց անվամբ, որը վավերացվեց դատարանի վճռով» (19, Ժ. 1632, յ. 74): Դատարաններում, ուր հայի վկայությունը մահմեդականի դեմ չէր ընդունվում, բավական էր երկու մահմեդականի կեղծ վկայությունը, որպեսզի տարիներ շարունակ հայի արյուն—քրտինքով ոռոգված հողակտորի սեփականատիրական իրավունքը տրվեր որևէ քրդի: Իշխանությունների հովանավորությամբ քրդերն առանց դատի ու դատաստանի բռնությամբ գրա-

վում էին հայկական հողերը, դուրս քշում բնակիչներին:

Բ. Դուռը, իշխանության տեղական մարմինները, մասնավորապես դատարանները, թուրքական կառավարությունը ամբողջությամբ վերցրած հետևողականորեն առաջ էին վարում արևմտահայության բնաջնջման գործը: Նրանք իրենց պաշտպանության տակ վերցնելով համիդիե քրդերին՝ դատարաններում հաճախակի թատերական ներկայացումներով ծաղր ու ծանակի էին ենթարկում հայերին՝ նվաստացնելով և վիրավորելով նրանց արժանապատվությունը, պատճառելով նյութական մեծ վնաս, խոշոր գումար էին շորթում բանտից ազատելու համար, իսկ հանցագործ քրդերը պատասխանատվության չէին ենթարկվում: Նրանց համար շատ բնորոշ էին հետևյալ իրողությունները: Հայ հովիվների հետ ընդհարումից հետո քրդական ջուկատն անհետանում է, ապա մեծ խմբով հարձակվում (Ալիճագրակ) հայկական գյուղի վրա: Սպանվում են երկու հայ: Սպանության վայր ներկայացած բուրբ ոստիկանը դիմում է տուժած հայերին. «Որտեղ են սպանություն կատարած քրդերը»: «Նրանք թաքնվեցին,— եղավ պատասխանը: Այո, հնարավոր է: Դուք շներ, սպանել եք նրանց, թաղել եք աչքից հեռու: Ես բոլորիդ բանտարկում եմ,— ասաց ոստիկանը»: Նա 10 հոգու բանտարկում է Հասանկալայի բանտում: Դատական գործընթացը ձգձգվում է: Հայերը ստիպված տալիս են 400 ֆունտ ստ., սակայն նրանց հասկացնում են, որ կազատվեն բանտից, եթե սպանություն կատարած քրդերը ներկայանան: Շուտով հայտնվում են քրդերը, որոնք «մնացին անպատիժ ու մինչև այժմ շարունակում են ծառայել նորին մեծություն «սուլթանին», իսկ բանտարկված հայերը ծանր ֆիզիկական տանջանքներ կրելով՝ մնացին բանտում (14, 345):

Վան քաղաքից ոչ հեռու գտնվող գյուղական բնակավայրում հայ գյուղացիները կանանց հետ դաշտում խոտ էին հավաքում: Նրանք ենթարկվում են քրդերի հարձակմանը: Կանանց պատիվը պաշտպանելու փորձ կատարած չորս հայ տղամարդ սպանվում են: Գյուղացիները սպանվածների դիակները ներկայացնում են նահանգապետին, սակայն վերջինս միայն երկրորդ հարկի պատուհանից դուրս բերելով գլուխը՝ ասում է. «Ես տեսնում եմ: Ջզվելի է: Տարեք թաղեք: Ես ամեն ինչ կանեմ»: Շուտով բերվեցին սպանությունը կատարած քրդերը, կանայք նրանց ճանաչեցին, սակայն նրանք ազատ արձակվեցին, որովհետև հայերի վկայությունը չընդունվեց (14, 265): Հայերի նկատմամբ բռնությունների կիրառումը, նրանց տարրական իրավունքների ոտնահարումը, հողատարածքների, եկեղեցիների ու վանա-

կան տիրույթների մասսայական բռնազավթումը քրդերի ու իշխանությունների կողմից օրինականացվում էր թուրքական դատարանների վճռով: Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում անխտիր այդ երևույթը կատարվում էր նույնությամբ, նույն եղանակով, միայն գործողության վայրերն էին տարբեր: Հայ ժողովրդի այդ վիճակը նկատի ունենալով է. Դիլունը գրում էր. «Քրիստոնյաները Հայաստանում չեն համարձակվում հավակնել իրենց նկատմամբ այնպիսի վերաբերմունքի, որպիսին լավ տերը ցույց է տալիս իր շանը» (14, 334, 345):

Անգեն, ինքնապաշտպանության բոլոր միջոցներից զրկված հայը հանդիսանում էր մահմեդականի սեփականությունը: «Մահմեդականը,— գրում է էրզրումի փոխիսուպատոսը 1891 թ. մարտի 7—ին,— հայ քրիստոնյային չի դիտում մարդկային նույն ցեղին պատկանող, ինչպես ինքն է: Նա ռայայի սեփականությունը, կյանքը և կանանց դիտում է որպես իր որսի և քրիստոնյայի ամեն մի դիմադրությունը համարում է որպես հանդուգն խռովություն, որը պետք է պատժվի տեղում, ինչպես կպատժվեր այն շունը, որը կփորձեր կծել նրան» (14, 145): Թուրքական կառավարիչները դարեր շարունակ մահմեդական ազգաբնակչության հոգեբանության մեջ ներարկել են այն մտայնությունը, որ թուրքը տիրապետող ազգի ներկայացուցիչը լինելով՝ օժտված է քրիստոնյա հայի վրա իշխելու արտոնությամբ, իսկ այլադավան ժողովուրդներին զրկելով անձի ու պատվի պաշտպանության իրավունքից՝ ստիպել է ենթարկվել իշխողին: Քրիստոնյան, մասնավորապես հայը, Թուրքիայում իրավազուրկ էր:

Հայերի նկատմամբ թուրքական պաշտոնյաների ու քրդերի գործած բռնարարքների մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում է. Դիլունը: «Քրդերը հանդիպեցին Մարգարի որդի Գուգոյին,— գրում է նա,— որը դաշտից տուն էր տանում իր հացահատիկը: Քրդերը պահանջեցին իրենց տա իր սայլը, սակայն նա պատասխանում է, որ սայլն այժմ զբաղված է, ինչպես իրենք տեսնում են, հետո կարող է կատարել նրանց ցանկությունը: Նրանք սպանեցին նրան իրենց չլսելու համար և նետեցին փոսը: 30 գյուղացիներ իրենց երեխաների հետ մեկնեցին Ղարաքիլիսա կայմակամին բողոքելու համար: Վերջինս նրանց ստիպեց 11 օր սպասել դրսում, ապա լսեց նրանց և առաջարկեց. «Հեռացեք Ռուսաստան» (102, 41): Մուշի սանջակի խաչ գյուղը բռնությամբ գրավեց քրդերի կողմից: Նույն բախտին արժանացան շրջակա գյուղերը: Ամբողջ երկրում տիրում էր անօրինականությունն ու

քաոսը: Քարավանները ավազակախմբերի կողմից ենթարկվում էին թալանի: Հայերի համար երկրում ճանապարհորդելը վտանգավոր էր: Տանում էին բռնությամբ ոչխարները և տավարը: Բոլոր գյուղերը հասցվել էին ծայրահեղ աղքատության: Քրդական հարստահարությունները հայ գյուղացիներին զրկել էին ապրուստի բոլոր միջոցներից, մինչդեռ հարկահաններն ավելի խստապահանջ էին դարձել: Նրանք խլում էին գյուղացու վերջին ունեցվածքը: Հայ բնակչության այդ ծանր կացության մասին «Նոր դարը» գրում է. «Մեզ համար Չինգիզ խաներու և Լենկթեմուրներու ժամանակը նորոգված է: Ամեն կողմը մահ է ու արյուն: Ոչ ոք յուր կյանքի ու պատվի վրա վստահ չէ» (45, 1895, 25): Առևանգումներն ու թալանը, վիրավորանքներն ու արժանապատվության ոտնահարումը,— գրում է է. Դիլունը,— որ կատարվում էին անսիրտ դաժանությամբ, դարձել էին սովորական երևույթ, ամենօրյա իրողություն ողջ Հայաստանում (102, 341, 43):

Քրդական ավազակախմբերը, մասնավորապես համիդիե գնդերում ծառայության մտած քրդերը, անլուր տանջանքների էին ենթարկում հայերին: Նրանք մրցակցում էին իրար հետ հայ ազգաբնակչության դեմ եղեռնագործության ձևեր ու տանջանքի նոր տեսակներ հորինելու գործում: Քրդական մի ավազակախումբ «հարձակվում է Կառճոց գյուղի վրա,— նշում է աղբյուրը,— կանանց բռնաբարեցին, աղջիկներին տարան լեռները: Մտնելով եկեղեցի՝ այրեցին Աստվածաշունչը, պղծեցին սրբությունները, եկեղեցու զույքը բաժանեցին»: Քրդական մեկ այլ ավազակախումբ արյունալի գործողություններ էր ծավալում Վանում ու նրա շրջակայքում: Նույն բախտին արժանացան հարյուրավոր գյուղեր (102, 41):

Հայ գյուղացին ստիպված տանում էր բոլոր փորձություններն ու դառնությունները, որովհետև իշխանություններն ու քրդերը գործում էին փոխհամաձայնեցված: Կապիտան Կլեյտոնը Մուշից հայտնում է, որ այնտեղ ամայացվել ու հայաթափվել են 144 գյուղ, որից 100—ը ավերվել է քրդերի, իսկ մյուսները՝ կառավարական բանակի զինվորների կողմից, որոնք ուղարկվել էին գյուղերում կարգ հաստատելու համար (343, 14, 63): Արևմտահայության օրհասական վիճակի մասին «Ռուսսկի կուրիեր» լրագիրը նշում է. «Հայ ազգաբնակչությունն ընկել է երկակի կրակի մեջ. քրդերը հարստահարում ու խլում են հայերից ամեն ինչ, իսկ կառավարությունը հովանավորում է քրդերին: Տարաբախտ հայերը,— շարունակում է լրագիրը,— ապրելու հեռանկարից զուրկ են: Թուրքական իշխանությունները նրանց դրել են երկմ-



(102, 38–39): Իշխանություններին դիմելու դեպքում հետևանքն ավելի ողբերգական էր լինում: Պաշտոնյաները արհամարհանքով հեռացնում էին նրանց, իսկ գազազած քրդերն ավելի ծանր հանցանքներ էին գործում: «Այն ժամանակ,– շարունակում է Սառա Գորոյանը,– Գազազ թիմեր անունով մի քուրդ մեզ հրամայեց ստորագրել մի թուղթ, որ իբր թե մենք ապրում ենք բարվոք կյանքով և մեզ երջանիկ ենք զգում: Այդ փաստաթուղթը պետք է ուղարկվեր Կ. Պոլիս, քանի որ այդ քուրդը ցանկանում էր համիդիե հարյուրապետ դառնար: Ոչ ոք չստորագրեց: Ջայրացած քուրդը սպանեց Ավագին ու նրա եղբորը, իսկ հինգ ամիս անց սպանեց Մանկասար գյուղից Կրեի որդի Միսակին: Ապա բանտարկեց մեր հարևան... Սարգսին: Նրա գլուխը մտցրեց սառը ջրի մեջ, թողեց, որ չորանա, հետո գլուխը ողողեց նավթով, այրեց նրա մազերը»: Ռեզեկում Բեյի ու նրա մարդկանց չարագործությունները թվելն անգամ անհնարին է, քանի որ ողջ Արևմտյան Հայաստանում ու թուրքիայի հայաբնակ մյուս վիլայեթներում անզեն հայ ժողովուրդը հանձնված էր քրդերի վայրագություններին, ուստի սրտի անհուն դառնությամբ ավարտում է իր խոսքը Սառա Գորոյանը. «Ոչ, մենք չէինք կարող այնտեղ ապրել, եթե նույնիսկ անասուն լինեինք և ոչ քրիստոնյաներ» (102, 38–39):

Ողբերգական դրվագներով լեցուն են պապենական վայրերը լքած յուրաքանչյուր հայի կյանքի էջերը: «Մկրտիչ Մեզայանը,– գրում է Է. Դիլոնը,– տեղափոխվել է Բայազետի սանջակի Կուպեչերան գյուղից: Այրի փաշան իր 40 քրդերով գրավել է նրանց գյուղը, նրանց ունեցվածքը, եկեղեցին» (102, 39): Իշխանությունների թողտվությամբ ու ակտիվ աջակցությամբ քրդական վայրագ գործողությունների արդյունքում հայերը հարկադրված ընդունում էին մահմեդականություն: Աստիճանաբար փոփոխության էր ենթարկվում հայկական բնակավայրերի ազգային դեմքը, պահպանված եկեղեցիներն ու հուշարձանները մնում էին որպես անցյալի տխուր հիշողություններ: «Թորթումի մարզում, որը գտնվում է Երզրումի հյուսիս–արևելքում,– կարդում ենք վավերագրում,– այժմ համարյա ամբողջությամբ մահմեդականներն են, իսկ այդ ընթացքում այստեղ պահպանվել են բազում հայկական հուշարձաններ, բերդերի ավերակներ, եկեղեցիներ և այլն: Կար ժամանակ, երբ այդ երկրամասը բնակեցված էր համարյա միայն հայերով, իսկ այժմ նրանք բոլորը ընդունել են իսլամ» (26, Գ. 991, Ն. 437):

Հայրենի վայրերից հեռացածները արյուն–արցունքով պատմում են երկրում կրած դառնությունները ու կարոտով հիշում պապենական տունն ու

հարազատ վայրերը, ուր տիրում է վայրի քուրդը, և իշխում է թուրքական պաշտոնյաների կամայականությունը:

«Պետրոս Կոզդիյանը,– նշում է Է. Դիլոնը,– վերաբնակվել է Վանի սանջակի Արոգ գյուղից: «Մեզ քել են քրդերը,– ասում է Պետրոս Կոզդիյանը,– որոնք գտնվում էին Գալոյի որդի Տրիոյի հրամանատարության տակ: Նրանց հովանավորում էին թուրքական իշխանությունները: Նա բռնաբարեց երիտասարդ կանանց և աղջիկների: Երեք հայ փորձ արեցին պաշտպանել, բայց քրդերը սպանեցին նրանց: Քրդերը գողացան գյուղի ոչխարները: Բողոքեցինք նահանգապետին: Նա հայտնեց, որ չի կարող միջամտել: Քրդերը գրավեցին մեր ունեցվածքը, եկեղեցին, այրեցին այն, ինչ չէին կարող վերցնել իրենց հետ: Մենք կրկին դիմեցինք իշխանություններին, բայց նրանք պատասխանեցին. «Մենք կսպանենք ձեզ, ինչպես ոչխարների, եթե երկրորդ անգամ բողոքելու գաք բարի մահմեդականների դեմ: Մենք վերցրինք մեզ հետ ինչ կարող էինք և ուղևորվեցինք Ռուսաստան: Սահմանի մոտ մեզ թալանեցին: Սահմանն անցանք միայն մեր ունեցած հագուստով» (102, 40): Սարգիս Մարտիրոսյանը տեղափոխվել է Ալաշկերտի սանջակի Ուչքիլիսե գյուղից, Օվե Օվյանը՝ Լիզ գյուղից, Խաչ. Կարապետյանը՝ Խնուսի սանջակի Կյավուրմի գյուղից (102, 40): Սուլթանական կառավարության հայահաված քաղաքականության հետևանքով 19–րդ դարի 70–ական թվականներին այն տարածքներում, ուր ազգաբնակչության 80–90% կազմում էին հայերը, արդեն 90–ական թվականներին ամբողջովին կամ մասամբ հայաթափվել էին: «Հայերի անհետացումը,– ասվում է վավերագրում,– կատարվում է ժամանակակիցների աչքի առջև: Այստեղ դեռ շատ գյուղերում կարելի է հանդիպել թուրքերի, որոնց հայրերը քրիստոնյա են, նույնիսկ կրում են հայկական անուն» (19, Գ. 1632, Ն. 78): Բազմաթիվ բնակավայրեր դեռևս պահպանում էին իրենց հայկական անվանումը, որպես դառն ու տխուր հուշ այն բանի, որ այդտեղ երբևէ հայեր են ապրել (105, 92–111): Ռուսական արխիվային վավերագրում կարդում ենք. «Եկեղեցիների ավերակները, սրբապղծված գերեզմանները, շինարար հայ վարպետի ձեռքով կառուցած տները, ուր այժմ քրդեր են ապրում, վկայում են այդ տարածքների հայկական լինելը» (19, Գ. 1584, Ն. 25–34): Համեմատաբար պատմական կարճ ժամանակամիջոցում՝ 1870–1890–ական թթ. անասելի արագությամբ արևմտահայ գյուղը ենթարկվեց ժողովրդագրական փոփոխության: Իր պատմական բնօրրանից բռնիորեն արտամղվում էր հայ էթնոսը, նրան ան-

միջապես փոխարինում էր քոչվորական կյանքով ապրող խաշնարած քրդական տարրը, անվանափոխվում ու թուրքականացվում էր հայ ժողովրդի բազմադարյա հայրենիքը, ոչնչացվում էին նրա ստեղծագործ մտքի արգասիք բազում անկրկնելի արժեքներ: Հայի օտարումը իր պատմական հայրենիքից կատարվում էր անասելի բիրտ ու դաժան մեթոդներով: Հայկական յուրաքանչյուր բնակավայր, ամեն թուփ ու քար ողողված էր հայի արյունով, ուներ իր ողբերգական յուրահատուկ պատմությունը:

### **3. «Հայկական համընդհանուր ապստամբության» մասին թուրքական վարկածը որպես միջոց հայկական զանգվածային ջարդերը հիմնավորելու համար**

Սուլթան Աբդուլ Համիդի կառավարությունը հետևողական կերպով քայլ առ քայլ մանրամասնությամբ քննարկում ու նախապատրաստում էր արևմտահայության դեմ վճռական գործողությունների յուրաքանչյուր օղակը, ամեն մի մասնիկը: Իր թիկունքում ունենալով մեծ տերություններին, նրանց ուղղակի հովանավորությունն ու Հայկական հարցում վերջիններիս ցուցաբերած հանցագործ անտարբերությունը՝ հայերի դանդաղ բնաջնջումը այլևս չէր բավարարում Կարմիր սուլթանին: Նա հայ ժողովրդի դեմ անցավ լայնածավալ վճռական գործողությունների: Սակայն սուլթանը ներքուստ մտահոգված էր հայկական զանգվածային ջարդերի նկատմամբ եվրոպական տերությունների մանավանդ համաշխարհային հանրության կարծիքի կողմնորոշման խնդրով: Ուստի իր հետագա արյունալի կոտորածների «ամհրաժեշտությունն ու օրինականությունը» հիմնավորելու նպատակով «Ստամբուլ» և «Վազըթ» թերթերում, ինչպես նաև եվրոպական մի շարք թուրքամետ լրագրերում սկսած 80-ական թվականներից սուլթանի անմիջական նախաձեռնությամբ տպագրվեցին հայտարարություններ Օսմանյան կայսրությանը սպառնացող «հայկական համընդհանուր ապստամբության» մասին (107, 224): Թուրքական կառավարության զգուշավոր ու խարդախ գործելակերպին քաջածանոթ անվանի պատմաբան, պետական գործիչ Ջ. Ս. Կիրակոսյանը գրում է. «Դարերի փորձ ունեցող թուրքական պետականությունը ծանոթ էր խարդախության», ուստի և ապատեղեկատվության (դեզինֆորմացիայի) հարուստ մեթոդներին: Դեռևս 1880 թ. ամռանը Կ. Պոլսի «Ստամբուլ» և «Վազըթ» թերթերը լուրեր տարածեցին այն մասին,

սին, թե «հանուն ազգային վրեժխնդրության» հայոց զինված խմբերը հարձակվել են Վասպուրականի քրդական գյուղերի վրա, նրանցից այրել ու ոչնչացրել յոթը: «Սա,– շարունակում է Ջ. Կիրակոսյանը,– բացահայտ մտացածին քայլ էր խորացնելու համար հայ–քրդական անտագոնիզմը, առիթ հայթայթելու հակահայկական պատժիչ ու ռեպրեսիվ գործողությունների իրականացման համար» (1, 48):

Թուրքական խարդախ ու հայադավ գործընթացի խայծը նետված էր: Բ. Դռան կողմից քաղաքական նպատակներով լրատվության միջոցներին հանձնած հայկական նախապատրաստվող ապստամբության մասին կեղծ ու ստահող տեղեկատվությունը ձևագնդի նման զնալով մեծանում էր՝ ընդունելով ահռելի չափեր: Այդ խայծը միամտաբար ընդունեցին հայկական մի շարք լրագրեր ու հասարակական–քաղաքական անշրջահայաց գործիչներ՝ ջուր ավելացնելով թուրքական ջրաղացին: «Մշակ»-ի թղթակիցը ոգևորությամբ հաղորդում էր, որ զինված հայերի խմբեր «սկսեցին հարձակումներ գործել Հյաստանի քուրդ ցեղերի դեմ՝ դրդված լինելով վրեժխնդրության զգացմունքից, այն բոլոր նեղությունների համար, որ կրել են հայերը քրդերից» (10, 1880, 138): Տեղեկատվությունն ավելի է ծավալվում: Պրոֆեսոր Լեոն գրում է. «Վանի կողմերում քրդերը հարձակվում են մի հայի գյուղի վրա, բայց անսպասելի կերպով հանդիպում են զինված դիմադրության գյուղացիների կողմից, տեղի է ունենում կռիվ և քրդերից սպանվում են շատերը» (28, 128): Գր. Արծրունին ևս տուրք է տալիս այդ կեղծիքին, «հավաստիության տեսք էր տալիս այդ ամենին և ոգևորված գրում, թե մինչև այժմ թուրքական կառավարությունն իրեն անուժ էր համարում կռվելու զինված քրդերի դեմ, իսկ այժմ կսպասենք ու կտեսնենք, ինչ դիրք կբռնի թուրքաց կառավարությունը հայոց զինյալ խմբերի վերաբերությամբ» (1, 48): 1880 թ. սեպտեմբերի 10–ին «Մշակ»-ը գրում էր. «Լուր կայ, թե Վանի հայերի մեջ ապստամբություն է ծագել, սպանված հայերի թիվը 70 հոգի են, թյուրք սպանվածների թիվը յայտնի չէ: Երկու կողմերն էլ լավ զինավորված են» (28, 129):

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը, որի էջերում պարբերաբար տեղեկություններ էին հաղորդվում Արևմտյան Հյաստանում տեղի ունեցած իրադարձությունների, մասնավորապես աշխարհաքաղաքական այդ տարածաշրջանում Ռուսաստանի և Անգլիայի միջև ծավալվող մրցակցության ու դիվանագիտական առճակատումների մասին, անդրադառնալով հայկա-

կան կյանքին, նշում է. «Աստիճանաբար շարժվում է ստրկացված ժողովուրդը: Ձեռքունի ապստամբության բոցը դեռ չի մարել: Հայերը լավ զինված են ու ունեն հարուստ զինապաշար» (74, 1880, 301): Նրան արձագանքում էր «Գոլոս» լրագիրը: Տրապիզոնից բրիտանական դիվանագետները հաղորդում էին, որ իբր արևմտահայերի շրջանում գեներալ դիմելու և ապստամբության համար պայքարելու մեծ համոզմունք կա: «Հայերը վստահ են,– գրում էր փոխհյուպատոսը,– որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պատրաստվում են օգնության հասնել: Լուրեր են տարածվում,– շարունակում է նա,– թե իբր այդ տերությունների սպաների կողմից ղեկավարվող 100000 զինված և լավ պատրաստված հայերի բանակը գարնանն օգնության է հասնելու արևմտահայությանը»: «Բայց կար դրանից ավելի չաղն էլ: Երգրումից գրում էին Վիեննայի «Փոլիտիշե Զոռնեսպոնդենց» լրագրին: Նրանք (հայերը – Պ. Ս.) չեն գտնում փրկութեան մի այլ կետ,– գրում է Լեոն,– բացի նրանից, որ իրենց բողոքը յայտնեն զենքով: Ձեռքունի բարձրութիւնների վրա բնակւող հայերը ապստամբւեցան–ահա օրւա նշանաւոր նորութիւնը: Երեւելի եւ ամենից յարգւած Պապիկ իշխանը առաջնորդում է ապստամբներին, որոնք այժմ իրենց յարձակումներով սարսափի մեջ են գցել վերին Հայաստանի կողմերը: Սի ուրիշ շարժման կենտրոնը գետեղած է հին Բայազետի հարաւային կողմերում: Ապստամբւած հայերի զորաբաժինն ամենասաստիկ կերպով ուժ և զօրութիւն է ստանում» (28, 130):

Ռուսական վավերագրում կարդում ենք. «Հայտնի չէ, թե ում կողմից են տարածվում լուրեր, թե իբր 2000 մարդուց բաղկացած Հայկական զորքը Թուրքիայի Պարսկաստանի հետ սահմանակից շրջանում սկսել է հարձակումներ թուրքական գյուղերի վրա» (19, Ժ. 1630, յ. 84): Մեկ այլ վավերագրից իմանում ենք, որ այդ հարձակման մասին լուրերը տագնապ են առաջացնում մահմեդական ազգաբնակչության մեջ, և նրանք որոշել են հեռանալ իրենց բնակության վայրերից դեպի երկրի խորքերը, իրենց համար ավելի ապահով տեղեր (19, Ժ. 1631, յ. 84–91): Թուրքական իշխանությունները ակնդետ, համակ ուշադրությամբ հետևում էին լրագրերի ուռճացրած հաղորդումներին ու իրենց հերթին սուլթանի ցուցումով նորանոր զունեղ ու ահազդու պատմություններ էին հորինում «ժավալվող» հայկական ապստամբությունների մասին ու մահմեդական ազգաբնակչությանը նախապատրաստում հայերի դեմ վճռական գործողությունների (107, 130): Այդ ընթացքում սուլթան Աբդուլ Համիդը հանձնարարեց Անատոլիայի արևելքում,

հիմնականում Արևմտյան Հայաստանի տարածքում տեղակայված 4–րդ բանակի հրամանատարությանը խոշոր քաղաքներում, ինչպես նաև հայերով հոծ բնակեցված գյուղական շրջաններում նոր կայազորներ տեղավորել, իսկ 4–րդ բանակի յուրաքանչյուր գումարտակի զինվորների թիվը ավելացնել 800 մարդով (26, Ժ. 366, յ. 23–25): Իշխանություններն այդ ձեռնարկումները կատարում էին զենքի ու զորքի տեղաշարժերի ընդգծված ցուցադրումներով, որպեսզի մահմեդական ազգաբնակչությանը համոզեին իրենց սպառնացող վտանգի մասին և հավաստիացնեին, որ կառավարությունը մտահոգված է մահմեդական բնակչության անվտանգությունը ապահովելու միջոցառումներով:

Հայկական կարծեցյալ ապստամբության մասին Երզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Չետվերուխինը 1883 թ. փետրվարի 2–ին Կ. Պոլսի դեսպանին գրում էր. «Թուրքական իշխանությունների հայախալած գործողությունները հայերին ստիպում է պաշտպանական քայլեր կատարել: Մահմեդականների և քրիստոնյաների հարաբերությունները վերջին շրջանում խիստ լարվել են: Այդ լարվածությունը որոշակիորեն պայմանավորված է վերջին ժամանակներս այստեղ տարածում գտած հայկական նախապատրաստված ապստամբության մասին լուրերով, որոնք սակայն ճշտված չեն, բայց կարծում են իրական չեն» (19, Ժ. 1625, յ. 83): Մեկ այլ վավերագիր նույն ժամանակ հայտնում է. «Հայերին իզուր են մեղադրում խռովարարության մեջ: Նրանք նման մտքերից հեռու են» (19, Ժ. 3447, յ. 58): Որ իրոք հայ բնակչությունը թուրքական կայսրության դեմ այդ պահին ոչ միայն համընդհանուր, այլ ապստամբության մասին ընդհանրապես չէր մտածում ու չէր էլ կարող մտածել, հիմնավորվում է այդ ժամանակաշրջանի հայ ազգաբնակչության վիճակին քաջածանոթ անձանց, դիվանագիտական ծառայողների տվյալներով ու զեկուցագրերով: Երզրումի փոխհյուպատոս Կլիֆֆորդ Լլոյդը 1890 թ. հունիսի 28–ին գրում էր. «Ես գտնում եմ, որ այս նահանգների հայ ազգաբնակչության ոչ մի դասակարգ հեղափոխության մասին ոչ մի միտք չի փայփայում, այդ թվում և զինված ապստամբության մասին: Սակայն թուրքական իշխանությունների նկատմամբ դժգոհությունը կամ բողոքի որևէ ձևը դիմվում է իշխանությունների կողմից որպես ապստամբություն–խռովություն, որի դեմ կիրառվում են միջոցներ, որոնք առանց փոքր–ինչ հիմքի հայերին զրկում են անձնական ազատությունից» (14, 237): Թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ գոր-

ծաղրվող բռնություններն ու խոշտանգումները հիմնավորվում էին նրանով, որ իբր հայերը խռովարար են ու նախապատրաստվում են ապստամբության: Այդ կապակցությամբ Էրզրումում բրիտանական հյուպատոս Չամփտոնը 1891 թ. հունիսի 12-ին հաղորդում էր. «Պատողությունը այն մասին, որ այդ տեղերի հայերի միջավայրում գոյություն ունի ձգտում խռովության կամ ապստամբության ծրագիր, զուրկ է հիմնավորումից, և նման մտադրությունը իրականացնելու հնարավորությունը ամբողջովին բացակայում է: Հայերն այդ շրջանի ամենախաղաղ ժողովուրդն են... Նրանք չունեն ոչ զենք, ոչ առաջնորդներ և համընդհանուր ապստամբության մասին դատողություններն առաջացնում են ժպիտ բոլոր նրանց մեջ, ովքեր ծանոթ են երկրի իրական վիճակին» (14, 156): Նույնիսկ թուրքական իշխանության որոշ ներկայացուցիչներ հավատացած չէին, որ իրոք գոյություն ունի հայկական շարժում: «Մայիսի 24-ին, - գրում է Ա. Կիրակոսյանը, - Գոեյվզը Ֆորդին հաղորդում էր Սեբաստիայի վալի Խալիլ Բեյի հետ ունեցած գրույցի մասին: Ըստ Վալիի՝ հայկական խռովարար շարժում գոյություն ունի, սակայն պետության համար այն լուրջ վտանգ չի ներկայացնում... Հայկական խռովության հիմնական տուժողները լինելու են հայերը» (108, 237): Դոկ. Համլին 1894 թ. դեկտեմբերի 20-ին «Նյու-յորք հերալդ» թերթում տպագրված իր հոդվածի մասին լրացուցիչ մեկնաբանությունում գրում է. «Սակայն նրանք քիչ են, ցրված են ու անզեն: Թուրքական կառավարությունը երբեք էլ չի վախեցել ինչ-որ հեղափոխական շարժումներից, նա գերազանց գիտի, որ կայսրությունում չկա մի տեղ, ուր կարողանան թշնամական մտադրությամբ հավաքված լինել հազար, նույնիսկ հարյուր հայեր, բացի դրանից նրանք զենք չունեն ու չեն կարող այն օգտագործել» (14, 322): Դոկտոր Համլին միանգամայն արդարացի է՝ հայկական ապստամբությունը համարելով թուրքական իշխանությունների հորինած բարբառանք, սակայն նրա դատողությունները հայերի ցրվածության ու փոքրամասնության մասին անընդունելի են, քանի որ դրանք միայն թուրքական աղբյուրների տվյալներ են, որոնք խիստ միտումնավոր ու քաղաքականացված են: Հայկական կարծեցյալ ապստամբության մասին կեղծ լրատվությունը իրավացիորեն նա դիտում է որպես վտանգավոր հայ ժողովրդի համար, քանի որ դրանով իշխանությունները առիթ բաց չէին թողնում հայերի դեմ մահմեդականների մոլեռանդությունը բորբոքելու համար, իսկ կառավարությունն այդ կեղծ լրատվությունը օգտագործում էր հայերի դեմ բռնություններ սկսելու նպատակով

(14, 323): Հայկական ապստամբությունների մասին թուրքական իշխանությունների տեղեկատվության կեղծ լինելը հիմնավորում ու քննադատում էր Մալքում Մակքոլը: Նա գրում է. «Հայաստանում, ինչպես նաև սուլթանական բոլոր տիրույթներում, երբ քրիստոնյաները լինում են այնքան մարդաշատ, հարուստ ու կրթված, որ վտանգ ու սիստեմային է հարուցում իրենց ճնշողներին, այդ ժամանակ հրապարակվում է ցուցում «կրճատել բնակչությանը» (14, 323): Իշխանության տեղական մարմինները դիմում էին ծայրահեղ միջոցների, որոնց հետևանքով քրիստոնյաները ստիպված են դիմադրել: Կառավարությունը հայ բնակչության մեջ հրահրում է պրովոկացիաներ (10, 1880, 161): Նրանց անհնազանդությունը հաստատելու և բռնությունների նորանոր առիթներ ստեղծելու նպատակով չնչին մի դեպքը «անմիջապես դիտվում էր որպես վտանգավոր ապստամբություն, հայ տարրը որակվում էր ապստամբ» (10, 1885, 137): Արևմտահայության համար ստեղծված այդ ծանր իրավիճակը ցավով է արձանագրում «Արծազանք»-ի թղթակիցը: «Սեկը Մշո դաշտի գյուղերից մեկում ուսուցիչ է, - գրում է նա, - հեղափոխական է... պատիժը՝ շղթայակապ բանտարկություն: 10-12 տարեկան մի տղայի թղթերի մեջ կգտնվի հայրենասիրական մի երգ՝ պատիժը շղթայակապ բանտարկություն, սոսկալի տանջանքներով...»

Համիդեականների ավարառության ընդդիմացողը որակվում է «Դեօվլեթ խայրը» (կառավարության թշնամի), քրդերի ու թուրքերի բռնություններից լեռներում ապաստանածները ավազակներ են կոչվում, ինքնապաշտպանության դիմողը՝ «ապստամբ» (90, 1894, 135): Էրզրումի ռուսական հյուպատոսը Կ. Պոլիս դեսպանին ուղղված զեկուցագրում նշում է, որ «Հայերի հարսանեկան արարողությունները թուրքական իշխանությունները դիտում են որպես ապստամբություն» (19, Ժ. 366. Պ. 23-25): Յուրաքանչյուր նման մի դեպք թուրքական կառավարությունը դիտում էր որպես հպատակների անհնազանդություն, ապստամբություն և «խաբված Եվրոպայի առջև ներկայացվում էր բավարար միջոց համատարած կոտորածի արդարացման համար» (14, 157): Հետևաբար հայկական ապստամբության մասին կեղծ լրատվությունը, որին անհեռատեսորեն արձագանքում էին հայկական որոշ շրջաններ ու մտացածին ինչ-որ անիրական ապստամբության մասին պատմություններ էին հորինում, շատ վտանգավոր էին ու անկանխատեսելի հետևանքներ էին ունենում: Ժխտելով հայկական ապստամբության մասին թուրքական կառավարության կեղծ ու շինծու վարկածը՝ Մալքում Մակքոլը գրում է. «Բ. Դան

տիրապետությունը իրենից ներկայացնում է կազմակերպված թալանի իշխանություն... հայերը,– շարունակում է նա,– ոչ միայն իրավունք ունեն ապստամբվելու, այլ նաև դա նրանց սրբազան պարտականությունն է ուղքի կանգնել ու տապալել դժոխային տիրապետությունը, որը նրանց մատնել է անհուսալի ու դաժան ստրկության» (14, 157): Սակայն քանի որ նման ընդվզման համար արևմտահայությունը բավարար ուժ ու հնարավորություն չուներ, թուրքական հզոր կայսրության դեմ նման փորձը անշուշտ կորստաբեր էր:

Թուրքական կառավարությունն իր գոյության նախորդ հարյուրամյակների ընթացքում կուտակել է պատմական իրողությունները կեղծելու, ճշմարտությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելու, հասարակական կարծիքի վրա ներազդելու դարավոր փորձ ու հմտություններ: Նման խորամանկ ու խարդախ միջոցներով հայկական համընդհանուր ապստամբության մասին կեղծ ու շինծու լրատվության տարածմամբ մահմեդական ազգաբնակչությանը տրամադրեց արևմտահայության դեմ, որովհետև «թուրք ազգաբնակչությունն ամենուրեք համոզված էր հայերի կողմից նախապատրաստվող շարժման գոյության մեջ և արդեն իսկ պատրաստ էր դիմագրավել» (108, 265): Բ. Դռան այդ խորամանկ ու խարդախ գործելակերպի մասին Խ. Գաբրիկյանը գրում է, որ թուրքական կառավարությունը մի կողմից ցանկանում էր «ամուր ու մշտատև հիմքերի վրա դնել բնաջնջման պոլիտիկայի արագաշարժ մեքենան, մյուս կողմից իր այս կամ այն կոտորածի բռնությունների առիթն ու մեղքը վերագրել հեղափոխականների խժոժություններին, եթե թուրք կառավարությունը հարկադրված է լինում եվրոպական տերությունների առաջ արդարանալու, իր արյունոտ ձեռքերը լվանալու» (109, 119): Թուրքական իշխանությունների այդ գործողություններն ունեին պարզորոշ ու ընդգծված քաղաքական բովանդակություն, և նրանք անշեղորեն ընթանում էին դեպի իրենց նպատակի վերջնական իրագործումը: Սակայն ի՞նչ նպատակ էին հետապնդում հայկական մամուլն ու կուսակցական–հասարակական գործիչները, որոնք ճիշտ չկողմնորոշվելով ստեղծված իրադրության մեջ, անկարող ու անհաղորդ դիվանագիտական ճկուն, խորամանկ ու խարդախ խաղերի արվեստին, ընդունեցին թուրքական կառավարության հայադավ խայծը, ենթարկվեցին նրա պրոպոկանդային, ոգևորված Մուշուն, Վանուն, Բայազետուն և հայաշատ մյուս վայրերում ասպատակություն ու թալան կատարող քրդերին ցուցաբերած աննշան դիմադրությունը որակում էին որպես ապստամբական գործողություններ:

Ջ. Կիրակոսյանը, անդրադառնալով այդ խնդրին, գրում է. «Վտանգավոր բան էր առանց նախնական պատրաստության, առանց զինվելու և ուժ համախմբելու բարձրաձայն բղավել ապստամբական տրամադրությունների, կոիվ տալու մասին: Օրինակ, 1880–ի հոկտեմբերին Վանից թղթակցում էին «Մշակին» այն մասին, որ «հայկական խնդիրն այսօր բոլորովին պաշտոնական հանգամանք մը առած է և Չայաստանում տիրող անիշխանությունը և հարստահարության շարունակվելը հայկական ապստամբության գոյություն տված է: **Վասպուրական, Մուշ, Բաղեշ, Կարին արդեն ունեն հեղափոխական մասնաժողովներ, որոնք գաղտնի միջոցներով աշխատում են գործակից լինել հայկական ընդհանուր ապստամբության ի Չայաստան** (ընդգծումը հեղինակինն է)» (1, 48):

Արդարացի է Ջ. Կիրակոսյանը՝ նշելով, որ «Ձեյթունում, Վանում, Էրզրումում առկա էին դիմադրության օջախներ, ընդդիմանալու, սեփական իրավունքները պաշտպանելու սաղմեր», միաժամանակ պատմական ժամանակաշրջանի իրողությունների զարգացման ընթացքը և վերջինիս հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած անկանխատեսելի հանգամանքների խորաթափանց ընկալմամբ գրում է. «Չափազանցությունը, անհիմն ոգևորությունը վատ խորհրդականներ էին մեծ քաղաքականության մեջ» (1, 48): Իրավացիորեն մեղադրելով հայ քաղաքական կուսակցություններին ու նրանց գործիչներին՝ ներխայնամիտ ու անհեռատես գործունեության համար, նա նշում է. «... Պատմության մեջ դեպքեր չկան, երբ հեղափոխական մարտերի պատրաստվող մարդիկ, կազմակերպությունները նախապես հրապարակեին իրենց պլանները, ժրագրերը, հակառակորդի համար դյուրություններ ստեղծեին շարժումը խեղդելու համար: Իսկ հայոց մամուլը,– շարունակում է նա,– կարծես թե ամեն ինչ անում էր թուրքական պետականության ջրաղացին ջուր լցնելու համար» (1, 49, նաև 114, 54): Մ. Սեթրոյանը հայկական ապստամբությունների մասին թուրքական կեղծ լրատվությանը արձագանքելու և գոյություն չունեցող հայկական շարժումների մասին չափազանցված լրատվության համար մեղադրում է «Հնչակին» ու հնչակյան գործիչներին: «Մեկ տարի առաջ «Հնչակ»–ը մի մասնավոր թռուցիկով «Ապստամբությունը Չայաստանում» վերնագրով հայտարարեց, թե Սասնա Գավառը և Մշո դաշտի մի քանի գյուղեր ապստամբել են թուրքական կառավարության դեմ» (35, 101): Հայկական մամուլի ու հասարակական գործիչների կողմից այսպես կոչված «Հայկական համընդհանուր ապստամբության» մա-

սին չափազանցված ու գունազարդված լուրերի տարածումը Լեոն համարում է «երևակայություն և հիմարություն... Հայկական ապստամբություն չկար, բայց նրանք յօրինում էին թղթի վրայ՝ թե ուրիշների և թե մանավանդ իրանց խաբելու համար» (28, 131): Ըստ Լեոյի, այդ խաբելու վերջնական նպատակը հանգում էր ի սկզբանե սխալ, երեխայամիտ, հայ ժողովրդին այնքան դառնություններ ու արյունահեղ ողբերգություններ պատճառած մի գաղափարի, այն է՝ «Ազդել Եվրոպայի դիվանագիտության և հասարակական կարծիքի վրա, շտապեցնել Կ. Պոլսի դեսպաններին ստանալ նրանցից ինքնավարություն» (28, 131): Մինչդեռ հիասթափությունը ավելի շուտ վրա հասավ: Էրզրումի 1890 թ. հունիսյան դեպքերից հետո հնչակյան գործիչ Ռ. Խանազատը իր «Հուշերում» գրում էր. «...Ամենից հետաքրքրականն այն էր, որ թե մենք, Տրապիզոնում եղածներս, և թե այլ տեղերում այն համոզումն ունեինք, թե Էրզրումի Եվրոպական հյուպատոսներն իսկույն ահազանգ պիտի հնչեցնեին այդ դեպքի առիթով և... «Հայկական հարցը» պիտի հրապարակ գար և շուտով իր լուծումն ստանար, իսկ երբ այդ տեղի չունեցավ, ամենուրեք մեծ հիասթափություն առաջացավ» (28, 172): Եվ բազում անգամ հին ու քաղաքակիրթ Եվրոպայի աչքի առջև կոտորվում էր արևմտահայությունը, թուրքական դարավոր լծից Եվրոպայի օգնությամբ ազատագրվելու հույսը, ինչպես նաև Եվրոպային իր նվիրվածության համար: Սրախողխող ու արյունաքամ հայ ժողովրդի հուսահատ ճիչերը երկինք էին բարձրանում, սարսափի աղաղակները շարժում էին Եվրոպայի ժողովուրդների խիղճը, ձևավորում հայամենտ հասարակական կարծիք, սակայն հայ ժողովրդի հովանավորությունը ստանձնած տերությունների կառավարությունները և նրանց մտքերի ու ձգտումների արտահայտիչ դիվանագետները իրենց ժողովրդի սրտի ու խղճի ծայրը երկրի ներսում որպես վճռական գործոն ծառայեցնում էին իշխանության համար մղվող կուսակցական պայքարում, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում որպես դիվանագիտական խաղաքարտ սուլթանի վրա ներգործելու, նրանից շահավետ արտոնություններ կորզելու համար: Այդ ընթացքում թուրքական կառավարությունը, օգտվելով Եվրոպական տերությունների ներհակ հակամարտություններից, քաջ գիտակցելով Թուրքիայում նրանցից յուրաքանչյուրի շահերն ու նկրտումները, համոզված լինելով, որ նրանցից ամեն մեկը առանձին չէր փորձի միջամտել Թուրքիայի ներքին գործերին Հայկական հարցի կապակցությամբ, նրանց համատեղ գործողությունները Բ. Դռան վրա ճնշում գործադրելու խնդրում ընդհանրա-

պես բացառվում էր, վստահ ու անվարան առաջ էր վարում իր հայաչինջ ծրագիրը: «Հայ տարրն ու անոր վերագաղթումը չքացնելու գաղափարով, գրում է Մ. Ավետյանը, — թուրք իշխանությունը ոչ միայն խրախուսեց ու հրահրեց թալանն ու կողոպուտը, այլև սկսավ արյունալի գործեր քաղաքներու և գյուղերու մեջ» (110, 17):

Քրդական անհնազանդ աշիրեթներին իրեն ենթարկելով ու նրանցից ստեղծելով հայակործան քաղաքականության ակտիվ համակարգ, հաճախ բարենորոգումների սին խոստումներով մոլորեցնելով տերություններին, սուլթան Աբդուլ Համիդը գտավ, որ Հայկական հարցի նախկինում իր առաջադրած «զուլափոր ու դանդաղ» լուծման միջոցները բավարար չեն (77, 252), արևմտահայության դեմ անցավ վճռական գրոհի: Եվ որպեսզի նրա ջարդարարական գործողություններն ընթանային լուռ ու հանգիստ, քուրդ ու թուրք մարդասպանները զոհեր չունենան, իշխանություններին հրահանգավորվեց խուզարկել հայերի տները, եկեղեցիները, հասարակական հիմնարկները՝ թաքցրած զենքը հայտնաբերելու և բռնագրավելու համար (107, 225): Կառավարության այդ ձեռնարկումները նպատակ էին հետապնդում նախ՝ հայ բնակչությանը զրկել ինքնապաշտպանության հնարավոր վերջին միջոցներից, ստեղծել տագնապահարույց ու անհանգիստ վիճակ, և հետո՝ հայերի չնչին իսկ դիմադրությունը որակել իշխանությունների հանդեպ անհնազանդության դրսևորում, վերջինիս տերություններին ներկայացնել ու հիմնավորել հայկական կարծեցյալ ապստամբության առկայության փաստը, նրանց լռելյայն համաձայնությունը ստանալով վճռական հարձակման էին անցնում անզեն ու խաղաղ հայ բնակչության դեմ: Խուզարկությունները կատարվում էին բիրտ ու դաժան մեթոդներով, ուղեկցվում էին թուրքական պաշտոնյաների վայրի կամայականություններով ու բռնություններով, անսամծ թալանով ու գույքի զրավմամբ, անձի արժանապատվության ոտնահարումով, ընտանեկան պատվի անարգումով ու սրբությունների պղծումով» (112, 1882, 241):

Ահա թուրքական պաշտոնյաների խուզարկության մի բնութագրական օրինակ, որը ինչպես հավաստում է Է. Դիլոնը, քննվել ու ստուգվել է Թուրքիայում օտարերկրյա ներկայացուցիչների կողմից: Մուշի նահանգապետ Գասիբ փաշան, ցանկանալով Ավզուտի ու նրա հարևան գյուղերում բնակչության մեջ հայտնաբերել իշխանությունների նկատմամբ անբարյացակամության ապացույցներ, այնտեղ է ուղարկում ոստիկանության կապիտան Ռա-

շիղ էֆենդուն՝ խուզարկելու, հատկապես հայտնաբերելու հայերի թաքցրած զենքը: Ոստիկանը ամենամանրակրկիտ խուզարկություն է կատարում տներում, տանիքներում և գետնի տակ: Ձեռնունայն վերադառնում ու զեկուցում է, որ ոչինչ չի հայտնաբերվել: «Ինչպես եք համարձակվում պնդել, որ իմ ունեցած տվյալները բացարձակ սուտ են,– գոռում է Գասիք փաշան,– անմիջապես վերադարձեք ու գտեք զենքը: Չհամարձակվեք վերադառնալ առանց նրա»: Ոստիկանը կրկին վերադառնում է Ավզուտ: Տակնուվրա է անում բոլոր անկյունները, վերևից ներքև քարուքանդ է անում տները (տակից գլուխ), համենայն դեպս ոչինչ չի հայտնաբերում: Այնուհետև կանչում է գյուղի տանուտերին և ասում. «Ինձ ուղարկել են թաքցրած զենքը գտնելու: Ասացեք ինձ, որտե՞ղ է այն»: «Բայց մենք ոչ մի զենք չունենք»: «Այն պետք է որևէ տեղ լինի»: «Չավատացնում ենք Ձեզ, դուք սխալվում եք»: «Լավ, այժմ լսեք: Ես պետք է այստեղ զենք գտնեմ, ձեզ մոտ կա, թե չկա: Ես չեմ կարող վերադառնալ առանց նրա: Եթե դուք ինձ որևէ զենք չտաք ես իմ մարդկանցով պետք է տեղավորվեմ ձեր գյուղում»: Դա, հարկավ, նշանակում էր թալան ու ավերում: Տանուտերը տարակուսանքի մեջ էր. «Ախր ի՞նչ անեմ,– հարցրեց նա,– Մենք զենք չունենք»: «Այդ դեպքում գնացեք ու փնտրեք, գողացեք, գնեք, միայն գտեք»: Գյուղացիները ստիպված քրդերից գնում են ժանգոտված ու գործունեության համար անպիտան հնամենի զենքեր:

«Գասիք փաշան տեսնելով այդ հավաքածուն արտակարգ ուրախանում է և ասում. – Ահա տեսնում եք, ես ճիշտ էի: Ես Ձեզ ասում էի, որ այնտեղ զենք է թաքցված: Դուք սկզբում այն չեք փնտրել ինչպես հարկն է: Եղեք հետևողական» (14, 351): Թուրք պաշտոնյան պահանջում է իր ստորադրյալից, որ նա ստիպի հայերին, որպեսզի նրանք ընդունեն իրենց հեղափոխական լիները և հանձնեն իրենց չունեցած զենքերը: Նման խուզարկություններ, թալանի ու բռնությունների ուղեկցությամբ անցկացվեցին 1890 թ. հունիսի 18–ի էրզրումի Սանասարյան դպրոցում, Չայոց մայր եկեղեցում և առաջնորդարանում՝ զենք ու զինամթերք գտնելու ակնկալությամբ: Շուտով նույնատիպ մասսայական խուզարկություններ անցկացվեցին Ամասիայում, Մարզվանում, Թոխաթում, Չորում, Յոզղաթում, Անգորայում, Դիարբեքիրում, Սեբաստիայում հակասուլթանական թռուցիկներ տարածելու կապակցությամբ (108, 230): Նշված քաղաքներում խուզարկությունները ավարտվում էին համատարած ձերբակալություններով: «Ըստ Տրապիզոնում բրիտանական հյուպատոս Լոնգուորթի տեղեկատվության, մեկ օրվա ըն-

թացքում միայն Ամասիայում քաղաքի իշխանությունները ձերբակալել էին շուրջ 300 հայերի»: Ա. Կիրակոսյանը խորամուխ լինելով դեպքերի ընթացքի ու խուզարկությունների կատարման մանրամասնության մեջ, հենվելով իրազեկ աղբյուրների տվյալների վրա իրավացիորեն գրում է. «...այն ժամանակ արդեն ակնհայտ էր, որ այդ դեպքերը կազմակերպվել ու իրագործվել էին կառավարության գործակալների կողմից՝ մահմեդական բնակչության շրջանում հակահայկական տրամադրություններ ստեղծելու և քրիստոնյաների համար արդարություն պահանջող եվրոպական տերությունների մոտ հայերի վարկը նսեմացնելու, նրանց դավադրության մեջ մեղադրելու նպատակով» (108, 230):

Աբդուլ Չամիղը, թևավորված պետությունների անտարբերությամբ, Արևմտյան Չայաստանում և Թուրքիայի մյուս հայաշատ վայրերում 90–ական թվականներին սանձազերծեց զանգվածային ջարդեր՝ աշխատելով վճռական գործողություններով ավարտին հասցնել արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր հանցագործ ծրագիրը:

Չողազուրկ և տնտեսապես քայքայված արևմտահայությունը, Եվրոպական տերություններից մեծ սպասումներով թևակոխում էր 19–րդ հարյուրամյակի վերջին տասնամյակը: Տարաբախտ հայ ժողովրդի գլխին ծանրացել ու արդեն իջնում էր, ինչպես Կ. Պոլսից Մ. Օրմանյանին հայտնում էր պատրիարք Աշրգյանը, Աբդուլ Չամիղի արյունոտ հարվածը (28, 175):

1890–ական թվականներին Արևմտյան Չայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայահոծ վիլայեթներում սանձազերծված զանգվածային ջարդերով բացվեց հայ ժողովրդի բազմադարյա պատմության ամենամռայլ ու արյունոտ էջը:

Այսպիսով, 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմը շրջադարձային նշանակություն ունեցավ ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ թուրքահպատակ ժողովուրդների հետագա ճակատագրի համար:

Բեռլինի 1878 թ. պայմանագրով Թուրքիայի եվրոպական տարածքները անջատվեցին, որի հետևանքով այնտեղ ստեղծվեցին անկախ ազգային պետություններ: Արևելյան հարցը, որի հիմնական առանցքում էին Բալկանները, ու նրա շուրջն էին ծավալվում Օսմանյան կայսրության և տերությունների, ինչպես նաև եվրոպական առանձին տերությունների դիվանագիտական բախումները, այժմ իրեն մասնակիորեն սպառեց, այժմ նրանց ակտիվ գործողությունների կենտրոնը տեղափոխվեց դեպի արևելք և ի դժբախտու-

բյուն հայ ժողովրդի՝ ավելի ցցուն արտահայտվեց Հայկական հարցը:

Թուրքական կայսրությունը, Եվրոպայում կորցնելով իր ոտքի տակի հողը, ամուր կառչեց իր ասիական տարածքներին, ձգտելով թուրքալեզու և թուրքացեղ ժողովուրդների միավորումով ստեղծել համաթուրանական պետություն, կանխել սկսված ճգնաժամը:

Այդ նոր ստեղծվող պետության կազմում ընդգրկվող մահմեդական ժողովուրդների միավորման ճանապարհին, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի կազմում գտնվող մահմեդական ժողովուրդների բաժանման սահմանագծում ընկած էր Արևմտյան Հայաստանը, հայ ժողովուրդը: Հայ ժողովրդի ճակատագիրը վճռված էր: Սուլթան Աբդուլ Համիդը որոշեց Հայաստան անունը փոխարինել Քրդստանով, իսկ հայ ժողովրդին բնաջնջել տնտեսական քայքայման, ունեզրկման ու զանգվածային ջարդերի միջոցով:

Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս հայահոծ վիլայեթներում բեռլինի պայմանագրով պարտավորված բարենորոգումների իրագործման փոխարեն սուլթան Աբդուլ Համիդը երկու տասնամյակի ընթացքում հակահայ քաղաքականության ուժգնացմամբ տնտեսապես քայքայեց ու թուլացրեց արևմտահայության ներուժը՝ բորբոքելով մահմեդական բնակչության մոլեռանդությունը, զինեց նրանց, ուղղեց հայերի դեմ:

Հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանն ուղղված գործողությունների ընթացքում թուրքական իշխանությունները քաղաքական նկատառումներով ժամանակավորապես նեղացրին հպատակ ժողովուրդների դեմ տարվող պայքարի ճակատը: Քրդական անհնազանդ ցեղերի դեմ պայքարը սուլթանը փոխարինեց աշիրեթապետներին սիրաշահելով՝ նրանց իր կողմը գրավելու խորամանկ գործելակերպով: Քուրդ վերնախավը հրապուրվեց սուլթանի՝ հայ ժողովրդի դեմ համատարած պատերազմի ծրագրով, վերածվեց սուլթանի հայաջարդ մեքենայի շարժիչի: Համիդին զնդերի ստեղծումով սուլթանը ավարտին հասցրեց հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման պլանը, որը շուտով դրվեց գործողության մեջ:

## Գլուխ I Ծանոթություններ

1. Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 80-ական թվականներ), Երևան, 1980:
2. Գ. Եազճյան, Աբդուլ Համիդ II Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980:
3. А. Вандаль. Армяне и турецкие реформы, СПб, 1908.
4. Ս. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982:
5. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор Вардгес Микаелян, Ереван, 1995.
6. К. Скальковский, Внешняя политика России и положение иностранных держав, СПб, 1987.
7. Лидьл Гарт, Полковник Лоуренс, М., 1939.
8. А. Mandelshtam, La Societe des Nations et les Puissances devant le problème Arménien; Paris, 1926.
9. "The Diplomacy of Imperialism", New York, 1851, p. 8.
10. «Մշակ»:
11. «Русская мысль».
12. «Новое время».
13. Л. Սկրտչյան, Ջեթրունի ապստամբությունը 1895–1896 թթ., Երևան, 1995:
14. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.
15. «Արդ»:
16. Милюков П. Н., Воспоминания, М., 1990, Գևն Г. Хальгартен, Империализм до 1914 года, М., 1961.
17. «Փորձ»:
18. Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов, под редакции проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.
19. АВПРИ, ф. "Политархив".
20. АВПРИ, ф. "Турецкий стол".
21. АВПРИ, ф. "Отчеты министерства иностранных дел за 1899 г. "
22. АВПРИ, ф. "Турция. Армянское дело".
23. АВПРИ, ф. "Посольство в Константинополе".
24. АВПРИ, ф. "Канцелярия".
25. АВПРИ, ф. "Г. А. 11-3".
26. ЦГВИА, ф. ВУА.
27. «Հնչակ»:
28. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Կ. Ա., Փարիզ, 1934:

29. Մ. Սմբատ Գարրիելյան, Հայկական ճգնաժամն ու վերածնունդ, Բուստոն, 1905:
30. J. Marriot, The Eastern Question in European Diplomacy, Oxford, 1917.
31. Ջարևանդ, Միացյալ անկախ թուրքերի, 1926:
32. Sbu Gamuran Gürün, Le Dossier Arménien ; Ankara 1984, Istanbul; Esat Uras Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Istanbul, 1976; Koca° Sadi Tarihi Boyunca Ermeniler Ve Türk-Ermeniler ili°kileri, Ankara, 1967.
33. Ա. Ս. Համբարյան, Ազգաբաղադրական հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965:
34. Н. Н. Голобородько, Турция, М., 1912.
35. «Новый восток».
36. А. Чемерзина, Турция, ее могущество и распадение, т. I, СПб, 1878.
37. Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:
38. Հ. Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
39. «Մասիս»:
40. Ա. Կիտուր, Հնչակյան զլխավոր ցույցերը, Բեյրութ, 1954:
41. А. К. Чихачев, Великие державы и Восточный вопрос, М., 1970.
42. «Նոր Հոսանք»:
43. Х. Ф. Б. Линч, Армения. Путевые очерки и этюды; т. II, Тифлис, 1910.
44. Խաժակ, Հարկերը Տաճկահայաստանում, Բագու, 1905:
45. «Նոր դար»:
46. М. Мак Коль, Султан и державы, СПб, 1897.
47. Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:
48. «Տեղեկագիր գավառական հարստահարությանը», Կ. Պոլիս, 1876:
49. «Новая жизнь».
50. J. Burt, The People of Ararat, London, 1926.
51. Ե. Թովսյան, Երիտասարդ թուրքերի և հայերը, Թիֆլիս, 1909:
52. Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:
53. «Турецкий сборник», СПб, 1868.
54. А. М. Пржевальский, Вилайет Эрзерум, ч. I, 1904.
55. Gamuran Gürün, Le Dossier Arménien; Ankara, 1984.
56. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը թուրքերից (1860-1910), Կ. Ս., Թիֆլիս, 1912:
57. А. И. Гиппиус, Статистические таблицы вилайетов турецкой империи ближайших Закавказью, Тифлис, 1889.
58. Ս. Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988:
59. ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեռի ֆոնդ:
60. Людвик де Контансон, Реформы в азиатской Турции. Армянский Вопрос, М., 1914.

61. «Известия министерства иностранных дел», кн. 11, 1913.
62. А. Мандельштам, Русская консульская юрисдикция в Турции и ее реформы СПб., 1906.
63. Ե. Խաթանջյան, Հայոց թիվը, Բուստոն, 1965.
64. Cark Y., Türk devleti Hismetinde Ermeniler 1453- 1953 Istanbul, 1953.
65. Cuinet V., La Turquie, d'Asie, Paris, 1894.
66. Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Թուրքական աղբյուրներ, հատ. IV , Երևան, 1972:
67. Карлайль Мак-Коан, Наш новый протекторат, М., 1884.
68. Koca° Sadi Boyunca Ermeniler Ve Türk-Ermeniler ili°kileri, Ankara, 1967.
69. Tovvib Cökbilgin, Millimügadele baþlzkan Mandros mütarekisimden Sivas kongresine, Birinci kitab, Ankara, 1959.
70. Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, vol. I, Ankara, 1950.
71. Bilal Shimsir, British Documents on Ottoman Armenians, Ankara, 1982.
72. Հ. Շահիրիկյան, Հայկական ռեֆորմները թուրքերից, 1926:
73. П. И. Аверьянов, Этнографический и внешнеполитический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912.
74. «СПб. ведомости».
75. «Новое слово».
76. Ubcini A., Lettres zur la Turquie ou Tableau Statistique religieuse... coninmercial de L'Empire Ottoman depuis le Khatti Sherif de Culhane (1839), s. 11, Les Raias (Crecs, Armeniens, Israelites, Latins), Paris, 1854.
77. Էլիզե Ռեկյու, Լազիստան, Հայաստան, Քուրդիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք և Պաղեստին, Վաղարշապատ, 1893:
78. Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, Բուստոն, 1947:
79. Е. К. Саркисян, Аграрная политика османского правительства в Западной Армении, Ереван, 1957.
80. Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении и великие державы в последней четверти XIX начале XX вв., Ереван, 1972.
81. А. Ф. Миллер, Краткая история Турции, М., 1948.
82. Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967:
83. Ю. Петросян, Младотурецкое движение, М., 1971, П. М. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией..., Тифлис, 1908.
84. Освобождение Болгарии от турецкого ига т. I, М., 1961.
85. Քր. Միքայելյան, Հեղափոխականի մտքեր, Ժնև, 1906:
86. Э. Ф. Найт, Революционный переворот в Турции, СПб., 1914.
87. А. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М., 1937.
88. Жюль Леклерк, Поездка на Арарат. Курды, езиды, армяне и Армянский вопрос, СПб., 1899.

90. «Արծազանք»:
91. Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Բ մաս, Թիֆլիս, 1882:
92. Карцов, Заметки о курдах, Тифлис, 1896.
93. «Կարմիր դրոշակ»:
94. «Голос».
95. Մ. Սերոբյան, Հայկական խնդիրն ու անոր փուլերը, Պոստոն, 1937:
96. Ալպոյաճյան, Մինաս Չերազ: Իր կյանքը և գործը, իր 60-ամյա հոբելյանի առթիվ, Գահիրե, 1927:
97. М. С. Лазарев, Курдский вопрос, М., 1972.
98. «Կոհակ»:
99. Л. Ошеровский, Трагедия армян—беженцев, СПб., 1916.
100. Ф. Грязнов, Военный обзор пердового театра азиатской Турции, т. II, СПб., 1897.
101. А. Ерусалимский, Внешняя политика и дипломатия Германского империализма в конце XIX века, М. Л., 1948.
102. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898.
103. «Արևելք»:
104. Hassert K., Das Türkische Reich, Thübingen 1918; P. Rohrbach, Die Wirtschaftliche Bedeutung Westasiens, Halle, 1902.
105. Յու. Շահպազեան, Զուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911:
106. Mandelstam A., Le Sort de L'Empire Ottoman, Paris, 1917.
107. Necip Fazil, Ulu Hakan Abdul Hamid han, Istanbul, 1965.
108. Ա. Կիրակոսյան, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999:
109. Խ. Գաբրիլյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860–1880), Պեյրուք, 1962:
110. Մ. Ավետյան, Յիսնամեայ հուշամատեան հայ ազատագրական շարժման 1870–1920 թթ. և զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954:
111. Элизе Реклю, Турция и Восточный вопрос, СПб., 1906.
112. «Кавказ».
113. «Русский курьер».
114. Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947:
115. Langer. W, L. The Diplomacy of Imperialism, 1890–1902, New York, 1935.

### 1894–1896 ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԶԱՐԴԵՐԸ ՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

#### *1. Հայկական հարցի ժխտման թուրքական վարկածը և ռուս հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումը*

Մերձավոր Արևելքը մշտապես եղել է եվրոպական տերությունների ռազմա-քաղաքական շահերի ու հետաքրքրությունների, նրանց կողմից գաղութային նոր տարածքների զավթման համար մղվող կատաղի ու անզիջում մրցապայքարի կիզակետը: Աշխարհաքաղաքական այդ տարածքում են հատվել Միջին ու Հեռավոր Արևելք, այնպես էլ նաև Հնդկաստան տանող ցամաքային ու ջրային հիմնական ուղիները, որի համար էլ այստեղ են խաչաձևվել տերությունների հակամարտությունները, որոնք ավելի բորբոքվեցին ու թեժացան XIX դարի 80–90–ական թվականներին, երբ արտաքին քաղաքականության բնագավառում ծայր առած անհաջողությունների և մասնավորապես 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում կրած պարտությունից հետո տարածքային խոշոր կորուստներ կրելով, թուլացած Օսմանյան կայսրությունը ընկավ ծանր հոգեվարքի մեջ: Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, ազգամիջյան բախումներն ու ներքին սոցիալական ցնցումները նրան մատնեցին շարունակական ճգնաժամի, որը ավելի էր խորացնում նրա մասնատման գործընթացը (1, 15):

Եվրոպական տերությունները, կանխազգալով Օսմանյան կայսրության մոտալուտ անկումը, ակնդետ հետևում էին նրա ներքին կյանքում զարգացող գործընթացներին ու սպասում էին նրա տարածքից իրենց հարմար պատահ ապկելու պահի հասունացմանը (2, 214)՝ իրար հակադրվելով երկարած գուժում էին զարգացման ընթացքից ետ մնացած, զառամյալ Օսմանյան կայսրության գոյության ժամանակաշրջանը (3):

Տերություններից յուրաքանչյուրը հավակնում էր տիրանալու թուրքական կայսրության ամբողջ տարածքին՝ չցանկանալով նրանից որևէ մասնիկ զիջել մյուսին, կարծելով, որ դրանով կխախտվի Եվրոպայի հավասարակշռությունը (4, 147): Հետևաբար, Օսմանյան կայսրության մասնատմանը միտված տերությունների ձգտումը, նրանց ներհակ շահերի ու հակամարտությունների ինչպես զաղտմի, այնպես էլ բացահայտ ու սուր բախումները վերածվում էին Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը անխախտ պահելու անզիջում մրցապայքարի:

Եվրոպական տերությունների դիվանագիտական խարդավանքների խոր գիտակ, նրանց ներհակ տարածայնություններին քաջածանոթ Աբդուլ Համիդ 2-րդը գերազանց կատարում էր տերություններից ուժեղի կամքը, իր համար բարենպաստ պահին հեշտությամբ անցնում էր մեկից դեպի մյուսը, գտնում էր ուժեղ հովանավոր, սիրաշահում էր, խոստումներ տալիս, որպեսզի հետո չկատարեր՝ (5), շեղում էր տերությունների ուշադրությունը իր համար տվյալ պահին գերխնդիր հիմնահարցից, ժամանակ էր շահում, խորամանկությամբ օգտվում տերությունների հակասություններից, նրանց հակադրում միմյանց, իր ցանկացած ձևով էր վճռում կայսրության առջև ծառացած բոլոր կարևոր հարցերը: Իր անկայունությամբ ու ներքին սոցիալական ժայթքումներով Օսմանյան կայսրությունը խոչընդոտում էր համաեվրոպական առաջընթացին: Այդ պատճառով տերությունները երբեմն Անգլիայի գլխավորությամբ միավորվում էին Թուրքիային Եվրոպայից վտարելու, հայ ժողովրդի ստոր դահիճ (6, 413) Բոսֆորի գարշելի պահակ սուլթանին հեռացնելու մտադրությամբ, սակայն անմիջապես վարանում էին այն մտավախությամբ, որ դրանով իրենք նպաստում են այդ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը, ուստի վերջինիս դիմակայելու համար պաշտպանում ու ուժեղացնում էին Թուրքիային: Տերությունների դիվանագիտական խաղերի ընթացքում համարյա միշտ ստեղծվում էր այնպիսի իրավիճակ, երբ նրանց ու թուրքական տիրապետող խավերի շահերը համընկնում էին, և երկու կողմերի նպատակը նույնանում էր, այն է՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անձեռնմխելիությունը և նրանում տիրող փոխհարաբերությունների հավերժացումը (7, 65): Եվրոպական տերությունները մշտապես հետամուտ լինելով իրենց շահադիտական նպատակներին, կենսունակություն էին հաղորդում Օսմանյան հիվանդ, իր դարն ապրած գառամյալ կայսրության փտած մարմնին, երկա-

րածգում էին նրա գոյության ժամանակաշրջանը: Դեռևս 1853–1856 թթ. Արևելյան պատերազմում Անգլիան Թուրքիայի թիկունքում ընդդեմ Ռուսաստանի միավորելով եվրոպական տերություններին՝ ձեռք բերեց կարևոր հաղթանակ, որից հետո Ֆրանսիայի հետ համագործակցած իրենց ազդեցությանը ենթարկեցին Թուրքիայի տնտեսությունն ու ֆինանսները, վերահսկողություն հաստատեցին նրա ներքին ու արտաքին քաղաքականության վրա (8, 98):

Շարունակելով Մերձավոր Արևելքում իր ազդեցության ոլորտի ընդլայնումն ու հիմնավորումը՝ Անգլիան նոր հաջողության հասավ 1878 թ. Բեռլինի կոնգրեսում, ուր համաձայնության գալով Ֆրանսիայի և կոնգրեսին մասնակից մյուս տերությունների հետ, թուրքական պաշտոնյաների խոստովանությամբ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի սանձազերծման գլխավոր դերակատար Անգլիան, Գերմանիայի լռիչ համաձայնությամբ չեզոքացնելով Ռուսաստանին (9, 107), նրան զրկեց հաղթական պատերազմի արդյունքներից և վերածնելով Սան Ստեֆանոյի Ռուսաստանի գերակայությամբ կնքված պայմանագիրը, իրեն հռչակեց Օսմանյան կայսրության հովանավոր (10, 1896, 12, 857), այդ ժառանգության համար որպես հատուցում «ստացավ» Կիպրոս կղզին (11, 1918, 272): Անգլիական խորամանկ դիվանագիտությունը հանուն իր ապագա նպատակների կարողացավ շահել սուլթանի համակրանքը, միաժամանակ վերջինիս հնարավորություն ընձեռեց ամրապնդելու իր իշխանությունը (12, 686): Օսմանյան կայսրության պաշտպանության քողի տակ պայքար ծավալելով Ռուսաստանի դեմ՝ Անգլիան հետզհետե իր գերիշխանությունը տարածեց ողջ Մերձավոր Արևելքում ու Փոքր Ասիայում (13, 3) և Կիպրոսի ու 1882 թ. Եգիպտոսի բռնազավթումով Թուրքիայի մասնատումը կատարեց (14, 123):

Մերձավոր Արևելքում Անգլիայի ազդեցության ուժեղացման հետևանքով ծայրահեղորեն սրվեցին ռուս–անգլիական հարաբերությունները, որոնք շփման կետեր ունեին Բոսֆորի նեղուցից սկսած մինչև Խաղաղ օվկիանոսը ձգվող Ասիայի երկրներում:

Միջին Ասիան նվաճելուց հետո Ռուսաստանը արդեն մոտենում էր Բրիտանական Հնդկաստանին, իսկ Անդրկովկասից Հայկական բարձրավանդակի վրայով հարձարավետ ուղի էր բացվում դեպի Փոքր Ասիայի խորքերը, այնտեղից՝ Միջերկրական ծով, ինչպես նաև Միջագետք ու նրա վրայով Սուեզի ջրանցք ու նրա հարակից շրջանները (16, 34):

Ռուսաստանի այդ հաջողություններին տագնապով էին հետևում Անգլիայում: Բրիտանական կառավարությանը անհանգստացնում էր այն միտքը, որ Միջին Ասիայի վրա Ռուսաստանի ազդեցության մեծացումը վտանգ էր սպառնում նրա Չնդկաստանի տիրույթներին, իսկ Սև ծովի նեղուցների նկատմամբ ռուսական յուրաքանչյուր ակնարկ հարվածում էր նրա շահերին Միջերկրական ծովում (19, 170), ինչպես նաև փակում էր Անգլիայի՝ դեպի Պարսից ծոց ձգվող ցամաքային առևտրական ուղին: Չետևաբար Մերձավոր Արևելքում առավել սրության հասավ այդ տարածաշրջանում գերակա ազդեցության ձգտող Անգլիայի և Ռուսաստանի միջև ծավալվող մրցապայքարը, որի կենտրոնում, ի դժբախտություն հայ ժողովրդի, հայտնվեց Չայկական հարցը: Եվ որքան թեժանում էին ռուս-անգլիական հակամարտությունները, այնքան ծանր ու ողբերգական էր դառնում առանց այդ էլ արևմտահայության անհույս ու դաժան վիճակը:

Ինչպես Անգլիան, այնպես էլ ցարիզմը աշխատում էին Չայկական հարցը ծառայեցնել իրենց շահերին ու ձգտումներին համապատասխան՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, իրենց ազդեցությունը սուլթանի վրա հաստատելու, նրանից շահավետ արտոնություններ կորզելու համար: Նրանք Չայկական հարցը օգտագործելով որպես դիվանագիտական խաղաքարտ ու հայկական բարեփոխումների շուրջը սակարկելով սուլթանի հետ՝ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ու իր դարավոր հայրենիքից նրա մնացորդների վերացման գլխավոր դրդապատճառը հանդիսացան (18, 45):

Տերությունների քմահաճույքին հանձնված Չայկական հարցը երկար ժամանակ մոռացության մատնվեց, որը հնարավորություն ընձեռեց սուլթան Աբդուլ Չամիդին առավելապես ուժգնացնելու կառավարության առանց այդ էլ հակահայկական կողմնորոշումը, պայմաններ նախապատրաստելու և իրականացնելու արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր ծրագիրը:

1880 թ. հունիսի 11-ին մեծ տերությունները սուլթանին ներկայացրին համաձայնագրի հիշեցնելով 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների մասին: «Պատմութեան մեջ առաջին անգամն ըլլալով, - գրում է Մ. Սեբոթյանը, - եվրոպական դիվանագիտութիւնը այս նոտայով կգբաղվի Չայկական հարցով» (20, 176):

Սակայն տերությունների նոտան անատամ էր, բարենորոգումների ու արևմտահայերի դրության բարելավման սանկցիա չէր պարունակում, որի

համար էլ թուրքական պատասխանը մանվածապատ էր, հաղորդած տվյալները՝ կեղծ, ձեռնարկած միջոցառումների կատարման մասին տեղեկատվությունը՝ շինծու: Սուլթանը և տերությունները միմյանց լեզուն լավ էին հասկանում: Սուլթանը բարեհոգաբար եվրոպային խոստումներ էր տալիս բարեփոխումների կատարման մասին ու միաժամանակ միջոցներ էր որոնում դրանք չկատարելու համար:

Արևմտյան Չայաստանում և կայսրության մյուս հայաբնակ վիլայեթներում տերությունների հյուպատոսների կողմից հայ ժողովրդի վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թուրքական կառավարության պատասխանը ամբողջությամբ կեղծ է: Չյուպատոսները տագնապալի լուրեր էին հաղորդում երկրում ստեղծված անիշխանության, կյանքի ու գույքի անապահովության, մշտական դարձած սպանությունների մասին, որի «շարունակությունը կարող էր հանգեցնել այդ լայնածավալ շրջանների ամբողջ քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացմանը» (19, 95): Վանից 1882 թ. թիվ 12 գրությամբ փոխիյուպատոս Կանսարականը դեսպան Նովիկովին տեղեկացնում էր. «Բարձր պաշտոնյաները բացահայտ մշում են, որ այստեղ նախապատրաստվում է երկրորդ Բուլղարիա, որ նրանք (թուրքերը, - Պ. Ս.) զինված այդ փորձով կարող են խեղդել կառավարության համար թշնամաբար տրամադրված տարրերին և այդ կերպ մեկ անգամ ընդմիջտ վերջ տալ Չայկական հարցին» (21, 9): Տերությունները նույն թվականի սեպտեմբերի 11-ին սուլթանին ներկայացրին կոլեկտիվ նոտա (19, 96): «Այդ ընդարձակ նոտայի տողերի միջև, - գրում է Մ. Գ. Ռոլեն ժեկմենը, - առանց դժվարության կարելի է նկատել Չայաստանի հովանավորների վիճակի թուլությունը: Վերջնական նպատակի համար նրանք համերաշխ են, սակայն իր պարտականությունների կատարումից Թուրքիայի հրաժարվելու դեպքում նրա նկատմամբ գործադրվող միջոցների խնդրում նրանք համաձայնությունից շատ հեռու են» (19, 103): Արդարացի էր Ռոլեն ժեկմենը. նշելով «Կատարվեց այն, ինչ պետք է լիներ ... Տերությունների լեզուն ուժեղ էր այնքանով, - շարունակում է նա, - որպեսզի բնակչության հույսերը աշխուժացնեն... սակայն այնքան ուժեղ չէ, որպեսզի Բ. Դռանը զգացնել տա այն վտանգի մասին, որը ստեղծվել է նրա անբարյացակամության ու անգործունեության պատճառով» (19, 104): Սուլթանը ոչ մի ուշադրություն չդարձնելով տերությունների կողմից կատարված «դիտողություններին», արհամարհելով նրանց կոլեկտիվ նոտան, թիկունքում ունենալով

Գերմանիային ու Ավստրո-Յունգարիային, սկսեց գործել ավելի ինքնավատահ (20, 90), հայտարարեց, որ «մտադրություն ունի իրագործել առաջադրվածը» (20, 104): Պատասխանի նման տոնը նկատի ունենալով՝ Ռուլեն ժեկմենը գրում էր. «Այդ փաստաթուղթը ուշագրավ էր միայն նրանով, որ ոչ խոստանում էր և ոչ էլ չէր խոստանում» (19, 104):

Իր տերության հեղինակության պահպանման նպատակով 1881 թ. հունվարի 12-ին լորդ Գրանվիլը հանձնարարեց Փարիզի, Բեռլինի, Պետերբուրգի, Յոնի և Վիեննայի բրիտանական դեսպաններին՝ առաջարկել տերություններին Չայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար համատեղ ճնշում գործադրել սուլթանի վրա: Սակայն տերություններից ոչ մեկը համարձակություն չցուցաբերեց և պատճառաբանելով իրենց ներքին հոգսերը, հրաժարվեցին:

Մերձավոր Արևելքում Գերմանիայի հեռավոր նպատակները իրագործելու մտահոգությամբ Օ. Բիսմարկը սուլթանին մեծ ծառայություն մատուցեց: Նրա առաջարկությամբ Օ. Ռասսելը լորդ Գրանվիլին 1881 թ. հունվարի 27-ին հայտնեց. «Երբ հունական հարցը կվճռվի, կգա հայկական բարենորոգումների բարձրացման պահը» (19, 110): Չայկական բարենորոգումների մասին տերությունների «ոգևորությունը» մարեց, նրանց դիվանագիտական օրակարգից հարցը ժամանակավորապես հանվեց: Եվրոպական բոլոր տերությունների և առանձնապես Անգլիայի համար Արևմտյան Չայաստանում և Թուրքիայի մյուս հայաբնակ վիլայեթներում սուլթանի տիրապետության անխախտ պահպանումն ուներ կենսական արժեք, տնտեսական, քաղաքական և ռազմավարական նշանակություն:

Բրիտանական կառավարությունը Չայկական հարցը իր մերձավոր արևելյան քաղաքականության մեջ օգտագործում էր դիվանագիտական արվեստի ամենանուրբ ու խորամանկ դրսևորումներով, գործադրելով նրա հնարավոր ու անհնար կիրարկման բոլոր ձևերն ու խորամանկ հնարները: Ռուսաստանին Փոքր Ասիայից ու Սև ծովի նեղուցներից հեռու պահելու նպատակով սուլթանին ահաբեկում էր այդ տարածքների ռուսական գրավման վտանգով (22, 1872, 189): Երբ անհրաժեշտ էր լինում Թուրքիայից որոշ տարածք պոկել, սուլթանից ստանալ որևէ արտոնություն, բրիտանական հյուպատոսները մեծ ջանադրությամբ Արևմտյան Չայաստանից և հայաբնակ մյուս վիլայեթներից ուղարկած զեկուցագրերով մանրամասն տեղեկություններ էին հաղորդում հայ ազգաբնակչության ողբերգական վիճա-

կի, քրդական ասպատակությունների ու բռնության, թուրքական իշխանությունների մասին: Այդ տեղեկությունները դիվանագիտական ուղիներով, լրագրերի ու հասարակական կազմակերպությունների միջոցով հասնում էին եվրոպական հասարակայնությանը, որը ալեկոծվում էր հայ բնակչության կրած ահավոր սարսափներից: Սկսվում էր հայկական արյան շուրջ բրիտանական դիվանագետների և սուլթանի անվերջ սակարկումների պահը: «Եթե Բ. Դուռը չզգուշանա և խելացի կերպով բարենորոգումներ չսկսի, – նշում էր Լայարդը, – կարող է պատահի, որ մի օր Չայկական հարցը արծածվի այնպես, ինչպես բուլղարականը եղավ... հավանական է, որ, – շարունակում էր նա, – այնպիսի դեպքեր պատահեն, որ սարսափի աղաղակներ խլեն քրիստոնյա ազգաբնակչության կողմից և հանգի եվրոպական միջամտության» (20, 83): Անգլիական խորամանկ դիվանագիտությունը այդ ճանապարհով լուծում էր իր համար երկու կարևոր խնդիր: Նախ՝ հասարակական կարծիքը լռեցնելու համար ցույց էր տալիս, որ Անգլիան կատարել է ամեն ինչ, որ կարող էր, և երկրորդ, քանի որ մյուս տերությունները չհամագործակցեցին, ուստի ինքը միայնակ ոչինչ անել չի կարող (18, 124): Անգլիական դիվանագիտությունը «իր այս խղճուկ նախաձեռնությամբ, – գրում է Լեոն, – ծաղրական արշաւով և խայտառակ փախուստով մի կատարեալ աղետ էր բերում անօգնական գերի գյուղական ժողովրդի գլխին, որին իբր թե ուզում էր օգնել»: Անգլիան իր այդ գործողություններով արևմտահայության մեջ հույսեր արթնացրեց և հայերի դիակների վրայով շարժվեց դեպի Նեղոսի ափերը, օգտվելով հարմար պահից բռնազավթեց Եգիպտոսը (18, 125): Տերություններին դիմագրավելու նպատակով աշխատում էր իր կողմը գրավել Գերմանիային, նրան հակադրելով Ռուսաստանին, իսկ վերջինիս ներքաշում էր սուլթանի հետ կոնֆլիկտի մեջ, առաջարկելով գրավել Սև ծովի նեղուցները և Արևմտյան Չայաստանը (24, 12): Սակայն ցարիզմը կռահելով Անգլիայի այդ խորամանկ նպատակը ու չցանկանալով վատացնել իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ, հրաժարվեց նրա այդ հրապուրիչ առաջարկից: Հետագայում սուլթանի հետ իր հարաբերությունները հարթելու համար Անգլիան մույնիսկ փորձեր էր անում հրաժարվելու Փոքր Ասիայում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ իր ստանձնած պարտավորություններից և Չայկական հարցում հանդես էր գալիս որպես մեկն այն տերություններից, որոնք ստորագրել են Բեռլինի պայմանագիրը (18, 122): Դրանով խորամանկ Ալբիոնը ցանկանում էր հիմնավորել, որ առանց մյուս

տերությունների ինքը միայնակ գործել չի կարող: Սակայն այդ ամենը դիվանագիտական խաղեր էին, իրականում թուրք-անգլիական շահերը սերտորեն շաղկապված էին միմյանց (23, 205): Անգլիան հանուն իր շահերի մշտապես պաշտպանում էր սուլթանին, որով հավերժացնում էր թուրքահպատակ քրիստոնյաների ստրկության ժամանակաշրջանը (25, 204): Բրիտանական դիվանագիտությունը հավատարիմ էր սուլթանի թշնամիները իր թշնամիներն են, նրա բարեկամները՝ իր բարեկամները սկզբունքին: Իսկ երբեմն հայկական բարենորոգումների հարցի բարձրացումը Անգլիայի կողմից ուղղված էր ոչ թե թուրքիայի, այլ Ռուսաստանի դեմ (26, 52): Դրանով մա աշխատում էր կանխել թուրքիայում Ռուսաստանի ազդեցության հնարավոր հաստատումը: Հետևաբար անգլո-ռուսական հակամարտությունները Մերձավոր Արևելքում մնում էին որպես մշտապես անթելված կրակ, որի հաճախակի բռնկվող բոցերից սուլթանի ակտիվ միջամտությամբ հրդեհվում էին հայկական հարյուրավոր բնակավայրեր:

Յուրաքանչյուր անգամ, երբ մեծ տերությունները իրենց շահերի թելադրանքով սրում էին Հայկական հարցը, ի դեպ, տերություններից ոչ մեկը և ոչ մի անգամ հանուն կոտորվող արևմտահայության այդ հարցը չի բարձրացրել, աշխույժ դիվանագիտական գրագրություն ծավալելով միմյանց ու սուլթանի միջև այն ավարտում էին անարդյունք, որպես դիվանագիտական կատակերգություն: Սուլթանը խորամանկորեն օգտվում էր տերությունների տարածայնություններից ու նրանց միջև եղած հակամարտություններից, շահելով նրանցից հզորի հովանավորությունը, ավելի էր ուժեղացնում իր հարձակումները արևմտահայության դեմ: Իսկ իրենց մարդասիրական պարտքը կատարած տերությունները «անորոշ ժամանակով սառեցնում էին Հայկական հարցը» (27, 1897, 41):

Ռուս-թուրքական բոլոր պատերազմների փորձը և հատկապես 1877-1878 թթ. պատերազմի արդյունքները ցարիզմին համոզեցին, որ եվրոպական տերությունները, միշտ հայտնվելով թուրքիայի թիկունքում ընդդեմ Ռուսաստանի, արդյունքում շահում էին նրանք: 1878 թ. Բեռլինի կոնգրեսում տերությունները պատերազմական սպառնալիքով հարկադրեցին Ռուսաստանին հրաժարվել հաղթանակի արդյունքներից, հարցերի քննարկումը տարան իրենց շահերին ու ձգտումներին համապատասխան հունով: Ցարիզմի համար պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրության դեմ մղած հաղթական պատերազմներով մերձավոր Արևելքում գերակշիռ ազդեցու-

թյուն հաստատելը անհնարին է, ուստի իր առջև խնդիր դրեց այդ նպատակին հասնել շրջանցիկ ճանապարհով (28, 102), այն է՝ սուլթանի վրա միակողմանի ազդեցության հաստատումով մյուս տերություններին արտամղել այդ տարածաշրջանից: Դրանով ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության բնագավառում տեղի ունեցավ վերակողմնորոշում: Այժմ նա վերածվեց Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և նրա անձեռնմխելիության պաշտպանի: Այդ հանգամանքով էր պայմանավորված նաև ցարիզմի Հայկական հարցում որդեգրած նոր դիրքորոշումը: Այժմ նրա համար այլևս նպատակահարմար չէր սրել ու միջազգային քննարկման խնդիր դարձնել Հայկական հարցը (24, 12): Աշխատելով սուլթանին պահել իր ազդեցության ոլորտում՝ Օսմանյան կայսրության նկատմամբ նա սկսեց վարել թողտվության, իսկ Հայկական հարցում որդեգրեց զգուշավոր քաղաքականություն: Նա մի կողմից չէր խրախուսում Հայկական հարցը, իսկ մյուս կողմից ձգտում էր չկորցնել իր հանդեպ արևմտահայության հավատն ու վստահությունը (29, Ժ. 3431, և. 227): Առաջադեմ մտածող ու 90-ական թվականներին հասարակական կարծիքին տոն տվող հրապարակախոս Ա. Ն. Սազոնովը անվախ քննադատության ենթարկելով ցարական հետադեմ գործիչներին ու իր պաշտպանության տակ վերցնելով հայ ժողովրդին, գրում էր. «Սակայն ճշմարիտ ռուսական շահերի տեսակետից, որը արժանի է մեծ ու հզոր տերությանը, նման մոտեցումը սխալ է» (30, 1896, 11, 12):

Հարկ է նշել, որ ցարիզմի համար այդ նոր կողմնորոշումը կրում էր ժամանակավոր բնույթ, և բնականաբար, փոփոխության էր ենթարկվում նրա ոչ թե արտաքին քաղաքականության ուղղվածությունը, այլ այդ տարածաշրջանում զլխավոր նպատակին միտված գործելակերպը (29, Ժ. 3431, և. 227): Սև ծովի նեղուցների ու Արևմտյան Հայաստանի գրավումը երբեք էլ օրակարգից չէին հանվում, դրանք ցարիզմի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներ էին (31, 1897, և. 3), որոնք կենսագործելու համար նա օգտագործում էր բոլոր հնարավոր միջոցները (32, 6), քանի որ Բալկանների վրայով նեղուցները տանող ճանապարհը փակվելուց հետո Միջերկրական ծովը ձգվող ճանապարհը այժմ անցնում էր Հայկական լեռնաշխարհի վրայով (33, 562-563): Ուստի ցարական դիվանագետները կառավարությունից հրահանգ ստանալով չսրել Հայկական հարցը, միաժամանակ բոլորովին էլ անտարբեր չէին նրա զարգացումների նկատմամբ (29, Ժ. 1632, և. 72-75) և ամեն առիթ օգտագործում էին ռուս-թուրքական մերձեցման համար: Մեր-

ծավոր Արևելքում Անգլիայի գործողություններին ակնդետ հետևող ցարական դիվանագիտությունը 1882 թ. Անգլիայի կողմից Եգիպտոսի բռնազավթումից հետո Թուրքիայում հասավ մեծ հաջողության, տեղի ունեցավ ցարիզմի և սուլթանական կառավարության ցանկալի մերձեցումը (34, 121): Որքան խորանում ու ջերմանում էին ռուս-թուրքական հարաբերությունները, նույնքան բորբոքվում ու սրվում էին ռուս-անգլիական հակամարտությունները: Եվ ցարիզմը, և անգլիական կառավարությունը սուլթանի հետ իրենց հարաբերությունների կարգավորման ընթացքում շահարկում էին Չայկական հարցը:

Սուլթանին ամբողջ խորությամբ հայտնի էին ինչպես ռուսական, այնպես էլ անգլիական կառավարող շրջանների Մերձավոր Արևելքում և մասնավորապես Թուրքիայում ունեցած շահերն ու փոխադարձ հակամարտությունները, մասնավոր համոզված էր, որ ցարիզմը չի կարող անտարբեր լինել իր սահմանների հարևանությամբ անգլիական ազդեցության հաստատմանը (29, Ժ. 3449, յ. 6), աշխատում էր ավելի սրել նրանց հակամարտությունները Չայկական հարցում իրեն ազատ զգալու համար: Խուսանավելով ու խորանակորեն օգտվելով տերությունների միջև եղած հակամարտություններից՝ Աբդուլ Ռամիդը նախապատրաստվում էր արևմտահայության դեմ վճռական գործողությունների: Այդ նպատակով կայսրությունում ու նրա սահմաններից դուրս հակահայկական հասարակական կարծիք ստեղծելու համար միտումնավոր կերպով թուրքական իշխանությունները կեղծ լուրեր էին տարածում Թուրքիայում «հայկական հրոսակախմբերի» ու հայ ազիտատորների կողմից ծավալվող հակակառավարական քարոզչության, զինված ելույթների մասին: Բ. Դուռը և սուլթանը ցանկանում էին եվրոպական հասարակական կարծիքը ապակողմնորոշել ու տերությունների առջև արդարանալ ապագա ջարդարարական գործողությունների համար:

Թուրքական պաշտոնական շրջանները ժխտում էին Թուրքիայում Չայկական հարցի գոյությունը և ճգնում էին հիմնավորել, որ նրա համար Թուրքիայում ձևավորման հիմքեր չկան, քանի որ հայերը մշտապես գտնվել են բարեխնամ կառավարության հովանու ներքո, ապրել են բարեկեցիկ կյանքով, մահմեդական հարևանների հետ եղել են հաշտ ու խաղաղ, օգտվել են սուլթանի մյուս հպատակների հետ հավասար իրավունքներից, նրանցից շատերը զբաղեցրել են բարձր պաշտոններ: Չայերի ապահովությունը երաշխավորվել է հատուկ հրահանգով (ֆերմանով): Սակայն հայերը օտար

տերությունների խրախուսանքով, դառնալով նրանց ձեռքին հասարակ գործիք, դավաճանեցին իրենց կառավարությանը (35):

Ցանկանալով խեղաթյուրել Չայկական հարցը ու ընդգծելով, որ Թուրքիայում միջցեղային ատելություն մահմեդականների ու քրիստոնյաների միջև գոյություն չի ունեցել, ձգտում են ցույց տալ, որ Չայկական հարցը տեղում չի ծագել, այլ ներմուծվել է դրսից: Թուրք պատմաբան Էնվեր Ջիյա Կարալը, մերժելով արևմտահայության ազգային-ազատագրական շարժման օրինաչափությունը, գտնում է, որ «Չայկական շարժումը առաջացել է ոչ թե թուրքահայերի միջավայրում, այլ ներմուծվել է Ռուսաստանում և եվրոպական երկրներում բնակվող հայերի կողմից: Տերությունները ցանկանում էին օգուտ քաղել Չայկական հարցից» (36, 126): Մեկ այլ թուրք պատմաբան Բիլիալ Շիմշիրը «Բրիտանական փաստաթղթերը օսմանյան հայերի մասին» փաստաթղթերի ժողովածուի մեջ անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին ու Չայկական հարցի ծագմանը, գտնում է, որ դարեր շարունակ հայ և մահմեդական ազգաբնակչությունը հաշտ ու խաղաղ ապրել են հարևանությամբ, նրանց միջև ազգային ատելություն գոյություն չուներ, հայերի իրավունքը ձևակերպված էր կառավարության հատուկ ֆերմանով, սակայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո քրիստոնյա և մահմեդական համայնքների միջև ձևավորվեցին միջհամայնքային անհամաձայնության սաղմերը, հայերը տերությունների շահերին համեմատ խաղալիք դարձան նրանց ձեռքին, ու ձևավորվեց Չայկական հարցը (37, 116-118): Չեղինակը, իրավացիորեն Չայկական հարցը համարում է տերությունների ձեռքին հասարակ խաղալիք, սակայն չարաչար սխալվում է, երբ Չայկական հարցի ծագումը բացատրում է արտաքին հանգամանքներով: Նա գիտակցաբար շրջանցում ու խեղաթյուրում էր հանրահայտ այն ճշմարտությունը, որ թուրքական վարչակարգի հայահալած քաղաքականությունը հայ ժողովրդին հասցրել է հուսահատության, նրա առջև թուրքական բարբարոսները դրել էին ճակատագրական խնդիր՝ ոչնչանալ կամ գոյատևել պայքարով, ուստի Չայկական հարցը թուրքական բռնակալական կարգերի դեմ հայ ժողովրդի դարավոր գոյապայքարի բնապատմական արդյունքն է:

Պատմաբան Ի. Չարքը հայ-թուրքական հարաբերությունները և հայերի վիճակը Թուրքիայում ներկայացնում է իդեալական գույներով, նշելով, որ բազմաթիվ երևելի հայեր գրավում էին կառավարական բարձր պաշտոն-

ներ, և օգտվում էին սուլթանի մահմեդական հպատակների հետ նույն իրավունքներից: Սակայն տերությունների միջամտությամբ ցանկանալով ստեղծել ինքնուրույն պետություն, ըստ նրա, հայերը դավաճանել են իրենց կառավարությանը և հարձակվելով մահմեդական բնակչության վրա, առաջ են բերել անկարգություններ, խախտել են անդորրը (38, 239–240):

Թուրքական իշխանությունների այս արհեստածին ու իրականության հետ կապ չունեցող ստահող վարկածը կեղծ էր ու մտացածին: Այն կյանքի էր կոչվել Թուրքիայում Չայկական հարցի գոյությունը ժխտելու, կոծկելու արևմտահայության իրավագուրկ ու անելանելի վիճակը, զանգվածային ջարդերի ու զազանային արարքների պատասխանատվությունից խուսափելու և միջազգային հանրության առջև արդարանալու համար: Իրականում հայ ժողովուրդը Թուրքիայում զրկված էր կյանքի և գույքի ապահովության և ամենակարևորը՝ ինքնապաշտպանության իրավունքից: Չայ ժողովրդի իրավագուրկ ու անպաշտպան լինելու խնդրին անդրադառնալով՝ «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը նշում է. «Սուլթանի կողմից հռչակած հավասարությունը օրենքի առջև մահմեդականների և քրիստոնյաների համար միայն դատարկ հնչյուն է, որովհետև ասիական պետությունում բացակայում է օրենքի ու օրինականության մասին ըմբռնումն անգամ, այնտեղ, – շարունակում է նա, – քրիստոնյաների հանդեպ բռնությունները դիտում են ոչ միայն օրինական, այլ նաև աստվածահաճո գործ» (39, 1895, 303): Թուրքիայում տիրապետում էր անսանձ անօրինականությունն ու բռնությունը: Կառավարության կողմից ընդունված օրենքները ամենուրեք շրջանցվում էին իշխանության տարբեր օղակների կողմից: Հպատակ քրիստոնյա ռայան իրավագուրկ էր ու ենթակա տիրողների բիրտ կամայականությանը, քանի որ «... Թուրքերը հանդիսացել են ուժի միջոցով կառավարման ներկայացուցիչներ, ի հակադրություն օրենքի միջոցով կառավարման» (40, 6), ուստի Թուրքիայում օրինականությունը և հայերի իրավունքները մշտապես ոտնահարվում էին: Թուրքիայում հայերի բարեկեցության ու սուլթանի կողմից հայերի նկատմամբ բարյացակամության մասին թուրքական պաշտոնական շրջանների հայտարարությունները անհիմն էին ու կեղծ: Այդ խնդրին անդրադառնալով՝ «Ռուսսկիյ լիստոկ» լրագիրը նշում էր. «սուլթանը հայերի հանդեպ վարում էր երկդիմի, երեսպաշտական քաղաքականություն: Նա արտաքին էֆեկտ էր ստեղծում, որ իբր թե հարգում և հովանավորում է հայերին, խորամանկորեն խուսանավում էր եվրոպական տերություն-

ների հետ հարաբերության ընթացքում: Խոստանում էր անցկացնել բարեփոխություններ, հայերին տալ լիարժեք իրավունքներ, սակայն նենգաբար կոտորում էր նրանց» (41, 1896, 360):

19-րդ դարի 90-ական թվականներին Աբդուլ Համիդ 2-րդը օգտվելով տերությունների միջև խորացող հակամարտություններից ու Չայկական հարցում նրանց անտարբերությունից, երկրում ստեղծելով հակահայկական հասարակական կարծիք, օգտագործելով մահմեդական հոգևորականությանն ու մոլեռանդ մահմեդական ամբոխի ջարդարարական մոլուցքը, զինելով համիդիե զնդերը, պատերազմ հայտարարեց խաղաղ ու անզեն հայ ժողովրդին՝ ցանկանալով հարցը լուծել զանգվածային ջարդերով:

1890 թ. հունիսի 18-ին թաքցրած զենք փնտրելու պատրվակով իշխանությունները վայրագություններով ուղեկցվող խուզարկություններ անցկացրին Կարինի Ս. Աստվածածին եկեղեցում և Սանասարյան դպրոցում: Չայկական սրբությունների անարգման ու պղծման այդ գործողությունները առաջացրին մեծ հուզում: Թուրքական կառավարությունը, այն դիտելով հայերի անհնազանդություն իշխանությունների դեմ, մոլեռանդ ամբոխի ու զինվորների ակտիվ միջամտությամբ կազմակերպեց հայկական ջարդեր (42), և այդ արյունածոր իրադարձությունները ալիքվելով շարունակվեցին մինչև հարյուրամյակի ավարտը:

Կարինի իրադարձությունները արձագանք գտան ողջ Չայաստանով մեկ, մասնավորապես Վանում, Մուշում, սակայն իշխանությունների հետ վճռական բախումներ չեղան (43): Շուտով Կ. Պոլսում, հուլիսի 15-ին Գում-Գափուի մայր եկեղեցում պատարագի ժամանակ հնչակյան գործիչների պահանջով պատրիարք Խորեն Աջրզյանը դադարեցնում է պատարագը և հանձն է առնում առաջարկված կոչ-պահանջագիրը ներկայացնել սուլթանին: Սակայն խաղաղ ցույցը գնդակոծվում է ոստիկանների ու զինվորների կողմից (44, 1890, 212): Տերությունների ուշադրությունը Չայկական հարցի վրա զրավելու և բարենորոգումները արագացնելու նպատակով Յնչակյան կուսակցության կողմից կազմակերպված ցույցը ավարտվեց արյունահեղությամբ: Հարյուրավոր անմեղ հայեր բանտ նետվեցին, ենթարկվեցին ծանր կտտանքների ու խոշտանգվեցին:

Կարինում և Կ. Պոլսում տեղի ունեցած իրադարձությունները ապագա մեծ արյունահեղության առաջին ձեռնարկումներն էին: Սուլթան Համիդ 2-րդը խորամանկորեն ուսումնասիրում էր այդ հարցում տերությունների

վարքագիծը, զգուշանում էր նրանց հնարավոր միջամտությունից: Մշտական դարձած բռնություններով ու սրբապղծություններով ուղեկցվող հայկական հասարակական հիմնարկների, եկեղեցիների, դպրոցների ու մասնավոր տների խուզարկությամբ իշխանությունները մարտահրավեր էին նետում հայ բնակչությանը, գիտակցաբար բորբոքելով հայ բնակչությանը իրենց ճնշող քրդերի դեմ, նրանց արհեստականորեն մղում էին բացահայտ ելույթի (45, 1892, 41), նախապատրաստելով արևմտահայության դեմ վճռական հարձակման: Եվ այն երկար սպասեցնել չտվեց: Արյունարբու սուլթանի մահաբեր հարվածն առաջինը իր վրա կրեց Սասունի հայ բնակչությունը:

Սասունի դեմ թուրքական իշխանությունների ոտնձգությունները սկսվեցին դեռևս 1893 թվականից, սակայն հիմնական իրադարձությունները ծավալվեցին 1894 թ. հուլիս–օգոստոս ամիսներին (19, 227–324) երբ սասնահայությանը պատժելու նպատակով Մուշ ուղարկվեցին զինվորական խոշոր կազմավորումներ, որոնք հետագայում համալրվեցին համիդիե քրդական զնդերով: Սասունի հայ բնակչությունը, կռահելով կառավարության մտադրությունները, դիմեց ինքնապաշտպանության (46, 199–202): Գոյապայքարի ելած հայ ազգաբնակչության անձնագոհությունը, հերոսական ընդվզումն ու ազատության ձգտումը այնքան հզոր էր, որ նույնիսկ թուրքական կողմը ստիպված էր այդ մասին գովեստի խոսք ասել:

Սասունում, Ջեթունում, Արևմտյան Հայաստանի այլ վայրերում համիդիե քրդական զնդերի, կառավարական զորամասերի ու թալանի և ավարառության ծարավ մոլեռանդ մահմեդական խուժանի դեմ գոյապայքարի ընթացքում հայ ժողովուրդը խիզախության ու անձնագոհ հերոսության բազում էջեր գրեց, սակայն դա քննարկման այլ հարց է և մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, մանավանդ այն հանգամանորեն լուսաբանվել է հայ պատմագրության կողմից (48):

Չնայած Սասունի լեռնային տեղանքը հայ բնակչությանը պաշտպանվելու ու ռազմական գործողությունները ակտիվորեն վարելու մեծ հնարավորություն ու առավելություն էին ընձեռում, սակայն պարենի և հատկապես ռազմամթերքի սպառման հետևանքով թշնամուն հաջողվեց կտրել սասունցիների դիմադրությունը և իրագործել սովի ենթարկված ուժասպառ հայ բնակչության գազանային կոտորածը:

Մարդկային դեմքը կորցրած վայրի քրդերի ու թուրքերի դաժանություն-

ները ընդունել էին աներևակայելի չափեր: Անասելի վայրագությամբ կատարված կոտորածները «ցնցեցին ամենասառնարյուն սրտերը» (19, 373): Նրանք մոլեռանդությամբ կոտորում էին նույնիսկ այն դեպքում, երբ հայերը խմբերով փորձում էին պաշտպանություն գտնել թուրքական զինվորների մոտ (22, 1895, 37):

Ձանգվածային ջարդերին զոհ գնացին 10. 000 մարդ, կրակի մատնվեցին 102 գյուղ, որոնցից 82–ը վերածվեցին մոխրակույտերի (29, Ժ. 1630, ռ. 300–302): Թուրքական իշխանությունները մեծ ջանքեր գործադրեցին Սասունում տեղի ունեցած վայրագությունների հետքը թաքցնելու, համաշխարհային հասարակությունից գաղտնի պահելու համար, սակայն երբ այդ մասին առաջին լուրերը թափանցեցին եվրոպական մամուլի էջերում, առաջացնելով եվրոպական հասարակության արդարացի զայրույթը, թուրքական իշխանությունները որդեգրեցին կոտորածների սահմանկեցուցիչ իրադարձությունները կեղծելու, ժխտելու ուղին: Արտասահմանյան թուրքամետ ծախսու լրատվության միջոցներով տարածեցին տեղեկատվություն, աշխատելով հերքել կոտորածների մասին լուրերը, ցույց տալով, որ երկրում հայ ազիտատորների քարոզչության հետևանքով տեղի է ունեցել ընդհարում քրդերի ու հայերի միջև, որ անկարգությունների համար մեղավոր են հայերը (50, 1896, 4, 145): Թուրքական լրատվական մեքենան գործում էր ճկուն և արագ, ճգնում էր համոզել տերություններին, որ հայերը ապստամբել են օրինական կառավարության դեմ, որի համար էլ նրանք պատժվել են, վերականգնվել է կարգը, և հաստատվել է խաղաղություն (50, 1896, 3, 148–149) «Անկարգությունների և կոտորածների մեղավորը հայերն են»,– հայտնում է Հռոմում Թուրքիայի դեսպան Էդդիմ փաշան, իսկ մեկ այլ թուրք պաշտոնյա տեղեկացնում է, որ «հայ ազիտատորները թշնամանք են ստեղծել քրիստոնյա և մահմեդական համայնքների միջև, որը ավարտվել է արյունահեղությամբ» (44, 1895, 298), երբ բանակը միջամտել է գործողություններին: Ծաղրելով թուրքական իշխանությունների նման մեկնաբանությունը՝ Վ. Գոլմստրենը գրում է. «Հայերը զրկվել են ապրելու իրավունքից, իսկ կոտորածը դիտվել է օրինական»: Ինչպիսի պարզունակ մեկնաբանություն (44, 1897, 10):

Թուրքական լրատվության կեղծ լինելը հիմնավորում էին նույնիսկ ցարական դիվանագետները: «Վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մասին մանրամասնությունները,– գրում էր դիվանագետ Ժադովսկին,– ար-

դեն թափանցել են եվրոպական մամուլը և ամենուրեք մերկացնող հողվածների փոթորիկ են բարձրացրել Չայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական զորքի կատարած գազանային գործողությունների դեմ» (29, Ժ. 3435, Ն. 52): Սակայն ցարական գաղտնի խորհրդականի՝ Սասունում տեղի ունեցած կոտորածի իրական ճշմարտությունը ներկայացնող այս զեկուցագիրը թուրքական իշխանությունների ջազանությունները դատապարտելու նպատակ չէր հետապնդում, այն միայն պաշտոնական տեղեկատվության բնույթ ուներ, իսկ իրական ճշմարտությունը թաքցվում էր ռուս ժողովրդից: Դիվանագիտական գրագրություններում ցարական դիվանագետները, անշուշտ, ընդունում էին, որ Սասունում տեղի է ունեցել մարդկային մեծ սպանդ, սակայն քաղաքական նկատառումներով ճգնում էին արդարացնել թուրքական իշխանությունների վայրագ գործողությունները՝ դրանք ներկայացնելով որպես օրինական կառավարության կողմից հարկադրական անհրաժեշտություն հպատակների խռովարարական ելույթները ճնշելու, երկրում կարգը վերահաստատելու համար, այդ գործողություններում մեղավոր ճանաչելով հայերին, որ նրանք են նախահարձակ եղել (29, Ժ. 3435, Ն. 52):

Սասունի հայ բնակչության կոտորածներից հետո ռուս-թուրքական հարաբերություններում նկատվեց նոր որակ, ավելի ընդգծվեց Չայկական հարցում ցարիզմի չմիջամտելու քաղաքականությունը (51, 75), ավելի խորացան ռուս-անգլիական հակամարտությունները:

Չայկական հարցում Անգլիայի անհատապաշտական շահերով թելադրված կեղծ հայասիրական ելույթներին ցարական դիվանագիտությունը վերաբերվում էր որոշակի կասկածանքով՝ նրա մեջ տեսնելով Ռուսաստանի դեմ ուղղված վտանգ, ուստի Թուրքիայում անգլիական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով նպատակահարմար չէր համարում Չայկական հարցի միջազգայնացումը, և այն համարում էր սուլթանի ներքին խնդիրը (29, Ժ. 3447, Ն. 48): «Մենք, — նշում էր Նելիդովը ցուցում տալով Սասունի հետաքննական հանձնաժողովի ռուսական ներկայացուցչին, — հեռու ենք հայերի քաղաքական բաղձանքները խրախուսելու մտքից, որոնք կազմում են եվրոպայում գտնվող կոմիտեների գործունեության առարկան, և արևմուտքից, նաև ռուսահայերի կողմից, որոնք վարակված են հեղափոխական գաղափարներով որպես ազգային պրոպագանդային գործակալներ, տարածվում են թուրքահայերի մեջ» (29, Ժ. 3435, Ն. 75): Սուլթանական կառավա-

րությունը մտավախություն ունենալով Անգլիայի միակողմանի միջամտության վտանգից և ցանկանալով նրան շեղել այդ խնդրից, փորձում էր այդ նպատակով ավելի խորացնել անգլո-ռուսական հակամարտությունները, պաշտպանություն էր փնտրում ցարիզմի մոտ, իսկ վերջինս, որ հայկական հուզումների մեջ տեսնում էր անգլիական դիվանագիտության ներկայությունը, հայերին մեղադրելու խնդրում թուրքական մեկնաբանությունները ընդունում էր որպես ճշմարտություն, և ընդգծում, որ հայերն են առաջինը զենքի դիմել:

Ցարական դիվանագիտության այդ կողմնորոշումը և թուրքական իշխանությունների հայտարարությունները Սասունի մասին ընդունում էին որպես ելակետ ցարական պաշտոնական մամուլը և պահպանողական-հետադիմական ուժերը Արևմտյան Չայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մեկնաբանման ընթացքում: «Սուլթանը ի զորու է, նրա օրինական իրավունքն է ճնշել խռովարար հպատակների ելույթները» (52, 1895, 92), — ցարական դիվանագետներին կրկնում էր «Գրաժդանին» լրագիրը: «Պրավիտելստվեննի վեստնիկ» — ը, հիմնավորելով կառավարության քաղաքական ընթացքը և ընդունելով Սասունում հայ բնակչության ակնհայտ կոտորածների իրողությունը, որ «իրոք սպանվել են հայեր» (54, 1895, 174), սակայն արտահայտելով իր տարակարծությունը անգլիական լրագրերի հայտնած տեղեկությունների հետ, որ կոտորածները եղել են ոչ այնքան ու այն ձևերով, որ ներկայացնում են անգլիական լրագրերը, փորձում է ճշմարտությունը տեղափոխել այլ հարթություն, բացահայտել, ոչ թե հայ ժողովրդի նկատմամբ իրագործած կոտորածի պատճառը, այլ զբաղվել զոհերի քանակի մասին եղած տվյալների բաղդատումով (54, 1895, 174): Ցարիզմի քաղաքական կողմնորոշումը հիմնավորող լրագրողին մազաչափ անգամ չի հետաքրքրում ու ցավ պատճառում տասնյակ հազարավոր անմեղ զոհերի արյունը: Թուրքական իշխանությունների կողմից զանգվածային ջարդերի իրողությունը մրցակից երկու տերությունների դիվանագետները վիճարկում էին, թե այդ կոտորածները որքանով էին մարդասիրական: Սա էր թուրքահպատակ արևմտահայության հովանավորությունը ստանձնած տերությունների դիվանագիտության բարոյականության չափանիշը:

Պաշտոնական մամուլի գրչակները իրենց պաշտպանության տակ վերցնելով թուրք ջարդարարներին իրականում տեղի ունեցած կոտորածների համար մեղադրում էին հայերին, անգլիական լրագրային տեղեկություններ

րը դիտում էին անարժանահավատ, լոնդոնյան լրագրերի հայ թղթակիցների սադրանքը, կոտորածների մասին եղած լուրերը՝ կեղծ: «Այդ բոլոր լուրերը,– նշում է «Նովոյե վրեմյան»,– կեղծ են: Դրանք ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը, այլև ճշմարտաման չեն: Այդ բանում համոզվելու համար հարկ է Յայաստանից ստացված նման բնույթի տեղեկությունները բաղդատել իրար հետ, որից պարզվում է, որ այժմ այնտեղ խաղաղ է ու հանգիստ, կարգը երբեք չի խանգարվել (55, 1895, 6772): Լրագրողի կողմից անգլիական կառավարության քննադատությունը, հայկական կոտորածների խնդրում անգլիական դիվանագիտության հանցագործ կեցվածքի բացահայտումը միանգամայն ճիշտ է ու արդարացի, սակայն նրա կողմնակալությունը ակնհայտ է: Միաժամանակ պետք է ընդունել, որ ցարիզմի քաղաքական շահերին ծառայող լրագիրը բնական է, որ իր տիրոջը մեղադրելուց ձեռնպահ է մնում: «1878 թ. Բեռլինի կոնգրեսում,– նշում է լրագրողը,– Անգլիան պարտադրեց Ռուսաստանին Յայկական հարցը հանձնել տերությունների համաեվրոպական խնամակալությանը: Անգլիական գործակալները շփոթության մեջ դրեցին հայ ազգաբնակչությանը, հայտնելով, որ նրանց ազատարարը ոչ թե Ռուսաստանը, այլ Անգլիան է: Ազգաբնակչությունը նրանց հավատաց» (55, 1895, 6774): Եզրակացությունը միանշանակ է. ստեղծված վատ վիճակի համար մեղավոր են իրենք՝ հայերը: «Սասունի օկրուգում»,– նշում է «Նովոյե վրեմյան»,– անկարգությունները սկսվեցին ագիտատորների մեղքով: Յամբարծում անունով մի հայ իր շուրջը համախմբելով 3000 հայ, բարձրացան լեռները, այնտեղ գործողություններ սկսելու նպատակով: Կարգը վերականգնվեց Ձեքի փաշայի վճռական գործողությունների հետևանքով: Յայերը վերադարձվեցին իրենց բնակության վայրերը: Այս վկայությունները,– շարունակում է հոդվածագիրը,– հավաստի են, հաստատվում են բազմաթիվ ցուցմունքներով ու անժխտելի փաստերով» (55, 1894, 6736): Շարունակելով հիմնավորել ռուս–թուրքական մերձեցումը և այն համարելով Ռուսաստանի համար հեռանկարային լրագրողը ընդգծում է. «Մենք առիթ չունենք Յայկական հարցի պատճառով վատացնել մեր հարաբերությունները Թուրքիայի հետ» (55, 1895, 6797): Յայկական կոտորածների խնդրում ցարիզմի ու սուլթանական կառավարության միանման մոտեցման մասին «Ռուսաստանը և Անգլիան Յայկական հարցում» հոդվածի հեղինակը գրում է. «Տարբեր պատճառներով, սակայն պարզ ու որոշակիորեն Ռուսաստանը և Թուրքիան փոխադարձ բարի հա-

րաբերությունները պահպանելու հարցում միանման են դատում: Փոքր Ասիայում,– շարունակում է լրագիրը,– տեղի ունեցած իրադարձությունները այնքան լարված չեն այժմ, որ դառնան միջազգային քննարկման հարց: Անգլիայում, ընդհակառակն, եթե ոչ կառավարությունը, ապա որոշակի շրջաններ գործում են հակառակ ուղղությամբ, որով և արտահայտվում է նրանց անբավականությունը ռուսական լրագրերի ու «Նովոյե վրեմյա»–ի լոնդոնյան թղթակցի «Յայկական հարցում ցուցաբերած անտարբերության նկատմամբ» (55, 1895, 6798): Դեռ ավելին, հետադեմ ուժերը կատարելով ցարիզմի քաղաքական պատվերը, աշխատելով Անգլիայի՝ Ռուսաստանի դեմ ունեցած հակամարտությունները հիմնավորել նրա Յայկական հարցում հետապնդած նպատակներով, որոնք ըստ նրանց, անշուշտ, վտանգավոր էին Ռուսաստանի համար, գտնում էին, որ «հայերը խռովություններ են բարձրացնում, որպեսզի իրենց սպանել տան, դրանով ստիպեն Եվրոպային իրագործելու իրենց նպատակը, ինչպես ժամանակին կատարեցին Բուլղարիան ու Ռումինիան»: Թուրք ջարդարարների կողմից կոտորվող հայերը դիտվում էին խռովարար, «որոնք հարձակվել են մահմեդականների վրա և մեծ վնաս են պատճառել նրանց» (29, 3433, 60–62): նույնիսկ կոտորածներից մազապուրծ և Ռուսաստանում ապաստան գտած փախստական արևմտահայերը ներկայացվում էին հեղափոխականներ, որոնք վտանգ են ներկայացնում Ռուսաստանի կովկասյան տիրույթներում հուզումներ առաջ բերելու գործում (53, 1895, 191):

Ձայնակցելով թուրքական պաշտոնական շրջանների զառանցանքներին Փոքր Ասիայում և Արևմտյան Յայաստանում ռազմական նպատակներով հետախուզություններ իրականացնող ցարական պաշտոնյա Պուտյատան՝ ուսումնասիրելով Արևմտյան Յայաստանի տարածքը, նկատի ունենալով երկրի բնական պայմաններն ու հարստությունը, կատարում էր իրականության հետ անհարիր եզրակացություն: Նա գտնում էր, որ հայկական շարժումը չի առաջացել բնական տնտեսական պատճառներից, ոչ էլ կրոնական ու ցեղային տարբերություններից, այլ դա հանդիսանում է արիեստականորեն ասպարեզ բերված շարժում: Սակայն նա այդ ենթադրության մեջ այնքան էլ համոզված չէ, որովհետև անդրադառնալով արևմտահայության ծանր կյանքի պայմաններին, թուրք պաշտոնյաների կամայականություններին ու բռնություններին, կառավարությանն ու քրդերին հայերի կողմից վճարվող հարկերի ծանրությունը՝ գտնում է, որ «հայերն իրենց գան-

գատներում սովորաբար մատնանշում են հարկերի գանձման արտասովորությունը, արտակարգ հարկերը և գովումները, դատավարության արատները և քրդերի ասպատակությունները: Այդ գանգատները որոշ վայրերում լիակատար հիմք ունեն»: Սակայն նկատի ունենալով իր առաքելությունը, այն է՝ ժխտել Հայկական հարցի գոյությունը և թուրքական պաշտոնական շրջանների հետևողությամբ հիմնավորել հայ բնակչության բարեկեցիկ կյանքով ապրելու թուրքական վարկածը, Պուտյատան ընդունում է, որ հայերի կենսապայմանները ավելի բարձր են, քան մահմեդականներինը, քանի որ հայերը ավելի մեծ հողատարածքներ են մշակում: Նա զուգահեռ է անցկացնում հայ գյուղացիության ու բուլղար գյուղացիների կենսապայմանների միջև, նշում, որ նրանք ավելի բարվոք պայմաններում էին ապրում, քան մահմեդականները և օգտվում էին նրանց հետ հավասար իրավունքներից: Բայց քանի որ հայերը ցանկանում էին վերականգնել երբեմնի ինքնուրույն թագավորությունը, ապա իրենց դեմ էին հարուցում մահմեդական ազգաբնակչության թշնամանքը (29, Ժ. 3439, ռ. 58): Ցարիզմին շատ էր մտահոգում իր անդրկովկասյան սահմանների հարևանությամբ անհանգիստ վիճակի ստեղծումը, որը ըստ նրա ձգտում էին կատարել անգլո-հայկական կոմիտեները, աշխատելով միջազգային դիվանագիտության բնագավառում մտցնել Հայաստանի կարգավորման հարցը, այլ կերպ փորձում էին ստեղծել միջազգային Հայկական հարց, որը, - խիստ անհանգստացած շարունակում էր ցարական դիվանագետը, - Ռուսաստանի համար պետական կարևորություն ունեցող հարց է, քանի որ Ռուսաստանը տիրում է Կովկասին, ուր մեծ քանակությամբ հայ հպատակներ ունի (29, Ժ. 3449, ռ. 64): Աշխատելով չեզոքացնել Անգլիային ու իր կողմը գրավել սուլթանին, ցարիզմը հավաստիացնում էր նրան, որ ռուսական կողմը չի ցանկանում և նպատակ չունի դժվարություններ հարուցելու «իր հայ հպատակներին զսպելու գործում» (29, Ժ. 3435, ռ. 106): Հայկական հարցում ցարական պաշտոնական կողմնորոշումը պրոպագանդում ու մասսայականացնում էին հետադեմ ուժերն ու պահպանողական մամուլը, որոնք արևելահայության, այնպես էլ արևմտահայության դեմ իրենց պայքարում օգտվում էին թուրքական իշխանությունների հակահայկական զինանոցից վերցրած միջոցներով և հետևողականորեն կրկնում էին նրանց քարոզչության տարածած կեղծ ու ստահող վարկածները: Նրանք, կեղծելով պատմական իրականությունը, մերժելով ու ժխտելով Արևմտյան Հայաստանում և ողջ Թուրքիայում

հայերի նկատմամբ գործադրվող դաժանությունները, մշտական դարձած սպանություններն ու թալանը, բռնարարքներն ու հարկադրական դավանափոխությունը, ի լուր աշխարհի հայտարարում էին, որ սուլթանական բարեխնամ կառավարության հոգատարության շնորհիվ հայերը աճում և բարգավաճում են, որ նրանցից շատերը բարձր պաշտոններ են գրավում իշխանության մարմիններում (55, 1895, 7014), հետևաբար եզրակացնում էին նրանք, Հայկական հարցը ոչ թե հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ծանր կացության ու կրոնական անհանդուրժողականության հետևանք է, այլ այն ծագել է դրսի ուժերի կողմից, մասնավորապես Լոնդոնում գործող անգլո-հայկական ընկերությունների ու հայկական կոմիտեների ջանքերով և հատկապես անգլիական դիվանագիտության կողմից՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու նպատակով (55, 1895, 7027):

Հայ ժողովրդի հանդեպ ռուս հասարակական տարբեր սոցիալական շերտերի վերաբերմունքը ամենից առաջ արտահայտվում էր «Հայկական հարցի» բովանդակության ճիշտ և իրական մեկնաբանությամբ ու նրա լուծման իրատեսական ուղիների խնդրում հայանպաստ դիրքորոշումով: Այդ հարցը դարձել էր ռուս առաջադեմ մտավորականության ու հետադեմ, իշխանամետ ուժերի միջև գաղափարական-քաղաքական պայքարի առանցքը և դրա շուրջը ծավալված պայքարում ռուս հասարակայնության մեջ բյուրեղանում ու սահմանազատվում էին մարդասիրական այն խմբավորումները, որոնք իրենցով ամբողջականացնում էին առաջադիմության ու մարդասիրության, լույսի ու բարու կրողներին, որոնց գործունեությունն ու վարքագիծը ողջունում էր ռուս ժողովուրդը, և նրանց՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքը դառնում էր ռուս ժողովրդի հավաքական ամբողջականության կարծիքը: Իշխանություններն ու պաշտոնական մամուլի օրգանները հետևում էին կառավարության Սերծավորարևելյան քաղաքականության նոր ընթացքին, հետևաբար Հայկական հարցում հանդես էին բերում զգուշավորություն, ինչպես կառավարությունը, այնպես էլ այդ շրջանակները աշխատում էին Հայկական հարցը լուծության մատնել: Դեռ ավելին, ձգտում էին հիմնավորել թուրքական իշխանությունների կողմից արևմտահայությանը ներկայացվող մեղադրանքները, որ իբր անկարգությունների համար մեղավոր են հայերը, որ հայկական քաղաքական կուսակցություններն իրենց անխոհեմ գործելակերպով երկրում հարուցում են խառնակչություն, ցույցերով ու բողոքներով ցանկանում են Հայկական

հարցի վրա գրավել տերությունների ուշադրությունը, հարուցել արտաքին միջամտություն (55, 1895, 7042):

Թուրքական պաշտոնական շրջանների ու քաղաքական միտումներով նրանց հետևող հետադեմ մամուլի նման թյուր ու մտացածին վարկածները մերժվում ու դատապարտվում էին ռուս առաջադիմական ուժերի, նաև պաշտոնական մամուլի օրգան «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի ու նրա շուրջը համախմբված հրապարակախոսների կողմից:

Այդ լրագրի 1895 թ. սեպտեմբերի 25–ի առաջնորդող հոդվածում նրա խմբագիր, իշխան Է. Է. Ուխտոմսկին, քննարկելով ռուսական մամուլում արևմտահայերին վերաբերող մեղադրանքները և դրանք դիտելով մտացածին, նրանց անհիմն լինելը բացատրում ու հիմնավորում է թուրքական պաշտոնական հայտարարությունների քաղաքական նպատակներով կատարված կեղծիքներով: Իր այդ միտքը հիմնավորելու համար նա հղում է կատարում անգլիական լրագրից թուրք պաշտոնյայի ու անգլիացի դիվանագետի միջև եղած գրույցը, ուր թուրք պաշտոնյան մեղադրում է հայ հեղափոխականներին ու ազիտատորներին: «Չայերը,– ասում է Քյամիլ փաշան,– գործում են որոշակի պլանով: Ցանկանում են իրենց գործողություններով մահմեդականներին մղել հանցանքի՝ ձգտելով արյունահեղությամբ գրավել Եվրոպայի ուշադրությունը: Ազիտատորները հասցնում են հակամարտություններ բորբոքել մահմեդական ու քրիստոնյա համայնքների միջև»: Ուրեմն, շարունակում է Ուխտոմսկին «ստացվում է, որ հայերը նախապես սպանում են իրենց, որպեսզի գրավեն Եվրոպայի ուշադրությունը: Դա միայն զավեշտ է: Իսկ, եթե նրանք (հայերը,– Պ. Ս.) իրոք իրենց զոհաբերում են, ու դա իրողություն է, ապա այդ վկայություն է այն բանի, որ Թուրքիայում նրանց համար ստեղծվել են այնպիսի պայմաններ, որ նրանք գերադասում են մահը» (44, 1897, 257),– եզրակացնում է հեղինակը:

Իշխանամետ ու պահպանողական մամուլի օրգանները, նկատի ունենալով ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության ավանդական ընթացքի փոփոխությունը, ռուս–թուրքական հարաբերությունների նոր որակը, աշխատում էին Չայկական հարցում տեղի ունեցած վերաբերմունքի փոփոխությունը ևս մեկնաբանել ռուս–թուրքական ու ռուս–անգլիական հարաբերությունների խորապատկերի վրա: Որքան խորանում ու սրվում էին ռուս–անգլիական հակամարտությունները, այնքան Թուրքիայում վատթարանում էր արևմտահայության վիճակը, իսկ ռուսական պաշտոնական ու

պահպանողական մամուլում ավելի առարկայացվում էին հայերին վերագրվող մեղադրանքները:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ հրապարակախոս Ա. Ն. Սազոնովը ընդգծում էր, որ այդ ընթացքում Ռուսաստանում ռուս հասարակայնության վերաբերմունքը փոփոխության էր ենթարկվում Չայկական հարցում, ինչպես նաև կովկասահայության հետ հարաբերության խնդրում (30, 1896, 12, 103): Պահպանողական ուժերը առաջարկում էին ընդհանրապես շրջանցել Չայկական հարցը, չդարձնել քննարկման առարկա, իսկ հաճախ, երբ ստիպված էին, այնուամենայնիվ, անդրադառնալ, դրան տալիս էին ոչ իրական բացատրություն կամ էլ կրկնում էին թուրքական իշխանությունների հակահայ ստահող վարկածները, առաջարկում էին պահպանել լռություն: «Մեր ինչ գործն է,– գրում էր «Նովոյե վրեմյա» լրագիրը,– թե այնտեղ կոտորում են ինչ–որ հայերի: Արժե՞ արդյոք նման չնչին բաների համար փչացնել մեր հարաբերությունները բարի հարևան Թուրքիայի հետ: Եվ ինչու պետք է մենք խռովարար հայերի համար հանդես գանք ու բարձրացնենք մեծ ու հզոր Ռուսաստանի ձայնը (55, 1896, 7128)»:

«Գրաժդանին» լրագրի խմբագիր ու տնօրեն իշխան Սեչչերսկին, հետևելով «Նովոյե վրեմյա»–ին ու ավելի խորացնելով նրա միտումները և բացահայտելով թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ճակատագրում, թուրքական լծից նրանց ազատագրման գործում Ռուսաստանի պատմական առաքելությունը, գտնում էր, որ «Չույների ու բուլղարների ազատագրումը սուլթանական լծից չպետք է օրինակ ծառայի հայերի համար, քանի որ ոչ մի Չայաստան գոյություն չունի, չկա և հայ ժողովուրդը, այլ գոյություն ունեն որոշակի քանակությամբ մարդիկ հայկական ծագումով, որոնք գտնվում են Թուրքիայի տիրապետության տակ, ապրում են սուլթանի բարեխնամ կառավարության շնորհիվ, և նրանք կորչում են աշխատասեր ու համակրելի մահմեդականների ծովում» (52, 1896, 178): Իսկ ինչ վերաբերում է Թուրքիայում հայերի հալածանքին, ապա այդ հարցում մեղավոր են իրենք՝ հայերը (53, 1896, 224),– նրան լրացնում է «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագիրը:

Ցարիզմը և նրա գաղափարակից հետադեմ ուժերը ժխտում էին Չայկական հարցի գոյությունը կամ էլ այն դիտում էին արհեստածին, Անգլիայի ձեռքի գործը: «Նովոյե վրեմյա» լրագրի աշխատակից Գրինգոմուտը,– նշում է «Ռուսկայա բեսեդա» ամսագիրը,– Թուրքիայում ստեղծված խառնակ

վիճակը բացատրում է մի քանի հայերի ցանկությամբ, որոնց մի մասը իբր թե ձգտում է հարստանալ ու իշխել մյուսների վրա, ահա և ամենը: «Մեկնաբանությունը շատ է պարզունակ, սակայն հայերին վերագրվող մեղադրանքները առավել խորքային են» (57, 1895, 2, 129): Լրագրողը իրավացիորեն Գրինգոմուտի նման հեղինակներին անվանում է մանկամիտ, որոնք կատարելով իրենց տերերի քաղաքական պատվերը՝ հանցագործ թուրքին անմեղ են ճանաչում, իսկ անգն ու անպաշտպան, թուրքական դժոխքում տառապող հայերին համարում են մեղավոր, իսկ ռուս հասարակությունը ապակոմունորշվելով՝ անտարբեր էր մնում փախստական արևմտահայերի օգնության կանչին (57, 1895, 2, 129): «Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ոչ մի ժողովուրդ, – նշում է «Ռուս» լրագիրը, – թուրքերի հետ այնքան սերտորեն չի համագործակցել, ինչպես հայերը: Մինչև վերջին իրադարձությունները ոչ մի բանի մասին տեղեկություն չի տրվել, թե հայերը վատ են ապրում: Նույնիսկ սուլթանը և կառավարությունը միշտ բարյացակամ են եղել հայերի նկատմամբ: Հայերի և թուրքերի թշնամությունը, – շարունակում է լրագիրը, – հանկարծ ծագեց: Դա անկասկած Անգլիայի ձեռքի գործն է: Հայկական հարց բոլորովին գոյություն չի ունեցել, այն արհեստականորեն ստեղծվել է անգլիացիների կողմից» (58, 1895, 253), քանի որ, ըստ հեղինակի, Անգլիայի վերջնական նպատակը Փոքր Ասիայում Ռուսաստանի դեմ դժվարությունների ու թշնամանքի հարուցումն է: Կատարելով իշխանությունների քաղաքական պատվերը, լրագրողը Հայկական հարցը դիտում է դրսի ուժերի կողմից ստեղծված խնդիր և անտեսում է Թուրքիայում արևմտահայության ստրկական վիճակը, իսկ Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականության մերկացման ու քննադատության ընթացքում հանգում է ճիշտ եզրակացության: Նա քողագերծ է անում Հայկական հարցում խորամանկ Ալբիոնի շահադիտական նպատակները, ընդգծելով, որ վերջին հաշվով Անգլիան մտահոգվում է ոչ թե հայերի վիճակով, այլ նկատի ունի իր շահը: «Հանդես գալով հայերի պաշտպանությամբ, – նշում է լրագիրը, – իհարկե, Անգլիան չի գործում մարդասիրական սկզբունքներից դրդված: Հայասիրությունը չէ, որ առաջնորդում է նրան, այլ միակ նպատակը Հայկական հարցով Արևելքում ջուրը պղտորելն է, որպեսզի հեշտությամբ ծուկ որսա» (58, 1897, 44): Այս հարցում լրագրողը միանգամայն իրավացի է:

Ելնելով ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության ուղղվածու-

թյունից ու սրված ռուս–անգլիական հարաբերությունների բնույթից, լրագրող իշխան Մեշչերսկին Հայկական հարցի ծագումը, թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական շարժումները կտրում է իրական հողից ու հետևելով այդ հարցում թուրքական պաշտոնական շրջանների որդեգրած տեսակետներին՝ պնդում էր, թե Հայկական հարցը ստեղծվել է անգլիական դիվանագիտության կողմից, Ռուսաստանի համար կարևոր ստրատեգիական տարածքում, Անդրկովկասի ռուս–թուրքական սահմանի հարևանությամբ ամրանալու համար» (52, 1896, 228): «Նեղեյան», հակադրվելով նման գործիչների ոչ հայանպաստ կողմնորոշմանը, արդարացի կերպով նրանց մեղադրում է ինչպես Հայկական հարցի թյուրըմբռնման, այնպես էլ քաղաքական ծախվածության համար (27, 1895, 41): «Ռուսական միսլ» հանդեսը, աշխատելով երկրում ստեղծել հայամետ հասարակական կարծիք, ծավալելով հայանպաստ գործունեություն, հակադրվելով պահպանողական մամուլի առաջադրված տեսակետներին, իրավացիորեն ընդգծում էր, որ «ռուսական մամուլը դաժանության աստիճանի չարությամբ է տրամադրված հայերի նկատմամբ: Նա մերժում է Հայկական հարցի գոյությունը, գտնելով, որ Հայկական հարցը հանդիսանում է մի քանի երիտասարդ տաք գլուխների հորինվածք, Թուրքիայում, նույնիսկ Ռուսաստանում, մի քանի անմիտների խորամանկ Ալբիոնի հովանավորությամբ ազգաբնակչության մեջ ծավալած ագիտացիայի հետևանք: Այս տեսակետը, – շարունակում է հողվածագիրը, – պնդում են մեր մամուլի այն օրգանների ներկայացուցիչները, որոնք իրենց անվանում են ոչ միայն հայրենասերներ, այլև հայրենասիրությունը համարում են իրենց մենաշնորհային իրավունքը» (30, 1896, 11, 116): Հայկական հարցի ծագմանն ու ընդհանրապես արևմտահայության թշվառ կացությանը անդրադառնալով՝ Ա. Ն. Սազոնովը նշում էր. «Ճակատագիրը դատապարտել է հայերին իրենց պատմական կյանքի սկզբից մինչև այսօր անցնել բոլոր տառապանքներով և փորձանքներով, սակայն անխախտ պահպանել իրենց ազգային ինքնությունն ու իրենց հոգևոր կերպարի բնորոշ գծերը» (30, 1896, 11, 116): Ենթարկվելով թուրքական բռնապետության դաժան հալածանքներին՝ դարերի մեջ նվազել է հայ ժողովրդի ներուժը, հայաթափվել է երկիրը, սակայն մինչև այժմ ազգաբնակչության հիմնական մասը հայեր են, որոնք իրենց ազատագրության հույսը երբեք չեն կորցրել: Ըստ հեղինակի՝ Հայկական հարցը ծագել է Փոքր Ասիայի ընդարձակ տարածություններում, ուր տիրում էր

թուրքական կամայականությունն ու վայրի քրդերի թալանն ու ասպատակությունները, ուր մահմեդական ծովում արևմտահայերը գտնվելով իրավագուրկ ու անապահով վիճակում պայքարում էին ճնշողների դեմ՝ իրենց դրության բարելավման համար (30, 1896, 11, 110):

«Միր բոժի» ամսագիրը Հայկական հարցի մեկնաբանման առիթով անդրադարձ կատարելով իշխանամետ ու հետադեմ մամուլի քաղաքական միտումով թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների ակնհայտ խեղաթյուրումներին և պաշտպանելով արևմտահայերին նման վայ քաղաքագետներից, նշում է. «Հայ երիտասարդներին մեղադրում են գաղտնի հեղափոխական քարոզչության համար, և նրանցից շատերը առանց խղճի խայթի այդ մարդկանց համարում են կատարված բոլոր դժբախտությունների պատճառը: Մենք,– ընդգծում է ամսագիրը,– այդ տիպի բոլոր մեկնաբանությունները դիտում ենք իբրև բարձր կարգի կեղծիք» (50, 1905, 11, 229): Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի վիճակին, նրա կրած անլուր տառապանքներին քիչ թե շատ ժամոթ որևէ մեկը չի կարող դեմ գնալ ճշմարտությանը և դաժան տանջանքների հեծեծանքներից բխող արդարացի հուզումները դիտել Լոնդոնի անգլո–հայկական կոմիտեների կամ առանձին անձանց քարոզչության արդյունք, անգամ անգլիական դիվանագիտության ձեռնարկած և արհեստականորեն ստեղծված ինչ–որ բան, որը նպատակ ունի հայերին օգտագործել որպես միջոց «Ռուսաստանի շահերը վնասելու համար» (59, 156):

Մոսկվայի համալսարանի միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկին արևմտահայության դրության վատթարացման, ազգային ու կրոնական հալածանքների, հետևաբար համիդյան կոտորածների դրդապատճառները իրավացիորեն մեկնաբանում է թուրքական դաժան իրականությամբ, իշխանությունների հակահայկական քաղաքականության ուժգնացումով, իսկ Հայկական հարցում Անգլիայի հայասիրական ելույթները համարում է բրիտանական դիվանագիտության խորամանկ ու խարդախ խաղերի դրսևորման միջոց, որով Անգլիան նպատակ ունի կոծկելու և հիմնավորելու իր կողմից կատարված թուրքական տարածքների գավթումը:

Լ. Ա. Կոմարովսկին, անդրադառնալով Հայկական հարցում Ռուսաստանի կողմնորոշմանը, գտնում է, որ պատմականորեն ճիշտ էր, երբ նա նախորդ էտապում հովանավորում էր Արևելքի բոլոր ճնշված քրիստոնյա ժողո-

վուրդներին, սակայն, այնուամենայնիվ, Մերձավոր Արևելքում իր քաղաքականության փոփոխության դեպքում ևս, ընդգծում է նա, «Ռուսաստանը իր տիրապետության տակ ունենալով հայ ժողովրդի կրոնական գլխավոր կենտրոն Էջմիածինը և սահմանակից լինելով Հայաստանի թուրքական մասի հետ, բնականաբար չի կարող անտարբեր մնալ այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ»: Արտահայտելով առաջադեմ մտավորականների ընդհանուր կարծիքը, նա գրում էր. «Մենք ցանկանում ենք, որ պեսզի Անգլիայի հետ ինչպիսի քաղաքական հաշվարկներ էլ ունենա Ռուսաստանը, նրան չխանգարի Արևելքում նրա ազատարար սուրբ գործին, որը հանդիսանում է նրա պատմության առաքելությունը» (59, 157): Սակայն ռուս հայամետ մտավորականների անկեղծ, մարդասիրական կողմնորոշմանը քաղաքական բերումով այս էտապում հակադրվում էր ցարական կառավարությունը Մերձավոր Արևելքում ունեցած շահերի ու հետաքրքրությունների համար: Պահպանողական մամուլը և հետադեմ ուժերը, ապակողմնորոշելով ռուս հասարակայնությանը երկրում հասարակական հայամետ կարծիքի ձևավորման խնդրում, ձգտում էին ռուս–թուրքական նախորդ պատերազմի հետևանքով ազատագրված Բուլղարիայի օրինակով ցույց տալ, որ Հայկական հարցի միջազգայնացման ու թուրքիայի դեմ Ռուսաստանի հնարավոր պատերազմի դեպքում նույն կերպ է վարվելու նաև թուրքահայաստանը՝ կողմնորոշվելով դեպի Անգլիան, որի համար վերջինս այժմ գործում է առավել ակտիվ (55, 1896, 7122): Ըստ այդ գործիչների, նշում է «Գերված ժողովուրդ» հոդվածի հեղինակը, «Ռուսաստանը արյուն թափեց բուլղարների համար ու նրանց կողմից արժանացավ անշնորհակալ վերաբերմունքի», սակայն, շարունակում է լրագրողը, հայ ժողովուրդը դարձրել շարունակ և այժմ ձգտում է միակ քրիստոնյա հարևան պետությունը, դեպի Ռուսաստանը, որի կազմում է գտնվում Ռուսահայաստանը: «Եթե նույնիսկ,– ընդգծում է հոդվածագիրը,– հնարավոր լինի Թուրքահայաստանի անկախացումը, ապա այդ դեպքում ևս այն կլինի Ռուսաստանի հովանու տակ... Հայերը Ռուսաստանի նկատմամբ ատելություն չունեն, ընդհակառակն, ջերմ սիրով են կապված նրա հետ» (27, 1895, 41): Աշխատելով ավելի հիմնավորել այդ միտքը՝ Ա. Ամֆիտեատրովը շեշտում էր, որ հայերը երեք դար շարունակ եղել են Փոքր Ասիայում ռուսական ազդեցության մասսայականացնողները, ազատագրման դեպքում ևս նրանք երախտագիտությանը կվերաբերվեն դեպի Ռուսաստանը (51, 108): Հետևաբար, Թուրքահայաստանը

տանի ազատագրումը ոչ թե կվնասի Ռուսաստանին, այլ «հսկայական տարածքներ կմտնեն Ռուսաստանի կազմի մեջ» (27, 1895, 41):

Ռուս առաջադեմ մտավորականները պաշտպանում ու հիմնավորում էին թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը՝ այն դիտելով բնապատմական գործընթաց: Հակադրվելով պահպանողական ուժերին, որոնք հայերին մեղադրում էին հեղափոխական ու անհնազանդ լինելու համար, առաջադեմ մտավորականները հայերի ընդվզումները թուրքական բռնությունների դեմ համարում էին օրինական ու իրավացի, քանի որ «մշտական բռնությունների ու հալածանքների, արյունալի կոտորածների պայմաններում հայերը այլևս մնալ չէին կարող (30, 1914, 2, 19): «Ինչ անեն հայերը,– նշում է «Նեղեյան»,– սպասեն, բայց չէ որ սպասում են ամբողջ դարեր, բայց իրենց ազատությանը չեն հասել... այն դեպքում, երբ թուրքահպատակ մյուս քրիստոնյաները՝ հույները, սերբերը, բուլղարները ազատագրվել են, միայն հայերն են մնում ասիական հորդայի լծի տակ ...» (27, 1895, 41), սակայն հայերը նույնպես քրիստոնյա են ու դաստիարակվում են քրիստոնեական սկզբունքներով, հետևաբար նրանք ևս պետք է ազատագրվեն այդ կոպիտ իշխանությունից... Եվ ինչպես է քրիստոնեական աշխարհը հանդուրժում այդ ստրկությունը», հետևաբար եզրակացնում էին նրանք, չի կարելի դատապարտել հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հայերին համարել խռովարար, հեղափոխական, այլ պետք է օգնել ու խրախուսել նրա ազատագրական ձգտումներն ու սատար լինել նրան» (27, 1895, 41): «Ռուսսկայա միսլ» ամսագիրը, շարունակելով «Նեղեյային», գրում էր. «Ինչո՞ւ մեղադրել հայերին հանցագործության մեջ, երբ նրանք ինչպես մյուսները, ձգտում են ցուցաբերում գոյատևելու, փնտրում են ապահովություն և անձեռնմխելիություն իրենց երեխաների, կանանց ու հարազատների համար ... Ինչո՞ւ մեղադրել նրանց, երբ իրենց պաշտպանելու համար զենք են վերցնում սուլթանի դեմ» (56, 1896, 12, 106): Ուրեմն, ընդգծում է Ա. Ն. Սազոնովը, անհրաժեշտ է ոչ թե պախարակել ու քննադատել, այլ խրախուսել ու օգնել հայերին ազատագրվելու ատելի թուրքական լծից (56, 1896, 12, 106): Արևելահայերի հուզումները և արևմտահայ իրենց եղբայրներին օգնելու պատրաստակամությունը, թուրքական ատելի լծի դեմ համատեղ պայքար մղելու նրանց ցանկությունը ըստ «Ռուսսկոյե սլովո» լրագրի, բնական է ու արդարացի: «Թուրքիայի տիրապետության տակ եղած եղբայրների նկատմամբ համակրանքի բնական

զգացումը,– գրում է Ա. Ն. Սազոնովը,– նրանց պայքարի ու տանջանքների մասին տեղեկությունները, այդ բոլորը միասին վերցրած, իհարկե, չեն կարող ռուսահայերի մեջ չհարուցել մոլեռանդ հայրենասիրական զգացում և ցանկություն՝ օգնելու իրենց եղբայրներին, միավորվելու նրանց հետ և համատեղ պայքարելու հայ ժողովրդի բռնադատողների դեմ» (76, 1896, 249): Շարունակելով այդ միտքը՝ «Միր բոժի» ամսագիրը ընդգծում և հիմնավորում է հայ ժողովրդի ազատագրական շարժման արդարացիությունն ու օրինաչափությունը: «Ամենևին զարմանալի չէ, որ հայերը անկարող լինելով տանել բռնության լուծը և ազատագրվել, դրան ձգտում են հասնել հեղափոխությամբ» (50, 1899, 3, 147): Ուստի թուրքական ստրկական լուծը, բռնություն ու կոտորած նյութող իշխանությունները անշուշտ իրենց դեմ պետք է հարուցեին հպատակ ժողովուրդների, նաև արևմտահայության արդարացի ընդվզումը, ուրեմն «Հայկական հարցը,– գրում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– ծագել է ոչ դրսի ուժերի միջամտության և ոչ էլ ազիտատորների գործունեության հետևանքով: Այն հայ ժողովրդի խոշտանգման, հարստահարության, զանգվածային կոտորածների ու բռնության դեմ մղված պայքարից ծնված խնդիր է» (39, 1896, 281): Այդ բարբարոսական համակարգի, թուրքական իշխանությունների բռնությունների ու վայրենաբարո քրդերի զազանությունների մասին «Նովոյե սլովո» ամսագիրը արդարացիորեն նշում է, որ այդ մասին կարող են առնաստիճան դատողություններ կատարել միայն դիվանագետները, իսկ «յուրաքանչյուր մտածող մարդու համար այն ծանր է: Խորապես ամոթ է մարդկությանը, որ 19–րդ հարյուրամյակի վերջում հնարավոր է նման զարհուրանք» (61, 1896, 3, 174): Եվ այդ ամենը կատարվում է թուրքական իշխանությունների ակտիվ մասնակցությամբ, սուլթանի ու Բ. Դռան հանձնարարությամբ ու հովանավորությամբ, որոնց այդքան հետևողականությամբ ու համառությամբ պաշտպանում ու նրանց տեսակետները հիմնավորում են «մեր մամուլի որոշ օրգաններ»,– նշում է «ռուսսկայա միսլը»: Անտեսելով ու աչք փակելով հայ ժողովրդի անլուր տանջանքների առջև՝ նրանք լրագրերում «թուրքական զազանությունների մասին եղած տեղեկությունները համարում են չափազանցված» (56, 1896, 11, 113) ու արդյունքում մեղադրում են հայերին, որ իբր թե «հայերն իրենք են մեղավոր իրենց վիճակի համար: Իրենք դուրս են եկել օրինական կառավարության դեմ, իրենք էլ պետք է կրեն իրենց օրինական պատիժը» (53, 1896, 125): Մինչդեռ իրադարձությունների անաչառ ու անկողմնակալ

վերլուծությամբ «Նովոյե սլովո» ամսագիրը, հակադրվելով «Մոսկովսկիե վեդոմոստի»-ին, գտնում է, որ Թուրքիայում «հայերի նկատմամբ բռնությունները և կոտորածները ծագում են կառավարությունից ու իրագործվում են նրա հովանավորությամբ» (61, 1897, 3, 175): Իսկ քրդական ու թուրքական բռնություններից «հուսահատության հասած ու ծանր վիճակում հայտնված հայերը ստիպված են զենք վերցնել ընդդեմ ջարդարարների» (39, 1898, 280):

Վ. Բրյուսովը, հիմնավորելով ու հետևողականորեն պաշտպանելով թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, այն դիտում է օրինաչափ երևույթ, ընդգծելով, որ դարավոր ազգային, սոցիալական ու կրոնական բիրտ ճնշումն ու դաժան շահագործումը, անսանձ ասպատակություններն ու բռնարարքները, վայրի կամայականությունն ու թալանը հարկադրել են հայ ժողովրդին հակադրվել բռնությանը և ըմբոստանալու իր դահիճների դեմ (67, 100):

Խորանալով Հայկական հարցի էության մեջ և ցանկանալով բացահայտել Թուրքիայում հայ ժողովրդի հուզումների ու ազգային ազատագրական պայքարի դրդապատճառները՝ Ա. Ն. Սազոնովը զուգահեռ է անցկացնում Պարսկաստանում, Ռուսաստանում և Թուրքիայում հայերի համար ստեղծված վիճակի միջև: «Պարսկաստանը ևս մահմեդական երկիր է,– գրում է նա,– սակայն հայերը ամենափոքր թշնամության կամ անհնազանդության ոգի չեն տածում դեպի մուսուլման մահմեդական վեհապետը: Ինչո՞ւ այնտեղ ևս ոչ մի օտար կամ սեփական ազիտացիա չի արմատավորվում: Վերջապես ինչո՞ւ,– շարունակում է նա,– ռուսահպատակ հայերը, որքան էլ նրանց զրպարտում են մեր թուրքասերները, որքան էլ հայատյացները ցանկանում են ապակողմնորոշել հասարակական կարծիքը՝ պախարակելով հայերին կառավարության առջև, չնայած մուսուլման այդ աննպաստ հանգամանքներին, այնուամենայնիվ, նրանք նվիրված են Ռուսաստանին անձնուրաց հավատարմությամբ» (56, 1896, 12, 105): Հետևաբար, եզրակացնում է հեղինակը, «թուրքական վարչակարգի մեջ կա օրգանական մի ախտ, որից շարունակ պարբերաբար հեռանում են սուլթաններին հպատակ այս կամ այն ազգերը» (56, 1896, 12, 105): Ուրեմն, Հայկական հարցի արմատները, հայերի ըմբոստացումն ու հուզումները հետևանք են թուրքական հոռի վարչակարգի ու քրիստոնյա հպատակների նկատմամբ գործադրվող բռնությունների: Հակադրվելով պաշտոնական մամուլի օրգաններին ու պահպանողական ուժե-

րին՝ Ա. Ն. Սազոնովը ընդգծում էր. «Ինչո՞ւ հայերին հանցավոր համարել, նրա համար, որ նրանք էլ ուրիշների նման պահանջում են գոյության իրավունք, որոնում են իրենց կանանց ու երեխաների համար ապահովություն... Նախամեծար են համարում մեռնել զենքը ձեռքին, քան անտարբեր լինել, թե ինչպես ջարդում և ոչնչացնում են այն ամենը, ինչ որ մարդու համար թանկ է ու նվիրական» (56, 1896, 12, 106): Այսպիսով, ըստ Ա. Ն. Սազոնովի, Հայկական հարցի բովանդակությունը հանդիսանում է թուրքական բռնությունների դեմ հայ ժողովրդի մղած կենաց ու մահու պայքարը: «Հայկական հարցը,– գրում է նա,– ստեղծվել է ոչ դիվանագետների կաբինետներում և ոչ էլ Անգլիայի ինտրիգների ու հայկական կոմիտեների քարոզչության հետևանքով, այլ ծագել է Փոքր Ասիայի խորքերում, ուր հայ ժողովուրդը անկարող լինելով տանել թուրքական արյունոտ լուծը, սկսեց ընդվզել նրա դեմ»: Այս ճշմարտությունը չարամտորեն խեղաթյուրվում էր իշխանություն ունեցող անձանց կողմից քաղաքական նկատառումներով (56, 1894, 12, 105):

Ռուս առաջադեմ մտավորականները, անդրադառնալով Մերձավոր Արևելքում ռուս-անգլիական մրցակցությանը, երբեք էլ այն կարծիքին չէին, որ այդ տերությունների հակամարտությունների բորբոքման պատճառը Հայկական հարցն էր, ընդհակառակը, նրանք իրավացիորեն Հայկական հարցը դիտում էին այդ տարածաշրջանում հատուկ շահեր ու հետաքրքրություններ ունեցող և զերիշխանության ձգտող եվրոպական տերությունների միմյանց դեմ և նաև ընդդեմ սուլթանի տարվող պայքարում դիվանագիտական խաղերի ու սակարկությունների առարկա (56, 1894, 12, 230): Հայամետ մտավորականները, հակադրվելով իրենց գաղափարական հակառակորդ, իշխանությունների քաղաքական կողմնորոշումը պրոպագանդող ուժերին, մերժելով նրանց կողմից Հայկական հարցի ոչ ճիշտ մեկնաբանությունները, գտնում էին, որ Թուրքիայում հայերի դարավոր անազատ գոյությունը, բռնություններն ու կամայականությունը, հարկադրական դավանափոխությունն ու ազգային ճնշումը հայ ժողովրդին ստիպել են, երբ «հատել է նրա համբերությունը, ընդվզել է ու պահանջել այն, ինչ օրինականորեն իրեն է պատկանում» (65, 1895, 259),– ընդգծում է «Նովոստի» լրագիրը: Ըստ «Ռուսսկայա միսլ» հանդեսի՝ Հայկական հարցի ծագման հիմնական պատճառը «հայ բնակչության նկատմամբ թուրքերի ու քրդերի գործադրած բռնություններն են ու հարստահարումները» (56, 894, 12, 230):

Վ. Գոլմստրենը անդրադառնալով թուրքական բռնապետության դեմ հայ

ժողովրդի ազատագրական պայքարի խնդրին և այն դիտելով միանգամայն արդարացի ու օրինաչափ՝ գրում էր. «ժողովրդին դնել ստրկական վիճակի մեջ, ինչպես այժմ Ռուսաստանում է և սպասել, որ նա երկար կհանդուրժի, սխալ է» (44, 1897, 101): Ռուսական հարցը հանդիսանում է հայ ժողովրդի «արյունաշաղախ ազատագրական պայքարի արդյունքը» (10, 1896, 12, 856),– արդարացիորեն ընդգծում է «Վեստնիկ եվրոպի» ամսագիրը: Թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած գոյապայքարը «Ռուսական հարց» բանաձևումով առաջին անգամ միջազգային պայմանագրերում հայտնվեց 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրում և նույն տարում Բեռլինի կոնգրեսում, տերությունների դիվանագիտական խաղերի, հայկական արյան առուձախից հետո, ձևակերպվեց պայմանագրի 61–րդ հոդվածով ու մտավ միջազգային դիվանագիտության օրակարգ, դարձավ տերությունների դիվանագիտական խաղի միջոց (56, 1896, 12, 102),– ճիշտ կերպով բնութագրում է Ա. Ն. Սազոնովը, ապա շարունակելով իր մտորումները Ռուսական հարցի շուրջ ընդգծում է. «Չարաբաստիկ Բեռլինի պայմանագիրը և նրա 61–րդ հոդվածը հայերի համար եղավ ոչ թե ազատության դարաշրջան, այլ նրանց ճնշման ու կոտորածների սկիզբը», մանավանդ, որ այն մտնելով ռուս–անգլիական հակամարտությունների ոլորտը, դարձավ նրանց համար թուրքիայում գերակայության հաստատման մրցակցության առարկան և ավելի վատթարացրեց առանց այդ էլ հայ ժողովրդի ծանր ողբերգական վիճակը (56, 1896, 12, 106): Ռուս ժողովրդի արևմտյան հատվածի համար չարիք էր ոչ միայն այն, որ նա մատնված էր թուրքական բռնապետական հոռի վարչակարգի բռնություններին ու կամայականություններին, այլ նրա մեծագույն դժբախտությունն այն էր, որ Ռուսական հարցը միջազգային դիվանագիտության օրակարգ մտնելու առաջին պահից սկսած հանդիպեց բոլոր մեծ տերությունների թշնամանքին (51, 171), որովհետև այն տրամագծորեն հակադիր էր Մերձավոր Արևելքում հետաքրքրություններ ունեցող բոլոր պետությունների շահերին:

Ռուսական հարցը միջազգային դիվանագիտության օրակարգ մտնելուց հետո ձևախեղվեց, կորցրեց իր ներքին բովանդակությունը, արժանացավ տերությունների ծաղր ու ծանակին, «դարձավ ողջ եվրոպայի կշտամբանքի առարկան»... եվրոպական տերությունների ձեռքին դարձավ դանակյան սուր՝ հայ ժողովրդի գլխին (61, 1896, 3, 171): Արևմտահայության դեմ գործադրված թուրքական գնազանությունների համար արդարացիորեն

մեղադրելով եվրոպական տերություններին, որոնք հայկական ծովացող արյան շուրջը իրենց շահերին հետամուտ սակարկում էին սուլթանի հետ, իսկ վերջինս օգտվելով նրանց ներհակություններից՝ շարունակում էր անխնայ կոտորածները, անվանի հրապարակախոս Ա. Կոտովիչը դատապարտում է նաև ցարիզմին, նրա ոչ հայամետ կողմնորոշման համար, մանավանդ, երբ «մոռանալով թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իր ավանդական առաքելությունը», պաշտպանում է թուրքիայի տարածքային ամբողջականությունը, մինչդեռ «հայերը տարիներ շարունակ խնդրում են կամ անցնել Ռուսաստանի հովանու տակ, կամ վերջինս օկուպացնի Արևմտյան Ռուսաստանը» (39, 1896, 26):

Ռուսական հարցի բովանդակությանն ու Ռուսաստանի հանդեպ արևմտահայության ջերմ վերաբերմունքին ու նրանից ունեցած սպասելիքներին քաջատեղյակ Ա. Կոտովիչը, դիմելով իր գրչակիցներին ու ողջ ռուս հասարակությանը, արդարացի զայրույթով գրում էր. «Մի՞թե մենք, բանական մարդիկ, դաստիարակվելով Ռուսաստանի հզոր հովանու ներքո, ի վիճակի ենք անտրտունջ լռությամբ տանել մեր եղբայրների ու քույրերի համար թուրքիայում ստեղծված անելանելի վիճակը»: Ըստ հեղինակի, «ինչպես մարդասիրական, այնպես էլ «իր պատմական առաքելությամբ Ռուսաստանը պարտավոր է օգնել հայերին» (39, 1896, 26):

Ռուսական հարցի իրատեսական լուծման և կոտորածների դադարեցման ճշգրիտ ուղին լրագողը համարում է Օսմանյան կայսրության մասնատումը, քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը և հայ ժողովրդի երկու հատվածների վերամիավորումը Ռուսաստանի հովանու ներքո (27, 1895, թիվ 43): Նման ելքը պատմական տվյալ ժամանակաշրջանում ամենաօբյեկտիվ, ամենաճիշտ ու բանական լուծումը կլիներ, որով կիրականանար հայ ժողովրդի դարավոր բաղձանքը (27, 1895, 46):

Ռուսական հարցի նման ելքը համարելով ճիշտ ու բանական և վերլուծելով միջազգային դիվանագիտության խաղերը, նկատի ունենալով տերությունների միջև եղած հակամարտությունները՝ Ա. Ն. Սազոնովը թերահավատությամբ էր վերաբերվում թուրքիայի դեմ տերությունների համերաշխ ու համատեղ գործողությունների հնարավորությանը (56, 1896, 12, 104), ուստի եթե թուրքիայի մասնատումը անհնարին է, ապա սուլթանը, օգտվելով տերությունների անհամերաշխությունից, ցանկացած պատեհ առիթ օգտագործելու էր նոր կոտորածներ սկսելու համար, դրանով իսկ նա իր դեմ էր

հարուցելու արևմտահայության հուզումները և բնականաբար, ավելի էր բորբոքվելու հայ ժողովրդի գոյամարտը (39, 1896, թիվ 78): «Բիրժեվիե վե-դոմոստի» լրագիրը, հիմնավորելով, որ Հայկական հարցի ծագման հիմնական պատճառը թուրքական բռնությունների դեմ հայ ժողովրդի օրինական գոյապայքարն է, որ այն բնականոն գործընթաց է, քանի որ գոյություն ունեցող բռնությանը հակադրվում է հպատակ ժողովրդի սերունդների գոյատևելու ձգտումը, իր տեսակը պահպանելու արդար ու վճռական կամքը: Հայկական հարցի նման բովանդակությունը նկատի ունենալով Ա. Ն. Սազոնովը սրտացավությամբ գրում էր. «Անհրաժեշտ է ավելի ուշադիր ու հիմնովին լուսաբանել Հայկական հարցը, նրան տալով համապատասխան ուղղվածություն: Չվարվել այնպես խիստ ու թշնամաբար, ինչպես կատարում են մեզ մոտ մի շարք լրագրեր» (56, 1896, 11, 154): Հայկական հարցի ճշգրիտ ու արդարացի լուծման բանալին,– ըստ Ա. Ն. Սազոնովի,– գտնվում է Ռուսաստանում (56, 1896, 12, 116), այսինքն՝ անհրաժեշտ է Արևմտյան Հայաստանի օկուպացումը Ռուսաստանի կողմից:

Ա. Ն. Սազոնովը, ճիշտ մեկնաբանելով Հայկական հարցի բովանդակությունը, տերությունների դիվանագիտության մեջ նշելով նրա տեղն ու դերը, ղեկավարվելով հայամետ մարդասիրական գաղափարներով, արդարացիորեն կարևորում էր ռուս հասարակայնության դրական անդրադարձը Հայկական հարցում, քանի որ այն ռուսական տարբեր սոցիալական շերտերում նույնությամբ չէր ընկալվում: «Ռուսական բյուրոկրատիան»,– գրում է Ա. Ամֆիտետրովը,– դիվանագիտությունը, և նրանցով ոգևորված պահպանողական մամուլը 90–ական թվականներին հայերի նկատմամբ բռնեցին թշնամական դիրք... Այն, ցավոք սրտի, համապատասխան դիմադրություն չառաջացրեց ռուս հասարակայնության կողմից: Նույնիսկ հասարակության առաջադիմական խմբավորումները Հայկական հարցին վերաբերվեցին անտարբեր...» (51, 178): Այդ վերաբերմունքը ամենից առաջ պայմանավորված էր Կովկասում ինչպես ազգամիջյան հարաբերություններում, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ իշխանությունների ունեցած անբարյացակամ վերաբերմունքով: Ուստի, ըստ Ա. Ամֆիտետրովի, «Հայկական հարցը նման էր երկու ջրաղացքարերի միջև ընկած հատիկի» (51, 179): Մի կողմից՝ պաշտոնական մամուլն ու հետադեմ ուժերը կառավարության կողմից համառուսականացման ակիբին զուգընթաց հայերի դեմ պայքար ծավալեցին՝ որպես հեղափոխական ուժի, մյուս կողմից՝ ձգտում էին Հայկա-

կան հարցը ներկայացնել որպես Թուրքիայի ներքին խնդիր, հայկական հուզումները կոտորածներով խեղդելու սուլթանի ջարդարարական գործողությունները դիտվեցին կարգը վերականգնելու օրինավոր միջոց, սուլթանի գործողությունները՝ օրինական (52, 1896, 175): Ցարիզնը և նրա գաղափարական զինակից պահպանողական ուժերը Հայկական հարցը քննարկելով ռուս–անգլիական հարաբերությունների համատեքստում և այն համարելով խոչընդոտ ռուս–թուրքական հարաբերությունները ավելի ջերմացնելու գործում, աշխատում էին թուրքական պաշտոնական շրջանների հետևողությամբ Հայկական հարցը հանել օրակարգից, խեղաթյուրելով նրա բովանդակությունը թուրքական հակահայ պրոպագանդայի զինանոցից վերցված հնարքներով: Այդ նպատակով պահպանողական մամուլի օրգանները շրջանառության մեջ դրեցին Թուրքիայում հայերի բարեկեցիկ լինելու թուրքաստեղծ մտացածին ու ստահող տեսակետը՝ գտնելով, որ հայերը Թուրքիայում օգտվում էին սուլթանի մահմեդական հպատակների հետ հավասար իրավունքներից, վարում էին կառավարական բարձր պաշտոններ (53, 1895, 192): «Գրաժդանին» լրագիրը ավելի առաջ է անցնում իր գաղափարակիցներից: «Թուրքական տիրապետության տակ,– նշում է լրագիրը,– հայերը ապրում են բարեկեցիկ կյանքով, նրանք բարգավաճում, հարստանում և բազմանում են: Եթե Օսմանյան կայսրությունում գոյություն ունի բռնություն, ապա այն բոլոր դեպքերում հայերի հետ կապ չունի, միայն մահմեդականներն են ճնշվողը: Հայերը ապստամբում են,– շարունակում է նա,– օրինական կառավարության դեմ առանց որևէ առիթի, չեն ցանկանում վճարել սահմանված հարկերը, դիմադրում են հարկահաններին, խռովություն են բարձրացնում սուլթանի մարդասիրական իշխանության դեմ» (52, 1896, 214): Այդ հանգամանքը նկատի ունենալով ու քննադատելով պահպանողականների նման դատողությունները՝ «Ռուսկայա միսլ»–ը նշում էր. «Ղեկավարվելով կեղծ մոտիվներով ու իրենց տեսակետները հիմնավորելով «իմաստուն դիվանագետների» մտքերով, հասարակական կարծիքի այդ արտահայտիչները կատարում էին սխալ եզրակացություններ» (30, 1896, 11, 115), և որոնց ստահող ու կեղծ լինելը հիմնավորվում է առաջադիմական մամուլի հարուստ ու հիմնավոր փաստական տվյալներով (41, 1896, 5): Մերժելով քաղաքական շահարկման նպատակով թուրքական և ցարական պաշտոնական շրջանների մտացածին այդ տեսակետները, բացահայտելով Թուրքիայում հայ ժողովրդի անելանելի ու իրավագուրկ վի-

ճակը՝ «Նովոյե սլովո» ամսագիրն արդարացիորեն շեշտում է. «Հայերը թուրքիայում վատ են ապրում թուրքական կարգերի խառնաշփոթության և վայրի քրդերի պարբերական ասպատակությունների հետևանքով: Հայ ժողովրդին թույլ չեն տալիս նույնիսկ զգալու ստրկական կյանքի համգստության չափը» (61, 1896, 175): Հայի ո՞ր իրավունքի մասին կարելի էր խոսել թուրքիայում, երբ ցանկացած թուրք կամ քուրդ, որը զինված էր, կարող էր հային կյանքից զրկել, իսկ այն հարցին, թե կառավարությունը կարո՞ղ է նրան պատժել, ջարդարարը հանգիստ ու զարմացած պատասխանում էր. «Մի՞թե մահմեդականին պատժում են հային սպանելու համար» (62, 1915, 2, 143–153): Թուրքական դատարանում հայը չի կարողանում հիմնավորել իր արդարացի լինելը, իսկ մահմեդականի կեղծիքն ու սուտը ընդունվում են որպես ճշմարտություն: Մեկնաբանություններն այլևս ավելորդ են: Շարունակելով իր միտքը հայ ժողովրդի թշվառ կացության ու թուրքիայում նրա անազատ ու իրավազուրկ կյանքի մասին՝ ամսագիրը ընդգծում է. «Թուրքիայի հայ բնակչությունը բացարձակապես անպաշտպան է: Ինքնապաշտպանությունն ու վրեժխնդրությունը բացառվում են, իսկ իշխանություններին բողոքելը իզուր է» (62, 1915, 2, 143):

Անվանի գիտնական, հայասեր Յու. Վեսելովսկին սուր քննադատության ենթարկելով թուրքիայում հայերի բարեկեցության թուրքական առասպելը ու այդ կանխավարկածը գովերգող ցարական և պահպանողական մամուլի օրգաններին, գրում էր. «Թուրքահայերի վիճակը կարելի է ընդհանրապես անվանել աննախանձելի, չնայած նրանց աշխատասիրությանը, առույգությանն ու ձեռներեցությանը» (63, 36): Շարունակելով իր միտքը, նա ընդգծում էր, որ մշտական թալանը, ասպատակությունն ու կոտորածը, բռնություններն ու սրբապղծությունը հայերի համար իրենց հայրենիքում ստեղծել էին անհույս ու անհեռանկար վիճակ, իսկ սուլթանական «բարեգութ կառավարությունը դրանց կողքով անցնում է լռությամբ և դաժանորեն հարկեր է հավաքում հայերից» (63, 36): Մերժելով թուրքական իշխանությունների կողմից հայերի բարեկեցության մասին կեղծ հայտարարությունները և հակադրվելով ռուսական պահպանողական ուժերին՝ «Տիֆլիսսկի լիստոկը» այն բնորոշում է բովանդակալից մեկ հատիկ բառով՝ կեղծիք է (60, 1894, 14):

Ռուս առաջադեմ մտավորականները արժանի հակահարված հասցնելով հակահայ ուժերին՝ մերժում էին Հայկական հարցում նրանց կեղծ ու մտացածին տեսակետները, ընդգծում Հայկական հարցի ծագման բնակա-

նուն լինելը, սակայն նրանցից ոմանք սխալվում էին, երբ Հայկական հարցի լուծումը պայմանավորում էին անգլո-ռուսական, ինչպես նաև մյուս տերությունների հակամարտությունների համահարթմամբ (56, 1897, 1, 52):

Այսպիսով՝ թուրքական իշխանությունները XIX դարի 80–90–ական թվականներին, ուժգնացնելով հակահայկական քաղաքականությունը, իրենց դեմ հարուցեցին հայ ժողովրդի գոյապայքարի պողոթունը, որը սակայն թուրքական պաշտոնական շրջանները բացատրում էին դրսի ուժերի միջամտությամբ, ժխտելով Հայկական հարցի սոցիալ-տնտեսական արմատների գոյությունը, մերժում էին նրա բնապատմական լինելը: Նրանք առաջ քաշեցին թուրքիայում արևմտահայերի բարեկեցության մասին կեղծ ու ստահող վարկածը:

Ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության նոր ընթացքը հիմնավորելու և ռուս-անգլիական հակամարտությունները միայն Հայկական հարցով մեկնաբանելու համար ցարական պաշտոնական ու պահպանողական մամուլի օրգանները տառացիորեն կրկնում էին Հայկական հարցի թուրքական տեսակետները ու հեղափոխականության, իշխանություններին անհնազանդության մեջ մեղադրում էին հայերին, Հայկական հարցի ծագումը կապում Անգլիայի հետ:

Ի հակադրություն նման մեկնաբանությունների, ռուս առաջադեմ մտավորականները փաստական հարուստ նյութի հիման վրա հիմնավորեցին ու ցույց տվեցին, որ Հայկական հարցը ծագել է տեղում, թուրքական իշխանությունների հակահայկական բիրտ ու դաժան քաղաքականության ուժգնացման հետևանքով, երբ արևմտահայությունը դիմեց գոյապայքարի, որը հանդիսանում է օրհասական դրության հասցված ժողովրդի ազատագրական պայքարի բնապատմական արտահայտությունը:

## **2. Հայկական կոտորածների լուսաբանումը ռուսական մամուլում**

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած զանգվածային ջարդերը մեծապես անհանգստացնում էին ռուս հայամետ գործիչներին, վրդովմունքի անզուսպ ալիքը համակում էր ռուս հասարակայնությանը, որը արդարացի տազնապ էր. հնչեցնում՝ ահազանգելով. «Եթե այժմ թուրքերին չզսպեն, ինչպես իրավացիորեն ընդգծում էր «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը, – ապա

հայերի համար կստեղծվի ավելի ծանր ու սարսափելի վիճակ» (39, 1898, 280): Թուրք ջարդարարներին արդարացնելու և ողջ մեղքը հայերի վրա բարդելու պահպանողական մամուլի ջանքերը լրագրողը իրավացիորեն համարում է արյունալի ոճիրը կոծկելու, թուրքական գազանային գործողությունները գլխիվայր ներկայացնելու ահավոր կեղծիք, որը թելադրված է քաղաքական նկատառումներով (10, 1895, 12, 855): Չարաչար սխալվում էին ինչպես ջարդարար թուրքական իշխանությունները, այնպես էլ նրանց ցարական պաշտպանները, որոնք տեղի ունեցած կոտորածները ցանկանում էին հիմնավորել անգլիական ինտրիգներով ու հայ ազիտատորների քարոզչությամբ: Թուրքիայում, ինչպես իրավացիորեն նկատում է «Սեվեր-նիե գապիսկի» ամսագիրը, կոտորածները կազմակերպվում ու իրագործվում էին Բ. Դռան ու սուլթանի անմիջական հովանավորությամբ ու նրանց թելադրանքով (64, 1914, 12, 106): Գիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ իրավացի էր Յու. Վեսելովսկին՝ ընդգծելով, որ հայկական կոտորածները վաղօրոք կազմակերպվել ու դաժանորեն իրագործվել են սուլթանի ու նրա կառավարության կողմից (63, 19): Ռուս առաջադեմ գործիչները, կատարելով իրենց մարդասիրական պարտքը, պաշտպանելով արյունաքամ արևմտահայությանը թուրքական դահիճներից ու դատապարտելով հայ ժողովրդի դեմ ցարական պաշտոնական մամուլի ու հետադեմ ուժերի անտեղի հարձակումները, գրում էին. «Մենք իրավունք չունենք թույլ տալու թուրքերին կոտորելու մի ողջ ժողովրդի և ինչպես մեր պահպանողական մամուլն է հանիրավի պիտակավորում, «բուևտարար» մի քանի հայի պատճառով կատարվի մեծ ողբերգություն» (10, 1895, 12, 855):

Թուրքական իշխանությունների կողմից Սասունի հայ բնակչության գազանային կոտորածների լուրը տարածվեց ռուսական կայսրության անծայրածիր տարածքներում, նույնիսկ ամենածայր հյուսիսում, Արխանգելսկի նահանգի Շենկարսկ գյուղում, ուր գյուղացիները առաջինը արձագանքեցին փախստական արևմտահայության օգնության կանչին (44, 1897, 110):

«Սասունի քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ գործադրված թուրքական գազանությունները,– նշում է «Ռուսակայա միսլ» ամսագիրը,– խորապես հուզեցին ու ավելոծեցին քաղաքակիրթ աշխարհը» (56, 1896, I, 151): Ռուսական մամուլը, հասարակական միտքը իր բոլոր դրսևորումներով խիստ զգայուն էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական մասսայական կոտորածների և այդ խնդրում Թուրքիայի ու եվրոպական

տերությունների միջև ծավալվող դիվանագիտական բախումների, ինչպես նաև միջազգային հանրության կողմից բարձրացրած տագնապի հանդեպ: Չնայած իշխանությունների ակնհայտ արգելքներին, հրեշավոր ջարդերի մանրամասնությունները լուսաբանվեցին ռուսական առաջադիմական, ինչպես նաև ազատական մամուլի էջերում: Հայկական կոտորածների լուսաբանման, հետևաբար արևմտահայության նկատմամբ ունեցած վերաբերմունքով տարրորշվում ու իրար էին բախվում առաջադիմական ու պահպանողական–հետադիմական ուժերը: Եթե երկրորդները ղեկավարվում էին քաղաքական որոշակի խնդիրներ հետապնդող իշխանամետ ուժերի կողմից ու կատարում էին նրանց քաղաքական պատվերը, ապա առաջինները գործում էին ինքնաբուխ, մերձավորին օգնելու, նրան սատար լինելու մարդասիրական մղումներով, իրենցով արտահայտում էին ռուս հասարակայնության ժողովրդական խավերի առաջադիմական, համամարդկային միտումները: Ռուս առաջադիմական մամուլը և նրա շուրջը համախմբված լրագրողներն ու հրապարակախոսները, պատմաբաններն ու գիտության այլ բնագավառների աշխատողները հայանպաստ գործունեության ծավալման ընթացքում հետևողական ու անզիջում պայքար էին մղում ցարական իշխանամետ ու պահպանողական մամուլի դեմ, նրանք աշխատում էին հերքել ու հիմնավորել վերջիններիս կողմից հայերին վերագրվող անհիմն մեղադրանքները (65, 1895, 72), ռուս ժողովրդին իրազեկել Արևմտյան Հայաստանում տիրող բռնություններին, հայ ժողովրդի ողբերգական վիճակին ու կոտորածների մանրամասնություններին: Նրանք միաժամանակ դատապարտում էին եվրոպական տերությունների երեսպաշտական նկրտումներն ու Հայկական հարցում նրանց երկդիմի քաղաքական խաղերը, որոնք դիվանագիտական կեղծ լեզվով «փիլիսոփայորեն խոսում էին մարդկային վեհ սկզբունքների մասին, սակայն հեռու էին ամենատարրական բարոյական սկզբունքները կիրառելուց» և անտարբերությամբ հնարավորություն էին քննծռում թուրք ջարդարարներին իր պատմական հայրենիքում կոտորել ու քննաշնչել հիմնավորց հայ ժողովրդին (64, 1894, 12, 103): Հայկական կոտորածներին ցավով էին արձագանքում առաջադիմական ազատական ուղղության «Ռուսակայա միսլ», «Լուչ», «Նեղելա», «Վեստնիկ եվրոպի», «Ռուսկոյե սլովո», «Նովոյե սլովո», «Սիբիրսկիե վեդոմոստի», «Միր բոժի», «Ռուսկիե վեդոմոստի», «Բիրժեվիե վեդոմոստի» և ուրիշ այլ լրագրեր ու ամսագրեր: Հայկական կոտորածների սահմուկեցուցիչ իրադարձություններ

րը ռուս հասարակական բոլոր խավեին հասցնելու և ահավոր սպանդի մանրամասներին իրազեկելու նպատակով անգլերենից թարգմանվեց և «Ռուսսկայա միսլ» ամսագրում ամբողջությամբ հրատարակվեց Սասունում տեղի ունեցած կոտորածի մասին ամերիկացի միսիոներ Ֆ. Դ. Գրինի ծավալուն գործը (56, 1895, 11, 104–110):

Հայ ժողովրդի դեմ ցարական պաշտոնական շրջանների ու նրանց ծայրահասակ լրատվամիջոցների անզուսպ հարձակումները առաջ բերեցին ռուս առաջադեմ մտածողների ու հասարակայնության մյուս սոցիալական շերտերի արդարացի ազնիվ զայրույթն ու վճռական հակազդեցությունը: Ստահոգված հայ ժողովրդի ողբերգությամբ՝ ազատական գաղափարների հետևորդ «Միր բոժի» ամսագիրը ռուս ընթերցողին էր ներկայացնում Արևմտյան Հայաստանում կատարված անմարդկային նախճիրը իր բոլոր մանրամասնություններով: «Կանայք, տղամարդիկ, ծերունիներ,– նշում է ամսագիրը,– դաժանորեն կոտորվել են... կարելի է մտածել, որ հրաման է տրվել կոտորել այդ մարդի բոլոր հայերին: Դժբախտ հայերը,– շարունակում է հոդվածագիրը,– որ կողմն էլ ուղղում էին իրենց հայացքը, ամենուր տեսնում էին իրենց անխիղճ դահիճներին, սակայն ոչ մի տեղ չէին գտնում հովանավոր ու արդար դատավոր» (50, 1896, 1, 233–234):

Կոտորվող անմեղ հայ բնակչության անել ու անօգնական վիճակը ընդարձակ հոդվածով ներկայացնում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը: «Կոտորածը ընթանում էր վայրի բռնարարներով: Մուլեզնած քրդերը չէին խնայում կանանց ու երեխաներին: Տղամարդկանց մորթոտում, նրանց մարմնի մասերը կտրատում էին իրենց կանանց աչքերի առջև, մինչ այդ կանանց հետ վարվում էին... հագուրդ տալով իրենց անասնական կրքերին: Ջինվորներն ակնդետ հետևում էին քրդերի գործողություններին, իսկ հաճախ գործի էին դնում սվինները: Դժբախտ հայերից ոչ ոք չազատվեց նրանց ձեռքից»: Քրդերից փախչող հայերն անմիջապես գնդակահարվում էին նրանց հետևող զինվորների կողմից» (44, 1895, 279): Հետևաբար թուրքական իշխանությունների հայտարարությունները հայերի մեղակցության մասին միայն ձև էր, միջոց՝ ապակողմնորոշելու համաշխարհային հասարակայնությանը, իրականում կոտորածների միջոցով Բ. Դուռը ցանկանում էր լուծել Հայկական հարցը: «Երբ յուրաքանչյուր անգամ կայսրությունում տեղի են ունենում զազանություններ,– գրում էր Վ. Գոլմստրեմը,– թուրքական իշխանությունները ամբողջ մեղքը բարդում են չարաբաստիկ Հայկա-

կան հարցի վրա, որը իբր բորբոքվում է Անգլիայի ինտրիգներով: Դրանով թուրքական իշխանությունները ձգտում են համոզել Եվրոպային, որ այսպես կոչված «հայ հեղափոխականները» կոսմոպոլիտ են, անարխիստներ, կարգի, օրինականության ու քաղաքակրթության դաժան թշնամիներն են» (44, 1897, թիվ 214): Հեղինակը ճիշտ է բացահայտում արևմտահայերի հուզումների պատճառները: «Ոչ մի կասկած չի հարուցում այն բանը,– գրում է նա,– որ այդ մարդիկ ծայրահեղության հասցրած, վրեժի կրակով վառված, իրենց կանանցից, քույրերից ու ծնողներից զրկված, արյան ու վրեժի են ձգտում եղբայրների ու ծնողների անխիղճ սպանության համար, հարեմներում խեղդվող ու պատվազրկված հարսների համար: Նման հեղափոխականներ,– շարունակում է նա,– այժմ Թուրքահայաստանում շատ են: Դրանք հասարակ, անգրագետ կրոնասեր գյուղացիներ են, որոնք անգամ գաղափար չունեն հեղափոխության ու հեղափոխականի մասին»: Վ. Գոլմստրեմը, վերլուծելով հայկական կոտորածների մանրամասները և հակադրվելով թուրքական կեղծ լրատվությանը, որը ընդունում ու մասսայականացնում էին ռուսական պահպանողական մամուլի օրգաններն ու հետադեմ ուժերը և իրենց համերաշխությունը հայտնելով նրանց, կրակե լեզվով գրած հոդվածներով համարձակորեն քննադատում էր թուրքական ջարդարարներին ու նրանց պաշտպան հետադեմ ուժերին, ցույց տալով, որ գազանային կոտորածները կատարվել են կառավարության կողմից, նրա թելադրանքով (44, 1897, 214): Շնորհիվ Վ. Գոլմստրեմի ու «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի»–ի տնօրեն իշխան Է. Է. Ուխտոմսկու, լրագիրը հաճախակի էր անդրադառնում հայկական թեմային, աչքի էր ընկնում հարցերի ինքնատիպ ու համարձակ լուսաբանումով, ճիշտ եզրահանգումներով:

Վ. Գոլմստրեմը, հետևելով ռուսական մամուլում հայկական իրադարձությունների մասին եղած հրատարակումներին և առատ նյութեր քաղելով Հայկական հարցի վերաբերյալ Եվրոպական մամուլի տեղեկատվական հոսքից, խորապես ծանոթանալով թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականության էությանն ու պարբերաբար կրկնվող կոտորածների մանրամասներին, որոնց մասին լսելիս անգամ արյունը սառում է մարդու երակներում, իրեն հատուկ համարձակությամբ սպանիչ քննադատության ենթարկելով ռուս հասարակական կարծիքը ապակողմնորոշող խավարամիտ ուժերին, իր կոչումը համարեց ռուս հասարակությանը հասու դարձնել օրհասական դրության մեջ հայտնված հայ ժողովրդի անհուն

վիշտն ու հոգսերը, ռուս ժողովրդի հոգուն արթնացնել հայերի նկատմամբ հարգանքի, կարեկցանքի ու օգնության ձգտում (59, VII):

Սասունում հայկական կոտորածների թեմային արծազանքեց «Լուչ» լրագիրը: «Չայերի կոտորածը կատարվում էր անխնա դաժանությամբ: Քրդերը կորցրել էին մարդկային դեմքը, վերածվել էին գազանների: Նրանք, շրջապատելով հայ կանանց մի խմբի, մերկացրին բոլորին ու վայրի մոլուցքով սկսեցին պարել ու այդ ընթացքում գետին գլորելով կանանց կտոր-կտոր էին անում» (83, 1896, թիվ 44): Կոտորածների քստմենտի տեսարանների մասին «Ռուսսկի լիստոկը» գրում է. «Քրդերը զինվորների հետ ներխուժեցին հայկական Սեմալ գյուղը: Բնակիչների մի մասը դիմադրելով դուրս եկավ գյուղից, իսկ մնացածներին փակեցին տներում ու հրդեհեցին: Օրը ցերեկով իրենց բնակարաններում այրվող մարդկանց մսահոտը տարածվել էր շրջապատում» (41, 1895, 305): «Գազազած մոլեռանդ քրդերը ճղում էին հողի կանանց որովայնը,– նշում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– դուրս քաշում դեռևս չծնավորված երեխաներին, խփում քարերին, նետում սփիռների վրա: Տղամարդկանց ենթարկում էին դաժան կտտանքների ու սպանում, շատերին խորովում էին կրակի վրա, խեղդում ծխով»: Այժմ ոչ մի կասկած չի հարուցում այն, որ 1894 թ. Սասունի հայկական կոտորածները կատարվել են Կ. Պոլսի կառավարության թելադրանքով, իրավացիորեն եզրակացնում է լրագիրը: Իր այդ միտքը հիմնավորելու և ռուսական լրագրերում հայերի մեղսակցության ու քրդերի անմեղության մասին թուրքական կառավարության հակահայ կեղծ ելույթներն ու հայտարարությունը ժխտելով լրագիրը հիմնավորում էր, որ հայկական կոտորածները նախապես պլանավորվել են թուրքական կառավարության կողմից: «Թուրքական կառավարությունը իր առջև խնդիր էր դրել կոտորել հայերին: «Դրա համար էլ 90–ական թվականների սկզբներին,– նշում է լրագիրը,– քրդերից կազմվեցին ռեզոլյար հեծելազորներ, որոնց առջև դրվեց հիմնական խնդիր, այն է՝ բնաջնջել փոքրասիական վիլայեթների քրիստոնյա բնակչությանը» (39, 1898, 280): Քրդերը, թալանի ու արյան ծարավ մահմեդական մոլեռանդ խառնամբոխը, կառավարական զինվորները Սասունում հաջողությամբ կատարեցին կառավարության առաջադրանքը: «Մազերը բիզ–բիզ են կանգնում միայն այն դեպքերը պատմելու ընթացքում,– գրում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– թե ինչ են արել հայկական հինգ վիլայեթներում հայ բնակչության նկատմամբ մահմեդական կրոնի ծառայողները, կատարելով

կառավարության կողմից ստանձնած պարտավորությունները» (39, 1898, 280): Չայերի դիմադրությունը հաղթահարելուց հետո քրդերը նրանց սկսեցին հետապնդել մոտակա լեռներում, ուր «մի թաքստոցում մոտ 500 մարդ սպանվեց» (27, 1895, 47) գրում է «Նեդելյան»: «Քրդերը հավաքել են փոքրիկ երեխաներին, շարք են կանգնեցրել, ապա զինվորները շարքերի վրա կրակ են բացել, փորձելով, թե մի գնդակով քանիսն են սպանվելու» (83, 1896, 78): «Մի այլ տեղում թաքստոցից դուրս բերելով մի խումբ երիտասարդ հայերի՝ պարանով կապել են միմյանց, նրանց վրա նավթ են լցրել ու այրել»: Ամենածանր կոտորածը տեղի ունեցավ լեռնային մի հովտում, ուր հավաքվել էին մոտ 3000 մարդ: Նրանցից ոչ մեկը չփրկվեց» (44, 1895, 284): Չակադրվելով պաշտոնական լրատվության միջոցներին, ինչպես նաև հետադեմ մամուլի օրգաններին, որոնք Սասունում տեղի ունեցած կոտորածների ամբողջ մեղքը բարդում էին հայերի վրա և նշավակելով տերությունների հանցագործ անտարբերությունը այդ խնդրում, «Նովոյե սլովո» ամսագիրը ընդգծում է. «Եվրոպան լուռ էր ու անտարբեր: Տերությունները զբաղված էին միայն իրենց եսամոլ շահերով: Չայկական արյունը նրանց չէր հետաքրքրում»: Լրագրողի զայրույթը ավելի է լեռնանում, երբ տերությունները մարդկային այդ նախճիրի նկատմամբ բոլորովին անտարբեր, միայն իրենց երկրի հասարակական կարծիքը մեղմելու նպատակով հաճախակի «սուլթանին ու Բ. Դռանը ծանծրացնում էին իրենց դիվանագիտական նոտաներով ու հայտարարություններով»: Չայ ժողովրդի վիճակը դրանից չէր լավանում, ընդհակառակը, սուլթանի հայատյաց կրքերն ավելի էին բորբոքվում, որից թեժանում էին կոտորածները: «Ավելի լավ կլինեք,– նշում է ամսագիրը,– որ եվրոպական տերությունները երբեք Չայկական հարցի առիթով չմիջամտեին: Ցանկալի չէր, որ հայերի համար որևէ վերջնագիր կամ արձանագրություն գրվեր» (61, 1896, 3, 173–175), քանի որ դրանք մնում էին միայն թղթի վրա, օգուտ չէին բերում, բայց վնասը մեծ էր: «Միր բոժի» ամսագիրը, արտահայտելով կոտորածին զոհ գնացած տասնյակ հազարավոր անմեղ հայերի արդարացի բողոքը առ Եվրոպա, նշում էր. «Դուք,– ասում էին զոհերը,– մեզ օգնության չեկաք: Մենք կոտորվեցինք: Այժմ նոր դաժանությամբ կոտորվում են մեր երեխաները: Եթե կարող եք, հաց տվեք մեր որբերին, որպեսզի մենք խաղաղ ու հանգիստ լինենք: Չայ զոհերի այդ անոթանքը ծանր խարան է Եվրոպայի ճակատին» ,– եզրակացնում է ամսագիրը (50, 1899, 3, 146):

Թուրքական կառավարությունը մշակել էր արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ծրագիր, որը «Թուրքական գործելակերպով շատ հեշտ է ու դյուրին: Այն Աբդուլ Չամիդի մտքի ծնունդն է», ընդգծում է «Նովոյե սլովո» ամսագիրը: Թուրքական իշխանությունները երկար ժամանակ ուժեղացնում էին հայերի նկատմամբ գործադրվող բռնություններն ու հետապնդումները: Նրանք խրախուսում էին քրդերի կողմից հայերի դեմ գործադրվող ասպատակություններն ու թալանը, և այդ առիթով հայերի մշտական բողոքները մնում էին անպատասխան: «Եվ վերջապես»,– նշում է «Ռուսկայա բանյա» ամսագիրը,–նման վիճակը թուրքական կառավարությանը բավարար չթվաց: Կ. Պոլսում մտածեցին գործողությունների նոր համակարգ: Որպեսզի մեկ անգամ ընդմիջտ ազատվեն սպառնացող հայկական վերածննդից ու եվրոպական տերությունների վախվորած, անհամարձակ պահանջներից, անհրաժեշտ համարեցին կոտորել հայերի մի մասին, մյուսին քայքայել, իսկ մնացածներին՝ բռնի մահմեդականացնել» (57, 1896, 3, 175–176):

Ռուս առաջադեմ մտավորականները կոտորածների սահմուկեցուցիչ տեսարանների նկարագրությանը զուգահեռ խորամուխ լինելով իրադարձությունների էության մեջ և կատարելով խորքային վերլուծություններ՝ բացահայտում էին ինչպես թուրքական, այնպես էլ թուրքամետ ուժերի կոտորածների վերաբերյալ տարածած ստոր կեղծիքները (50, 1899, 3, 148) ու զայրույթով մշակակում էին պահպանողական լրատվության այն հեղինակներին, որոնք հաճախ անգիտությամբ, ընդհանրապես հատուկ միտումով թուրքական կառավարության ձեռքով կատարված կոտորածների մեղքը, առանց խղճի խայթի, կեղծելով ճշմարտությունը, բարդում էին հայերի վրա (30, 1896, 3, 176):

«Նովոյե սլովո» ամսագիրը, մեծ տեղ տալով հայկական կոտորածների լուսաբանմանը «Հայերի կոտորածները» ընդարձակ ու արժեքավոր հոդվածում համարձակորեն մեղադրում է ցարական իշխանություններին, մասնավորապես արտգործնախարար Լոբանով–Ռոստովսկուն, հայկական կոտորածների ընթացքում ցուցաբերած անտարբերության համար: Հոդվածագիրը, առատ նյութեր քաղելով ֆրանսիական «Դեղին գրքերից», վերլուծելով ռուս–ֆրանսիական հարաբերությունները և դրանց անդրադարձը Հայկական հարցի նկատմամբ, բացահայտելով ռուս–անգլիական հակամարտությունները ու նկատի ունենալով Հայկական հարցում Անգլիայի ակտիվությունը, Թուրքիայի վրա տերությունների համատեղ ճնշում գործադ-

րելու նոր առաջարկը, միանգամայն արդարացի կերպով մեղադրում է Լոբանով–Ռոստովսկուն, որը 1895 թ. դեմ արտահայտվեց սուլթանի վրա համատեղ ճնշում գործադրելու տերությունների առաջարկին և օբյեկտիվորեն հնարավորություն ընձեռեց արյունարբու սուլթանին անպատիժ կոտորելու անգեմ հայերին (61, 1896, 3, 176): «Նախկին արտգործնախարարի կարծիքով»,– նշում է ամսագիրը,– մինչ կատարվածի մասին սուլթանին տեղյակ պահելը, պետք է նախապես ստուգել փաստերը, չպետք է նրանց համար պատասխանատու համարել սուլթանին և յուրաքանչյուր առիթով նրա վրա ճնշում գործադրել: Չի կարելի պահանջել նրանից, որ նրա յուրաքանչյուր միջոցառումը կատարվի հաջորդ օրը» (61, 1896, 3, 176): Ցարիզմի այդ միտումնավոր կողմնակալությունը, ինչպես նաև եվրոպական տերությունների անտարբերությունն ու նրանց շահադիտական նկրտումները, սպանիչ քննադատության էին ենթարկվում ռուս առաջադեմ մտավորականների կողմից: Անվանի հրապարակախոս «Ռուսսկայա միսլ» ամսագրի քաղաքական մեկնաբան Վ. Ա. Գոլցը, քննության առնելով Սասունի հայ ազգաբնակչության կոտորածների հարցը, նշելով անգեմ ու անմեղ հայերի կոտորածների զարհուրելի տեսարանները, զարմանք է հայտնում եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների քար անտարբերության համար, որոնք փոխանակ վերահսկողություն սահմանելու սուլթանի գործողությունների վրա և նրան ստիպելու դադարեցնելու կոտորածներն ու բարենորոգումներ անցկացնելու Հայաստանում, սուլթանի հետ աննպատակ դիվանագիտական գրագրություններ են վարում, իբրև թե բարենորոգումների ծրագրեր են մշակում, սակայն դրանք մնում են թղթի վրա: Կյանք չեն մտնում, իսկ հայերը կոտորվում են: Հաճախ ձանձրանալով բարենորոգումների զուր սպասումից և զգալով իրենց անհույս, անհեռանկար վիճակը, հայերը դիմում են ցույցերի՝ եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա գրավելու և բարենորոգումների գործը արագացնելու համար: Այդ ընթացքում սուլթանը օգտվում է առիթից, հայկական խաղաղ ցույցերը ներկայացնում է որպես ապստամբություն ու շարունակելով կոտորածները՝ արդարացում է փնտրում տերությունների մոտ: «Տերությունները»,– գրում է Վ. Ա. Գոլցը,– համերաշխ գործել չեն կարող: Հայերը տերությունների ու սուլթանի միջև ծավալվող դիվանագիտական խաղի զուհերն են» (56, 1895, 5, 208–210): «Հայկական կոտորածների համար հիմնական մեղավորը սուլթան Աբդուլ Չամիդն է»,– ընդգծում է «Նեդելյան» (27,

1895, 31):

«Ռուսական բեսեդա» ամսագիրը հայկական կոտորածների հարցում քննադատելով թուրք ջարդարարներին, իրավացիորեն ընդգծում է, որ հայկական անգեմ ազգաբնակչության դաժան կոտորածների խնդրում իր մեղքի բաժինն ունի Անգլիան, որը Ռուսաստանի հետ իր հակամարտությունների բորբոքման ընթացքում ցանկանում է ու պատրաստակամ է քրիստոնյա ազգաբնակչության արյունը հեղելով փակել Ռուսաստանի առաջընթացը դեպի Փոքր Ասիա (57, 1896, 7–8, 145), ինչպես նաև ճնշում գործադրելով սուլթանի վրա «ստիպում է վերջինիս հաշտվել Եգիպտոսի կորստի հետ» (58, 1895, 212): «Անգլիան է մեղավոր Հայաստանի աղետի համար,– նշում է ամսագիրը,– սակայն այդ բնավ էլ չի նշանակում, որ Ռուսաստանը կարող է հանգիստ խղճով նայել, թե թուրքերն ինչպես են կոտորում ու բնաջնջում հնամենի հայ ժողովրդին» (57, 1896, 7–8, 146): Հողվածի հեղինակը կոչ է անում ռուսական իշխանություններին ու հասարակայնությանը՝ միջամտել ու թույլ չտալ հայկական արյան հոսից արբեցած մարդասպան սուլթանին շարունակելու «պատմության մեջ չտեսնված մարդկային այդ սոսկալի սպանողը» (57, 1896, 7–8, 146): Թուրք ջարդարները վայրի մոլուցքով հայկական արյան գետեր էին հոսեցնում, տերությունները համատարած լուռ էին ու անտարբեր, ռուս հետադեմ ուժերը իրենց գործունեությամբ խանգարում էին երկրում հայամետ հասարակական կարծիքի ձևավորմանը: Համատարած այդ անտարբերության մեջ բարձր հնչեց ռուս անվանի բանաստեղծ Յու. Վեսելովսկու ձայնը: Նա թարգմանեց ու հրատարակեց Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» և տվյալ պահին իր բովանդակությամբ հայ ժողովրդի վիճակին համահունչ Լերենցի «Հայրենի եզերքին» բանաստեղծությունները (10, 1895, 4, 545–548)՝ աշխատելով ռուս ժողովրդի հոգում կոտորվող արևմտահայության հանդեպ առաջացնել համակրանքի ու կարեկցանքի զգացում:

Տերությունների դիվանագետների հետ կոտորածների հարցը քննարկելով՝ թուրքական կողմը աշխատում էր զոհերի թիվը նվազ ցույց տալ՝ կատարած հանցանքը կոծկելու նպատակով: Այդ նկատի ունենալով «Վեստմինսթերի» հանդեսը գրում էր. «Կոտորածների զոհերի մասին կան տարակարծություններ: Թուրքական ու թուրքամետ աղբյուրները Սասունում զոհերի թիվը ընդունում են 800 մարդ, իսկ մյուս աղբյուրները, որ ավելի անկողմնակալ են, օրինակ, Վիեննայի «Politische Zeitung»-ը նշում է 15. 000

զոհ» (10, 1895, 12, 854): Ձոհերի թվի նվազեցումը թուրքական դիվանագիտության համար խայծ էր՝ Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար տերությունների միջև սկսված բանակցությունները ձգձգելու, ժամանակ շահելու և հասարակական կարծիքը հանգստացնելու համար, սակայն դա կատարած մեծ հանցանքի համար մեղմացուցիչ հանգամանք լինել չէր կարող: «Մի՞թե կարևոր է իրար համադրել զոհերի թվի մասին տարբեր աղբյուրների տվյալները: Իրականում անհրաժեշտ է տերությունների գործնական միջամտությունը բարենորոգումները իրագործելու համար» (10, 1895, 6, 852),– նշում է «Վեստմինսթերի» հանդեսը:

Հայ բնակչության նկատմամբ թուրքական բռնությունների ու կոտորածների իրական պատկերն է ներկայացնում «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագիրը: «Բռնություններն ու կտտանքները,– նշում է ամսագիրը,– պարբերաբար կրկնվող կոտորածները և քրիստոնյա ռայայի չընդհատվող կողոպուտն ու թալանը վաղուց ի վեր դարձել են թուրքական կառավարության գործունեության հիմնական մեթոդները» (67, 1897, 2, 45): Հետևաբար, միտքը շարունակում է «Նովոյե օբոզրենիե» լրագիրը, իզուր են թուրքական իշխանությունների անտեղի ու անհիմն պատճառաբանությունները, թե իբր «ոչ թե թուրք զինվորները, այլ հայ հրոսակներն են այրել ու սրբապղծել մահմեդականների գյուղերը» (68, 1894, 3479): Նման հիմնավորումներն ու արդարացումները կեղծ են ու մտացածին, ժանրակաշիռ փաստերն ապացուցում են, որ «կոտորածները մամրամասանորեն կազմակերպվում ու իրականացվում էին կանոնավոր գործի մասնակցությամբ» (59, 102):

Համաշխարհային հասարակության կարծիքը ապակողմնորոշել ցանկացող թուրքական իշխանությունների քննադատությանն են նվիրված «Բիրժեվիե վեդոմոստի» լրագրում լույս տեսած բազմաթիվ հոդվածներ, որոնցից առանձնապես ինքնատիպ է «Հայկական գազանությունների մասին» հոդվածը, որում հեղինակը սարկազմի հզոր ուժով ձաղկում է թուրք այն լրագրողներին, որոնք կեղծելով իրական փաստերը, կատարելով իրենց իշխանությունների քաղաքական պատվերը, կոտորածների զոհ դարձած հայերի դեմ կռվում են իրենց իսկ զենքով. «Մենք մինչև այժմ,– նշում է լրագիրը,– լսել էինք թուրքական գազանությունների մասին, սակայն այժմ Թուրքիայում փոխվել է իրադրությունը: Թուրքերը որոշեցին հայերի դեմ ուղղել իրենց զենքը, հանդես գալով հայերի «գազանությունների» մերկացումներով» (39, 1895, 259):

Սասունի կոտորածները հանգամանալից ու համակողմանի լուսաբանվել են «Գերված ժողովուրդը» ընդարձակ հոդվածում: Կոտորածները իրավացիորեն համարելով թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության արդյունք՝ հեղինակը ժխտում է թուրքական, ինչպես նաև ցարական ու հետադեմ ուժերի անհիմն բարբառանքները, որոնք կոտորածների պատճառը միտումնավոր կերպով փնտրում էին հայ ազիտատորների գործունեության մեջ ու դրանք դիտում օտար ուժերի պրոպագանդայի հետևանք: Հոդվածի հեղինակը իրավացի է, երբ հայկական հուզումները համարում է կառավարության հռչի վարչակարգի, հայ ժողովրդի նկատմամբ նրա գործադրած բռնաճնշումների արդյունք:

Նա ընդգծում է, որ իշխանությունների հարկային ծանր քաղաքականությունը, հայ գյուղացիության հողազրկումը, քրդական վայրի ցեղերի մշտական ասպատակություններն ու թալանը հայ բնակչության մեջ առաջացնում էին օրինական զայրույթ ու հուզումներ, սակայն հայ ժողովուրդը չէր կարող զենքի դիմել, որովհետև հայը ոչ միայն զենք չուներ, այլ թուրքիայում նա զրկված էր այն ունենալու և կրելու իրավունքից: Հեղինակը անարգանքի սյունին գամելով թուրք ջարդարարներին, ինչպես նաև իրենց մեղքի բաժինը ունեցող եվրոպական տերություններին, քննադատության հզոր ուժով ձաղկում ու պախարակում է ռուս այն լրագրողներին, որոնք հայերին մեղադրում էին հեղափոխական լինելու համար, միաժամանակ խանգարում էին ռուս հասարակությանը օգնության ձեռք մեկնելու Ռուսաստանում ապաստանած արևմտահայ փախստականներին: Ռուս հասարակությանը կոչ անելով օգնության ձեռք մեկնել դժբախտ հայերին, հոդվածագիրը իրավացիորեն պահպանողական մամուլի ու նրա շուրջը համախմբված մտավորականների գործունեությունը համարում է մոլորություն, որը քաղաքական խաղերով է թելադրված: «Ցավոք սրտի,– գրում է հոդվածագիրը,– քրիստոնյա ժողովուրդների քաղաքականությունը դեռևս ներծծված է հեթանոսական հաշվարկներով», և «նրանք թույլ էին տալիս, որպեսզի քրիստոնյա եվրոպայի աչքի առջև թուրքերը կոտորեին արևմտահայերին» (27, 1895, 41):

Հայկական կոտորածները թուրքական իշխանությունների համար դարձել էին կենցաղ, նրանց գործունեության բնորոշ կողմը: «Կոտորածների ընթացքում ջարդարարները ձգտում էին գերազանցել միմյանց, հայերին հոշոտելու ու ոչնչացնելու նոր ձևեր ու մեթոդներ հորինելով: Նրանք ոչ միայն սպանում էին հայ տարրը վերացնելու համար, այլ դաժանորեն

տանջում էին, կտտանքների ենթարկելով, դրանից հաճույք էին ստանում» (44, 1895, 264):

Վլ. Գոլմստրենը անդրադառնալով մահմեդականների մոլեռանդ բնավորության էական կողմերին, որի մոլեգնությունը առանձնապես բացահայտվում էր քրիստոնյաների կոտորածների ընթացքում, նշում է. «Զընդունելով այլ օրենք, բացի Մոհամեդի ասույթները, քարոզելով ու խրախուսելով անհավատների քայքայումն ու ոչնչացումը, թուրքերը մնում էին բարբարոսներ, չնայած ապրում էին քրիստոնյա ժողովուրդների հարևանությամբ: Ենթարկվելով միայն իրենց անասնական կործանարար բնազդներին ու նվաճումների անհագ ծարավին,– շարունակում է նա,– թուրքերն իրենց հպատակ ժողովուրդներին նայում են որպես իրենց ստրուկների, որոնք պետք է «ծառայեն տիրողների կոպիտ ցանկություններին»» (44, 1895, 264): Շարունակելով իր մտորումները թուրքերի վայրի մոլուցքի ու մարդկային արյուն հեղելու անհագ ծարավի մասին, ընդգծում է, որ «Կ. Պոլսի գրավումից անցել է մոտ 4, 5 հարյուր տարի, սակայն այն ասիական քոչվորների վրա ոչ մի քաղաքակիրթ հետք չի թողել: Ինչպես նրանք եղել են վեց դար առաջ թուրքեստանի լեռներում ու հովիտներում թալանչիներ, այդպես էլ մնացել են մինչև այժմ, երբ կոտորում ու ոչնչացնում են հազարավոր քրիստոնյաների միայն այն բանի համար, որպեսզի տիրանան նրանց ունեցվածքին» (44, 1895, 264): Թուրքերը իրենց տիրապետության բոլոր դարերում կոտորել են քրիստոնյաներին, «նրանք իրենց հպատակների վրա ներգործելու ուրիշ միջոց չգիտեն: Թուրքերը միայն կոտորում են» (83, 1895, 88),– իրավացիորեն ընդգծում է «Լուչ» լրագիրը:

Շարունակելով հայկական կոտորածների թեման՝ Վլ. Գոլմստրենը արդարացիորեն սուլթանի ջարդարարական գործողությունների ուղղակի ու անմիջական հանցավորը համարում է տերություններին, որոնք ղեկավարվելով իրենց եզոիստական շահերով, լուռ ու անտարբեր են մնում Փոքր Ասիայում շարունակվող կոտորածների նկատմամբ, իսկ սուլթան Աբդուլ Համիդը շարունակում է կոտորածը (44, 1896, 8):

Սասունի կոտորածներին անդրադարձավ Յ. Դ. Լազարևը իր «Հայերի թշվառ դրության պատճառները և Սասունի կործանման պատասխանատուները» գործում: Դեռևս 1881 թ. լույս տեսավ նրա «Պատմություն թուրքահայաստանի Բուլանըխ շրջանի քուրդ Մորոյի չարագործությունների ու իշխանությունների՝ քրդերի ու հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի

մասին» (45, 1881, 236), ապա 1882–ին՝ «Մի քանի խոսք օսմանյան լծի տակ գտնվող անպաշտպան հայերի ճակատագրի, քրդերի վիճակի բարելավման ու հայերի ծագման մասին» գործը (271, 84, 1881, 128, 138):

3. Դ. Լազարևը հիմնավորապես լուսաբանելով Սասունի իրադարձությունները՝ ջերմությամբ է արտահայտվում թուրքական լծի դեմ արևմտահայության մղած ազատագրական պայքարի նկատմամբ՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդը «մղում էր կենաց ու մահու պայքար» (49, 21): Ի հակադրություն ցարական դիվանագետների ու նրանց հակահայկական գաղափարները պրոպագանդող հետադեմ ուժերի, որոնք իրենց պաշտպանության տակ առնելով կոտորածների կազմակերպիչ սուլթանին ու նրա ջարդարար կառավարությանը, ձգտում էին կոտորածների մեղքը բարդել կոտորածների զոհի հայ ժողովրդի վրա, ցանկանալով մոռացության մատնել հայ և Հայաստան անունները, Յ. Դ. Լազարևը ռուս հասարակությանը ներկայացնելով Ասորեստանի ու Բաբելոնի ժամանակներից սկիզբ առած հայոց պատմությունը, շեշտելով համաշխարհային քաղաքակրթությանը հայ ժողովրդի մատուցած ծառայությունները, բացահայտում էր հայկական կոտորածների իրագործման պատճառներն ու այն իրականացնելու հանգամանքները, միանգամայն իրավացի կերպով ընդգծում, որ ջարդերը ծրագրվել և կենսագործվել են Բ. Դռան ու սուլթանի անմիջական ցուցումով և նրա հովանավորությամբ, իսկ կատարողներն են քուրդ համիդիե գնդերը, կառավարական բանակը և մահմեդական խառնամբոխը (49, 22): Այս նույն միտքը պաշտպանում է նաև «Ռուսսկոյե սլովո» լրագիրը՝ ընդգծելով, որ թուրքական կառավարությունը մտադրված է կոտորածներով բնաջնջել հայերին, լուծել Հայկական հարցը» (76, 1896, 229):

Թուրքական իշխանությունները այդ հանցագործ ու հրեշավոր ծրագիրը իրականացնում էին քայլ առ քայլ, այնպիսի զգուշավորությամբ, որպեսզի իրենց դեմ չհարուցեին համաշխարհային հանրության զայրույթը, ինչպես նաև առիթ չստեղծեին տերությունների արտաքին միջամտության համար:

Այսպիսով՝ 1894 թ. Սասունի հայ բնակչության կոտորածներին ռուս հասարակության սոցիալական տարբեր շերտեր արծագանքեցին յուրովի: Իշխանամետ մանուլը և պահպանողական ուժերը, աշխատելով հավատարիմ մնալ ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության նոր ընթացքին, պաշտպանելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության սկզբունքը, իսկ Հայկական հարցում՝ չմիջամ-

տելու կողմնորոշումը, իրենց պաշտպանության տակ էին վերցնում թուրք ջարդարարներին, Սասունի իրադարձությունները մեկնաբանում թուրքական իշխանությունների կեղծ ու ստահող հայտարարությունների հետևողությամբ, ձգտում ապակողմնորոշել ռուս հասարակությանը, խանգարելով երկրում հայամետ հասարակական կարծիքի ձևավորմանն ու կոտորածից մազապուրծ արևմտահայ փախստականներին օգնության կազմակերպման գործին:

Հակառակ այդ ուժերի, ռուս առաջադիմական մամուլն ու նրա շուրջը համախմբված մտավորականները հայանպաստ մեծ աշխատանք կատարեցին ինչպես Սասունում տեղի ունեցած իրադարձությունների ճիշտ ու օբյեկտիվ լուսաբանման, այնպես էլ վայրագ կոտորածների հեղինակ թուրքական իշխանությունների ու նրանց հովանավորողների քննադատության գործում: Նրանց գործունեության արդյունքում ռուս հասարակությունը աստիճանաբար հիմնովին իրազեկ էր դառնում տեղի ունեցած կոտորածների իրական դրդապատճառներին ու նրանց մանրամասնություններին, նրանք անարգանքի սյունին էին գամում թուրք ջարդարարներին, նրանց սև գործի նույնքան մեղսակից արևմտյան տերությունների կառավարություններին:

### **3. Հայկական բարենորոգումների մայիսյան ծրագիրը և տերությունների տարածայնությունների լուսաբանումը ռուսական մամուլում**

Սասունում հայկական զանգվածային կոտորածներով սուլթանական կառավարությունը նպատակ ուներ վճռելու իր համար երկու կարևոր խնդիր. ամենից առաջ նվազագույնի հասցնել ազգաբնակչության կազմում հայերի տոկոսային հարաբերությունը, իսկ նպաստավոր պայմանների առկայությամբ իսպառ վերացնել հայ ազգը: մյուս կողմից ցանկանում էր պարզել, թե եվրոպական տերությունները ինչպիսի մարտավարություն են կիրառելու Օսմանյան կայսրության նկատմամբ, հակազդեցության ինչ միջոցներ են գործադրելու:

Սուլթանի հայաջարդ մեքենայի առաջին փորձը պսակվեց հաջողությամբ: Կոտորածը դադարեցնելու և հանցագործ թուրքական կառավարությանն ու արյունարբու սուլթանին պատժելու համար «տերություններից ոչ մեկը մատը մատին չխփեց» (76, 1896, 3, 176): Նրանց բորբոքված կրքերը

և ցուցադրական ակտիվությունը Սասունում տեղի ունեցած ջարդերը հետաքննելու ուղղությամբ ավարտվեցին դիվանագիտական կատակերգությամբ (10, 1896, 12, 855): Իրենց երկրների հասարակական կարծիքը մեղմելու և թուրքական կառավարությանը ստեղծված կացությունից դուրս բերելու համար Կ. Պոլսի Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացրին հայկական բարենորոգումների ծրագիրը: Չնայած անգլիական ու ցարական դիվանագետների քաջ հայտնի էր, որ այդ բարենորոգումները կյանք մտնել չեն կարող, այնուամենայնիվ, շարունակում էին խորացնել ու սրել տարածայնությունները բարենորոգումների առանձին դրույթների շուրջը:

Ոգևորված տերությունների ամտարբերությամբ, օգտվելով նրանց միջև եղած հակամարտություններից, սուլթանն իր հերթին բորբոքելով դրանք՝ Արևմտյան Հայաստանը և կայսրության մյուս հայաշատ վիլայեթները վերածեց մասսայական կոտորածների թատերաբեմի, ուր մեծ տերությունների դիվանագիտական խարդավանքների ու նրանց շահագիտական նկրտումների զոհասեղանին որպես քաղաքական նոխազ արյունաքամ էր լինում ողջ արևմտահայությունը:

Աբդուլ Համիդը քաջ գիտակցելով, որ տերություններից ոչ մեկը առանձին երբեք չի ցանկանա միջամտել Թուրքիայի ներքին գործերին, իսկ այդ խնդրում համագործակցությունը բացառվում էր, բարենորոգումների հարցում ձեռնամուխ եղավ իր ավանդական մեթոդին, այն է՝ ձգձգել, ժամանակ շահել, մինչև որ տերությունների համար կստեղծվի ավելի կարևոր այլ խնդիր, և նրանք կմոռանան Հայկական հարցը, «Բարենորոգումների գործը կնետվի արխիվ» (10, 1896, 7, 422), հանգիստ կթողնեն իրեն, հնարավորություն կստեղծվի նոր կոտորածների համար: Սուլթանը չափազանց խորամանկ էր ու հեռատես և իր ենթադրությունների մեջ չսխալվեց (76, 1895, 317): Դեկավարվելով արևելյան դիվանագիտության մուրբ ու խարդախ մեթոդներով, իր համար նպաստավոր պահին նա մերձենալով եվրոպական որևէ տերության հետ, միաժամանակ շարունակելով բոլորի նկատմամբ մնալ թշնամի, օգտվում էր նրանց ներհակ հակասություններից ու նրանց պահանջներին ոչ մի զիջում չէր կատարում (56, 1896, 12, 114):

Հայկական բարենորոգումների մայիսյան ծրագրի շուրջը բուռն, դժվարին ու տևական դիվանագիտական պայքար ծավալվեց սուլթանի ու տերությունների և մասնավորապես Անգլիայի ու Ռուսաստանի միջև:

Ցարական կառավարությունը դեռևս բարենորոգումների նախագիծը կազմելու ընթացքում դեմ արտահայտվեց բարենորոգումների ոգուն և շարունակեց պահպանել իր դիրքորոշումը այն թուրքական կառավարությանը ներկայացնելուց հետո ևս: Բարենորոգումները, որոնք անցկացվելու էին Արևմտյան Հայաստանում, առանձնահատուկ նշանակություն ունեին ինչպես Անգլիայի, այնպես էլ Ռուսաստանի համար, որովհետև Փոքր Ասիայում ու նրա հարակից շրջաններում խաչաձևվում էին Անգլիայի ու Ռուսաստանի առավել կարևոր շահերը:

Ցարիզմը Բալկաններում անհաջողության մատնվելուց հետո Արևմտյան Հայաստանը դիտում էր Միջերկրական ծով և Միջագետք շարժվելու կարևոր հանգուցակետ, ուստի հայկական բարենորոգումների իրականացման դեպքում, ըստ նրա ստեղծվում էր հայկական արտոնյալ մարզ, որը եվրոպական տերությունների կամ միայն Անգլիայի հովանավորությամբ ինքնավարության կարգավիճակով (29, 3447, 85) լուրջ վտանգ կստեղծեր Ռուսաստանի համար, հակադրվեց բարենորոգումների ծրագրին, քանի որ «այդ տարածքից Անգլիայի շահերը կուղղորդվեին դեպի Անդրկովկաս» (55, 1895, 7028):

Ապագայում շատ հավանական էր դառնում անգլո-ռուսական բախումը, չէր բացառվում նաև Անգլիայի դրդումով թուրք-ռուսական առճակատումը: Ուստի իր սահմանների հարևանությամբ նման վտանգներով հղի արտոնյալ տարածքի ստեղծումը ցարիզմը դիտելով ոչ նպատակահարմար, համաձայնություն չտվեց բարենորոգումները արագացնելու համար սուլթանի վրա համատեղ ճնշում գործադրելու տերությունների առաջարկությանը, գտնելով, որ Հայկական հարցը Թուրքիայի ներքին խնդիրն է (29, Ժ. 3435, և. 14) ուստի բոլոր հնարավոր միջոցներն օգտագործում էր բարենորոգումների հարցը վիժեցնելու համար: Եվ այդ նպատակով ցարական դիվանագիտությունը առաջ մղեց հայ բնակչության փոքրամասնություն լինելու հարցը, մի հանգամանք, որը իրավացիորեն մերժում էր 80-ական թվականներին, երբ տերությունների համանոտային տրված թուրքական պատասխանում հայ ազգաբնակչության թվաքանակը միտումնավոր ներկայացվում էր ընդամենը 14%, առարկության արժանացավ ցարական դիվանագետների կողմից, իսկ այժմ այդ նույն թվաքանակը արդեն դիտվում էր վճռական փաստարկ հայկական բարենորոգումները վիժեցնելու համար:

Հարկ է նշել, որ ցարական դիվանագիտությունը այն ընդունում էր որ-

պես պատրվակ ու խարդախ խաղերի ծխածածկույթում՝ պարուրում Հայկական հարցում իր որդեգրած նոր կողմնորոշումը: Նրա համար այժմ նպատակահարմար չէր միջազգային քննարկման խնդիր դարձնել Հայկական հարցը:

Ցարիզմի դիրքորոշման նման փոփոխությունն արձագանքվում էր ներքին քաղաքականության ոլորտում, որը հստակորեն արտահայտվում էր այդ հարցի շուրջը ռուսական տարբեր սոցիալական շերտերի ու խմբավորումների միջև ծավալվող գաղափարական պայքարում, ու այդ բախման ընթացքում պարզորոշ առանձնանում էին իշխանամետ–հետադեմ և առաջադիմական թևերը:

Հայկական բարենորոգումների ծրագրում, այսպես կոչված «հայկական ինքնավար մարզի» գաղափարը սվիններով դիմավորեցին պահպանողական–հետադեմ մամուլի օրգանները: Այդ ուժերի կողմից «անջատողական» և «հեղափոխական» մտացածին որակավորումով կովկասահայության դեմ սանձազերծված պայքարն ավելի թեժացավ «արտոնյալ մարզի» գաղափարը փայփայելու մեջ արևմտահայությանը ներկայացված նոր մեղադրանքով: Թուրքական ու ցարական հետադիմական ուժերի կողմից հայ ժողովրդի դեմ մղված համատեղ պայքարում միաձուլվում էին ու թրծվում նրանց գաղափարական կռվանները, որոնք ավելի ընդգծված դրսևորվեցին հայկական արտոնյալ մարզի դեմ ձեռնարկված «անհոգի ու անզուսպ արշավանքով» (56, 1896, 12, 113):

Ցարական պաշտոնական շրջանները և պահպանողական ուժերը կարծում էին, թե ինքնավար հայկական մարզի ստեղծման դեպքում Անգլիան և Եվրոպական մյուս տերությունները, Արևմտյան Հայաստանում ձեռք բերելով մեծ ազդեցություն ու հաստատվելով այնտեղ, անապահով վիճակ կստեղծեն Ռուսաստանի սահմանների հարևանությամբ: «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրերը կարծում էին, որ «հայերին ինքնավարություն վերապահելու դեպքում կվճարվեն Ռուսաստանի շահերը Փոքր Ասիայում, կփակվեն դեպի հարավ տանող ուղիները» (55, 1895, 7033), իսկ Կ. Պոլսից անհանգստացած Նելիդովը հայտնում էր, որ օգտվելով առիթից՝ «ինքնավարություն կպահանջեն ռուսահայերը» (29, ժ. 3440, լռ. 17–22): Նրանք մտավախություն ունեին, որ կարող է ապակայունացվի տարածաշրջանը, Ռուսաստանի համար ստեղծվի վտանգավոր օջախ: Ծաղրելով պահպանողական մամուլի նման մտայնությունը և մերժելով հայկական հու-

զումների պատճառը Անգլիային վերագրելու նրանց մտացածին վարկածը՝ «Վեստմինսթեր Եվրոպի» հանդեսը ընդգծում էր. «Ըստ նրանց Ռուսաստանի հարևանությամբ Անգլիան իբր թե ցանկանում է ստեղծել հայկական ինքնություն պետություն, որը ռուսներին համար կդառնա մշտական դժվարությունների ու հոգսերի առարկա: Այդ նպատակով Անգլիան հայերին մղում է խռովությունների» (10, 1895, 12, 855–856): Մինչդեռ իրականում արևմտահայերը թուրքական լծից իրենց ազատագրության հարցում ակնկալում էին օգնություն միայն Ռուսաստանից (56, 1896, 11, 128): Ա. Ն. Սազոնովը քննարկելով արևմտահայության ինքնավարության խնդիրը և հակադրվելով ցարական պաշտոնական շրջաններին՝ արդարացիորեն գրում էր, որ Անդրկովկասում հայերը մշտապես Ռուսաստանի հանդեպ եղել են հավատարիմ ու նվիրված, ուրեմն հայկական ինքնավար մարզը Ռուսաստանի համար վտանգավոր օջախ դառնալ չի կարող: «Փոքր Ասիայում ապրող քրիստոնյաները լիիրավ իրավունք ունեն ապրելու և օգտվելու գոյատևման նույն իրավունքից ու արտոնություններից,– գրում է Ա. Ն. Սազոնովը,– ինչ ազատագրված բուլղարները: Ստեղծված ինքնավար հայկական մարզը վերջ կդնի քրիստոնյաների ու մահմեդականների միջև եղած անվերջ խժժություններին ու խառնակ վիճակին: Կղադարեն կոտորածները» (56, 1896, 12, 115): Հրապարակախոսը հայ ժողովրդի ողբերգական վիճակի բարելավման և կոտորածները դադարեցնելու երկու ուղի է մատնանշում: Առաջինը «Թուրքիայի մասնատումն է,– գրում է նա,– որով թուրքահպատակ բոլոր ճնշված ժողովուրդները, ինչպես նաև թուրքահայերը կստանան անկախություն»: Ընդդիմանալով այդ ուղու հակառակորդներին, որոնք կարծում էին, թե դրանով կխախտվի Եվրոպայի հավասարակշռությունը (53, 1896, 47)՝ Ա. Ն. Սազոնովը արդարացի կերպով հակահարված է տալիս նրանց, ցույց տալով, որ Թուրքիայի ամբողջականության պաշտպանության տեսությունը ստեղծել են տերությունների դիվանագետները, դրանով մշտապես վարագորելով իրենց եսապաշտական շահերը (56, 1896, 12, 113):

Համադրելով անցյալի իրադարձությունները և զուգահեռ անցկացնելով Օսմանյան լծից բալկանյան ժողովուրդների և արևմտահայերի հնարավոր ազատագրման միջև, իրավացիորեն պնդում են, որ առաջինների պարագայում Եվրոպայի հավասարակշռությունը երբեք չի խախտվել, հետևաբար այդ տեղի ունենալ չի կարող նաև արևմտահայերի ազատագրման դեպքում ևս (56, 1896, 12, 115):

Հայ ժողովրդի ազատագրության երկրորդ ուղին Ա. Ն. Սազոնովը համարում է տերությունների հովանու ներքո ստեղծվող հայկական ինքնավար մարզը, որին դիմադրում են իշխանամետ ուժերն ու պահպանողական մամուլը՝ կարծելով, որ Ռուսաստանի անդրկովկասյան սահմանների հարևանությամբ եվրոպական տերությունների հովանավորությամբ ստեղծված հայկական մարզը լի է վտանգներով: Այնտեղից Անգլիան կսպառնա Ռուսաստանի շահերին (52, 1896, 138): Մերժելով նման մտայնությունները, Ա. Ն. Սազոնովը գրում էր. «Առողջ բանականությամբ ընկալված հայկական ինքնավարությունը ոչ մի կերպ չի խանգարում ռուսական ազգային շահերին, Ռուսաստանի քաղաքական ձևերին ու հետաքրքրություններին» (56, 1896, 12, 103): Ա. Ն. Սազոնովին առարկում էին նրա գաղափարական հակառակորդները, թե հայերը ստանալով ինքնավարություն կկողմնորոշվեն դեպի Անգլիան և նրա հովանավորությունը ստացած ինքնավար Հայաստանը կփակի դեպի Փոքր Ասիա Ռուսաստանի առաջընթացի ուղին (55, 1896, 7134): «Ինքնավար Հայաստանը,– նշում է «Սեվերնոյե սիյանիե» ամսագիրը,– ամենից առաջ իր գոյությամբ, եթե Ռուսաստանը ցանկանա, պայմաններ կստեղծի ռուս–թուրքական սահմանի հարևանությամբ խաղաղ ու ապահով վիճակ ստեղծելու: Այդ ինքնավար մարզի բնակչությունը կցանկանա ոչ թե Անգլիայի հովանավորությունը, այլ բնականորեն կձգտի դեպի Ռուսաստանը, ուր մեծ թվով հայեր են ապրում» (77, 1908, 1, 104–107): Եթե ցարական պաշտոնական շրջանները և հետադեմ ուժերը «սահաբեկված էին հայկական ինքնավարության ստեղծման գաղափարից, անգամ ինքնավար մարզի ստվերից» (51, 50), ու Նելիդովը տազնապատ Կ. Պոլսից հայտնում էր, թե «ռուսահայերը նույնպես շուտով ինքնավարություն կպահանջեն» (78, Ժ. 3134, Ն. 87), ապա ռուս առաջադեմ մտավորականները այդ ինքնավարության մեջ տեսնում էին հավատակից ու հարևան, մշտական կոտորածների սարսափների մեջ գտնվող հայ ժողովրդի ազատագրման հնարավորությունը: «Թուրքահայերի անձնական ու հասարակական շահերի անվտանգության ապահովումը հնարավոր է միայն տեղական ինքնավարության հաստատմամբ, կամ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի հովանու տակ վերցնելով» (10, 1896, 3, 418),– նշում էր «Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը: Անշուշտ, արևմտահայության ազատագրման քննարկվող երկու ուղին էլ նպատակահարմար էին ու լիովին բավարարում էին թուրքական դարավոր լծի տակ կքած, կոտորածների ահավոր տազնապալը ապրող

արևմտահայությամբ: Այդ խնդիրը քննարկելով՝ «Նեդելյան» ընդգծում էր, թե ինքնավարությամբ և թե առանց դրա «հայերը բնականաբար ձգտում են միակ քրիստոնյա հարևանը, Ռուսաստանը, դեպի իրենց հարազատ Ռուսահայաստանը» (27, 1895, թիվ 41):

Անշուշտ, ակնհայտ ճշմարտություն էր այն, որ արևմտահայությունը Ռուսաստանի հովանու տակ անցնելու դեպքում իր վրա կրելու էր ցարական քյուրկրատիայի կամայականությունների ծանրությունը, ենթարկվելու էր սոցիալական ճնշման ու շահագործման, սակայն անժխտելի է այն հանգամանքը, որ թուրքական տիրապետության համեմատությամբ ռուսահպատակությունը անհամեմատ առաջադիմական էր: Արևմտահայությունը ձեռք կրերեր արևելահայության իրավական կարգավիճակը, և ամենակարևորը, կվերանար թուրքական կառավարության կողմից նրանց ֆիզիկական քնաջնջմանն ուղղված կոտորածների վտանգը:

Հայկական ինքնավար մարզը, ընկած լինելով Ռուսաստանի համար կարևոր մարտավարական հանգուցակետում՝ ոչ թե կխանգարեր ու կդառնար վտանգավոր սպառնալիքի օջախ, այլ ընդհակառակն, այն կապահովեր Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը, կշարունակեր մնալ Փոքր Ասիայում ռուսական ազդեցության տարածողը: Հանրահայտ ճշմարտություն է, որ եթե Ռուսաստանը ռուս–թուրքական սահմանի երկարությամբ չուներ ռազմական ամրություններ ու բերդեր, ապա ուներ հավատակից ու Ռուսաստանին հավատարմությամբ նվիրված հայերով բնակեցված սահմանագիծ (44, 1897, 231), որի ամրությունն ու հուսալիությունը, ընդգծում էին հայամետ գործիչները, մշտապես հաստատվել է բոլոր ռուս–թուրքական պատերազմների փորձով, երբ Արևմտյան Հայաստան մտած ռուս զինվորներին հայերը դիմավորում էին գրկաբաց :

«Նեդելյան»–ն ճիշտ է նկատում, նշելով, որ հայկական ինքնավարությունը երբեք չի կարող վտանգ ներկայացնել ու «վնասել ռուսական ազգային շահերը»: Եթե անգամ «Արևմտյան Հայաստանին նույնիսկ լրիվ անկախության հնարավորություն տրվի, այդ դեպքում ևս այն գտնվելու է Ռուսաստանի հովանու ներքո, որովհետև նրանց (արևմտահայերի – Պ. Ս.) նպատակը ինքնավարությունից այն կողմ չի անցնում: Եվ ի՞նչն է այստեղ վտանգավորը, նույնիսկ եթե այն փոքր–ինչ հակադրվի Ռուսաստանին, մի՞թե արժանի է մեծ ժողովրդին իր չնչին շահը վեր դասել փոքր հարևանի ամենաթանկ կարիքից», չէ՞ որ հայ ժողովրդի ազատագրումը պետք է լինի «ռուսական

պատմության զարդը» (27, 1895, 41),– եզրակացնում է լրագիրը՝ նկատի ունենալով հայ ժողովրդի դեպի Ռուսաստան ունեցած անխախտ հավատն ու նվիրվածությունը:

Ռուս առաջադեմ գործիչները մեծ տերությունների կողմից հայկական բարենորոգումների նախագծի մշակման ընթացքում նախապես այն կարծիքին էին, որ այդ բարենորոգումների կենսագործմամբ իր վերջնական լուծումը կստանա Չայկական հարցը, հայ ժողովրդի «ողբերգական պատմության լքված կփակվի և նրա համար կբացվի նոր, լուսավոր էջ» (44, 1895, 260), վճռական փոփոխության կենթարկվի արևմտահայության վիճակը, վերջ կդրվեն քրդական ասպատակություններին ու թուրքական բռնություններին, կբացառվեն կոտորածները: Նրանք, միաժամանակ ճիշտ գնահատելով պատմական իրականությունը, իրավացի էին, երբ սուլթանական կառավարության կողմից իրագործվող զանգվածային ջարդերն ու Չայաստանի իսպառ հայաթափումը դիտում էին Ռուսաստանի դեմ ուղղված գործողություններ, որոնք «մեծ վնաս էին հասցնում Ռուսաստանի շահերին Փոքր Ասիայում» (39, 1895, 291): «Մեր շահերը չեն կարող չվնասվել այն բանից,– նշում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Չայաստանի մի մասում տեղի են ունենում կոտորածներ, կատարվում են այնպիսի անկարգություններ, որոնք ոչնչացնում են գոյության բոլոր հնարավոր պայմանները: Չայերի բնաջնջումը և Ռուսաստանի սահմանների հարևանությամբ մահմեդական բնակչության համահավաք բնակեցումը իր մեջ վտանգ է պարունակում Ռուսաստանի համար» (39, 1895, 291),– եզրակացնում էր լրագիրը: Իսկ «Նեդելյան» կոչ էր անում Ռուսաստանին՝ օգնել արևմտահայերին, քանի դեռ ուշ չէ: «Եթե վաղ թե ուշ,– նշում էր լրագիրը,– թուրքահպատակ քրիստոնյաները պետք է ազատագրվեն թուրքական ատելի լծից, ապա հարկ է, որ այդ ազատագրումը լինի այժմ, քանի դեռ ուշ չէ: Իսկ Ռուսաստանը չի կարող մասնակից չլինել հայերի ծակատագրին, քանի որ Չայաստանի զգալի մասը գտնվում էր իր ձեռքին...» (27, 1895, 41): Լրագրողը արևմտահայության ազատագրման հարցում Ռուսաստանի օգնության անհրաժեշտությունը պատճառաբանում է նաև նրանով, որ «Մեր հայ ազգաբնակչությունը (արևելահայերը – Պ. Ս.), որը օգտվում է բարեկեցությամբ, որոնք մեր բանակին տվել են գեներալներ ու սպաներ և քաղաքացիական հիմնարկներին՝ նշանավոր պաշտոնյաներ, չեն կարող անտարբեր վերաբերվել Թուրքահայաստանում տեղի ունեցող

կոտորածներին, որոնց անհնարին է վերջ դնել դիվանագիտական նոտաներով» (39, 1895, 291), ուստի «հայերը հովանավորություն և պաշտպանություն սպասում են ոչ թե Անգլիայից, այլ Ռուսաստանից» (39, 1897, 16):

Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը ի դերն հանեց ռուս մտավորականների հույսերը: Նրանց նման կանխագուշակումները զուրկ էին իրական հիմքից, ուստի իրականացվել չէին կարող, քանի որ մեծ տերությունները այդ հարցում միաբան չլինել չէին կարող (85, 1897, 15): Լ. Ա. Կոնարովսկին, «ժամանակակից կյանքում խաղաղության գործոնները» արժեքավոր հոդվածում անդրադառնալով այդ խնդրին, միանգամայն իրավացի էր՝ նշելով, որ «արևելյան, ինչպես նաև Չայկական հարցի լուծումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ տերությունների արդեն ձևավորված զինակցությունների միջև համերաշխություն հաստատվի: Քանի որ նման գործընթացը բացառվում է, և նրանք ղեկավարվում են միայն իրենց շահերով, ուստի հարցի լուծումն անհնարին է» (56, 1895, 9, 131): Անվանի մտավորականը միաժամանակ չէր բացառում Թուրքիայում արտաքին միջամտությամբ բարենորոգումների իրագործման և նույնիսկ օսմանյան կայսրության մասնատման հնարավորությունը (56, 1897, 4, 69), որի ընթացքում Արևմտյան Չայաստանը կանցներ Ռուսաստանի կազմի մեջ, կազառագրվեր արևմտահայությունը: Անշուշտ ազատագրման նման ուղին նախընտրելի էր հայ ժողովրդի համար:

Չայկական բարենորոգումների, մասնավորապես ինքնավար մարզի խնդրում նախապես ճիշտ չէր կողմնորոշվում հայասեր հրապարակախոս Վ. Գոլմստրենը: Նա, որպես ցարական պաշտոնական լրատվության օրգան «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» առաջատար լրագրող և անհատ մտածող, հանդես էր գալիս որպես Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականության անհաշտ ու երդվյալ հակառակորդը: Եվ պատահական չէր, որ այդ հարաբերակցությամբ նա հայկական կոտորածների հիմնական հանցագործը համարում էր Անգլիային: «Անգլիայի քաղաքականությունը արևելքում մշտական ավազակային զավթումների շարան է,– գրում է նա,– հումանիզմի ու կարգի պահպանման քողի տակ ձգտում է դժվարությունների հարուցել Եվրոպայում»: Անգլիան, արդարացիորեն ընդգծում է նա, Թուրքիայից ստանալով Կիպրոսը, հազարավոր անգլիացի հայերի հանձնեց նրա դաժանությանը: «Անգլիայի մեղքով,– գրում է նա,– 1878 թ. Բեռլինի կոնգրեսում և Կիպրոսի համաձայնագրով Չայկական հարցը հանվեց Ռու-

աստանի հովանու տակից և հանձնվեց եվրոպական տերությունների խնամակալությանը: Այդ ընթացքում սուլթանը նախապատրաստեց ու 1895–1896 թթ. իրագործեց հայկական զանգվածային կոտորածները» (44, 1897, 78): Այստեղից էլ նա չէր վստահում ու չէր հավատում, ավելին՝ ատելությանը էր լցված Անգլիայի Արևելքում գործադրած դիվանագիտական միջոցներին, որոնցով, հանուն իր շահերի, հրդեհում էր Արևելքը: «Անգլիան պահանջելով ինքնավարություն Թուրքիայի հպատակ փոքր ազգերի համար,– գրում է նա,– իրականում ձգտում է Եվրոպայի արևելյան մասերում հաստատել հավիտենական խառնակչություն: Բրիտանական դիվանագիտությունը ձգտում է Արևելյան հարցը թողնել բաց, խճճված, որպեսզի պղտոր ջրում ծուկ որսա»: Նա հավատացած էր, որ ասիական Թուրքիայում, ուր տիրապետում են քրդական վայրի ցեղերը և թուրքական կամայականությունը, ինքնավարությունը կդառնա նոր կոտորածների պատճառ: Անհրաժեշտ է այնտեղ հաստատել ուժեղ իշխանություն: Թուրքիան չէր ցանկանում ու չէր կարող այնտեղ ուժեղ իշխանություն հաստատել, ուստի, եզրակացնում էր Վլ. Գոլմստերենը, անհրաժեշտաբար այդ տարածքները պետք է օկուպացվեն Ռուսաստանի կողմից (44, 1897, 9): Սակայն դա չի նշանակում, որ Վլ. Գոլմստերենը չէր ցանկանում արևմտահայության վիճակի բարելավում, կոտորածների դադարեցում, ընդհակառակն, նա կոչ էր անում Ռուսաստանին օգնել արևմտահայերին, իսկ ռուս ժողովրդին ճիշտ էր կողմնորոշում հայ փախստականներին օգնության կազմակերպման գործում:

Ռուս առաջադեմ մտավորականները, քննադատելով պահպանողական և հետադեմ ուժերի թրջասիրությունը, հետևում էին Թուրքիայում ծավալվող իրադարձություններին և իրատես լինելով՝ գտնում էին, որ թուրքական իշխանությունները երբեք էլ կյանքի չեն կոչի նշված բարենորոգումները, ընդհակառակն, սուլթանը խորամանկորեն ժամանակ է շահում ձգձգելով, խաբում է սին խոստումներով ու առաջ է վարում կոտորածների գործը: «Նովոստի» լրագիրը խորությամբ լուսաբանելով բարենորոգումների խնդիրը և նկատի ունենալով այն իրագործելու նպատակով սուլթանի ստեղծած հանձնաժողովի գործունեությունը՝ նշում է. «Թուրքական հանձնաժողովը բոլոր ծրագրերի և նախագծերի գերեզմանն է: Եթե թուրք պաշտոնյան,– շարունակում է լրագիրը,– ասում է, թե այս հարցի ուսումնասիրման համար ստեղծված է հանձնաժողով, ապա դա պետք է հասկանալ որպես միայն

հռետորական հարցադրում, որը նշանակում է հարցը հանձնված է արխիվ» (65, 1899, 118), իսկ իրականում կոտորածները շարունակվում են:

Ռուս առաջադեմ մտավորականները հայկական բարենորոգումների իրագործման հնարավորության ժխտման թուրքական ու ցարական և վերջինիս դրդմամբ հետադեմ մամուլի փաստարկումները մերժելու և բարենորոգումների իրագործման հույժ կարևոր անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով հարուստ փաստական նյութ կուտակեցին ու շրջանառության մեջ դրեցին Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թվաքանակը ճշգրտելու և հիմնավորելու ուղղությամբ: Նրանք վճռականորեն շեշտում էին, որ հայ ազգաբնակչության թվաքանակի հարցը չի կարելի դիտել որպես վճռական փաստարկ հայկական բարենորոգումները մերժելու համար (71, 1902, 9–20), որովհետև ինչպես թուրքական, այնպես էլ ցարական տվյալները կեղծ էին (56, 1914, 2, 19) և վերցված էին թուրքոֆիլ Վ. Քինեի և Ռ. Ի. Տերմենի գործերից, որոնք առաջնորդվել էին միայն թուրքական աղբյուրների հաղորդած տվյալներով:

Դեռևս մինչև տերությունների կողմից հայկական բարենորոգումների նախագծի կազմումը «Ռուսկայա միսլ» հանդեսը, քննարկելով Հայաստանում հայ բնակչության քանակի հարցը, նշում էր. «Արևմտահայերի թվաքանակի մասին թուրքական մարդահամարի կոպիտ կեղծիքը բացահայտելու համար բավական է նկատի ունենալ 1889 թ. Թուրքիայի համար ոչ թշնամական տրամադրված դիվանագիտական բնագավառի մի աշխատակցի ուսումնասիրությունը, որից պարզվում է, որ անկախ Բ. Դռան կողմից Հայաստանի տարածքի արհեստական կրճատման ու տարբեր վարչական շրջաններում մահմեդական ազգաբնակչության կազմում հայերի ընդգրկման, Սուլում, Բուլանըխում, Ախլաթում հայերը կազմում են բնակչության 50–65%–ը, Վանա լճի արևելյան ափի ընդարձակ տարածությունում և բուն Վանում՝ 80%–ը, Խարբերդի հարթավայրում նրանք կազմում են զգալի մասը: Այնուհետև,– շարունակում է հողվածագիրը,– Երզրումի հարթավայրում ազգաբնակչության 1/3–1/4–ը հայեր են, իսկ Երզրում քաղաքում՝ 30%–ը, Վանա լճի արևմտյան ափի տարածքում՝ 30%–ը, հարավային ափի երկայնքով, Գավաշ–Բիթլիս շրջաններում՝ 20%–ը, Վարդոյում՝ 24%, Քղիի հյուսիսային մասում՝ 18%, Քղի–Քեսաբի շրջանում՝ 20–25%–ը: Սա այն դեպքում, երբ վիճակագիրը հաշվարկը կատարելիս նկատի չի ունեցել նստակյաց հայ բնակչության և քոչվոր քրդերի առանձնահատկությունները» (56, 1892,

7, 36–37): Այս հարցին կրկին անգամ ամսագիրը անդրադարձավ 1896 թ., այս անգամ արդեն բարեփոխումների հարցի քննարկման առիթով: Հայ ազգաբնակչության փոքրամասնություն լինելու պաշտոնական շրջանների մոտեցման կեղծիքն ամսագիրը այս անգամ հիմնավորում է Աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի տարեկան հաշվետվության տվյալների մանրամասն քննարկմամբ: «Աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքը,– նշում է «Ռուսական միսլ» ամսագրում,– ղեկավարվելով միայն գիտական նպատակներով, իր տեղեկագրերում ներկայացրել է թուրքահայաստանի ազգաբնակչության մարդահամարի մասին երկու տարբեր սկզբնաղբյուրների վիճակագրական իրարամերձ տվյալներ: Առաջինի հեղինակն է Մորդանանը, որն իր ուսումնասիրությունների ընթացքում ղեկավարվել է թուրքական սկզբնաղբյուրներով, իսկ մյուսը պարոն Էրիցովն է: Ըստ որում, խմբագրությունը նշում է, որ ինքը կասկածում է թուրքական աղբյուրների հավաստիությանը, ղեկավարվում է միայն քրիստոնյա հոգևորականների ուսումնասիրություններով: Յուսիսային և Արևելյան Եփրատի, ինչպես նաև Վանի շրջակայքում գերակշռում են հայերը, սակայն զարմանալի է, որ Յուսիսային Եփրատի վերին հոսանքում, Էրզրումի տարածքում հայերը համեմատաբար քիչ են,– շարունակում է հոդվածագիրը, միաժամանակ փորձ կատարելով նշել դրա պատճառները՝ ընդգծում է,– այս տարածքից հազարավոր հայեր տեղափոխվել են Ռուսաստան, ու այդտեղ թուրքական կառավարությունը բնակեցրել է մահմեդականների, ստեղծելով բնական պաշտպանական ամուր գոտի: Թուրքական կառավարությունն այդ գործելակերպը ավելի ակտիվացրեց 1878 թ. հաջորդած տարիներին: Իսկ ինչ վերաբերում է ազգաբնակչության տոկոսային հարաբերությանը, ապա կարելի է նշել. Վանի վիլայեթում հայեր՝ 79.5%, քրդեր՝ 20%, թուրքեր՝ 5%, Մուշի վիլայեթում՝ հայեր 64%, քրդեր՝ 26%, թուրքեր՝ 8.5%, Էրզրումի վիլայեթում հայեր՝ 42%, քրդեր՝ 9.5%, թուրքեր՝ 26%, ղզլբաշներ՝ 20.5%, հույներ՝ 1% (56, 1896, 11, 118):

Ի հակադրություն պաշտոնական շրջանների այդ նկրտումների, առաջադեմ ուժերը, հենվելով անկախ ու անկողմնակալ սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների վրա՝ հայերի թիվը ներկայացնում էին համեմատաբար ճիշտ ու իրական, գտնելով, որ հայերը թուրքիայի որոշ շրջաններում անգամ մեծամասնություն էին կազմում (56, 1892, 17, 32–35): «Փոքր Ասիայում, որը թուրքերի կողմից նվաճվել է արյունով և սրով,– նշում է Ա. Ն. Սա-

զոնովը,– այսօր էլ ապրում են հազարավոր հայեր, իսկ հայկական 6 վիլայեթներում հայերը կազմում են մեծամասնություն: Այդ տարածքներում ապրում են 2000000 հայեր» (56, 1896, 11, 119): Հայ բնակչությունը իրականում գերազանցում է քրդերին ու թուրքերին, եզրակացնում է հոդվածագիրը: Անգամ պաշտոնական մամուլի օրգան «Պրավիտելստվեննիյ վեստնիկը» հավաստում է, որ հայերի թիվը Արևմտյան Հայաստանում կազմում է 2100000, այսինքն՝ ազգաբնակչության 39%–ը (54, 1895, 215): Հայկական հարցին ու թուրքիայում ծավալվող իրադարձություններին քաջատեղյակ Ի. Օ. Լևինը փաստական հարուստ տվյալների հիման վրա մերժում է Արևմտյան Հայաստանում հայ բնակչության փոքրամասնություն լինելու վարկածը, ըստ որի հայերի թիվը ցույց է տրված խիստ նվազեցված՝ 828841 մարդ, կամ ազգաբնակչության ընդամենը 15.4%–ը, գտնում է, որ «Ավելի նոր ու հավաստի տվյալներով Արևմտյան Հայաստանի տարածքում հայերը այդպիսի փոքրամասնություն չեն կազմում, ինչպես նշում են թուրքական աղբյուրները»: Այնուհետև բաղդատելով տարբեր սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները՝ հիմնավորում է, որ Արևմտյան Հայաստանում մահմեդականները կազմում են 41.3%, հայ բնակչությունը՝ 43% (56, 1914, 2, 18), իսկ «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը գտնում է, որ թուրքիայում ընդհուպ մինչև 1895–1896 թթ. կոտորածները հայերի թիվը կազմում էր 3400000 մարդ, որից 2000000 Արևմտյան Հայաստանում (10, 1896, 11, 715): «Բիրժելիե վեդոմոստի» լրագրի Կ. Պոլսի թղթակցի հաղորդած տվյալների համաձայն թուրքիայում ապրում էին 4000000 հայ, որի գերակշռող մասը՝ Արևմտյան Հայաստանում (72, 96): Եթե նկատի ունենանք, որ թուրքական բռնությունների ու մասսայական ջարդերի հետևանքով բազմահազար հայեր կոտորվեցին, սփռվեցին աշխարհով մեկ, բռնի դավանափոխության ենթարկվեցին, ապա պետք է հավաստի համարել «Նովոյե սլովո» ամսագրի հայտնած տվյալը, ըստ որի՝ «մեկ և կես միլիոն հայեր ապրում են իրենց հայրենի բնօրրանում՝ Վանա լճի, Արարատի ու Կարինի միջև ընկած բարձրալեռնային շրջաններում» (61, 1896, 3, 174): Հրապարակախոս Վյաչեսլավ Գուսինը իր «Թուրքահայաստանի ճակատագիրը» ծավալուն հոդվածում մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայ ազգաբնակչության թվի վերաբերյալ արդեն առաջին աշխարհամարտի նախօրեքն ընդգրկող ժամանակաշրջանում: Ըստ նրա՝ Արևմտյան Հայաստանում հայերը կազմում են բնակչության 38%–ը, մահմեդականները՝ 25.4%, մյուս փոքր ազգերը՝ 35.7%: Այնուհետև հեղինա-

կը արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տարբեր աղբյուրների համադրման ու թուրքական պաշտոնական մարդահամարի հաղորդած տվյալների բաղադրմամբ իրավացիորեն կատարում է ճիշտ եզրահանգում, այն է՝ Արևմտյան Հայաստանում, մասնավորապես վեց վիլայեթներում հայերը կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը (62, 1915, 2, 153–154): Հենվելով դրա վրա՝ Ա. Յաշենկոն եզրակացնում է, որ հայկական վեց վիլայեթներում ապրող 4000000 ազգաբնակչության 40% կազմում են արևմտահայերը (73, 1916, 54), հետևաբար հայ ազգաբնակչության թվաքանակի արհեստական նվազեցումն ու կեղծումը չեն կարող փաստարկ հանդիսանալ հայկական բարենորոգումների, մասնավորապես հայկական ինքնավար մարզի մերժման համար, ինչպես կատարում էին թուրքական իշխանությունները և ցարիզմը, որոնց կեղծ ու ստահող հիմնավորումները բացահայտվեցին ու փաստական արժանահավատ տվյալներով հետևողականորեն հերքվեցին ռուս առաջադեմ մտավորականների կողմից:

Օգտվելով տերությունների միջև եղած հակամարտություններից, ինչպես նաև բարենորոգումների շուրջը եղած տարածայնություններից՝ սուլթանը խորամանկորեն երկրում ծայր առած հակապետական շարժումները աշխատում էր հանգցնել հայկական կոտորածների արյան հեղեղով ու դրանք վարագուրել թղթյա ռեֆորմներով (39, 1895, 317): Թուրքիայում գոյություն ունեցող կարգերը դեմ էին ամեն մի առաջընթացի, մանավանդ երբ այդ նորը հայկական բարենորոգումների տեսքով էր: Մահմեդական հոգևորականությունը, թուրքական իշխանությունները, թալանի ծարավ մոլեռանդ խառնամբոխը դրան դիմավորեցին սվիներով և ինչպես իրավացիորեն ընդգծում է Լ. Ա. Կոմարովսկին «Բացառվեցին բարենորոգումների կենսագործման բոլոր դրական հնարավորությունները, իսկ այդ ընթացքում որպեսզի խուսափեք տերությունների պարտադրած բարենորոգումներից, սուլթանը խորամանկորեն մերթ դեպի Անգլիայի, մերթ Ռուսաստանի կողմն էր թեքվում, իսկ 90–ական թվականների վերջերին գրկաբաց դիմավորեց Գերմանիային, ընդունեց նրա հովանավորությունը» (51, 43):

Աբդուլ Համիդը արևմտյան տերությունների հետ սակարկում էր տասնյակ հազարավոր հայերի արյան շուրջը, աշխատում էր հանգստացնել հասարակական կարծիքը, սակայն նրա ուղեղում մշտապես տիրում էր նոր կոտորածներ սանձազերծելու հրեշավոր միտքը: Աշխատելով տերություններին ցույց տալ, որ զբաղված է բարենորոգումների նախապատրաստման

գործով՝ Արևմտյան Հայաստան և հայաբնակ նահանգներ գործուղեց հատուկ հանձնաժողով Շաքիր փաշայի գլխավորությամբ (58, 1895, 217):

Հայկական վիլայեթներում այդ հանձնաժողովի երևալու առաջին պահից սկսած՝ մահմեդական ազգաբնակչության մեջ մեծ նախապատրաստական աշխատանքներ տարվեցին: «Ըստ երևութի սուլթանը նրան գործուղել էր,– խորհմաստորեն մշում է «Լուչ» լրագիրը,– նոր կոտորածներ նախապատրաստելու համար» (83, 1895, 76): Հողվածի հեղինակի կանխագուշակումը ճիշտ էր: «Շաքիր փաշայի անցած բոլոր վայրերում, նրանից հետո, սկսվում էին կոտորածները» :

Այսպիսով՝ Սասունում տեղի ունեցած զանգվածային ջարդերից հետո տերությունները, առաջադրելով հայկական բարենորոգումների նոր ծրագիր, թվում էր, թե համատեղ գործողություններով կստիպեին սուլթանին դադարեցնել գազանային կոտորածները, կզբաղվեին հայ բնակչության վիճակի բարելավումով, սակայն իրականում նրանք, ցանկանալով հանգստացնել իրենց երկրի հասարակական կարծիքը, Հայկական հարցը իբրև մանրադրամ օգտագործում էին տարածաշրջանում իրենց դիրքերը ամրապնդելու համար: Այդ հանգամանքից օգտվելով՝ Աբդուլ Համիդը վարպետորեն խուսանավում էր և առավել ուժգնությամբ շարունակում էր կոտորածները:

Բարենորոգումների նախագիծը սուլթանին հանձնելուց հետո տերությունները մայիս–սեպտեմբեր ընկած ժամանակամիջոցում զբաղված էին անարդյունք դիվանագիտական գրագրություններով, իսկ ներկայացրած բարենորոգումները շարունակում էին մնալ թղթի վրա: Տերությունների ճնշման ներքո, ինչպես նաև հասարակական կարծիքը հանգստացնելու մտադրությամբ 1895 թ. հոկտեմբերի 5–ին սուլթանը հրապարակեց իրադե բարենորոգումների վերաբերյալ, որից արևմտահայերը արժանացան մահմեդական ազգաբնակչության կատաղի գայությունին, ավելի խորացավ նրանց հայտնացությունը (76, 1896, 216): Սուլթանը խորամանկորեն դանդաղում էր, ավելի էր բորբոքում ու սրում մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունը, հովանավորում էր նրանց գազանային հաշվեհարդարը հայերի նկատմամբ, որը «թուրքական ձևով կոչվում էր կարգի վերականգնում» (39, 1895, 291): Սուլթանի այդ խարդախ գործելածնը նկատի ունենալով՝ «Վեստմիկ Եվրոպի» հանդեսը մշում էր. «Մի կողմից ժողովրդականացնում էր լայնախոստում հրաման, որն իր պերճախոսությամբ ու սուլթանի բարի

մտադրություններով կարող էր զինաթափ անել արտասահմանյան դիվանագետներին, իսկ մյուս կողմից միջոցառումներ էր մշակում «հեղափոխական ոգով» տոգորված հայերին արմատախիլ անելու համար» (10, 1895, 11, 410): Սուլթանը «բարի մտադրություններով» բանակցություններ էր վարում տերությունների դիվանագետների հետ, սակայն իրականում բացի նրա սին խոստումներից, ոչ մի դրական արդյունք, առաջընթաց չէր արձանագրվում: Բանակցությունների «այդ հողի վրա,– նշում է «Վեստմինսթերի» հանդեսը,– թուրքական դիվանագետները բազում անգամ հաղթանակ են տարել եվրոպական տերությունների կաբինետների համառության նկատմամբ: Վտանգ կա, որ այս անգամ նա հարցը կավարտվի անարդյունք, թուրքահայերի ճակատագիրը չի փոփոխվի, քանի դեռ նրանք կմնան թուրքերի տիրապետության տակ» (10, 1895, 7, 372–373):

Ի վերջո սուլթանը որոշեց գործել վճռական: Արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը, երկրի հայաթափումը նա արդեն այնքան բացահայտ էր կատարում, որ նույնիսկ չխորշելով եվրոպական տերությունների միջամտությունից, «որպեսզի ցույց տար, թե ինչպես է ծաղրում նրանց «նրբանկատ» դիվանագիտությունը, կոտորածները Փոքր Ասիայից տեղափոխեց Կոստանդնուպոլիս, նրանց աչքի առջև երկու անգամ կազմակերպեց հայերի ջարդ» (61, 1896, 3, 176): Գազանային կոտորածների նոր պոռթկման համար թուրքական իշխանություններին լավ առիթ ներկայացրին Յնչալյան կուսակցության գործիչները (75, 1896, 7), որոնք ցանկանալով արագացնել բարենորոգումների գործը 1895 թ. սեպտեմբերի 18–ին (30–ին) Կ.Պոլսի հայկական Գում–Գափու թաղամասում գտնվող մայր եկեղեցում հավաքվեցին ու շարժվեցին դեպի Բ. Դուռը՝ խնդրագիրը մեծ վեզիրին հանձնելու համար: Ցուցարարներին դիմավորեցին ոստիկանները և զինվորները: Երբ ցուցարարները բացատրում էին, որ ցանկանում են մեծ վեզիրին հանձնել իրենց խնդրագիրը, նրանց վրա ոստիկանները կրակ բացեցին: «Թուրքական մոլեռանդությունը ընդունել էր ահռելի չափեր,– նշում է լրագիրը,– հայերի խնդրագրում հակապետական ոչինչ չկար»: Նրանք միայն բողոքում էին պարբերաբար կրկնվող հետապնդումների, ձերբակալությունների, քրդերի գազանությունների դեմ» (44, 1895, 266): Թուրքական իշխանությունները վաղօրոք տեղյակ լինելով ցույցի մասին՝ ոստիկաններին և զինվորներին դրեցին գործողության մեջ: Նրանց միացավ քաղաքի մոլեռանդ մահմեդական խառնամբոխը: «Սկսվեց հայերի կոտորածը,–

նշում է «Լուչ» լրագիրը: Փողոցներում ընկած էին դիակներ: Շատերը կենդանության նշաններ էին ցույց տալիս: Մոտեցող մարդասպանները մահակներով լռեցնում էին նրանց ու շարունակում իրենց գործը: Խուճապը տարածվեց ողջ քաղաքում: Հայկական թաղամասերը շրջապատված էին: Մոլեռանդ ամբոխին հետևում էին կարգի պաշտպան ոստիկանները, որոնք նույնպես մասնակցում էին կոտորածին» (83, 1895, 284):

Թուրքական իշխանությունները Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածի համար մեղադրում էին հայերին, որ իբր թե հայերը զինված ելույթ են ունեցել կառավարության դեմ: Թուրքական կառավարության այդ հայտարարությունները ցարական դիվանագետներն ընդունում էին որպես ճշմարտություն: Կ. Պոլսից Նելիդովը հայտնում էր. «անկարգությունների պատճառը եղել են հայերը» (29, 3433, 62): Սակայն ռուսական մեկ այլ վավերագիր նշում է. «Հայերի թաղամասը գտնվում է մահմեդականների տնօրինության տակ: Նրանք զինված խմբերով հարձակվում էին հայերի տների վրա: Կողպտում ու կոտորում էին, մինչև որ շեփոքի ազդանշանով անկարգությունները դադարեցին» (29, ժ. 3447, յ. 74):

Հայերի նախահարձակ լինելու և զինված ապստամբության մասին թուրքական վարկածը նույնությամբ կրկնում էին «Մոսկովսկիե վեդոմոստի», «Նովոյե վրեմյա», «Պրավիտելստվեննիյ վեստնիկ» լրագրերը: Մամուլի այդ օրգանների կողմից թուրքական մտացածին ու կեղծ լրատվության տարածումը առաջացնում էր ռուս առաջադեմ մտավորականների իրավացի վրդովմունքը: Առաջադեմ մամուլի օրգանները հիմնավորապես հերքում էին այդ կեղծ տեղեկատվությունները և ռուս հասարակությանը ցույց տալիս ու ընդգծում այն սկզբնաղբյուրը, որից քաղաքական նկատառումներով մշտապես օգտվում էին պաշտոնական ու հետադեմ մամուլի օրգանները: «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը պարզաբանելով հայերի նախահարձակ լինելու թուրքական իշխանությունների հայտարարությունների միտումնավորությունն ու կեղծիքը և պատասխանելով «Նովոյե վրեմյային» ու վերջինիս գաղափարակիցներին, արդարացիորեն ընդգծում է. «Հայերի ընդվզումը նախահարձակ մահմեդականների գործողությունների ճիշտ ու իրավացի պատասխանն է: Հուսահատության հասած հայերը,– շարունակում է լրագիրը,– տեսնելով անխուսափելի կորուստը գերադասում են մեռնել պայքարելով» (39, 1895, 280): Թուրքական իշխանությունները և նրանց հետևողությամբ «ռուսական որոշ լրագրեր,– նշում է «Նովոյե սլովո» ամսա-

գիրը,– կեղծում են իրականությունը և հայերին ներկայացնում են նախահարձակ կողմ, կոտորածի մեղքը բարդում նրանց վրա: Այդ նպատակով էլ հայերի զոհերի քանակը քիչ են ցույց տալիս, իսկ մահմեդականներինը՝ շատ: Մինչդեռ իրականում բոլորովին հակառակն է»: Իրավացի է «Նովոյե սլովո» ամսագիրը այդ ամենը համարելով նախապես կազմակերպված սադրանք, որով իշխանությունները ձգտում էին հիմնավորել, որ հայերը ապստամբել են իշխանությունների դեմ, ցանկանալով արդարացնել կոտորածը (61, 1896, 3, 176):

4. Պոլսում տեղի ունեցած ցույցը, որը իբր թե ահաբեկել էր սուլթանական կառավարությանը, «Հայկական ցույց» խորագիրը կրող հոդվածում մանրամասնությամբ ներկայացնում է «Բիրժեվիե վեդոմոստի» 4. Պոլսի թղթակիցը: «Ծանոթանալով մանրամասնություններին՝ կարելի է մտածել, որ ոչ թե հայերն են այնքան վախեցրել թուրքերին, որքան իրենք՝ թուրքերը օգտվելով «ցույցից» ազատություն տվեցին իրենց մոլեռանդությանը և Բ. Դռան հայ հպատակների դեմ ազգային թշնամանքին, որոնք մտադրվել են ձեռք բերել քրիստոնյա տերությունների պաշտպանությունն ու հովանավորությունը»:

Միանգամայն իրավացի է լրագրողը, նշելով. «Ցույցը հակակառավարական ոչինչ չէր պարունակում: Մարդիկ գնում էին կառավարությանը ներկայացնելու իրենց խնդրագիրը: Սակայն ջարդվեց նրանց հավատը: Եթե հայերի խնդրագիրը ընդունվեր, ապա այդ բոլորը այլ կերպ կլիներ: Բ. Դուռը կարող էր ընդունել այն և նետել իր արխիվը, որտեղ պահվում են ոչ քիչ թվով անպատասխան մնացած դիվանագիտական նոտաներ և թուրքական կառավարության կողմից տրված բազմաթիվ, բայց երբեք էլ չիրականացված խոստումներ: Սակայն խնդրագիրը չընդունեցին, և ոստիկանությունը դիմեց զենքի, կրակ բացեցին ցուցարարների վրա՝ որպես խռովարարների: Սպանվեցին ցուցարարներից շատերը, ինչպես նաև մահմեդականներ: Սակայն սպանվածների առյուծի բաժինը կազմում էին հայերը:

Թուրքական իշխանությունների հայտարարություններից պարզվում է, որ կանայք ու երեխաները նույնպես համարվում են խռովարարներ, որի համար էլ վերջիններս սպանվել են ոչ թե փողոցում, այլ տներում: Ցույցերի ու դրան հաջորդած ջարդերի ընթացքում զոհվել են մոտավոր հաշվարկներով 2000 մարդ:

Տերությունների, այդ թվում նաև Ռուսաստանի դիվանագիտական նոտան սթափեցրեց Բ. Դռանը, սակայն սուլթանը դանդաղում է: Հագիվ թե մեծ

տերությունների արժանապատվությունը կհանդուրժի թույլ տալու սուլթանին շարունակելու հետագա ոճրագործությունը, որը կատարվում է ոչ թե Հայաստանի խուլ անկյուններում, այլ Եվրոպայի մատույցներում, հին Բյուզանդիայի փողոցներում, ամբողջ Եվրոպայի աչքի առջև» (39, 1895, 260): Գում–Գափուի իրադարձությունները նույն կերպ են ներկայացրել նաև «Նովոստի», «Ռուսսկոյե սլովո», «Նեդելյա» լրագրերը: «Պահպանողական ու հետադեմ մամուլի օրգանները ամենուր հայտարարում էին, որ կոտորածների համար մեղավոր են հայերը, մինչդեռ,– նշում է «Նովոյե սլովո» ամսագիրը,– հայերի նկատմամբ բռնությունները և նրանց կոտորածը կազմակերպվում ու կատարվում էր կառավարության կողմից» (61, 1897, 7, 201), որի տիրապետության տակ գտնվում է հայ ժողովուրդը: Եվ միայն թուրքական աղբյուրներն ու ռուսական իշխանամետ և պահպանողական մամուլի օրգաններն էին, որ այդ խաղաղ ցույցը ներկայացնում էին որպես զինված ելույթ կառավարության դեմ և մահմեդական զոհերի թիվը ներկայացնում էին ուռճացած թվերով, իսկ սպանված հայերի քանակը՝ ավելի քիչ: Աղբյուրները վկայում են, որ խաղաղ ցուցարարների հաշվեհարդարը, այնուհետև հայկական թաղերի վրա մահմեդական խառնամբոխի հարձակումը, ջարդը, թալանը, որին ակտիվորեն մասնակցում էին ոստիկաններ և վաղօրոք այդ նպատակով քաղաք բերված զինվորներ, կազմակերպված էր իշխանությունների գիտությամբ ու նրանց ակտիվ մասնակցությամբ (44, 1895, 266):

Ինչ վերաբերում է հայերի զինված լինելու թուրքական վարկածին, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Գոլմստերենը «Թուրքական իշխանությունների հայտարարությունները հայերի նախահարձակ լինելու ու զենք ունենալու մասին, միայն կեղծիք է: Ստացվում է, որ այդ ընթացքում հայերն են սպանել միմյանց, որովհետև սպանվածների մեջ մահմեդականների դիակներ գրեթե չկան, իսկ հայերը հաշվվում են հարյուրներով» (44, 1895, 268): Թուրքական իշխանությունները կոտորածների գործը առաջ վարելու նպատակով «սադրանքներ էին կազմակերպում,– նշում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– նախապես հայտարարելով հայ հեղափոխականների կողմից կառավարության դեմ դիվերսիոն գործողություններ ձեռնարկելու մասին, ապա սկսելով կոտորածները, հայերին մեղադրում են նախահարձակ լինելու և զինված ելույթներ կազմակերպելու համար» (39, 1898, 235):

Ջարդարարական գործողությունները հայերի դեմ ընթանում էին մշակված նույն պլանով: «Կոտորածները մշտապես սկսում էին թուրքական իշ-

խանութիւնները, սակայն շտապում էին հանդես գալ հայտարարությամբ, թե հայերը հարձակվել են մահմեդականների վրա, որ հայ հեղափոխականներն են բնակչությանը հրահրում կառավարության դեմ: Ստացվում է այնպես, ըստ նրանց, ամեն անգամ մեղավորը հայերն են» (58, 1897, 50):

Մայրաքաղաքում տեղի ունեցած կոտորածներից հետո համաշխարհային հասարակության գայրույթը մեղմելու և տերությունների հակազդող գործողությունները կանխելու, ինչպես նաև կանխամտածված կերպով հայերի դեմ մահմեդական ազգաբնակչության թշնամանքը խորացնելու նպատակով սուլթանը բարենորոգումների վերաբերյալ հրապարակեց իրադե (58, 1895, 221):

Եվրոպական տերությունները ոչինչ չձեռնարկեցին ինչպես Կ. Պոլսում տեղի ունեցած ահավոր ջարդերի, այնպես էլ սուլթանի այդ խաբեության դեմ, նույնիսկ այն ժամանակ, երբ ջարդերի ալիքը տարածվեց հայկական վիլայեթներում և կոտորածները վերածվեցին շարունակական գործընթացի: Տերությունների այդ անտարբերությունն ու անգործունեությունը լավ է մեկնաբանել «Ալիք» հանդեսը: «Իսկ ի՞նչ էր անում «մարդասեր» Եվրոպան, կամ ի՞նչ էին անում քրիստոնեայ մեծ պետությունները,— գայրույթով հարց է առաջադրում ամսագիրը,— պարզ է, որ նրանք գործնական ոչ մի քայլի չեն դիմել, այլ բաւարարուել են միայն և միայն կեղծ խոստումներով, մինչև վերջ անպաշտպան թողնելով մահմեդական ճիրաններում ծուռտուռ հայ ժողովրդին: Այդ հզորները,— շարունակում է ամսագիրը,— միշտ նախընտրել են իրենց փոքրագույն շահերը: Իրենց հաղթանակների առթիվ սարքած խրախճանքներում մեծ հաճույքով «տոստեր» են կոնծել առանց նկատելու, որ այդ բաժակների պարունակությունը կազմուած է եղել հայի ու հայի նման տանջուած ժողովուրդների արիւնից և արցունքից» (79, 1896, 18, 6–7):

Արևմտյան Հայաստանը և կայսրության հայաշատ մյուս վիլայեթները կրկին դարձան ահասարսուռ ջարդերի ասպարեզ: Այդ ամբողջ տարածքները ողողվեցին հազարավոր հայ անմեղ զոհերի արյունով: Շաքիր փաշայի հանձնաժողովն իր սև գործն արել էր: Ջարդարարները վաղօրոք պատրաստվել էին ու իրենց գործը լավ էին առաջ տանում (58, 1895, 217):

Տրապիզոնում կոտորածը սկսվեց հոկտեմբերի 8–ին երկու ծպտյալ անձնավորությունների կողմից թուրք պաշտոնյայի դեմ մահափորձ կատարելուց հետո: Շուտով պարզվեց, որ ծպտյալները մահմեդականներ էին:

«Շեփորի ձայնը ազդարարեց կոտորածի սկիզբը, որը տևեց մինչև կեսօր, ժամը 3–ը: Սպանվեցին 540 մարդ: Մարդկային մարմնի առանձին մասեր թափված էին փողոցներում: Շրջակա հայկական գյուղերը, ուր ապաստան էին գտել հազարավոր հայեր, թալանվեցին ու հիմնովին այրվեցին»,— նշում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը (10, 1895, 12, 853): Իսկ «Բիրժեվիե վեդոմոստին» հաղորդում է, որ ջարդերին մասնակից բոլոր մահմեդականները զինված էին: Բանակը Տրապիզոն ժամանեց միայն հոկտեմբերի 10–ին: Քաղաքի իշխանությունների կողմից բանտարկված 25 հայերը գնդակահարվեցին: Տրապիզոնի շրջակա բոլոր հայկական գյուղերը թալանվեցին ու հրդեհվեցին: 1500 հայեր քշվեցին իրենց բնակարաններից: Հայերի միայն նյութական կորուստը կազմում է 5 միլիոն ֆրանկ (39, 1896, 39):

Տրապիզոնում հայերին օգնելու նպատակով ռուսական հյուպատոսը նավամատույցին է մոտեցնում ափամերձ ջրերում գտնվող ռուսական «Ազով» շոգենավը (27, 1895, 41): «Թուրքերը զինված մահակներով, դաշույններով ու կացիններով,— նշում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը,— դաժանորեն կոտորում էին փախչող հայերին: Մահմեդականները հետապնդում էին նրանց ամենուր. փողոցներում, շուկայում, ծովափին: Նավակներով հետապնդում ու ջրասույզ էին անում» (10, 1895, 12, 853): Թուրքերը, առանց խորշելու, իրենց քստմնելի արարքները իրագործում էին տերությունների դեսպանների աչքի առջև: Ամենուր հայերը անգեմ էին ու չէին սպասում մահմեդականների հարձակմանը: «Թուրքական իշխանությունները,— հայտնում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը,— այդ գործողությունների ընթացքում իրենց զգացնել չտվեցին: Նրանք հայտնվեցին, երբ ամեն ինչ վերջացած էր»: Սակայն նահանգապետը զեկուցագրով հայտնեց Բ. Դռանը, որ հայերի մեղքով տեղի ունեցավ արյունահեղություն, և «նրանց ապստամբությունը ճնշված է» (10, 1895, 12, 852): Արյունալի գործողությունները շարունակվում էին: Յուրաքանչյուր օր այն սկսվում ու ծավալվում էր նոր ուժով: «Բայբուրդի մոտերքում,— նշում է ամսագիրը,— Տրապիզոնի և Երզրումի միջև ընկած տարածքում 500 զինված մահմեդականներ հանկարծակի հարձակվում են հայկական գյուղերի վրա, ասպատակում, թալանում ու այրում են դրանք: Կոտորեցին տղամարդկանց, կանանց ու երեխաների, տարան անասունները և այլ իրեր: Ջարդարարները հեռացան իրենց պարտքը կատարածի գիտակցումով»: Մոլեգնած մահմեդականները մահ ու ավեր էին սփռում ամենուր, բնակավայրերում ու մեծ ճանապարհների վրա, ուր թափված էին այ-

լանդակված ու անդամահատված հազարավոր անթաղ դիակներ: «Երզրունի և Բայբուրդի միջև ընկած ճանապարհի վրա, ուր սփռված էին անհամար դիակներ,— նշում է հանդեսը,— եվրոպական մի ճանապարհորդ հանդիպում է բազմանդամ մի ամբոխի, շուրջ 300 հայ կանանց, որոնք տեսնելով նրան, ծնկաչոք աղերսում են օգնել իրենց: Նրանց ամուսիններին թուրքերը վաղօրոք կոտորել էին»: Նման տեսարանները կրկնվում էին ամենուրեք (10, 1895, 12, 852):

Երզրունում, հայտնում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը, կոտորածները սկսվեցին հոկտեմբերի 6—ին, որին իշխանությունների թույլտվությամբ ու հովանավորությամբ մասնակցում էին ոստիկաններ ու զինվորներ սպանների ղեկավարությամբ: Հաջորդ օրը կոտորածը տարածվեց շրջակա գյուղերում: Թալանվեցին ու այրվեցին շուրջ 40 գյուղեր: 3 գյուղերի բնակիչներ բռնիորեն մահմեդականություն ընդունեցին (39, 1896, 39): «Երզրունում մահմեդական խառնամբոխին օգնում էին զինվորները: Այն կոտորած էր առանց պայքարի ու դիմադրության, որը հիմնավորվում է նրանով, որ սպանվածների մեջ ոչ մի մահմեդականի դիակ չի հայտնաբերվել» (10, 1895, 12, 853),— նշում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը: «Միայն Երզրունում,— հայտնում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,— 1500 կրպակ թալանվեց ու այրվեց, ջարդերի պատճառով բանտարկված հայերը գնդակահարվեցին, իսկ մահմեդականներին դատարանը ազատ արձակեց» (39, 1896, 40): Թուրքական իշխանություններն իրենց հանցագործ արարքները թաքցնելու և արդարանալու նպատակով կեղծ լուրեր էին տարածում, թե իբր կոտորածները կատարվում են մահմեդական և քրիստոնեական համայնքների ընդհարման հետևանքով: Հերքելով այդ կեղծ տեղեկատվությունը՝ «Նեղեյան» արդարացի էր, որ «Կոտորածները Փոքր Ասիայում կատարվում էին ոչ կրոնական և ոչ էլ ռասսայական հողի վրա, ինչպես ցանկանում են ներկայացնել թուրքական իշխանությունները, այլ այն ընթանում է կառավարության կողմից նախօրոք կազմված պլանի համաձայն» (27, 1896, 17):

Բիթլիսում մահմեդականներին նախապես բաժանեցին զենք, և հոկտեմբերի 25—ին շեփորի ազդանշանով սկսվեց կոտորածը: Թուրքական իշխանությունները միաժամանակ ստիպում էին հայերին, որ գրավոր բացատրություն տան, թե հայերն իրենք են մեղավոր կոտորածների համար: Կոտորածների ընթացքում Վանի վիլայեթում ավերվեցին ու մոխրակույտերի վերածվեցին 160 գյուղ, բոլոր բնակիչները կոտորվեցին: Թուրքական կառա-

վարությունը ցանկանում էր հնամենի հայկական այդ տարածքներում բնակեցնել մահմեդականների (41, 1896, 360):

Կոտորածները մոլեզունում էին ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքներում, հաճախակի մարում ու նոր ուժով բռնկվում՝ աստիճանաբար իր մեջ ներառնելով հայաշատ նոր բնակավայրեր:

Մամուրեթ—ուլ—Ազիզում և Արաբկիրում կրակի մատնվեցին 2800 տուն, Մալաթիայում՝ 3000, Խարտունում՝ 500: Ռուս առաջադեմ մտավորականները, հերքելով թուրքական իշխանությունների ստահող հայտարարությունները կոտորածներին կառավարության անտեղյակության մասին, ցույց էին տալիս, որ հիմնական գործողությունները ընթանում էին բանակի ու ոստիկանության ակտիվ միջամտությամբ (39, 1895, 39):

Բայբուրդում մահմեդականները, զինված մարտինի հրացաններով, առանց առիթի հարձակվեցին հայկական գյուղերի վրա, իսկ նահանգապետը և զինվորական պարետը մեղադրում էին հայերին (39, 1895, 39): «Կոտորածներն ընթանում էին վայրի մոլուցքով,— նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— թուրքերը միայն չէին սպանում, այլ իրենց զոհերին տանջահար էին անում ու դրանից հաճույք էին ստանում» (44, 1895, 264):

Կոտորածները Խարբերդում սկսվեցին նոյեմբերի 1—ին և ընթացան առանձնահատուկ դաժանությամբ: Քաղաքի հայկական ու մյուս թաղերում ապրող հայերի բնակարանները թալանվեցին, բնակչությունը անխնա կոտորվեց: Հրդեհի ճարակ դարձան դպրոցներն ու եկեղեցիները: Շրջակա հայ գյուղերից 55—ը թալանվեցին ու հրդեհվեցին: Հայ ազգաբնակչությունը անզեն էր, ինքնապաշտպանությունը երկար չտևեց: Կառավարությունը մահմեդականներին նախապես զենք էր բաժանել: Ոստիկանական ջոկատները, որ կոչված էին կարգը պաշտպանելու համար, դարձան կոտորածների ակտիվ մասնակիցները (44, 1895, 296):

«Խարբերդի վիլայեթի Հուսեյնիկ գյուղում,— պատմում է ականատեսը,— 600 զինվոր իրենց ճամբարում հավաքեցին նույն քանակությամբ հայ կանանց ու աղջիկների: Իրենց ստոր կրքերին հագուրդ տալուց հետո զինվորները դաժանորեն կոտորեցին իրենց հաճույքի զոհերին» (59, 149): Մեկ այլ ականատես Խարբերդից հայտնում էր, որ թուրքերը առաջին օրվա ընթացքում կոտորեցին 800 տղամարդու, իսկ շատերն ընդունեցին մահմեդականություն: Դպրոցները, վանքերն ու եկեղեցիները կործանեցին, «քահաները դաժան տանջանքներից ու անասելի կտտանքներից հետո սպանվեցին»

(10, 1895, 12, 853): Կրօնական մոլեռանդությամբ մարդկային խղճից զրկված թուրք ջարդարարները տանջանքների ու կտտանքի, սպանության աներևակայելի դաժան ձևեր ու մեթոդներ էին հորինում, իսկ կոտորածները շարունակական դարձնելու համար դիմում էին ստի ու կեղծիքի իրենց համար սովորական դարձած փորձված միջոցներին, եվրոպական մամուլը հեղեղում էին հայկական ապստամբությունների մասին կեղծ լուրերով (39, 1898, 280): «Միայն երեք շաբաթվա ընթացքում,– տեղեկացնում է «Վեստ-նիկ Եվրոպի» հանդեսը, շուրջ 12550 զոհեր եղան, այսինքն՝ այնքան, որքան կարող էին լինել զենքով ու զինամթերքով լավ մատակարարված բանակների միջև մղված պատերազմի ընթացքում: Սակայն պատերազմի պարագայում զոհերը լինում են կռվող երկու կողմերից, իսկ այս դեպքում զոհերը միայն մի կողմից են»: Թուրքական պաշտոնական շրջանները և ռուսական պահպանողական մամուլը, ժխտելով զոհերի մասին հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները, միտումնավոր կերպով կեղծում էին զոհերի քանակը: Մինչդեռ բոլորովին չեզոք մեկ այլ աղբյուր գտնում էր, որ կոտորածների այդ փուլում սպանվել են շուրջ 15000 մարդ, այսինքն՝ ավելի, քան մատնանշում էին հայկական աղբյուրները: Քննադատելով թուրքական պաշտոնական շրջաններին ու նրանց համախոհ թուրքամետ ուժերին և մերժելով վերջինների հրապարակած սուտ ու սխալ տվյալները՝ իրավացի զայրույթով հողվածի հեղինակը հարց է առաջադրում. «Իսկ որքա՞ն զոհեր են անհրաժեշտ, որ ստիպեն մեծ ու քաղաքակիրթ ժողովուրդներին, որպեսզի անհանգստանան»: Իր խոսքը մասնավորեցնելով և ուղղելով ռուսական հետադեմ մամուլի ու ցարիզմի գաղափարական հենարան լրագրողների հասցեին, որոնք կեղծելով դեպքերն ու իրադարձությունները, գտնում էին, որ «ընդհարումների հրահրողները հիմնականում եղել են անգլիացիների կողմից ղեկավարվող հայերը, որ այդ ամբողջ արյունահեղությունը տեղի է ունենում Անգլիայի մեղքով: Ռուսաստանի կողքին վտանգավոր օջախ ստեղծելու նպատակով,– շարունակում է հեղինակը,– ով էլ որ լինի արյունահեղության սկզբնապատճառը, այն ավելի ուժգնանում ու շարունակվում է: Այն, որ մի քանի հայեր ու անգլիացիները սխալ են թույլ տվել, չի նշանակում, թե կարելի է թույլ տալ բազմաթիվ քաղաքների ու գյուղերի անպաշտպան բնակիչներին ենթարկեն գազազած քրդերի վայրի քմահաճույթին...»: Արդարացիորեն բացառելով կոտորածների համար անգլո-հայկական կոմիտեներին վերագրվող համիրավի մեղադրանքները՝ հեղինակը միանգա-

մայն իրավացի կերպով ընդգծում է. «Փոքր Ասիայի հայկական շրջաններում բռնություններն ու կոտորածը տեղի է ունեցել ավելի վաղ, քան անգլո-հայկական կոմիտեների ստեղծումը... Քրդերը գլխավորապես գործում են այն մարզերում, ուր հազիվ թե տարածված լիներ գիտակցված քարոզչություն, և, իհարկե, թալանված և հրդեհված գյուղերը Լոնդոնի կոմիտեների ազդեցության տակ չէին գտնվում, կոտորածի ենթարկված բնակչությունը, կանայք և երեխաները հազիվ թե տեսած լինեին այն մարդկանց, որոնք երազում էին հայկական անկախ պետության մասին... կոտորածի ենթարկված մարդիկ իրենց ու իրենց հարազատների կյանքի ու գույքի ապահովության մասին էին երազում...»: Կոտորածների հիմնական մեղավոր ճանաչելով թուրքական կառավարությանը՝ լրագրողը նշում է. որ կոտորածներ կազմակերպելով թուրքական կառավարությունը աշխատում էր «մեկընդմիջտ ազատվել այն ժողովրդից, որի պատճառով Թուրքիան ենթարկվում է եվրոպական մեծ տերությունների հարկադրանքին», ուրեմն, արդարացիորեն եզրակացնում է ամսագիրը, կոտորածները կազմակերպվում ու իրագործվում են կառավարության կողմից (10, 1895, 12, 855–856):

Սուլթանական կառավարության այդ հայատյաց, մարդկության պատմությանը մինչ այդ անհայտ հնամենի մի ժողովրդի ֆիզիկական բնաջնջման սահմակեցուցիչ կոտորածների նկարագրությունն անգամ սարսափ է առաջացնում ընթերցողի հոգում, արյունը սառչում է երակներում: «Առանց հոգեկան ցնցումների անհնարին է հիշել,– նշում է Վ. Գոլմստրեմը,– կիսալուսնի որդիների «քաջագործությունները, որոնց զոհն են դարձել դժբախտ հայերը...»» (44, 1897, 221): Ռուս առաջադեմ գործիչները արդարացի էին՝ նշելով որ հայ ժողովրդի ողբերգության հիմնական մեղսակիցներն էին նաև եվրոպական տերությունները, որոնք իրենց շահերին հետամուտ պաշտպանելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, «հանդես էին գալիս որպես կոտորածների անտարբեր վկաներ» (59, 78), իրենց հանցագործ անտարբերությամբ քաջալերում ու հովանավորում էին Աբդուլ Յամիդ 2-րդի հայասպան գործողությունները, կարծելով, թե հայկական զանգվածային ջարդերով սուլթանը ձգտում է վերականգնել կարգը երկրում ու նրա այդ գործողությունները համարում էին օրինական: Օգտվելով դրանից՝ թուրքական իշխանություններն ավելի էին ասասկացնում կոտորածները:

Հոկտեմբերի 10-ին Չարսանջակում իշխանությունները ինքնապաշտպանության դիմած հայ բնակչությանը խաբեությամբ հավատացրին, որ անհրաժեշտ է նրանց պաշտպանելու համար քաղաք մտցնել ոստիկանական հատուկ ջոկատ: Սակայն քաղաք մտած ոստիկանները, հայկական թաղամասում իրենք սկսեցին կոտորածը: Ամբողջ գավառի հայկական գյուղերը թալանվեցին ու հրկիզվեցին: Կոտորածների կազմակերպման ու իրականացման հարցը քննարկելով՝ Վ. Գոլմստերենը գրում է. «Ինչպես Տրապիզոնում, այնպես էլ հայկական մյուս մարզերում պարզորոշ նկատվում է, որ կոտորածները կազմակերպվում էին վաղօրոք, և կազմակերպիչը սուլթանական կառավարությունն է: Այդ են հաստատում տերությունների հյուպատոսների զեկուցագրերը: Թուրքական իշխանությունները նպատակաուղղված գործողություններով տարիներ շարունակ տնտեսական քայքայման ու հարստահարման ենթարկեցին հայ բնակչությանը, իսկ այժմ այդ բռնություններն ու թալանը փոխարինվեցին մասսայական կոտորածներով» (44, 1896, 47):

Հայաբնակ շրջաններում ու Արևմտյան Հայաստանում կոտորածների հաջորդականությունն ու կատարման դաժանությունները հիմնավորապես հաստատում էին այն իրողությունը, որ իրոք, թուրքական իշխանությունները իրենց ամբողջ խնդիր էին դրել կեղծ տեղեկատվությամբ հանգստացնել ու ապակողմնորոշել եվրոպական հանրությանը՝ օգտվելով տերությունների անգործությունից մասսայական կոտորածներով, թուրքական ձևով լուծել Հայկական հարցը (83, 1896, 271): Ոչ մի կասկած չէր հարուցում այն, որ կոտորածները վաղօրոք պլանավորված էին ու կազմակերպված սուլթանական կառավարության կողմից և ընթանում էին խիստ հետևողական ծրագրով: Ամենուր կատարման ձևը, գործող անձինք նույնն էին, միայն գործողության վայրերն էին տարբեր:

Դիարբեքիում կոտորածը սկսվեց նոյեմբերի 1-ին և ընդհատումներով շարունակվեց մինչև դեկտեմբերի 31-ը: 1700 բնակարան և 2448 մանր ու մեծ կրպակ թալանվեցին ու հանձնվեցին կրակին: «Երեք օրվա ընթացքում, - նշում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը, - քրդական դաժանությունների զոհ դարձան շուրջ 5000 մարդ: Կոտորածին ակտիվորեն մասնակցում էին նաև զինվորները»: Կոտորածների ընթացքում Դիարբեքիի շրջակայքի 119 բնակավայրեր մոխրակույտերի վերածվեցին, հայ բնակչությունը գլխովին բնաջնջվեց (10, 1895, 12, 853):

Սեբաստիայում ևս կոտորածը սկսվեց նոյեմբերի 1-ին, որին ակտիվորեն մասնակցեցին ոստիկաններն ու զինվորները: Իրենց ջարդարարական գործողությունները արդարացնելու և մահմեդական ազգաբնակչությանը հայերի դեմ գրգռելու նպատակով իշխանությունները հայերին համարում են խռովարարներ, հայրենիքի դավաճաններ (59, 53): Այդ հանգամանքը պատճառ է դառնում հայերի դեմ նոր, էլ ավելի դաժան գործողություններ վարելու համար: Մոտավոր հաշվարկներով Սեբաստիայում զոհերի քանակը հասնում էր շուրջ 1000-ի (27, 1895, 274):

Շապին Գարահիսարում հոկտեմբերի 27-30-ը սկսված կոտորածները շարունակվեցին մինչև նոյեմբերի առաջին կեսը: Սպանվեցին 2000, իսկ նրա շրջակա գյուղերում՝ 3000 մարդ: 30 հայկական գյուղեր թալանվեցին ու հրդեհվեցին: Բնակչության 50%-ը կոտորվեց: «Բազմաթիվ եկեղեցիներ սրբապղծվեցին ու քանդվեցին»: Իշխանությունները հաճախ բողոքում էին քրդերից, որ վերջիններս ավելի շատ թալանով են զբաղվում, քան հայերին կոտորելով: Հետևաբար իշխանության ներկայացուցիչները իրենց գործունեությամբ հիմնավորում էին, որ նրանց «հիմնական նպատակը հայերին կոտորելն էր, իսկ թալանը երկրորդական դեր ուներ, (59, 54):

Արաբկիրում կոտորածի նախօրեին «մուսուլմանները շրջում էին գյուղերում, բացականում էին».: «Մուհամադի որդիները պետք է կատարեն իրենց պարտքը, այն է՝ զնդակահարեն բոլոր հայերին, թալանեն ու այրեն նրանց տները, ոչ մի հայ կենդանի չպետք է մնա» (59, 54):

Հովանավորվելով իշխանությունների կողմից՝ մահմեդական մուլեռանդ խառնամբոխը վայրագությամբ կոտորում ու ոչնչացնում էր այն ամենը, ինչ հայկական էր: Կոտորածների մասին ակամատեսները գրում էին. «Սկսեցին կոտորել ու այրել: Տազնապահար հայերը տները թողած փախչում էին դեպի դաշտերն ու լեռները: Սակայն նրանցից շատերը ընկան թուրքերի ձեռքը և դաժանորեն սպանվեցին: Մի մասին նետում էին կրակի մեջ, մյուսներին կախում էին գլխիվայր ու մորթազերծ էին անում ինչպես ոչխարների, երրորդներին կացնով կտրատում էին առանձին մասերի, նավթ էին լցնում մյուսների վրա և այրում, կենդանի թաղում...» (59, 56): Սպանվեցին շուրջ 2800 մարդ: Այնտեղ, ուր հայ բնակչությունը դիմում էր ինքնապաշտպանության, մահմեդական խառնամբոխին օգնության էին հասնում զինվորներն ու ոստիկանները: Կոտորածներին ակտիվորեն մասնակցում էին նաև թուրք կամայք, որոնք «աշխուժորեն կրում էին իրենց ամուսինների թալանած իրերը» (59, 57):

Թորթունում կոտորածները գլխավորում էին կանոնավոր բանակի զինվորները: Մարդկային դաժան «սպանդի սահմանկեցուցիչ իրադարձությունները մարդու հոգում սարսափ էին առաջացնում, մազերը բիզ-բիզ էին կանգնում» (39, 1895, 38),– գրում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը:

Մալաթիայում կոտորածները սկսվեցին հոկտեմբերի 23–ին: Տեղական իշխանությունները կառավարության ցուցումով նախապես մահմեդականներին բաժանել էին զենք, իսկ մզկիթներում մահմեդական հոգևորականությունը բորբոքելով ազգային ու կրոնական ատելություն, կոչ էր անում բնաջնջել հայերին, տիրանալ նրանց հարստությանը: Հայ բնակչությունը դիմեց ինքնապաշտպանության, սակայն երկար դիմադրել չկարողացավ: Այրվեց 1000 տուն, կոտորվեցին 3000 մարդ: Նոյեմբերի սկզբներին կոտորածները սկսվեցին Մարզվանում, ուր կարգի պաշտպան ոստիկանները, միացած խառնամբոխի հետ, նախ՝ թալանեցին հայերի խանութներն ու կրպակները, ապա՝ հրդեհեցին քաղաքի շուկան (39, 1895, 39): Մարդկային նախճիրը ուղեկցվում էր անասելի դաժանություններով:

#### **4. Ձեյթունահայության հերոսական ընդվզման դրվատումը ռուսական մամուլում**

1895 թ. հոկտեմբերին, երբ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էին կոտորածները, թուրքական իշխանությունները լուրջ նախապատրաստական աշխատանքներ էին տանում Ձեյթունի հայ բնակչության դեմ վճռական հարձակման համար: Համաշխարհային հանրության ու տերությունների ուշադրությունը շեղելու նպատակով «Հայաստանում բարեփոխումներ կատարելու, հայ ազգաբնակչության դրությունը բարելավելու փոխարեն,– գրում էր Վ. Գոլմստրենը,– սուլթանը եվրոպական լրագրերում կեղծ լուրեր է տարածում հայերի կարծեցյալ ապստամբության ու դրսից հայ հեղափոխականների ու ազիտատորների Ձեյթուն ու նրա հարակից շրջանները ներթափանցելու մասին և միաժամանակ խիստ դժգոհում է, որ նրանց դեմ պայքարելու համար բավարար թվով զորական ուժ չունի» (44, 1896, 18): Վ. Գոլմստրենը խորաթափանցորեն ճիշտ է կռահում, որ սուլթանը այդ կեղծ լրատվությամբ նախապատրաստվում էր կոտորածների ալիքը ուղղել դեպի Ձեյթուն ու նրա շրջակա հայկական գյուղերը:

Ձեյթունահայության դեմ կենտրոնացվեցին բանակային խոշոր ուժեր: Իշխանությունները զինեցին նաև տեղի մահմեդական բնակչությանը՝ ցանկանալով մեկընդմիջտ վերջ դնել լեռնական մի բուռ հայ բնակչության կիսանկախ գոյությանը: Կռահելով թուրքական իշխանությունների այդ մտադրությունները՝ Ձեյթունահայությունը ստեղծեց ռազմական խորհուրդ, որը մշակեց ապստամբության ռազմավարական պլանը և 1895–1896 թթ. կենաց ու մահու պայքար մղեց թուրքական զերազանց ուժերի դեմ և հաղթեց: Ձեյթունահայության հերոսական պայքարի այդ դրվագը հանգամանորեն ուսումնասիրվել է հայ պատմագրության կողմից (86), ուստի այն ուսումնասիրության այլ հարց է և մեր հետաքրքրությունների շրջանակի մեջ չի մտնում:

1894 թ. Սասունի ինքնապաշտպանության և Ձեյթունահայության հերոսական ապստամբության իրադարձությունները, քաջարի հայ մարտիկների անձնուրաց սխրանքները ջերմ դրվատանքի ու բարձր գնահատման են արժանացել ռուս առաջադեմ մտավորականների կողմից (39, 1895, 298), որոնք խորապես վշտանում էին հայ ժողովրդի կրած ողբերգության համար ու միաժամանակ չէին կարող իրենց հիացմունքը զսպել Ձեյթունահայերի «մարդկային լուսավոր կյանքի ու ազատության այդ խիզախ մաքառումների համար»: Թուրք ջարդարարների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը նրանք դիտում էին արդարացի ու օրինաչափ, շեշտելով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը զենքի է դիմել, երբ թուրք ջարդարարները սաստկացրել են բռնությունները և սկսել են զանգվածային կոտորածները (50, 1896, 2, 288–289):

Նշանավոր հրապարակախոս Վ. Գոլմստրենը իր «Քրիստոսի լույսի ուժը» հոդվածում մեծ հիացմունքով է արձանագրել դարեր շարունակ հայ անվանը վերագրվող, թույլ, վախկոտ, ստրկամիտ պիտակների՝ Սասունի հերոսական կռիվներում հայ քաջորդիների հերոսական ընդվզումներով հերքված փաստերը: «Սասունի և Մուշի հայերը քոչվոր և նստակյաց քրդական ցեղերի հետ մշտական բախման հետևանքով դարձել են քաջ ու ռազմատենչ»: Նա իրավացիորեն նշում է, որ հայերի ստրկական վիճակն առավելապես պայմանավորված էր նրանով, որ Թուրքիայում մահմեդական կրոնը արգելում էր քրիստոնյաներին զենք ունենալու և այն կրելու իրավունքից: Իսկ «Ակն ընդ ական» հոդվածում նա ցույց է տալիս, որ հայերը «աչքի են ընկնում դիմացկունությամբ, կոփված են կռիվներում», և այնտեղ, ուր նրանք «գինված են, քաջ կռվող են ու կարող են վրեժխնդիր լինել իրենց տանջողների նկատմամբ» (44, 1897, 244):

1894 թ. Սասունի հայ բնակչության հերոսական, անձնագոհ պայքարի, հատկապես հայ կանանց սխրամքների մասին բազում հոդվածներ են գրվել (87), որոնցում աչքի է զարնվում բռնության դեմ պայքարի ելած ժողովրդի ազատաբաղձության, հայրենասիրության և արժանապատվության դրվատանքը, պայքարում հայ կնոջ ու նրա հերոսական ընդվզման նկատմամբ համակրանքն ու անկեղծ կարեկցանքը (27, 1895, 42): Առանձնապես ընդգծվում է այն միտքը, որ նախկինում հայերի վախկոտության ու ստրկամտության մասին տարածված լուրերը կեղծ են ու անհիմն, իսկ դրանց գործնական հերքումը կատարվեց Ձեյթունում, ուր զեյթունահայերը ազատագրական հզոր ելույթով թուրք ջարդարարներին «հարկադրեցին հարգանքով վերաբերվել հայերին ու հայ անվանը: Նրանք իրենց բազկի ուժով ցույց տվեցին, որ դարերով ստրկացված ժողովուրդը ի զորու է ստիպելու իր հակառակորդին հարգելու իրեն» (27, 1895, 45), որ հայերի մեջ վրեժխնդրության ու արդար հատուցման ոգին չի մեռել և «իրենց պատճառած անասելի չարիքներին ու անարգանքին պետք է լինի արդար հատուցում» (39, 1895, 312): Հայերը «կարողացան վրեժխնդիր լինել իրենց պատճառած վիրավորանքի ու անարգանքի համար» (44, 1897, 244),– արձանագրում է Վ. Գոլմստրեմը:

Սասունում և Արևմտյան Հայաստանի մյուս վայրերում հայ խաղաղ բնակչության նկատմամբ թուրք ջարդարարների կիրառած սպանության մոդկալի ձևերն ու մեթոդները, դաժանորեն տանջահար եղող հայերի սարսափները զայրույթով էին արծագանքվում ռուսական մամուլում, գազանաբարո վայրի քրդերի ու մահմեդական մուլեռանդ ամբոխի նկատմամբ առաջացնում զայրույթ ու ատելություն, իսկ անմեղ հայ ժողովրդի հանդեպ ձևավորում համակրանք ու կարեկցանք, նրանց օգնելու և սատար լինելու ձգտում (50, 1895, 12, 135–140):

Ձեյթունահայության ազատամարտի յուրաքանչյուր նվաճում, թվով գերակշիռ թուրքական կանոնավոր բանակի դեմ, հայերի տարած հաղթանակները անկեղծ դրվատանքով լուսաբանվում էին մամուլում: «Ինչպիսի անձնագոհություն և ինչ հերոսական մղում ունեն լեռնական հայերը,– նշում է «Ռուսսկոյե սլովո» լրագիրը,– որ բազում անգամ գերակշիռ կառավարական զորքի դեմ հաղթանակ տարան, և թուրքական բանակը ամոթահար փախչում է նրանցից» (76, 1896, 29, 30):

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը, «Հայկական հարց» խորագրի տակ մանրամասնությամբ անդրադառնալով Ձեյթունի իրադարձու-

թյուններին, նշում է. «Ձեյթունում հայերը ապստամբել են կառավարության դեմ: Ապստամբներին ճնշելու համար կառավարությունը խոշոր ուժեր է ուղարկել, ինչպես նաև զինել է շրջակա գյուղերի մահմեդական բնակչությանը: Հայերն անկոտրում են: Նրանք գրավել են թուրքական զորանոցը և զինվել: Ձեյթունում, հայկական այդ արծվաբնում, ուր համախմբված են հիմնական ուժերը,– շարունակում է լրագիրը,– մինչև այժմ նրանց դիմադրությունը չի կոտրվել: Քարաժայռերի վրա միջնաբերդը մնում է անառիկ» (44, 1895, 345), իսկ «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը Ձեյթունի հայ խիզախների հերոսական ընդվզման ընթացքի մասին ավելացնում է. «Ձեյթունը Փոքր Ասիայի Չերնոգորիան է. հայերին կարելի է ստիպել հնազանդվել միայն սովի միջոցով, սակայն նրանք դեռ վեցամսյա պաշար ունեն» (39, 1896, 28): Թուրքական բռնապետության դեմ ազատության դրոշ պարզած զեյթունցիների անվեհերության ու աննկուն ոգու դրվատանքն է կատարում «Միր բոժի» ամսագիրը: «Իրենց անկախությունը պաշտպանելու համար,– նշում է ամսագիրը,– նրանք ոչինչ չեն խնայում: Ազատության ձգտումը թևավորում է յուրաքանչյուր զեյթունցու: Հին Հայաստանի այդ անմիջական ժառանգորդները մինչև վերջին ժամանակներս ապրում էին լրիվ անկախ կյանքով՝ պահպանելով իրենց հավատարմությունն ազգային սովորությունների ու նախնիների հավատի հանդեպ» (50, 1896, 2, 280): Ձեյթունահայության տոկունությունը, հաղթանակի հասնելու անկոտրում կամքը հավատ էր ներշնչում հայ ժողովրդի ազատագրման ու ապագայի նկատմամբ: Իր մեջ ունենալով մտավոր, հոգևոր և ֆիզիկական մեծ ներուժ՝ հայ ժողովուրդը «արժանի է և պետք է ազատագրվի թուրքական դարավոր հոգեւանջ ու բարբարոս լծից»,– ընդգծում էր «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը (66, 1915, 101):

«Լուչ» լրագիրը, քննարկելով Ձեյթունի ապստամբության թեման, շեշտելով Ձեյթունի քաջարի պաշտպանների անկոտրում կամքն ու հաղթանակի հասնելու մեծ ձգտումը, միաժամանակ անդրադառնում է հայ բնակչության նկատմամբ մահմեդականների կողմից նյութված չարիքներին ու զազանային զործողություններին: «Թուրքերը իրենց վայրի մուլուցքով ու մուլեռանդությամբ,– նշում է լրագիրը,– չարիք են պատճառել: Նրանք եղել են ու մնում են որպես վայրի քոչվորներ, ինչպես երևացին Կ. Պոլսի պատերի տակ կայսրության վերջին տարիներին: Երկրներ, որոնք իրավամբ կոչվում էին ծաղկած այգիներ, վերածվեցին մերկ անապատի» (83, 1896, 88): Նա

միաժամանակ անկեղծ համակրանքով է լցված իրենց պատիվն ու անկախությունը պաշտպանող զեյթունցիների հանդեպ:

«Ռուսասկայա միսլ» հանդեսում «Ձեյթունյան էպոպեա» խորագիրը կրող ընդարձակ հոդվածը, որը նվիրված է Ձեյթունի 1895–1896 թթ. նշանավոր գոյապայքարի դրվագների լուսաբանմանը, հեղինակը հանգամանորեն վերլուծում է հայկական այդ արժվաբանի նախապատմությունը՝ օգտվելով Թուրքիայում Իտալիայի հյուպատոս Յենրիկո Վիտտոյի (Ա. Լատինո) «Gli Armeni Elami missione a Zeitun» աշխատությունից, միաժամանակ գրախոսելով այդ աշխատությունը: Յեղինակը առանձնահատուկ համակրանքով է լցված թուրքական իշխանությունների դեմ գոտեմարտի ելած քաջ զեյթունցի մարտիկների նկատմամբ, ընդգծում է լեռնային ժայռակոփ բերդերի ու նույնքան ամուր իր հարազատ հողին կպած հայ լեռնականների ազատաբաղձությունն ու աննկուն ոգին, հայրենի հողն ու անկախությունը պաշտպանելու նրանց հերոսական մղումը: Աշխատանքում առանձնապես աչքի է զարնվում զեյթունցիների ու նրանց պայքարի նկատմամբ ռուս հասարակայնության ջերմ համակրանքը (56, 1899, 3, 26–31):

Շարունակելով զեյթունահայության ազատագրական պայքարի թեման՝ Ա. Ն. Սազոնովը առանձնապես դրվատում է հայ ժողովրդի հայրենասիրությունը, ազատամտությունը, հավատի ու ընտանիքի հանդեպ ունեցած նվիրվածությունը: «Շնորհիվ այդ որակների,– գրում է նա,– ստրկության բազում դարերը չկարողացան նրա մեջ սպանել կենսունակությունն ու վերածնման ձգտումը: Նրանից են բխում այն թարմ ուժերը,– շարունակում է նա,– որոնք թուրքական բռնություններից խուսափելով ու պատսպարվելով Տավրոսի քարաժայռերի մեջ և կրելով արդեն Ձեյթուն բարձր հնչեղություն ունեցող անունը, իրենցով ձևավորեցին ասիական Չերնոգորիան, հարյուրամյակների ընթացքում հերոսական պայքարով պաշտպանելով իր ազատությունը չար թշնամիներից և մոտ անցյալում, մեր աչքի առջև ստիպեց դաժան ու հզոր թշնամուն որպես հավասարը հավասարի հաշվի նստել իր հետ» (30, 1896, 11, 108–123):

Ձեյթունի հերոսական ապստամբության նույնքան հերոսական ավարտը արձանագրվեց «Բիրժեվիե վեդոմոստի» լրագրի էջերում: «Ձեյթունի հերոսական էպոպեան ավարտվեց հայերի հաղթանակով: Քարաժայռերին կպած,– նշում է լրագիրը,– քարաժայռերի նման պինդ ու ամուր հայերը ստիպեցին դաժան ու հզոր թշնամուն ծնկի գալ: Դա ազատության հանդեպ

հայերի ունեցած աննկուն հավատի ու երկաթյա կամքի դրսևորումն էր, որ հաճախակի (հեղինակը նկատի ունի Ձեյթունի նախորդ ապստամբությունները – Պ. Ս.) արտահայտվում է Ձեյթունում, եթե նրա ձեռքին զենք կա» (39, 1896, 32):

Թվական մեծ գերակշռություն ունեցող թուրքական բանակները անկարող եղան ճեղքել հայերի պաշտպանության ամրությունները: Սուլթանը տազնապի մեջ էր: Նա մտավախություն ուներ, որ կայսրության հպատակ մյուս ժողովուրդները, որոնց համար նույնքան ատելի էր թուրքական լուծը, կարող են զենքի դիմել:

1896 թ. հունվարի առաջին օրերին, ինչպես նշում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը, թուրքական հարձակումները ևս ավարտվեցին անհաջողությամբ: Սուլթանին մեծ ծառայություն մատուցեցին տերությունները, որոնք զեյթունցիների հետ ձեռք բերեցին բանակցություններ վարելու համաձայնություն: Այդ նպատակով Ձեյթուն ժամանեցին Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո–Յունգարիայի և Իտալիայի՝ Յալեպուն եղած հյուպատոսները:

Հաղթանակած զեյթունցիների կամքը անկոտրում էր: Նրանք մերժեցին սուլթանի առաջադրած նախնական պայմանները և պարտադրեցին իրենց պայմանները: Ի վերջո, 1896 թ. հունվարի 30–ին կնքվեց համաձայնություն, ըստ որի անհրաժեշտ էր.

1. Ներում շնորհել Ձեյթունի ապստամբներին ու նրանց առաջնորդներին: Ապահովել ապստամբության առաջնորդների բարեհաջող անցումը արտասահման:

2. Ձեյթունում նշանակել քրիստոնյա կառավարիչ եվրոպական վեց տերությունների համաձայնությամբ:

3. Հայ ազգաբնակչությունից կազմել ոստիկանություն:

4. Չեղյալ համարել անցած տարիների հարկերը և տուրքերը:

5. Ապահովել բնակչության անձեռնմխելիությունը, հաստատել անձի ու հավատի ազատություն:

6. Թուրքական բանակը հանել Ձեյթունից...

7. Մարաշում բացել տերությունների հյուպատոսություն և այլն:

Լրագրողը, հանրագումարի բերելով ազատաբաղձ հայերի տևական ու հերոսական մաքառումներով հարուստ պայքարի իրադարձությունները, իրավացիորեն ընդգծում է, որ արդեն պայմաններ էին ստեղծվում հայերին

խաղաղ ու ապահով ապրելու համար: Չնայած հայերը քրիստոնյա նահանգապետ առաջարկելու իրավունք նվաճեցին, սակայն քրիստոնյա նահանգապետի պաշտոնի նվաճումը (39, 1896, 34), սուլթանը հետագայում իր այդ պարտավորությունը դրժեց:

Այսպիսով՝ 1895–1896 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության հայահոծ վիլայեթներում սուլթան Աբդուլ Համիդի սանձազերծած հայկական մասսայական կոտորածների ընթացքում հայ ժողովուրդը Սասունում, Ջեթունում և այլ վայրերում զենքի դիմեց ու գոյամարտի հերոսական սխրանքի բազում պանծալի էջեր գրեց: Թուրքական զերակշիռ ուժերի դեմ մղած անձնուրաց պայքարի փորձը ցույց տվեց, որ համահավաք հայության գոյապայքարի ու մաքառման միասնական ղեկավարության դեպքում կարելի է հասնել դրական արդյունքի:

Ջեթունցիները այդ ճշմարտությունը հիմնավորեցին իրենց արյամբ ձեռք բերված հաղթանակով:

Ջեթունը հաղթեց, բայց այն վերջնական չէր: Սուլթանական կառավարությունը ժամանակավորապես նահանջեց, սակայն Ջեթունում կրած անփառունակ պարտության դառնությունը որոշեց մոռացության մատնել էլ ավելի ահավոր ջարդերով:

Անկարող լինելով ընկճել Ջեթունը՝ «սուլթանը կրկին արյունալի իրադարձություններով հրդեհեց ողջ Հայաստանը» (57, 1896, 7–8, 145): Կոտորածները սկսվեցին 4. Պոլսում ու ալիքվելով տարածվեցին հայկական գավառներում (80, 1896, 224)

Բարենորոգումների իրագործման անհույս սպասումից հետո եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու և նրանց օգնությամբ բարենորոգումները արագացնելու նպատակով 1896 թ. օգոստոսի 14–ին ՅՅԴ կուսակցության անդամ մի խումբ նվիրյալներ, իրենց հետ տանելով պայթուցիկ պարագաներ, հանկարծակի գրոհով տիրացան 4. Պոլսում գտնվող Օտտոմանյան բանկին, ուր պահվում էին բազմաթիվ արժեթղթեր (57, 1896, 8, 152), որոնք անմիջականորեն շոշափում էին Թուրքիայում տերությունների շահերը:

Կառավարությունը մեծ տագնապի մեջ էր: Երբ քաղաք բերված բանակի զինվորները փորձ կատարեցին գրոհել բանկի վրա, ներսից տեղեկացրին, որ հակառակ պարագայում կպայթեցնեն բանկը: Կառավարությունը ստիպված եղավ ետ պահել զինվորներին, որոնք մոտ 37 ժամ անկարող եղան

գրավելու բանկը: Ծանր կացության մեջ էին նաև տերությունների դեսպանները: Ի վերջո, ռուսական դեսպանության աշխատակից Մաքսիմովին հաջողվեց համոզել բանկը գրաված հայ երիտասարդներին, երաշխավորելով նրանց անձեռնմխելիությունը, հատուկ շոգենավով Եվրոպա տեղափոխելու պայմանով (15, 174):

Տերությունները կրկին մնացին անտարբեր ու լուռ, նրանք չարձագանքեցին հայերի օգնության կանչին, իսկ սուլթանը բարեփոխումներ կատարելու փոխարեն բանկի գրավումը որակելով կառավարության դեմ ապստամբություն, սանձազերծեց նոր կոտորածներ, տեսք տալով, թե իբր այդ ճանապարհով երկրում վերականգնում է կարգը, իսկ մեծ տերությունները լռությամբ արդարացնում էին նրա այդ գործողությունները (57, 1896, 7–8, 158):

«Ռուսկայա բեսեդա» ամսագիրը իրավացիորեն կոտորածների մեղավոր ու պատասխանատու ճանաչելով սուլթանին ու նրա հանցակից և հովանավոր տերությունների կառավարություններին՝ ցուցաբերած լուռ անտարբերության ու անգործունեության համար, արդարացիորեն մեղադրում է հայ քաղաքական կուսակցություններին, ՅՅԴ և հնչակյան գործիչներին, որոնք ցուցաբերելով անձնուրաց խիզախություն, սակայն ղեկավարվելով «որքան շատ արյուն, այնքան շուտ ու արագ մեծ տերությունները կմիջամտեն Հայկական հարցին» սխալ մտայնությամբ, առիթ էին ստեղծում արյունարբու սուլթանին նոր, ավելի դաժան կոտորածներ սանձազերծելու համար (57, 1896, 9, 166):

4. Պոլսի 1896 թ. օգոստոսի 14 և 15–ի կոտորածների ականատես Օ. Կայդանովան «Կոտորածները Կոստանդնուպոլսում» հոդվածում գրում է. «Մենք գտնվում էինք 4. Պոլսում: Ականատես եղանք թուրքերի կողմից հայերի կոտորածին... Սարսափելի տեսարանները այժմ ևս երևում են մեր աչքերի դեմ: Հազիվ ենք հավատում, որ այդ ամենը իրականում եղել է, որ այդ սարսափելի տեսարանները երազում չենք տեսել... Ժամը 12–ին սկսվեց կոտորածը... խանութներն ու կրպակները արագ փակվեցին, շարժումը դադարեց... բոլորը փախչում էին ոչինչ չհասկանալով: Փողոցներում ու մայրերի վրա ընկած էին հայերի դիակներ: Չբավարարվելով փողոցներում հայերին կոտորելով,– շարունակում է նա,– թուրքական ամբոխը ներխուժում էր տները և այնտեղ շարունակում կոտորածը» (59, 75–76): Սարսափազդու այդ տեսարանները Օ. Կայդանովան նկարագրում է ուժերի գերլարումով:

«Ցանկանում էինք դրանից փախչել ինչ—որ տեղ,— գրում է նա,— սակայն միաժամանակ դրանից հեռանալն անհնարին էր, որովհետև սարսափը դրականորեն սառեցրել էր արյունս իմ երակներում և ինչ—որ բան ստիպում էր հետևել դժբախտ զոհերին, ինչ—որ հույսով, թե նրանք հրաշքով կփրկվեն»։ Սակայն հրաշքներ լինում են, բայց հայափրկիչ հրաշքներ երբեք չէին պատահում։ Անգն ու անպաշտպան հազարավոր հայերի դիակներով բարձած սայլերը դուրս էին գալիս քաղաքից ու իրենց պարունակությունը դատարկում Բոսֆորում։ «Ասում են, թե այդպես ծանր բարձած նավերը դիակներով 42 անգամ իրենց բեռը դատարկեցին ծովում։ Ջոհերի ճիշտ քանակը,— նշում է նա,— նույնիսկ մոտավոր ճշտությամբ ոչ ոք չի կարող իմանալ» (59, 76—77)։ Դիակների հետ միասին ծովն էին նետում կենդանի ու վիրավոր մարդկանց։ «Այնքան ճնշող ու դաժան էին տեղի ունեցող իրադարձությունները, որ չէինք հավատում,— շարունակում է Օ. Կայդանովան,— որ այս բոլորը, ինչ մենք տեսանք իրականում, կատարվել է մեր աչքերի առջև 20—րդ դարի նախաշեմին, որ մենք չենք տեղափոխվել քնի մեջ հեռավոր անցյալը, միջին դարեր»։ Վերլուծելով կոտորածի իրադարձությունները՝ Օ. Կայդանովան իրավացի զարմանքով արձանագրում էր. «Առանձնապես տարօրինակ տպավորություն էր թողնում այն հանգամանքը, որ հենց այնտեղ, մարդկանց գլխովին ոչնչացնելու տեսարանի առաջ, ափի երկարությամբ և նեղուցում կանգնած էին վիթխարի նավեր, եվրոպական բոլոր տերությունների ներկայացուցիչներ։ Դա,— շարունակում է նա,— մարտ չէր, ոչ էլ պատերազմ կամ ապստամբության ճնշում, այլ պարզապես ինչ—որ մի զգվելի գլխովին մասսայական կոտորած, մարդկանց որս» (59, 80)։ Կոտորածին հաջորդող օրերին, երբ դեռ օդում զգացվում էր մահահոտը, Կ. Պոլիս ժամանած Ա. Ամֆիտեատրովը սրտի ցավով նշում է, որ եվրոպական նավերի տախտակամածներից մարդիկ տեսնում էին ափին, ապա ծովում ծավալվող մարդկային որսը, մոլեգին դաժանությամբ ընթացող կոտորածը։ Տեղի ունեցող կոտորածների նկատմամբ տերությունների, նաև Ռուսաստանի անտարբեր չեզոքությունը պաշտպանվում էր այնպիսի խստությամբ, որ մահվան սարսափով նրանց ռազմանավերում ապաստան փնտրող հայերը դաժանորեն սպանվեցին իրենց հետապնդող թուրքերի կողմից նրանց աչքերի առջև, որոնցից իզուր օգնություն էին խնդրում (51, 168)։

«Նովոյե վրեմյա» և «Բիրժելիե վեդոմոստի» լրագրերի թղթակից Յու. Կազի—Բեկը օգոստոսի 14—ի և 15—ի սահմուկեցուցիչ տեսարանների մասին

որպես ականատես հավաստի մանրամասներ էր հայտնում Կ. Պոլսից։ Աշխատելով խորամուխ լինել տեղի ունեցող իրադարձությունների էությանը և բացահայտել կոտորածների իրական պատճառը՝ նա գրում է. «Ցավոք սրտի, այդ փոթորկալի դեպքերը մնում են որպես իրական եղելություններ։ Տերությունները փոխանակ դադարեցնելու մոլեռանդ թուրքերի գործողությունները,— շարունակում է նա,— բոլորը միաբերան ձգտում են մեղադրել դժբախտ հայերին», իսկ «բարեգութ» թուրքերը իրենց զազանությունների հետքերը թաքցնելու նպատակով հայերի հազարավոր դիակներ ջրասույգ արեցին ծովում (72, 97—99)։

«Նովոյե վրեմյա» լրագրի մեկ այլ թղթակից Կ. Պոլսից գրում էր. «Չեն կարող ասել, թե որքան էին զոհերը, որոնք թափվեցին ծով, սակայն փաստն այն է, որ եվրոպացիները Կ. Պոլսում այժմ ձուկ չեն ուտում։ Եվ ինձ համար,— շարունակում է լրագրողը,— Բոսֆորի ձուկը տհաճ է, այն շատ է յուղոտ...» (59, 81—82)։

Կ. Պոլսում հայկական կոտորածների ցնցող տեսարանները, անմեղ ու անգն հայերի զազանային խոշտանգումները գեղարվեստական խոսքի պատկերավոր միջոցներով ու խոր ընդգրկումով ներկայացրել է դեպքերի ժամանակակից բանաստեղծ Վ. Շուֆը իր «Սվարոգով» չափածո վեպում (81)։

Արձագանքելով հայկական կոտորածներին ու կոտորվող արևմտահայության օգնության կանչին անվանի բանաստեղծ Ֆ. Ի. Տյուտչևը գրում էր.

«Օ, ռուս, մի՞թե չես լսում այդ ձայները,

Եվ որպես Պիղատոս լվանում ես քո ձեռքերը,

Չէ որ այդ արյունը քո սրտից է հոսում» (52, 160)։

Նրան լրացնում էր Վ. Գոլմստրենը. «Սրբազան Ռուսիա, մի՞թե քո մեջ սպառվել է սիրո ուժը» (59, 211) գրում էր նա՝ արձագանքելով այդ սրտակեղեք իրադարձություններին։

Կ. Պոլսում եռօրյա կոտորածներին զոհ գնացին շուրջ 10. 000 հայեր (15, 62)։

Եվրոպական տերությունները լուռ էին և անտարբեր։ Նրանք ոչինչ չձեռնարկեցին մարդասպանին սաստելու, կոտորածները դադարեցնելու համար։ Չնայած Նելիդովը լուրջ անհանգստացած հայտնում էր Պետերբուրգ, որ «թուրքական իշխանությունները անմիտ կասկածամտությամբ և խստություններով ու անտակտ միջոցներով ատելություն ու թշնամանք են առաջացնում հայ բնակչության շրջանում, որը նշանակալից է մայրաքաղաքում

և ցրված է ամբողջ Թուրքիայում: Դրանից կարող են առաջանալ շատ վտանգավոր բարդություններ (21, 79): Մեծ տերությունները իրենց եսասիրական շահերին հետամուտ բոլորովին անտարբեր այդ ահազնացող բարդությունների հանդեպ զանգվածային ջարդերի ամենաեռուն պահին սուլթանի հետ սակարկելով հայկական արյան շուրջ, անհաղորդ մնացին արևմտահայության ողբերգության հանդեպ, չնայած իրենց համարում էին թուրքական վայրագություններին հանձնված հայ ժողովրդի հովանավորները (44, 1897, 121):

4. Պոլսում մոլեզնող կոտորածի ընթացքում, այնուամենայնիվ, ինչպես արդարացիորեն ընդգծում է ականավոր պատմաբան Մ. Գ. Ներսիսյանը «... հայկական կոտորածների դեմ 4. Պոլսում գործող եվրոպական դեսպաններից վճռականորեն հանդես է եկել միայն ռուսական դեսպան Ա. Ի. Նելիդովը, որն անձնական տեսակցություն ունենալով սուլթան Աբդուլ Համիդի հետ՝ անգամ սպառնացել է, որ ինքը՝ Նելիդովը, հրաման կտա ռուսական նավատորմին ռմբակոծել սուլթանի պալատները, եթե անհապաղ չդադարեցվեն կոտորածները» (88, 85): Մեծանուն պատմաբանը նման եզրակացության է հանգել անգլիական ծագում ունեցող հավաստի փաստերի հիման վրա (88, 85):

Սուլթան Աբդուլ Համիդը մի պահ միայն ընկրկեց Ա. Ի. Նելիդովի վճռականության առջև: Շուտով նա կոտորածների ալիքը մայրաքաղաքից կրկին ուղղեց դեպի Փոքր Ասիայի խորքերը: Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը ծածկվեց այրվող բնակավայրերի բոցերով ու կոտորվող հայերի հեծեծանքներով (83, 1897, 257):

Ակնում կոտորածը սկսվեց հոկտեմբերին: Հայերի 1100 տներից կանգուն մնացին 150-ը միայն: Ջարդարար բարբարոսները իրենց կատարած ոճիրը թաքցնելու նպատակով հայերի դիակները նետում էին Եփրատը (83, 1896, 302): Ակնի շրջակայքում գտնվող հայկական գյուղերը կրակի մատնվեցին: Կոտորածին ակտիվորեն մասնակցում էին զինվորներն ու ոստիկանները: Մահասարսուռ կոտորածները ծավալվեցին Մամուրեթ-ուլ-Ազիզում, Ուրֆայում, Թոքատում, Վանում, Մուշում (27, 1897, 97):

Թուրքական կառավարությունը նպատակամիտված՝ գործողություններով առաջ էր վարում արևմտահայության ֆիզիկական բնաջնջման, Հայաստանը հայաթափման պետականորեն մշակված ծրագիրը՝ ստեղծելով այն

իրագործելու ճկուն համակարգ, որը ենթադրում էր բնաջնջման գործողությունների հետևողական և հաջորդական ընթացք:

Այսպես, կոտորածների նախօրեին իշխանությունները հանդես էին գալիս նպատակային հայտարարություններով հայ ազիտատորների գործունեության և հայ հեղափոխականների կողմից նախապատրաստվող զինված ապստամբության մասին, իսկ կոտորածների եռուն պահին փոփոխության ենթարկեցին իրենց մարտավարությունը: Այս անգամ արդեն թուրքական ու թուրքամետ լրագրերը աղմուկ էին բարձրացնում այսպես կոչված հայ հրոսակների նախահարձակ լինելու և նրանց կողմից մահմեդական գյուղերի հրդեհման վերաբերյալ, իսկ իրականում գազանաբար կոտորվում էին հազարավոր հայեր, ու մոխրանում էին հայկական բնակավայրերը: Կոտորածները սկսվում և ավարտվում էին միաժամանակ հատուկ ազդանշանով (58, 1897, 6): Ջարդարար մահմեդական ամբոխը զինված էր նույնատիպ հատուկ նպատակով պատրաստված մահակներով (75, 1896, 7):

Այս հարցում խիստ բնութագրական է «Մշակի» կարծիքը: «Կոտորածները,– նշում է «Մշակը»,– ընդհանրապես ունեին նույն բնույթը. բռնկվում էին Փոքր Ասիայում բարենորոգումների մասին խոստում տալուց հետո... բոլոր գործողությունները ցույց էին տալիս, որ կոտորածները կատարվում էին կազմակերպված ու մաթեմատիկական ճիշտ հաշվարկներով: Սկսվում էին միննույն ժամանակ ու ավարտվում որոշ ժամից հետո, հաճախակի սկիզբը ազդարարվում էր թմբկահարությամբ (22, 1897, 22): Կոտորածները ամենակուլ հրդեհի նման մերթ բռնկվում էին Սև ծովի առափնյա բնակավայրերում, մերթ բուն Արևմտյան Հայաստանի շրջաններում, ապա մոլեզնում էին կայսրության մայրաքաղաքում ու նրա հարակից հայկական բնակավայրերում (72, 42): «Ջարդերը ծրագրվում ու կատարվում էին թուրքական կառավարության կողմից: Որպեսզի մահմեդականները զոհեր չտային,– նշում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը,– նախապես պայմանավորվածությամբ համաձայն մահմեդականները գլխներին կապում էին սպիտակ վիրակապ՝ հայերից տարբերվելու համար, այդ պատճառով էլ զոհերի մեջ մահմեդականներ հազվադեպ էին լինում» (39, 1896, 242) Նախապես իշխանությունները հաշվենկատորեն նախատեսել էին գործողությունների բոլոր մանրամասները՝ հայերին զրկելով պաշտպանության բոլոր հնարավոր միջոցներից, անգամ օգտագործման համար անհրաժեշտ ժանգոտված դանակներից: «Եթե ուշադրություն դարձնենք, որ քրդերը լավ զինված էին,– նշում է

«Ռուսական միսլ» ամսագիրը,– իսկ հայերից խել էին դանակներն ու կացինները, ուրեմն ճշմարտություն է, որ թուրքական կառավարությունը որոշել է քրդերի ձեռքով բնաջնջել հայերին» (56, 1892, 7, 51):

Ռուս առաջադեմ մտավորականները համարձակ ու վճռականորեն ընդգծում էին այն պարզ ճշմարտությունը, որ ջարդերը կազմակերպվում էին թուրքական կառավարության ցուցումով ու նրա հանձնարարությամբ:

«Թուրքական կառավարությունը,– նշում է «Նովայա ժիզն» ամսագիրը,– հպատակ քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ գործադրում է զանգվածային բնաջնջման քաղաքականություն: Մի թուրք պաշտոնյա,– շարունակում է ամսագիրը,– անգլիական դիվանագետին խոստովանել է, որ թուրքական կառավարությունն իր գոյությունը կարող է պաշտպանել միայն հպատակ քրիստոնյա ժողովուրդներին կոտորելով» (62, 1915, 82, 146): «Նովոյե սլովո» ամսագիրը ճիշտ է նկատում, որ «Հայկական հարցը կոտորածների միջոցով լուծելու ձևը հղացել է հենց ինքը՝ սուլթան Աբդուլ Համիդը» (61, 1896, 3, 175):

Այդ մասին ավելի պարզորոշ ու հստակ է արտահայտվում «Ռուսկոյե սլովոն»՝ ընդգծելով, որ «կոտորածը թուրքական իշխանությունների համար ամենագերադասելի միջոցն է Հայկական հարցից ազատվելու համար: Դա,– շարունակում է լրագրողը,– պետականորեն ծրագրված համակարգ է, որի իրականացնող հիմնական ուժը համիդիե գնդերն են» (76, 1896, 225): Ուրեմն, հայկական զանգվածային ջարդերը ոչ թե մահմեդական մոլեռանդության բռնկման արդյունք էին, ինչպես ներկայացնում էին թուրքական իշխանությունները, որոնց ձայնակցում էին ռուսական խավարամիտ մամուլի օրգանները (82, 1896, 52), այլ ծրագրվում ու կենսագործվում էին Բ. Դռան ու սուլթանի կողմից: «Սուլթան Համիդի պալատից Փոքր Ասիայի բնակավայրերը հասած հեռագրերը իրենցից ներկայացնում էին զանգվածային կոտորածների հատուկ ցուցումներ» (59, 170),– գրում էր Վ. Գոլմստերմը: «Իրականում,– այդ միտքը ընդգծում էր «Նեդեյան»,– գործողությունները հովանավորվում էին կառավարության կողմից, նախահարձակ էին լինում քրդերը, ապա միջամտում էին զինվորները» (27, 1895, 7):

Անդրադառնալով կոտորածների խնդրին, Ա. Ամֆիտեստրովը միանգամայն տեղին ու համարձակորեն ընդգծում է, որ ջարդերը ծրագրել և իրագործել են թուրքական իշխանությունները, միաժամանակ մեղքի մեծ բաժին ունեն եվրոպական տերությունները (51, 6), ինչպես նաև ցարիզմը, որը

«Հարդարացրեց հայերի հույսերը» (44, 1895, 352): 1895–1896 թթ. հայկական կոտորածների ընթացքում Արևմտյան Հայաստանի և կայսրության հայաբնակ բազմաթիվ վայրեր հայաթափվեցին, հարյուրավոր հայկական գյուղեր հրդեհի ճարակ դարձան, սպանվեցին 300000–350000 հայ: «Լուչ» լրագիրը ավելի է մեծացնում զոհերի թիվը, նշելով 500000 (83, 1897, 258): Սակայն այն դեռևս զոհերի լրիվ թիվը չի արտահայտում:

Անշուշտ, նշված թվերի մեջ չեն մտնում հազարավոր այն մարդիկ, որոնք անհետ կորան լեռներում, սպանվեցին գաղթի դժվարին ճանապարհներին, ջրասույզ եղան Մարմարայի ու Սև ծովի ջրերում, սփռվեցին աշխարհով մեկ, բռնի դավանափոխության ենթարկվեցին:

Այսպիսով, ռուս առաջադեմ մտավորականները հանգամանորեն լուսաբանելով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող արյունալի իրադարձությունները, աշխատելով խորամուխ լինել սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության մեջ և բացահայտել նրա մութ ծալքերը, ի հակադրություն իշխանամետ ու պահպանողական ուժերի, որոնք այդ իրադարձությունների մեկնաբանությունը կատարում էին թուրքական պաշտոնական շրջանների հայեցակետով, ու կեղծելով իրականությունը, կոտորածների մեղքը բարդում էին հայերի վրա, նրանք հրապարակախոսական ելույթներով ու լրագրային հոդվածներով ռուս հասարակությանն էին ներկայացնում այդ իրադարձությունների իրական ու ճշգրիտ պատկերը: Նրանք փաստական նյութի խորագնին վերլուծությամբ ցույց էին տալիս, որ հայկական կոտորածները կատարվում են ոչ թե մահմեդական ու քրիստոնեական համայնքների ընդհարման ու մահմեդական մոլեռանդության բռնկման հետևանքով, այլ թուրքական իշխանությունների ակտիվ միջամտությամբ ու հովանավորությամբ: Նրանք բացահայտեցին, որ սուլթանական կառավարությունը արևմտահայության դեմ ստեղծել էր գործողությունների ակտիվ համակարգ, պետականորեն մշակված պլան, որը նպատակ էր հետապնդում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմամբ, թուրքական ձևով լուծել Հայկական հարցը: Մեծ տերությունների թողտվությամբ ու նրանց հովանավորությամբ սուլթանական կառավարությունը նպատակաուղղված գործողություններով կենսագործում էր այդ հրեշավոր ծրագիրը:

## Գլուխ II Ծանոթություններ

1. Адамов К., К вопросу об исторических перспективах развития восточного вопроса, Сб. "Колониальный Восток", М., 1924.
2. Данциг Б. М., Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965, стр. 214.
3. Տես Սիմոնյան Յ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:
4. Чихачев А. П., Великие державы и Восточный вопрос, М., 1970.
5. Дебидур А., Дипломатическая история Европы, т. 2, М., 1947.
6. Хальгартен Г., Империализм до 1914 года, М., 1961.
7. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
8. Миллер А., Краткая история Турции, М., 1948, стр. 98.
9. Schreiner A., Zur Geschichte der Deutschen Aussen politik 1871–1945, Teil 1, Berlin, 1955.
10. "Вестник Европы".
11. "Кавказское слово", 1918, № 272.
12. Жигарев С., Русская политика в Восточном вопросе (ее история в 16–19 вв. Критическая оценка и будущие задачи (Историко–политические очерки)) т. 2, М., 1896.
13. Mandelstam A., Le sort de l'empire Ottoman, Paris, 1917.
14. Хвостов М. В., Ближневосточный кризис 1895–1897 гг., М., 1929, стр. 123.
15. Тыркова А., Старая Турция и младотурки, год в Константинополе, Петроград, 1916.
16. Дармштер П., История раздела Африки (1870–1913), М., 1925, стр. 34.
17. Փարիկյան Խ., Հայկական հարցը, Պեյրուք, 1962:
18. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934:
19. "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896.
20. Սերոբյան Ս., Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրուք, 1937:
21. Геноцид армян в Османской империи, Сб. документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.
22. «Մշակ»:
23. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999:
24. Киракосян А., Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника "Spektator", Ереван, 1982.
25. E. Freeman, Power in Europe, London, 1977.
26. L. F. Abbott, The Ottoman Turkey, Greece and the Great Powers, New York, 1917.
27. "Неделя".

28. Хвостов В. М., Проблема захвата Босфора "Историк–марксист", т XX, 1930.
29. АВПРИ, ф. "Политархив".
30. "Русская мысль".
31. АВПРИ, ф. "Секретный архив министерства иностранных дел".
32. Ф. Грязнов, Военное обозрение азиатской Турции, СПб., 1903.
33. Линч Ф. Х. Б., Армения. Путевые очерки и этюды, т. 2, 1910.
34. Сказкин С., Конец австро–руско–германского союза, т. 1, М., 1928.
35. Stü Bilial Shimsir, British Documents on Ottoman Armenians, Ankara 1982; Necip Fazil, Ulu Hakan Abdul Hamid Han, Istanbul, 1965; Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara 1950; Y. G Cark, Türk devleti Hizmetinde Ermeniler 1453–1953 Istanbul 1953; Gamuran Gürün, Le Dossier Armenien; Ankara 1984, Koca° Sadi, Boyunca Ermeniler Ve Turk–Ermeni ili°kileri, Ankara, 1967.
36. Enwer Zija Karal, Osmanli tarihi, Cilt 8, Ankara, 1962, s. 126.
37. Bilial Shimshir, British Documents on Ottoman Armenians, Ankara 1982
38. Cark Ý, Türk devleti Hizmetinde Ermeniler 1453–1953, Istanbul, 1953.
39. "Биржевые ведомости".
40. Гладстон В., Болгарские ужасы и Восточный вопрос, СПб., 1876.
41. "Русский листок".
42. Սարկոսյան Ա., Արևմտահայության վիճակը 19–րդ դարի վերջերին, Երևան, 1968:
43. Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX века, Ереван, 1972.
44. «СПб. ведомости».
45. «Кавказ».
46. Պողոսյան Հ., Սասունի պատմությունը, Երևան, 1985:
47. «Արձագանք»:
48. Տես Я. Д. Лазарев, Причины бедствий в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1896, Տարոնցի Գլակ, Ապստամբ Սասունը, Ժնև, 1903, Գ. Երիցյան, Լեռնաշխարհի գոյամարտը, Պեյրուք, 1959, Թառոյան Կ., Ժողովրդական շարժումները Սասունում, Երևան, 1966, Նույնի Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ–քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնապետության դեմ, Երևան 2001, Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении и великие державы в последней четверти XIX и начале XX века, Ереван, 1972. Սարկոսյան Ա., Արևմտահայության վիճակը 19–րդ դարի վերջերին, Երևան, 1968:
49. Лазарев Я. Д., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1896.
50. «Мир божий».
51. Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906.
52. "Гражданин".

53. «Московские ведомости».
54. «Правительственный вестник».
55. «Новое время».
56. «Русская мысль».
57. «Русская беседа».
58. «Русь».
59. «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898.
60. «Тифлисский листок».
61. «Новое слово».
62. «Новая жизнь».
63. Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, СПб., 1906.
64. «Северные записки».
65. «Новости».
66. «Русские ведомости».
67. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1989.
68. «Русское богатство».
69. «Новое обозрение».
70. «Մեղու»:
71. Термен Р. И., Отчет о полевой поездке 1907 г. в Ванский, Битлисский, Диарбекирский вилаеты. Тифлис, 1909.
72. Казим-Бек Ю., Современная Турция, СПб., 1897.
73. Яценко А., Русские интересы в Малой Азии, М., 1916.
74. Комаровский Л. А., Восточный вопрос, М., 1896.
75. «Русское обозрение».
76. «Русское слово».
77. «Северное сияние».
78. АВПРИ ф. «Посольство в Константинополе».
79. «Ալիք»:
80. Газета «Луч».
81. Шуфь В, Сворогов, М., 1898.
82. «Кремль».
83. «Луч».
84. «Մեղու»:
85. «Жизнь и искусство».
86. Տես՝ Պողոսյան Հ., Ձեռքնոցի պատմությունը, Երևան, 1968, Է. Կ. Տարկիսյան, Политика Османского правительства в Западной Армении и великие державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, Մկրտչյան Լ., Ձեռքնոցի ասպատակությունը 1895–1896 թթ., Երևան, 1995:
87. «Русские ведомости», 1896, № 34, նաև «Неделя», 1895 № 41: «Русская мысль», 1895, кн. 11., стр. 342–362.
88. Ներսիսյան Մ. Գ., Պատմության կեղծարարները, Երևան, 1998:

### ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԶԱՐԴԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԴԵԳՐԱԾ ԴԻՔՈՐՈՇՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վիլայեթներում թուրքական իշխանությունները, օգտվելով եվրոպական տերությունների լուռ անտարբերությունից ու նկատի ունենալով նրանց միջև գոյություն ունեցող ներքին հակամարտությունները, 20–րդ դարի նախաշեմին քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև ծրագրեցին ու իրագործեցին մարդկային պատմության մեջ նախադեպը չունեցող զանգվածային ջարդեր՝ նպատակ ունենալով արևմտահայության ֆիզիկական բնաջնջմամբ վերացնել հայ տարրը, հայաթափել Արևմտյան Հայաստանը, բացառել թուրքական կառավարության կարծիքով թուրքիայի ներքին գործերին տերությունների միջամտության հիմնական պատճառը, Հայկական հարցը:

Հայ ժողովրդի զանգվածային ջարդերի ընթացքում եվրոպական տերությունները, դաժան ու անզիջում պայքար մղելով միմյանց դեմ, տարածաշրջանում իրենց դիրքերը ամրացնելու համար յուրովի արծագանքեցին այդ արյունալի իրադարձություններին:

Նրանցից յուրաքանչյուրին ողբերգության մեջ հայտնված արևմտահայության արյունածոր կոտորածները հետաքրքրում էին այնքանով, թե ինչպես կկարողանային այդ առիթով ազդեցություն հաստատել սուլթանի վրա: Այդ ընթացքում նրանք իրենց կամքից անկախ երկարածգում էին Օսմանյան կայսրության գոյության ժամանակաշրջանը: Թեկուզ նրանցից ամեն մեկը ձգտում էր մասնատել «հիվանդ մարդուն» և ստանալ որոշակի տարածքներ, սակայն ականա տագնապում էր այն մտքից, որ իր մրցակից տերությունները ևս կարող են որոշակի տարածքների հավակնել, ուստի նպատակահարմար էին համարում անխախտ պահել իրերի նախկին վիճակը:

Ռուս առաջադեմ մտավորականները եվրոպական տերությունների մեծ գործելակերպը լուսաբանում էին արևմտահայության զանգվածային

ջարդերի խորապատկերի վրա: Նրանք խորաթափանցորեն բացահայտում ու քողագերծ էին անում հայկական հարցում մեծ տերությունների շահադիտական և խարդախ դիվանագիտական խաղերը, մերկացնում նրանց անհատապաշտական–եսասիրական նկրտումները և ընդգծում, որ Մերծավոր Արևելքում տերությունների շահերը, նրանց միջև եղած խոր տարածայնությունները, ներհակ հակամարտությունները թույլ չէին տալիս համատեղ մերգործելու սուլթանի վրա՝ պարտադրելու նրան կենսագործել հայկական բարենորոգումները, որից վարպետորեն օգտվելով, Աբդուլ Յամիդ 2–րդը Հայկական հարցի լուծումը տարավ իրեն հարմար հունով՝ կազմակերպելով հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանն ու Արևմտյան Հայաստանը հայաթափելուն միտված զանգվածային կոտորածներ:

Արևմտյան Հայաստանում ու Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վիլայեթներում սուլթանական կառավարության վարած հակահայկական քաղաքականությունը բազմակողմանի քննադատության ենթարկեցին 90–ական թվականներին ռուս հասարակության խիղճը ներկայացնող ազատական և առաջադիմական ուղղությունների հետևորդ ռուս մտավորականները, «կրթված հասարակությունը»: Նրանց հայացքները մասսայականացվում էին «Ռուսակայա միսլ», «Վեստնիկ Եվրոպի», «Սեվերնիյ վեստնիկ» ամսագրերի և «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Բիրժեվիե վեդոմոստի» և այլ լրագրերի միջոցով, որոնց էջերում հանդես էին գալիս տաղանդավոր հրապարակախոսներ ու գիտնականներ Վ. Ա. Գոլցեր, Մ. Ի. Վեննիկովը, Վ. Պ. Դանսևսկին, Լ. Ա. Պոլոնսկին, Յու. Ա. Ռուսսելը, Լ. Ջ. Սլոնիմսկին, Ե. Ի. Ռետինը, նաև այլ հրապարակախոսներ (1, 309): «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը մանրամասնորեն նկարագրելով Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Սասունում 1894 թ. հուլիս–օգոստոս ամիսների ընթացքում տեղի ունեցած գազանային կոտորածները, ընդգծելով թուրքական իշխանությունների ու մոլեռանդ մահմեդական ամբոխի անմարդկային վայրագ գործողությունները անգն ու անպաշտպան հայ բնակչության դեմ, աշխատում էր ռուս հասարակության սոցիալական լայն շերտերի մեջ առելություն առաջացնել թուրքական կառավարության ջարդարարական գործողությունների և խոր համակրանք ու օգնության ձգտում արևմտահայության նկատմամբ (2, 1895, 18, 42, 101): Քննադատելով թուրքական իշխանությունների կեղծ ու մտացածին հայտարարությունները, թե իբր հայերը ապստամբել են կառավարության դեմ, որ ընդհարումների ընթացքում ավել

լի շատ մահմեդականներ են զոհվել, լրագիրը փաստական հարուստ տվյալներով հերքելով մնաց կեղծիքը՝ հիմնավորում է, որ ջարդերի ընթացքում Սասունում շուրջ 10000 հայ է սպանվել, և տասնյակ հայկական գյուղեր վերածվել են մոխրակույտերի (2, 1895, 108): Հայ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած դաժանությունների մասին «Թիֆլիսսկիյ լիստոկ» լրագիրը նշում է, որ «առանց հոգեկան ցնցումների անհնարին է հիշել անգամ հայերի հանդեպ գործադրած գազանային դաժանությունների մասին...» (3, 1895, 39), իսկ «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագիրը, մերժելով հայերի ապստամբության մասին թուրքական կեղծ վարկածը, ցույց է տալիս, որ Սասունում հայերը չեն ապստամբել, նրանց կոտորել են առանց որևէ պատճառի (4, 1897, 11, 45):

Խոր ու համակողմանի քննադատության ենթարկելով անմեղ ու անգն հայ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած վայրի բռնություններն ու գազանային կոտորածները՝ Կազանի համալսարանի ռուսաց պատմության ամբիոնի դասախոս Պ. Կ. Ժուզեն Հոզևոր ակադեմիայի «Կարիքավոր ուսանողներին օգնության ընկերության» նիստերից մեկում հանդես եկավ արևմտահայերի ծանր վիճակի ու Ռուսաստանում ապաստան գտած գաղթականներին նյութական ու բարոյական անհրաժեշտ օգնություն կազմակերպելու մասին զեկուցումով, որը հետագայում հրապարակվեց առանձին գրքով (5, 16): Նա իրավացիորեն հայկական կոտորածների հեղինակ և հանցագործ համարում է Աբդուլ Յամիդ 2–րդին ու նրա համախոհ և ակտիվ գործակից մահմեդական հոգևորականությանը, ինչպես նաև նրա արյունալի գործողությունների հովանավոր մեծ տերություններին:

Թուրքական իշխանությունները արևմտահայության նկատմամբ դարեր շարունակ կիրառել են դաժան բռնություններ ու հարստահարություններ: Քրդական ավերիչ ասպատակություններն ու թուրքական կառավարիչների բռնարարքները եղել են արևմտահայերի ողբերգական կյանքի մշտական ուղեկիցները: 1878 թ. Բեռլինի կոնգրեսի, և մանավանդ Հայաստանում բարեփոխումների մասին 61–րդ հոդվածը ընդունելուց հետո արևմտահայերի դրությունն ավելի ծանրացավ: Թուրքական կառավարությունը և անձամբ Աբդուլ Յամիդ 2–րդը իր հայաջինջ գործողություններով ցույց տվեցին, որ 61–րդ հոդվածը հայերի համար եղավ ոչ թե հաջողության ու բարեկեցության, այլ նրա դժբախտությունների, անսահման թշվառությունների աղ-

բյուր և արյունալի կոտորածների դուռը բացեց (6, 1892, 7, 48): 61–րդ հոդվածով՝ մեծ տերությունների թուրքիայի ներքին գործերին միջամտելու հնարավորությունը նկատի ունենալով՝ «Հայկական հարցը թուրքիայում» հոդվածի հեղինակը գտնում է, որ թուրքական իշխանությունները դրա դեմ գործադրեցին հակամիջոցներ, այն է՝ միտումնավոր կերպով Արևմտյան Հայաստանը և կայսրության մյուս հայաբնակ նահանգները ողողեցին Բալկաններից ու Կովկասից թուրքիա ներգաղթած վերաբնակիչներով, որոնք ոչ միայն հարստահարեցին ու հողագրկեցին հայ բնակչությանը, այլև թուրքական իշխանությունների ձեռքին դարձան զենք՝ արևմտահայերի ֆիզիկական բնաջնջման համար: Եվ քանի որ մահմեդական վերաբնակիչները զինված էին, իսկ հայերը զրկված էին զենք կրելու իրավունքից ու անպաշտպան էին, հեղինակը կատարում է միանգամայն ճիշտ եզրահանգում՝ ընդգծելով. «Կասկածից վեր է, որ թուրքական կառավարությունը մտադրվել է բնաջնջել հայերին» (6, 1892, 7, 49):

Թուրքական կառավարությունը հայ բնակչության դեմ գործում էր վճռական ու դաժանորեն ոչ միայն հայերի անզեն ու անպաշտպան լինելը նկատի ունենալով, այլ նաև այն բանի համար, որ իրենց ներհակ հակամարտությունների ու Մերձավոր Արևելքում ունեցած հատուկ շահերի պատճառով ոչ մի տերություն առանձնակի չէր գործում, իսկ նրանց համատեղ միջամտությունը թուրքիայի ներքին գործերին բացառվում էր (6, 1914, 2, 305): Հետևաբար, Հայկական հարցում տերությունների միջամտության փորձերը ոչ թե թեթևացրել, այլ ավելի են ծանրացրել հայ ժողովրդի վիճակը, որովհետև թուրքական իշխանությունները շատ վստահ, հետևողական ու վճռական էին հայասպան գործողությունների ընթացքում՝ հավատացած լինելով, որ տերությունների կողմից արտաքին միջամտության վտանգը իրական չէ: Նրանք իրենց կենսափորձով համոզվել էին, որ տերությունների միջև առկա տարածայնությունները երբեք էլ հնարավորություն չեն ընձեռում նրանց համաձայնեցված գործողություններ սկսել թուրքիայի դեմ (6, 1896, 12, 103): Եվրոպական տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր տիրանալ թուրքիայի տարածքներին՝ ոչինչ չզիջելով մյուսներին, սակայն քանի որ դա անհնարին էր, ուստի աշխատելով թուրքիան վերածել իրենց գաղութի, իշխել երկրի հումքի բազաների վրա ու նրան պահել իրենց հսկողության ուղորտում, վարում էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անձեռնմխելիությունը պաշտպանելու քաղաքականություն (7,

152), որով թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդներին դատապարտում էին հավիտենական ստրկության, փակում նրանց առջև թուրքական դժոխքից դուրս գալու հնարավորությունը (8, 1896, 3, 177): Տերությունները հետամուտ լինելով իրենց տնտեսական, քաղաքական ու ռազմավարական շահերին, Հայկական հարցը՝ որպես դիվանագիտական խաղաքարտ, օգտագործում էին սուլթանի վրա ճնշում գործադրելու և նրանից իրենց համար շահավետ արտոնություններ կորզելու համար: «Նովոյե սլովո» ամսագիրը տերությունների նման վարքագիծը նկատի ունենալով՝ իրավացիորեն նշում է, որ Հայկական հարցի լուծման, հայ ժողովրդի ազատագրման միակ հնարավոր և ճիշտ ուղին թուրքիայի մասնատման միջոցով է լինելու (8, 1896, 3, 171): Այդ նույն ուղին էր առաջադրում միջազգայնագետ պրոֆ. Լ. Կոմարովսկին (9): Հետևաբար, ի հեճուկս տերությունների, ցարիզմի ու նրա կամակատար հետադիմական մամուլի և պահպանողական ուժերի, որոնք հայկական ծովացող արյունը ծառայեցնում էին իրենց եսամոլ շահերին ու քաղաքական միտումներին, ռուս առաջադեմ մտավորականները՝ մտահոգված արևմտահայության ճակատագրով, Հայկական հարցի լուծման ճիշտ ու արդարացի ուղին համարում էին թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների բանտ հանդիսացող, իր դարն ապրած, Եվրոպայի առաջընթացը խոչընդոտող Օսմանյան կայսրության մասնատումը: Աբդուլ Համիդ 2–րդը, լավ տիրապետելով արևելյան խարդախ դիվանագիտության նուրբ ու ճկուն մեթոդներին, վարպետությամբ խուսամավում էր տերությունների հակամարտությունների միջև, իր համար ամենածանր պահին ճիշտ էր կողմնորոշվում: «Մերք հենվելով ռուս–ֆրանսիական, հաճախ նաև գերմանա–ավստրո–հունգարական ու իտալական դաշնակցության վրա, երկու կողմին էլ ահաբեկում էր Անգլիայի հետ հնարավոր հաշտության կայացմամբ» (10, 344): Այդ ընթացքում մարում էր տերությունների դիվանագիտական ակտիվությունը, վրա էր հասնում նրանց կողմից Հայկական հարցի մոռացության տևական մի շրջան, որը սուլթանն օգտագործում էր նոր, ավելի դաժան կոտորածներ կատարելու համար:

Տերությունների դիվանագիտական միջամտությամբ ոչ թե բարելավվել, այլ, ընդհակառակն, առավելապես ծանրացել ու վատացել է արևմտահայության վիճակը: Հայերի համար «ավելի լավ կլիներ,– եզրակացնում է «Նովոյե սլովո» ամսագիրը,– որ ոչ մի դիվանագետ երբևէ հայերի օգտին չգրեր ոչ մի արձանագրություն, չստորագրեր ոչ մի վերջնագիր» (8, 1896, 3, 173),

որոնք սուլթանը նետում էր արխիվ ու շարունակում հայաջինջ դաժան գործողությունները՝ հայաթափելով Հայաստանը:

Եթե նախկինում թուրքական իշխանությունների համար արևմտահայությունը հանդիսանում էր քրիստոնյա «ռայա», որը իրավագուրկ էր ու անպաշտպան, թուրք տիրողների համար ճնշման ու շահագործման օբյեկտ, ապա Հայկական հարցի միջազգայնացումից հետո դիտվում էր կայսրության ամբողջականության դեմ ուղղված ներուճակ վտանգ, երկրորդ Բուլղարիա, որին պետք է ժամանակին վնասագերծել (11, Ժ. 119, ռ. 48–49): Այդ հրեշավոր ծրագիրը իրագործելու համար Աբդուլ Համիդ 2–րդը հարմար պահը ճիշտ ընտրեց: Նա քաջ գիտակցում էր, որ Ռուսաստանը հիմնականում զբաղված էր Հեռավոր Արևելքում ու պաշտպանում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և, իրենից վտանգ չէր ներկայացնում: Անգլիան ու Ֆրանսիան զբաղված էին Եգիպտոսով ու նրա հարակից տարածքների հարցով, իսկ Գերմանիան Մերձավոր Արևելքում հաստատվելու համար Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների ստեղծման լուրջ քայլեր էր անում: Հայկական հարցում տերություններից ոչ մեկը ակտիվ ու առանձնակի միջամտել չէր ցանկանում, ուստի ստեղծված բարենպաստ հնարավորությունները սուլթանն օգտագործեց զանգվածային ջարդեր սանձազերծելու համար (12, 1906, 10): Վ. Գոլմստրենը իր «Ով է թշնամին» հոդվածում քննարկելով այդ հարցը՝ իրավացիորեն նշում էր, որ 1894 թ. ամռանը Սասունի հայ բնակչության սահմուկեցուցիչ կոտորածները բրիտանական կառավարության համար ցանկալի առիթ եղան, «Արևելքում հրդեհ առաջացնելու» սուլթանի վրա իր երբեմնի ազդեցությունը վերահաստատելու և առանձնապես նրան ստիպելու, որպեսզի հրաժարվի Եգիպտոսից անգլիական զորքերը դուրս բերելու պահանջից (2, 1897, 75): Բրիտանական կառավարությանը առավելապես մտահոգում էր Թուրքիայի հետ Ռուսաստանի հարաբերությունների չափից ավելի լավացումը, որի հետևանքով ռուսական ազդեցությունը արագ թափով ծավալվում էր Միջագետքում ու Բրիտանական Հնդկաստանի տարածքների մատույցներում: «Անգլիացիները,– նշում է Վ. Գոլմստրենը,– ջանում էին կանխել Ռուսաստանին: Իրենց այդ նպատակի համար օգտագործեցին հայերից պատրաստված դյուրավառ նյութը, որը հրդեհվեց թուրքերի ձեռքով: Անգլիացիները այդ արեցին իբր թե պաշտպանելով հայերին, մինչդեռ ոչնչացնելով Սան Ստեֆանոյի պայմանագիրը՝ նրանց հանձնեցին թուրքերի

ձեռքը, վերջիններիս երախտագիտությանն արժանանալով՝ աշխատում էին միանգամից երկու նպաստակ որսալ: Պահպանելով մարդասիրության փառքի պսակը,– շարունակում է նա,– աշխատում էին լավ դասավորել իրենց գործերը, կասեցնելով մեր առաջընթացը դեպի հարավ» (14, 7): Հետևաբար, իր հեռախար նպատակի իրագործման ու Թուրքիայում Ռուսաստանի ազդեցության չեզոքացման համար անգլիական կառավարությունը ձգտում էր առավելապես չարել առանց այդ էլ Եգիպտոսի բռնազավթման պատճառով վատացած անգլո–թուրքական հարաբերությունները, հայկական կոտորածների սկզբնական շրջանում արգելեց լրագրերում կոտորածների վերաբերյալ հրապարակումները: Սակայն, երբ ահագնացող կոտորածների սարսափի աղաղակները հասան բրիտանական հասարակայնությանը, ձևավորված հայանպաստ հասարակական կարծիքի ճնշման տակ կառավարությունը ստիպված էր ակտիվ քայլեր սկսել (15, 1895, 98): «Լոնդոնում (և մյուս քաղաքներում) տեղի ունեցած հանրահավաքներում,– գրում է Ա. Կիրակոսյանը,– մասնակիցները մեղադրում էին բրիտանական կառավարությանը անտարբերության և համագործակցության մեջ... Կառավարությունը չիրապարակեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «ողբերգական» իրադարձություններին վերաբերող հյուպատոսների հաղորդագրությունները միմիայն Անգլիայում հասարակական կարծիքը ծայրաստիճան չզորգռելու, ինչպես նաև Արևելյան հարցը չարելու վախից» (16, 256): Այնուամենայնիվ, Ռոզբերիի կառավարությունը ստիպված էր դիմելու վճռական քայլերի:

Հայկական զանգվածային ջարդերի առիթով հանրային կարծիքի բորբոքման մասին Պ. Դոլգորուկովը «Հայկական հարցը և ռուս հասարակայնությունը» հոդվածում ընդգծում է, որ Սասունում գազանային կոտորածի ենթարկվող հայ բնակչության սարսափի աղաղակները ցնցեցին եվրոպական հասարակությանը (17, 1916, 1, 3): «Հայերի դեմ գործադրված վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնությունները,– նշում է արխիվային վավերագիրը,– թափանցեցին եվրոպական մամուլի մեջ և Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքերի գազանային արարքների դեմ բարձրացրին մերկացնող հոդվածների ալիք: Մոտ օրերս,– շարունակում է վավերագիրը,– սուլթանի անձնական հրամանով հեռագիր է ուղարկվել թուրքական արտասահմանյան ներկայացուցիչներին հրապարակելու և հերքելու այդ պախարակումների անամոթ ու ստահող լինելը, սակայն, որը չկարողա-

ցավ Եվրոպայի հասարակական կարծիքի վրա ցանկալի տպավորություն թողնել և կանխել մեղադրանքների տարափը, որի համար Բ. Դուռը արգելեց օտարերկրյա գրեթե բոլոր լրագրերի մուտքը Թուրքիա» (34, Ժ. 3435, յ. 3):

Պահպանողականները, ի հեճուկս Ռոզբերիի անվճարականության, ավելի ակտիվությամբ հանդես եկան: «Անգլիական մամուլը,— նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— փառաբանում է լորդ Սոլսբերիին՝ նույնների 3—ին Լոնդոնի քաղաքագլխի կողմից կազմակերպված ճաշկերույթի ժամանակ արտասանած ճառի համար: Սոլսբերին ընդգծում էր Թուրքիայի դեմ տերությունների համատեղ գործողությունների անհրաժեշտությունը, իսկ անգլիական կառավարությունը պետք է ուժեղացնի Միջերկրական ծովում գտնվող նավատորմը» (2, 1895, 303): Սոլսբերիի գլխավորած պահպանողական կուսակցությունը իշխանության հասնելու նպատակով, երբեք էլ չմտահոգվելով կոտորվող արևմտահայության ողբերգական վիճակով, Հայկական հարցը դարձրեց կուսակցական պայքարի զենք: Հասարակական կարծիքի սրումը և ընդդիմության ուժեղացումը ստիպեցին կառավարությանը դիմելու լուրջ քայլերի (2, 1894, 347): Նշանավոր պետական գործիչ Լամզորթը, նկատի ունենալով այս էտապում անգլիական կառավարության կեղծ հայասիրական ելույթները, գրում էր. «Անգլիան իր կեղծ մարդասիրական կոչի քողի տակ լուծում է բոլորովին այլ խնդիր» (18, 1931, 3, 25):

Հայկական հարցում, ինչպես նշում է «Նեդելյա» լրագիրը, լորդ Սոլսբերիի ակտիվությունը ավելի շատ պայմանավորված էր իշխանության հասնելու մտադրությամբ, քան կոտորվող արևմտահայերին օգնելու, կոտորածը դադարեցնելու և մարդասպան սուլթանին սաստելու ցանկությամբ (19, 1895, 260): Հայասիրական կեղծ ելույթներով անգլիական կառավարողները նպատակ ունեին ստիպելու սուլթանին հաշտվելու Եգիպտոսի կորստի հետ և վերադառնալ կրկին բրիտանական կողմնորոշման հունը (2, 1895, 260): Անգլիական դիվանագիտությունը աստիճանաբար ուժեղացնում էր ճնշումը սուլթանի վրա, որից ահաբեկված սուլթանն ավելի էր հակվում դեպի ցարիզմը, իսկ վերջինս նկատի ունենալով մասնավորապես Փոքր Ասիայում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում Անգլիայի նկրտումները, ավելի մերձեցավ սուլթանի հետ, սկսեց պաշտպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը (34, Ժ. 3435, յ. 43):

Անգլիական դիվանագիտության ճնշմանը դիմագրավելու նպատակով Աբդուլ Համիդ 2—րդը դիմեց Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարություն-

ներին, խնդրելով նրանց միջամտությունը, որպեսզի Անգլիան մեղմացնի իր տոնը Թուրքիայի նկատմամբ» (23, 1895, 217): Ռուսական դիվանագիտության խորհրդով սուլթանը դիմեց նաև անգլիական կառավարությանը, սակայն պատճառաբանելով երկրի հասարակական կարծիքը, Անգլիան մնաց անդրդվելի: Նա սուլթանից պահանջում էր Սասունում ճշմարտությունը պարզելու նպատակով այնտեղ գործուղել Վանում անգլիական փոխյուպատոս Հովվորդին (2, 1894, 347): Սուլթանը նկատի ունենալով այդ առաջարկից իր համար բխող տհաճ ու վտանգավոր հետևանքները, առարկում էր: «Սուլթանի համար,— նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— չկա ավելի ծանր ու տհաճ բան, քան թույլ տալ օտարներին ծանոթանալու իր տերության կարգ ու կանոնին, մանավանդ այժմ, երբ իր կողմից արգելված է օտար լրագրողների մուտքը երկիր» (2, 1895, 179):

Սուլթան Համիդին այդ ծանր կացությունից փրկելու համար Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարությունները, որոնց համար նպատակահարմար չէր այդ փուլում սրել Հայկական հարցը, և միջազգային քննարկման խնդիր դարձնելով հարուցել արտաքին միջամտություն, շտապեցին Անգլիայի միակողմանի ակտիվությունը չեզոքացնելու համար խորհուրդ տալ սուլթանին պատժել կոտորածների ընթացքում առավել աչքի ընկած քուրդ առաջնորդներին, հանգստացնել հասարակական կարծիքը:

Հայ ժողովրդի դեմ գործած մեծ ոճիրի համար մարդասպան սուլթանին պատասխանատվությունից զերծ պահելու նպատակով տերությունները առաջարկեցին քաղաքական այդ սոսկալի հանցագործության քննարկումը տեղափոխել քրեական բնագավառ և պատժել առավել ակտիվ ջարդարար մի քանի քուրդ առաջնորդների, միաժամանակ նրանք խորհուրդ տվեցին Աբդուլ Համիդ 2—րդին Սասունի իրադարձությունները ուսումնասիրելու համար կազմել հետաքննական հանձնաժողով, նրա կազմում ընդգրկել նաև տերությունների ներկայացուցիչներին (21, 1895, 311)՝ խնդրին տալով տեղական նշանակություն կանխել ու թույլ չտալ Հայկական հարցը դառնա միջազգային քննարկման առարկա:

Թուրք—անգլիական հաշտեցումը կայացավ, որովհետև նրանք ընդհանուր շահեր ունեին, մանավանդ որ Անգլիան որպես գաղութային կայսրություն «60 միլիոն մահմեդական հպատակ ուներ» (21, 1895, 311),— ընդգծում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը:

Քանի դեռ Անգլիայում Սուլսբերին իշխանության էր ձգտում, նա անկաշկանդ քննադատության էր ենթարկում կառավարությանը, հայերի կոտորածների նկատմամբ դրսևորած անտարբերության համար՝ ընդգծելով, որ «եթե խոսքից զործի անցնելը դժվար է ու անհնարին, ապա պետք է պահպանել լռություն» (19, 1895, 21): Սակայն երբ անցավ իշխանության գլուխ, որոշ ժամանակ միայն կարողացավ պահպանել իր վճռականությունը, անգամ թուրքական դեսպանի հետ զրույցի ընթացքում սպառնաց սուլթանին, որ «եթե շարունակի դիմադրել, ապա այն ազդանշան է ծառայելու թուրքիայի մասնատման համար»: Յետագա գործողությունների ընթացքում աստիճանաբար այդ վճռականությունը մարեց: 1895 թ. նոյեմբերի 19-ին պառլամենտի նիստում ելույթի ժամանակ, անդրադառնալով հայկական կոտորածների խնդրին, նա ամբողջությամբ բացահայտում էր Անգլիայի գործելակերպը: «Չայերի համար,– ասում է նա,– չափազանց հաճելի է, որ դժբախտ ժողովրդի ճակատագրի նկատմամբ այդքան խոր հետաքրքրություն են ցուցաբերում, սակայն չափազանց հեռու են գնում նրանք,– շարունակում է նա,– ովքեր պնդում են, թե կառավարությունը պատվով պարտավորվել է օգնել հայերին, նույնիսկ պատերազմական վտանգի առկայության դեպքում: Գոյություն ունեցող պայմանագրերը ոչ ֆիզիկապես և ոչ էլ նյութապես չեն պարտադրում պատասխանատվություն կրել հայերի համար» (19, 1895, 21): Նահանջելով նախնական դիրքորոշումից և նպատակ ունենալով համաձայնության հասնել սուլթանի հետ՝ նա հայտնում էր, որ «հարցը լուծելու համար անհրաժեշտ է ժամանակ տրամադրել սուլթանին» (19, 896, 4):

Խուսանավելով երկրում ձևավորված հայանպաստ հասարակական կարծիքի և Թուրքիայի հետ հաշտեցման իր համար հնարավոր շահավետ ուղիների որոնման միջև, անգլիական կառավարությունը գտնում էր, որ ինքը Չայկական հարցում գործում է մյուս տերությունների հետ, ուստի առանց նրանց, ինքը միայնակ գործել չի կարող (24, 1895, 12, 6): Ցանկանալով սրել ու վատացնել ռուս–թուրքական հարաբերությունները, օգտագործելով թույլատրելի, ինչպես նաև անթույլատրելի բոլոր միջոցները, բրիտանական դիվանագիտությունը, միաժամանակ ձգտելով մեղմել երկրի հասարակական կարծիքը, խորամանկ ակնարկ էր անում կոտորածները դադարեցնելու համար որևէ քրիստոնյա տերության կողմից Արևմտյան Չայաստանը գրավելու մասին՝ նկատի ունենալով Ռուսաստանին (36, 1894, 213):

Լինելով խիստ զգուշավոր դիվանագետ՝ Սուլսբերին աշխատում էր ավելի հստակեցնել Անգլիայի դիրքորոշումը, մշում էր, որ «Անգլիան որպես քրիստոնյա տերություն մեծան իրավունքների չի տիրապետում»: Անգլիայի մեծանցնող դիրքորոշումը իրավացիորեն հարուցում է լրագրողի անկեղծ զարմանքը: «Ահա թե ինչի էր ձգտում Անգլիայի պահպանողականների կառավարության աղմկարարությունը Արևելյան հարցում» (19, 1896, 4),– եզրակացնում է նա:

Դիվանագիտական խարդախ հնարների կիրառումով արտաքին քաղաքականության ամենակնճռոտ հարցերի լուծման այդ եղանակը բրիտանական դիվանագիտության համար երբեք էլ նորություն չէր: 1878 թ., այն ժամանակ դեռևս արտաքին գործերի նախարար, լորդ Սուլսբերին Բեռլինի կոնգրեսի պայմանագրով ու կոնգրեսի նախօրեին, հունիսի 4-ին Թուրքիայի հետ կնքված համաձայնագրով վերածնեց հայերի համար նպաստավոր Սան Ստեֆանոյի պայմանագիրը, և Անգլիան պարտավորվեց պաշտպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, չեզոքացրեց Չայաստանում բարենորոգումների կենսագործման խնդրում Ռուսաստանի լիազորությունները, հայերին հանձնելով բոլոր տերությունների իրավասությանը և ինքը մյուս տերությունների հետ միասին դարձավ արևմտահայերի ու Չայաստանում բարենորոգումների անցկացման հովանավորը: Սրանից, անշուշտ, հետևում էր, որ կոնգրեսի մասնակից ինչպես մյուս հինգ տերությունները, Անգլիան ևս իրավասու էր ոչ միայն պահանջել, այլ նաև պարտադրել սուլթանին Չայաստանում բարենորոգումներ մտցնելու համար: Սակայն, ի դժբախտություն արևմտահայերի, Անգլիան իր այդ պարտականությունը հիշում ու նրանից օգտվում էր միայն այն ժամանակ, եթե այն իր համար նպատակահարմար էր, Մերձավոր Արևելքում ու Թուրքիայում որևէ կարևոր խնդիր լուծելու անհրաժեշտություն էր առաջանում, իսկ մյուս դեպքերում նա իրեն մեծան իրավունք չէր վերապահում (35, 1895, 86):

Դիարբեքիրում անգլիական հյուպատոս Տրոտտերը թուրքական իշխանությունների հետ շփման ընթացքում մշտապես զգում էր նրանց դժկամությունը, երբ առնչվում էր հայ բնակչության հետ: Իշխանությունները խոչընդոտում ու դժվարություններ էին հարուցում: Իր իրավունքները պարզելու նպատակով հյուպատոսը 1879 թ. դիմում է կառավարությանը, թե ինքը իրավունք ունի «պաշտպանելու Բ. Դռան քրիստոնյա հպատակների շահերը, և եթե այո,– շարունակում է նա,– որտեղի՞ց է բխում այդ իրավունքը ...»

Չայտնի օրենքներում,— ասում է Տրոտսկերը,— ես որևէ ակնարկ չեմ գտնում ավելի լայն միջամտության իրավունքի վերաբերյալ» (38, 55): Լորդ Սոլսբերին, վկայակոչելով Բեռլինի կոնգրեսի պայմանագիրը և Կիպրոսի համաձայնագիրը ու պատասխանելով այդ հարցմանը, նշում էր. «Այդ դաշնագրերի ուժի հիման վրա սուլթանը պարտավոր է ոչ միայն լավ օրենքներ հրապարակել, այլ նաև պարտավոր է իրագործել նախոր Տրոտսկերի հսկողության ներքո գտնվող պրովինցիաների վարչական բարեփոխումները: Այդ դաշնագրերի ոգուն չհամապատասխանող ամեն մի գործողություն կարող է առիթ ծառայել բողոքի համար՝ առաջին անգամ հյուպատոսի կողմից, իսկ այնուհետև, անհաջողության դեպքում՝ դեսպանի կողմից» (38, 45):

Անգլիան ճանաչում ու ընդունում էր պայմանագրերով սահմանված իր իրավունքները, ինչպես նաև թուրքական կառավարության պարտականությունները, որովհետև դրանք նա ծառայեցնում էր իր արտաքին քաղաքականության ամենակարևոր խնդիրները լուծելու, Եգիպտոսը սուլթանից կորզելու և նրան իր ազդեցության տակ պահելու համար: Իսկ երբ 1882 թ. բռնազավթեց Եգիպտոսը և Սուեզի ջրանցքի բացումով անգլիական առևտրական ուղիները հյուսիսարևելյան Միջերկրականից տեղափոխվեցին հարավարևելյան շրջանները, Արևմտյան Չայաստանի վրայով դեպի Պարսից ծոց ձգվող ցամաքային առևտրական ուղիները դադարեցին կարևոր լինելուց, 1889 թ. Անգլիան իր այդ իրավունքների ու լիազորությունների և հատկապես Չայկական հարցում ունեցած պարտավորությունների մասին լսել անգամ չէր ցանկանում: «1889 թ. հունիսի 28—ին Սոլսբերին, լորդերի պալատում պատասխանելով լորդ Քարնարվոնի հարցապնդմանը, ընդգծում էր, որ «Անգլիան Թուրքիայի հովանավորը չէ և չի կարող նրա նկատմամբ խնամակալի իրավունք գործադրել» (38, 46): Դրանից բխող հետևությունը պարզ է: Անգլիան Չայկական հարցը որպես դիվանագիտական խաղի մանրադրամ օգտագործում էր՝ այն ծառայեցնելով իր քաղաքական նպատակներին, որից հետո մոռացության էր մատնում:

Թուրքիայում իր խախտված ազդեցությունը վերահաստատելու նպատակով այժմ նա ցանկանում էր Սասունում հետաքննությունները տանել իր համար ցանկալի հունով, սակայն ռուս-ֆրանսիական կողմն ուներ բոլորովին այլ կողմնորոշում:

Ռուս նշանավոր հրապարակախոս Վ. Գոլմստերենը, որը թյուրիմացաբար լավատեսորեն էր տրամադրված հետաքննող հանձնաժողովի և Սասունում

նրա վարած հետաքննության նկատմամբ, հույս էր հայտնում, որ «վերջապես տերությունների համատեղ ջանքերով կվճռվի անլուծելի թվացող Չայկական հարցը» (2, 1895, 347): Սակայն հայասեր հրապարակախոսի հույսերը հոդս ցնդեցին, երբ թուրք ջարդարարների վայրագությունների հետքը թաքցնելու մտահոգությամբ Աբդուլ Չամիդ 2—րդը հանձնաժողովին ցուցում տալով շեշտում է. «հետաքննել հայ հրոսակների գազանություններն ու չարագործությունները» (2, 1895, 347): Բ. Դուռը միաժամանակ տեղեկություններ էր հաղորդում տերություններին, որի ընթացքում կեղծելով իրական ճշմարտությունը, փորձում էր նրանց համոզել, որ ոչ թե թուրք զինվորներն են կոտորել հայերին, այլ հայերն են այրել ու սրբապղծել մահմեդականների տները» (39, 1894, 37, 43): «Չայերը,— ասում էր սուլթանը,— նախկինում վայելել են բարեգութ կառավարության հոգատարությունը, սակայն վերջին տարիներին իրենց վատ են պահում: Չաճախ հարձակվում են մահմեդականների վրա, ապստամբում օրինական կառավարության դեմ: Բոլոր արյունահեղությունների համար մեղավոր են հայերը: Մահմեդականները միայն պաշտպանվում են» (24, 1896, 2, 416): Իրականում մինչ հանձնաժողովի աշխատանքների արդյունքները սուլթանն արդեն «կանխորոշեց հանձնաժողովի վերջնական եզրակացությունը: Դրան տերություններից ոչ մեկը չառարկեց» (2, 1895, 232): Եվ չէին էլ ցանկանում առարկել, որովհետև նրանք նպատակ չունեին ճշմարտությունը բացահայտել, դա նրանց չէր հուզում: Նրանք ցանկանում էին թաքցնել ջարդերի իրական կազմակերպիչներին ու մեղավոր ճանաչել հայերին: Սուլթանի այդ ցինիկ հայտարարությունը զայրույթի ալիք բարձրացրեց անգլիական ու ռուսական հասարակական առաջադիմական շրջաններում (2, 1894, 347):

Անգլիական հասարակության հայասիրական ելույթները Սոլսբերին խորամանկորեն օգտագործում էր Ռոզբերիի կառավարության դեմ՝ որպես կուսակցական պայքարի կռվան, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում՝ միջոց սուլթանի վրա անգլիական ազդեցության վերահաստատման համար (2, 1894, 347):

Չետաքննական հանձնաժողովի աշխատանքները բավարար արդյունք չտվեցին: Անգլիան շարունակում էր ուժեղացնել դիվանագիտական ճնշումը Թուրքիայի վրա: Ռուս-թուրքական հարաբերությունները վատացնելու համար նա առաջադրեց Օսմանյան կայսրության մասնատման ծրագիրը՝ Եգիպտոսը, Միջագետքը և Պարսից ծոցի շրջանները իր ձեռքին պահելու

պայմանով (40, Bd. 10, 2375), իսկ Ռուսաստանին իրավունք էր վերապահում գրավելու Արևմտյան Չայաստանը և Սև ծովի նեղուցները (41, 1930, 20, 104):

Անգլիական նենգ դիվանագիտության այդ երկդիմի խորամանկ ու խաբուսիկ առաջարկը, մասնավորապես Ռուսաստանի կողմից Արևմտյան Չայաստանը գրավելու հրապուրիչ ակնարկը ճիշտ չի ընկալվել ինչպես հայ, այնպես էլ օտար որոշ պատմաբանների ու կուսակցական, հասարակական գործիչների կողմից (42): Նրանք Չայակական հարցում Անգլիայի նման կողմնորոշումը թյուրիմացաբար դիտում էին մարդասիրական ու անկեղծ, որը, իբր թե, նպատակ էր հետապնդում օգնել արևմտահայերին, դադարեցնել սաստկացող կոտորածները և մեղադրում են ցարիզմին, որ ընդամառ չօգնաց նման առաջարկին ու մերժեց այն:

Ա. Ամֆիտեստրովը, անկարող լինելով թափանցել Անգլիայի Մերձավոր Արևելքում ունեցած շահերի ու հետապնդած նպատակների ոլորտը և ճիշտ ներկայացնելու Չայակական հարցում նրա նենգադավ դիվանագիտական խաղերի իրական բովանդակությունը, կարծում է, թե Անգլիայի կողմից հայասիրական ցույցերը և նրա ակնարկը, թե «Չայակական հարցը բավարար կերպով ի վիճակի է վճռել միայն Ռուսաստանը», անկեղծ են (22, 15): Մինչդեռ խորամանկ Ալբրիոնին քաջ հայտնի էին Ռուսաստանի հանդեպ արևմտահայերի համակրանքն ու թուրքական լծից հյուսիսի հզոր կայսրության օգնությամբ նրանց ազատագրման ակնկալիքները, աշխատում էր հայասիրական ելույթներով սեպ խրել ռուս-թուրքական հարաբերությունների միջև, թշնամացնել նրանց, շահելով սուլթանի համակրանքը կրկին վերահաստատվել Թուրքիայում (86, 178): Պատմական անժխտելի իրողություն է, որ Թուրքիայում անգլիական ազդեցության հաստատման ժամանակամիջոցում արևմտահայերը ենթարկվեցին տնտեսական քայքայման և ունեզրկման: Անգլիական դիվանագիտության թելադրանքով սուլթան Չամիլը մտահղացավ ռուս-թուրքական սահմանի երկայնքով հայաբնակ տարածքները հայաթափել ու բնակեցնել մահմեդական բնակչությամբ, ապա հիմնել համիդիեզ գնդերը, որոնք դարձան միջոց արյունաբերու սուլթանի ձեռքին՝ հայերի զանգվածային ջարդերի իրագործման համար:

Սխալվում է նաև հրապարակախոս Վ. Գուլցը՝ կարծելով, թե Անգլիան դեռևս 1889 թ. հրավիրում էր Ռուսաստանին համատեղ լուծելու Չայակական հարցը (6, 1890, 11, 213–214): Կարծում ենք, որ հրապարակախոսը չի կա-

րողացել բացահայտել Եգիպտոսի բռնազավթումից հետո անգլո-թուրքական հարաբերությունների ընդգծված սառնության և ռուս-թուրքական հարաբերությունների արդեն նկատելի ջերմացման ժամանակաշրջանում խորամանկ Ալբրիոնի ռուս-թուրքական հարաբերությունների հետագա լավացման դեմ նպատակաուղղված ձեռնարկումները: Այլապես ռուսական պահպանողական ու առաջադիմական մամուլի կողմից հակառուսականության համար խիստ քննադատության ենթարկվող Անգլիան չէր կարող Վ. Գուլցի կողմից դիտվել Մերձավոր Արևելքում Ռուսաստանի համար ազնիվ գործընկեր: Նույն թյուրիմացությունը հատուկ էր նաև հրապարակախոս Ա. Ն. Սազոնովին (6, 1896, 11, 112): «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը և նրա հետևողությամբ խորհրդային պատմաբան Ա. Ֆ. Ռոտշտեյնը անգլիական դիվանագիտության առաջադրած ծրագիրը մեկնաբանում են միակողմանիորեն: Այսպես, օրինակ, «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը Անգլիայի կողմից այդ է՝ տապում այսպես կոչված հայասիրական ելույթը բացատրում էր անգլիական առևտրական ուղիների հյուսիսարևելյան Միջերկրականից՝ Սուեզի ջրանցքի բացումով դեպի հարավարևելյան տարածքներ տեղափոխությամբ (43, 1897, 70), իսկ Ֆ. Ռոտշտեյնը կարծում է, թե Անգլիան առաջարկելով մասնատել Թուրքիան ու Ռուսաստանին վերապահելով Արևմտյան Չայաստանը, ցանկանում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել Ղեռավոր Արևելքից, ուր մեծ տերությունները զբաղված էին Չինաստանի բաժանումով (44, 273), և այն կենտրոնացնել Մերձավոր Արևելքի վրա՝ Ղեռավոր Արևելքում իրեն ազատ զգալու համար:

Իրականում Մերձավոր Արևելքը մշտապես եղել է Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության կիզակետում: Այդ տարածաշրջանում առաջնություն շահելու և Թուրքիայի վրա միակողմանի ազդեցություն հաստատելու համար մյուս տերությունների դեմ մղված պայքարում նա միշտ գործադրել է իրեն հատուկ դիվանագիտական հնարներ, պատրաստել է բազում որոգայթներ: Այս տարածաշրջանում գերիշխանություն հաստատելու նրա հիմնական նպատակը երբեք փոփոխության չի ենթարկվել ու ծրագրից չի հանվել, փոխվել են միայն դրան հասնելու համար մղված պայքարի ձևերն ու եղանակները, որոնք իրենց ճշմարտացի լուսաբանումը ստացել են ռուս պատմաբաններ Ն. Ա. Կինյապինայի, Մ. Տ. Պանչենկովայի, Շերեմետի կողմից (45, 264–265): Ըստ այդ հեղինակների հայկական բարենորոգումների, ինչպես նաև Արևմտյան Չայաստանը գրավելու մասին Անգլիայի

առաջարկները հետապնդում էին երկու նպատակ, նախ՝ անգլիական կառավարությունը ձգտում էր վատացնել ռուս-թուրքական հարաբերությունները, ապա՝ Անգլիայի հետ Ռուսաստանի հնարավոր մերձեցման դեպքում սառեցվում էին ռուս-ֆրանսիական հարաբերությունները, և քանի որ 1882 թ. Եգիպտոսի բռնազավթումից հետո վատացել էին ֆրանս-անգլիական հարաբերությունները, Ֆրանսիան կարող էր երես թեքել Ռուսաստանից, որին և ձգտում էր Անգլիան:

Թուրքիայի մասնատման անգլիական առաջարկին արձագանքեցին Ավստրո-Յուգոսլավիան և Իտալիան, որոնք Մերձավոր Արևելքում, Միջերկրական ծովում ու Բալկաններում մեծ շահեր ու հետաքրքրություններ ունեին (2, 1895, 303), իսկ Գերմանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պահպանեցին լռություն: Բրիտանական կառավարությունը, օգտագործելով իր նենգ դիվանագիտության պահեստային բոլոր հնարները և անկարող լինելով հասնել ցանկալի արդյունքի, երբ Սասունում դեռևս թուրքական հետաքննական հանձնաժողովը շարունակում էր իր աշխատանքները, հանդես եկավ Յասստանում բարենորոգումներ անցկացնելու նոր ծրագրով, որի հիմնադրույթները ամփոփված էին տասը հոդվածներում: Նախատեսվում էր հայկական վիլայեթների համար տերությունների համաձայնությամբ 5 տարի ժամանակով ընտրել հայազգի կամ այլ քրիստոնյա վալի: Վիլայեթը բաժանվում էր ավելի մանր վարչական միավորների (սանջակ, կազա, նահիե), որոնց ղեկավարները (մուքեսարիֆ, կայմակամ, մյուդիր, վեքիլ) ընտրվում էին ինչպես մահմեդականներ, այնպես էլ քրիստոնյաներ՝ հաշվի առնելով համայնքների թվի համամասնությունը: Առաջարկվում էր կազմել դատարաններ լայն լիազորություններով: Հատուկ ուշադրության խնդիր էր հայերին քրդերի ոտնձգություններից պաշտպանելու անհրաժեշտությունը (2, 1895, 69):

Առաջադրվող ծրագրի կենսագործումով, անշուշտ, լուծվում էր քրիստոնյա ազգաբնակչության պատվի և գույքի ապահովության խնդիրը: Այդ ծրագրի սկզբունքներին տերությունների հավանության ու համերաշխ, համատեղ գործողությունների արդյունքում կարծում ենք, որ բոլորովին այլ ընթացք կունենար արևմտահայության հետագա ճակատագիրը:

Սակայն տերությունների համերաշխությունը այդ հարցում բացառվում էր: Ցարիզմը և Ֆրանսիան թեպետ գիտեին, որ Անգլիայի հայասիրական ձգտումները անկեղծ չեն, բայց քաջատեղյակ լինելով բրիտանական դիվա-

նագիտության խարդախ գործելաձևին, տազնապում էին, որ դրանով Անգլիան կարող է շահել հայերի համակրանքը, ամրանալ Անդրկովկասի ռուս-թուրքական սահմանի հարևանությամբ և այդ տարածաշրջանում ստեղծել Ռուսաստանի համար անապահով վիճակ (35, 1896, 39): Նրանց առանձնապես անհանգստացնում էր բարենորոգումների ծրագրի անգլիական տարբերակում նշված հայազգի վալիի ընտրության հարցը, որովհետև, ըստ նրանց, հայազգի վալիի կառավարման դեպքում հայկական վիլայեթները ձեռք էին բերում ինքնավար, ինչպես նշում էին ռուսական պահպանողական մամուլի օրգանները «արտոնյալ մարզի կարգավիճակ» (75, 1896, 27), ուր հաստատվում էր անգլիական ազդեցությունը, ուստի ցարիզմը և Ֆրանսիան մերժեցին բարենորոգումների այդ ծրագիրը (35, 1896, 39):

Աշխատելով կասեցնել ու խոչընդոտել Թուրքիայում Անգլիայի միակողմանի ազդեցության մեծացմանը և չեզոքացնել նրա կողմից առաջադրված բարեփոխումների ծրագիրը, ցարիզմը և ֆրանսիական կառավարությունը առաջարկեցին սուլթանին հայկական վիլայեթներում անցկացնել որոշ վարչական բարեփոխումներ (20, 1895, 12): Սակայն Աբդուլ Համիդը, օգտվելով տերությունների միջև առկա հակամարտություններից և հաստատ համոզված լինելով, որ նրանք առանձնակի կամ համատեղ վճռական գործողությունների չեն դիմի, մերժեց տերությունների այդ առաջարկը:

Դրանից հետո միայն Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի Կ. Պոլսի դեսպանները 1895 թ. ապրիլին մշակեցին հայկական բարենորոգումների ծրագիրը և մայիսի 11-ին ներկայացրին սուլթանին: «Բարեփոխումների այդ ծրագրով տերությունները սուլթանին չէին ստիպում, գրում է «The Times» լրագիրը, նորամուծություններ կատարել, այլ նա պետք է պահպաներ վաղուց հրապարակված օրենքները, որոնք չէին իրագործվել: Միայն անհրաժեշտ էր բարենորոգումների տեսք տալ այնպես, որ բավարարեին հայերի միմիմալ պահանջները, միաժամանակ թույլ չտային մեծ տերություններին միջամտելու սուլթանի ներքին գործերին» (20, 1895, 19):

Թուրքիայում գոյություն ունեցող կարգերի պայմաններում, երբ յուրաքանչյուր առաջընթաց փոփոխություն պետք է համապատասխանեցվեր մահմեդական սուրբ գրքի քարացած սկզբունքներին ու տիրապետող մահմեդական իշխանությունների դարերի ընթացքում ձևավորված արտոնություններին, քրիստոնյա հպատակներին վերաբերվող բարեփոխումները ընկալվում էին որպես հին կարգերի վերականգնում ու ամրապնդում, իսկ

դա նշանակում էր քրիստոնյա բնակչության կոտորած ու բնաջնջում (2, 1895, 291), ուրեմն տերությունների առաջացրած հայկական բարենորոգումների ծրագրին վիճակված չէր կյանք մտնել (21, 1895, 260): Այնպես, ինչպես բոլոր դիվանագիտական որոշումներն ու սուլթանին Չայկական հարցի առիթով ներկայացրած վերջնագրերը արխիվ էին նետվել, բարենորոգումների այս ծրագիրը ևս նրանց բախտին արժանացավ: Տերություններն իրենց պարտքը կատարած համարելով, հանգստացնելով հասարակական կարծիքը, երկար ժամանակ լռություն պահպանեցին (21, 1897, 198): Բարենորոգումների ծրագիր առաջադրելով տերությունները ամենևին էլ նպատակ չունեին բարելավել հայ բնակչության վիճակը, կանխել զանգվածային ջարդերը: Իրականում նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր Չայկական հարցը շահարկելով թուրքիայում հաստատել իր գերակայությունը:

«Չայկական հարցը տերություններին չէր հուզում,– գրում է Վ. Գոլմստրենը,– նրանք բոլորովին այլ հետաքրքրություններ ունեին» (2, 1895, 347): Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ սուլթանը խորամանկությամբ ձգձգեց բարենորոգումների հարցը, վարպետորեն խաղալով ռուս–անգլիական կատաղի հակամարտությունների ու ընթացող մրցակցության լարերի վրա, երկրում տեղի ունեցող խժոժությունների ու անկարգությունների ողջ մեղքը բարդեց հայերի վրա, ժամանակ շահեց նոր կոտորածներ սկսելու համար (2, 1895, 299):

Տերությունների այդ վարքագիծը նկատի ունենալով՝ «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրն ընդգծում էր. «Տերությունների անգործությունն ու անհամաձայնությունը սուլթանին հնարավորություն էին տալիս թուրքական կարգերի դեմ սկսված շարժումները հանգցնել արյան հեղեղով ու հասարակությունից այն վարագուրել «բարեփոխումներով» (21, 1895, 318):

Տերություններին խոստանալով հաստատել բարեփոխումների ծրագիրը՝ սուլթանը վճռական գործողությունների անցավ հայ ժողովրդի դեմ, այս անգամ արդեն իր թիկունքում ունենալով Մերձավոր Արևելքում հաստատվելու վճռական քայլեր ձեռնարկած Գերմանիային (22, 43):

Սպառվեց ու աստիճանաբար մարեց Չայկական հարցում անգլիական դիվանագիտության քաղաքական լիցքը, և այժմ խորամանկ Ալբիոնը իր խնամակալությանը հանձնված արևմտահայության օգնության խնդրում հանդես էր գալիս որպես Բեռլինի պայմանագիրը ստորագրած վեց պետություններից մեկը (6, 1896, 11, 109): Սուլթերին արդեն մեղմացավ և մտնե-

լով իր սովորական դերի մեջ՝ արդարանում էր անգլիական հանրության առջև, որ ինքը ամեն ինչ կատարեց, տերությունները չհամագործակցեցին, իսկ Անգլիայի առանձնակի միջամտությունը անհնարին էր (15, 1896, 53), քանի որ այն կարող էր հանգեցնել համաեվրոպական պատերազմի (23, 1896, 214):

Անգլիայի վճռականության աստիճանական անկման ու նահանջի մասին պատկերավոր է արտահայտվում. «Ռուսսկայա միսլ» հանդեսը: «Բրիտանական առյուծը Չայկական հարցում իր պոչը թափահարեց ու հեռացավ» (6, 1896, 3, 202):

Ռուս առաջադեմ մտավորականները, քննադատելով Չայկական հարցում անգլիական դիվանագիտության խարդախ խաղերը, նրա «հայասիրական» կեղծ ու միտումնավոր ելույթները, ընդգծում էին, որ դրանով արևմտահայության ողբերգական ճակատագրում ծանր հետևանքներ թողեցին: Չայ ժողովրդին տված անգլիական կառավարության սին խոստումները թուրքական լծից ազատագրվելու մեծ հույսեր արթնացրին, հրապուրեցին ու թևավորեցին արևմտահայ քաղաքական կուսակցությունների առաջնորդներին, որոնք Անգլիայի, նաև մյուս մեծ տերությունների ուշադրությունը Չայկական հարցի վրա գրավելու նպատակով անձնուրաց ու խելահեղ ձեռնարկումներ կատարեցին, որոնք սակայն մարդասպան սուլթան Չամիլը որակելով օրինական կառավարության դեմ հպատակների ապստամբություն, զանգվածային ջարդերով հայաթափում էր Չայաստանը, թուրքական ձեռք վերականգնում կարգը, ապահովում մահմեդականների անվտանգությունն (34, Ժ. 4445, ռ. 21–22) ու խաղաղությունը, իսկ դա նշանակում էր «խաղաղություն գերեզմաններին ու անապատներին» (24, 1897, 3, 374):

1894–1896 թթ. Արևմտյան Չայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաշատ վիլայեթներում սուլթանական կառավարության սանձազերծած զանգվածային ջարդերի ու վայրագ սպանությունների համար ռուս առաջադեմ մտավորականները իրավացիորեն հիմնական մեղավոր ճանաչում էին Աբդուլ Չամիլի վարչակարգին և նրա արևմտյան հովանավոր մեծ տերություններին, որոնք համուն իրենց եսամոլ շահերի, ցուցաբերեցին հանցագործ անտարբերություն, նրանք Մերձավոր Արևելքում առաջնություն շահելու նպատակով մրցակցելով իրար հետ, Չայկական հարցը վերածեցին առ ու ծախի առարկայի՝ կոտորածների ընթացքում համագործակցելով սուլթանի հետ:

Նշանավոր հրապարակախոս Վ. Գոլմստրենը իր հրապարակախոսական հոդվածներում ու ելույթներում, մասնավորապես. «Նա չի կարող ասել», «Ո՞վ է թշնամի», «Եղբայր հայեր» կրակե լեզվով գրված գործերում քողագերծ է անում բրիտանական գիշատիչ կառավարության նենգ ու շահադիտական խաղերը Չայկական հարցում, բացահայտում ու ընդգծում է, որ Անգլիան Մերձավոր Արևելքում միշտ էլ հանդես էր գալիս իրեն հատուկ բազմադեմ գործողություններով, մերթ պաշտպանում էր սուլթանին՝ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը համարելով Եվրոպայի խաղաղության ու հավասարակշռության վճռական պայման (15, 1895, 35), իսկ հաճախ էլ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազնիվ ու անկեղծ պաշտպանի կեղծ դիմակ հագած նրանց համար պահանջում էր ինքնավարություն, հատուկ շահեր ու հետաքրքրություններ հետապնդելով՝ իր հովանավորությանը հանձնված արևմտահայերին սառնասիրտ անտարբերությամբ հանձնում էր թուրք ջարդարարների զթասրտությանը (2, 1897, 10): Իր քաղաքական շահերին հետամուտ, նա Արևելքում ստեղծում էր խառնակ վիճակ, իրար էր հակադրում մյուս մեծ տերություններին, որոնք ևս մեծ հետաքրքրություններ ունեին Փոքր Ասիայում (25, 25):

«Վեստմինսթեր Եվրոպի» հանդեսը, անդրադառնալով Անգլիայի քաղաքական այդ խաղերին գտնում էր, որ «Անգլիան Չայկական հարցը սրում էր ասեն անգամ, երբ անհրաժեշտ էր լուծել Թուրքիայի հետ իր համար որևէ կարևոր խնդիր, երբեք չմտահոգվելով արևմտահայերի դառն վիճակով, իսկ երբ հասնում էր իր ցանկալի նպատակին, մոռանում էր այն և թույլ էր տալիս հարցը լուծել թուրքական ձևով» (24, 1895, 11, 409): Հրապարակախոս Կ. Կոտովիչը, իր «Չայկական հարցը» հոդվածում դատապարտելով Անգլիայի նման գործողությունները, իրավացիորեն ընդգծում էր, որ «Անգլիան օգտագործելով հայկական արյունը, այն դարձնելով առք ու վաճառքի առարկա, հատուկ շահեր է փնտրում Արևելքում» (26, 1895, 235): «Չայկական հարցը,– նշում է «Վարչավսկիյ դեվլմիկ» լրագիրը,– մի զենք է, որից Լոնդոնի կաբինետը օգտվում է ամեն անգամ, երբ Անգլիայի շահերը նկատի ունենալով, ցանկանում է ճնշում գործադրել Բ. Դռան վրա» (27, 1895, 29): «Ռուս» լրագիրն ավելի խորքային ու հստակ է բնորոշում անգլիական դիվանագիտության հետապնդած վերջնական նպատակը: «Ցուցադրաբար մտահոգվելով հայերի վիճակով,– ընդգծում է լրագրողը,– Անգլիան, իհարկե, գործում է ոչ հայերի նկատմամբ ունեցած հատուկ համակրանքից ելնե-

լով: Խորամանկ Ալբիոնը ցանկանում է Արևելքում ստեղծել անհանգիստ վիճակ: Նրա վերջնական նպատակը Ռուսաստանի դեմ գործելն է» (23, 1895, 235): Օ. Նովիկովան «Westminster Gazette» լրագրին հղած նամակում քննարկելով հայկական կոտորածների խնդրում եվրոպական տերությունների մեղսակցության հարցը և խորապես մտահոգվելով հայ ժողովրդի ճակատագրով, գրում էր. «Չայաստանում եղած բոլոր գազանությունների և սարսափների համար բացառապես Անգլիան է մեղավոր, որովհետև միայն նա Բեռլինի կոնգրեսում, իր հրեա ներկայացուցիչ Բիկոնսֆիլդի միջոցով պնդեց փոփոխության ենթարկելու հայերի անվտանգությունն ապահովող Սան Ստեֆանոյի ռուս–թուրքական պայմանագրի 16–րդ հոդվածը և հարկադրեց ընդունելու նոր՝ 61–րդ հոդվածը, որով Թուրքիան պարտավորվում էր եվրոպական վեց տերությունների հսկողությամբ բարեփոխումներ անցկացնել Չայաստանում» (30, 1895, 2, 110): Նա վկայակոչելով անգլո–թուրքական Կիպրոսի համաձայնությունը Չայկական հարցում՝ եզրակացնում է. «Այդ պայմանագրի շնորհիվ սուլթանը Չայաստանում կատարում է այն ամենը, ինչ ցանկանում է» (30, 1895, 2, 110):

Բրիտանական կառավարության այդ գործելաոճը մերկացնելով ու բացահայտելով Արևմտյան Չայաստանում տեղի ունեցող կոտորածների մանրամասները՝ Վ. Գոլմստրենը ընդգծում էր, որ Անգլիան Թուրքիայի համար ստեղծել էր քստմնելի ոճրագործություններ իրագործելու ազատություն (Carte Blanche) մինչև այժմ հարուցելով Եվրոպայի անվստահությունը հայ քրիստոնյաների գործի հանդեպ: Նա հայերին տարավ դեպի Գողգոթա, իսկ լորդ Սոլսբերին ցինիկաբար հայտարարեց. «Ոչ մի նավատորմ չի կարող Չայաստանի լեռների վրա լողալ և հովանավորել նրա բնակիչներին» (2, 1897, 284): Դրանով անգլիական կառավարությունը հայերի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները համարելով կատարված, «Չայկական հարցում լվաց իր ձեռքերը» (2, 1896, 52): «Ռուսսկայա միսլ» ամսագրի քաղաքական մեկնաբան, հրապարակախոս Վ. Գոլցը այդ հարցը մեկնաբանելով, միաժամանակ արդարացիորեն քննադատում է արևմտահայ որոշ շրջաններին, գտնելով, որ «Չայերը համագործակցելով Անգլիայի հետ հույսեր են փայփայում, թե նա կպաշտպանի իրենց ազգային շահերը, սակայն նրանք սխալվում են» (6, 1890, 11, 213):

Չայ բնակչության բոլոր խավերը իրենց մաշկի վրա զգացին անգլիական կառավարության հայադավ ու երկդիմի քաղաքական խաղերի ծանր

հետևանքները: Նրանց համար արդեն պարզ դարձավ, որ Անգլիան կեղծ հայասիրություն ցուցաբերելով՝ հայկական արյան շուրջը սակարկում էր սուլթանի հետ, ձգտելով նրան ենթարկել իրեն ու Թուրքիայում թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը: Ուստի անգլիացիներին չէին վստահում ու նրանց սին խոստումներին արևմտահայերն այլևս չէին հավատում:

Անգլիական դիվանագետներին չվստահելու ու նրանց խոստումներին չհավատալու ակնհայտ մի փաստ արձանագրել է «Ռուսկոյե սլովո» լրագրի թղթակից Կ. Կոտովիչը «Կեղտոտ ձեռքերի քաղաքականություն» հոդվածում:

1896 թ. հուլիս–օգոստոս ամիսների ընթացքում Վասպուրականում տեղի ունեցած ահավոր կոտորածից հետո, երբ թուրք ջարդարարների գործողությունները գաղտնի ու բացահայտ հովանավորում էին անգլիացիները, Վանում անգլիական փոխխոյակատոսի հետ անձնական զրույցի ընթացքում տարեց մի հայ կին զայրույթով իր հոգեկան խռովքն ու ակնհայտ ատելությունը արտահայտելով նրա ու իր կառավարության նկատմամբ, ասել էր «Անիծվեք դուք, մեզ խաբեցիք»: Հավանաբար դիվանագետը չհասկանալով տարեց կնոջ խոսքերի իմաստը, խիստ զարմացած էր նրա զայրույթով լի հայացքի ու արտաբերած բառերի տոնի համար... Այժմ,– շարունակում է Կ. Կոտովիչը,– Եվրոպայում ոչ ոք չի կասկածում, որ Անգլիան արևելքում վարում է կեղտոտ ձեռքերի քաղաքականություն» (30, 1896, 246): Ռուսական արխիվային վավերագիրը ևս հավաստում է Հայկական հարցում Անգլիայի վարած քաղաքականության հանդեպ արևմտահայերի խոր հիասթափության իրողությունը: «Անգլիայի քաղաքականության նկատմամբ,– կարդում ենք վավերագրում,– հայերը այժմ սկսել են կասկածամտությամբ նայել: Նրանք անգլիացիների գործողությունների անկեղծությանը չեն հավատում» (11, 34, 18):

Խարդախ Ալբիոնի նենգ դիտավորությունները շատ ճիշտ էին ընկալել նաև թուրքական իշխանությունները: Հազարավոր անմեղ հայերի նետելով բանտերը, ենթարկելով կտտանքների ու խոշտանգման, իրենց զոհերի անզորությունը նկատի ունենալով՝ թուրք պաշտոնյաները կծու հեզմանքով ասում էին. «Այժմ թող գան ձեր անգլիացիները ու ազատեն ձեզ» (2, 1895, 267): Հայկական հարցում բրիտանական կառավարության երկդիմի խաղերի ու նրա հանդեպ հայ բնակչությանը համակած խոր հիասթափության մասին ավելի պարզ ու հստակ է արտահայտվել Ա. Ի. Նելիդովը՝ գրելով, որ

«Հայ բնակչության մեջ բավականին ուժեղ անբավականություն է առաջացել Անգլիայի նկատմամբ, որը նրանց թողել է բախտի քմահաճույքին» (32, Գ. 78758, Ն. 32):

Ռուս առաջադեմ մտավորականները խորապես համոզված էին, որ Հայկական հարցում գոյություն ունի թուրք–անգլիական համերաշխություն, ու անգլիական դիվանագետները իրենց անտարբերությամբ հավանության էին արժանացնում թուրքական իշխանությունների ջարդարարական գործողություններին: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ նրանք շեշտում էին. «Թուրքիան մարդկության անարգանքն է, իսկ Անգլիան՝ քրիստոնեական քաղաքականության անոթանքը» (30, 1896, 296):

Արևմտահայության ողբերգական ճակատագրում խաղացած բացասական դերի, մասնավորապես 1895–1896 թթ. հայկական մասսայական կոտորածների խնդրում անգլիական կառավարության ակնհայտ հանցագործ մեղսակցությունը հարկադրված էին ընդունել նաև անգլիական կառավարության երևելի պաշտոնյաները, կուսակցական ու հասարակական գործիչները (33):

Մերձավոր Արևելքում ռուս–անգլիական կատաղի մրցակցության հետևանքով ցարիզմի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած կտրուկ շրջադարձը, որն արտահայտվեց Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիության ու ամբողջականության պաշտպանությամբ, խիստ բացասաբար անդրադարձավ Հայկական հարցում նրա ավանդական հայանպաստ կողմնորոշման վրա և աղետաբեր եղավ արևմտահայության համար:

Ձգտելով մեկուսացնել Անգլիային ու սուլթանի վրա ազդեցության հասնելով հաստատվել տարածաշրջանում՝ ցարիզմը Հայկական հարցում սկսեց վարել խուսանավելու, իսկ սուլթանի հանդեպ՝ թողտվության քաղաքականություն:

Արևմտահայության համար 19–րդ դարի 90–ական թվականները ծանր ու աղետաբեր էին ոչ միայն նրա համար, որ ավելի էր ուժգնացել սուլթանական կառավարության հայատյաց քաղաքականությունը և արդեն հայաջինջ մեքենան ուր որ է պետք է սկսեր իր դաժան հուլիմը, այլ նաև նրանով, որ հայ ժողովրդի համար խիստ վճռական այս փուլում, ի հակադրություն նախորդ էտապի, թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրական բաղձանքների և թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ճակատագրի խնդրում Ռու-

սաստանի ունեցած պատմական առաքելության միջև առաջացել էր խզում: Ռուսաստանի՝ դեպի հարավ, Փոքր Ասիա առաջընթացի քաղաքական շահերը և դրանց հասնելու եղանակները այժմ սկզբունքորեն հակադրվում էին թուրքական լծից Ռուսաստանի օգնությամբ արևմտահայերի ազատագրման ձգտումներին: Սակայն, այնուամենայնիվ, արևմտահայերը ինչպես անցյալում, այնպես էլ այժմ իրենց դաժան ճակատագրի բարենպաստ հանգուցալուծման հույսը կապում էին Ռուսաստանի հետ: Հայ ժողովրդի այդ բացառիկ ռուսամետությունը նկատի ունենալով՝ ռուս առաջադեմ մտավորականները նշում էին, որ թուրքական կոտորածներից մազապուրծ ու Ռուսաստանի սահմանն անցած հայերը. «Վիսխելով թուրքիայից ընկնում էին դրախտ» (31, 1897, 12), որ հայ ժողովրդի «միակ երազանքն էր «շտապ հասնել բարեգութ ռուսական երկիրը» (2, 1897, 12): Ռուսաստանում հայ ժողովրդի նկատմամբ արմատավորվում էր երկու մոտեցում: Ցարիզմն իր քաղաքական հեռահար շահերի առումով պաշտպանում էր սուլթանին, սակայն միաժամանակ ապագայում դեպի Փոքր Ասիա առաջընթացի ճանապարհին հայ ժողովրդի պահպանումն ու նրա գոյատևումը կրկին դիտում էր տարածաշրջանում ռուսական ազդեցության հաստատման վճռական նախապայման, իսկ հասարակական առաջադիմական շրջանները մտահոգված հայ ժողովրդի ճակատագրով, Հայկական հարցի լուծման միակ ու ճիշտ ուղին համարում էին Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը: «Նկատի ունենալով հայերի համար ստեղծված այժմյան ծանր վիճակը, — նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը, — այդ դրությունից միակ ելքը համարում ենք ռուսների կողմից Անատոլիայի գրավումը» (2, 1897, 10): Եվ հաստատապես ընդգծում էին, որ ինչպես արևմտահայերի, այնպես էլ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների իրական ազատագրումն ու վերածնունդը հնարավոր է միայն «ռուսական հզոր արծվի թևերի ներքո» (31, 1897, 12):

«Ռուսաստանի քաղաքականությունը արևելյան հարցում» հոդվածում բացահայտելով ու քննադատելով արևմտահայության հանդեպ ցարիզմի նոր կողմնորոշումը՝ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը նշում էր, որ իշխանությունները, աշխատելով թույլ չտալ, որ կայսրության Անդրկովկասի սահմանների հարևանությամբ անհանգիստ ու անապահով վիճակ ստեղծվի, «հայկական կոտորածների հենց սկզբում դրանք դադարեցնելու համար եռանդուն փորձեր կատարեցին՝ ազդելու Բ. Դռան ու սուլթանի վրա,

որպեսզի թուրքիայում անհապաղ բարենորոգումներ անցկացվեն քրիստոնյա բնակչության օգտին» (2, 1897, 181): Սուլթանական կառավարության լուռ անտարբերությունն ու բարեփոխումների ձգձգումը, նաև այն իրագործելուց հրաժարումը ռուս առաջադեմ գործիչները իրավացիորեն բացատրում էին մեծ տերությունների միջև եղած հակամարտություններով ու Հայկական հարցում նրանց անհամերաշխությամբ, սակայն քաղաքական շահերի թելադրանքով այդ էտապում արևմտահայության խնդրում ցարիզմի թողտվության էության, սուլթանական կառավարության ջարդարարական գործողությունների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի լուսաբանման գործում առաջադեմ մտավորականները միշտ չէ, որ հանդես էին գալիս կառավարության քաղաքական ուղղվածության դեմ, սակայն պարզորոշ կերպով ընդգծում էին, որ 1890—ական թվականներից սկսած՝ ցարիզմը վերապահությամբ էր արտահայտվում Հայկական հարցում, աշխատում էր պատահական չէր, որ այն դառնա միջազգային քննարկման խնդիր: Եվ երբեք էլ պատահական չէր, որ արևմտահայության համար ստեղծված ամենաողբերգական պահին 1894 թ. Սասունի կոտորածների առիթով գործող թուրքական հետաքննիչ հանձնաժողովի կազմում ընդգրկված ռուս դիվանագետին կառավարության կողմից ցուցում տրվեց չարել հարցը և չխրախուսել հայերի ազատագրական ակնկալիքները (34, Ժ. 3445, յ. 92): Մինևույն դիրքորոշումն ուներ նաև Ֆրանսիան (26, 1896, 134): Որքան Անգլիան քաղաքական նպատակների շահարկումով ձգտում էր սրել Հայկական հարցը, այնքան ամրանում ու խորանում էին ռուս-թուրքական հարաբերությունները: Անգլիայի յուրաքանչյուր քայլի ու առաջարկության մեջ ցարիզմը տեսնում էր վտանգ՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Նշանավոր, միջազգայնագետ, պրոֆ. Լ. Ա. Կոմարովսկին, արտահայտելով ռուս առաջադեմ մտավորականների կարծիքը, գտնում է, որ «Մենք միայն ցանկանում ենք, որ Ռուսաստանի Անգլիայի միջև եղած քաղաքական հաշիվները չխանգարեն Ռուսաստանի պատմության մեծ պատգամներից մեկը» (14, 157): Սակայն իշխանությունների հետապնդած քաղաքական շահերի և բարոյական առաքելության հարաբերակցության խնդրում առաջինը միշտ էլ գերակայության էր հասնում: Այս պարագայում ևս Մերձավոր Արևելքում ցարիզմի քաղաքական նոր կողմնորոշման ու մանավանդ ռուս-անգլիական կատաղի մրցակցության և դիվանագիտական սուր ալեբախումների մեջ խամրում ու անիրական բու-

վանդակություն էին ստանում Ռուսաստանի օգնությամբ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման ռոմանտիկ պատրանքները: Հայաստանում վարչական բարեփոխումներ անցկացնելու, ինչպես նաև Թուրքիայի մասնատման մասին անգլիական ծրագրերը ցարական պաշտոնական շրջանները, ինչպես նաև հետադեմ մամուլը մեկնաբանում էին որպես Ռուսաստանի դեմ ուղղված դիվանագիտական խորամանկ խաղ, որը Անդրկովկասի սահմանների հարևանությամբ կարող էր ստեղծել վտանգավոր օջախ, ուստի ցարիզմը մերժեց այդ առաջարկները (35, 1896, 157): Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից մշակված ու 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացրած բարեփոխումների ծրագրի իրագործման խնդրում ցարիզմը գործնական քայլ չարեց: Ընդհակառակը, հայկական վիլայեթներում նախատեսված վարչական բարեփոխումների տակ ցարական դիվանագետները նկատեցին Անգլիայի կողմից քաղաքական նպատակներով թելադրված հայկական արտոնյալ մարզի ստեղծումը Ռուսաստանի սահմանների հարևանությամբ: Իշխանությունները այն դիտում էին որպես հեղափոխական վտանգներով լի մի տարածք և հետևողականորեն դեմ արտահայտվեցին նախատեսվող բարեփոխություններին (21, 1896, 261):

Ռուսաստանը և Ֆրանսիան որպես դաշնակիցներ, Հայկական հարցում հանդես գալով միասնական դիրքորոշումով, հայկական բարեփոխությունների մասին անգլիական կառավարության կողմից առաջադրված ծրագրից հանեցին ամենակարևոր դրույթները, առանձնապես հայկական վեց նահանգները մեկ շրջանի մեջ միավորման և տերությունների համաձայնությամբ քրիստոնյա նահանգապետի նշանակման պահանջները (16, 277): Սակայն միաժամանակ, ինչպես արդարացիորեն ընդգծում է Վ. Վոլգինը, «Ռուսաստանը երբեք օրակարգից չհանեց Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու իր մտադրությունը, որը վաղուց ի վեր հանդիսանում է ռուսական դիվանագիտության հիմնական նպատակը» (76):

Սուլթանը նկատի ունենալով տերությունների միջև եղած ներհակությունները, ինչպես նաև զգալով, որ նրանցից ոչ մեկը հանուն արևմտահայերի Թուրքիայի նկատմամբ գործնական քայլեր չի ձեռնարկի, նախ ձգձգեց բարենորոգումների ծրագրի հաստատման գործը, ավելի խորացրեց հայ և մահմեդական ազգաբնակչության միջև եղած թշնամանքը, իսկ երբ 1895 թվականի հոկտեմբերի 20-ին, այնուամենայնիվ, իրադե հրապարակեց այդ

մասին, այն առաջացրեց մահմեդական մուլեռանդության նոր, էլ ավելի դաժան բռնկում: Կոտորածների ալիքը Բոսֆորի փերից ծավալվեց դեպի Փոքր Ասիա, ընդգրկեց Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքը, ամենահեռավոր բնակավայրերը:

Հայ բնակչության արյունալի կոտորածների ընթացքում սուլթանին ակնհայտ պաշտպանելու ցարական դիվանագիտության նկրտումները խորապես մտահոգում էին ռուս առաջադեմ մտավորականներին: «Հայկական հարցում,– նշում է «Նեղելյան»,– տերությունների միջև ծավալված թեժ պայքարը խիստ տագնապահարույց է: Հայաստանում դեռևս 17 տարի առաջ իշխանությունների ստանձնած պարտավորությունները անհապաղ բարեփոխումներ անցկացնելու փոխարեն, թուրքական կառավարությունը և տերությունները օգտվում են առիթից, որպեսզի միմյանց հետ հին հաշիվները մաքրեն» (19, 1895, 41): Եվրոպական տերություններն իրենց քաղաքական շահերին հետամուտ բազմաթիվ հարցեր էին քննարկում ու վճիռ կայացնում, սակայն երբեք և ոչ մի անգամ հայ ժողովրդի ողբերգական վիճակին չէին անդրադառնում ու հայանպաստ որոշում չէին ընդունում: Ռուս առաջադեմ գործիչները, կոչ անելով իշխանություններին՝ սատար լինելու արյունաքամ հայ ժողովրդին, նրանց հիշեցնում էին ասիական բռնատիրության լծի դաժանությունը, մատնացույց անելով, որ «Ռուսաստանը 400 տարի է, ինչ դուրս է եկել ասիական հորդանների լծի տակից, որը այնքան անտանելի էր իր համար» (19, 1895, 41), իսկ արևմտահայության պարագայում, արդարացիորեն անհանգստանալով՝ նրանք գտնում էին, որ թուրքական լուծը հանգում էր նրա իսպառ բնաջնջմանը (68, 1897, 72): Ցարական պաշտոնական մամուլը և հետադեմ ուժերը կառավարության ոչ հայանպաստ կողմնորոշումը աշխատում էին հիմնավորել նրանով, որ հայերը ենթարկվելով անգլիական խարդավանքներին վերածվել են նրա ձեռքին Ռուսաստանի դեմ դավեր նյութելու ամենահարմար միջոցի (35, 1895, 215): Մինչդեռ առաջադեմ մտավորականները՝ մերժելով ու քննադատելով նման տեսակետները, արդարացիորեն մեղադրելով իշխանություններին, որոնք որդեգրելով թուրքոֆիլ կողմնորոշում՝ պաշտպանում են Օսմանյան կայսրության ամբողջականությունը, գտնում էին, որ ռուս–անգլիական հակամարտությունների ընթացքում բրիտանական կառավարության խարդախ գործելակերպը երբեք էլ իրավունք չի վերապահում հզոր Ռուսաստանին «հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ մնալու անտարբեր»: Ի հակադրու-

թյուն իշխանությունների, ռուս հասարակության ամենատարբեր սոցիալական շերտերը դատապարտում էին թուրք ջարդարարներին ու իրենց քննադատության խոսքն էին ուղղում երկրի իշխանությունների դեմ (19, 1895, 41): Հասարակական կարծիքի ճնշման ներքո իշխանությունները, այնուամենայնիվ, ստիպված էին հաճախ որոշակի զգուշավորություն ցուցաբերել, այն իմաստով, որ Արևմտյան Հայաստանի հայաթափումը Ռուսաստանի համար խիստ վնասակար է: Այդ մասին արխիվային վավերագրում կարդում ենք. «Ռուսաստանի սահմանամերձ վիլայեթների ազատումը քրիստոնեական տարրերից նշանակում է զգալիորեն բարդացնել և դժվարեցնել մեզ համար այստեղ անհրաժեշտ ազդեցության զարգացումը» (11, 175, 41): Անգամ Ա. Ն. Նելիդովը Կ. Պոլսից իր մտահոգությունն էր հայտնում, որ «Մենք չենք կարող բոլորովին անտարբեր մնալ նրանց (արևելահայերի – Պ. Ս.) եղբայրների տանջանքներին, որոնք գտնվում են մեր սահմաններից դուրս» (32, 78, 758, 53): Ռուս առաջադեմ մտավորականները, ցավ հայտնելով ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ, նշում էին. «Ռուսաստանը ոչ միայն խոսքով, այլ նաև գործով, բազմաթիվ պատերազմներով ցույց տվեց, թե ինչ ջերմությամբ է պաշտպանում քրիստոնյաներին մահմեդականների բռնություններից: Ռուսաստանը,– շարունակում է ամսագիրը,– հայերին ևս համակրում է, երբ նրանք զոհ են դառնում մահմեդականների դաժանություններին» (77, 1892, 12, 837): Սակայն 1890–ական թվականներին ցարիզմը, մրցակցելով Անգլիայի հետ, խիստ մտահոգվում էր, որ հայկական բարենորոգումները անգլիական հովանավորությամբ իրականացնելու դեպքում Անդրկովկասի սահմանների հարևանությամբ կստեղծվի անապահով վիճակ, ուստի, ինչպես նշում է Ա. Ն. Նելիդովը,– «Չենք կարող ջերմորեն պաշտպանել հայերին, որովհետև նրանց բաղձանքները (Ռուսաստանի օգնությամբ թուրքական լուծը թոթափելու ձգտումները – Պ. Ս.) հետագա զարգացման ընթացքում կարող են սպառնալ մեր հայրենիքի ապահովությանն ու միասնությանը» (32, 78, 758, 53): Այս շրջափուլում ցարիզմի արտաքին քաղաքականության շահերը չէին համընկնում արևմտահայության ազատագրական ձգտումների հետ, ուստի հայկական բարենորոգումների իրագործման շուրջը տերությունների դիվանագիտական շփումների ընթացքում արտգործնախարար Լոբանով–Ռոստովսկին, իր տերության ապագա քաղաքական խնդիրը առաջ մղելով, անհրաժեշտ էր համարում սուլթանին ժամանակ ու հնարավորու-

թյուն տրամադրել երկրում կարգը վերականգնելու համար, որը, ինչ խոսք, այլ կերպ նշանակում էր սուլթանին խրախուսել կոտորածները շարունակելու, թուրքական ձևով վերահաստատել երկրում խաղաղություն: Արտաքին գործերի նախարարը միաժամանակ ընդգծում էր, որ եթե այդ ընթացքում որևէ պետություն բարեփոխումների առիթով փորձ կատարի միակողմանի ճնշում գործադրել սուլթանի վրա, ապա նրա գործողությունները ուղղված կլինեն ոչ միայն սուլթանի, այլ նաև մյուս տերությունների դեմ (15, 1896, 18): Ցարական դիվանագիտությունը մի կողմից աշխատում էր վիժեցնել բարեփոխումների գործը, քանի որ դրանց իրագործման դեպքում Անգլիայի հովանավորությամբ ձևավորված հայկական ինքնավար մարզը կսպառնար ռուսական Կովկասին, ուստի ավելի նպատակահարմար էր համարում ունենալ Թուրքիայի նման թույլ հարևան, քան եվրոպական տերությունների, մասնավորապես Անգլիայի հովանավորությամբ հզոր Թուրքիա, իսկ մյուս կողմից Սև ծովի նեղուցները իր ձեռքին պահելու համար ուղիներ էր փնտրում Բոսֆորից ոչ հեռու որևէ հենակետում հաստատվելու համար (34, 3449, 48): Սև ծովի նեղուցների ռազմավարական նշանակության մասին դեռևս Ալեքսանդր Երկրորդ կայսրն էր շեշտում. «Սև ծովի նեղուցները հանդիսանում են «մեր տան բանալիները, և առանց նրանց մեզ համար դժվար կլինի» (78, 1890, 206, 267):

Քննադատելով ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության ասպարեզում կատարած կտրուկ շրջադարձը, ղեկավարվելով մարդասիրական, բարոյական սկզբունքներով՝ ռուս առաջադեմ մտավորականները կոչ էին անում Ռուսաստանին և Ֆրանսիային անհապաղ միջոցներ ձեռնարկել, ստիպել սուլթանին դադարեցնել կոտորածները և ձեռնամուխ լինել բարեփոխությունների կենսագործմանը, որովհետև «այդ է պահանջում մարդասիրական բարոյական պարտքը» (6, 1898, 11, 175): Խորապես տիրապետելով ռուս–անգլիական մրցակցության, նրանց փոխադարձ շահերի ու հետաքրքրությունների մութ գաղտնիքներին և ընդգծելով նրանց պայքարի առանցքում Հայկական հարցի տխուր դերակատարումը՝ նրանք շեշտում էին, որ մարդասիրությունն ու դիվանագիտությունը տրամագծորեն իրար հակադիր են: Տերությունների հարաբերությունները կարգավորող դիվանագիտական արվեստի դասական մեկնաբանությունը Հայկական հարցի առիթով կատարել է հրապարակախոս Ա. Ն. Սազոնովը: «Անհրաժեշտ է նշել,– գրում է նա,– որ եվրոպական տերությունների քաղաքականության

հիմքի վրա աճեց ու ձևավորվեց մի գիտություն, որին մեծարում են դիվանագիտություն անվամբ: Նրա համար գոյություն չունեն համամարդկային շահեր: Նա սովորեցնում է գործել հետևյալ եղանակով. վերցրու այն ամենը, ինչ լավ է ու շահավետ, թող ուրիշներին այն, ինչ քեզ պետքական չէ, համախմբիր քո ուժերը ուրիշներին ոչնչացնելու համար, պահը բաց մի թողնիր, երբ կարող ես վճռական, մահացու հարված հասցնել ուրիշներին:

Ահա թե ինչ ոլորտներում է ծավալվում ու աղճատվում ժամանակակից դիվանագիտությունը» (6, 1896, 12, 109), – եզրակացնում է հրապարակախոսը: Դիվանագիտության ասպարեզում տերությունները ղեկավարվում են միայն քաղաքական շահերով: Վ. Գոլմստրենը, քաղաքական այդ շահը նկատի ունենալով՝ աշխատում էր իշխանամետ ուժերին համոզել, որ Արևմտյան Հայաստանի տարածքը Ռուսաստանի համար ռազմավարական արժեք ունի, ուստի անհրաժեշտ է պաշտպանել այդ տարածքի արմատական բնակիչներին, որոնք «այժմ և ապագայում հանդիսանում են Ռուսաստանի՝ դեպի հարավ առաջընթացի ուղեկիցները և ռուսական ազդեցության տարածողները» (2, 1895, 138): Մերձավոր Արևելքում 90–ական թվականներին ստեղծված միջազգային բարդ իրավիճակի ու Ռուսաստանի քաղաքական շահերի թելադրանքով ցարիզմը Հայկական հարցում վարում էր զգուշավոր քաղաքականություն. մի կողմից՝ չէր ցանկանում կորցնել քրիստոնյա ազգաբնակչության հավատը իր նկատմամբ, մյուս կողմից՝ չէր կարող թույլ տալ, որ իր սահմանների հարևանությամբ հաստատվի ու ամրանա որևէ եվրոպական տերություն: Հայկական ինքնավար մարզի գաղափարը ոչ միայն ներկա վիճակով, այլ նաև ապագա իր հեռանկարով անհանգստացնում էր ցարիզմին, այն իմաստով, որ դրանով Ռուսաստանը ապագայում կարող է կորցնել ոչ միայն «Ռուսահայաստանը, այլ նաև ամբողջ Կովկասը» (79, 1906, 14):

Այդուհանդերձ, քաղաքական ու մարդասիրական առումով ռուսական դիվանագիտության հոլովությունը մշտապես ակնարկ էր արվում կրկին հայանպաստ կողմնորոշման ավանդական հունը վերադարձ կատարելու վերաբերյալ: Համիդյան արյունալի կոտորածների զոհ արևմտահայությունը հուսաված սպասում էր այդ բաղձալի պահին:

Եվ ամենևին էլ պատահական չէր, որ արևմտահայերի դրության բարելավման ուղղությամբ Ռուսաստանի փոքր ակնարկի դեպքում անգամ ողջ հայ ժողովուրդը դառնում էր ռուսամետ» (32, Ժ. 78578, ռ. 53): Ազատաբաղձ հայ ժողովրդի հուսաված հայացքը ուղղվում էր դեպի հզոր Ռուսաստանը:

Քաղաքական առումով արևմտահայերի նման կողմնորոշումը հրապուրում էր ռուս դիվանագետներին, որոնք գտնում էին, որ «մեր նախածեռնությունը Հայկական հարցում կարող է մեզ համար քաղաքական մեծ օգուտ բերել և ապահովել մեր վիճակը Դարդանելում և Միջերկրական ծովում» (35, 1896, 274): Սակայն ծավալվող ռուս–անգլիական հակամարտությունները և այդ տարածաշրջանում ամրանալու շահերը պահանջում էին ցարիզմից ժամանակավորապես ձեռնպահ մնալ հայերի բաղձանքներին ընդառաջ գնալուց և պաշտպանել սուլթանին: Հետևաբար, սխալվում են այն հեղինակները, որոնք նկատի ունենալով 19–րդ դարի 90–ական թվականներին Հայկական հարցում ցարիզմի ոչ հայանպաստ կողմնորոշումը արևմտահայության խնդրում՝ նույնացնում են սուլթանական կառավարության և ցարիզմի մոտեցումները:

Քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում հավասարության նշան դնելով ցարիզմի ու սուլթանիզմի միջև՝ ռուս նշանավոր պատմաբան Մ. Ն. Պոկրովսկին գրում է. «Թե ում կընտրեին իրենց տիրակալ. թուրքական սուլթանին, թե ռուսական կայսրին, իրականում միևնույն էր» (80, 195):

Մ. Ն. Պոկրովսկուն ու նրա ուղղության հետևորդ խորհրդային որոշ պատմաբանների հատուկ էր ցարիզմի արտաքին քաղաքականության բացասական գնահատման միտումը, որը, կարծում ենք, միակողմանի է ու թերի: Կ. Մարքսը խորքային վերլուծության ենթարկելով ցարիզմի արտաքին քաղաքականության հիմնահարցերը՝ ցույց է տվել նրա հետադիմական, զավթողական էությունը, բայց և միաժամանակ ընդգծել է, որ Ռուսաստանը, իրոք, առաջադիմական դեր էր խաղում Սև և կասպից ծովերի ավազանում ապրող ժողովուրդների կյանքում (82, 271): Մ. Ն. Պոկրովսկին և նրա հետևորդները չեն ցանկացել նկատել ու շրջանցել են 18–19 դդ. թուրքահպատակ ժողովուրդների ազատագրման ու ինքնուրույն անկախ պետության կազմավորման գործում Ռուսաստանի կարևոր և վճռական դերը:

Իրականում ցարիզմի նկատմամբ նրանց ունեցած անհազատելությունը հնարավորություն չէր ընձեռում նկատելու այն դրականը, որ օբյեկտիվորեն արտահայտվում էր յուրաքանչյուր ռուս–թուրքական պատերազմի արդյունքում թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների հետագա ճակատագրում:

Արևմտահայությունը մեծ ոգևորությամբ ու անհուն հրճվանքով էր դիմավորում դեպի հարավ արշավող ռուսական հաղթական զնդերի զինվորները:

րին, որոնք թուրքական դարավոր լծից ազատագրում էին հնամենի հայկական պատմական տարածքները, քրիստոնյա ազգաբնակչությանը հանդերձ, սակայն եվրոպական տերությունների խարդավանքների հետևանքով, երբ նրանք հայտնվում էին թուրքիայի թիկունքում, ու Ռուսաստանը միշտ մնում էր միայնակ, ստիպված էր հրաժարվել հաղթական պատերազմի արդյունքներից, Արևմտյան Հայաստանի գրավված տարածքները վերադարձվում էին թուրքիային: Եվրոպական տերությունների շահերին համահունչ, արևմտահայերը կրկին ենթարկվում էին իրենց դարավոր շահագործողներին: Հետևաբար, դարեր շարունակ հայ ժողովրդին բռնաճնշող, զանգվածային ջարդերով Հայաստանը հայաթափող սուլթանական կառավարության և իր արտաքին քաղաքական շահերով թելադրված, սակայն օբյեկտիվորեն թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների, այս պարագայում՝ արևմտահայությանը թուրքական լծից ազատագրմանն ուղղված գործողություններ վարող ցարիզմի միջև Հայկական հարցում եղած ակնհայտ տարբերությունը չնկատել առնվազն պատմական ճշմարտության դեմ լուրջ մեղանշում է:

Քննարկվող հարցի խնդրում նույնանման մոտեցում ունի նաև Լ. Մկրտչյանը (81): Նա գտնում է, որ 1890–ական թվականներին սուլթան Համիդի կողմից հայկական մասսայական կոտորածների միջոցով Արևմտյան Հայաստանի հայաթափման, արևմտահայության ֆիզիկական բնաջնջման հրեշավոր պլանը հավանության է արժանացել ռուսական կառավարության կողմից: «Ինչպես սուլթանին, այնպես էլ Նիկոլայ 2–րդին առանձնահատուկ անհանգստություն էր պատճառում,– գրում է Լ. Մկրտչյանը,– երկատված, բայց պոտենցիալ մեծ հնարավորություններ ունեցող հայ ժողովրդի հարցը: Ցարը հասկացել էր այն ճշմարտությունը, որ արևմտահայ և արևելահայ հատվածների միավորումը ռուսական կայսրության մեջ իր հետ անպայմանորեն կբերի նոր «Բուլղարիայի» ստեղծում: Ռազմավարական կարևորագույն դիրքում,– շարունակում է նա,– նրան հարկավոր էր Հայկական լեռնաշխարհը, բայց առանց նրա բնիկ ժողովրդի: Օբյեկտիվորեն արևմտահայ հատվածի բնաջնջման ծրագիրը համապատասխանում էր ցարական ձգտումներին (81, 48):

Մերժելով նման մոտեցումը՝ Ս. Գ. Ներսիսյանը արդարացիորեն գրում էր. «Ցարական բռնապետությունը, հարկավ, վարում էր գաղութային, ազգային ճնշման քաղաքականություն, ինչպես կայսրության մյուս ժողովուրդների,

այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն,– շարունակում է պատմաբանը,– ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից նա հաճախ պաշտպանում էր թուրք սուլթանների և պարսիկ շահերի դեմ ուղղված հայ ազատագրական պայքարը, պաշտպանում էր, իհարկե, այնքանով, որքանով այդ չէր հակասում իր քաղաքական ծրագրերին: Ռուսաստանի վարած բազմաթիվ պատերազմները թուրքիայի դեմ, օրինակ, օբյեկտիվորեն օգնում էին օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումներին» (87, 95):

Մենք բուլղոսիկն էլ հակված չենք արդարացնելու և սքողելու ցարիզմի՝ 19–րդ դարի 90–ական թվականներին Հայկական հարցում ակնհայտ ոչ հայանպաստ դիրքորոշումը, երբ ցարիզմը, ինչպես արդարացիորեն նշում է Ս. Գ. Ներսիսյանը, «90–ական թվականներին խիստ հետադիմական քաղաքականություն վարեց» (83, 435), սակայն առանց ավելորդ զգացմունքայնության հետևելով պատմության առաջընթացի հրամայականին, որը բնականոն զարգացման ճշգրտումներ ու փոփոխություններ պարտադրեց ցարիզմի արևելյան քաղաքականությանը, նոր ժամանակաշրջանի ոգուն համաձայն, արդեն այդ ընթացքում անդառնալիորեն պատմության գիրկն էին անցել Ռուսաստանի կողմից թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդներին թուրքական լծից ազատագրման պատմական առաքելության վերաբերյալ հյուսված ռոմանտիկ պատրանքների ժամանակները: Մերձավոր Արևելքում այժմ ցարիզմին մտահոգող գերխնդիրը ռուս–անգլիական մրցապայքարում առաջնություն շահելու, սուլթանի վրա ազդեցության հաստատմամբ տարածաշրջանում ամրանալն էր, որով վրեժխնդիր կլինեք Անգլիային 1878 թ. Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանին մեկուսացնելու համար՝ ցույց տալով, որ կարող է նրան հարված հասցնել «իր համար շատ զգայուն վայրում, Հնդկաստանի հյուսիսարևելյան տարածքների մատույցներում» (84, 37): Այդ հիմնախնդրի դրական հանգուցալուծման համար նա ժամանակավորապես հրաժարվեց թուրքիայի մասնատման ավանդական դիրքորոշումից, որովհետև տերությունները իրենց քաղաքական ու առևտրական շահերին հետամուտ,– գրում է Ս. Ժիգարյովը,– մշտապես կանգնած են եղել Ռուսաստանի ու թուրքիայի միջև ընդդեմ Ռուսաստանի ամեն անգամ, երբ թուրքական պետությանը սպառնում էր մասնատման վտանգը» (47, 19–20): Ուստի մրցակցելով Անգլիայի հետ ու խուսափելով եվրոպական տերությունների համագործակցության դեմ միայնակ մնալուց՝ սկսեց պաշտպա-

նել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, որը տրամագծորեն հակադիր էր թուրքական լծից արևմտահայության ազատագրման բաղձանքներին: Սակայն ցարիզմի այդ նոր կողմնորոշումը բնավ էլ չէր նշանակում, թե նա կողմնակից էր ու համագործակցում էր թուրքական իշխանությունների հետ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման սուլթանական պլանը իրագործելու խնդրում: Իրականում ցարիզմը դեպի հարավ ծավալման ընթացքում նպատակադրված գործողություններ էր վարում Արևմտյան Հայաստանին տիրանալու համար, և Հայկական հարցում նրա բոլոր շրջադարձերում այդ նվիրական նպատակը երբեք օրակարգից չի հանվել (18, XLVII–XLVIII, 1930, 60):

Իսկ ինչ վերաբերում է հատուկ նպատակներով շրջանառության մեջ դրված «ցարիզմին Հայաստանը անհրաժեշտ էր առանց հայերի» վարկածին, ապա դա միայն հակառուսական հովերով տարված որոշ անծանց մտացածին, պատմական տրամաբանությունից զուրկ երևակայության արդյունքն է, որովհետև նման մտայնությունը միայն թուրքական, և Թուրքիայում Գերմանիայի հաստատման ընթացքում նաև գերմանական գործելակերպին էր հատուկ, իսկ Ռուսաստանը, ընդհակառակն, պատմական Հայաստանի մասը կազմող Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման ընթացքում և հետագայում պայմաններ էր ստեղծում ու օգնում Պարսկաստանից ու Թուրքիայից հարյուրհազարավոր հայերի Արևելյան Հայաստանում վերաբնակեցման համար: Դա պատմական եղելություն է, որը ժխտել անհնարին է, որովհետև պատմության փաստերը վկայում են, որ «Ռուսաստանը,– նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,– անվերջ պահանջում էր սուլթանից դադարեցնել կոտորածները և արագացնել քրիստոնյաների օգտին բարենորոգումների իրագործումը» (2, 1897, 181): Ռուս առաջադեմ շրջանները իշխանություններին պարտադրում ու պահանջում էին զսպել թուրք մոլեռանդների, թույլ չտալ, որ անխղճաբար կոտորվի հնամենի հայ ժողովուրդը (24, 1895, 12, 855): Սակայն թուրքական կառավարությունն իր թիկունքում ընդդեմ Ռուսաստանի ունենալով եվրոպական տերություններին, ոչ միայն բարենորոգումների հարցը չէր կարգավորում, այլ ընդարձակում էր կոտորածների աշխարհագրությունը՝ արյունոտ շրջապատույտի մեջ ընդգրկելով Թուրքիայի բոլոր հայաբնակ վիլայեթներն ու Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը:

Որ, իրոք, ցարիզմը երբեք հայ տարրի ֆիզիկական բնաջնջման նպատակ չի ունեցել, դրա պերճախոս հիմնավորումը կատարում էր հայ ժողո-

վուրդը: Ամեն անգամ, երբ Թուրքիայում տեղի էր ունենում մահմեդական մոլեռանդության բռնկում, ու սկսվում էին գազանային կոտորածները, արևմտահայերը իրենց հայացքը շրջում էին դեպի հյուսիս՝ Ռուսաստան՝ նրանից սպասելով օգնություն, այնտեղ փնտրելով պատսպարվելու հանգրվան (2, 1896, 25): Արդարացի էր Վ. Գուլցերը, երբ շեշտում էր, թե. «Մենք կարծում ենք, որ հայերի համար հուսալի ընկեր կարող է լինել գլխավորապես ռուս ժողովուրդը, և անթույլատրելի է, մեր կարծիքով, սխալ է թուրքական լծից ազատագրվելու համար պլաններ մշակել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հակադրության վրա» (6, 1890, 11, 213):

Անկախ այն բանից, որ այդ էտապում ցարիզմը Հայկական հարցում վարում էր զգուշավոր քաղաքականություն, ինչպես ընդգծում էին ռուս առաջադեմ գործիչները, Ռուսաստանը միայն կարող էր ձեռնարկել միջոցներ կոտորածները կանխելու համար, որովհետև Արևմտյան Հայաստանը սահմանակից էր Ռուսաստանին և ամենակարևորը, Ռուսաստանում էին ապրում հազարավոր հայեր: Եվ պատահական չէր, որ արևմտահայերը Ռուսաստանից էին ակնկալում իրական օգնություն (19, 1895, 41): Ինչպես իրավաճիորեն ընդգծում է «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը «Պատմական պատգամները թույլ չէին տալիս ռուս ժողովուրդին անտարբեր դիտել քրիստոնյաների նկատմամբ գործադրվող բռնությունները» (21, 1896, 261): Հետևաբար, ռուս առաջադեմ մտավորականները հայերին օգնելը համարում էին «ռուս հասարակայնության պարտքը» (50, 1897, 17),– միանգամայն իրավաճիորեն եզրակացնում էր «Սիբիրսկիյ վեստնիկ» լրագիրը: Երբ Մերձավոր Արևելքում իրավիճակի փոփոխություն կատարվեց ու Թուրքիայի թիկունքում Գերմանիայի հաստատվելուց հետո սկսեցին սառել ռուս–թուրքական հարաբերությունները, անգամ «Նովոյե վրեմյան» հանդես եկավ արևմտահայերին օգնելու կոչով (46, 1913, 13311): Այժմ արդեն հայերին պաշտպանելը Ռուսաստանին անհրաժեշտ էր նրա անվտանգության շահերի նպատակահարմարությունից ելնելով (51, 1915, 149), իսկ ցարական պաշտոնական շրջանները Հայկական հարցը սկսեցին դիտել որպես ռուսական հարց (85, 1914, 13):

Ավելին սպասել ցարիզմից անհնարին էր, որովհետև նա չէր կարող Մերձավոր Արևելքում ռուս–անգլիական մրցակցության ընթացքում առաջնությունը զիջել Անգլիային, վտանգելով իր ռազմաքաղաքական շահերը՝ նոր առճակատման գնալ Թուրքիայի հետ, հովանավորել թուրքահպատակ արևմտահայությանը:

Յետևաբար, 19-րդ դարի 90-ական թվականներին Չայկական հարցում ցարիզմի ոչ հայանպաստ կողմնորոշման համար հայ պատմագրության դրսևորած խանդոտ դժգոհությունները պայմանավորված էին խորհրդային ժողովուրդների միասնական ընտանիքում մեծ եղբորից առավել մեծ պահանջ ակնկալվող ռոմանտիկ պատրանքներով:

19-րդ դարի 90-ական թվականներին գերմանական կառավարությունը գաղութների համար մղվող մրցապայքարում «արևի տակ տեղ փնտրելով» (52, 72), Մերձավոր Արևելքում ու Թուրքիայում հաստատվելու համար սկսեց հետաքրքրվել Չայկական հարցով: Մինչ այդ գերմանական դիվանագիտությունը ցույց էր տալիս, որ Արևելքի հարցերը իրեն առանձնապես չեն հետաքրքրում, սակայն «հայկական զանգվածային կոտորածների ընթացքում կտրուկ փոխեց իր վերաբերմունքը և սկսեց ակտիվ գործել: Արևելքի հարցում հանդես բերեց վճռականություն» (53, 45), բայց ի վնաս արևմտահայության առաջնորդվեց «չմիջամտելու» քաղաքականությամբ: Թուրքիան, որ խճճված էր ռուս-անգլիական հակամարտությունների ցանցում ու նրանց միջև բորբոքվող մրցապայքարում հաճախ ստիպված էր մերթ մեկին, ապա մյուսին ընտրել իրեն հովանավոր, Արևելքում Գերմանիայի ակտիվանալու պահից սկսած, հանձին նրա, տեսավ սուլթանական երերացող գահի հովանավորին, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության հավատարիմ երաշխավորին (54, 240): Ապագային միտված թուրք-գերմանական երկուստեք գործողությունները միավորվեցին միննույն հունի մեջ, որի ընթացքում Աբդուլ Չամիդ 2-րդը թեքվեց տերությունների ավստրո-հունգարա-գերմանա-իտալական զինակցության կողմը (55, 1908, 42):

Եթե եվրոպական տերությունների համար Թուրքիայի վրա ազդեցության հաստատումը ուներ կենսական մեծ անհրաժեշտության արժեք, ապա սուլթանի համար կարևոր չէր, թե նրանցից որն է լինելու իր հովանավորը, որովհետև նրան անհրաժեշտ էր որևէ մեկի հովանավորությունը՝ մյուսներից պաշտպանվելու համար: Բանսարկու և խարդախ Աբդուլ Չամիդը խորամանկորեն օգտվում էր տերությունների միջև բորբոքվող հակամարտություններից ու հետևողականորեն առաջ էր վարում Չայկական հարցը թուրքական ձևով վճռելու իր ծրագիրը: Մի կողմից՝ նա տերություններին խոստանում էր բարեփոխումներ կատարել, իսկ մյուս կողմից՝ առաջարկում էր իր պաշտոնյաներին «անխնա կոտորել կարգի թշնամի հայերին» (2, 1895, 304):

Աբդուլ Չամիդը երազում էր Թուրքիայի տնտեսությունը վերականգնելու և զարգացման թափ հաղորդելու համար երկիրը պատել երկաթուղային ցանցով: Այդ նպատակով նա Գերմանիային տրամադրեց Օսմանյան կայսրության ընդարձակածավալ տարածքն ու շինարարական գործունեության ծավալման անսպառ հնարավորություններ: Ոգևորված սուլթանի առատածեռությունից՝ Գերմանիան Թուրքիայի տնտեսության մեջ ներխուժեց երկաթուղագծերի պողպատյա զարկերակներով (55, 1908, 42), քաջ գիտենալով, որ այնտեղ վաղուց ի վեր հաստատված ու քաղաքական-տնտեսական շահեր ունեցող մյուս տերությունների դեմ մրցապայքարում կարող է հաղթանակ շահել և նրանց տարածաշրջանից դուրս մղել Թուրքիան՝ երկաթուղացանցով պատելով, նրա տնտեսության կարևոր ճյուղերում ամրանալով (56, 33): Երբ Գերմանիան ստացավ Չայդար փաշա-Իզմիտ, Իզմիր-Էսկիշեհիր-Անկարա և դրանց ճյուղավորումները կազմող երկաթուղագծերի կառուցման իրավունքը, առավել սրության հասան անգլո-գերմանական (57, 43), ինչպես նաև ռուս-գերմանական հակամարտությունները (58, 14): Աստիճանաբար Թուրքիայում ցարիզմի ազդեցությունը փոխարինվում էր գերմանականով, որովհետև Ռուսաստանի արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը Մերձավոր Արևելքից տեղափոխվում էր Չեռավոր Արևելք: «Չեռավոր Արևելքը, - գրում է Վ. Մ. Խվոստովը, - ամբողջությամբ կլանեց ռուսական կառավարության ուժերը: Այնտեղ ծագած բազում դժվարությունների առջև նա ստիպված էր նեղուցների հարցում եղած կոնֆլիկտը մարել» (84, 93): Ռուսաստանը որքան քայլ էր կատարում դեպի Մանջուրիա ու Պեկին, այնքան հաստատուն ընթացքով խորանում ու ամրապնդվում էին թուրք-գերմանական հարաբերությունները, իսկ երբ Վիլհելմ 2-րդը 1898 թ. այցելեց Թուրքիա ու իրեն հայտարարեց 300 միլիոն մահմեդականների հովանավորը, թուրք-գերմանական բարեկամությունը ավելի ջերմացավ (60, 1899, 27):

Իր տեղը ավելի հաստատուն դարձնելու նպատակով գերմանական դիվանագիտության խարդավանքները իրենց շրջապտույտի մեջ առան մյուս տերություններին՝ աշխատելով լարել միմյանց դեմ, թուլացնել նրանց ներուժը (61, 13):

Պետերբուրգում ռուս-գերմանական բանակցությունների ընթացքում Թուրքիայի մասնատման մասին խիստ հրապուրիչ, բայց միաժամանակ խաբուսիկ առաջարկությամբ գերմանական դիվանագետները խորամանկ

ու խարդախ ակնարկ էին անում, որ Ռուսաստանը Անգլիայի դեմ վճռական գործողություններ սկսելու դեպքում Ավստրո-Յունգարիան կպաշտպանի չեզոքություն (18, 1931, 4, 87): Գերմանական կողմը աշխատում էր թշնամացնել Ռուսաստանին Ֆրանսիայի հետ, խզել նրանց միջև կնքված դաշնակցությունը և թուրք-ռուսական ընդհարումով ավարտել շրջանը, թուլացնել ցարի ազդեցությունը սուլթանի վրա (40, Bd. 12, 3092): Այդ նույն նպատակն էր հետապնդում անգլիական դիվանագիտությունը, ռուս-գերմանական հարաբերությունները սրելու համար առաջարկում էր Գերմանիային մասնատել Թուրքիան: 1895 թ. ամռանը լորդ Սոլսբերին Լոնդոնի գերմանական դեսպան Չատգեֆելդի հետ խորհրդակցելիս առաջ քաշեց թուրքական կայսրության մասնատման հարցը: Որպես փոխադարձ համաձայնության երաշխիք պետք է Գերմանիան Անգլիայի հովանավորության ենթակա ճանաչեր Եգիպտոսը և Միջագետքը, սակայն Գերմանիան դրան ընդառաջ չգնաց: Նրան անհրաժեշտ էր ուժեղ ու անբողջական Թուրքիա՝ մյուսներին վանելու համար, ուստի հրաժարվեց Թուրքիայի մասնատման մտքից (40, Bd. 12, 3086): Գերմանական դիվանագետները ցանկանալով օգտագործել հարմար պահը՝ աշխատում էին էլ ավելի սրել ռուս-անգլիական հակամարտությունները: Նրանց համար նպատակահարմար էր, որ վերջիններիս միջև եղած տարածայնությունները դիվանագիտական ուղիով չհարթվեին, խզվեին վերջնականապես նրանց հարաբերությունները: Գերմանական դիվանագիտությանը չէր հետաքրքրում կոտորվող արևմտահայերի դրության բարելավումը: «Ծերունի Յոհեննոնեն նեղ միջավայրում, - գրում է Ա. Ս. Երուսալիմսկին, - խոստովանել է, որ նրան չի հետաքրքրում, թե թուրքերը դեռևս քանի հազար հայ են կոտորելու: Ավելի շուտ նրան հետաքրքրում է այլ բան. բոլոր դեպքերում Չայկական հարցում Անգլիայի ու Ռուսաստանի միջև համաձայնությունը բացառվի: Անգլիան անկարող լինի նեղուցները Ռուսաստանին թողնելով իրեն վերապահել Եգիպտոսը» (54, 150): Այդ նպատակով Վիլհելմ 2-րդը հեռագրեց Ս. Պետերբուրգ, որ Գերմանիան նույն կարծիքին է, ինչ Ռուսաստանը: Նիկոլայ 2-րդի պատասխանը հակիրճ էր. «Գերագանց է» (2, 1895, 305): Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայում ավելի ամրապնդելու նպատակով Վիլհելմ 2-րդը հայկական կոտորածների ամենաեռուն շրջանում ճանապարհորդություն կազմակերպեց Մերձավոր Արևելք, այցելեց Կ. Պոլիս, երբ հայկական կոտորածների ու մարդկային արյան հոտը դեռևս զգացվում էր Բոսֆորի ափերին (62, 48), դարձավ սուլթանի մտե-

րիմ բարեկամը, թուրքիայի հովանավորը, գտնելով, որ «անհրաժեշտ է պաշտպանել Թուրքիայի տարածքային անբողջականությունը և սուլթանի իմաստուն կառավարման անսասանությունը» (21, 1898, 257):

Անտարբերությամբ շրջանցելով արևմտահայության դեմ կազմակերպված մարդկային նախճիրը՝ Վիլհելմ 2-րդը նշում էր, որ «Թուրքերին ու գերմանացիներին բաժանում է կրոնի տարբերությունը, սակայն նրանց միացնում են ընդհանուր շահեր և բարի հարաբերությունները: Ես միշտ պետք է աշխատեմ պաշտպանել այդ հարաբերությունները»: Եվ որպես այդ խոստման կատարման առիավատյա՝ նա «սուլթանին նվիրեց իր ընտանեկան լուսանկարը և թողեց նրան իր այցեքարտը, իսկ սուլթանը, թևավորված Գերմանիայի նման բարյացակամ վերաբերմունքից, խնդրեց Վիլհելմ 2-րդին օգնել իրեն՝ ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար (21, 1898, 257):

Չայկական հարցում Գերմանիան վատ դերակատարում ունեցավ դեռևս 1878 թ. Բեռլինի կոնգրեսում, օգնեց Անգլիային մեկուսացնելու Ռուսաստանին՝ ի չիք դարձնելով հաղթական պատերազմի արդյունքները: Վերածնելով Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական պայմանագրի 16-րդ հոդվածը՝ օգնեց Թուրքիային հավերժացնելու արևմտահայության ստրկության ժամանակաշրջանը (19, 1896, 31), իսկ այժմ, հայկական կոտորածների եռուն շրջանում, հայկական արյունը ծառայեցնելով թուրք-գերմանական հարաբերությունների ջերմացմանը, զազանային կոտորածների հետևանքով ծագած հայկական հուզումները որակում էր որպես սոցիալիստական շարժումներ (40, Bd. 12, 2904): Դեռ ավելին, սադիստի դաժանությամբ ու սառնասրտությամբ հետևելով հրեշավոր կոտորածների ընթացքին՝ գերմանական դիվանագիտության ներկայացուցիչը հանգստացնում էր սուլթանին, խորհուրդ տալով, որ հայկական հուզումների ճնշումը սուլթանի ներքին գործն է (40, Bd. 11, 2891):

Վիլհելմ 2-րդի կառավարությունը հրաժարվեց մասնակցելու Սասունում 1894 թ. տեղի ունեցած կոտորածների հետևանքները հետաքննող հանձնաժողովի, ինչպես նաև հայկական բարենորոգումների ծրագրի մշակման աշխատանքներին: Դրանով նա ընդգծում էր, որ հովանավորում և պաշտպանում է սուլթանի արյունալի գործողությունները և որպես դրա հիմնավորում՝ նա անձնական մամակով քաջալերում էր սուլթանին. «Թագավորի ինչպես կամքը ուզում է, չէ՞ որ դու Ալլահի ստվերն ես երկրի վրա» (22, 27):

Գերմանիայի հակահայկական այդ կողմնորոշումը և 1896 թ. ամռանը հայկական կոտորածների ընթացքում Թուրքիայի հետ համագործակցությունը նկատի ունենալով՝ Ռենե Պինոնը իրավացիորեն ընդգծում էր, որ հայկական կոտորածները կատարվում էին թուրքերի ձեռքով, գերմանական մեթոդներով (63, 28): Գերմանիան հայկական կոտորածների ընթացքում պաշտպանելով սուլթանին՝ Թուրքիայում հաստատվելու ակնկալիքներ ուներ ու մեծ հույսեր էր փայփայում:

Անվանի հրապարակախոս Վ. Գոլմստրենը իրեն հատուկ բուռն պոռթկումով գրված «Ներոնի ջահերը» հոդվածով քողազերծ անելով Վիլհելմ 2-րդի Մերձավոր Արևելք կատարած ճանապարհորդության քողի տակ թաքցված քաղաքական խնդիրները, գրում է. «... Ում համար թանկ են քրիստոնեական վարդապետության հաջողությունները, պետք է ձայն բարձրացնի ու արտահայտվի այն փորձի դեմ, որ արվում է սրբազան սկզբունքները քաղաքական խաղի գործիք դարձնելու համար, որովհետև քրիստոնեությանը ծանր հարված է հասցվում» (2, 1898, 297): Հայկական արյունալի կոտորածների ընթացքում Վիլհելմ 2-րդը Թուրքիայում եղած ժամանակ իր առաքելությանը հաղորդելով կրոնական բովանդակություն, սուլթանի հետ քաղաքական հարցեր էր քննարկում ու վճռում: Աշխատելով ավելի սերտացնել իր հարաբերությունները Աբդուլ Համիդի հետ և քաջ գիտենալով, որ արևմտահայերը թուրքական լծից իրենց ազատագրության հույսը ակնկալում են Ռուսաստանից, ուստի, ցանկանալով սեպ խրել ռուս-թուրքական հարաբերությունների մեջ, հայկական հուզումները որակում էր Ռուսաստանի հովանավորությամբ թուրքական կայսրության մասնատմանը միտված գործողություններ, որի արդյունքում արևմտահայերը կանցնեին Ռուսաստանի տիրապետության տակ: Գերմանական դիվանագետները հայերին դիտելով որպես Փոքր Ասիայում ռուսական ազդեցություն տարածողներ՝ գտնում էին, որ հայերով բնակեցված հայկական տարածքները, Արևմտյան Հայաստանը Գերմանիայի համար ցանկալի չէ: Նրան անհրաժեշտ է Հայաստանը առանց հայերի, այնտեղ գերմանացիներին վերաբնակեցնելու համար (64, 1914, 1-15, 107): Գերմանիայում արգելվեցին հայանպաստ միտինգները, ինչպես նաև մամուլում հայկական կոտորածների մասին հոդվածների հրապարակումը: «Պաշտոնական Գերմանիան, - գրում է Վ. Գոլմստրենը, - ղեկավարվելով միայն նյութապաշտական շահերով՝ իշխանական սկզբունքը կրոնական գաղափարից ու խղճի

սկզբունքից բարձր է դասում... Բեռլինում, - շարունակում է նա, - աստծո և կրոնի մասին եղած հասկացությունները հպատակեցվում են քաղաքական միտումներին և պատահական չէ, որ Վիլհելմ 2-րդ կայսեր Թուրքիայում գտնվելու պահին շարունակվում են հայկական կոտորածները: Գերմանական կայսեր շնորհիվ քրիստոնեական արյունով ողողված մահմեդական աշխարհը հույսով է նայում ապագա 20-րդ դարին» (2, 1898, 297), - իրավացիորեն եզրակացնում է հրապարակախոսը: Հետևաբար, կայսերական Գերմանիայից հայանպաստ կողմնորոշում ակնկալելը առնվազն քաղաքական կուրություն էր. Թուրքիայում հիմնավորվելու նպատակաուղղված գործողություններ ծավալող կառավարությունը մարդասիրական մոտիվներով չէր կարող ղեկավարվել: Գերմանիային, բացի տնտեսական ու քաղաքական հեռահար նպատակներից, այլ հարցեր չէին հետաքրքրում: Հետևաբար հայ քաղաքական կուսակցությունների անհեռատես գործիչները չարաչար սխալվում էին, երբ Գերմանիայի օգնությամբ թուրքական լծից ազատագրվելու հնարավորության մասին արևմտահայության մեջ ավելորդ անգամ անիրական զուր հույսեր էին արթնացնում (65, 1906, 68) և դրանով ավելի էին վատացնում նրա առանց այդ էլ դառնաղետ վիճակը: Հայկական հարցում թուրք-գերմանական կառավարությունների տեսակետները նույնանում էին:

Եվրոպական տերություններից Ֆրանսիան առավել խոշոր կապիտալները ուներ Թուրքիայում, որի համար էլ այդ տարածաշրջանում Ֆրանսիայի ու մյուս տերությունների միջև հակամարտությունները ընթանում էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հողի վրա: Ֆրանսիային մշտապես մտահոգում էր Թուրքիայում իր ներդրած կապիտալի ապահովությունն ու եկամտաբերությունը: Նրա արտաքին քաղաքականությունը միտված էր տարածաշրջանում այդ նպատակի հետևողական ու ճշգրիտ կատարմանը: Մերձավոր Արևելքում անգլիական գիշատիչ բուրժուազիայի խարդախ գործողությունները, մասնավորապես Թուրքիայի տարածքներից կատարած զավթումները, հատկապես Եգիպտոսի բռնազավթումը անմիջապես շոշափում էին Ֆրանսիայի շահերը: Եվ բոլորովին էլ պատահական չէր 1882 թվականից հետո անգլո-ֆրանսիական հարաբերություններում նկատելի վատացումը ոչ միայն Աֆրիկայի հյուսիսում, մասնավորապես Եգիպտոսում ու նրա հարակից տարածքներում այդ երկու տերությունների ունեցած շահերի ու նկրտումների համար, այլ նաև Թուրքիայի

տարածքային ամբողջականության խախտմանն ուղղված Անգլիայի գործողությունների պատճառով (54, 297), որովհետև Թուրքիայում ունեցած խոշոր կապիտալ ներդրումների ապահովությունը, ինչպես նաև Ֆրանսիային թուրքական կառավարությունը ահռելի պարտքերը վերադարձնել կարող էր միայն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումով (66, 12): Անգլիայի հետ Մերձավոր Արևելքում ունեցած հակամարտությունները և հատկապես Եվրոպայի կենտրոնում իր գերիշխանությունը հաստատելու Գերմանիայի հավակնությունները Ֆրանսիային կողմնորոշեցին դեպի Ռուսաստանը: Ինչպես Ռուսաստանի՝ դեպի Բալկանները կատարած առաջընթացը և Մերձավոր Արևելքում հաստատած գերակա ազդեցությունը Ավստրո-Հունգարիային կողմնորոշեցին դեպի Գերմանիան, այնպես էլ վերջինիս Եվրոպայի կենտրոնում հզորացումն ու Ֆրանսիայի նկատմամբ ունեցած հեռահար նկրտումները ռուս-ֆրանսիական առկա հակամարտություններից անկախ Ֆրանսիային նետեցին ցարի գիրկը: Ռուս-ֆրանսիական հարաբերությունները սկսեցին ջերմանալ ու նրանց միջև եղած երբեմնի սուր հակամարտությունները ժամանակավորապես անթեղվեցին (18, 1931, 4, 179): Այդ հանգամանքը իրավամբ հարուցում էր գերմանական դիվանագետների զարմանքը, չէ որ «Ռուսաստանը հյուսիսարևելյան Միջերկրականում հանդիսանում է Ֆրանսիայի հակառակորդը» (40, Bd. 11, 2855),– նշում է վավերագիրը:

Հայկական կոտորածների ընթացքում Ֆրանսիան, ղեկավարվելով իր տնտեսական ու քաղաքական շահերով և համերաշխ գործելով ցարիզմի հետ ընդդեմ Անգլիայի ցուցադրական հայանպաստ ակտիվ գործողությունների, հակադրվեց այսպես կոչված «հայկական արտոնյալ» նահանգի գաղափարին: Չնայած ցարիզմը և ֆրանսիական կառավարությունը սուլթանին ներկայացրին Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ծրագիրը, սակայն երկուստեք հանդես գալով Թուրքիայի տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության պաշտպանությամբ (19, 1897, 52), իրականում իրենց պասիվությամբ հնարավորություն ընձեռեցին սուլթանին գործելու «ինչպես իրեն կամքն էր թելադրում», իսկ վերջինս, որպես տերությունների խարդախ խաղերի քաջ գիտակ, ժամանակ էր շահում ու թուրքական ձևով «խաղաղեցնում» հայերին (68, 1897, 84): Այդ խարդախությունների անմեղ զոհ հայ բնակչությունը, ինչպես արդարացի ընդգծում է «Միր բոժի» ամսագիրը, «անկարող լինելով հասնել արդարության և պաշտպանել

իրենց անձնական ապահովությունն օրինական ճանապարհով դիմում են վճռական գործողությունների» (69, 1904, 10, 58):

Հայկական կոտորածների ընթացքում ֆրանսիական կառավարությունը մերժում էր հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը: «Հայաստանը,– նշում էր ֆրանսիական դիվանագետը,– Բուլղարիայի կամ Հունաստանի նման բնական սահմաններով զծված կամ հոծ բնակչությամբ բնակեցված երկիր չէ: Հայերը ցրված են Թուրքիայի չորս կողմերը և բուն Հայաստանի մեջ խառնված են մահմեդականների հետ: Որտեղ է սկսվում Հայաստանը,– շարունակում է նա,– և ուր կվերջանա, մնում է անհայտ: Նրանց (հայերին – Պ. Ս.) մնում է միայն բարեփոխումների խոստումը», իսկ Թուրքերը իրենց վատ կառավարումով և մշտական կոտորածներով ավելի են սաստկացնելու իրավիճակը (30, 1897, 27), եզրակացնում էր Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնը:

Ռուս առաջադեմ մտավորականները Հայկական հարցում Ֆրանսիայի կողմնորոշումը մեկնաբանում էին ֆրանսիական մամուլի նյութերով՝ ընդգծելով, որ ֆրանսիական լրագրերը կառավարության հետևողականությամբ կոտորածների համար մեղադրում են հայերին, գտնում, որ հայկական հուզումները հետևանք են Անգլիայի հակաթուրքական գործողությունների, որ անգլիացիների ձեռքին հայերը ընդդեմ սուլթանի դյուրավառ նյութ են: Ուստի Ֆրանսիան, որպես Ռուսաստանի դաշնակից, հայկական կոտորածների ընթացքում ընդդեմ Անգլիայի սերտորեն համագործակցում էր Ռուսաստանի հետ (21, 1896, 295): Ֆրանսիական առաջադեմ գործիչները, ի հակադրություն կառավարության հակահայկական դիրքորոշման, համակրանքով էին լցված հայ ժողովրդի նկատմամբ և իրենց մարդասիրական ձայնը բարձրացրին ի նպաստ կոտորվող արևմտահայերի (70):

Նշանավոր հրապարակախոս Ա. Ն. Սազոնովը, անդրադառնալով հայկական կոտորածների ընթացքում ֆրանսիական կառավարության կողմնորոշման գնահատմանը, բացահայտում է այդ երկրի առաջադիմության հանդեպ ունեցած ավանդական ազատամտական կողմնորոշման ու 90-ական թվականներին վարած հետադիմական, քաղաքական հատուկ շահերով թելադրված հակահայկական դիրքորոշման էությունը: «Թերևս ոչ մի եվրոպական տերություն,– գրում է Ա. Ն. Սազոնովը,– այնքան կսկծալի ցավ չի զգում կատարվող դեպքերի նկատմամբ, որքան Ֆրանսիան: Նա ունի Արևելքում իր ավանդական դարավոր քաղաքականությունը: Արևելքի հետ կապված

են նրա փառքի և մեծության բազմաթիվ հիշողություններ: Ամեն անգամ, երբ դեպքերի անիվը առաջ էր գցում արևելյան քրիստոնյաների հարցը, – շարունակում է հրապարակախոսը, – Ֆրանսիայի ծայրը թնդում էր ամենից բարձր և ամենից հեղինակավոր» (6, 1896, 12, 121): Ա. Ն. Սազոնովը, նկատի ունենալով Եվրոպայի կենտրոնում Գերմանիայի հավակնությունները և այդ խնդրում ֆրանսիական կառավարության վախվորած պահվածքը, գտնում է, որ «նույնիսկ այժմ, երբ նրա ձեռքերը կաշկանդված են, կրկին երբեմն նա չի կարող զսպել իր եռանդը ծառայելու համամարդկային նպատակներին, իր առաջավոր մարդկանց միջոցով քարոզում է, թե Ֆրանսիան պետք է ձգտի այնտեղ, որտեղ խոսքը վեհ գաղափարների մասին է»: Հեղինակի այդ դատողությունները հիմնավորվում են նրանով, որ արյունալի կոտորածների ընթացքում Ֆրանսիայի առաջադեմ մտավորականները քննադատելով տերություններին, այդ թվում նաև ֆրանսիական կառավարությանը, իրենց ձայնն էին բարձրացնում հոգուտ կոտորվող արևմտահայերի (6, 1896, 12, 122): Այդ մասին «Լուչ» լրագիրը տպագրեց ծավալուն հոդված, որում լուսաբանում էր 1897 թ. հունվարի 21–ին Փարիզում անվանի պատմաբան Ա. Վանդալի, Լեռուա Բոլյեի ու նրանց գաղափարակից այլ մտավորականների կողմից կազմակերպված հայանպաստ հավաքի մանրամասները: Ֆրանսիացի առաջադեմ գործիչները բազմամարդ այդ հավաքում անողոք քննադատելով թուրքական կառավարությանը անմեղ ու անզեն հայ բնակչությանը գազանային ջարդերի ենթարկելու համար, իրենց համակրանքն էին հայտնում արևմտահայերին, հիացմունքի ու գովեստի ակնածալից խոսք ասելով Արևմտյան Հայաստանի որոշ վայրերում թուրք ջարդարարներին հայերի ցույց տված հերոսական դիմադրության կապակցությամբ, կոչ էին անում քրիստոնյա տերություններին օգնելու դժբախտության մեջ հայտնված ու թուրքական կամայականությունների զոհ հանդիսացող հայերին (71, 1897, 10): Ա. Վանդալը համարձակորեն քննադատելով ֆրանսիական կառավարությանը, քողազերծ է անում նրա թուրքամետ կողմնորոշման շարժառիթները, միաժամանակ ցավ է հայտնում, որ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման առաքելությունն ունեցող ու այդ խնդրում մեծ ավանդ մատուցած Ռուսաստանում դեռևս վճռական քայլեր չեն կատարվում հայերին օգնելու համար: Հոդվածագիրը խոր ցավ է հայտնում կոտորածների ընթացքում 300000 անմեղ զոհերի համար և իրավացի գայրույթով ավելացնում. «Մինչև ե՞րբ քրիստոնյա տերությունները հան-

դուրժեն թուրքական գազանությունները, մինչև ե՞րբ նրանք պետք է մնան անպատիժ» (71, 1897, 10):

Հայկական կոտորածների խնդրում ֆրանսիական կառավարության անտարբեր լռությունը Ա. Ն. Սազոնովը բացատրում է Եվրոպայի կենտրոնում ստեղծված իրավիճակով, ֆրանս-գերմանական հակամարտություններով: «Ասպետական ազգի այդ անցյալի մեծությունը (հունանիզմը և առաջադիմության ձգտումը – Պ. Ս.) խորտակվում է՝ բախվելով այն դժնդակ իրականությանը, որ ստեղծվել է երկաթե կանցլերի ձեռքով: Նա ստիպված է կրավորական դեր խաղալ և այդ շատ լավ ըմբռնում են ամենալավ պետական անձինք: Ուրեմն, – շարունակում է Ա. Ն. Սազոնովը, – նույնիսկ ֆրանսիացիները խոստովանում էին, որ զուր է այժմ Ֆրանսիայից օգնություն սպասել և հույսեր փայփայել, որ Անատոլիայի խաղաղեցման գործում վճռական խոսք կարող է ասել Ֆրանսիան: Նա անզոր է տանջված հայերի օգտին հեղինակավոր խոսք ասել ու հայկական նահանգների համար ինքնավարություն ձեռք բերել» (6, 1896, 12, 115): Ա. Ն. Սազոնովի կողմից Հայկական հարցում Ֆրանսիայի կողմնորոշման միակողմանի, հետևաբար թերի և մակերեսային մեկնաբանությունը հավանաբար հետևանք է այն բանի, որ Ֆրանսիան այդ խնդրում հետևում էր Ռուսաստանին, իսկ վերջինիս ոչ հայանպաստ դիրքորոշման համակողմանի ու խորքային քննադատության խնդրում հրապարակախոսն անզոր էր: Համանման կաշկանդվածությունը հատուկ էր նաև «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի» լրագրերին:

Ֆրանսիայի, հետևաբար նաև ցարիզմի ոչ հայանպաստ կողմնորոշման ու որոշակի քաղաքական հատուկ շահերով պայմանավորված թուրքանպաստ գործողությունների քողազերծման ու բացահայտման լուրջ փորձեր էին կատարում «Լուչ», «Նեդելյա», «Ռոսիա» լրագրերը:

Ավստրո-Հունգարիան, Արևելյան հարցում պաշտպանելով Գերմանիային, հայտնվում էր Ռուսաստանին հակառակորդ տերությունների շարքում: Նա ձգտում էր ամրանալ Բալկաններում, իր գերիշխանությունը հաստատել սլավոնական ժողովուրդների վրա, հետևաբար մեծապես մտահոգվում էր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ծավալումից, քանի որ սլավոնական ժողովուրդները իրենց ազատագրման համար իրական օգնություն ակնկալում էին Ռուսաստանից (72, 228–229):

Ավստրո-Հունգարիան, ինչպես նաև նրա դաշնակիցները, մասնավորապես Գերմանիան, ընդհուպ մինչև դարի 90–ական թվականները ցույց էին



թյանը, տագնապում էր, թե Թուրքիայի բաժանման հարցում հնարավոր է ռուս-անգլիական համաձայնություն, որի ընթացքում Ռուսաստանը, գրավելով նեղուցները, ամրապնդվելու է Բալկաններում (3, 1894, 274): Այդ հանգամանքը բացառելու համար արտգործնախարարը առաջարկում էր սուլթանին ժամանակ տրամադրել կարգը երկրում վերականգնելու և բարեփոխումներ մտցնելու համար, գտնելով, որ սուլթանը դրա համար բավարար ուժ ու հնարավորություն ունի (21, 1895, 300): Ծավալվող գործողություններից դուրս չմնալու, ինչպես նաև անգլո-ռուսական հնարավոր համաձայնությունը բացառելու նպատակով Գոլուխովսկին ակտիվորեն մասնակցում էր հայկական կոտորածների ընթացքում արևմտահայերի հովանավորությունը ստանձնած տերությունների ու սուլթանի միջև ստեղծված դիվանագիտական կատակերգություններին, որով նրանք սուլթանական կառավարությանը հնարավորություն էին ընձեռում, և ինչու ոչ, նաև հովանավորում էին թուրք ջարդարարներին (71, 1897, 13):

Լ. Ա. Կոմարովսկին այդ առնչությամբ գրում է. «Մեծ տերությունները Չայկական հարցը զոհաբերում են իրենց քաղաքական հաշվարկներին: Նրանք ամեն ինչ թողնում են նեխվելու, առանց առաջընթացի: Ամեն ինչ, շարունակում է նա, չափում են իրենց քաղաքական շահերի օգուտով: Այստեղից էլ նրանց միջև եղած տարածայնություններն ու համընդհանուր անբավականությունը... Թուրքիային էլ հենց այդ էր անհրաժեշտ» (9, 7): Սուլթանը տերությունների այդ տարածայնությունների յուրաքանչյուր բռնկում օգտագործում էր կոտորածներն ավելի սաստկացնելու համար (71, 1897, 13): Հետևաբար պետք է եզրակացնել, որ արևմտահայերի անխնա ու դաժան կոտորածների համար թուրքական կառավարության հետ միասին նույնքան մեղավոր էին նաև տերությունները, որոնք «20-րդ դարի նախօրեին թույլ տվեցին կոտորելու խաղաղ բնակչությանը» (2, 1897, 244): Նույն կարծիքին է նաև «Ռուսսկայա միսլ»-ը, որը արդարացիորեն ընդգծում է, որ հայերի կոտորածների ընթացքում բոլոր տերությունները հանդես բերեցին հանցագործ անտարբերություն և դրանց ամբողջ «մեղքը ծանրանում է ժամանակակից դիվանագիտության խղճի վրա» (6, 1896, 12, 106), որովհետև, ինչպես իրավացիորեն շեշտում է Մ. Արզումանյանը, արևմտահայերի նկատմամբ գործադրված թուրքական գազանությունների համար «իմպերիալիստների երբեմնի կշտամբանքներն ու բողոքները միշտ ձևական էին, իսկ սիստեմատիկ խրախուսանքն ու աջակցությունը՝ միշտ ռեալ» (74, 181):

Չայկական հարցի շուրջ ծավալվող դիվանագիտական խարդախ խաղերի ընթացքում Ավստրո-Յունգարիան, իր շահերին հետամուտ, հաճախ փոփոխության էր ենթարկում իր դիրքորոշումը, սակայն նրան մշտապես հետաքրքրող ոչ թե կոտորածի ենթակվող արևմտահայությունն էր, այլ Թուրքիայում ռուս-ֆրանսիական գերակա ազդեցության փոխարեն ավստրո-հունգարական ազդեցության հաստատման ձգտումը (19, 1895, 45):

Երբ Սոլսբերիի գլխավորած անգլիական կառավարությունը աստիճանաբար, նաև հարկադրված, Արևելքում քաղաքական նոր ճշգրտումներ կատարեց ու Թուրքիայի տարածքային ամբողջականության պաշտպանության խնդրում համաձայնություն կայացրեց Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ, իր նահանջը Չայկական հարցում հիմնավորելով միայնակ գործելու լիազորություններ չունենալով, Ավստրո-Յունգարիան վերակողմնորոշվեց, ու Գերմանիայի հետ միասին սկսեցին պաշտպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը (21, 1896, 257):

Չայկական կոտորածների ընթացքում, երբ ավելի պարզորոշ արտահայտվեցին Մերձավոր Արևելքում տերությունների դիվանագիտական աշխուժացման հանգամանքները, Իտալիան սկսեց համագործակցել Անգլիայի հետ (2, 1895, 300)՝ համաձայնվելով սուլթանի վրա դիվանագիտական ճնշումը մեծացնելու անգլիական առաջարկին, քանի որ Միջերկրական ծովում լուրջ տարածայնություններ ուներ Ֆրանսիայի հետ և Թուրքիայում ռուս-ֆրանսիական ազդեցության մեծացմանը զուգընթաց ավելի էր վատանում Իտալիայի վիճակը: «Իտալիան, - նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդեռնոստի» լրագիրը, - Անգլիայի հետևողությամբ Միջերկրականում աշխատում էր ուժեղացնել իր ռազմական նավատորմը: Հռոմում, - շարունակում է լրագիրը, - անհանգստանում էին, թե վճռական գործողությունների ժամանակ որտե՞ղ են գտնվելու ֆրանսիական ու ռուսական նավերը: Իտալական լրագրերը վստահ էին, որ «Հռոմը թույլ չի տա Միջերկրական ծովը դառնա ֆրանսիական լիճ» (2, 1895, 300):

Ելնելով իր ապագայի հեռանկարից ու մտահոգվելով ռուս-ֆրանսիական զինակցության էլ ավելի զորակցությունից և կարծելով, թե Թուրքիայի մասնատումով կվերանա այդ վտանգը, Իտալիան առաջինը արձագանքեց Թուրքիայի տարածքային ամբողջականության խախտմանը միտված Անգլիայի գործողություններին (21, 1895, 48):

Սուլթանի վրա ռուս-ֆրանսիական ազդեցությունը վերացնելու նպատակով Իտալիան անգամ համաձայն էր տերությունների համատեղ գործողություններով ստիպել սուլթանին դադարեցնելու կոտորածները, նույնիսկ հայերին ինքնավարություն տալուն, սակայն Գերմանիան դրան դեմ արտահայտվեց (73, 1896, 12): Եվ դա պատահական չէր: Երբ արևելյան ճգնաժամի սրման ու Չայկական հարցի պատճառով անհրաժեշտություն էր առաջանում Թուրքիայի ներքին գործերին տերությունների միջամտության համար, նրանց միջև եղած հակամարտությունները համատեղ գործողություններ վարելը դարձնում էին անհնարին: Նրանք միասնաբար հանդես գալ չէին կարող, ուստի,– եզրակացնում է «Ռուսակոյն օբոզրենիե» լրագիրը «տերությունների դիվանագիտությունը Չայկական հարցում պարտություն էր կրում», իսկ դրանից օգտվում էր արյունաբերու սուլթանը և նոր ուժով էր սկսում հայերի կոտորածները (59, 1895, 128): Ռուս առաջադեմ մտավորականները իրավացիորեն նկատում էին տերությունների՝ Թուրքիայի նկատմամբ ունեցած շահադիտական նպատակները, ինչպես նաև միմյանց միջև եղած սուր հակամարտությունները նրանց դարձրել էր այնքան անգոր, որ «Քրիստոնեական Եվրոպան վերածվել էր քրիստոնյաներին գազանաբար կոտորող մահմեդական մոլեռանդ ամբոխի քստմնելի գործողությունների հանդիսատեսի» (6, 1896, 12, 113–144):

19-րդ դարի 90-ական թվականներին Մերձավոր Արևելքում աստիճանաբար սկսում էր ակտիվանալ ԱՄՆ-ը (19, 1895, 48), որը մարդասիրական քողի տակ աշխատում էր վճռել իր համար կարևոր քաղաքական խնդիրներ: Սուլթան Չամիլը, ահաբեկված հայկական կոտորածների ժամանակ Անգլիայի դիվանագիտական ճնշման ուժեղացումից և միաժամանակ աշխատելով բացառել Թուրքիայի նկատմամբ եվրոպական տերությունների համաձայնեցված գործողություններ վարելու հնարավորությունը, օգնության խնդրանքով դիմեց ԱՄՆ-ի կառավարությանը, անգամ առաջարկեց 1894 թ. Սասունում տեղի ունեցած կոտորածների եղելությունները հետաքննելու համար ստեղծված թուրքական հետաքննող հանձնաժողովում ներկայացնել ԱՄՆ-ից ներկայացուցիչ (71, 1895, 132): ԱՄՆ-ի սենատն ընդունեց այդ առաջարկությունը, սակայն եվրոպական տերությունները պատճառաբանելով, որ ԱՄՆ-ը եվրոպական տերություն չէ և չի մասնակցել 1878 թ. Բեռլինի կոնգրեսին, որ միայն 6 մասնակից տերություններն են լիազորված հետաքննելու Սասունի իրադարձությունները, արգելեցին ԱՄՆ-ի Կ. Պոլսի

դեսպանին հետաքննական հանձնաժողովում համագործակցելու իրենց հետ: Գերմանացիները հրաժարվեցին մասնակցել Գերմանիան, Իտալիան և Ավստրո-Յունգարիան (75, 1895, 166): ԱՄՆ-ը Թուրքիայի հետ հարաբերությունները չվատացնելու նպատակով օգնության համար իրեն ուղղված հայկական բազմաթիվ դիմում-խնդրագրերին սառն ու անտարբեր պատասխանում էր, որ եվրոպական գործերում ինքը միջամտել չի կարող, որ ինքը կարող է պաշտպանել Թուրքիայում եղած իր քաղաքացիների անվտանգությունը (19, 1896, 74):

Ա. Ն. Սազոնովը, քննարկելով Չայկական հարցում տերությունների միջամտության հարցը և քաջ գիտենալով այդ միջամտությունների հետևանքով արևմտահայության հետ տեղի ունեցած ողբերգությունները, նուրբ հումորով ընդգծում էր. «Լրագրերը հայտնում են, որ ԱՄՆ-ը և Ռոմի պապը անկասկած ցավակցում են հայերին: Սակայն,– շարունակում է հրապարակախոսը,– ԱՄՆ-ի կառավարությունը, խորապես ցավակցելով հայերին, գտնում է, որ ցավոք սրտի ոչինչ անել չի կարող, քանի որ իրավասու չէ մասնակցելու եվրոպական գործերին: Իսկ Ռոմի պապը,– ավելացնում է Ա. Ն. Սազոնովը,– նամակով կղիմի սուլթանին, որպեսզի վերջինս բարեւալի իր հավատակիցների վիճակը: Եվ հարցը դրանով կավարտվի (6. 1896, 12, 117):

Ռուս առաջադիմական, ինչպես նաև պահպանողական մամուլի օրգանները, լուսաբանելով տերությունների մերձավորարևելյան քաղաքականության առանցքում ներգրավված Չայկական հարցը, առանձնապես հայկական կոտորածների նկատմամբ տերությունների դիրքորոշումը, հետևողական ու վճռական քննադատության էին ենթարկում Անգլիայի, ինչպես նաև Գերմանիայի գլխավորած եռյակ զինակցության տերությունների հակահայկական գործողությունները՝ ընդգծելով, որ դրանք հիմնականում կրում էին նաև հակառուսական բնույթ, սակայն Ռուսաստանի ու նրա դաշնակից Ֆրանսիայի հարցում պահպանողական մամուլը մեղադրում էր հայերին, իսկ առաջադիմական մամուլի օրգանները հայերին պաշտպանելով հանդերձ, ցարիզմի ու ֆրանսիական կառավարության նկատմամբ սուր քննադատությամբ երբեք չէին փայլում:

Այսպիսով՝ 19-րդ դարի 80–90-ական թվականներին ինչպես առանձին վերցրած, այնպես էլ ռազմաքաղաքական զինակցության մեջ միավորված եվրոպական տերությունները Չայկական հարցում հանդես էին բերում յուրովի մոտեցում: Եթե ռուս-ֆրանսիական զինակցությունը Չայկական հար-

ցում իրենց ռազմաքաղաքական շահերով թելադրված որդեգրեցին չմիջամտելու քաղաքականություն, պաշտպանելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, ապա նույնը չի կարելի ասել Ավստրո-հունգարա-գերմանա-իտալական զինակցության մասին:

Գերմանիան Մերձավոր Արևելքում հաստատվելու համար սկզբունքային պայքար ծավալեց ռուս-ֆրանսիական, ինչպես նաև անգլիական կառավարությունների դեմ, ձգտելով նրանց դուրս մղել տարածաշրջանից: Նրան անհրաժեշտ էր ուժեղ ու ամբողջական թուրքիա, ուստի ժամանակավորապես համագործակցելով Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ, հակադրվեց Անգլիային, մերժեց նրա կողմից թուրքիան մասնատելու մասին եղած առաջարկը, ապա աստիճանաբար ուժեղացնելով իր ազդեցությունը սուլթանի վրա, վերջնականապես դուրս մղեց Ֆրանսիային ու Ռուսաստանին թուրքիայից, հաստատվեց այնտեղ: Նա իր գործողություններով աջակցեց արյունարբու սուլթանին, հովանավորեց նրան իրագործելու «Չայաստանը առանց հայերի» նրա ծրագիրը, որը միաժամանակ որդեգրվեց գերմանական քաղաքագետների կողմից:

Իտալիան ու Ավստրո-Հունգարիան, պայքարելով Մերձավոր Արևելքում ռուս-ֆրանսիական ազդեցության դեմ, Իտալիան՝ Միջերկրական ծովում, իսկ Ավստրո-Հունգարիան՝ Բալկաններում ամրանալու համար հայկական կոտորածների ընթացքում կողմնորոշվեցին դեպի Անգլիան՝ նրան հետևելով առաջարկում էին մասնատել Օսմանյան կայսրությունը, սակայն ոչ թե հայկական կոտորածները դադարեցնելու, նրանց օգնելու նպատակով, այլ իրենց քաղաքական ու տնտեսական շահերը ապահովելու համար:

Այսպիսով՝ ռուսական մամուլը, արձագանքելով թուրքական կառավարության կողմից 1894–1896 թթ. Արևմտյան Հայաստանում և թուրքական կայսրության մյուս հայաշատ վիլայեթներում սանձազերծած արևմտահայության մասսայական կոտորածներին և լուսաբանելով Հայկական հարցում տերությունների դիրքորոշումը, հիմնավորում էր, որ նրանցից ոչ մեկին երբևէ չի մտահոգել Հայկական հարցը և նրանցից ոչ մեկը այն չի բարձրացրել արևմտահայերին օգնելու նպատակով: Տերությունները անխտիր Հայկական հարցը օգտագործում էին որպես միջոց սուլթանի վրա ազդեցության հաստատման, իրենց համար թուրքիայում արտոնություններ ստանալու, ինչպես նաև իրենց միջև եղած հակամարտությունները համահարթելու հա-

մար: Նրանք իրենց միջամտությամբ ավելի էին բորբոքում հայ ժողովրդի նկատմամբ սուլթանի ու նրա կառավարության ատելությունը, որի պատճառով կոտորածներն ընթանում էին ընդգծված վայրագ մոլեգնությամբ:

### Գլուխ III Ծանոթություններ

1. История внешней политики России, вторая половина XIX века, М., 1999.
2. «СПб. ведомости».
3. «Тифлисский листок».
4. «Русское богатство».
5. Жузе П. К., Положение христиан в мусульманских государствах, Казань, 1897.
6. «Русская мысль».
7. Abbott L. F., The Ottoman Turkey, Greece and the Great Powers, New York, 1917.
8. «Новое слово».
9. Комаровский Л. А., Восточный вопрос, М., 1896.
10. История дипломатии, т. 2., М., 1945.
11. АВПРИ, ф. «Главный архив».
12. «Երկրի ծայն»:
13. АВПРИ, ф. «Канцелярия».
14. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898.
15. «Մշակ»:
16. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999:
17. «Армянский вестник».
18. «Красный Архив».
19. «Неделя».
20. «Արծազանք»:
21. «Биржевые ведомости».
22. Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906.
23. «Русь».
24. «Вестник Европы».
25. Անտոնյան Ա., Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմի, Կ. Պոլիս, 1912:
26. «Новости».
27. «Варшавский дневник».
28. Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:
29. «Русская беседа».

30. «Русское слово».
31. «Жизнь и искусство».
32. ЦГВИАМ, ф. «ВУА».
33. Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2., М., 1957, նաև Герцог Аргайлский, Ответственность Англии в Восточном вопросе, СПб., 1908.
34. АВПРИ, ф. «Политархив».
35. «Московские ведомости».
36. «Նոր դար»:
37. Մինաս Չերազ, Ազգային խնդիրներ, 1927:
38. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896.
39. Новое обозрение.
40. Die grosse Politik der Europäischen Kabinette 1871–1914. Sammlung der diplomatischen Akten des auswärtigen Amtes. Berlin, 1923.
41. Историк–марксист, 1930, т. 20, с. 104 (D.G.P.E.K. Bd. 10, 2375).
42. Տես՝ Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906, Զ. Բաստրմաճեան, Հայոց պատմություն, Զ. Բ. Անթիլաս 1958, Լ. Բայրամյան, Արևմտյան Հայաստանը անգլիական ինպերիալիզմի պլաններում, Երևան, 1982, էջ 200:
43. «Русские ведомости».
44. Ротштейн Ф. А, Международные отношения в конце 19 века, М., 1960.
45. Георгиев В.А., Киняпина Н. С., Панченкова М. Т., Восточный вопрос во внешней политике России, конец XVIII начало XX века, М., 1978.
46. «Новое время».
47. Жигарев С., Русская политика в Восточном вопросе, т. 1, М., 1896.
48. «Летопись», 1916.
49. «Դրոշակ», նաև Ալնունի եղ. Կովկասյան վերքեր, ժնն, 1903, Իշխանյան Բ. Տաճկաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1906:
50. «Сибирский вестник».
51. «Приазовский край».
52. Граве Б., Внешняя политика царизма в конце XIX и к началу XX веков, Л., 1936.
53. Бюлов Б., Внешняя политика Германии, Одесса, 1915.
54. Ерусалимский. А. С., Внешняя политика и дипломатия германского империализма в конце 19-ого века, М.–Л., 1948.
55. «Закавказье».
56. Готлип В. В, Тайная дипломатия во время Первой мировой войны, М., 1960, с. 33, նաև К. Herferich, Die deutsch Türkische Politik, Berlin, 1921, p. 10.
57. Ленорман Эрнест, Англия и Германия, М., 1925.
58. Норден А., Уроки германского империализма, М., 1948.
59. «Русское обозрение».
60. «Кремль».
61. Мелик–Каракозов, Выступление Германии в Турции после великих

- армянских погромов в 1895–1896 гг., Тифлис, 1915.
62. Казибек Ю., Современная Турция, М., 1898.
63. Պիճոն Ռընե, Հայերի կոտորածը. թուրքական գործելակերպ, գերմանական մեթոդ, Բեյրութ, 1937:
64. «Новое звено».
65. «Ռազմիկ»:
66. Гурко–Кряжин В., Ближний Восток и державы, М., 1924.
67. АВПРИ, ф. «Отчеты министра иностранных дел за 1896 г.».
68. «Россия».
69. «Мир божий».
70. Տես՝ «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», ժնն, 1907:
71. «Луч».
72. Горяинов С., Босфор и Дарданеллы, СПб., 1907.
73. «Свет».
74. Արզումանյան Ս., Դարավոր գոյամարտը, Երևան, 1989:
75. «Правительственный вестник».
76. Волгин В., Война и Ближний Восток, «Летопись» 1916, N 4. с. 23, նաև Яценко А., Русские интересы в Малой Азии, М., 1916, с. 53–55.
77. «Русский архив», 1892.
78. «Русский вестник».
79. «Իրավունք»:
80. Покровский М. Н., Дипломатия и войны царской России в XIX столетии, М., 1923.
81. Սկրտչյան Լ., Ձեռնունի փաստաթղթերը 1895–1896 թթ., Երևան, 1995.
82. К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 39.
83. Ներսիսյան Ս. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1890 թթ., Երևան, 2002:
84. Хвостов М. В., Ближневосточный кризис 1895–1897 гг., М., 1929.
85. «Խուր»:
86. Гирс А. А., Россия и Ближний Восток, СПб., 1906.
87. Ներսիսյան Ս. Գ., Պատմության կեղծարարները, Երևան, 1998:

## ՌՈՒՄ ԱՌԱՋԱԴԵՄ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՆՊԱՍՏ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՋԱՏԱԳՈՎ

### 1. Ռուս առաջադեմ մտավորականությունը ընդդեմ նչ հայամենտ ուղղությունների

XIX դարի 90-ական թվականներին Մերձավոր Արևելքում գերակա ազդեցություն հաստատելու համար տերությունների անզիջում մրցակցությունը, մանավանդ ռուս-անգլիական անհաշտ հակամարտությունները լուրջ նախադրյալներ ստեղծեցին ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության բնագավառում կատարելու ճշգրտումներ ու որակական նոր փոփոխություններ:

Տարածաշրջանում ամրանալու, Սև ծովի նեղուցների ու հարակից շրջաններում հաստատվելու նպատակով ցարիզմը ավելի ջերմացրեց իր հարաբերությունները Թուրքիայի հետ (1) և Անգլիային մեկուսացնելու համար դարձավ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պաշտպանող վճռական ուժը: Իսկ դրանից ինքնին հետևում էր այն, որ ցարիզմը հրաժարվում էր արևելքի քրիստոնյաներին հովանավորելու Ռուսաստանի ավանդական կողմնորոշումից:

Արտաքին քաղաքականության բնագավառում տեղի ունեցած այդ արմատական շրջադարձը և ռուս-անգլիական խորացող հակամարտությունները, որոնք իրենց խելահեղ շրջապտույտի մեջ ներգրավեցին Հայկական հարցը, յուրովի արձագանք գտան երկրի ներքին քաղաքականության ասպարեզում:

Ցարիզմի համար հույժ կարևոր էր երկրում իր արտաքին քաղաքականությանը համահունչ այնպիսի հասարակական կարծիքի ձևավորումը, որը

կունենար թուրքամետ, հետևաբար, հակաանգլիական ուղղվածություն, և միաժամանակ երկրում ծայր առած ու հուժկու թափով ծավալվող ազգային-ազատագրական և ժողովրդական շարժումների ուշադրությունը կշեղեր իր համար ցանկալի հունով: Դա ցարական կառավարության ավանդական գործելակերպն էր: Նա կայսրության կազմում եղած ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու նպատակով օգտագործում էր ամեն հնարավոր միջոց՝ նրանց միմյանց դեմ լարելու և հարաբերությունները թունավորելու համար: Իշխանություններին այդ խնդրում պաշտպանում ու նրա ներքին ու արտաքին քաղաքականության սկզբունքները մասսայականացնում էին պաշտոնական ու կիսապաշտոնական մամուլի օրգանները, «Մոսկովսկիե վեդոմոստի», «Կրեմլ», «Սվետ», «Նովոյե վրեմյա», «Կավկազ», «Գրաժդանին» լրագրերը, որոնք կատարելով վերևների առաջադրած քաղաքական պատվերը, հավատարմությամբ ծառայում էին ինքնակալությանը, ակտիվ ու գործնական աշխատանք ծավալելով նրա ներքին և առանձնապես արտաքին քաղաքականության սկզբունքների մասսայականացման ու համապատասխան հասարակական կարծիքի ձևավորման համար:

1894–1895 թթ. սուլթանական Թուրքիայում սանձազերծված հայկական զանգվածային կոտորածները և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները լուրջ անհանգստություն էին պատճառում ցարական կառավարող շրջաններին: Արտաքին քաղաքականության բնագավառում ռուս-թուրքական հարաբերությունների հետագա ջերմացմանը միտված վճռական ձեռնարկումների ընթացքում Հայկական հարցը լուրջ բարդություններ էր հարուցում, իսկ ներքին քաղաքականության առումով՝ ծավալվող հայկական հուզումները, որոնք տեղի էին ունենում կայսրության սահմանների հարևանությամբ, նրա կովկասյան տարածաշրջանում հղի էին վտանգավոր խնդրումներով: Այդ պատճառով Թուրքիայում իր մշտական ներկայությունը ապահովելու և անգլիական ազդեցությունը չեզոքացնելու համար ցարիզմը հայկական հուզումները ներկայացնելով որպես «միջազգային սոցիալական հեղափոխության մաս ... իր ձեռքերը լվաց Հայկական հարցում» (2, 73), և կոտորածից մազապուրծ Ռուսաստանի սահմանն անցած տանջահար գաղթականներին, որոնք Ռուսաստանը դիտում էին իրենց փրկության հանգրվանը, իշխանությունները համարում էին հեղափոխականներ, մտավախություն ունեին, որ նրանք կհեղափոխականացնեն կովկասահայությա-

նը, կառավարությունը երես թեքեց արևմտահայերից՝ Հայկական հարցը համարելով սուլթանի ներքին գործը (4, 1895, 298): Չնայած դիվանագիտական շրջանակներում որոշ ուժեր առաջարկում էին Հայկական հարցում հավատարիմ մնալ ավանդական կողմնորոշմանը և արգելել պաշտոնական մամուլում հակահայկական ելույթները (15, փ. 560, Ժ. 282, Ն. 2), Պետերբուրգում արդեն որոշել էին պաշտպանել սուլթանին: Անգլո-ռուսական սրված հակամարտությունների առանցքում գլխավոր դերակատարում ունեցող Հայկական հարցը կողմերը օգտագործում էին ինչպես իրենց, այնպես էլ սուլթանի հետ հարաբերությունների կարգավորման ընթացքում, ուստի Անգլիայի թվացող հայամետ ակտիվությանը ցարիզը հակադրում էր սուլթանին հովանավորելու իր կողմնորոշումը:

Ցարիզմի արտաքին քաղաքականության այդ սկզբունքները երկրում սկսեցին մասսայականացնել ու հիմնավորել պաշտոնական մամուլի օրգան «Մոսկովսկիե վեդոմոստի», «Գրաժդանին», «Նովոյե վրեմյա» «Կավկազ» լրագրերը, որոնք մշտապես հետևում էին կառավարության արտաքին քաղաքականության ամեն մի շրջադարձին ու արձագանքում էին նրանում արտահայտված յուրաքանչյուր փոփոխությանը:

Ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականությունը ամբողջությամբ քողարկելով ռուս-անգլիական հակամարտություններով, իսկ վերջինիս առանցքում ներգրավված Հայկական հարցը դիտելով այդ հակամարտությունների հիմնական դրդապատճառ՝ երկրում համապատասխան հասարակական կարծիք ստեղծելու նպատակով պահպանողական ուժերը գրոհ ձեռնարկեցին ռուսահպատակ կովկասահայության դեմ: Կովկասյան տարածաշրջանում համառուսացման գործընթացի մեջ առանձնահատուկ տեղ հատկացվեց իշխանությունների հակահայկական քարոզչությանը: Ազգային հարաբերությունների եռացող կաթսա Կովկասում ազգային թշնամանք ու անհանդուրժողականություն ստեղծելու և այդ ամենի առանցքում արևելահայությանը մեղադրելու համար իշխանամետ մամուլը և հետադեմ ուժերը ստահող լուրեր էին տարածում՝ ձգտելով հիմնավորել, թե իբր հայերը Կովկասի իշխանության մարմիններում մեծամասնություն են կազմում, զբաղեցրել են բոլոր պաշտոնները, իրենց ձեռքին են կենտրոնացրել ողջ երկրամասի առևտուրը և կապիտալը, հարստություն են դիզում այլ ժողովուրդների շահագործման հաշվին, ծավալում են հակապետական, անջատողական գործունեություն (6, 1897, 7424): Ռուս հասարակայնությանը հայ

ժողովրդի դեմ ատելությամբ տրամադրելու նպատակով հայերին անվանարկում էին «անհոգի առևտրական» և այլ նվաստացուցիչ պիտակներով (7, 1896, 136): Կովկասում ավազակության ու ավազակային խմբերի ուժեղացման համար մեղադրում էին հայերին, որ վերջիններս կառավարական հիմնարկներում գրավելով հիմնական պաշտոնները, թույլ չեն տալիս այնտեղ ռուս պաշտոնյաների ու ռուսական տարրի ուժեղացմանը, որպեսզի պայքար ծավալեն ավազակային խմբավորումների դեմ (5, 1895, 325):

Արևմտյան Հայաստանում, երբ թուրքական իշխանությունները հայկական զանգվածային կոտորածների համար մեղադրում էին հայերին, նրանց որակավորում հեղափոխականներ, որ ցանկանում են եվրոպական տերությունների օգնությամբ ինքնուրույն թագավորություն հիմնել, պահպանողական մամուլի օրգանները թուրքական այդ լրատվությունը ընդունելով որպես իրողություն, ռուս հասարակությանը ապակողմնորոշում էին ոչ միայն Հայկական հարցում ու խոչընդոտում կոտորածից մազապուրծ փախստական արևմտահայերին նյութական օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև արգելում էին օգնության նպատակով կուտակված միջոցները առաքելու Արևմտյան Հայաստան (85, 382-384):

Հետևելով իրենց մոսկովյան գործընկերներին՝ «Կավկազ» թերթի աշխատակիցներ Վ. Գունիան և Վ. Վելիչկոն Կովկասում հայ և այլազգի ժողովուրդների միջև ազգայնական կրքեր բորբոքելու և ազգային ատելություն սերմանելու ստոր ու անշնորհակալ գործունեություն ծավալեցին: Նրանք մեծ վնաս հասցրեցին Անդրկովկասում ապաստանած հայ փախստականների օգնության կազմակերպմանը: «Նա («Կավկազ» լրագրի խմբագիր Վ. Վելիչկոն-Պ. Ս.),- նշում է «Ռուսկայա միսլ» ամսագիրը,- կոպիտ ու անառարկելի կերպով բացառեց հայերին որոշակի օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը, որը ցուցաբերում էր մեծահոգաբար տրամադրված Կովկասյան հասարակությունը» (9, 1906, 1, 149): Լրագրող Վ. Վ. Լեսկիչը իր «Վերջին վաթսուներկաններից մեկը» հոդվածում Վ. Վելիչկոյի հակահայկական գործունեության մասին գրում է. «Վ. Վելիչկոն, որպես մայրաքաղաքային ամսագրերի նախկին աշխատակից, որը հաճախակի զբաղվում էր անամոթ սադրանքով, այժմ ձեռնամուխ եղավ պաշտոնական մամուլի օրգաններում հայերին վարկաբեկելու սև գործին, հալածելով հայ մտավորականներին և Կովկասի առաջադիմական մտավորականներին ընդհանրապես» (9, 1906, 1, 149):

Կովկասահայությանը վերագրվող արհեստածին ու անհիմն մեղադրանքները բազմազան էին ու բազմաբովանդակ: «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրում յուրաքանչյուր նորելուկ լրագրողի թխված հոդվածն ուներ որոշակի հակահայակական ուղղվածություն: Մերթ Կովկասյան վարչությանը մեղադրում էին, որ «կառավարական մարմինները լցրել է հայերով այն ժամանակ, երբ անջատողական հայկական քարոզչությունը պարզապես սհաբեկչական բնույթ է ընդունել», իսկ հաճախ հայերին քննադատում էին կառավարական մարմիններում պաշտոններ զբաղեցնելու հետևանքով երկրամասում ավազակային խմբավորումների բազմացման համար (5, 1896, 325): Ավազակային խմբավորումների գործողությունների ուժեղացումը, ըստ նրանց, հետևանք է այն բանի, որ երկրամասի իրավապահ մարմիններն անկարող են արդյունավետ պայքար մղել նրանց դեմ, որովհետև դրանք զբաղեցված են միայն հայերով, իսկ վերջիններս որպես անջատողականներ, իբր թե դեմ են ու խանգարում են իրավապահ մարմինները համալրել ռուսներով (11, 1898, 198):

Պահպանողական մամուլի կողմից կովկասյան առևտուրը և վարկային բանկերի ողջ կապիտալն իրենց ձեռքը կուտակելու համար հայերին ներկայացվող մեղադրանքների դեմ առանձնապես ակտիվ գործունեություն ծավալեց Ա. Ն. Սազոնովը: Նա իր մի շարք փաստառատ ու հիմնավոր հոդվածներով, մասնավորապես «Թվական տվյալներ կովկասահայության մասին» գործում, բացահայտեց ու մերկացրեց պաշտոնական շրջանների ու պահպանողական մամուլի հայերին վերագրվող մեղադրանքների ողջ սնանկությունը: Համադրելով կովկասահայության թվաքանակի մասին եղած մի շարք աղբյուրների տվյալներ՝ նա ցույց տվեց, որ Կովկասում հայերի թիվը կազմում է 985400 մարդ, որից 219591 քաղաքաբնակներ էին, որոնք առևտրի բնագավառում զբաղեցնում են միայն 6%, իսկ գյուղաբնակ ազգաբնակչության 85%—ը զբաղված է երկրագործությամբ (9, 1896, 9, 58), ուստի պահպանողական մամուլի հայերին վերագրվող մեղադրանքները նա իրավացիորեն համարում էր անհիմն ու անտեղի:

«Նովոյե վրեմյան» իր հակահայկական կողմնորոշմանը հավատարիմ «Կովկասահայության մասին» հոդվածում Ա. Ն. Սազոնովին մեղադրում էր հայասիրության մեջ և նրա հիմնավոր թվական տվյալները համարելով կեղծ, ոչ իրական, ճգնում էր հիմնավորել, որ Կովկասի ողջ կապիտալի 90%—ին տիրում են հայերը (6, 1897, 7424): Մերժելով իշխանամետ ուժերի

նմանատիպ կեղծ մեղադրանքները, դրանք բացատրելով նրանց ոչ հայանպաստ կողմնորոշումով և ղեկավարվելով Կովկասի վարկային բանկերի տարեկան հաշվետվության տվյալներով՝ Ա. Ն. Սազոնովը «Վարկային հիմնարկները Կովկասում» արժեքավոր հոդվածում ընդգծում էր, որ դեռևս 1894 թ. սկսած հայազգի դրամատերերի փայաբաժինը ընդհանուր կապիտալի մեջ կազմում է ընդամենը 6% (9, 1897, 3, 45–46): Այդ խնդրի վերաբերյալ ավելի ծավալուն ու փաստառատ «Հայերը կովկասյան վարչությունում» հոդվածով հանդես եկավ Գր. Ջանչինը (12, 1897, 11): Օգտվելով 1897 թ. «Կովկասյան օրացույցի» տվյալներից, ներկայացնում է կովկասյան տարածաշրջանի բոլոր նահանգների վարչական կազմը և նրանցում զբաղեցրած հայ պաշտոնյաների տոկոսային հարաբերությունը.

Թբիլիսիի նահանգ – 11%

Քութայիսիի նահանգ – 6%

Բաքվի նահանգ – 2%

Ելիզավետպոլի նահանգ – 5.1%

Երևանի նահանգ, ուր ազգաբնակչության մեծամասնությունը կազմում են հայերը – 10. 23%

Դաղստանի նահանգ – 10%

Կարսի մարզ – 5%

Ամբողջ Անդրկովկասի 7 նահանգների ոչ մի նահանգապետ հայ չէ:

Դատական մարմիններում ևս հայերը շատ քիչ են, ընդամենը՝ 3%: «Ահա թե որքանով են հայերը զավթել վարչության ապարատը,— գրում է Գր. Ջանչինը,— պաշտոնյաների թվի 390 անձից հայերը կազմում են ընդամենը 34 մարդ», իսկ «Նովոյե վրեմյան» ու նրա գաղափարակիցները զուր վայնասուն էին բարձրացրել կառավարական մարմինները հայերով զբաղված լինելու և դրանից բխող այլ հետևանքների մասին: «Այդ համոզիչ օրինակը,— նշում է Գր. Ջանչինը,— ակնհայտ ցույց է տալիս, թե ինչ եզրահանգումների են բերում, երբ մարդիկ իրապուրվում են ցեղային հալածանքներով, և երբ ցանկանում են ներքին կյանքի սովորական հարցերը լուծել տեղական նախապաշարմունքների և հռչակավոր «անջատողականության» հողի վրա» (12, 1897, 11):

Կովկասյան տարածաշրջանում ավազակության զորեղացման խնդրի կապակցությամբ հեղինակը կատարում է ճիշտ եզրահանգում. «Եթե Կովկասյան ավազակության ուժեղանալու պատճառների բարդ հարցում տե-

ղական վարչության մեջ ազգաբնակչության ազգագրական կազմը որևէ դեր է խաղում, այդ դեպքում արդարության հանդեպ ունեցած ամենահամեստ հարգանքը պարտավորեցնում է խոստովանել, որ **հայերը այդտեղ ոչ մի մեղք չունեն** (ընդգծ. տեքստի), որովհետև նրանք ոչ միայն «չեն գրավել պետական պաշտոնները», այլ զբաղեցնում են շատ աննշան տեղ: Ոչ միայն ռուսները և վրացիները, — շարունակում է Գր. Ջանշինը, — այլ նաև թաթարները երկու անգամ ավելի տեղեր ունեն պետական այն ծառայությունների մեջ, որ առնչվում են ավազակությունների գործերի հետ, քան հայերը» (12, 1897, 11):

«Մշակը» նկատի ունենալով ռուս առաջադեմ մամուլի ու նրա շուրջը համախմբված մտավորականների հայանպաստ գործունեությունը և նրանց կողմից պահպանողական մամուլի ոչ հայանպաստ դիրքորոշման անխնա ու արդարացի քննադատությունը՝ գրում է. «Ինչպես երևում է, ռուսաց մամուլի մի քանի լուրջ օրգանները որոշել են սառը ջուր ածել շովինիստ ու խաւարամիտ լրագիրների գլխին: Այդ օրգանները, — շարունակում է «Մշակը», — «Ռուսսկայա միսլ», «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի» ամեն մի քայլում անխնայ հարուածում են «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի», «Գրաժդանին» և սրանց արժանաւոր արբանեակների որոշ նպատակով գրվող յօդուածները ու ինսինուացիաները հայերի դեմ» (11, 1897, 37): Հողվածի հեղինակը առանձնապես ընդգծում է նշանավոր լրագրող Ա. Ն. Սազոնովի «Վարկային հիմնարկները Կովկասում 1894 թվականին» հոդվածը, որի մասին խոսք եղավ վերևում, որը ջարդ ու փշուր արեց պահպանողական մամուլի կողմից հայերին ներկայացվող կեղծ ու անհիմն մեղադրանքները: Օգտվելով Ա. Ն. Սազոնովի հոդվածում բերված հարուստ տվյալներից, որը ինչպես նշում է հոդվածագիրը, բերված են քննելով Կովկասի թե՛ պետական, թե՛ հասարակական և թե՛ մասնավոր բանկերի և կրեդիտային հաստատությունների կազմակերպությունն ու գործունեությունը, «Մշակը» կատարում է մի քանի կարևոր եզրահանգումներ.

1. Հայերը Կովկասում խոշոր դրամատեր չեն:
2. Հայերի ձեռքին չեն գտնվում բանկերը և վարկատու հաստատությունները:
3. Խոշոր բանկերից է միայն Թիֆլիսի Ակցիոներական բանկը, ուր գերակշռում է հայկական կապիտալը, այն էլ միայն հայերի ձեռքում չի կենտրոնացված (11, 1897, 37):

Այնուհետև «Մշակը» նշում է. «Առաջ բերելով պ. Սազոնովի հիմնաւոր եզրակացութիւնը, մեզ մնում է հարցնել, — ինչ են ցույց տալիս այդ և նրանց նման բազմաթիւ փաստերը, որ ռուսաց մաքուր, անկողմնապահ մամուլը առաջ բերեց. — այն, որ հայատեաց օրգանները իրանց արշաւանքը սկսեցին ոչ թէ որևէ փաստի վրա հիմնված, այլ դրված նախամտածած, անմիտ դիտաւորութիւններից՝ անպատճառ «Հայրենիքը պաշտպանել» գոյութիւն չունեցող թշնամուց»: Հողվածի հեղինակի առավել կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ պահպանողական ուժերի դեմ պայքարում հայ մամուլը որպես պաշտպան ու գաղափարակից իր թիկունքում ունի ռուս առաջադեմ ուժերին (11, 1897, 37):

Հասարակական կյանքում մամուլի վճռական նշանակությունը ընդգծելով՝ ռուս բազմաթիվ բարձր պաշտոնյաներ, մասնավորապես արտաքին գործերի նախարարության աշխատակիցներ, անգամ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ի. Ա. Ջինովկը, Վ. Ն. Լամզոբոֆը կառավարությանն առաջարկում էին Հայկական հարցում հավատարիմ մնալ անցյալի ավանդույթներին, որովհետև ինչպես կենտրոնական, այնպես էլ կովկասյան իշխանությունները նախկինում իրենց գոհունակությունն էին հայտնում Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի հավատարմության ու երախտագիտության համար: Պատահական չէր, որ հայերը օգտվում էին ռուսական կառավարության հովանավորությունից (39, 1905, 11, 229): Սակայն քաղաքական նկատառումների բերումով դարեր շարունակ պաշտոնապես Ռուսաստանին օգտավետ ճանաչված ազգությունը «որ անդամաճան մվիրված է եղել ռուսական պետությանը, — իրավացիորեն շեշտում է «Ռուսսկայա միսլ» — ը հանկարծ ճանաչվեց անցանկալի, նույնիսկ քաղաքականապես անհուսալի, անգամ՝ վտանգավոր» (9, 1896, 11, 115):

Հեռատես պետական գործիչները ցանկալի էին համարում, որ կառավարությունը արգելի մամուլում ոչ հայանպաստ ելույթները (15, ֆ. 560, Ժ. 282, յ. 2): Իսկ հասարակական առաջադիմական ուժերը, նկատի ունենալով Թուրքիայում արևմտահայության թշնամու վիճակը, ամենօրյա զանգվածային ջարդերը, ռուս-անգլիական հակամարտությունների բուռն սրման հետևանքով հայ ժողովրդի ողբերգության ավելի խորացումը, առաջարկում էին կառավարությանը Անգլիայի հետ համատեղ ստիպել սուլթանին, որպեսզի վերջինս բարելավի հայերի վիճակը» (37, 1880, 85): Քաղաքական հեռատեսությամբ օժտված այդ գործիչների ճշմարիտ ու մարդասիրական

խոսքը 90–ական թվականներին անտեսվեց ու արձագանք չգտավ կառավարական ոլորտներում: Գաղութային գիշատիչ քաղաքականություն իրականացնող տերություններից ոչ մեկը երբեք չի ղեկավարվել համամարդկային մարդասիրական գաղափարներով, եթե դրանք իրենց բովանդակությամբ իրենց շահերի ու նկրտումների հետ չեն համընկել: Այդ դեպքում անգամ տերությունների կառավարությունները առաջնությունը տվել են իրենց գերխնդիր շահերին, փոքր ժողովուրդների ճակատագիրը ենթարկել են դրանց իրագործմանը:

Ինչպես բրիտանական կառավարությունը, այնպես էլ ցարիզմը Չայկական հարցում չէին կարող և չէին ցանկանում առաջնորդվել հայ ժողովրդի վիճակի բարելավման հարցով, և այդ խնդրում նրանք համաձայնություն կայացնել չէին կարող: Ուստի Չայկական հարցում ցարիզմի նոր կողմնորոշման աջակիցները պարտադրեցին կառավարությանը արգելելու մամուլում հայամետ հրապարակումները, ինչպես նաև զանգվածային ջարդերից մազապուրծ Ռուսաստանի սահմանն անցած արևմտահայ փախստականներին օգնության կազմակերպումը:

Չայկական հարցում ցարիզմի նոր կողմնորոշման ջերմ պաշտպան, զինվորական գործակալ Պուտյատան Արևմտյան Չայաստանում կատարած շրջագայության վերաբերյալ ներկայացրած զեկուցագրում նշում էր. «Մեզ զարմացնում է ինչպես մեր այն հրապարակախոսների ստորությունը, որոնք թուրքերի «գազանությունների» և «բռնությունների մասին զանազան հերյուրանքներով, ինչպես և արտասահմանյան լրագրերի հոդվածներից, որ գրել են իրենք՝ հայերը, կամ հայերից հսկայական հոնարարներ ստացած լրագրողները հղում կատարելով պղտորում են մեր հասարակական կարծիքը, այնպես էլ մեզ զարմացնում է,– շարունակում է նա,– որ իշխանությունը, որը վաղուց կարող էր վերջ տալ այդ լրագրական ագիտացիային, թույլ է տալիս, որ նա ավելի ու ավելի զարգանա, հուզի և խայտառակ կերպով խաբի Ռուսաստանի հասարակական կարծիքը» (8, Ժ. 3449, յ. 272):

Չայկական հարցում ռուս հասարակությանը ապակոմնորոշելու նպատակով իշխանամետ ուժերը միտումնավոր կերպով այն նույնացնում էին բուլղարական խնդրի հետ՝ զարգացման նույն հեռանկարը վերապահելով արևմտահայերի համար:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ընթացքում հազարավոր ռուս զինվորների կյանքի գնով Ռուսաստանը ազատագրեց բուլղար ժո-

ղովրդին, սակայն արդյունքում շահեց ազատագրված Բուլղարիայի թշնամանքը (16, 1896, 72): Իրադարձությունների հետագա զարգացման ընթացքում Բուլղարիան ղեկավարող քաղաքական–իշխանական կուսակցությունները աստիճանաբար կողմնորոշվեցին դեպի Արևմուտք: Ռուսաստանը ստիպված էր իր բանակը դուրս բերել Բուլղարիայից: Բալկանների վրայով Սև ծովի նեղուցները տանող ճանապարհը Ռուսաստանի դեմ փակվեց (32, 1898, 15–16): Կառավարական շրջաններն ու նրանց ձայնավող լրագրողները միտումնավոր նենգափոխում, ծուռ հայելու մեջ էին ներկայացնում միանգամայն անառարկելի ու բացահայտ այն ճշմարտությունը, որ բուլղարական հարցում ցարիզմի քաղաքականության ձախողումը Ալեքսանդր 3–րդի անհեռատես ու ապաշնորհ դիվանագիտության արդյունք էր (9, 1897, 4, 176):

Արտաքին քաղաքականության բնագավառում ցարական դիվանագիտության ակնհայտ կուպիտ սխալի պատճառով Չայկական հարցը հանիրավի ներկայացվում էր որպես քաղաքական քափության նոխսագ:

Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու խնդրում Անգլիայի ու Ռուսաստանի միջև ծավալվող մրցապայքարում, անշուշտ, երկու կողմերն էլ Չայկական հարցը հարմարեցնելով իրենց շահերին ու նպատակներին, օգտագործում էին որպես միջոց սուլթանի վրա ճնշում գործադրելու և տարածաշրջանում իրենց ազդեցությունը հաստատելու համար, սակայն իշխանամետ մամուլը և հետադեմ ուժերը գտնում էին, որ այդ պայքարում Անգլիան Ռուսաստանի դեմ օգտագործում է Չայկական հարցը՝ նպատակ ունենալով ռուս–թուրքական սահմանի հարևանությամբ Ռուսաստանի համար ստեղծել անապահով վիճակ, Անգլիայի հովանավորությանը ենթակա հայկական տարածքները վերածել արգելապատնեչի Ռուսաստանի՝ դեպի Փոքր Ասիա առաջընթացի ճանապարհին: Հետևաբար, եզրակացնում էին նրանք, Չայկական հարցը Անգլիայի կողմից առաջադրված խնդիր է, որը նա օգտագործում է Ռուսաստանի դեմ պայքարի ընթացքում (6, 1897, 7424): Իշխանամետ ուժերի ձայնավող լրագրողները անգլո–ռուսական հակամարտությունների ոլորտ ներգրաված Չայկական հարցը լավագույնս օգտագործում էին երկրում հասարակայնության մեջ ոչ հայանպաստ տրամադրություններ սերմանելու և արևելահայության նկատմամբ անհանդուրժողականություն բորբոքելու համար (2, 19)՝ գտնելով, որ անգլո–ռուսական հակամարտությունների բորբոքման միակ ու վճռական պատճառը հանդի-

սանում է Հայկական հարցը: Շարունակելով այդ միտքը՝ «Կրեմլ», լրագրի հրատարակիչ պատմության պրոֆ. Դ. Ի. Իլովայսկին ավելացնում էր. «թուրքահայերը, որոնք սահմանակից են մեր Անդրկովկասյան տիրույթներին, կողմնորոշվելով դեպի Անգլիան, կփակեն Ռուսաստանի առաջընթացը դեպի Փոքր Ասիա, ինչպես նաև դեպի Միջերկրական ծով տանող ուղիները» (7, 1897, 25): Հետևաբար, շարունակում էր Դ. Ի. Իլովայսկին. «Եթե անգլիացիները ցանկանում են ու սեր ունեն քրիստոնյաներին ազատագրելու համար կռիվ սկսել օսմանյան պետության դեմ, թող շնորհ անեն պատերազմին ու ազատագրեն» (7, 1897, 25), իսկ Ռուսաստանը նպատակ չունի իր հարևանի հետ վատացնել իր հարաբերությունները (16, 1896, 67), նրան լրացնում էր «Գրաժդանին» լրագիրը: Այսպիսով՝ պահպանողական ուժերը քաղաքականացնում էին ոչ միայն Հայկական հարցը, այլ նաև կովկասահայության հանդեպ ռուս հասարակայնության ունեցած վերաբերմունքը:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ «Ռուսսկայա միսլ»-ը նկատում է, որ հասարակության վերաբերմունքի փոփոխությունը պայմանավորված է քաղաքական շարժառիթներով: «Պետք է նշել, - կարդում ենք «Ռուսսկայա միսլ»-ում, որ ոչ վաղ անցյալում, երբ իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ դեռ փոփոխության չէր ենթարկվել այդպես կտրուկ, նրանք զբաղվում էին քաղաքացիական և զինվորական գործունեությամբ: Եվ ոչ ոք չի կարող վճռական վատաբանել նրանց ծառայողական գործունեության համար»: Սակայն Բեռլինի 1878 թ. պայմանագիրը և չարաբաստիկ 61-րդ հոդվածը հայերի համար դարձան պարբերական հալածանքների պատճառ, հատկապես Թուրքիայում սկսված զանգվածային ջարդերի ժամանակ, երբ Անգլիան ակտիվությամբ հանդես եկավ Հայկական հարցում, անգամ ուժեղացրեց թուրքական ջրերում գտնվող բրիտանական նավատորմը, խորացան ռուս-անգլիական հակամարտությունները, ցարական իշխանությունները և նրանց կամակատար պահպանողական մամուլը ընդգծված անբարյացակամությամբ տրամադրվեցին հայերի հանդեպ (9, 1896, 11, 123):

Իշխանությունների և հետևաբար պահպանողական մամուլի այդ կողմնորոշումը Ա. Ն. Սազոնովը իրավացիորեն պատճառաբանում ու հիմնավորում է ցարիզմի արտաքին քաղաքականության բնագավառում կատարած նոր փոփոխություններով: «Ռուսական կառավարությանը հավատարմությամբ նվիրված ժողովուրդը հանկարծ դիտվում է անցանկալի, նույնիսկ

վտանգավոր: Դիվանագիտությունը, - շարունակում է Ա. Ն. Սազոնովը, - հետապնդելով հատուկ շահեր, ի հակադրություն թուրքական տիրապետության տակ ճնշվող ու շահագործվող քրիստոնյա բնակչության, քրդերին ու թուրքերին ներկայացնում է որպես առաքինի, իսկ հայերին՝ անհնազանդ ու խռովարար: Վերաբերմունքի նման փոփոխությունը պետք է փնտրել քաղաքականության մեջ», - հետևաբար, հայ ժողովրդի ողջ ողբերգությունը, նրա դեմ նյութված չարիքները «բացարձակապես պետք է ծանրանան ժամանակակից դիվանագիտության խղճի վրա» (9, 1897, 12, 117), - եզրակացնում է հրապարակախոսը: Քաղաքական նպատակներով պահպանողական մամուլի օրգանները «նույնիսկ, - նշում է «Նովոյե սլովո» ամսագիրը, - Կ. Պոլսում մահմեդական խուժանը, որը հայերին կոտորում էր նախապես այդ նպատակով պատրաստած մահակներով, նրանց նկատմամբ ցուցաբերում են հատուկ համակրանք (18, 1897, 3, 143): Հողվածի հեղինակը խորամուխ լինելով ցարիզմի արտաքին քաղաքականության մութ ծալքերի մեջ և դատապարտելով նրան հնազանդորեն ծառայող խավարամիտ ուժերին, գրում էր. «Անհրաժեշտ է նկատել, որ վերջին ժամանակներս մի շարք ռուս լրագրեր ցուցաբերում են անսովոր թուրքասիրություն: Դաժանորեն հարձակվում են հայերի վրա, որոնք ցանկանում են ազատագրվել թուրքական լծից»: Քաղաքական նպատակներով այդ լրագրերի թուրքասիրությունը հասել էր այն աստիճանի, որ 1895 թ. հոկտեմբերին Տրապիզոնում տեղի ունեցած կոտորածների մասին եվրոպական լրագրերում եղած առաջին տեղեկությունները թուրքական իշխանություններն ու ռուսական պահպանողական ուժերը հերքում էին կոտորածի եղելությունները և դրանք համարում էին կեղծ ու շինծու: Սակայն երբ Օդեսա ժամանած «Ազով»-ը բերեց այդ ոճիրի առաջին զոհ փախստականներին, ռուս հասարակությունը հասու եղավ կոտորածների քստմնելի իրադարձություններին (19, 1895, 12, 853), որի նկատմամբ չափազանց «անտարբեր էր մնում ռուսական պահպանողական մամուլը: Այդ իրադարձությունները համարում էր կեղծ, հայերի կողմից հորինվածք, «Նովոյե վրեմյայի» կլիկը անհոգի ծաղրով է վերաբերվում մարդկային ողբերգությանը, որին ենթարկվում են թուրքահայերը, - ցավով ընդգծում է «Վոսխոդ» ամսագիրը, - բոլոր նրանք, ում մեջ դեռ չի մեռել մարդկային խղճահարության զգացումը, - շարունակում է լրագրողը, - չի կարող կարդալ առանց սարսափի այն մասին, թե ինչպես մի գիշերվա ընթացքում կոտորվեցին հազարավոր հայեր...» (20, 1895, 11-12, 58-61):

Լրագրողը իրավացի զարմանք է հայտնում, թե ինչպես «Թուրքիայից ստացված նման բազմաթիվ կեղծ ու շինծու, իրականությունը աղավաղող հողվածներ տպագրվում են ռուսական մամուլում... Չնայած թվում էր, թե ռուսական մամուլի համակրանքը պետք է ամբողջությամբ լիներ հայերի կողմը, որովհետև հայ ժողովրդի մի ստվար հատվածը ապրում է Ռուսաստանում: Եվ եթե ռուսահայերի կողմից թուրքահայ իրենց եղբայրների ու քույրերի տանջանքի հանդեպ ցուցաբերած համակրանքը և նրանց օգնելու ձգտումը մեր հայրենակիցների կողմից ճիշտ հասկացվի, ապա հայերը կրկնակի սիրով կկապվեն մեր մեծահոգի հայրենիքի հետ»: Մինչդեռ ռուս հասարակայնությունը լռում էր, երբ մամուլի որոշ օրգաններ անխղճաբար ծաղրում էին մարդկային ողբերգությունը (20, 1895, 11–12, 61):

Ա. Ամֆիտեստրովը, ամենայն խստությամբ դատապարտելով խավարամիտ ուժերին հայ ժողովրդի դեմ ծավալած թշնամանքի համար, իրավացիորեն ընդգծում է, որ հայ ժողովրդի, մասնավորապես կովկասահայության նկատմամբ ստեղծված կանխակալ կարծիքը ձևավորվել է հետադեմ ուժերի կողմից առաջադրված քաղաքական միտումներով, և նրանք հակում ունեն մեղ շրջանակներում առաջադրված այդ մտայնությունը ներկայացնել որպես ողջ Ռուսաստանի հավաքական կողմնորոշում: Ա. Ամֆիտեստրովը, մերժելով նման կեղծ դիրքորոշումը, գտնում է, որ փոքրամասնության միտումնավոր ու անճիշտ կարծիքը, իշխանություն ունեցող ու իշխանությունից օգտվող որոշ խմբավորումների վարքագիծը չի կարելի վերագրել ողջ Ռուսաստանին և նրան մեղադրել հայ ժողովրդի նկատմամբ անբարենպաստ վերաբերմունք ունենալու համար, որը իրավամբ կեղծ է (2, 6): Այս հարցին անդրադառնալով և նկատի ունենալով թուրք ջարդարարներին պաշտպանող հետադեմ ուժերին՝ «Ռուսկայա միսլը» նշում էր. «Կ. Պոլսում, ինչպես նաև Ղազախստանում թուրքական իշխանությունների գազանային ու դաժան կոտորածներին ուղղակի կամ կողմնակիորեն պաշտպանող կառավարությունը ռուս ժողովրդի արժանապատիվ շահերը չի արտահայտում» (9, 1895, 10, 202):

Ա. Ամֆիտեստրովը վճռականորեն տարանջատում էր կառավարող շրջաններին, ցարիզմին և ռուս ժողովրդին, վերջինիս կամքը արտահայտող Ռուսաստանից, որը համակրանքով ու կարեկցանքով էր տոգորված թուրքական իշխանությունների կողմից գազանային կոտորածի ենթարկվող հայ ժողովրդի հանդեպ (2, 8): Նա ցարիզմի այդ էտապում Ղազախստանի հարցում

վարած քաղաքականությունը բնութագրում էր «թողտվություն» խոր իմաստ արտահայտող միակ բառով: Մերկացնելով սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությունը և այդ հարցում ցարիզմի անտարբեր վարքագիծը՝ Ա. Ամֆիտեստրովը արդարացիորեն մերժում էր կոտորածների հարցում հայերին մեղադրելու նրանց տեսակետները: Նա համոզված ընդգծում էր, որ կոտորածները կազմակերպվում ու իրագործվում էին սուլթանական կառավարության կողմից, բանակի ու համիդիե քրդերի ակտիվ մասնակցությամբ: Նա արդարացի էր, պնդելով, որ այդ կոտորածների խնդրում մեղսակից է նաև ցարիզմը (2, 6):

Անդրադառնալով պաշտոնական մամուլի լրատվական միջոցների կողմից կովկասահայության դեմ կատարած բուռն հարձակումներին ու դրանք որակելով չիհիմնավորված ու կեղծ, միաժամանակ նկատի ունենալով արևմտահայության ծանր վիճակը, ղեկավարվելով մարդասիրական բարձր գաղափարներով, նշանավոր հայամետ հրապարակախոս Ա. Կոտովիչը գրում էր. «Ենթադրենք, թե կովկասյան իրադարձությունների խնդրում հայերն ունեն իրենց մեղքի բաժինը, այդ մեզ արդյո՞ք իրավունք է տալիս անտարբերությամբ դիտել, թե սուլթանը ինչպես է կոտորում հայերին, իրագործում Ղազախստանը հայերից դատարկելու իր ծրագիրը... Մենք,– շարունակում է նա,– որպես դավանակից և հարևան պարտավոր ենք համակրանքով ու կարեկցանքով վերաբերվել ու պաշտպանել, սատարել ու օգնություն ցույց տալ նրանց» (3, 1895, 8, 472):

Ա. Կոտովիչի այդ մարդասիրական մղումին ձայնակցելով՝ Ա. Ն. Սազոնովը, խորապես մտահոգված հայ ժողովրդի ճակատագրով ու աշխատելով ցրել ռուս հասարակության սոցիալական որոշ շերտերի կողմից հայերի հանդեպ արմատավորված անբարենպաստ վերաբերմունքը, նշում էր. «Անհրաժեշտ է ուշադիր լինենք, որպեսզի այդ հարցում հատկապես ռուս կրթված մարդը ցրի մեր հասարակության մեջ հայերի մասին վատ կարծիքը, վատ մթնոլորտը և ստեղծի իրական, ճիշտ ու բարի կարծիք» (9, 1896, 12, 110): Իսկ հրապարակախոս Վ. Գոլմստրենը տազնապ էր հնչեցնում ու պահանջում, որ համաշխարհային հանրությունը «իր ձայնը բարձրացնի և պահանջի սուլթանից դադարեցնել արյունալի ջարդերը, պարտադրի փոխհատուցելու հազարավոր անմեղ զոհերի և նրանց ունեցվածքի հափշտակման համար» (21, 170):

Ռուս առաջադեմ մտավորականները, քննադատելով պահպանողական մանուլի միտումնավոր թուրքասիրությունը, նրանց կողմից թուրքական իշխանությունների՝ հայերին մեղադրող կեղծ ու մտացածին հայտարարությունները պաշտպանելու, երկրում հասարակական կարծիքը ապակողմնորոշելու համար, ընդգծելով ռուս ժողովրդի մարդասիրական ու միևնույն ժամանակ իր մեծությանը բնորոշ արժանապատիվ բնավորությունը, գտնում էին, որ ռուս հասարակությունը պարտավոր է ճիշտ կողմնորոշվել իրադարձությունների հորձանուտում և թույլ չտալ «կառավարությանը ուղղակի կամ անուղղակի պաշտպանելու թուրքական իշխանությունների վայրի ու դաժան կամայականությունները Չայաստանում» (9, 1895, 10, 202):

Պաշտոնական լրատվության միջոցների քարոզչական կեղծիքի հետևանքով խիստ դժվարանում էր փախստական հայերին ռուս ժողովրդի կողմից անհրաժեշտ նյութական ու բարոյական օգնության կազմակերպման գործը, ինչպես և երկրում հայամետ հասարակական կարծիքի ձևավորման խնդիրը: «Մեզ մոտ վերջին տարիներին,– նշում էր «Ռուսակայա միսլը»,– նկատվում է լրիվ անտարբերություն: Ո՛չ հայկական կոտորածները և ո՛չ էլ եվրոպական դիվանագետների թույլ տված սխալները չեն հուզում մեր հասարակությանը և նրանում չառաջացրին թշվառության մեջ հայտնված քրիստոնյա բնակչության նկատմամբ սովորական համակրանք: Մեր,– շարունակում է ամսագիրը,– նույնիսկ ամենահայրենասիրական լրագրերը սթափ վիճակում դատողություններ էին անում այնպես, կարծես թե որպես պահեստի դիվանագետներ քննարկում էին Օսմանյան կայսրության ամբողջականության պաշտպանության հարցը»: Շարունակելով իր մտորումները Չայկական հարցի ու արևելահայության հանդեպ իշխանությունների, ինչպես նաև ռուս հասարակության վերաբերմունքի փոփոխության մասին՝ գրում էր. «Վերջին տարիների ընթացքում ամենատարբեր որակի բազում պատճառներ, զանազան մակարդակի դատողություններ պայմանավորեցին հայերի հանդեպ ռուս հասարակության ուշադրության թուլացումը և կառավարական շրջանների ակտիվ աջակցությամբ հայերի նկատմամբ ստեղծեցին անբարենպաստ ուղղվածություն» (9, 1896, 11, 110):

Պահպանողական մամուլը երկրում ստեղծված այդ անբարենպաստ ուղղվածությունը ավելի էր խորացնում, և կարծելով, թե «դրանով օգնում է կառավարությանն ու հայրենիքին», ավելի էր կոշտացնում իր վերաբերմունքը կովկասահայության նկատմամբ, հաճախակի այն արտահայտվում

էր «ավելի կոպիտ ու թշնամաբար» (10, 1897, 75): «Չարկ է նշել,– գրում էր Ա. Ն. Սազոնովը,– որ մեր անժայռածիր կայսրության բոլոր նահանգներում ապրող ժողովուրդներից ոչ մեկին հարկ չեղավ ենթարկվելու հասարակական կարծիքի հանդիմանությանը այնքան, որքան դժբախտ հայերի» (9, 1896, 11, 110):

Ըստ նրա՝ ռուսական կառավարության, ինչպես նաև հասարակական որոշ սոցիալական շերտերի, պահպանողական ու հետադեմ ուժերի կովկասահայության և Չայկական հարցում վերաբերմունքի փոփոխության հիմնական պատճառը, իրոք, արտաքին քաղաքականությամբ էր պայմանավորված: Ինչպես արդարացիորեն Ա. Ամֆիտեատրովը էր նշում, հայ ժողովուրդը հայտնվել էր երկու ջրաղացքարերի արանքում (2, 187) և հանիրավի ճգնվում էր՝ դառնալով սուլթանական կառավարության հայասպան քաղաքականության և ցարիզմի Մերձավոր Արևելքում որոշակի շահերի և հետաքրքրությունների զոհը:

Կովկասահայության հանդեպ հասարակական կարծիքի անբարենպաստ լինելու խնդրում քիչ դեր չէին խաղում նաև տնտեսական ու ազգային հանգամանքները, մասնավորապես ազգայնական կրքերը, որոնք առավել սրությամբ արտահայտվում էին Կովկասում, ուր ավելի սուր ու խորքային էին դրսևորվում ցարիզմի գաղութային ու այլալեզու ազգերի համառուսականացման քաղաքականության ու ցարական բյուրոկրատիայի կամայականությունները: Ցարական իշխանությունները երկրում ծայր առած ազգային ազատագրական ժողովրդական շարժումների դեմ մղած պայքարի ընթացքում առանձնահատուկ ուշադրությամբ էին հետևում Թուրքիայում համիդյան կոտորածներից մազապուրծ Ռուսաստանի սահմանն անցած փախստական արևմտահայերին, որոնք ներկայացվում էին որպես հեղափոխականներ, կովկասյան տարածքները հեղափոխական գաղափարներով վարակող տարրեր, նրանց հետ միասին ռուսահպատակ արևելահայերը ևս հայտարարվեցին կայսրության համար անհուսալի: Իշխանությունների նման վերաբերմունքը նկատի ունենալով՝ Ա. Ամֆիտեատրովը արդարացիորեն նշում էր, որ երկար ժամանակ հայերը հանդիսանում էին կայսրության ամենահավատարիմ հպատակները, այժմ «դիտվեցին անբարեհույս»: Ռուսական բյուրոկրատիան պայքար մղելով կովկասահայության դեմ՝ օբյեկտիվորեն, իրենից անկախ դարձավ սուլթան Չամիդի գործակիցը՝ մեծ վնաս պատճառելով ռուսական հեղինակությանը Փոքր Ասիայում: «Ռուսա-

կան բյուրոկրատիան, – գրում է Ա. Ամֆիտեատրովը, – ընդդեմ կովկասահայության զինված դաժան միջոցներով հանկարծակի դաշինքի մեջ հայտնվեց թուրքերի հետ, որը շատ արդյունավետ էր սուլթանի համար, իսկ Փոքր Ասիայում ռուսական զործի համար կործանարար արժեք ունեցավ»: Ա. Ամֆիտեատրովը չի բացառում, որ կովկասահայության նկատմամբ ռուսական բյուրոկրատիայի վերաբերմունքի փոփոխության հիմքում արտահայտվել է Աբդուլ Չամիդի պանիսլամիզմի գաղափարախոսության պրոպագանդիստների գործունեությունը, քանի որ «պանիսլամիզմի քաղաքականության պրոպագանդան, – գրում է նա, – որում կրոնական մոլեռանդությունը ոչ թե զենք է, այլ նպատակ, Կ. Պոլսից դեպի Անդրկովկաս Փոքր Ասիայի վրայով տարածվում է անընդհատ հոսքով արդեն շատ վաղուց» (2, 188): Եվ պատահական չէ, որ այդ ընթացքում ռուսական բյուրոկրատիան կովկասում իր գործունեության հենարանը դարձրեց մահմեդական վերնախավին, որը հայտնվելով նպաստավոր վիճակում, խրախուսված իշխանությունների կողմից, ենթարկվելով համիդյան պանիսլամիզմի քարոզչությանը, հակահայկական լայնամասշտաբ գործունեություն ծավալեց:

Կովկասահայության հանդեպ ռուսական բյուրոկրատիայի և այլացեղ ազգերի անթաքույց անբարյացկամությունը որոշակի իմաստով պայմանավորված էր նաև հայ ժողովրդի ձեռներեցությունն ու աշխատասիրությունը, կառուցապատման ու շենացման, կրթության և գիտության նկատմամբ ունեցած անհագ ու անսովոր ձգտումը, որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում ստեղծում էր իր համար հանձնատաբար բարեկեցիկ կյանք: «Չայերին հատուկ է լուսավորության նկատմամբ անհագ ձգտումը և բնատուր օժտվածությունը, – գրում է Գ. Ա. Եվրեինովը, – գործարար հատկանիշներով ու տքնաջան աշխատանքով ստեղծված բարեկեցությունը նրանց առջև ճանապարհ է բացում մտավոր աշխատանքի բոլոր բնագավառները մուտք գործելու, և մանավանդ նրանք հայտնի են որպես լավ մասնագետներ» (23, 115): Եվ այդ հանգամանքը օտար միջավայրում հայերի դեմ հարուցում էր այլազգի անձանց անբարյացկամությունը: Մանավանդ, որ ճակատագրի բերումով հայ մտավորականները, արհեստավորները, ձեռներեց ու գործույնյա տարրը առավելապես հաստատվում էր իր պատմական հայրենիքից դուրս, ոչ միայն կովկասյան արեալում, այլ նաև ռուսական կայսրության ներքին նահանգներում: Անշուշտ, նման մթնոլորտի ձևավորմանը նպաստում էր նաև այն, որ ռուսական բազմաթիվ քաղաքներ ողո-

ղած արևմտահայ փախստականները, մանավանդ մանր առևտրով զբաղվող առևտրականները, առանձնապես այդ բնույթի առևտրին համապատասխան ղեկավարվելով ինքնապաշտպանական բնազդներով, առաջացնում էին ռուս բնակչության հակակրանքը: «Իր հայրենիքից կտրված ու ինքնապաշտպանական բնազդներով ղեկավարվող, մանր առևտրով զբաղվող հայերի գործունեությունը, – գրում է նա, – տարիների ընթացքում ռուս հասարակության մեջ առաջացրել էր արհամարհանքի ու ատելության զգացում գծուծ ու խորամանկ այդ առևտրական մասսայի նկատմամբ» (9, 1896, 11, 113): Եվ ինչ է նկատում «Արարատը»՝ նշելով. «Նրանք սովոր են կարծել, մինչև անգամ և մամուլի մեջ հաստատել, թե հայերը գրեթե ամբողջովին պորտաբույծներ են և պարապում են դիւրին և արդիւնավետ առևտրով և վաշխառութեամբ» (24, 1897, 11–12, 491): Եվ այդ բացասական հատկանիշները վերագրվում էին ողջ հայ ժողովրդին, իսկ իշխանությունները ռուս հասարակության մեջ արմատավորված, տնտեսական բովանդակություն ունեցող բնութագրմանը հաղորդում էին քաղաքական իմաստ, շահարկելով ռուս հասարակության այդ վերաբերմունքը, ցանկանում էին երկրում ձևավորել անբարենպաստ հասարակական կարծիք: Ա. Ն. Սազոնովը, մերժելով պաշտոնական շրջանների անբարենպաստ կարծիքը հայերի մասին, քննադատելով նրանց միտումնավոր և կեղծ բնորոշումները, նշում էր. «Մեր իրապարակախոսության հիվանդագին կողմն այն է, որ մոռացության է մատնել մեզ հետ ընդհանուր կյանքով, խոր երախտագիտությամբ ու փորձով հաստատված հավատարմությամբ մեզ հետ կապված ազգի լուսավոր կողմերը...»: Չայ ժողովրդին բնութագրում են առանձին անհատներին հատուկ բնավորության բացասական գծերով: Նա մատնանշում է մեկ այլ հանգամանք, որը որոշակիորեն նպաստել է հայերի դեմ անբարյացկամության ստեղծմանը: Ըստ նրա՝ շատ նշանավոր հայեր Ռուսաստանում զբաղեցնելով բարձր պաշտոններ իրենց ցեղակիցների նկատմամբ ցուցաբերել են արհամարհանք (9, 1896, 11, 113), որը փոխանցվում էր նաև շրջապատի անձանց հարաբերության վրա: Չնարավոր է նման ենթադրությունը, բայց այն որակ կազմել էր կարող:

Երկրում հայ ժողովրդի հանդեպ ձևավորված անբարյացկամության համար այդ փուլում որոշակի դեր ունեցավ Անգլիայի կեղծ հայասիրական դիրքորոշումը, ցույց տալով, թե «իբր պատրաստ է օգնել հայերին» (25, 1895, 189), որի համար էլ պահպանողական ուժերը հայերին մեղադրում

էին Անգլիային համակրելու, նրա քաղաքական շահերը պաշտպանելու մեջ: Անգլիական դիվանագիտության այդ շահադիտական ու ցուցադրական վարքագիծը առաջացնում էր «ցարական կառավարական կլիկի անսքող թշնամանքը հայկական բարենորոգումների ծրագրի», այնպես էլ կովկասահայության դեմ (26, 1896, 7, 353):

Քննարկելով ռուս-անգլիական հակամարտությունները և մերժելով պահպանողական մամուլի հայերին անգլիամետության համար ներկայացված մեղադրանքները՝ լրագրողն ընդգծում է, որ «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրի հարձակման թիրախ հայկական մամուլը «նկատելով, որ արտասահմանյան հայ երիտասարդության համակրությունը հակվում է դեպի Անգլիան, պարբերաբար պախարակում է նրանց, համարելով այդ մոտեցումը վերին աստիճանի վնասակար Հայկական հարցի լուծման համար», և անկախ ցարիզմի վերաբերմունքից «Ամեն մի օրինավոր հայ, լինի նա գյուղացի, թե մտավորական ոչ միայն ճանաչում է, այլև խորապես համոզված է, որ ինքն ապրում է քրիստոնյա պետության մեջ, որը կառավարվում է որոշ օրենքներով, որոնց առաջ հավասար են ցարի բոլոր հպատակները, որ նա ռուսական պետության ընդհանուր ընտանիքի համահավասար իրավունքներից օգտվող անդամն է»: Հայ ժողովրդին պաշտպանելով խավարամիտ մամուլի հարձակումներից և այդ հարձակումները դիտելով անտեղի ու ոչ հիմնավոր, հեղինակը անկեղծ զայրությով ավելացնում է. «Չափազանց ծանր և ցավալի է տեսնել, թե ինչպես մի քանի անկոչ դատավորներ այնքան ծանր մեղադրանքներ են չարտում մի ամբողջ ազգի երեսին, չունենալով ոչ մի փաստ, ոչ էլ նույնիսկ որևէ խախուտ հենարան» (13, 1897, 166):

Կովկասահայության դեմ հարձակումներն ավելի ուժեղացան Կովկասում Գոլիցինի իշխանավարության տարիներին, որի ընթացքում կովկասահայությունն ապրեց ծանր, տազմապներով լեցուն ժամանակաշրջան: Գոլիցինը, ցանկանալով Կովկասը «խաղաղեցնել» համառուսականացման ճանապարհով, թուլացնել ու վերացնել այդ տարածաշրջանում հայկական տարրի առաջնային դերը, հարվածը ուղղեց հայկական ծխական դպրոցների դեմ՝ անհանգստացած, որ «հայ եկեղեցական ծխական դպրոցները ազգային ինքնագիտակցության արմատավորողներն են հայկական «սեպարատիզմի և հեղափոխության» օջախները» (85, 396): Հայ ժողովրդի դեմ հարձակումները ավելի ուժեղացան, երբ համիդյան կոտորածներից մազապուրծ Անդրկովկաս ներթափանցած փախստականների հոսքը ստվարա-

ցավ: Փախստականներից շատերը, անշուշտ, իրենց հետ բերում էին համիդյան բռնությունների դեմ ծավալած ազատագրական պայքարի շունչը, որով, բնականաբար, տարվում էին նաև կովկասահայերը (27, 314): «Աստիճանաբար Կովկասում խառնակչությունը (հեղափոխական շարժումները – Պ. Ս.) ուժեղացավ, – գրում է Յու. Ս. Վիտտեն, – այնպես որ շատերն ասում էին՝ հարկ է Կովկասը նորից նվաճել և երկրամասում հաստատել խաղաղություն»: Ստեղծված այդ վիճակի համար իշխանություններն առավելապես մեղադրում էին հայերին: Երկրամասում կարգը վերահաստատելու և խաղաղության պաշտպանության նպատակով կառավարչապետ իշխան Գոլիցինը, որը ժամանել էր այստեղ՝ ունենալով տեղական ժողովուրդներին ռուսիֆիկացնելու ծրագիր, «այն իրականացրեց կրքոտությամբ ու իրեն հատուկ խառնակչությամբ»: Ամենածանր հարվածն իրենց վրա կրեցին հայերը, քանի որ ինչպես նշում է Վիտտեն, «հայերը հանդիսանում էին Կովկասում առևտրականներ, հետևաբար նրանք հանդես էին գալիս որպես շահագործողներ», նա վճռական հարվածն ուղղեց հայկական եկեղեցու դեմ: «Հայերին սանձելու նպատակով, – գրում է Յու. Ս. Վիտտեն, – իշխան Գոլիցինը որոշեց բռնագրավել հայկական եկեղեցիների ունեցվածքը: Հայերի համար եկեղեցին կենդանի ուժ է, այն կյանքի ոգին է, նրանում ամփոփված է ազգի բարեգործությունն ու բարեկրթությունը» (27, 115): Այդ հարցը լուծելու համար կառավարչապետի զեկուցման հիման վրա հրավիրվում է խորհրդակցություն Է. Վ. Ֆիշի նախագահությամբ, մասնակցում էին Պորեդոնոսցովը, արտգործնախարար կոմս Մուրավյովը, արդարադատության նախարար Սիայազինը, իշխան Գոլիցինը և Յու. Ս. Վիտտեն:

«Ես ամենավճռական կերպով հակադրվեցի, – գրում է Յու. Ս. Վիտտեն, – այդ անօրինական գործարքին, ինչպես քաղաքական, այնպես էլ էթիկական տեսակետով: Քաղաքական առումով այդ միջոցառումը ոչ միայն ռուսահպատակ, այլ նաև ողջ արտասահմանյան հայերին կմղեր ապստամբության: Էթիկական առումով, – շարունակում է նա, – հայերը նույնպես քրիստոնյա են, ինչպես մենք և նրանց եկեղեցին շատ մոտ է մեր ուղղափառ եկեղեցուն»: Հարցի քննարկումը մնաց բաց: Որոշումը չընդունվեց (27, 316): Սակայն Վ. Կ. Պլևեի ներքին գործոց մինիստր նշանակվելուց հետո հարցը քննարկվեց մինիստրների խորհրդում, ուր Յու. Ս. Վիտտեն կրկին դեմ արտահայտվեց հայկական եկեղեցու գույքի բռնագրավմանը, սակայն Նիկոլայ 2–րդ կայսեր անմիջական ցուցումով Գոլիցինը 1896 թ. ձեռնարկեց և իրա-

գործեց այդ միջոցառումը, որը «վերջնականապես ավելոծեց հայերին» (27, 316), որովհետև այդ օրենքով փակվում էին հայկական ծխական–եկեղեցական դպրոցները: Կովկասահայությունը լուռ ու հանգիստ չտարավ մեծան հրավիճակը, ընդվզեց իշխանությունների այդ անօրինական գործողությունների դեմ: Կառավարության այդ որոշումը լայնորեն քննարկվեց մամուլում: Նրան անդրադարձան ինչպես առաջադիմական, այնպես էլ իշխանամետ հետադեմ մամուլի օրգանները: «Պրիագովսկի կրայ» լրագիրը 1897 թ. հունիսի 2–ին եկեղեցական–ծխական դպրոցների մասին ընդունած օրենսդրության մասին խոսում է գովեստով: «Չայկական եկեղեցական դպրոցները մոր օրենքով ենթարկվում են լուսավորության միևնույնությանը: Այդ դպրոցների վրա,– նշում է լրագիրը,– տարածվում է ժողովրդական դպրոցների տնօրենների հսկողությունը, ինչպիսին նա ունի իր իրավասության տակ գտնվող մյուս դպրոցների նկատմամբ» (116): Չեղինակը, նկատի ունենալով դպրոցներում միասնական ծրագրերի ընդունումը և տնօրինության հսկողությունը, կարծում է, թե «Չայկական դպրոցները միայն օգուտ կստանան ենթարկվելով միասնական հսկողության: Կլավանա և կկարգավորվի ուսումնական գործընթացը, որը մինչ այդ թողնված էր ճակատագրի կամքին» (29, 1898, 171): Լրագրողը, հարցը քննարկելով ռուսական պետության ընդհանուր շահերից ու նաև առանձին ազգերի լեզվի ու կուլտուրայի բնագավառները համառուսական մշակույթի մեջ ներգրավելու տեսակետից, նշում է. «Ժողովրդական կրթության միևնույնությունը դպրոցների տնօրինության միջոցով հսկում է դպրոցների ուսումնական գործընթացը, առանձին ուշադրություն դարձնելով ռուսաց լեզվի դասավանդման վրա, կարող են հասնել ամենալավ արդյունքի նաև ազգային լեզուների ուսուցման բնագավառում...» (29, 1898, 171):

Գոլիցինյան ռուսիֆիկացման քաղաքականությունը պաշտպանեցին «Նովոյե վրեմյա», «Գրաժդանին», «Կավկազ» լրագրերը:

«Նովոյե վրեմյա»–ն օգտվելով ստեղծված իրավիճակից՝ կոշտացրեց իր տոնը հայերի հանդեպ: «Ճշմարտությունը հայկական ծխական դպրոցների փակման մասին» հոդվածում ընդգծում էր, որ պետությունը կարող է թույլ տալ իր այլացեղ քաղաքացիներին ազատ դավանելու իրավունք ունենալ՝ չճնշելով նրանց առանձին ծեսերն ու սովորությունները, եթե դրանք չեն խախտում կարգն ու ապահովությունը, չեն հակադրվում բարեկարգության հիմնական պահանջներին (6, 1897, 2745): Իսկ «Կավկազ» լրագիրը հայկա-

կան եկեղեցին ու դպրոցները դիտում էր «Չեղափոխության ու մտքերը պղտորող օջախներ», ողջունում էր վերջիններս փակելու մասին կառավարության որոշումը (28, 1897, 127): «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը 1897 թ. հոկտեմբերի 15–ի առաջնորդում հակադրվելով հայկական ծխական–եկեղեցական դպրոցների փակման որոշմանն ու սուր քննադատության ենթարկելով կառավարությանը ծառայամտությամբ ենթակա «Նովոյե վրեմյա» և «Կավկազ» լրագրերի շուրջը համախմբված լրագրողներին, որոնք մշտապես պաշտպանում էին «Պետության ծայրամասերում իշխանությունների համառուսականացման այլացեղ ու այլադավան ժողովուրդների ինքնության վերացման քաղաքականությունը,– որը համգում էր այն բանին, «որպեսզի ամեն ինչ խառնեն իրար ու ստեղծեն խառնակ վիճակ, որպեսզի պղտոր ջրում որս կատարեն, անեն այն, ինչ իրենց շահավետ է այդ պահին ... Այս դասական ձևակերպումը ինքնըստինքյան խոսում է այն մասին, թե ով է գրում, և ինչ է նրա հետին նպատակը» (13, 1896, 341),– նշում է լրագրողը:

Այսպիսով՝ իշխանամետ պահպանողական մամուլի շուրջը համախմբված խավարամիտ ուժերը՝ ցարիզմի արտաքին քաղաքականության պաշտպաններն ու մասսայականացնողները, աշխատելով ձևախեղել Չայկական հարցի բովանդակությունը, այն ներկայացնելով ծուռ հայելու մեջ, ձգտում էին երկրում ստեղծել ոչ հայանպաստ հասարակական կարծիք ու դրանով բացատրել կառավարության արտաքին քաղաքականության բնագավառում, մասնավորապես մերձավորարևելյան խնդրում կատարված տեղաշարժերը, բուռն գրոհ ծավալեցին կովկասահայության դեմ:

Ընդդեմ այդ ուժերի, ռուս առաջադեմ մտավորականները իրենց հայանպաստ գործունեությամբ դիմագրավում էին նրանց հարձակումները և պայմաններ նախապատրաստում հայանպաստ հասարակական կարծիքի ստեղծման համար:

## **2. Ռուս առաջադեմ մամուլի և հրապարակախոսության դերը հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման գործում**

Չայ ժողովրդի դեմ կազմակերպված վճռական գրոհի ընթացքում իշխանամետ ու պահպանողական ուժերը, օգտվելով թուրքական հակահայկական քարոզչամիջոցների զինանոցից կյանքի կոչեցին ու լայն հասարակա-

նության դատին հանձնեցին հայ ժողովրդին մեղադրելու, անվանարկելու, նրա հանդեպ ռուս ժողովրդի անբարյացակամությունն ու ատելությունը հարուցելու միտումով ստեղծված «Հայկական անջատողականության» մասին կեղծ ու ստահող մտացածին վարկածը:

Ցարիզմի կամակատար խավարամիտ լրագրողների կողմից քաղաքական միտումով, առանց փաստական հիմնավորման պաշտոնական մամուլին հանձնած այդ տեսությունը ծավալվելով հայ ժողովրդի համար վտանգավոր հակասական ուղղվածություն էր ընդունում, որի պատճառով խոչընդոտներ էր հարուցվում երկրում արդեն սկիզբ առած արևմտահայ փախստականներին նյութական ու բարոյական օգնության գործընթացի ծավալմանը (13, 1896, 341): «Մոսկովսկիե վեդոմոստի», «Գրաժդանին», «Կրեմլ», «Նովոյե վրեմյա» լրագրերը միաբանված մեկ ընդհանուր գաղափարի շուրջ կովկասահայությանը մեղադրում էին՝ անվանելով հեղափոխական անջատողական: Ըստ նրանց՝ հայերը, ծավալելով հակապետական քարոզչություն, ցանկանում են վերականգնել «Մեծ Հայաստան» պետությունը, որը իր սահմանների մեջ ներառելով արմատական ռուսական տարածքները, ձգվում էր մինչև Դոնի Ռոստով (4): Վարկածի քաղաքական միտումը պարզ է ու հստակ:

Ի դեպ մեկ անգամ չէ, որ ծագումով թուրքական ու ցարական վառարաններում վերաթրծված այդ ստահող կարծիքը հայ ժողովրդի թշնամիները իրենց քաղաքական շահը առաջ մղելով՝ պատեհ առիթը նկատի ունենալով այն ուղղել են հայ ժողովրդի դեմ: Այդ կերպ նրանք ցանկանում էին խաթարել ու պղտորել հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության զուլալ ակնաղբյուրը: Սակայն ամեն անգամ իրավացի, արդար ու վճռական հակահարված են ստացել հայ մտավորականների, ինչպես նաև հայ ժողովրդի ազնիվ ու ճշմարիտ բարեկամների կողմից:

Պահպանողական մամուլի օրգանների շուրջը համախմբված մտավորականները, կատարելով իրենց տերերի պատվերը, ճգնում էին հիմնավորել, որ Կովկասում տեղի ունեցող բոլոր անկարգությունների համար մեղավոր են հայերը, որովհետև նրանք հեղափոխական ու խոտոր ազգ են: «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագիրը մեղադրում էր հայերին, որ նրանք «լեհերի օրինակով սկսել են երազել ինքնավար Հայաստանի մասին, և այդ գաղափարը քարոզում են Կովկասի հայկական բոլոր եկեղեցիներում ու դպրոցներում» (5, 1896, 56): Իսկ «Նովոյե վրեմյան» ավելի էր խորացնում հայերի

երևակայական հանցանքը, որը ուղղված էր ռուսական շահերի ու ռուս ժողովրդի ամենասուրբ զգացմունքի, հայրենիքի ու նրա տարածքների դեմ: Ըստ նրա՝ հայերը զավթելով ռուսական արմատական հողատարածքները, սպառնում են Ռուսաստանի ամբողջականությանը և նպատակ ունեն Արաքսից մինչև Դոն գետը ընկած երկրամասում հիմնել «Մեծ Հայաստան» ինքնուրույն պետություն (6, 1896, 7069):

«Կավկազ» լրագրի աշխատակից Վ. Գունիան, հետևելով մայրաքաղաքային պահպանողական մամուլին և լարելով իր երևակայությունը, ավելի նյութական է դարձնում հայերին վերագրվող անջատողականության գաղափարը: «Հայերի մեջ,– գրում է Վ. Գունիան,– գոյություն ունի «ժոգո» անվամբ մի խմբակ: Նա իր ցանցը տարածել է Մոսկվա, Խարկով, Օդեսա, Ռոստով, Թիֆլիս, Բագու քաղաքներում, ինչպես նաև արտասահմանում, Մարսելում, Կ. Պոլսում և Լոնդոնում: Նրա նպատակն է,– շարունակում է նա,– ստեղծել հայկական թագավորություն, որը կտարածվի Արաքսի ափերից մինչև Դոնի Ռոստով, Իմերեթիայից մինչև Բագու» (5, 1897, 253):

Պահպանողական մամուլի այդ հերյուրանքները Ա. Ն. Սազոնովը իրավացիորեն անվանում է լրագրողի կարճամտության ու հիվանդագին երևակայության արդյունք, «անմիտ զառանցանք, խավարամիտ լրագրողի հորինվածք, սարսափելի կեղծիք» (20, 9, 1896, 11, 122):

Բացահայտելով կովկասահայությանը պահպանողական մամուլի ու հետադեմ ուժերի կողմից ներկայացվող անհիմն մեղադրանքների միտումնավորությունը՝ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրում «Կրկին հայերի մասին» խորագիրը կրող հոդվածով հրապարակախոս Վ. Գոլմստերենը անդրադառնում է «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրի «Ռուսահայերը» հոդվածի՝ հայերին վերագրվող անհեթեթ մեղադրանքների խնդրին, որում կովկասահայերը մեղադրվում են հակապետական գաղափարներ քարոզելու համար: Մինչդեռ այդ հերյուրանքները «մի քանի թղթակիցների վառ երևակայության արդյունք են,– գրում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,– որոնք աշխատում են ամեն կերպ ստվեր գցել մի ամբողջ ազգի համբավի վրա, որը մինչև այժմ ոչ մի բանի մեջ իրեն չի արատավորել»: Լրագրողը լավատեղյակ լինելով հայկական մամուլի հրապարակումներին՝ իրավացիորեն հարց է առաջադրում իր ընդդիմախոսին. «Ո՞ր հայ լրագրերում և ո՞ր էջերում է արտահայտվում հայերի հակապետական կեցվածքը» և ինքն էլ անկեղծաբար պատասխանում է. «Ես իբրև հայ մամուլի ուղղության ծանոթ

մարդ,— գրում է նա,— ձեռքս սրտիս դրած, բոլորովին անկեղծաբար կարող եմ ասել, որ հայկական մամուլը Ռուսաստանում երբեք օրինականության սահմաններից դուրս չի եկել: Նա միշտ աշխատել է ու աշխատում է ռուսահայերի կյանքի մեջ մտցնել ռուսական մշակույթի ու քաղաքացիական ազդեցությունը» (13, 1897, 166):

Հետադեմ ուժերի նման հարձակումները դիմագրավելու և նրանց հակահայկական հայացքների կեղծ ու նենգամիտ բովանդակությունը հասարակայնության լայն շրջաններին հասկանալի դարձնելու նպատակով հայաստանում լայն գործունեություն ծավալեց առաջադիմական մամուլը, որի լրատվական օրգանների, մասնավորապես «Նեղեյա», «Ռուսկայա միսլ», «Ռուսկիե վեդոմոստի», ինչպես նաև պահպանողական «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրերի էջերից հայկական թեման չէր իջնում:

Քննադատելով պահպանողական մամուլի հասարակական կարծիքը ապակողմնորոշող այդ նկրտումները՝ «Ռուսկայա միսլը» նշում էր. «Բարեբախտաբար համաշխարհային հարցերը լուծում են ոչ նման լրագրերն ու լրագրողները, որոնք ոչ միայն հայկական, այլև մյուս բոլոր հարցերին նայում են մակերեսայնորեն, չիմանալով դրա էության մասին...» (9, 1896, 11, 117):

Ի հակադրություն իշխանամետ ու հետադեմ ուժերի՝ ռուս առաջադեմ մտավորականները ինքնուրույն թագավորության ստեղծման բաղձանքը իրավացիորեն համարում էին ազգային պետականությունը կորցրած յուրաքանչյուր ժողովրդի, մասնավոր թուրքական դարավոր լծի տակ կքած հայ ժողովրդի համար նրա լուսավոր ապագայի երազանքը, որը ինքնըստինքյան բնական ու առաջադիմական ձգտում է, սակայն այդ պահին ինչպես արևելահայերը, այնպես էլ համիդյան արյունոտ կոտորածներին ենթակա արևմտահայերը ինքնուրույն պետության ստեղծման մասին երազել անգամ չէին կարող: Արևմտահայերի միակ ցանկությունն էր կյանքի ու գույքի ապահովության հաստատումը, գերագույն նպատակը՝ Ռուսաստանի հովանու ներքո արևելահայության հետ վերամիավորումը (9, 1897, 7, 170): «Սինչև Դոնի—Ռոստով» հայկական պետության ստեղծման վարկածն այնքան կեղծ էր ու անհիմն, որ նույնիսկ ցարական բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ ստիպված էին մերժել նման մեղադրանքները (30, 1916, 141):

Կովկասի նախկին փոխարքա Ի. Ի. Վորոնցով—Դաշկովը, որը քաջ ծանոթ էր կովկասահայության պատմությանն ու սովորություններին, հայերի

ձգտումներին ու նպատակներին, իր «Հուշերում» անդրադառնալով այդ խնդրին՝ արդարացիորեն ընդգծում է, որ հայերին հակապետականության ու անջատողականության վերագրումը հետևանք է «տիպա ուղեղների կողմից ստեղծված լեգենդի» (30, 1916, 9, 143):

Հայկական անջատողականության մասին պահպանողական մամուլի բարձրացրած աղմկահարույց կեղծիքը պարզելու, Կովկասում հայկական դպրոցների փակման հետևանքով տեղի ունեցած հուզումների պատճառները հետաքննելու և ճշմարտությունը բացահայտելու նպատակով է. է. Ուխտոմսկին ու այլադավան ժողովուրդների կրոնական գործերի բաժնի (դեպարտամենտի) ղեկավար Պ. Մասլովը գործուղվեցին Անդրկովկաս: Ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ «Կովկասում հայկական հուզումներ, ինչպես նաև անջատողականություն, գոյություն չունեն» (39, 1905, 11, 234):

«Հայկական անջատողականություն գոյություն չունի, այն ըստ երևույթին մենք ստեղծեցինք»,— գրում էր Ի. Ի. Վորոնցով—Դաշկովը, իսկ «այսպես կոչված հայկական հուզումները,— շարունակում է նա,— տեղի ունեցան իշխանությունների կողմից հայկական եկեղեցական գույքի բռնագրավման հետևանքով: Որովհետև, նշում էր նա. «հայերին անջատողականության ու հակապետական գործունեության մեջ մեղադրելու բոլոր փորձերը մերժվում են փաստական տվյալներով, որոնք ապացուցում են հակառակը՝ հայերը անսասան հավատով նվիրված են Ռուսաստանին»: Գիշտ գնահատելով տվյալ ժամանակաշրջանում հայ ժողովրդի ազատության ձգտման դրական հնարավորությունները ու նկատի ունենալով նրա կողմնորոշումը, նա ընդգծում էր. «Ոչ միայն ռուսահայերը չեն ձգտում անջատվել Ռուսաստանից, այլ նաև թուրքահայերը կտրականապես ցանկանում են անցնել Ռուսաստանի հովանու տակ»: Բարձրաստիճան պաշտոնյան, նկատի ունենալով Ռուսաստանի քաղաքական շահերը, որը, ինչ խոսք, համահունչ էր նաև հայ ժողովրդի ազատագրական բաղձանքներին, գտնում էր, որ արևմտահայերի այդ ցանկությանը Ռուսաստանը պետք է ընդառաջ գնա, քանի որ հայերը, բացի Ռուսաստանից, այլ իրական օգնական ուժ չեն տեսնում, որի համար էլ «հայերի հայացքը ուղղված է դեպի Ռուսաստան ու նրա նկատմամբ լցված են մեծ համակրանքով ու հավատով» (30, 1916, 9, 142),— եզրակացնում էր Ի. Ի. Վորոնցով—Դաշկովը: Հայ ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած ձգտման հավատի ու նվիրվածության մասին Ա. Ն. Սազոնո-

վը գրում էր. «Բավական է միայն ընդգծել այն դերը, որ կենսագործել են Կովկասի ու Անդրկովկասի հայերը այդ երկրամասում խաղաղության հաստատման համար մեր բանակի մղած տևական պայքարի ընթացքում: Կովկասի բոլոր այլացեղ ժողովուրդների մեջ,— շարունակում է նա,— հայերը ամենահանգիստ ու խաղաղ, ամենահավատարիմն ու ամենահուսալին էին լեռնականների դեմ մղած պայքարի բոլոր ժամանակներում: Ռազմական անհաջողությունների և մանավանդ վճռական շրջադարձերի ժամանակ հայերը մնացին հավատարիմ» (9, 1896, 11, 114): Այդ հավատարմության մասին գովեստով են արտահայտվել անգամ ռուս ինքնակալները (19, 1913, 12, 293):

Ռուս առաջադեմ մտավորականները հայերին վերագրվող այսպես կոչված անջատողականության թեման քննարկում էին՝ այն սերտորեն առնչակցելով Ռուսաստանի հանդեպ հայերի ունեցած հավատի ու պատմության կենսափորձով հիմնավորված ռուսական կողմնորոշման հետ, որը իրավամբ դարերի պատմություն ունի: Այդ մասին են վկայում ինչպես Փոքր Ասիայի խորքերից եկած հյուպատոսական զեկուցագրերը, այնպես էլ ռուսական դեսպաններին ու առանձին անձանց արևմտահայերի հղած գրությունները, որոնցում նրանք հիմնավորում են, որ իրենց ազատագրումը թուրքական լծից հնարավոր է միայն Ռուսաստանի օգնությամբ, հետևաբար հայերը Ռուսաստանի հանդեպ անջատողական լինել չեն կարող, քանի որ ձգտում են դեպի Ռուսաստանը, որը դիտում են ոչ միայն որպես փրկության խարիսխ (19, 1913, 12, 293), այլ նաև մշակութային կատարելագործման ու առաջադիմության հուսալի հանգրվան: «Հայերի ձգտումը,— նշում է «Ռուսսկայա միսլը»,— քաղաքական ոչինչ չի պարունակում, այն միայն մշակութային արժեք ունի: Եվ նրանք, ովքեր հայերին վերագրում են անջատողականություն, անտեսում են Ռուսաստանին նրանց նվիրվածությունը, չեն տեսնում նրանց ազգային ոգին» (9, 1896, 11, 123): Այս մտքին համակարծիք լինելով՝ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը ընդգծում է. «Եթե հայերի մեջ գոյություն ունի ինչ—որ չափով քաղաքական միտում, ապա այն հիմնականում հետևանք է ողբերգական վիճակի մեջ գտնվող թուրքահայության նկատմամբ ունեցած համակրանքի», որը բնական ու անհրաժեշտ ձգտում է թուրքիայում գազանաբար կոտորածի ենթարկվող իրենց արևմտահայ եղբայրներին օգնություն ցույց տալու, թուրքական լծից նրանց ազատագրելու համար (13, 1897, 166): «Թուրքական տիրա-

պետության տակ գտնվող եղբայրների նկատմամբ համակրանքը միանգամայն բնական զգացում է: Նրանց պայքարի ու տառապանքների մասին լուրերը, իհարկե, չէին կարող հայերին չմղել հայրենասիրության և իրենց թուրքահայ եղբայրներին օգնության ձգտման, հայ ժողովրդի շահագործողների ու հարստահարողների դեմ համատեղ պայքար մղելու բնական ցանկության» (31, 1897, 32): Եվ այդ պայքարում, ինչպես ճշմարտացի ընդգծում էին առաջադեմ մտավորականները, հայերը Ռուսաստանից էին սպասում օգնություն: «Հայկական մամուլը,— նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— մտահոգված թուրքահայերի խիստ ծանր վիճակով, դատապարտելով թուրքական բաշիբոզուկների բարբարոս քաղաքականությունը և այդ ընթացքում թուրքահայերին վերջնական կործանումից փրկելու համար միակ իրական միջոց համարում է Ռուսաստանի միջամտությունը» (13, 1897, 166):

Ռուս առաջադեմ մտավորականները համոզված վճռականությամբ ընդգծում էին այն միտքը, որ արևմտահայերի դեպի Ռուսաստանն ունեցած ձգտումը միանգամայն համընկնում էր Ռուսաստանի Փոքր Ասիայում ունեցած շահերի հետ (13, 1897, 167): Ռուսաստանի ազգային ու քաղաքական շահերը պահանջում են Հարավային Կովկասում, Թուրքիային հարևան շրջաններում անվտանգությունն ու խաղաղությունը պահպանել և այդ տարածաշրջանում ամրանալու համար Ռուսաստանը պարտավոր է կատարել իր ազատագրական առաքելությունը, այն է՝ «ազատագրել Բիբլիական Արարատը և նրա նման հին ու քաղաքակիրթ հայ ժողովրդին» (60, 1897, 49, 33),— նշում էր «Մոսկովսկի եժենեդելնիկ» ամսագիրը: Հայոց պատմությանն ու Հայկական հարցին քաջատեղյակ ռուս առաջադեմ մտավորականները հայ ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած ձգտման ու հավատի մասին նշում էին. «թուրքահայերը մշտապես Ռուսաստանը՝ դիտում են որպես իրենց բնական դաշնակցի ու հովանավորի,— կարող ենք «Վեստնիկ Եվրոպի» հանդեսում,—նրանք թուրքական կառավարության բռնություններից ու հետապնդումներից ազատվելու համար իրենց փրկությունը որոնում էին Ռուսաստանում, պարզ գիտակցելով այստեղ գտնվող իրենց կրոնական—կուլտուրական կենտրոնի գտնվելու ամբողջ կարևորությունը» (19, 1917, 7—8, 366):

Համառ ու անզիջում պայքար մղելով թուրքական բռնապետական կարգերի դեմ և ազատագրական պայքարի ընթացքում Ռուսաստանը դիտելով

որպես բնական դաշնակցի՝ հայ ժողովուրդը մշտապես իր հոգում փայփայել է այն լուսավոր հույսը, որ ազատագրվելով թուրքական լծից՝ վերամիավորվելու է արևելահայության հետ: Դարերի կենսափորձով հաստատված արևմտահայության լուսավոր երազանքը հանդիսացող այդ ճշմարտությանը ռուս առաջադեմ մտածողները որպես հզոր կռվան հակադրում էին բոլոր այն հակահայ ուժերին, որոնք քաղաքական նկատառումներով ճգնում էին հայ ժողովրդի մեջ տեսնել անջատողականություն (12, 1896, 91):

Քննադատելով պահպանողական մամուլի հակահայկական կողմնորոշումը, մերժելով անջատողականության համար նրանց մեղադրանքները, Գ. Ա. Եվրեինովը ընդգծում էր. «Այսպես կոչված անջատողականությունը խորթ է հայ ժողովրդի համար: Յնարավոր է, – շարունակում է նա, – որ այդ մասին մտածել են որոշ մտավորականներ, սակայն այն որպես քաղաքական ուղղություն անիրագործելի էր, թեկուզ դրսից ցանկալի օգնության դեպքում այն նույնիսկ վտանգավոր չէր» (23, 117): Այդ միտքը շարունակելով՝ Մ. Կովալևսկին ավելացնում էր. «Չայ ժողովուրդը անջատողականություն երբեք չի ցուցաբերել» (19, 1913, 12, 293): Թուրքիայի դեմ մղած համատեղ պայքարի ընթացքում, նշում էին հայամետ գործիչները, ռուս ժողովուրդը համոզվել է, որ «Չայերը Ռուսաստանի ամենահավատարիմ բարեկամն են եղել...»: Չետևաբար դարերի ընթացքում հայ և ռուս ժողովուրդների միջև ձևավորված բարեկամական կապերը «պատահական չեն, այլ օրգանական են» (32, 1898, 15–16), որի համար էլ հայերի հայացքը միշտ ուղղված է եղել դեպի Ռուսաստան: Նույնիսկ ցարական պաշտոնյաները, որոնք Արևմտյան Չայաստանում հյուպատոսական ծառայության ընթացքում արևմտահայերի հետ գտնվելով սերտ շփման մեջ, քաջ ծանոթ լինելով թուրքական լծից ազատագրվելու նրանց բաղձանքներին և Ռուսաստանից նրանց ակնկալիքներին, գտնում էին, որ հայերն իրենց ազատագրման հույսը անվերապահորեն կապում էին միայն Ռուսաստանի հետ: Վանում փոխհյուպատոս Ս. Գիրսը, նկատի ունենալով այդ տարածաշրջանի հայ բնակչության տրամադրությունները, արտգործնախարարությանը տեղեկացնում է. «Բոլոր հայերը այժմ Ռուսաստանի կողմն են, նրանք անկեղծորեն ցանկանում են ռուսական բանակի գալուստը կամ բարենորոգումների կենսագործումը Ռուսաստանի հսկողությամբ» (34, 7):

Ռուսաստանի օգնությամբ արևմտահայության ազատագրության խնդիրը «Նեդելյան» մեկնաբանում է «Նոր դար»-ում հրապարակված Մ. Աբեղյա-

նի «Ինչ ենք ուզում մենք» հոդվածի հիմնադրույթներով (61, 1906, 01, 02): Նշանավոր հայագետը լինելով իր ժողովրդի շահերի ու լուսավոր ապագայի նկատմամբ նրա ունեցած մտքերի ու երազանքների թարգմանը, ընդգծում է, որ «Պատմությունը մեզ կապել է մեծ ազգի հետ... այն էլ մեր պապերի ցանկությամբ: Ռուսաստանը մեզ բերել է կյանքի ապահովություն, քաղաքակրթություն և ազգի քանակական աճի հնարավորություն: Քանի նրա իշխանությունը կա Կովկասում և Չայաստանում, մենք հույս կունենանք, թե կապրենք ու կզարգանանք: Այդ իշխանության բացակայության դեպքում մենք կունենանք այն դրությունը, որ ունեինք 100 տարի առաջ, ինչ ունենք այժմ Թուրքիայում, առավել ևս վատ» (31, 1906, 44): Մեկ այլ առիթով, կրկին անդրադառնալով նույն հարցին «Նեդելյան» ընդգծում էր, որ հայ հասարակ մարդու մեջ Ռուսաստանի նկատմամբ սերն ու համակրանքը «ներծծվել է մանկուց, մոր կաթի հետ»: Չետևաբար, եզրակացնում է լրագրողը, «հայերի ռուսասիրության ու Ռուսաստանի նկատմամբ եղած մեծ հավատի և հավատարմության մասին մեկնաբանությունները դառնում են ավելորդ» (31, 1906, 44):

Չաճախ միջազգային հարաբերությունների ոչ հայանպաստ զարգացումների հետևանքով Ռուսաստանն իր ռազմաքաղաքական շահերի թելադրանքով երբեմն նահանջել է իր ավանդական հայանպաստ կողմնորոշումից, սակայն հայ ժողովուրդը, ելնելով իր հայրենիքի աշխարհաքաղաքական դիրքից, չի հրաժարվել Ռուսաստանի օգնությամբ թուրքական դժոխքից ազատագրվելու իր լուսավոր երազանքից, Ռուսաստանը համարելով իր փրկության երաշխիքը (13, 1896, 237):

Ռուսաստանի հանդեպ հայ ժողովրդի տածած հավատի ու նրա նկատմամբ ունեցած անդավաճան նվիրվածության մասին ռուս անվանի պատմաբան, հասարակական–քաղաքական գործիչ Պ. Ն. Միլյուկովը գրում էր. «Չայերը, չնայած ռուսական հին վարչակարգի կողմից նրանց ազգային գիտակցությանը հասցրած դաժան վիրավորանքներին, Կովկասի ժողովուրդներից առավել հավատարիմ մնացին Ռուսաստանին: Նրանք ակտիվորեն մասնակցեցին Թուրքիայի դեմ բոլոր պատերազմներին» (62, 120): Ինչպես արդարացիորեն նշում է «Ռուսկայա միսլ» ամսագիրը «Չայերը, լինելով երախտապարտ ժողովուրդ, ամեն անգամ ռուսական հաղթական բանակի զինվորներին դիմավորել են գրկաբաց, նրանց հոգսը կիսելու պատրաստականությամբ, աջակցել են ռուսական զենքի հաղթանակին» (9, 1895, 4, 72),

իսկ ռուսահպատակ արևելահայերը բազում անգամ են ապացուցել Ռուսաստանին իրենց նվիրվածությունն ու հավատարմությունը: «Ողջ Կովկասում,— նշում է Ա. Ն. Սազոնովը,— մասնավորապես Անդրկովկասում հայերը հանդիսանում էին ամենահանգիստ, ամենանվիրված հպատակները... Երկրամասում ընդհանուր խառնակության պահին,— շարունակում է նա,— նրանք պահպանեցին ամերեր հավատն ու նվիրվածությունը Ռուսաստանի հանդեպ»: Այնուհետև խոսքը մասնավորեցնելով արևելահայության ճակատագրում Ռուսաստանի ունեցած առաջադիմական դերին՝ շեշտում է, որ «հարյուրամյակների ընթացքում անցնելով արևելյան մի բռնակալից մյուսի տիրապետության տակ տեսել են ավեր ու կոտորած, սակայն միայն Ռուսաստանին միանալուց հետո հայերը դարձան քրիստոնեական պետության մասնիկ, միայն այդ ժամանակ նրանք ազատ շնչեցին և իրենց զգացին լիիրավ քաղաքացի»: Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հանդեպ հայ ժողովուրդը եղել է երախտապարտ ու անդավաճան, անձնուրաց նվիրվածությամբ է ծառայել Ռուսաստանի շահերին: «Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի նկատմամբ հայերի վերաբերմունքին,— նշում է Ա. Ն. Սազոնովը,— ապա ոչ մի հիմք չկա կասկածելու, որ հայերը ջերմ շնորհակալությամբ են վերաբերվում իրենց նոր հայրենիքին» (9, 1896, 9, 58):

Հայ ժողովրդի նման վերաբերմունքի հաստատ համոզվածությամբ Նիկոլայ I-ը դեռևս 1827 թ. փետրվարի 2-ին, երբ ընթացքի մեջ էր ռուս պարսկական պատերազմը, Ներսես Աշտարակեցուն ցուցում էր տալիս, նշելով «Հայտնեք ձեր հոգևոր հովվության տակ գտնվող հայերին՝ մեր կայսերական բարի կամեցողությունը և վստահեցրեք մեր կայսերական խոսքով նրանց մեր հատուկ ողորմածությունը շարունակելու մեջ» (35, 1895, 124):

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման մասին հստակ ու պարզորոշ է արտահայտվել կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: Նա կանգնած լինելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ակունքներում՝ հստակորեն տարբերում էր Հայկական հարցում բյուրոկրատական—չինովնիկական վերնախավերի ու ռուս հասարակ, ազնիվ մարդկանց մոտեցումները (85, 384—385): 1895 թ. Ռուսաստանի հայկական գաղթավայրերում շրջագայության ընթացքում, Պետերբուրգի հայկական եկեղեցուն ելույթի ժամանակ նա նշել է. «Մենք՝ Ռուսաստանի և Թուրքիայի հայերս, հնուց ի վեր սովոր ենք մեր սրտում ջերմ հավատ փայփայել մեծ Ռուսիայի ինքնակալ հզոր ցարի պաշտպանության և հովանավորչության նկատմամբ,

դեպի որը ուղղված է եղել Արևելքի բազմաչարչար քրիստոնյաների հայացքը: Մենք էլ ամուր հավատ ունենք, որ մեծ միապետների արժանավոր հետնորդ, մեր ամենաողորմած տերը վերջ կդնի մեր եկեղեցու և Թուրքահայաստանի մեր եղբայրների տառապանքներին» (35, 1895, 124):

Արևմտյան Հայաստանում սանձագերծված հայկական զանգվածային ջարդերը, արևմտահայության անհույս ու անորոշ ապագայի հեռանկարը հույժ կարևորում էր նրանց ազատագրման խնդրում վճռական գործոն լինելը, ուստի «հայերի հայացքն ուղղված է դեպի հզոր Ռուսաստանը» (33, 1895, 211),— ճիշտ կռահելով արևմտահայությանը այդ պահին հուզող բախտորոշ խնդիրը, ընդգծում էր «Ռուս» լրագիրը:

Ռուս առաջադեմ գործիչները, լուսաբանելով հայ ժողովրդի՝ օտար նվաճողների դեմ մղած ազատագրական պայքարի պատմության էջերը, թուրքական լծից արևմտահայության ազատագրումը կապում էին Ռուսաստանի օգնության հետ, նրանք դա հիմնավորում էին նրանով, որ երկու ժողովուրդների միջև ձևավորված բարեկամական հարաբերությունների արմատները ձգվում են դեպի հեռավոր դարերի խորքերը:

Հայամետ մտավորականները իրավացիորեն նշում էին, որ «արևմտահայությանը օգնելու, թուրքական դժոխքից նրան ազատագրելու հարցը կարող է վճռել միայն Ռուսաստանը»: Այդ գիտակցումով էլ «Հայերը սրտանց ցանկանում են մեր բանակի մուտքը Արևմտյան Հայաստան» (32, 1898, 15—16),— գրում էր Ա. Ի. Գրեմը: Եվ դա բնական է, Ա. Ի. Գրեմի միտքը շարունակում է Վ. Գոլմստրեմը, գտնելով, որ հայերը «միայն Ռուսաստանից են սպասում իրական օգնություն» (13, 1895, 42):

Հայամետ մամուլի միջոցով հայ—ռուսական հարաբերությունների, Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հանդեպ ունեցած հավատի ու նրա անդավաճան հավատարմության պրոպագանդումը և դրա հետևանքով առաջացած հայանպաստ դրական արծագանքները այնքան ազդեցիկ էին, ու հզոր, որ նույնիսկ ոչ հայամետ շրջանների կարծիքը տարածող «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագիրը ստիպված էր արձանագրել, որ «հայերը իրենց փրկությունը միայն Ռուսաստանից են սպասում» (5, 1898, 112): Այդ կարծիքին էին մաս «Նովոյե վրեմյա» և «Բիրժեվիե վեդոմոստի» լրագրերը: Հրապարակախոս Անտուան Բերեգովսկի—Օլգինսկին Արևմտյան Հայաստանում շրջագայության ընթացքում ականատես եղավ Ռուսաստանի նկատմամբ արևմտահայերի հավատարմության դրսևորմանը և իրազեկ եղավ հայերի Ռուսաս-

տանից ունեցած ակնկալիքներին: «Թուրքահայերի համակրանքը դեպի Ռուսաստանը,— գրում էր նա,— Մերծավոր Արևելքում մեր ավանդական ազատագրական քաղաքականության բնական հետևանքն է, որը առանձնապես ջերմ կերպով բռնկվեց Բեռլինի կոնգրեսից հետո» (36, 2000, 1, 205):

Ռուս առաջադեմ մտավորականները Հայկական հարցում անբարյացակամ կողմնորոշման համար, քննադատելով խավարամիտ ուժերին, բացահայտելով ու հետևողականորեն պրոպագանդելով դառն կյանքի կենսափորձով իմաստավորված հայ ժողովրդի ռուսամետ կողմնորոշումը, արդարացի կերպով ընդգծում էին, որ հայերը թուրքական իշխանությունների ու մահմեդական մոլեռանդ ամբոխի կողմից մշտապես պատժվել են իրենց ռուսասիրության համար (37, 1897, 55): Վ. Գոլմստրեմը այդ մասին գրում է. «Թուրքիայի դաժան տիրապետության տակ գտնվող հայերի միակ լուսավոր երազանքը եղել է Ռուսաստանը: Նրանք մեր հայրենիքի նկատմամբ իրենց հավատարմությունը ապացուցել են բազմաթիվ անգամ և թանկ են վճարել դրա համար»: 19-րդ հարյուրամյակում Ռուսաստանի՝ Օսմանյան կայսրության դեմ մղած պատերազմների ընթացքում Արևմտյան Հայաստանը մշտապես եղել է ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմը: Եվ յուրաքանչյուր անգամ, երբ եվրոպական տերությունների դիվանագիտական խարդավանքների հետևանքով Ռուսաստանը՝ ենթարկվելով նրանց ճնշմանը, ստիպված էր լինում գրաված պատմական Հայաստանի տարածքներից դուրս բերել իր զորքերը, այնտեղ հայ ազգաբնակչության նկատմամբ մոլեգնում էր մահմեդական վրեժխնդրությունը, ծավալվում էին հակահայկական անասելի դաժանությունները (13, 1897, 284):

Արևմտահայերը, ինչպես արդարացիորեն նշում է Ա. Ն. Սազոնովը, մեծ համակրանքով ու գրկաբաց են դիմավորել ռուս զինվորներին՝ նրանց հետ կապելով թուրքական լծից իրենց ազատագրման հույսը, սակայն «գրաված տարածքներից ռուսական բանակների դուրս գալու ընթացքում անպաշտպան հայ ժողովուրդը իր ռուսասիրության համար դառնում էր դաժան տիրողների վրեժխնդրության զոհը» (9, 1896, 12, 102): Այդ միտքը իրավացիորեն ամբողջականացնում է «Ալիք» ամսագիրը, նշելով՝ «յետ են քաշուել ռուսական զորքերը... ու ծայր են առել ահաւոր կատաղութեան հասնող մահմեդականութեան վրեժխնդրութիւնը դեպի հայերը...» (38, 1896, 11, 4):

Ռուս առաջադեմ մտավորականները արդարացի էին. ընդգծելով, որ Ռուսաստանը թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդներին թուրքական

լծից ազատագրելու առաքելությունն ունի, որ հայ ժողովրդին ստեղծած ծանր կացությունից կարող է փրկել միայն Ռուսաստանը, որովհետև կայսրության Անդրկովկասի սահմանների հարևանությամբ հայկական տարածքներում խաղաղության հաստատումը բխում է առաջին հերթին Ռուսաստանի անվտանգության շահերից, ուստի իրերի պատմական բերումով «Ռուսաստանը չի կարող անտարբեր հանդիսատես լինել այնտեղ (Արևմտյան Հայաստանում – Պ. Ս) ծավալվող իրադարձությունների նկատմամբ» (21, 157): Ելնելով դրանից և նկատի ունենալով, որ Ռուսաստանի քաղաքական շահերը և արևմտահայության ազատագրական բաղձանքները համընկնում են, ու Ռուսաստանը տարածաշրջանում միակ քրիստոնյա պետությունն է, «Պրիագովսկի կրայ» լրագիրը ընդգծում էր. «Հայերի միակ հովանավորը հանդիսանում է Ռուսաստանը» (29, 1915, 149):

Թուրքական դաժան իրականությունը, մշտական դարձած բռնություններն ու հարստահարությունները, համիդյան արյունալի կոտորածները արևմտահայության համար ստեղծել էին իր հայրենիքում ապրելու և գոյատևելու անբարենպաստ պայմաններ, որի պատճառով նրանք ստիպված էին հեռանալ իրենց նախնիների արյուն–արցունքով ողողված հողից, թողնել հարազատների սուրբ մասունքները», ապաստան փնտրել Ռուսաստանում, ուր ոտք դնելով՝ ասում էին. «ազատվեցինք թուրքական դժոխքից, ընկանք դրախտը» (13, 1894, 14): Այդ միտքն ավելի ընդգծված հստակությամբ արտահայտվել է «Միր բոժի» խմբագրությանն ուղղված հայ փախստականների նամակներում: Նրանցում նշվում է. «Մեր հայացքները, կործանված հայրենիքում գտնվող մեր հարազատների հույսը ուղղված է դեպի Հյուսիս: Ձեզանից, մեծահոգի ու մարդասեր մտավորականներից, բարեսիրտ ռուս եղբայրներից ենք սպասում իսկական եղբայրական օգնություն...» (39, 1899, 1121): Սա մի խումբ փախստականների դառնաղետ կյանքով թելադրված հանգստությունը չէր միայն, այլ նաև «ողջ արևմտահայության սոցիալական բոլոր շերտերի համար տիրապետող դարձած այն ճիշտ ու հաստատ հանգստություն էր, որ իրենց թուրքական լծից ի վիճակի է ազատագրել միայն Ռուսաստանը» (40, 1915, 10, 199): Ռուսաստանի աշխարհագրական դիրքը և նրա հզորությունը նկատի ունենալով, Օ. Նովիկովան Լոնդոնում հրապարակված «Ռուսաստանը և Անգլիան» գրքում փայլաբայությամբ Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու գաղափարը: «Արևմտահայերին ապահովություն տալու խնդիրը,— գրում է նա,— մասնա-

վոր, կղզիացած խնդիր չէ, այլ շատ ընդարձակ է: Անգլիան Հայաստանից շատ է հեռու: Նրանից հայերը ոչ մի գործնական օգնություն ստանալ չեն կարող: Միայն Ռուսաստանը կարող է օգնություն ցույց տալ հայերին» (11, 1897, 40):

Ռուս առաջադեմ մտավորականները, հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերելով մարդասիրական վերաբերմունք, հասարակայնությանը կոչ անելով օգնություն ցույց տալ հայերին ու սատար լինել նրանց, միաժամանակ ընդգծում էին այն ճշմարտությունը, թե հայերին օգնություն կազմակերպելու գործը բարոյական լինելով հանդերձ, Ռուսաստանի համար ունի նաև քաղաքական ու մարտավարական խոշոր արժեք: Ռուսաստանի օգնությամբ արևմտահայերի ազատագրումը բխում էր նաև Ռուսաստանի ազգային անվտանգության ու մարտավարության շահերից: Եվ անկասկած է, որ Հայկական հարցի բարձրացումը պետք է կատարվի ոչ թե Ֆրանսիայի, ու Անգլիայի կողմից, այլ հենց ռուսական կառավարության կողմից, որը բխում է նրա շահերից: «Ռուսաստանում ապրում են համարյա 2 միլիոն հայ հպատակ,– գրում է «Նովոյե սլովո» լրագիրը,– ինչպես նրանք, այնպես էլ թուրքիայում ապրող նրանց եղբայրները բարձր կգնահատեն այդ նախաձեռնությունը: Դա թելադրում են ոչ միայն մարդասիրական, այլ նաև ամենամահրաժեշտ իրական շահերը» (18, 1896, 49): Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու և նրա հովանու տակ բարգավաճելու հույս էին տածում նաև հայրենիքից երկար ժամանակ կտրված, այլ երկրներ տարագրված հայերը: 1895 թ. մի խումբ տարագիր հայեր սրտահույզ մամակով դիմեցին Ռուսաստանի արտգործնախարարությանը: «Հայ ժողովուրդը մատնված է կործանման: Բեռլինի կոնգրեսից հետո թուրքական կառավարությունը հայ ժողովրդին իր հայրենիքում բնաջնջելու փակ համակարգ ստեղծեց: Մենք,– շարունակում էին նրանք,– ցանկանում ենք վերադառնալ մեր հայրենիքը, այնտեղ ապրել խաղաղ, մշակել մեր նախնիների կողմից մեզ ժառանգած սուրբ հողը, որը ողողված է նրանց արյամբ...» (41, 3133, 27):

Անկախ այն հանգամանքից, որ ցարիզմը 90–ական թվականներին Մերձավոր Արևելքում ունենալով հատուկ շահեր ու հետաքրքրություններ զգուշավոր մարտավարություն էր որդեգրել Հայկական հարցում, հայ ժողովրդի ձգտումը դեպի Ռուսաստան, թուրքական դարավոր լծից ազատագրվելը վերջինիս օգնությամբ, միշտ եղել է միանշանակ: Այդ խնդրում արևմտահայության հավաքական կարծիքն է ներկայացրել Կարսի մարզի առաջնորդա-

կան փոխանորդ Եղիշե Վարդապետ Մուրադյանը 1896 թ. «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի տնօրեն, իշխան Է. Է. Ուխտոմսկուն հասցեագրած մամակում: «Թուրքական տիրապետության տակ գտնվող հայերը,– գրում էր նա,– նույնիսկ անգրագետ գյուղացիներն անգամ երբեք չեն կորցրել իրենց հույսը, թե արևելյան քրիստոնյաների մեծ ազատարարը կգա իրենց օգնության, իրենց դրությունը ևս կբարելավի, որ իրենք նույնպես պետք է ապրեն ազատ և ապահով» (13, 1897, 55): Մահմեդական ծովում տառապող արևմտահայությունը իր ազատության հույսը կապում էր Ռուսաստանի հետ: Եվ այդ կողմնորոշումը աներեր էր: «Մենք կփրկվենք,– նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,– ասում են թուրքերից ու քրդերից հալածված հայերը, երբ ոտք դնենք բարեգութ ռուսական հողի վրա» (13, 1897, 38):

Այսպիսով, ռուս առաջադեմ մտավորականները սուր քննադատության ենթարկելով Հայկական հարցում ոչ հայանպաստ կողմնորոշում որդեգրած հասարակական հետադեմ ուժերին, իրավացիորեն մերժում էին նրանց կողմից հայ ժողովրդին ներկայացված մեղադրանքները, ժխտում էին հայերին հանիրավի վերագրված «անջատողական ու հեղափոխական ստահող վարկածը: Հարուստ ու իրական փաստական նյութերի հիման վրա հիմնավորում էին հայ և ռուս ժողովուրդների բարեկամական անդամաճան հարաբերությունները, համոզված ընդգծում Ռուսաստանին ու ռուս ժողովրդին հայ ժողովրդի անսահման հավատարմությունն ու ամենացորդ նվիրվածությունը»:

Արևմտյան Հայաստանում ընթացող հայկական զանգվածային ջարդերը արևմտահայության ողբերգական վիճակը, արևելահայերի դեմ քաղաքական նպատակներով ցարական ու վերջինիս խոսափող հանդիսացող խավարամիտ մամուլի ու նրա շուրջը համախմբված հետադեմ ուժերի բուռն գրոհները, որոնք ապակողմնորոշում էին ռուս հասարակական–սոցիալական շերտերին, վրդովմունքի ու զայրույթի ալիք առաջացրին առաջադեմ մտավորականության շրջանում: Նրանք դարձան, բարու և մարդասիրության, համամարդկային արժեքների կրողը, Ռուսաստանի ու ռուս ժողովրդի արժանապատիվ կեցվածքը ներկայացնող ուժերը, որոնք, իրենց նվիրաբերեցին ճակատագրի դաժան բերումով ծանր ողբերգության մեջ հայտնված հայ ժողովրդի օգնության կանչին՝ ողջ երկրով մեկ ծավալելով հայանպաստ գործունեություն:

Այդ մարդասիրական գործն իրականացնելու նպատակով ռուս մի խումբ մտավորականներ՝ Լ. Ա. Կոմարովսկին, Դ. Ն. Մամին–Սիբիրյակը, Ա. Մ. Ժեմչուժնիկովը, Վ. Վ. Վերեշչագինը, Ֆ. Ե. Կորշը, Մ. Մ. Կովալսկին, Կ. Մ. Տիմիրյազևը, Վ. Ֆ. Սիլլերը, Յու. Վեսելովսկին, Է. Է. Ուխտոմսկին, Վ. Գոլմստրեմը, Վլ. Շուֆը, Է. Մորոզովը, Վլ. Սոլովյովը և բազում այլ հայանվեր գործիչներ հայազգի հրապարակախոս, իրավագետ, պատմաբան Գր. Ջանշիկի հետ համագործակցելով 1896 թ. հրապարակեցին «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թ. տերությունների միջամտությունը» ժողովածուն։ Այն բացվում է Մոսկվայի համալսարանի միջազգային հարաբերությունների պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկու առաջաբանով, որում հեղինակը բարձր է գնահատում ժողովածուի դերը հայնպաստ գործունեության ծավալման խնդրում՝ բացահայտելով արևմտահայության ծանր կացությունը, Հայկական հարցի լուծման ուղի է մատնանշում։ Ժողովածուի մեջ ներկայացվում են օտար հեղինակներ Ռոլեն Ժեկմենի, Մակ Քոլի, Ֆր. Գրինի, Է. Դիլոնի Հայկական հարցի լուսաբանմանը նվիրված գործերը, որոնք մեծապես օգնեցին ռուս ժողովրդին հանգամանորեն ծանոթանալու Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, թուրքական բռնություններին, քրդական ասպատակություններին ու բալանին, սուլթանական կառավարության կողմից Սասունում կազմակերպված հայկական զանգվածային կոտորածներին ու մեծ տերությունների այդ խնդրում ցուցաբերած քար անտարբերությանը։

Վերը նշված ռուս երախտավոր մտավորականների ջանքերով 1897 թ. հրատարակվեց «եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ծավալուն ժողովածուն, որը 1898 թ. վերահրատարակվեց։

Ժողովածուի հրատարակմամբ առաջադեմ գործիչները նպատակ ունեին ծանոթացնել ռուս հասարակությանը հայ ժողովրդի բազմադարյա հարուստ պատմությանն ու մշակույթին, նրա ուշադրությունը բևեռել արևմտահայության տագնապահարույց վիճակի վրա և այնուհետև ժողովածուի վաճառքից ստացված գումարը տրամադրել արևմտահայության և առանձնապես հարյուրհազարավոր որբերի օգնության ֆոնդին։ Ժողովածուի ստեղծման դժվար, սակայն միաժամանակ շնորհակալ աշխատանքի ու նրա հետապնդած նպատակի մասին «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագիրը նշում էր. «Ռուս հրապարակախոսների, գրողների, գիտնականների, գրականագետների դժվար ու հետևողական ջանքերով ձևավորվեց ընդար-

ծակ նյութը՝ կազմելով «եղբայրական օգնության» 1000 էջից բաղկացած հսկայածավալ հատորը, լուսաբանելով հայերի վիճակը։ Բարեբախտաբար գտնվեցին բարի ու անշահախնդիր բավական թվով մարդիկ, որոնք ի հակակշիռ հայերի նկատմամբ տարածված չար ու դաժան անհարգալից վերաբերմունքին, օգնության ձեռք մեկնեցին 50000 որբերին» (13, 1895, 350)։

Լ. Ա. Կոմարովսկին, մեկնաբանելով ժողովածուի հրատարակման մարդասիրական նպատակները, գրում էր. «Հայերի դրությունը Թուրքիայում» ժողովածուն նպատակ ունի համակողմանիորեն ու անկողմնակալ ծանոթացնել մեր հասարակությանը թուրքերի տիրապետության տակ գտնվող տարաբախտ հայերի կրած տանջանքներին»։ Եվ այդ անմարդկային տանջանքները կրող արևմտահայության անլուր տառապանքներին ծանոթանալուց հետո ռուս հասարակայնությունը այլևս չէր հավատում կամ կասկածանքով էր վերաբերվում «հայերի նկատմամբ թշնամանքով տրամադրված մամուլի այն հերյուրանքներին, թե իբր իրենց այդ վիճակի համար մեղավոր են հայերը, որովհետև թույլ են տալիս հակաօրինական գործողություններ» (21, 156–157)։

Ժողովածուի մասին ջերմ տողեր գրեց իշխան Է. Է. Ուխտոմսկին. «Հայերին ռուս հասարակայնությանը ծանոթացնելու նպատակով,– գրում էր նա,– գրքում տեղ են գտել հայ ժողովրդի պատմության, գրականության, նրա կյանքի բազմաթիվ կողմերը լուսաբանող շատ հողվածներ, որոնցում ընդգծվում է նրա համար Ռուսաստանի ունեցած դերը (13, 1898, 251)։ Ժողովածուի հաջողությունը պայմանավորված էր նրա գեղարվեստական բարձր ճաշակով և հայկական կյանքը պատկերող լուսանկարների ճիշտ համադրմամբ։ Սրտակեղեք տպավորություն են թողնում հատկապես արևմտահայերի կոտորածների տեսարաններն ու անգթության զոհերին ներկայացնող լուսանկարները։ «Գիրքը տալիս է հայկական տանջալից ուղու ցնցող պատկերը,– գրում է Վլ. Գոլմստրեմը,– լուռ թախիծ, մեծ ողբ, անմեկնելի տխրություն է թաքնված այս ժողովածուի մեջ։ Այնտեղ արցունքներ են, տաք արցունքներ, որոնք անցնում են անգամ քարի միջով ու ընկնում մարդու սիրտը» (13, 1898, 72)։ Ժողովածուի հաջողությունը պայմանավորված էր նաև ռուսական մամուլի բոլոր օրգանների կողմից նրան տրված բարձր գնահատականով ու դրանց հազվադեպ միասնությամբ։ «Ռուս ժողովրդին հայերին ծանոթացնելու մտադրությամբ գրքում տրված են այդ ժողովրդի մասին մի շարք հողվածներ..., որոնք արժանի են համակողմանի ուսումնա-

սիրության ու ուշադիր ընթերցման,– գրում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը:– Հայ ժողովրդի հետ մշակութային միասնությունը (նրա հարուստ պատմության, նրա ամբողջական ու կենսունակ մտահորիզոնով, նրա փորձություններով հարուստ հոգեկան ուժով) հանդիսանում է անգնահատելի ներդրում ռուսական հոգևոր կյանքի գանձարանում: Դա կենսունակ ու ուժեղ վտակ է՝ լցված ռուսական ծովը,– շարունակում է լրագիրը,– նրան պետք է գնահատել և կարողանալ օգտվել» (13, 1898, 72): Նույնիսկ «Նովոյե վրեմյա» լրագիրը, որ թշնամաբար էր տրամադրված հայերի նկատմամբ, ստիպված էր ջերմ տողեր նվիրել ժողովածուին, հետևաբար նաև թուրքական բռնությունների զոհ դարձած արևմտահայերին: «Ռուս հասարակությունը չի կարող մնալ անտարբեր տանջահար հայերի օգնության կանչին... ամենքը կարող են հայթայթել մի քանի ռուբլի, որ ուրախությամբ տրամադրեն, իմանալով, որ իր աշխատանքի արդյունքը կօգնի կերակրելու ու հագցնելու հավատակիցներից որևէ մեկին... Քրիստոսի մարմնի մի մասը տառապում է. մի՞թե մենք չենք կարող լվանալ ու վիրակապել նրա վերքերը...» (6, 1898, 8241): «Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը ժողովածուի հաջողության գրավականը համարում է նրա կատարած բարի գործը (19, 1897, 4, 735), իսկ «Միր բոժի» ամսագիրը, գնահատելով «Եղբայրական օգնություն...» ժողովածուի նշանակությունը, գրում էր. «Ժամր զգացումով է համակվում ընթերցողի սիրտը այն բանի համար, որ այդ գրքի էջերում մեր առջև բացվում են ողբերգության սարսափելի տեսարաններ, որոնք կրում է մեր հավատակից ժողովուրդը: ... Սակայն մենք չենք կասկածում, որ այնքան էլ հեռու չէ հայ ժողովրդի տանջանքների ավարտի օրը: Եվ ցանկանում ենք, որ այլևս չկրկնվեն նոր կոտորածներ... Թող «Եղբայրական օգնությունը» արդարացնի իրեն գործով... Եվ այն համակրանքը, որ կա մեր ընթերցողների սրտերում չսահմանափակվի միայն խոսքով, այլ իրականացվի գործնականում» (39, 1898, 8, 141): Հասարակության վրա ժողովածուի ակտիվ ու դրական ազդեցության մասին «Մշակ»-ը գրում է. «Հայ որբերին պատկերող լուսանկարներից նայում են երեխաներ... ցնցոտիները հազիվ ծածկում են մահմեդական մուլեռանդության զոհ դարձած նրանց բազմաչարչար մարմինը: Բոբիկ, գլխաբաց, փոքրիկները ձեռքերը սեղմած դեմքերին ու կրծքերին ամուր կպած իրենց դժբախտ մայրերին, տխուր նայում են: Այդ հայացքները քար կջարդեն, նույնիսկ վագրի աչքերից արցունք կքանեն» (11, 1898, 186) «Եղբայրական օգնություն» ժողովածուի մասին ջերմ

ու սրտազին գրախոսական գրեց անվանի պատմաբան Լեոն: «Ո՞վ կարող է գնահատել մի բաժակ սառը ջուրը, որ եղբայրական սերը տալիս է պապակվող մարդուն, նույնպես և կարելի է միթե չափել այն անհուն խորութիւնը, որ պարփակում է իր մեջ այդ բաժակը ստացողի աչքից գլորված մի կաթիլ արտասուքը, շնորհակալութեան արտասուքը... մարդու վիրավորված սրտի համար,– շարունակում է Լեոն, չկայ մի այնպիսի ճարտար բժիշկ, որպիսին է եղբայրական ցավակցությունը, այն սրբազան զգացմունքը, որ հեռուից նայողին միացնում է տանջվողի հետ» (11, 1897, 165):

Այդ խնդրին արձագանքելով՝ «Արարատ» հանդեսն ինչպես իր, այնպես էլ հայ ժողովրդի երախտագիտության խոսքն էր ասում ռուս առաջադեմ մտավորականներին իրենց հայանպաստ գործունեության համար: «Սեր առաջ դրած մեծահատոր գիրքը,– նշում է «Արարատը»,– այն կարեկցության արգասիքներից մինն է, որ ռուսաց գրականության մեջ հայտնի բանասերների աջակցությամբ խմբագրուեցաւ և լույս տեսաւ յօգուտ թշուառացեալ հայերի, որոնք իւրեանց տունն ու տեղը թողած, մերկ ու անօթի թափառում էին Կովկասի և հարավային Ռուսաստանի ամեն անկիւններում...» (24, 1897, 11–12, 480):

«Եղբայրական օգնություն...» ժողովածուն մեր օրերում ևս շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Նրանում ներառված հարուստ նյութերը շարունակում են հիացմունք պատճառել ամեն անգամ հենք հանդիսանալով հայ և ռուս ժողովուրդների բարեկամական հարաբերությունների հարուստ պատմության լուսաբանման համար (58):

Ժողովածուի մեջ զետեղված Վ. Գոլմստրեմի «Եղբայր հայեր» հոդվածը եղբայրական օգնության ջերմ ու անկեղծ խոսք է ուղղված հայ ժողովրդին, որն ունի ոչ միայն հուզական, այլ նաև գործնական օգնության արժեք: «Ամենկնեի խղճահարությամբ, հոգեկան տանջանքով կլցվեի Փրկիչի սիրտը,– գրում է Վ. Գոլմստրեմը,– եթե տեսներ չլսված, չտեսնված, անտանելի այդ հրեշավոր տանջանքները, որ կրել են, կրում են և օ՞, ինչ սարսափ, դեռ կրելու են խեղճ, թույլ, անպաշտպան, քրիստոնեության ժամանակակից նահատակ հայերը»: Սրտի ցավով ներկայացնելով արևմտահայության անասելի տանջանքները, նա ավելացնում էր. «Արյուն–արցունքով լաց կլինեի Աստվածամարդը և պատրաստ կլինեի երկրորդ անգամ ընդունել մահը, որպեսզի փրկեի խեղճերին հետագա տանջանքներից, այն, ինչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը, որն ինձ հետ միասին կկարդար ամոթի, տխրության

և ատելության կրակով հոգին այրող հայկական ողբերգությունը» (21, E): Հայկական մասսայական կոտորածների սարսափները Վլ. Գոլմստրեմը ռուս հասարակությանն էր հասցնում վիրտուոզ երաժիշտի ու դասական ողբերգակի տաղանդի համադրմամբ: Մարդկային սպանդի սրտակեղեք տեսարանների նկարագրմամբ նա աշխատում էր հասարակության բոլոր խավերին լսելի ու տեսանելի դարձնել արևմտահայությանը հանիրավի բաժին ընկած անմարդկային տանջանքները: Նա ձգտում էր հայերի նահատակության անմոռաց պատկերներով ցնցել ռուս մարդու հոգին, «հարվածել ուղիղ սրտին, որպեսզի հասարակության մեջ արթնացներ կարեկցություն այդ ահավոր տանջանքների նկատմամբ, որպեսզի նրանք հաղորդակից դառնան հայ եղբայրների ահավոր ու ցավալի տանջանքներին» (21, E), – եզրակացնում էր հրապարակախոսը: Հայկական հարցում նա, նախապես գտնվելով պաշտոնական գաղափարախոսության ազդեցության տակ, պաշտպանում էր ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության նոր կողմնորոշումը՝ հայերին ներկայացնելով իրոք անջատողականներ, հեղափոխականներ, որոշ իմաստով արևմտահայերին դիտում էր Թուրքիայում անգլիական քաղաքականության պաշտպաններ ու դրա իրականացնողներ: Սակայն պաշտոնական գաղափարախոսության ծխածածկույթի հաղթահարումից հետո, երբ նրա համար պարզվեց իշխանությունների կողմից Հայկական հարցի քաղաքականացման էությունը, նա դարձավ հայ ժողովրդի ամենաջերմ բարեկամը, եղբայրական սիրով, համակրանքով ու հոգատարությամբ լցվեց արևմտահայերի նկատմամբ: Եվ հետագա նրա գործունեությունը, հայանպաստ բովանդակությամբ հողվածները այդ նվիրվածության ամենավառ առհավատյան են: Վլ. Գոլմստրեմին հաճախակի մեղադրում էին, որ նա հանդգնում էր հրապարակայնորեն հանդես գալ «հասարակական կարծիքը կշտամբողի և Հայկական հարցը անսխալ մեկնաբանողի դերում»: Հակադրվելով իր հակառակորդներին՝ Վ. Գոլմստրեմը նշում է. «Երբ հասարակական կարծիքը սահմանափակվում է միայն հոտառությամբ, նրան միշտ ուղղություն են տալիս չարանենգ մարդիկ»: Մեծ տեղ տալով հասարակական կարծիքին նա իրավացիորեն ընդգծում էր, որ այն կարող է հավակնություն ցուցաբերել տեղ զբաղեցնելու հասարակության գիտակցության մեջ, կամ դառնալ գիտակցված միայն այն դեպքում, եթե հենվում է փաստերի ամուր հիմքի վրա»: Հայկական կոտորածների ամբողջ իմաստը հասկանալու և «հասարակական կարծիքը ղեկավարելու համար» նա առա-

ջարկում էր կարդալ «Հայերի դրությունը Թուրքիայում մինչ տերությունների միջամտությունը 1895 թ.» գիրքը և Է. Դիլոնի «Իրերի դրությունը Թուրքահայաստանում և թուրքական գազանությունները Սասունում» հողվածը, ապա ավելացնում էր. «Բոլոր նրանք, ովքեր կծանոթանան փաստերին և կհամոզվեն, որ մարդկային լեզվի զորությունը հազիվ կբավականացնի նկարագրել այն, ինչ իրականում տեղի է ունենում, հետևաբար չափազանցությունները, նույնիսկ, եթե ցանկանանք, դրանք վեր են մեր ուժերից... Իմացեք փաստերը, – դիմում էր նա իր գաղափարական հակառակորդներին, – եթե ուզեք այն բանի համար, որ ժխտեք դրանք, նույնիսկ, եթե դա ձեր ուժերից վեր է» (21, E):

Երկրում հայանպաստ կարծիքի ստեղծման խնդրում, երբ Թուրքիայում ծավալվում ու ահագնանում էր զանգվածային կոտորածների ալիքը, որը սպառնում էր ոչնչացնել ամենայն հայկականը, ռուս անվանի գիտնականներն իրենց նվիրաբերեցին հայոց պատմության հնագույն ժամանակների իրադարձությունների ուսումնասիրությանը՝ աշխատելով ցույց տալ, որ հիմնավորց հայ ժողովուրդը մեռնել չի կարող, որ կգա նրա վերածննդի ժամանակաշրջանը:

Հատկանշական է, որ այս փուլում, երբ պաշտոնական մամուլը շարունակում էր հարձակումները հայ ժողովրդի դեմ, առաջադեմ մտավորականները առավել վճռականությամբ ռուս հասարակայնությանն էին ներկայացնում ինչպես անցյալի, այնպես էլ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ընթացքում ռուսական բանակում ծառայության մեջ գտնվող հայազգի զինվորների և զորահրամանատարների մարտական սխրանքների ու Ռուսաստանին նրանց նվիրվածության մասին նյութեր: Ն. Ա. Բելոզուլովին, Վ. Պոտտոն ռուսական հասարակայնությանը ներկայացրին Միք. Տարիելի Լորիս–Մելիքովի, գեներալ Յա. Ալխազովի, Վ. Օ. Բեհրուբովի, Բ. Մ. Շելկովիկոյի, Ա. Ա. Տեր–Ղուկասովի, Ի. Դ. Լազարևի՝ ռուսական զենքի հաղթանակին ու ռազմական արվեստի զարգացմանը մատուցած ծառայությունները, ինչպես նաև հասարակ հայ գյուղացիների կողմից ռուս զինվորներին դիմավորելուն և հանձինս նրանց տեսնելու թուրքական լծից իրենց ազատագրողների: «Պրավիտելստվեննիյ վեստնիկ»-ը լայն տեղ հատկացրեց հայ կաթողիկոսների կյանքի ու գործունեության, մասնավորապես Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի հավատարմությանն ու նրա հետ կապված ազատագրական բաղձանքների լուսաբանմանը (35, 1895, 124): Լրագրողը առանձնակի

ջերմությամբ է արտահայտվում Մ. Խրիմյանի հասցեին, նկարագրում 1895 թ. Ռուսաստան, հայկական համայնքներում նրա կատարած շրջագայությունը:

Ռուս բանաստեղծներ Ե. Ա. Մորոզովը, Ա. Մ. Ժեմչուժնիկովը, Ա. Վ. Պերեվոդչիկովան, Ե. Կ. Ալիբեկովան, Կ. Դ. Բայլմոնտը, Յու. Վեսելովսկին, Վ. Շուֆը հայերենից կատարված թարգմանություններով ու իրենց բանաստեղծություններով, գրական խոսքի արտահայտման պատկերավոր միջոցներով գովերգում էին հայ ժողովրդի ազատասիրությունն ու հայրենասիրությունը, բացահայտում նրա հոգու լուսավոր գանձերը ու ներկայացնում ռուս ժողովրդին:

Այսպիսով՝ ռուս ժողովրդի իրական ու ճշմարտացի հավաքական կարծիքը ներկայացնող առաջադեմ մտավորականների կողմից հրապարակված ժողովածուները արժանացան հասարակական մեծ հնչեղության, կատարեցին իրենց առջև դրված մարդասիրական մեծ առաքելությունը: Հայ ժողովրդի պատմության, արվեստի, պոեզիայի լավագույն գանձերը մասսայականացնելով կարևոր ու վճռական դեր ունեցան երկրում հայ ժողովրդի նկատմամբ ձևավորված հասարակական կեղծ կարծիքը շտկելու, իրական հունը վերադարձնելու և հայանպաստ ճշմարիտ հասարակական կարծիքի ձևավորելու գործում:

Արևմտյան Հայաստանում զանգվածային ջարդերից մազապուրծ գաղթականները հոծ խմբերով Ռուսաստանի հարավային տարածքների սահմանադրներն էին բախում, փնտրելով ապահով ապաստարան: Նրանց իշխանությունները դիմավորում էին ակնհայտ անբարյացակամ սառնությամբ: Ցարիզմի քաղաքական կամքին հլու հնազանդ խավարամիտ ուժերը երկրում ծավալում էին հակահայկական հիստերիա, խանգարում ժողովրդական զանգվածներին կարեկցելու և օգնության ձեռք մեկնելու դժբախտության մեջ հայտնված հազարավոր անօթևան, մերկ ու սովալլուկ արևմտահայերին:

Իշխանամետ այդ հետադեմ ուժերի հայ ժողովրդի դեմ ուղղված քարոզարշավը լռեցնելու, նրանց գործունեության հետևանքով հասարակայնության մեջ ձևավորված անբարյացակամ տրամադրությունները ցրելու և արևմտահայ գաղթականներին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու նպատակով ռուս առաջադեմ պատմաբաններ, գրողներ ու արվեստագետներ իրենց մարդասիրական պարտքը համարեցին ռուս հասարակայնությանը ծանոթացնել հայ ժողովրդի պատմության ներկայի ու անցյա-

լի իրադարձություններին, գրականության ու արվեստի գանձերին, որոնք թարգմանաբար տպագրվում էին «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Նովոստի», «Միր բոժի», «Ռուսսկայա Միսլ», «Վեստնիկ Եվրոպի», «Ռոսիա և Ազիա» լրագրերի և ամսագրերի էջերում: Նրանցում լուսաբանվում էր հայ ժողովրդի պատմության անցյալի հերոսական դրվագները, ինչպես նաև ներկայի, արյունալի մասսայական կոտորածների ողբերգական իրադարձությունները (32, 1896, 18–20):

Ռուս գրականագետ Ե. Նեկրասովայի թարգմանությամբ «Միր բոժի» ամսագրի էջերում տպագրվեց անվանի հայ վիպասան Բաֆֆու «Շարաբանի» պատմվածքը (39, 1892, 3, 1–14): Այնուհետև Ե. Նեկրասովան ռուս գրական հասարակայնությանը ներկայացրեց Բաֆֆու կյանքը և գրական գործունեությունը: Նա «Ռուս բանասիրության սիրողների» ընկերության նիստերում հանդես եկավ դասախոսություններով «Հայ գրող Բաֆֆին» թեմայով, որն ամբողջությամբ լույս ընծայվեց «Միր բոժի» ամսագրում (39, 1892, 3, 14), իսկ «Ռուսսկայա միսլ»-ում նրա թարգմանությամբ տպագրվեցին Բաֆֆու «Պարսկական հարեն» և «Խասփուշ» գործերը (9, 1891, 6, 184–210):

Ռուս անվանի դրամատուրգ Ա. Ն. Օստրովսկին Արևմտյան Հայաստանում հայկական կոտորածների ամենառեռուն շրջանում գտնվում էր Թիֆլիսում, ուր ականատես եղավ հայ գաղթականների անել վիճակին: Անվանի դրամատուրգը զգում էր իշխանությունների ու իշխանամետ մամուլի՝ հայերի նկատմամբ ունեցած անբարյացակամ սառնությունը: Հայ ժողովրդի ու հայ գրականության նկատմամբ ունենալով մեծագույն հարգանք՝ Ա. Ն. Օստրովսկին աշխատում էր իր հայանպաստ գործունեությամբ ռուս հասարակայնության մեջ առաջացնել հայամետ տրամադրություններ, հայ գաղթականներին սատարելու, նյութական ու բարոյական օգնություն ցուցաբերելու ձգտում: Այդ նպատակով նա որոշեց Մոսկվայում բեմականացնել Յու. Վեսելովսկու կողմից ռուսերեն թարգմանված Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը (66, 10):

Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի մյուս հայաշատ շրջաններում տեղի ունեցող զազանային կոտորածների սահմեկեցուցիչ տեսարանների ու կոտորածներից մազապուրծ հայ փախստականների մարտիրոսության ողիսականը պատկերող ստեղծագործություններ տպագրվեցին «Միր բոժի» (39, 1896, 3, 145–152) և «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի»-ի էջերում (13, 1898, 183, 184):

Հայ ժողովրդի հնագույն և ժամանակակից պոեզիայի երկրպագուներ Յու. Վեսելովսկին, Վ. Բրյուսովը, Ի. Բունինը, Կ. Բայլմոնտը, Վ. Սոլոգուբը հայերենից թարգմանված ու հայկական թեմաներով ստեղծած դասական գործերով, ինչպես նաև հրապարակախոսական հոդվածներով աշխատում էին ռուս հասարակայնությանը ներկայացնել հայ ժողովրդի դարավոր պատմությունն ու հարուստ պոեզիան, պաշտպանում էին հայ ժողովրդին անտեղի ու անարդարացի հարծակումներից, մերկացնող քննադատության էին ենթարկում թուրքական ջարդարարներին, որոնք գազանային կոտորածի ենթարկելով հայերին, միաժամանակ ոչնչացնում էին նրա հնամենի մշակութային արժեքները: Ռուս երախտավոր մտավորականների հայերենից կատարված թարգմանությունները դարձան հայոց պոեզիայի մեղմակարկաչ առվակները, որոնք իրենց բանաստեղծական քնքշությամբ հոսելով դեպի ռուսական հասարակայնության միջավայրը, հորդանալով ու նվաճելով ավիամերձ տարածքները, վերածվեցին լայնահուն մի գետի, որով այնուհետ արագ հոսքով դեպի ռուս ժողովուրդը հոսեց հայկական ժողովրդական պոեզիան իր ամբողջ հարստությամբ, հայկական ոգու խորությամբ ու պարզությամբ, մոխիրներից վերընծյուղվող կենսունակությամբ և առողջ հոգու թռիչքով (67, 213, 214):

Հայ ժողովրդի համար ամենաողբերգական մի ժամանակաշրջանում, երբ սուլթան Համիդի կառավարությունը արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ահավոր ծրագիրը աշխատում էր կենսագործել, Սասունում թուրքական դահիճները գազանաբար հոշոտում էին հայ բնակչությանը, իսկ ցարական պաշտոնական շրջանները քաղաքական նկատառումներով աշխատում էին լռություն պահպանել, իսկ հաճախ պաշտպանելով թուրքական դահիճներին, մեղադրում էին հայերին կառավարության նկատմամբ անհնազանդության մեջ, Յու. Վեսելովսկին ժամանակի ողբերգությանը համահունչ ռուսական իրականության մեջ հայերենից թարգմանաբար հնչեցնում էր նշանավոր հայ բանաստեղծ Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», «Վարդան Մամիկոնյանի երգը», (19, 1894, 2, 706), Լերենցի «Հայրենի երկիր» բանաստեղծությունները (19, 1895, 4, 545–548), որոնք առավել համահունչ էին պատմական այդ ժամանակաշրջանի հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարին: Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը այնքան մեծ մասսայականություն ստացավ ու նրա ընդունելության մասշտաբներն այնքան էին ծավալվել, որ նշանավոր երա-

ժիշտ Գ. Ա. Կազաչենկովը նրա համար գրեց երաժշտություն (68, 18), նրա բովանդակությունն ու քաղաքական իմաստը դարձավ ավելի հնչեղ, համակեց ողջ ժողովրդին:

Վ. Բրյուսովը այդ առնչությամբ շեշտում էր, որ հայ ժողովրդական քննադատության գանձերը թարգմանաբար ռուս ընթերցողին մատուցելով՝ կազմավորվում էին հայ ժողովրդից դեպի ռուս ժողովրդի սիրտը խոխոջալով հոսող առվակները, որոնք աստիճանաբար վարարելով դառնում էին հորդառատ գետեր, իրենց կենսունակությամբ ու հուզականությամբ, առանձնահատուկ արևելյան մեղմությամբ և Արևմուտքի իմաստնությամբ (43, 1989, 36):

Հայ գրականության հազարամյա գանձերը ռուս ժողովրդի միջավայրում մասսայականացնելու և ռուս ընթերցողին նրա հետ ծանոթացնելու նպատակով Յու. Վեսելովսկին և Մ. Բերբերյանը դեռևս 1893 թ. ձեռնամուխ եղան «Հայ բելետրիստները» ժողովածուի հրատարակման գործին: Հիմնավորելով իրենց այդ ձեռնարկման նպատակը՝ ժողովածուի առաջաբանում նրանք նշում էին. «Հայ նոր գրականությունը մի շարք առումներով արժանի է ինչպես ռուս, այնպես էլ արևմտավրոպական ընթերցողների ու հասարակական լայն խավերի ուշադրությանը: Անկասկած, նրանում շատ են տաղանդավոր գրողներն ու իրավամբ գեղարվեստական կատարյալ ստեղծագործությունները, որոնք կարող են պատիվ բերել ցանկացած բանասիրությանը» (82, 8): Ժողովածուն հասարակական լայն ընդունելության արժանացավ: Ժամանակի առաջադեմ մտավորականները այն արժանացրին մեծ գնահատականի: «Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը ընդգծում էր, որ այդ ժողովածուն «Բարձր մակարդակով ուսանելի է, և արժանի է համակրանքի ու հարգանքի: Մեզ՝ ռուսներիս համար,– նշում էր ամսագիրը,– հայ գրականությունն ավելի քան անհրաժեշտ է ու հետաքրքիր, որովհետև հայ ժողովրդի մի հատվածը ապրում է Ռուսաստանում, անկասկած է, որ հայ և ռուս գրական կապերը երկուսի համար էլ օգտակար են»: Ամսագրի շուրջը համախմբված առաջադեմ մտավորականները՝ բարձր գնահատականի արժանացնելով ժողովածուն, միաժամանակ իրավացիորեն հույս էին հայտնում, որ նրա վերահրատարակման ընթացքում հարկ է ավելի մեծ տեղ հատկացնել հայ ժողովրդի ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի պատմությանը (19, 1893, 2, 334):

Հայ ժողովրդի պատմության անցյալի ու ներկայի, հայ գրականության բոլոր ժամանակների խոր ու բազմակողմանի իմացությունը նրան հնարա-

վորություն ընծեռեցին փաստական նյութի վերլուծմամբ կատարել գիտական խոր եզրահանգումներ, բացահայտելով հայ ժողովրդի պատմական դժվար ուղին, նրա ողբերգական ներկան: Յու. Վեսելովսկին լավատեսությամբ էր նայում հայ ժողովրդի ապագային, և հավատացած էր, որ «ի հակակշիռ բոլոր անբարենպաստ հանգամանքների ու տագնապահարույց իրադարձությունների՝ հայ ժողովրդի առավել զգայուն, առույգ ու խիզախ ներկայացուցիչների հոգում չի մեռել այն հավատը, որ վաղ թե ուշ թուրքահայաստանում կբացվի նոր կյանքի արշալույս» (45, 6): Դեղինակը, քաջածանոթ լինելով «Հայկական հարցին» ու ճիշտ մեկնաբանելով նրա բովանդակությունը, հաստատ համոզված էր, որ արևմտահայության ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ կարող է հաջողությամբ պսակվել միայն այն ժամանակ, երբ մեծ ու հզոր Ռուսաստանը կբարձրացնի իր ծայրը ու կօգնի նրան, որը կատարելու համար նա ունի բավարար հիմքեր, որովհետև հայ ժողովուրդը դարեր շարունակ իր հայացքը դարձրած դեպի Ռուսաստանը՝ նրանից է սպասել իրական օգնություն (36, 200, 1, 205):

Յու. Վեսելովսկին վճռականորեն մերժում ու քննադատում էր ցարական վերնախավի ռուսիֆիկացման նպատակները, դեմ էր արտահայտվում կայսրության կազմում գտնվող այլազգի հպատակների նկատմամբ կիրառվող բռնություններին, նրանց լեզվի ու մշակույթի դեմ կատարվող ոտնձգություններին, պրոպագանդում էր տարբեր ժողովուրդների միջև համերաշխության ու փոխհամագործակցության անհրաժեշտությունը (38), գնահատում ու բարձր էր դասում համաշխարհային մշակույթի զանազանում արժեքավոր ներդրում կատարած ժողովուրդներին, մասնավորապես հայ ժողովրդին (45, 43–44):

Յու. Վեսելովսկին մարդկային հոգու ջերմությամբ ու անափ սիրով էր կապված հայ ժողովրդի ու նրա հազարամյա պոեզիայի անգերազանցելի գանձերի հետ, որոնք իրենց մեջ պարունակում են Արևելքի շռայլ գեղեցկությունն ու հմայքը: Հայկական պոեզիայի ուսումնասիրման ընթացքում նա մշտապես օգտվել է նշանավոր բանաստեղծներ Լ. Ունանեցի, Կ. Բայլմոնտի, Վ. Սոլոգուբի հայերենից կատարված գերազանց ու անթերի թարգմանություններից: «Ժամանակակից հայ գրականության ամենանշանավոր բաժիններից մեկը կազմում է քնարական պոեզիան,– գրում է Յու. Վեսելովսկին,– այն հատկապես զարգացման հասավ վերջին տասնամյակների ընթացքում՝ իր ուժերի հնարավորություններով արձագանքելով ժողովրդի

կենսական հարցերին ու նրա կարիքներին: Ռուս ժողովրդի ազնիվ զավակները, անխոնջ ու տքնաջան հայանպաստ գործունեություն ծավալելով ժողովրդական զանգվածներին՝ հաղորդակից էին դարձնում թուրքական դժոխքում կոտորվող արևմտահայության սարսափի աղաղակներին, ինչպես նաև սովալուկ փախստականների, հազարավոր որբերի տխուր հեծածանքներին: Հայկական ժողովրդական պոեզիայի ներքին խոր բովանդակության, հոգեպարար երաժշտականության ու արվեստի հզոր ուժով սրտեր նվաճելու կարողության մասին Յու. Վեսելովսկին նշում էր. «Անկախ այն ամեն դժվարությունների ու մեծ ողբերգությունների կարելի է համարձակ ասել, որ ժողովրդական պոեզիան Հայաստանում երբեք չի մահացել: Վերջին երկու հարյուրամյակների ընթացքում այն հասել է շքեղ ծաղկման» (44, 1906, 19): Հայկական պոեզիայով հրապուրվելը Յու. Վեսելովսկու համար նաև միջոց էր ցույց տալու, որ «այն դեռևս ռուսական հասարակության ու նրա առանձին անհատների կողմից արժանի ուշադրության չի արժանացել: Հայերի հետ ապրելով մերձավոր հարևանությամբ մենք իրավունք չունենք,– գրում էր նա,– բացարձակ անտարբերությամբ վերաբերվել նրանց մտավոր կյանքին ու գեղարվեստական ստեղծագործություններին»: Պոեզիան ժողովրդական ոգու վեհության արտացոլումն է, այն օգնում է ճանաչելու և գնահատելու ժողովրդի ներքին կարողությունները, ճանաչելու նրա ֆիզիկական ուժերի հզորությունն ու ապագայի նկատմամբ ունեցած լուսավոր ու անսասան հավատը (44, 1906, 19):

Յու. Վեսելովսկին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց «Եղբայրական օգնություն թուրքիայում տուժած հայերին» արժեքավոր ժողովածուի ստեղծման ու հրատարակման գործում, նրա համար գրեց «Հայ նոր գրականության բնութագրման շուրջը» բարձրարժեք հոդվածը (21, 590–591), իսկ հետագայում հանդես եկավ հայ հին ու նոր գրականությանը մվիրված բազմաթիվ արժեքավոր հոդվածներով ու մենագրությամբ՝ հայ գրականությունը ներկայացնելով իր բազմաբովանդակությամբ (66):

Հայ ժողովրդի դարավոր պատմության ու գրականության հետ կապված իր խոհերն ու ապրումները, Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները, Յու. Վեսելովսկին շարադրեց «Թուրքահայաստանի ողբերգությունը» արժեքավոր գործում: Բարձր գնահատելով հերոսական անցյալ ունեցող հայ ժողովրդի պատմությունը՝ նա լուսաբանեց նրա անցած դժվար ուղու և ողբերգական ներկայի իրողությունները,

նա լավատեսությամբ էր նայում հայ ժողովրդի ապագային, հավատում էր նրա վերածննդին: «Հակառակ բոլոր անբարենպաստ պայմանների, տագնապալի իրավիճակների,– գրում էր ռուս մտավորականը,– հայ ժողովրդի ավելի բարի, կենսախիճ ու խիզախ ներկայացուցիչների հոգում երբեք չմեռավ այն հավատը, որ վաղ թե ուշ Արևմտյան Հայաստանում կփայլի նոր կյանքի արշալույսը» (45, 43): Յու. Վեսելովսկին բարձր էր գնահատում հայ ժողովրդի պատմական դերը, նրա տեղը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Մերձավոր Արևելքում մշակութային արժեքների ստեղծման, ինչպես նաև վայրի հորդաներից քաղաքակրթության նվաճումների պահպանման ու այլ ժողովուրդներին այդ արժեքների փոխանցման գործում հայ ժողովրդի մատուցած ծառայությունները նույնացնում է Արևելյան Եվրոպայի ժողովուրդների կյանքում ռուս ժողովրդի ունեցած դերի հետ, երբ վերջինս իր վրա վերցնելով թաթար–մոնղոլական հորդաների ավերիչ արշավանքների ու ամայացնող ասպատակությունների ծանր հարվածը՝ Արևմտյան Եվրոպայի քաղաքակրթությունը փրկեց կործանումից: Նա առանձնահատուկ սիրով էր կապված հայ գրականության, մասնավորապես կատարելության հասած պոեզիայի հետ: «Այն ժամանակ, երբ որոշ ժողովուրդներ դեռևս չէին մասնակցում մարդկության մշակութային կյանքին,– գրում էր Յու. Վեսելովսկին,– նրանք (հայերը – Պ. Ս.) ստեղծել էին հարուստ դասական գրականություն»: Հետևաբար համաշխարհային մշակույթի առաջընթացի մեջ մեծ դեր ունեցող հայ ժողովրդի կյանքում եղած ողբերգական իրադարձությունները չեն կարող երկար տևել, դրանք անցողիկ են ու ժամանակավոր: «Թուրքական դաժան լուծը հանդիսանում է ամենամռայլ, ողբերգական ու ազգային մարտիրոսության բարոյական զգացմունքը բորբոքող դրվագը»,– գրում էր նա: Հայ ժողովրդի ապագա ճակատագրով մտահոգված նա ընդգծում էր. «Յանկանում են հավատալ, որ արդեն հասել է այն պահը, երբ այդ առաջամարտիկը (Արևելքում եվրոպական մշակույթի առաջամարտիկ) կարժանանա լավագույն ուշադրության և կհառնի մոխիրներից, իր հայացքը կդարձնի դեպի նոր կյանքի ծագող արևը» (45, 47): Հակադրվելով պահպանողական ու իշխանամետ ուժերի հակահայ գործունեությանը՝ Յու. Վեսելովսկին հայոց պատմության, գրականության, մասնավորապես պոեզիայի բնագավառում կատարած փաստական ուսումնասիրությունների ու այն ռուս հասարակության մեջ պրոպագանդման ընթացքում կատարում էր ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական արժեք ներկայացնող եզրա-

հանգումներ: «Կուտակված փաստերը,– գրում է Յու. Վեսելովսկին,– կարծում ենք, ոչ միայն գրական ու պատմագիտական հետաքրքրությունն են ներկայացնում, այլ նաև պերճախոս վկայությունն են ու հերքումը այն բանի, որ մեզ մոտ հաճախ անառարկելի կերպով հաստատում են, թե հայերը «անջատողականության ոգով հագեցած», օտարացած ռուս գրականությունից ու մտավոր կյանքից, թշնամանքով են վերաբերվում ամեն ինչի նկատմամբ, ինչ զրկված է հայկական ազգային գունավորումից, իբր թե գիտակցաբար անտեսում են այն, ինչ հետաքրքրում ու հրապուրում է ռուս հասարակայնությանը» (45, 45): Մերժելով պահպանողական մամուլի միտումնավոր հակահայկական ելույթները՝ Յու. Վեսելովսկին գտնում էր, որ նրանց հակահայկական ելույթները նպատակաուղղված էին հայ ժողովրդի հանդեպ անվստահություն սերմանելու, ռուս հասարակայնությանը Հայկական հարցում ապակողմնորոշելու համար: Նրանք միտումնավոր կերպով հայ մտավորականությանը մեղադրում էին հակառուսական գաղափարներ քարոզելուն: Մինչդեռ, ինչպես արդարացիորեն շեշտում էր Յու. Վեսելովսկին, փաստերը ցույց են տալիս, որ նույնիսկ սանձարձակ ռուսականացման և այլալեզու ժողովուրդների առանձնահատկությունների լրիվ անտեսման դարաշրջանում անգամ հայ բանասերներն ու հրապարակախոսները բացառիկ հետաքրքրություն էին ցուցաբերում ռուսաց լեզվի, բանասիրության ու նրա լավագույն ավանդույթների հանդեպ (45, 45–47):

Հայ ժողովուրդը միշտ էլ ակնածալից հարգանքով ու երախտագիտությամբ է վերաբերվել Յու. Վեսելովսկուն:

1900 թ. հունվարի 22–ին, Մոսկվայի հայկական համայնքի ներկայացուցիչները առանձնահատուկ շուքով նշեցին Յու. Վեսելովսկու հայոց գրականությանը նվիրված 10–ամյա բեղմնավոր գործունեությունը: «Մուրճ» ամսագրի խմբագրությունը այդ առիթով հղած հեռագրում մշում էր. «Հանձին Յու. Վեսելովսկու ռուսաց գրագետը դառնում է հային հարազատ, որը կարող է պարծենալ այդպիսի բարեխիղճ և տաղանդաւոր ներկայացուցչով... Յու. Վեսելովսկին մի բացառիկ երևույթ է ռուսաց գրականութեան մեջ հայոց գրականութեան վերաբերմամբ» (47, 1900, 1, 119–120): Անհուն ջերմությամբ ու շնորհակալ բարձր զգացումով արծագանքելով «Մուրճին»՝ Յու. Վեսելովսկին գրում էր. «Ուրախալի էր ինձ տեսնել, որ ուշադրութեան և համակրանքի այդ ցույցերն երևան են գալիս հայ հասարակութեան բազմազան խավերից, որ ազգային հիմնարկություններ, բարեգործական հաստա-

տութիւններ, ուսանող սերնդի ներկայացուցիչներ, կանայք, բեմական գործիչներ, առևտրական դասակարգ – ամենքն էլ այնպէս համասիրտ, համական արծագանք տուին իմ համեստ գրական տօնին... Դէպի նվաստ ցոյց տւած այդ սիրաշատ տրամադրութիւնը,– շարունակում էր նա,– հայ հասարակութեան կողմից, որի վերաբերմամբ ես միշտ տոգորված եմ եղել անկեղծ և ջերմ համակրանքի զգացումներով, նոր ոյժ և եռանդ է ներշնչում ինձ նաև ապագայում շարունակելու իմ գործունեութիւնը, կարողացածիս չափ ծանոթացնելու ռուս հասարակութիւնը հայ ժողովրդի ցավերին ու կարիքներին, նրա քաղաքակրթական հակումներին, նրա բուն ազգային բնույթին: Եվ հավատում եմ, որ վաղ թէ ուշ, կըզգա մի օր, երբ իսպառ կըփարատվի ռուս հասարակութեան կանխակալ և նախապաշար կարծիքներն հայերի մասին և այդ հասարակութիւնը միանգամայն արդար ու գթասիրտ, անաչառ հարատևող և եղբայրական ոգով կը վերաբերի դէպի հայ ժողովուրդը...» (47, 1900, 3, 407–408):

Ռուսական իրականության մեջ հայանպաստ հասարական կարծիքի ստեղծման և արևմտահայությանը նյութական ու բարոյական օգնության կազմակերպման գործում մեծ ավանդ ունի ռուս ժողովրդի նշանավոր գավակ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Բրյուսովը: Երբ սուլթանական թուրքիայում իշխանությունները ձգտում էին կոտորածներով ու բռնի տեղահանությամբ լուծել Հայկական հարցը, Վ. Բրյուսովը ակտիվ գործունեություն ծավալեց ռուս հասարակայնության բոլոր խավերի ուշադրությունը Հայկական հարցի վրա բնեռելու, հայ ժողովրդին սատարելու, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Նա ձեռնամուխ եղավ ուսումնասիրելու և մասսայականացնելու հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը՝ առանձնապէս համաշխարհային ճանաչման արժանացած հայկական պոետական արվեստը: Նա հրապարակեց մի շարք արժանահիշատակ գործի, մասնավորապէս «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրությունը», դարձավ ռուսական կյանքում հայ ժողովրդին համակողմանիորեն պրոպագանդող առաջամարտիկ: Նա գտնում էր, որ ռուս ընթերցողը պետք է իմանա հայ ժողովրդի երաժշտական հնչեղությամբ օժտված և Արևելքի գունեղ հանգերով հնչող խոհական խորունկ ու մեղմ պոեզիան, որովհետև այն զուլալ առվակի նման հոսում է դէպի ռուս մարդու սիրտը և երկրում հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման համար դառնում ամենավճճական գործոն» (43, 10): Բարձր գնահատելով հայ մշակույ-

թը Վ. Բրյուսովը «Արարատյան թագավորություն» հոդվածում նշում է «Հայ ժողովուրդը երկու հազարամյակ շարունակ հանդիսանում էր եվրոպական մշակույթի առաջամարտիկը Ասիայում: Ոչ ոք չի կասկածում, որ հայերը արժանի են կարեկցանքի այն աննկարագրելի տանջանքների համար, որ նրանք կրում են թուրքական լծի տակ արդեն մի քանի դար: Նա արժանի է բարձր ուշադրության, կուլտուրական ազգի իրավունքի, բառի լավագույն իմաստով: Հայ գրականությունը, որ գոյություն ունի ավելի քան մեկկես հազարամյակ, դրա լավագույն ապացույցն է» (9, 1916, 6, 12): Անվանի հայագետը ցավ է հայտնում, որ դեռևս ռուսերեն հրապարակված չկա հայ ժողովրդի պատմության մասին ամփոփ համրամատչելի գործ, որը, ինչ խոսք, կնպաստեր ռուս ընթերցողին ճանաչելու Քրիստոսի ծնունդից առաջ 7–րդ դարից հին աշխարհը ցնցող բոլոր կարևոր իրադարձությունների հետ կապված հայ ժողովրդի պատմությունը, որն իր հարուստ ու շքեղ բովանդակությամբ ստեղծագործական ոգեշնչման անսպառ աղբյուր է ինչպէս պատմաբանների, այնպէս էլ բանաստեղծների համար (43, 1918, 18):

Ռուս մտավորականների կողմից հայ ժողովրդի պատմական անցյալի վերհանումն ու մասսայականացումը, հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորմանը զուգընթաց, ստանում էր հույժ կարևոր պատմական ու քաղաքական իմաստ: Անդրադառնալով հայոց պատմության խնդրին՝ Բրյուսովը շեշտում է,–որ հին է հայ ժողովուրդը, որքան հին է նրա պատմությունը: «Հայաստանը հիշատակվում է դեռևս Աստվածաշնչում,– գրում է Վ. Բրյուսովը,– Երեմիա մարգարեի շուրթերով կոչ է արվում «Արարատյան թագավորությանը» մասնակցել Բաբելոնի կործանմանը» (9, 1916, 6, 13): Իր գոյության ընթացքում հայ ժողովուրդը կրել է բազում դառնություններ, նվաճողները սամունի նման անցել են նրա տարածքով, սակայն իր հայրենի սրբազան հողին ժողովրդի անմնացող ու ամուր կապվածությունը այն հզոր ուժն է, հայ ժողովրդի կենսունակության աղբյուրը, դարերի մեջ գոյատևելու գաղտնիքը, որ իրավամբ «Հայաստանը համեմատում են փյունիկ թռչունի հետ, որը ամեն անգամ կոտորածների ու ավերից հետո վերածնվել է նոր հզոր կյանքով» (9, 1916, 6, 13): Հայ ժողովրդի կենսունակությամբ ու հազարամյա հարուստ պատմությամբ հրապուրված Վ. Բրյուսովը ռուս հասարակությանը տեղեկացնում էր, որ հերոսական անցյալ ունեցող ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, թուրքիայում տեղի է ունենում մեծ ուժի, հարկ է օգնության ձեռք մեկնել նրան, քանի որ հայ ժողովրդի պատ-

մությունը մի ամբողջական էպոպեա է, պատմաբանի համար դեռևս չբացահայտված գանձ, հրաշալիք, որին պետք է լույս աշխարհի հանել, որպեսզի հազարագույն շողերով փայլի (24, 1916, 6, 14): Նա խորությամբ ուսումնասիրելով հայոց պատմությունն ու գրականությունը՝ իրավացիորեն շեշտում էր, որ ինչպես ռուսների, այնպես էլ այլազգի ընթերցողների համար խիստ կարևորվում է հայոց պատմության իմացությունը, մանավանդ երկրում հայանպաստ հասարակական կարծիքի ստեղծման համար: «Յուրաքանչյուր կրթված մարդ,– գրում էր Վ. Բրյուսովը,– որը հետաքրքրվում էր մեծ իրադարձություններով, պետք է իմանա հայոց պատմությունն ու գրականությունը, որովհետև հայ ժողովրդի պատմությունը յուրահատուկ գանձարան է, որից կարելի է շատ բան վերցնել» (43, 52): Տեսնելով արևմտահայության ողբերգական կացությունը, Ռուսաստանի տարբեր շրջաններում անօգնական դեգերող հայ փախստականներին, նա անխնա քննադատությանն էր ենթարկում ցարական վերնախավին, ինչպես նաև վերջինիս արյունալի գործողությունները հովանավորող մեծ տերությունների կառավարություններին, որոնք անխղճաբար աճուրդի հանելով հայկական արյունը՝ հայասպան սուլթանի հետ սակարկում էին Թուրքիայում իրենց համար նոր արտոնյալ իրավունքների ձեռք բերման համար (43, 10): Ի հակադրություն տերությունների հանցագործ անտարբերության ու սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականության, Վ. Բրյուսովը լավատեսական հավատ ուներ հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, քանի որ նա հավատացած էր, թե «նման պատմություն ունեցող ժողովուրդը մեռնելու իրավունք չունի»: Եվ այդ ժողովրդին օգնելը նա համարում էր ռուս ժողովրդի սրբազան պարտականությունը (43, 10): Նկատի ունենալով հայ ժողովրդի երկփեղկվածությունը՝ Վ. Բրյուսովը իրավացիորեն նշում էր, որ Ռուսաստանի հովանու տակ նրանց միավորումը կհանդիսանա Ռուսաստանի անկաշառ օգնությունը հայ ժողովրդին, քանի որ «Հայ ժողովրդի ճակատագիրը սերտորեն կապված է մեր ճակատագրի հետ» (43, 10),– գրում էր մեծ հունանիստ գրողը:

Այսպիսով, ընդգծում էր Վ. Բրյուսովը, Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության իմացությունը խիստ անհրաժեշտ է ոչ միայն գիտական առումով: Հայ ժողովրդի հարուստ անցյալի, նրա բազմադարյա պատմության մասսայականացումը ռուս ընթերցողին համակում էր թուրքական դժոխքում տառապող արևմտահայության նկատմամբ հարգանքով, համակրանքով ու կարեկցանքով, նրան մղում օգնություն ցուցաբերելու Ռուսաստանի տարածքներում ապաստանած հայ փախստականներին, սատար լինել նրանց (43, 18):

Մարդասիրական վեհ իդեալների պաշտպան, ժողովուրդների բարեկամության ու համագործակցության ջատագով ռուս ժողովրդի լավագույն գավակները՝ մտահոգված հայ ժողովրդի ճակատագրով, իրենց հայանպաստ գործունեությունը ծավալում էին ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ակտիվորեն մասնակցում էին Հայկական հարցի քննարկումներին խաղաղության միջազգային կոնֆերանսներում ու գիտաժողովներում, արտասահմանում հայկական և օտար մամուլի քննարկմանն էին ներկայացնում Հայկական հարցի իրենց մոտեցումները, անշուշտ, հայ ժողովրդի համար դրական որոշումների ակնկալիքներով: Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկին, նկատի ունենալով հայ ժողովրդի ողբերգական կացությունը, թուրքական կառավարության հակահայ գործունեության սաստկացումը, Բեռլինի կոնգրեսում ստանձնած պարտավորություններից հրաժարումը, ինչպես նաև եվրոպական տերությունների այդ խնդրում անտարբերությունը, Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» լրագրի խմբագրությանը հղեց կոչ–նամակ, որը «արտահայտում էր ռուսական հասարակության ջերմ համակրանքը հայ ժողովրդի հանդեպ» (9, 1890, 11, 214): Նամակը տպագրվեց թերթի «Մեր բարեկամները» ընդհանուր խորագրի տակ, ուր հողվածներով հանդես էին գալիս նաև եվրոպական հասարակական գործիչներ ու հրապարակախոսներ: «Մոսկովյան հրապարակախոսը,– գրում է քաղաքական տեսաբան, լրագրող Վ. Գուցևը,– ընդունում է, որ Հայկական հարցում տերությունների քաղաքական մրցակցությունը հանգեցնում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ոտնահարմանը: Եվրոպական տերությունները բոլորովին մոռացության են մատնել իրենց համերաշխությունն ու ստանձնած բարձր առաքելությունը, մասնավորապես Թուրքիայի տիրապետության տակ եղած քրիստոնյաների խնդրում» (9, 1890, 11, 214): Անվանի պրոֆեսորը իր մտահոգությունն էր հայտնում ստեղծված իրավիճակի համար, որը լի էր անկանխատեսելի հետևանքներով: Մահմեդական մուլեռանդության բռնկումը նա համարում էր հնարավոր, որովհետև թուրքական իշխանությունները իրենք էին հրահրում ու նպաստում դրան: Ուստի «Պայմանագրերը և ընդհանրապես միջազգային իրավունքը պահանջում է, որ եվրոպական տերությունները միջամտեն հայերի օգտին: «Տերություններ

րը,– շարունակում է Լ. Ա. Կոմարովսկին,– պետք է հրավիրեն միջազգային նոր խորհրդաժողով, որպեսզի վերանայեն ու ստիպեն սուլթանին իրագործելու Բեռլինի պայմանագրի 61–րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները, այն հաշվով, որ բազմադարյա տառապանքներից հետո հայ ժողովուրդը մոտ ապագայում հասնի ազատության...» (9, 1890, 11, 214):

Հայկական հարցում տերությունների հանցագործ անտարբերության ու նրանց թողնվությամբ 1895–1896 թթ. սուլթանական կառավարության կողմից հայկական զանգվածային կոտորածների քաղաքականության քննադատությունը հնչեցրեց լրագրող, հրապարակախոս Նովիկովը 1900 թ. մայիսի 10–ին Փարիզում բացված խաղաղության 10–րդ համաժողովում (84, 1900, 19, 293): Ռուսաստանից մասնակցում էին նաև Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Կովալևսկին, «Ռուսսկիե վեդոմոստի» լրագրի տնօրեն, խմբագիր, իրավաբանության թեկնածու Վ. Սոբոլևսկին:

Նովիկովի կողմից համաժողովի որոշման մեջ կատարվեց Թուրքիային դատապարտող լրացում: Համաժողովին մասնակից մտավորական, Բյուսելի նոր համալսարանի պրոֆեսոր, ազգությամբ ռուս «Պ. դը Ռոբերտի, ռուս մեծանուն իմաստասերն ու ընկերաբանը,– նշում է «Նոր կյանքը»,– բողոք դարձաւ այդ առաջարկութեան դէմ, զայն բոլորովին մեղմ գտնելով: Խեղճ Հայաստանը, ըսաւ, զոհ կերթա... երկու աւելի մօտիկ ածմութեանց... 300. 000 մարդ, կին եւ տղայ, որոնք վեհապետի մը հրամանով կը խոխողին, ասիկա չի՞ բավեր,– զայրոյթով արտաբերում է մտավորականը,– մարդկային գիտակցութիւնը սարսռեցնելու» (84, 1900, 19, 293): Խոսքն ուղղելով մեծ տերություններին՝ նշավակում է նրանց որպես սուլթանի հանցակիցների, որոնք «անտարբեր հանդիսատես կըմնան ամենն ահռելի ոճիրներուն»: Համաժողովն ընդունեց տերությունների քաղաքականությունը դատապարտող որոշում (84, 1900, 19, 293):

Եթե ցարական պաշտոնական շրջանները, պաշտպանելով ու հիմնավորելով կառավարության արտաքին քաղաքական ընթացքը և քաղաքական նկատառումներով թելադրված՝ մեղադրում էին սուլթանական բռնությունների զոհերին օգնող արևելահայերին, և հայ ժողովրդին ընդհանրապես, ապա առաջադեմ գործիչները ծավալուն աշխատանք էին կատարում հայ գաղթականների օգնության գործը բարենպաստ հունով վարելու համար: Երանք սրտի ցավով էին ընդունում Անդրկովկասի ռուսական սահմանն ան-

ցած գաղթականների հանդեպ ռուսական հասարակության անտարբեր պահվածքը, աշխատում էին ռուս ժողովրդական մասսաների հոգում առաջացնել դժբախտության մեջ գտնվող հայերին օգնելու ու սատար լինելու մարդասիրական ձգտումը (26, 1897, 213):

Թուրքիայի տիրապետության տակ հայ ժողովրդի ստրկական կացությունը, անվերջ շարունակվող թալանն ու կողոպուտը, ֆիզիկական բնանշանն մշտական անխուսափելի վտանգը արևմտահայերին ստիպում էին իրենց հայացքն ուղղել դեպի Ռուսաստան՝ իրենց հոգում փայփայելով քրիստոնյաների բարերար Ռուսաստանի օգնությամբ թուրքական գերությունից ազատագրվելու հույսը: Եվ պատահական չէր, որ դեռևս 19–րդ դարի 70–ական թվականներին, նախազգուշացնելով ռուս հասարակայնությանը, բարձր ու զիլ հնչեց անվանի պոետ Ֆ. Տյուտչևի սքափեցնող խոսքը.

*Опять Восток дымится свежей кровью.  
Опять резня, повсюду вой и плач...  
Не в первый раз волнуется Восток,  
Не в первый раз Христа там распинают.  
О, Русь, ужель не слышишь эти звуки...  
Ведь это кровь из сердца твоего... (21, 162).*

Ռուս բանաստեղծ Ե. Մորզովը 1895 թ. հայկական կոտորածների ազդեցության տակ գրած «Ողջուն» բանաստեղծության մեջ սրտի խոր ցավով էր ներկայացնում մահվան սարսափն ապրող արևմտահայերի տագնապը, նրանց մոխրացող ու ծխի մեջ կորած բնակավայրերը: Արտահայտելով իր ժողովրդի կարեկցանքն ու համերաշխությունը թուրքական բռնության դեմ անհավասար պայքարի ելած արևմտահայության հանդեպ, Ե. Մորզովը գրում էր.

*Привет тебе, народ многострадальный,  
Ты верить в будущность свою не устаеть,  
Под игом вековым на родине печальной  
Судьбу жестокою ты с твердостью несешь.  
Но верь, крепи и жди желанною зарей,  
Освобождение блеснет и над тобой  
Грядущий век несет конец твоим слезам. (21, LXXX).*

Արևմտյան Հայաստանում կոտորածների աշխարհագրությունը ավելի էր ծավալվում, ու մեծանում էր հայ ժողովրդի տագնապը, նրա հեծեծանքների սահմռկեցուցիչ սարսափները ողջ Ռուսաստանով մեկ: Արտահայտելով իր ժողովրդի կամքը՝ բանաստեղծուհի Ն. Կ. Ալիբեկովան «ժամանակն է» բանաստեղծությամբ տագնապ էր հնչեցնում ու օգնության կանչում արյան բաղնիքներում խեղդվող հայերին փրկելու համար: Նա գրում էր.

*Скорей, скорее на спасенье!  
Резня кровавая кипит,  
Бегут мгновенья дорогие,  
Армян вся Турция разит!  
Не медли, добрая Россия!  
Для них пробил последний час.  
И гибнут целые селенья... (69, 1898, 40, 20):*

1896 թ. Կ. Պոլսում Եվրոպայի աչքի առջև, մեծ տերությունների թողտվությամբ և, ինչու ոչ, նաև հովանավորությամբ, տեղի ունեցած ահավոր սպանդն իր գեղարվեստական արտացոլումը գտավ Վ. Շուֆի «Սվարոգով» (Հայերի կոտորածը Կոստանդնուպոլսում) չափածո վեպում: Գեղարվեստական խոսքի պատկերավոր միջոցներով հեղինակը կարողացել է բացահայտել կոտորածների պատճառները, իրադարձությունների ընթացքը և կոտորվող հայերի ահավոր տանջանքներն ու դրանց ականատես տերությունների դիվանագետներին՝ իրենց քար անտարբերությամբ (70):

Նշանավոր հնագետներ Ն. Մառը (71), Ա. Ա. Իվանովսկին (42, 1897, 1–2, 380), Մ. Կ. Նիկոլսկին (72, 1895, 2, 125–132) իրենց գիտական գործունեությամբ մեծ ծառայություն մատուցեցին հայ ժողովրդի հնագույն մշակութային արժեքները ոչնչացումից փրկելու և ռուս ժողովրդի միջավայրում մասսայականացնելու գործում: Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր, ճակատագրական ժամանակահատվածում նրանք հնագիտական պեղումներով լույս աշխարհի հանեցին, անհայտությունից կյանքի կոչեցին հայ ժողովրդի պատմության ու նրա ծագման մասին իրեղեն մասունքներ, հազարամյա նյութական մշակույթի արժեքներ, իրենց հիացմունքն էին արտահայտում հայ ժողովրդի մտավոր ու հոգևոր ստեղծագործությունների, նրա հոգևոր հարստության ու մտքի հզոր թռիչքի կապակցությամբ, նրա նկատմամբ

արթնացրին ռուս ժողովրդի հոգում կարեկցանքի, ջերմ համակրանքի ու բազմահազար փախստականներին նյութապես օգնելու և սատար լինելու մարդասիրական ծգտում:

Ամվանի հնագետ Ա. Իվանովսկին պատմական Դարույնքի (Բայագետ) բերդի պեղումների ընթացքում հայտնաբերեց Վանի թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ սեպագիր արձանագրություն, որը նրան հնարավորություն ընձեռնեց հանգել այն եզրակացությանը, որ հայերը Ուրարտուի ժառանգներն են, ու այդ տարածքը հանդիսանում է հնագույն քաղաքակրթության օջախ: Ի հակադրություն թուրքական վանդալների, որոնք ուզում էին իսպառ ջնջել հայ և Հայաստան անունը, ռուս անվանի գիտնականը պատմագիտական փաստերով հիմնավորում էր համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի ներդրումը, նրա ստեղծած արժեքները ներկայացնում քաղաքակրթ ազգերին (11, 1897, 135): Հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի, Ուրարտու–Արարատ պետության ծագման և հզորացման հարցն է քննարկում Մ. Նիկոլսկին «Հնագույն երկիր Ուրարտու (Արարատ)» աշխատությունում (42, 1895, 11, 218): Բարձր գնահատելով հնագետ Մ. Նիկոլսկու կողմից հայտնաբերած ուրարտական արձանագրությունների վերծանումն ու դրանց ուրարտագիտության մեջ ունեցած գիտական արժեքը, Ա. Ա. Իվանովսկին գտնում է, որ հնամենի այդ տարածքի վրա Ուրարտուին հաջորդել է Մեծ Հայաստան պետությունը: Հայերը Ուրարտուի օրինական ժառանգներն են (42, 1897, 1–2),– եզրակացնում է նա: «Ուրարտուն խաղացել է շատ նշանակալից դեր Արևելքի հնագույն պատմության մեջ և ժողովուրդների կյանքում: Նա աջակցեց Բաբելոնյան թագավորության կործանմանն ու քրիստոնեության հաստատմանը: Սան Ստեֆանոյի պայմանագիրը (1878 թ.) ռուսական ցարին դարձրեց Եփրատի վերին հոսանքի տիրակալը,– շարունակում էր նա,– Հնարավոր է, որ այդ տարածքներում տեղի չունենար արյունահեղությունը, եթե Սան Ստեֆանոյի պայմանագիրը չփոխարինվեր Բեռլինի պայմանագրով, որը հայերին մատնեց կոտորածի ու քայքայման»: Անհրաժեշտ է կատարվող արյունահեղությանը վերջ տալ միասնական ուժով ու փրկել կոտորվող քրիստոնյաներին (42, 1, 185):

Մոսկվայի համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմաբան–բանասեր Ի. Լիննիչենկոն իր կողմից ղեկավարվող «Նեստոր տարեգիր» ընկերության 1895 թ. հունիսի առաջին օրերին հրավիրված

հավաքություն, որին մասնակցում էին նաև պատմության ֆակուլտետի, ինչպես նաև համալսարանում սովորող հայազգի ուսանողները, հանդես եկավ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, մասնավորապես թուրքական իշխանությունների կողմից Սասունում հայ բնակչության կոտորածներին նվիրված զեկուցումով (73, 1895, 6, 126): Ռուսական մամուլում դեռևս Սասունի իրադարձությունները ամբողջությամբ չէին մեկնաբանված, հասարակայնությունը իրազեկ չէր տեղի ունեցած կոտորածներին, մասնավոր «Նովոստի» լրագրում Պետերբուրգում թուրքական դեսպանի հաղորդագրությունը՝ կոտորածների հարցում մեղադրելով հայերին, ապակողմնորոշում էր հասարակական կարծիքը (25, 1895, 37), ուստի պրոֆ. Ի. Լիննիչենկոն եվրոպական մամուլից քաղված հարուստ տվյալներով ներկաներին ծանոթացրեց հայ ազգաբնակչության զազանային կոտորածների մանրամասներին, որոնք «Ներկաների հոգում սարսափ էին առաջացնում, սառչում էր երակներում արյունը» (73, 1895, 6, 131): Այնուհետև հռետորը անդրադարձավ հայ ժողովրդի պատմության անցյալի իրադարձություններին, հատկապես Ռուսաստանի հայկական գաղթօջախների, մասնավորապես Հարավ-Արևմտյան Ռուսիայի կյանքում հայերի գրական, կուլտուրական դերին: Հետագայում ստանալով գրաքննության թույլտվությունը, Ի. Լիննիչենկոն իր այդ զեկուցումը հրապարակեց առանձին գրքով (74): Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է Հարավարևմտյան Ռուսիայում հայկական գաղթավայրերի առաջացման ու զարգացման պատմությունը, ցույց տալով, որ հայերն իրենց պատմական հայրենիքից «պոկվել ու որպես ընդհանուր փոքրիկ բեկորներ» հաստատվել են ռուսական տարածքներում: Հայերն իրենց հոժար կամքով չեն թողել իրենց հայրենիքը, այլ մահմեդական բիրտ շահագործողներն են պարտադրել նրանց հեռանալ իրենց սրբազան հողից (74, 27): Նոր հաստատված վայրերում հայերն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, համեստությամբ ու կամքի անառարկելի տոկունությամբ: Նրանք փայլուն ձեռներեց են, հոյակապ հողագործ, անզուգական շինարար: «Մենք չենք կարող չընդունել, որ հարավ-ռուսական քաղաքի պատմության մեջ հայերին պատկանում է առաջնային դերը, — գրում է նա: — Եթե հարավ-ռուսական մի քանի կենտրոններ միջնադարում հասան փառքի ու հարստության, ապա նրանք որոշակի չափով պարտական են Արևելքից եկած անսովոր առույգ ու ձեռներեց ժողովրդին, որը դարձավ Արևելքի ու Արևմուտքի միջև տնտեսական հարաբերությունների միջ-

նորդը» (74, 31): Անդրադարձ կատարելով հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման խնդրին, նա ընդգծում է. «Հայերը միաժամանակ միջնորդի դեր են կատարել Արևելքի ու Արևմուտքի քաղաքակրթությունների միջև, մշտապես վերցնելով ու հարստացնելով թե մեկը և թե մյուսը իր հարուստ ձեռքբերումներով» (74, 32):

Նույն խնդրին է անդրադառնում Կիևի համալսարանի դոցենտ Ա. Ի. Գրեմը «Ռուսաստանը և «Հայկական հարցը» հոդվածում (32, 1897, 1): Նա քաջատեղյակ լինելով հայ ժողովրդի պատմությանը՝ իրավացիորեն նշում էր, որ Հայաստանի մի մասը գտնվում է Ռուսաստանի կազմում, և հայ բնակչությունը շնորհիվ իր ընդունակությունների ու օժտված տաղանդի կարող է տնօրինել Կովկասի կյանքը ինչպես արդյունաբերության, այնպես էլ առևտրի ու մշակույթի բնագավառում: «Անհրաժեշտ է, — գրում էր նա, — օգնել արևմտահայերին, Կովկաս անցած փախստականներին, տալ նրանց սնունդ և կացարան: Նրանք ձեռներեց են ու աշխատասեր: Ռուսաստանը մեծ օգուտ կստանա նրանցից» (32, 1897, 1): Ա. Ի. Գրեմը բարձր է գնահատում հայ ժողովրդի մշակութային դերը: «Ասիայի և Եվրոպայի սահմանագծում, — գրում է նա, — այնտեղ, ուր երես առ երես հանդիպում են իրար Ասիայի ու Եվրոպայի մշակույթները, ընկած է մի երկիր, որը ծածկված է ալեհեր հնադարի հուշարձաններով, փութաջանորեն սպասելով իր աշխատասեր հետազոտողին» (32, 1897, 1): Հայկական լեռնաշխարհում իրար են բախվել բազում ցեղեր ու ժողովուրդներ, նրա վրայով հարաբերվել են Բյուզանդիան ու Պարսկաստանը, արաբներն ու պարսիկները, Ռուսաստանն ու Իրանը: Բազում քաղաքակրթությունների ժառանգորդ հայ ժողովուրդը անխնա ու անպատիժ զազանաբար կոտորվում է թուրքերի ձեռքով, «Մեր սրբազան պարտքն է օգնել նրան, ուսումնասիրել ու մասսայականացնել նրա հարուստ պատմությունը» (32, 1897, 1): Ըստ Ա. Ի. Գրեմի՝ հայերը մշակույթի, լույսի ու առաջադիմության կրողներն են: Քննադատելով հետադեմ ուժերին, որոնք թշնամանք էին սերմանում ընդդեմ հայերի, հասարակայնությանը ահաբեկելով հայ «հեղափոխականներով», նույնիսկ դեմ էին արտահայտվում Կովկասում համալսարան հիմնելու կառավարության որոշմանը, գտնելով, որ այն կդառնա «հեղափոխության կենտրոն», Ա. Ի. Գրեմը ընդգծում էր, որ «Լավ կլինի շատ ծանր կացության մեջ դրված մեր մերձավորներին վերաբերվենք եղբայրաբար, տանք նրանց միջոց և հնարավորություն լավ զգալու, մեր միջավայրում ավելի շատ լույս ընդունենք...» (32, 1897,

13–14): Եւ շնորհակալ մեծ գործ կատարեց՝ ռուսերեն թարգմանելով ու մասսայականացնելով մի շարք հայ շնորհալի գրողների՝ Ռաֆֆու, Ծերենցի, Նար–Ղոսի, Վրթ. Փափազյանի, Ղ. Աղայանի ստեղծագործությունները: Եւ ստեղծեց նաև ինքնուրույն գործեր, նյութը քաղելով հայ ժողովրդի պատմության անցյալի իրադարձություններից (32, 1899, 15–16): Արևմտյան Հայաստանում հայկական արյունալի կոտորածների եռուն շրջանում Ա. Ն. Գրենը այցելեց Թիֆլիս, մոտիկից ծանոթացավ կովկասահայ մտավորականների հետ, բացահայտեց տեղական իշխանությունների ու իշխանամետ մամուլի՝ հայ ժողովրդի դեմ ծավալվող թշնամական հարձակումների պատճառները, տեղում ձևավորված հակահայ մթնոլորտը ցրելու և հասարակական կարծիքը ճիշտ ուղու վրա դնելու նպատակով կազմակերպեց հանրային դասախոսություններ հայ ժողովրդի վաղ շրջանի պատմության թեմաներով (11, 1896, 82): Նույն խնդրին նա անդրադարձավ «Հայերը» պատմաէթնոկական ակնարկում (78, 1895, 339), ուր հեղինակը լուսաբանեց հայ ժողովրդի ծագման ու զարգացման պատմությունը հնագույն դարերից մինչև 19–րդ դարի ավարտն ընկած ժամանակահատվածը ներառյալ, մշտապես ընդգծելով Առաջավոր Ասիայի քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի կուլտուրական կարևոր դերը: Այս հիմնահարցին Ա. Ն. Գրենը ավելի ընդարձակ ու հիմնավոր կրկին անդրադարձավ «Հայ ժողովրդի պատմության ընդհանուր ակնարկ» գործում (79, 1899, 2, 1–15): Զգտելով հասարակայնության լայն շրջաններում ստեղծել հայասիրական տրամադրություններ՝ Ա. Ն. Գրենը գրում էր. «Հետաքրքրություն ներկայացնող տաղանդավոր, փոքր այս ժողովուրդը, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, բազում դարերի ընթացքում առաջնակարգ դեր էր խաղում փոքր Ասիայում այնտեղ ցանցելով քաղաքակրթության սերմեր և ազդելով Հոնիական Հուսաստանի ճակատագրի վրա: Այնուհետև բաժանվելով բազմաթիվ մանր ցեղերի,– շարունակում է նա,– միավորվում է Միդիայի գլխավորությամբ ու գրավում Եփրատի ու Արաքսի վերին հոսանքների տարածքները: Այստեղ նա առաջիններից էր, որ ընդունեց պարսկական ու մակեդոնական մշակույթը՝ տարածելով այն ամբողջ Կովկասյան արեալում: Հռոմեական դարաշրջանում այդ տաղանդավոր ժողովուրդը մեծ ծառայություն մատուցեց Հռոմեական քաղաքակրթությունը Կովկասում և Պարսկաստանում տարածելու գործում» (32, 1898, 15–16): Անվանի պատմաբան Ա. Ն. Գրենի հայամետ գործունեության, ռուս հասարակայնության մեջ հայ ժողովրդի պատմու-

թյան ու գրականության մասսայականացմանն ուղղված նրա մեծ ծառայությունը նկատի ունենալով, «Մուրճը» նշում էր. «Ռուսիայում հայ ժողովրդի գործին առանձնապես մեծ ծառայութիւն է կատարել պրիվատ դոցենտ Ա. Ն. Գրենը, որին երախտապարտ է հայ ժողովուրդը» (47, 1900, 1, 119):

Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրման և Արևելքում Ռուսաստանի ազատագրական առաքելության գաղափարն է ընկած Մոսկվայի համալսարանի և Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Վ. Ի. Գերիեի «Ռուսաստանի պատգամները Արևելքում» հոդվածի հիմքում (21, 235–246): Օգտվելով Պ. Ռոհրբախի «Թուրանիայով ու Հայաստանով» ճանապարհորդական նոթագրությունից և լավատեղյակ լինելով հայոց պատմությանը՝ նա աշխատում է լուսաբանել 19–րդ դարի 90–ական թվականներին Ռուսաստանում հայերի նկատմամբ կառավարության ու նրա հավատարիմ շրջաններում ձևավորված ոչ հայանպաստ կողմնորոշումը, «մամուլի ու իշխանությունների հարձակումները» հայերի դեմ: Այդ վարքագիծը հեղինակը նախապես ձգտում է մեկնաբանել տնտեսական պատճառներով (21, 240), սակայն խորամուխ լինելով հարցի էության մեջ, տալիս է ոչ լրիվ, միակողմանի պատասխան: «Նրանց (հայերի – Պ. Ս.) հարևաններին,– գրում է Վ. Ի. Գերիեն համամիտ լինելով Պ. Ռոհրբախի տեսակետին,– թշնամացնում է հայերի հետ այն բանը, որ հայերը հոգևոր առումով շատ բարձր են կանգնած այն ժողովուրդներից, որոնց հարևանությամբ ապրում են և որոնց հեշտությամբ հաղթանակում են մրցակցության բնագավառում: Չի կարելի մտածել,– շարունակում է նա,– որ հայերի մտավոր կարողությունները բացահայտվում են միայն գործնական հարաբերություններում: Ես գտնում եմ, որ քիչ են աշխարհում այն ժողովուրդները, որոնք գիտության նկատմամբ տածեն այնքան հարգանք և ուսման նկատմամբ նույնպիսի ձգտում, որքան հայերը, ուստի հարևանների խանդը վերածվում է նրանց նկատմամբ թշնամանքի» (21, 240),– եզրակացնում է նա: Ինչպես երևում է Վ. Ի. Գերիեն պատմությանը այսքան ծանոթ ու հմուտ, քաղաքականությունից հեռու լինել չէր կարող, այլապես հայերի նկատմամբ ռուսական հասարակայնության մեջ ձևավորված այդ սառնությունը պետք է բացատրեր քաղաքականությամբ: Հետևաբար, հասկանալի պատճառով հեղինակը նման մեկնաբանությունից զերծ է մնում: Այնուամենայնիվ, հայոց պատմության նրա իմացությունն ու նրա կողմից ռուս հասարակայնության մեջ մասսայականացումը ունեցավ դրական առաջընթաց ռուս հասարակության կողմից

արևմտահայ գաղթականներին նյութական, առանձնապես բարոյական օգնության ցուցաբերման խնդրում:

Վ. Ի. Գերիեն անդրադարձ է կատարում հայ ժողովրդի պատմության անցած դարերը: «Բազում դարերի ընթացքում,– գրում է նա,– հայերը ստիպված ենթարկվելով հանգամանքներին՝ հեռացել են իրենց հայրենիքից, հաստատվել օտար երկրներում: Այդ ամենը կատարվել է վայրի քոչվորական ցեղերի ասպատակության ու նրանց երկիրը քայքայելու հետևանքով, հատկապես թուրքական անտանելի ճնշումն ու շահագործումը հայաթափել է երկիրը» (21, 242): Սակայն Պ. Ռոհրբախի հետևողությամբ Վ. Ի. Գերիեն ևս չենտուներ է՝ կրթության ու լուսավորության հանդեպ հայ ժողովրդի տածած սերը, ուստի որ երկրում էլ հաստատվել է հայը, առաջին գործը եղել է դպրոցաշինությունը: «Թույլ տվեք այդ ժողովրդին զարգանալու,– գրում էր Պ. Ռոհրբախը ու նրա հետևողությամբ ընդգծում է Վ. Ի. Գերիեն,– և օգնեցեք նրան հոգեպես ու բարոյապես բարձրացնելու, և բոլորը կգարմանն նրա առաջընթացով...» (21, 244): Ի մի բերելով հայ ժողովրդի ողբերգական վիճակի մասին իր մտորումները և ճիշտ համարելով Պ. Ռոհրբախի կարծիքը՝ դեպի Ռուսաստանն ունեցած հայերի ծգտման մասին, նա գրում է. «Հայերի բոլոր ցանկությունների ու հույսերի իրականացման խնդրում վճռական խոսքը պատկանում է Ռուսաստանին», և «Եթե Ռուսաստանը համագործակցի ազգային հիմքի վրա հայերի հոգևոր բարձրացմանը, հայերը կդառնան Ռուսաստանի ամենամիլիոնավոր ժողովուրդը» (21, 245): Սակայն պաշտոնական շրջանների անհարկի քարոզը, թե հայերը «անջատողականներ են ու մտադրություն ունեն հիմնելու ինքնուրույն հայկական թագավորություն,– գրում է հեղինակը, ապա Հայաստանում չկա բանական մտածող որևէ մեկը, որ մտածի Հայաստանը Ռուսաստանից անջատելու հնարավորության մասին»: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է, որ Ռուսաստանը, եթե չխոչընդոտի, այլ նպաստի հայ ժողովրդի առաջընթացին, ապա այն կդառնա Արևելքում իր քաղաքականության հենարանը, իսկ Ռուսաստանն Արևելքում ունի պատմական մեծ առաքելություն, քանի որ «Ռուսաստանը հանդիսանում է Արարատի ու Տավրոսի միջև ընկած հողերին տիրելու Թուրքիայի ժառանգորդը» (21, 246): Դրա համար էլ հայկական պատմական տարածքների միացումը Ռուսաստանին հավասարազոր է թուրքական դարավոր ատելի լծի տապալմանը և արևմտահայության ազատագրմանը, անկախ այն բանից, թե ինչ գաղութային նպատակներ էր հետապնդում ցարիզմը Մերձա-

վոր Արևելքում: Հետևաբար «Ռուսաստանի առաքելությունը Արևելքում հանդիսանում է թուրքական լծի տապալումը և հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը» (21, 246),– եզրակացնում է Վ. Ի. Գերիեն:

Հայ ժողովրդի ողբերգական պատմության, զանգվածային ջարդերի ու մեծ տերությունների խարդավանքների լուսաբանմանն է նվիրված Վ. Վ. Տենիշևի «Քաղաքակրթության ամոթը թուրքական գործերի առիթով» արժեքավոր գործում (76, 109):

Պաշտպանելով հայերին պաշտոնական շրջանների հարձակումներից՝ Վ. Վ. Տենիշևը նշում էր, որ ծառայամիտ մամուլի մի շարք օրգանների կողմից հայերին ներկայացրած մեղադրանքները անհիմն են, նա գտնում էր, որ եվրոպական տերությունների միջամտությունը, դիվանագետների կողմից ներկայացված բարենորոգումների ծրագրերն ու դիվանագիտական երկարատև գրագրությունները անզոր են, սուլթանը խորամանկությամբ օգտվում է տերությունների միջև եղած հակամարտություններից, շարունակում է հայասպան իր գործունեությունը: Կոտորածները կարելի է դադարեցնել ու բարելավել արևմտահայության վիճակը միայն Ռուսաստանի ակտիվ ու վճռական միջամտությամբ: «Հայկական հարցի» լուծումը,– գրում էր նա,– պետք է կատարվի արմատական ձևով, մեկընդմիջտ, այն է՝ Հայաստանը Ռուսաստանին միացումով» (76, 22):

Ռուսաստանի կազմում գտնվող այլազգի ժողովուրդների իրավունքների պաշտպանությամբ ու այն ոտնահարող, ազգային անհանդուրժողականություն քարոզող պաշտոնական հետադեմ լրագրողների դեմ անզիջում ու հետևողական պայքար էր մղում նշանավոր պատմաբան, լրագրող–հրապարակախոս Գ. Սիգման (Ս. Ն. Սիրոմյատնիկով): Իր ամբողջ գործունեության ընթացքում մերժելով նեղ, ազգային գաղափարները, մերկացնող քննադատության ենթարկելով քաղաքական հատուկ նպատակներ հետապնդող ազգայնամուլներին, նա որպես օրվա գլխավոր խնդիր, հիմնական գաղափար, առաջին պլան էր մղում ռուս և ռուսահպատակ ժողովուրդների բարեկամության միտքը: Նա ռուս ժողովրդի ու այլազգի ժողովուրդների համերաշխ համագործակցության ու բարեկամության մեջ էր տեսնում Ռուսաստանի հետագա ծաղկումն ու հզորացումը: Հայ ժողովրդի թուրքական լծից ազատագրումը և նրա դրության հետագա բարելավումը նա հնարավոր է համարում հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմամբ (21, 463): Այդ գաղափարին համահունչ էր գործում նաև ռուս ժողովր-

դի նշանավոր զավակ, այն ժամանակ դեռևս երիտասարդ գրող, վիպասան Ա. Ն. Տոլստոյը: Նա տարբեր ազգերի ու ժողովուրդների կուլտուրական մերձեցման ու համագործակցության ջերմ կողմնակիցն էր: Ցարիզմի հպատակության ենթակա ժողովուրդների հանդեպ պաշտոնական շրջանների կողմից գործադրվող բռնի ռուսականացման ու ազգային ատելություն քարոզողներին նշավակելով, նրանց անվանում էր ծառայամիտ, նեղ ազգայնական գաղափարների պատյանում պարփակված գործիչներ, որոնց գործունեությունը նպատակառդղված է ցարիզմին պաշտպանելու գործին, սակայն մեծ վնաս է հասցնում ռուս անվանն ու նրա արժանապատվությանը (19, 1895, 11, 101): Մոսկվայի Լազարյան ճեմարանի 50-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում Գ. Ի. Քանանյանը հայ ժողովրդին առանձնահատուկ հատկանիշը համարում էր աշխատասիրությունն ու անհանդուրժողականությունը բռնության նկատմամբ, սակայն պաշտոնական հետադեմ ուժերը, շրջանցելով այն, անվանարկում են հայ ժողովրդին, նրան վերագրելով «առևտրական», «խռովարար» աշխատելով ռուս ժողովրդի ատելությունը հարուցել հայերի դեմ (77, 1891, 73): Անդրադառնալով հայ-ռուսական հարաբերությունների խնդրին «Հայերը Ռուսաստանում» հոդվածում փաստական հարուստ նյութի վերլուծմամբ նա եզրակացնում էր, որ երկու ժողովուրդների պատմությամբ հիմնավորված բարեկամական հարաբերությունները անքակտելի են (21, 513):

Հայկական հոգևոր մշակույթի գնահատման գործում մեծ է արվեստագետ Ե. Կ. Ռեդիկի դերը: «Կայսերական հնագիտական ընկերության հավաքած նյութերի ու էջմիածնի գրապահոցում պահպանված փաստաթղթերի հիման վրա նա ստեղծեց իր տեսակի մեջ արվեստագիտական եզակիորեն յուրահատուկ արժեք ներկայացնող գործ (75): «Հայ ժողովուրդն իր բազմադարյա պատմության ընթացքում,– գրում է նա,– մշտապես տեսել է աղետ ու մահ, աչք չի բացել ասպատակություններից ու կոտորածներից: Համեմատաբար խաղաղ կյանքի կարճատև շրջանում երկնել է արվեստի անկրկնելի գործեր, որոնք իրավամբ զարմանք ու հիացմունք են պատճառում: Հայկական ճարտարապետական կոթողներն աչքի են ընկնում իրենց զարդաքանդակներով: Առանձնապես աչք են շոյում որմնասյուներից ու կամարներից կախ ընկած բնականից չտարբերվող խաղողի ողկույզները, նրանցից շատերը բարբարոսաբար ոչնչացված են, սակայն այդ վիճակում էլ գեղեցիկ են: Իսկ հայկական սրբապատկերները,– շարունակում է արվեստաբանը,–

մանրանկարչությունը արվեստի կատարելություն են: Ինքնուրույն ու ազատ կյանքի պայմաններում ինչեր կարող էր ստեղծել հայ ժողովուրդը» (75, 25): Ի հակադրություն արևմտահայության անազատ կյանքի, «Ռուսաստանի հովանու տակ հայ ժողովուրդի մի հատվածը ապրում է լիարյուն կյանքով...» (75, 27),– իրավացիորեն նշում է հեղինակը: Եվ դա հիմնավորվում է նույնիսկ ամենակարևոր բնագավառներից մեկում հայերի ակնառու առաջընթացով: 1896 թ. Կովկասում գործում էին շուրջ 300 ծխական դպրոցներ, այն դեպքում, երբ 70 տարի առաջ դպրոցի մասին մտածել անգամ չէին կարող՝ ամբողջը ծածկված էր ասիական բարբարոսությամբ (21, 242–243):

Արևմտյան Հայաստանում ու թուրքական կայսրության մյուս հայաշատ վիլայեթներում մոլեգնող զանգվածային ջարդերը, կոտորվող արևմտահայերի սարսափի աղաղակները արծագանքեցին ողջ Ռուսաստանով մեկ, ուր ապաստարան որոնող փախստականների ու կովկասահայության դեմ հարձակման էին անցել ցարիզը և նրա հլու կամակատար հետադեմ մամուլը: Ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, երբ հասարակությունը ապակողմնորոշվելով երկվությամբ էր վերաբերվում այդ իրադարձություններին: Մի կողմում հավատակից դժբախտության մեջ հայտնված փախստականներն ու կայսրությանը միշտ հավատարիմ կովկասահայությունը, իսկ մյուս կողմում իշխանություններն ու նրանց հնազանդ հետադեմ մամուլը: Հասարակայնության առանձին սոցիալական շերտեր կարեկցելով ցանկանում էին օգնել ու սատարել սովալլուկ ու բոկոտն փախստականներին, սակայն իշխանությունները խոչընդոտում էին:

Ստեղծված իրավիճակում ռուս հասարակությանը կողմնորոշելու, հայ ժողովրդի նկատմամբ ունենալիք վերաբերմունքը ճշգրտելու և փախստականներին օգնելու խնդիրը լուծելու գործը իրենց ուսերին վերցրեցին ռուսական առաջադիմական մամուլը և նրա շուրջը համախմբված հրապարակախոսները:

Նրանք անհրաժեշտ էին համարում ավելի ուշադիր և հիմնովին ուսումնասիրել ու լուսաբանել, քարոզչական բոլոր միջոցներով մասսայականացնել ու հասարակական գիտակցության մեջ մտցնել Հայկական հարցի ճիշտ բովանդակությունը, քննադատել այդ հարցին թշնամաբար տրամադրված ուժերին՝ հիմնավորելով, որ հայ ժողովրդի հանդեպ նրանց ունեցած տեսակետները կեղծ են, որ դրանով նրանք ապակողմնորոշում են ռուս հասարակությանը (9, 1896, 11, 116):

Հայտնի ռուս իմաստասեր Վ. Սոլովյովը, նկատի ունենալով ռուս բազմաթիվ լրագրողների ու հրապարակախոսների իշխանությունների հանդեպ ունեցած ծառայամիտ վարքագիծը և քաղաքական նկատառումներով հայերի դեմ նրանց հարձակումները, կովկասահայությանը վերագրվող մեղադրանքների անհիմն լինելը, ինչպես նաև արևմտահայության կոտորածները հիմնավորելու թուրքական իշխանությունների ստահող հայտարարությունները, գրում էր. «Ես հրապարակախոս դարձա ճիշտ այն ժամանակ, երբ մեր հասարակական կյանքում կարևոր առիթներ եղան մի տարրական սկզբունքի պաշտպանության համար, այն է՝ խղճի ազատության պաշտպանության, ինչպես նաև հասարակական կյանքում նրա անհրաժեշտությունը պրոպագանդելու համար: Հարկ է հայկական հարցի մեկնաբանության ու գաղթական հայերին օգնելու և սատարելու հարցին մոտենալ այդ դիտակետով» (13, 1897, 42),– եզրակացնում էր նա:

Հանձին Վ. Սոլովյովի՝ ռուս հասարակական մտածողության մեջ գործել սկսեց սակավաթիվ այն մտածողներից մեկը, որը ռուս իրականության մեջ հող նախապատրաստեց և սկսեց քարոզչությամբ հիմնավորել այլադավան ու այլազգի ռուսահպատակների իրենց մայրենի լեզվով խոսելու, բացատրվելու անհրաժեշտությունը, այն դեպքում, երբ ցարիզմը վարում էր կոշտ համառուսացման քաղաքականություն: Վ. Սոլովյովի մատնանշած ուղղության հավատարիմ հետևորդն էր ռուսական կայսրության պաշտոնական օրգան «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի տնօրեն և հրատարակիչ իշխան Է. Է. Ուխտոմսկին: Նա ավելի պարզ ու հստակ էր ձևակերպում հասարակական կյանքում խղճի ազատության և այդ վճռական գործոնով Հայկական հարցը ռուս հասարակության սոցիալական շերտերին հասցնելու, հասկանալի դարձնելու գաղափարը: Ըստ նրա, խղճի ազատության հարցը ոչ միայն արդարության պահանջն է, այլ այն բացահայտելու ամենաճիշտ ճանապարհն է, «որը կարող է շաղկապել իրար պետության բոլոր կարևոր մասերը» (13, 1897, 114):

Արևմտյան Հայաստանում ծավալվող արյունալի իրադարձությունները, կովկասյան իշխանությունների ոչ հայանպաստ ձեռնարկումները աստիճանաբար առաջ էին բերում ռուսական հասարակայնության հակազդեցությունը: Նման տրամադրությունները անմիջապես իրենց հայանպաստ քարոզչական գործունեության ընթացքում օգտագործում էին հայամետ գործիչները՝ աստիճանաբար ընդարձակելով իրենց համակիր ուժերի շրջա-

նակները: Նրանք առավելապես կարևորում էին մամուլի դերը, որը հրապարակախոսական ամբիոն լինելով, ավելի մոտիկ էր կանգնած մասսային և ավելի մեծ ընդգրկում ուներ, կարողանում էր թափանցել հասարակության մեջ, սերմանել անհրաժեշտ ու բարձր գաղափարներ (9, 1897, 7, 171): Պահպանողական ու իշխանամետ մամուլի օրգանների ոչ հայանպաստ դիրքորոշումը բացասական ու ծանր հետևանքներ ունեցավ արևմտահայ փախստականների օգնության խնդրում ռուս հասարակության կողմնորոշման համար: «Եթե ռուս հասարակությունը սկզբում առանձնապես չէր էլ տարված հայերին օգնության կազմակերպման մտահոգությամբ, «Հայերի մասին» հոդվածում գրում էր հրապարակախոս Ն. Գորենկոն,–ապա այդ գործում «հիմնական մեղավորը ռուսական պահպանողական մամուլն էր, որը համուր կառավարության արտաքին թուրքամետ քաղաքականության, հայերի հանդեպ սառը, երբեմն նաև թշնամական մոտեցում էր ցուցաբերում» (10, 1897, 17): Ակտիվ ու վճռական դեր հատկացնելով մամուլին, Է. Է. Ուխտոմսկին մշուս է. «Հրապարակախոսը մամուլի միջոցով կապ է պահպանում շրջապատող հասարակության հետ, հարկավոր պահին նետվում է հասարակական կյանքի հորձանուտը, հեղինակավոր կերպով պաշտպանում ազգային ու համամարդկային սուրբ գաղափարներ» (13, 1896, 74): Մատնանշելով մամուլի վճռական դերը, միաժամանակ ընդգծում էին, որ եթե մամուլը անկարող է կանխորոշել կառավարության քաղաքականությունը, սակայն երկրում հասարակական կարծիքի ձևավորման գործում անգնահատելի ծառայություն կարող է մատուցել (9, 1897, 7, 171): Առօրյա կյանքի յուրաքանչյուր պահին մամուլի միջոցով մերժվում, ժխտվում կամ խրախուսվում են ընդդիմադիր, ինչպես նաև համակիր լրագրողների մտքերն ու դատողությունները: «Հայանպաստ հասարակական կարծիքը ճիշտ հունի մեջ դնելու համար,– մշուս է Ա. Ն. Սազոնովը,– անհրաժեշտ է ավելի հիմնովին ու խորությամբ ուսումնասիրել Հայկական հարցը, տալ նրան համապատասխան ուղղություն: Չվարվել այնպես խիստ ու թշնամաբար, ինչպես կատարում են մեզ մոտ մի շարք լրագրեր»: Իր խոսքը մասնավորելով ռուս առաջադիմական մամուլի ուղղվածության և նրա առջև դրված խնդրին՝ հրապարակախոսն ավելացնում է. «Ռուսական մամուլի ուսերին ընկած է ռուս մեծ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանում ապրող ազգերի ու ժողովուրդների հարգանքն ու համակրանքը մասսայականացնելու պարտականությունը: Ռուս անվան ու գործին

բարի ծառայություն չեն մատուցում այն լրագրերն ու ամսագրերը, որոնց սյունակներից չեն իջնում հայերի հասցեին կատարված անմիտ մեծամտությունը և չարական կարծատեսությունը» (9, 1897, 7, 171):

Անհաշտ պայքար մղելով պահպանողական ուժերի նեղ ազգայնական գաղափարների ու ռուսահպատակ այլացեղ ժողովուրդների նկատմամբ նրանց կողմից նյութվող թշնամանքի դեմ, ռուս նշանավոր իմաստասեր Վ. Ս. Սոլովյովը առաջադրում էր արդարության, առաջադիմության, ժողովուրդների եղբայրության ու փոխադարձ օգնության գաղափարը (50, 374): Այդ համամարդկային սկզբունքներն էր պաշտպանում նա, պայքարելով հետադեմ այն ուժերի դեմ, որոնք ներծծված ազգայնական թույնով հարձակում էին ձեռնարկում ռուսահպատակ այլազգիների դեմ: Այդ ուժերը, ծառայելով իշխանություններին, նսեմացնում էին հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը, և կրկնելով իրենց թուրք գաղափարակիցներին մեղադրում էին հայերին: Մինչդեռ «Նովոստի» լրագիրը, ընդգծելով հայ ժողովրդի փառավոր անցյալը, ցավ է հայտնում, որ մինչև այժմ նա ենթակա է թուրքական բռնություններին ու մասսայաբար կոտորվում է: «Փոքր Ասիայի հայերը,– նշում է լրագիրը,– փառավոր պատմական անցյալ ունեցող, մի չափազանց ընդունակ ազգ են, և բոլորովին անարդար կերպով տանջվում են մինչև այժմ թուրքական կառավարության տիրապետության տակ» (37, 1896, 19): Առաջադեմ հրապարակախոսները, դիմելով ռուս ժողովրդին, կոչ էին անում «եղբայրական ձեռք մեկնել հայ ժողովրդին, պաշտպանել նրան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամու դեմ, վճռականորեն հիմնավորելով Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրության անհրաժեշտությունն ու օրինաչափությունը» (48, 1899, 74), քանզի հայ ժողովուրդը Ռուսաստանին հավատարիմ է ու նվիրված, նրա խոշոր մի մասը ապրում է Ռուսաստանի հովանու ներքո (13, 1898, 214):

Յետևաբար ռուս առաջադեմ գործիչները հանդես էին բերում հարևան փոքր ժողովուրդների հանդեպ հարգանքի, նրանց ազգային արժանապատվությունը ճանաչելու և գնահատելու կամք ու կարողություն: Հայ ժողովրդի դեմ պաշտոնական մամուլի հարձակումները դիմակայելու, ռուս հասարակությանը ճիշտ կողմնորոշելու, հայանպաստ գործունեություն ծավալելու առաջադիմական մամուլի աշխատանքը բարձր գնահատելով «Մուրճը» գրում էր. «Իր կոչման բարձրության վրա կանգնած մամուլը հզոր ուժ է, որ խթանի նման առաջ է մղում ժողովրդի քաղաքակրթությունը: Իր

նպատակին ծառայող մամուլը,– շարունակում է ամսագիրը,– մի անհաղթահարելի զենք է, որ միշտ պաշտպանում է լավն ու բարին, գեղեցիկն ու ճշմարիտը: Մամուլը քաղաքական կյանքի տոն տվողն է, ընթացիկ կյանքի հայելին...» (47, 1901, 10, 174):

Մամուլի միջոցով ռուս առաջադեմ մտավորականները ձգտում էին հայկական հարցի մասին նախկինում ստեղծված կեղծ ու թյուր կարծիքը ցրել, ձևավորել հայանպաստ կարծիք: Ա. Ն. Սազոնովը գրում էր. «Մենք, ռուսներս ավելի ուշադիր պետք է լինենք հայկական հարցում, հատկապես ռուս կրթված մարդը պետք է մեր հասարակության մեջ հայերի մասին եղած վատ կարծիքը ցրի և ստեղծի իրական հայանպաստ մթնոլորտ» (9, 1896, 11, 110): Նկատի ունենալով հայկական հարցի շուրջը տեղի ունեցող դիվանագիտական խաղերն ու քաղաքական տարածայնությունները՝ նրան ծայնակցում էր Վ. Գոլմստրեմը՝ իրավացիորեն ընդգծելով, որ «Համաշխարհային կարևորության առումով ոչ մի հարց քրիստոնեական ժողովուրդների համար բարդ ու դժվարին չի եղել, այնքան չի չարչրկվել, որքան հայկական հարցը» (13, 1896, 243): Հակադրվելով հայկական հարցի շուրջը թուրքական և թուրքամետ մամուլի կողմից արհեստականորեն բարձրացրած կեղծ աղմուկին ու ստահող լուրերի տարածման քաղաքական միտումներին՝ Վ. Գոլմստրեմը «Քարերն էլ են աղմկում» հոդվածում գրում էր, որ «Հայկական հեղափոխական ազիտացիայի մասին նրանց տարածած լուրերը կեղծ են: Այդ ամենը կատարվում են կանխատեսված կերպով: Նրանք միայն քողարկում են հիմնական հարցը: Թուրքական կառավարությունը դրանով վարագուրում է հայկական արյունալի կոտորածները» (13, 1896, 243): Իսկ ռուս հասարակայնությանը ապակողմնորոշում են հետադեմ ուժերը՝ աշխատելով խոչընդոտել հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորմանը: Մինչդեռ ճշմարիտ ու արդարացի հասարակական կարծիքին մեծ տեղ էին տալիս առաջադեմ մտածողները, գտնելով, որ «չարի ու բռնության դեմ պայքարում,– շեշտում է հրապարակախոս Ս. Ն. Յուժակովը,– հասարակական կարծիքը մեծ դեր է խաղում ոչ միայն արտասահմանում, այլ նաև մեր մոտ, մանավանդ հայկական հարցում, որը ճիշտ չի ընկալվում ռուս հասարակության որոշ ուժերի կողմից» (19, 1896, 382):

Ռուս առաջադեմ մտավորականները, քննադատելով հայկական հարցի բովանդակությունը ձևախեղման ենթարկող ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ուժերին, միաժամանակ ակտիվ պայքար էին մղում երկրի ներսում

ռուսահպատակ արևելահայության նկատմամբ իշխանությունների ու պահպանողական ուժերի կողմից գործադրվող ոչ հայանպաստ գործողությունների դեմ:

Հայ ժողովրդին օգնելու և ռուս հասարակայնության մեջ հայանպաստ կարծիք ձևավորելու ու ժողովրդական լայն մասսաների ուշադրությունը հայկական հարցի վրա սևեռելու նպատակով ռուս առաջադեմ մտավորականները՝ մատնացույց անելով Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում հայերին օգնության նպատակով ստեղծված ընկերությունների ծավալած հայանպաստ գործունեությունը, իրենց մտահոգությունն էին հայտնում, որ Ռուսաստանում դեռևս նման շարժում չի նկատվում, իրենք ևս ձեռնամուխ եղան հայ-ռուսական ընկերությունների ստեղծմանը (59, 1896, 76):

Շուտով նրանց այդ ձեռնարկումը տվեց իր արդյունքը: Մոսկվայում, ապա Պետերբուրգում ստեղծվեցին հայ-ռուսական առաջին ընկերությունները, որոնք հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված հանրային դասախոսությունների միջոցով ժողովրդական զանգվածներին ծանոթացնում էին հայ ժողովրդի անցյալի ու ողբերգական ներկայի իրողություններին, բացահայտում համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում հայ ժողովրդի ունեցած մեծ ներդրումը և ընդգծում, որ 20-րդ դարի նախաշեմին այդ ժողովուրդը ենթարկվում է թուրքական բարբարոսների գազանություններին, զանգվածային կոտորածներով իրագործվում է նրա ֆիզիկական բնաջնջումը (9, 1897, 1, 151): Նրանց ջանքերով առաջադիմական մամուլի օրգաններում հրապարակվեցին հայ ժողովրդի պատմությանը, գրականությանն ու արվեստին նվիրված ուշադրության արժանի հրապարակախոսական հոդվածներ՝ հայերին պաշտպանելով հետադեմ ուժերի հարձակումներից: Հայ ժողովրդի պաշտպանությանն ուղղված առաջադեմ հասարակական ուժերի ձայնն այնքան հզոր էր ու վճռական, որ նրա ազդեցության ներքո պաշտոնական մամուլի որոշ օրգաններ հրաժարվեցին իրենց նախկին ոչ հայանպաստ կողմնորոշումից, իսկ մի մասն էլ ստիպված մեղմացրեց իր արտահայտման տոնը հայերի հանդեպ: Նման մոտեցման առաջին օրինակը ցույց տվեց «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը իր հայամետ գործունեությամբ: Լրագրի հրատարակիչ և տնօրեն, բանաստեղծ իշխան Է. Է. Ուխտոմսկու անմիջական նախաձեռնությամբ ծրագրվեցին ու գործունեության մեջ դրվեցին Հայկական հարցում ընդհանրապես և մասնավորապես հայ փախստականներին օգնություն ցույց տալու լրագրի մոտեցումները:

«Մենք երբեք ձեռք չենք բարձրացնում,– գրում էր նա լրագրի առաջնորդողում,– Ռուսաստանի կազմում գտնվող երկրների ու ժողովուրդների, կրոնական տարբեր դավանանքների ու ցեղային պատմական կառույցները ներկայացնող տարրերի վրա: Մենք հարգում ու պահպանում ենք այն, ինչ հնուց թանկ է ու հարազատ» (13, 1896, 15): Լրագրի շուրջը համախմբված հրապարակախոսները բացահայտում էին Հայկական հարցի ճշմարիտ բովանդակությունը, կոչ էին անում ռուս ժողովրդին օգնության ձեռք մեկնել արևմտահայերին, մերկացնող քննադատության էին ենթարկում հակահայ տրամադրություններ սերմանող կառավարական շրջանների գործիչներին, ձգտելով ռուս ժողովրդին Հայկական հարցում կողմնորոշել, վերադարձնել ճիշտ ուղու վրա: «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի, նրա հայամետ լրագրողների Հայկական հարցում որդեգրած ճիշտ կողմնորոշման ու ակտիվ հայանպաստ հետևողական ու վճռական գործունեության հետևանքով պաշտոնական մամուլի մյուս օրգանները ևս սկսեցին վերակողմնորոշվել Հայկական հարցում: Մեղմացնելով հայ ժողովրդի նկատմամբ իր տոնը՝ կառավարամետ «Պրավիտելստվեննիյ վեստնիկ» լրագիրը սկսեց հրապարակել հայանպաստ հոդվածներ: Առանձնահատուկ արժեք է ներկայացնում «Հայաստանը և ռուս ժողովրդի վերաբերմունքը նրա նկատմամբ» հոդվածը, որում հեղինակը փաստական նյութի հիման վրա լուսաբանում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության պատմությունը, որի ակունքները իրավացիորեն փնտրում է Կիևյան Ռուսիայի ժամանակներում: Առանձին ջերմությամբ է արտահայտվում ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուս զինվորներին գրկաբաց դիմավորող հայ բնակչության ու ռուսական բանակում մարտական մկրտություն անցած և հերոսության հրաշքներ գործած հայ քաջորդիների մասին: Հոդվածագիրը իրավացիորեն ընդգծում է այն միտքը, որ թուրքիայում հայկական կոտորածները կատարվել են դեռևս 17–18-րդ դարերում և առավել դաժանությամբ, զանգվածային ու հետևողական կերպով 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի նախաշեմին (35, 1896, 54): Ճիշտ է, հայ փախստականներին նյութական օգնության կազմակերպման մասին դեռևս լռում էր, սակայն բարոյական օգնության հունը արդեն համահարթվում էր, մասնավոր, որ կոտրելով լռության սառույցը, քննադատական խոսք էր ասում թուրք ջարդարարների հասցեին, որոնք մտացածին ու կեղծ լուրեր էին տարածում, թե իբր թուրքիայում կոտորածները կատարվում էին հայ հեղափոխականների մեղքով, որ հայերը լինելով ազ-

գաբնակչության չնչին փոքրամասնությունը՝ իրենք են առաջինը նախահարձակ լինում և մահմեդական ազգաբնակչությանը զոհեր պատճառում: «Թուրքական պաշտոնական շրջանների կողմից շրջանառության մեջ դրված այդ կեղծ լրատվությունը,– նշում է լրագրողը,– նպատակ է հետապնդում արդարացնել թուրքական իշխանություններին և ապակողմնորոշել համաշխարհային հանրությանը» (35, 1896, 54): Կառավարամետ այդ լրագրի Յայկական հարցում նման շրջադարձը հատկանշական էր նաև նրանով, որ թուրքական պաշտոնական շրջանների վերը նշված իրականության հետ կապ չունեցող կեղծ ու ստահող վարկածները նույնությամբ ընդունվում ու ռուսական հասարակության մեջ պրոպագանդվում էին ցարական դիվանագետների, պետական ծառայողների, չինովնիկների ու նրանց համախոհ մամուլի օրգանների միջոցով, նպատակ ունենալով պաշտպանել ու հիմնավորել Մերձավոր Արևելքում ցարիզմի արտաքին քաղաքականությունը ընդհանրապես և մասնավորապես Յայկական հարցում որդեգրած նրա կողմնորոշումը: Լրագիրը քննադատելով ու ժխտելով թուրքական իշխանությունների կեղծ լրատվությունը՝ օգնում էր ռուս հասարակայնությանը ճիշտ կողմնորոշվելու Յայկական հարցում:

Յայնպես մեծ ու արգասաբեր գործունեություն ծավալեց անվանի հրապարակախոս Ա. Ն. Սազոնովի խմբագրությամբ հրապարակվող «Ռոսիա» ամենօրյա լրագիրը: Պաշտպանելով կովկասահայությանը Գոլիցինյան վարչակարգի բիրտ գործողություններից ու նրա համախոհ խավարամիտ և ազգայնական լրագրերի հարձակումներից, ժխտելով ռուսիֆիկացման բռնի մեթոդները՝ «Ռոսիան» գրում էր. «Ռուսացումը մենք հասկանում ենք բացառապես այն ձևով, որ ռուսահպատակ այլազգիների մեջ ամրապնդվի ռուսական պետականությունը, հնարավորության սահմաններում նրանց մեջ տարածվի ռուսական օրենսդրությունը, ռուսական դատարանն ու դատական հաստատությունները, ռուսական մշակույթը: Ռուսական պետական կրթությունը,– շարունակում է Ա. Ն. Սազոնովը,– ընդունելով որպես քաղաքական կարգ ու կանոնի անհրաժեշտ պայման, մենք ենթադրում ենք, որ այլազգիները պետք է տիրապետեն պետական լեզուն: Դպրոցը ուսուցանում է պետական իրավունքները, որին իրավասու լինելու համար ռուսահպատակը իմանա այդ լեզուն» (48, 1899, 137):

Ընդգծելով ռուսահպատակ այլազգիների համար ռուսաց լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը՝ առաջադեմ հրապարակախոսը միաժամա-

նակ կողմնակից էր, որ այլազգիները տիրապետեն իրենց ազգային լեզվին, որը ժխտում էին «կեղծ ազգասերները»: Ա. Ն. Սազոնովը մերժում էր նրանց ազգայնական հայացքները, որոնք ձգտում էին վերացնել ծայրամասային շրջանների տեղական ազգային լեզուները, դրանք փոխարինելով պետական լեզվով անգամ առօրյա և մասնավոր հարաբերությունների բնագավառներում: Ռուսաստանին հպատակ այլազգի ժողովուրդների հանդեպ հեղինակը ցուցաբերում է դեմոկրատական, հարգալից վերաբերմունք: «Պաշտպանելով ու հիմնավորելով ռուսական քաղաքակրթության առաջադիմությունը,– գրում է նա,– միաժամանակ մենք հարգանքով ենք լցված ռուսահպատակ ժողովուրդների քաղաքակրթության նկատմամբ, որովհետև նրանք ռուսների հետ միասին կազմում են նույն ընտանիքը, ուստի նրանց և գրավոր, և բանավոր լեզուն մեզ համար ընդունելի է» (48, 1899, 138): Շեշտելով ռուս ժողովրդի ու նրա պետության արժանապատվությունը, իր ջերմ սերը հայրենիքի հանդեպ, նույնքան հարգանք է տածում ռուսահպատակ այլազգիների հայրենիքի նկատմամբ: «Ռուսաստանը հպարտությամբ կարող է ցույց տալ,– գրում է նա,– որ իր պատմության անցյալի էջերում երբեք չի հանգցրել, վերացրել ռուսահպատակ ազգերից ոչ մեկի լեզուն, ավելին, նրա հզոր թևերի տակ հասակ են առել ու զարգացել, փետրակալվել են ոչ միայն ռուս բանաստեղծներ ու այլ մտավորականներ, այլև Ռուսաստանի որդեգրած այլազգի ժողովուրդների գավակներ. լեհ Միցկևիչը, վրացի Ակակի Ծերեթելին, հայ՝ Րաֆֆին և այլն» (48, 1899, 138):

Երկրում հայնպեսու հասարակական կարծիքի արմատավորման, փախստական արևմտահայերին նյութական ու բարոյական օգնության կազմակերպման խնդրում կարևոր ու հիմնարար դեր խաղացին նշանավոր հրապարակախոս Վ. Գոլմստրեմի կրակե լեզվով գրված ու մարդկային սիրտը ջերմացնող հոդվածները: «Եղբայր հայեր» հոդվածում նա գրում էր. «Ռուս ընթերցող, Ձեր ծայրը անհրաժեշտ է, քանի որ մեր բոլորի ծայրերը կազմում են հասարակական կարծիքը՝ Ռուսաստանի ծայրը, որը պետք է անկեղծ լինի: Ձեր օժանդակությունը,– շարունակում է նա,– հարկավոր է ոչ միայն հայերին օգնություն ցույց տալու, այլև Ռուսաստանի հասարակական կարծիքը կեղծ ճանապարհից ճշմարիտ ուղու վրա դնելու համար» (21, E): Անվանի հրապարակախոսը իրավացիորեն ընդգծում է, որ երկրում հայ ժողովրդի հանդեպ անբարեմասսո մթնոլորտի ստեղծողները շատ են, որոնք, քաղաքականությանը ծառայելով, խանգարում են ռուս հասարակու-

թյանը օգնություն ցույց տալու դժբախտ գաղթականներին: Նրանք, ընդգծում է Վ. Գոլմստրենը, մեղադրում են հայերին, չունենալով ոչ մի փաստ՝ անվանում են խռովարարներ, գտնում են, որ հայերի կոտորածները իրենց չի հետաքրքրում:

Քողազերձ անելով պահպանողական ուժերին նրանց սխալ կողմնորոշման ու անհոգի անտարբերության համար, Վ. Գոլմստրենը ընդգծում էր. «Եթե դուք կարծում եք, որ Ռուսաստանի շահերից է բխում *Laisser-faire* (թողստություն— Պ. Ս.) քաղաքականությունը... իմացեք, որ հայերի բնաջնջումն ուղղված է Ռուսաստանի դեմ, որի դիվանագետներն ու հրապարակախոսները անընդունելի կուրությամբ մինչև այժմ միայն ձգձգում են սեղմել այն օղակը, որ Թուրքիան պատրաստել է մեզ համար» (21, E): Իրավացի էր հեղինակը: Թուրք—անգլիական մերձեցումը և Հայկական հարցում նրանց համատեղ գործողությունները հիմնականում ուղղված էին Ռուսաստանի դեպի հարավ առաջընթացի դեմ: Երկու էր նկատում Ա. Ամֆիտատրովը՝ շեշտելով, որ թուրքերը կոտորելով հայերին, թուլացնում էին ռուսական ուժը, դրանով վերացնում էին Ռուսաստանի հանդեպ արևմտահայերի համակրանքը (2, 11—13): Հասարակական կարծիքը ճիշտ հունի մեջ ուղղելու և հայերին օգնելու համար Վ. Գոլմստրենը անհրաժեշտ էր համարում ռուս հասարակության գիտակցությանը հասցնել Հայկական հարցում Անգլիայի դիվանագիտական խարդավանքները: «Ռուսներս,— գրում էր նա,— պարտավոր ենք հայկական սուրբ գործը առանձնացնել Անգլիայի կեղտոտ նպատակներից, պետք է օգնության մասին այդ ճիչին արձագանքենք, մեր պաշտպանության տակ վերցնենք մեր տառապյալ եղբայրներին» (21, 8): Եվ վերջապես, օգնության գործը առաջ վարելու համար «ես կխնդրեի,— գրում էր նա,— ռուս հասարակությանը իր վզին փաթաթած և մեծ չափով խեղաթյուրված կարծիքը մերժել,— և դիմելով ռուս հասարակությանը, հայերին օգնելու կոչով, նա անվարան ընդգծում է. Չի կարելի չտեսնել մեր և հայերի ազգակցական ներքին կապը...»: «Անհրաժեշտ է ծանոթանալ փաստերին, իր վերջնական կարծիքը դրանով հիմնավորել, ոչ թե հոտառությամբ ենթադրություններ կատարել» (21, 9):

Հետազոտության մասն գործելաոճ նա առաջարկում էր պահպանողական մամուլի այն տեսաբաններին, որոնք առանց խորքային հետազոտությունների և համապատասխան փաստերի սխալ ու կեղծ եզրակացություններ էին կատարում:

Այդ հարցին է նվիրված նրա «Եվ քարերն անգամ աղաղակում են» ծավալուն ու արժեքավոր հոդվածը: «Թուրքական իշխանությունները,— գրում է Վ. Գոլմստրենը,— ինչպես նաև մեր մամուլի որոշ օրգաններ ու առանձին անհատներ, կեղծելով պատմական իրականությունը, շրջանցելով ռուս գիտնականների կողմից լույս աշխարհ բերած իրեղեն ապացույցները, որոնց դեմ համարանում է յուրաքանչյուր ոք, ճգնում են հիմնավորել, որ հայերը բնիկ չեն, եկվոր են, ու այդ տարածաշրջանում նրանք ոչինչ չեն ստեղծել» (13, 1899, 33): Մատնացույց անելով ռուս հնագետների կողմից պեղված հնագիտական իրեղեն ապացույցները՝ նա արդարացի զայրույթով գրում էր. «Քարերը չեն կեղծում: Ժայռերի վրա եղած կրակե տառերով գրությունները պատմում են բիրլիական, ասուրա—բաբելոնական իրադարձությունների մասին, որոնք այնքան նման են այժմ Արևելքից Արևմուտք ընկած ճանապարհի նույն արեմայում տեղի ունեցող իրադարձություններին: Այդ տարածքներում,— շարունակում է Վ. Գոլմստրենը,— մշտապես արյուն է հոսել, պայքար է ծավալվել երկու սկզբունքների միջև, որոնցից մեկի ժառանգորդը մենք ենք. նրա պարտությունը, նրա հակառակ շրջադարձը, կորուստ է եղել և մեզ համար... Հնագույն Ուրարտու քաղաքականության տարածքը զբաղեցրած հայերն իրենց աշխարհագրական դիրքով հանդիսանում են այդ քաղաքականության ժառանգորդը և դարերի ընթացքում պայքար են մղել քոչվորական ցեղերի դեմ, հանդիսանալով քրիստոնեական լուսավորության արծիվները բարբարոսական խավարի միջավայրում, մինչև որ իր համար գտավ դաշնակիցի դեմա Հյուսիսի մեծ կայսրության» (13, 1899, 33): Վ. Գոլմստրենը, Հայաստանի տարածքում հայտնաբերած հնագիտական նյութերը օգտագործելով որպես պատմական իրադարձությունները հիմնավորող անժխտելի փաստական հենք, մերժելով հակահայ ուժերի հարձակումներն ու նրանց կողմից անհիմն մեղադրանքները, ցույց էր տալիս, որ հայ և ռուս ժողովուրդները կապված են պատմական արմատներով, որ Ուրարտական, ասպա հայկական «հնությունները ավելի ու ավելի են ռուսներիս համոզում մեր և հարուստ բովանդակությամբ իմաստուն պատմություն կերտած բազմաչարչար հայ ժողովրդի միջև հոգևոր համերաշխության գոյության փաստը» (13, 1899, 33): Այսպիսով՝ եզրակացնում է հեղինակը. «Հայաստանի քարածայրերի վրա փորագրությունները շատ բաների մասին են աղաղակում... հայ ժողովրդի դարավոր պատմության, նրա հնամենի մշակույթի ու քաղաքակր-

թությանը մատուցած մեծ ծառայության մասին...» (13, 1899, 33): Հայ ժողովրդին պաշտպանելով «Մոսկովսկիե վեդոմոստի» և «Կավկազ» լրագրերի «խավարի որդիների հարձակումներից»՝ բարձր գնահատելով նշանավոր հնագետ, գիտնական Ն. Մառի՝ Հայաստանում կատարած ուսումնասիրությունների արդյունքները, մասնավորապես հայոց հինավուրց մայրաքաղաք Անիի ու նրա շրջակայքի բնության ներդաշնակությամբ կերտված քարե հույակապ սիմֆոնիա ներկայացնող հայկական ճարտարապետական կոթողները, որոնք իրավամբ հանդիսանում են հայ ժողովրդի հոգու արիության ու ստեղծագործ մտքի հզոր թռիչքի արտահայտությունները, իրենց շքեղությամբ ու կատարելությամբ առաջացնում են ռուս առաջադեմ մտավորականների անկեղծ հիացմունքը (21, 42): Պաշտպանելով հայ ժողովրդին իշխանամետ ու հետադեմ «դատարկ խոսելացավով տարված չարախոս զրպարտողներից» (13, 1899, 33) Վ. Գոլմստրեմը իրավացիորեն շեշտում էր. «Ահա, թե ինչ են ասում կրկին քարերը... թե ինչ է գծագրված պատերին և ինչ բացատրեց պրոֆեսոր Սառը, որի միայն ընթերցումը մեծ բավականություն է պատճառում: **Այդպես է զգում յուրաքանչյուր բառի համար իրեն հաշիվ տվող, խղճով ու բանականությամբ մտածողը: Սրանք բոլորը եզրակացություններ են և ոչ թե պ. պ. Վելիչկոյի և Գրինգմուտի աղմուկ-աղաղակով** (ընդգծումները տեքստի) **ուղեկցվող բառեր»** (13, 1899, 33):

Ի հակադրություն պաշտոնական շրջանների կողմից քաղաքական նպատակներով ազգային թշնամանքի հրահրման ու հայ ժողովրդին ռուս ժողովրդից մեկուսացնելու նպատակով հայերին ազգայնականության կրողներ համարելուն, Վ. Գոլմստրեմը հիմնավորում էր հայ և ռուս ժողովուրդների միջև մտավոր ու հոգևոր կապի առկայությունը: «ժայռերի վրա եղած գրությունները,– ընդգծում էր նա,– մեզ հայտնում են, թե որքան սրտամոտ է մեր հետաքրքրությունը Վերին Եփրատի հոսանքում ապրող ժողովրդի ճակատագրի նկատմամբ և ինչպիսի հոգածությամբ մենք պետք է պաշտպանենք այդ մարզերի բնակչությանը, որը մեզ հետ համերաշխ է ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական առումով» (13, 1899, 33): Այդ համոզմունքով էր թելադրված հայերի դեպի Ռուսաստան ունեցած այն հաստատ հավատը, որ հայ ժողովրդի ճակատագրի, նրա բոլոր «ցանկությունների ու հույսերի վճռման վերջնական խոսքը պատկանում է Ռուսաստանին» (13, 1899, 33):

Ռուս մտավորականների ճշմարիտ հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման գործում կատարած կարևոր գործի դրվատանքով հանդես եկավ «Արաքս» ամսագիրը: «Ռուս մամուլի մասին» հոդվածում այդ խնդիրը արծարծվում է բավականին ընդարձակ ու երախտագիտության խոր զգացումով: «Թե ինչ մեծ դեր է խաղում լուսաւոր ազգերի մէջ այդպիսի թերթերի գոյութիւնը,– մշում է «Արաքս»–ը,– դա ամենքի համար պարզ է... Այստեղ մասնաւորելով մեր խոսքը Հայկական հարցի վերայ, մամուլին ծանոթ իւրաքանչիւր անձ գիտէ, թե որպիսի թեր և դէմ կարծիքներ արտահայտուեցան խնդրի վերաբերմամբ: Գալով ռուսաց լրագիրներին,– շարունակում է «Արաքս»–ը,– յայտնի է, թէ մի կարգ թերթեր որպիսի ջանքեր էին գործ դնում մոլորեցնելու համար հասարակութիւնը և մինչև անգամ ժխտել Տաճկահայաստանի սարսափելի կոտորածները ու ամեն տեսակ դաւեր և զրպարտպնք հնարելով՝ ձգտում էին զրգռել ռուս հասարակութիւնը հայոց դէմ, սակայն, միւս կողմից, գտնուեցին դոցա դէմ թերթեր, որոնք նույնքան եռանդով հերքեցին հակառակորդների խարդաւանքները, ստութիւնները ու համարձակ պաշտպանեցին հայերի արդար դատը ռուս ժողովրդի առաջ, որի ճիշտ կարծիքը ոչ պակաս մեծ նշանակութիւն ունի հայերիս համար» (46, 1895, Ա. Ժե),– իրավացիորեն ընդգծում է ամսագիրը: Մերկայցնող քննադատության ենթարկելով իշխանամետ ու պահպանողական մամուլի օրգաններին՝ հայ ժողովրդի դեմ մշտական դարձած հարձակումների համար, ռուս առաջադեմ մտավորականները, գտնվելով իրենց կոչման բարձրության վրա, կատարելով մարդասիրական առաքելություն, ռուս ժողովրդին, որպես տիրապետող ազգի, զերծ էին պահում ռուսահպատակ այլացեղ ու այլադավան ազգերի ու ժողովուրդների մեջ խմորվող հնարավոր հակակրանքի ու ատելության ձևավորումից, մյուս կողմից ռուս ժողովրդի մեջ առաջացնում էին այլազգիների նկատմամբ մարդասիրական համամարդկային վեհ զգացումներ:

Ցարական դիվանագիտությունը և պահպանողական ուժերը, աշխատելով կանխել երկրում ակտիվ հասարակական կարծիքի ձևավորումը և հանգստացնել նրան, աշխատում էին հիմնավորել, որ տերությունների կողմից թուրքական կառավարությանը ներկայացրած բարենորոգումների իրագործմամբ վերջ կդրվեն հայերի կոտորածներին, կբարելավվի նրանց վիճակը (4, 5, 1897, 17): Դատապարտելով ու քողազերծ անելով նման խաբեությունը և պարզաբանելով նրանց հետապնդած քաղաքական նպատակները,

տակները՝ ռուս առաջադեմ հրապարակախոսները հիմնավոր կերպով պնդում էին, որ այդ բարեփոխումները կենսագործվել չեն կարող, ոչ միայն այն բանի համար, որ թուրքական կառավարությունը չի ցանկանում, այլ նաև այն պարզ պատճառով, որ տերությունների միջև այդ հարցում համերաշխություն գոյություն չունի: «Չնարավո՞ր է արդյոք այստեղ (Թուրքիայում – Պ. Ս.),– գրում է Լ. Ա. Կոմարովսկին,– անցկացնել այս կամ բարեփոխումները: Բ. Դռան բարեկամների կողմից հանձնարարվող բարենորոգությունները կլինեն սառույցի վրա գրված այն պարզ պատճառով, որ դրանք կյանքում կիրառելու համար բացակայում են բոլոր իրական հնարավորությունները: Այդ մասին,– շարունակում է նա,– վկայում են բոլոր նրանք, որոնք հնարավորություն են ունեցել մոտիկից դիտելու թուրքական կարգերը և միայն դիվանագետները, որոնք համառորեն իրենց աչքերը փակում են թուրքական երևույթների նկատմամբ, հանուն հնամուլության և իրենց սիրած նախապաշարումների ընդունակ են դեռևս կասկածել» (21, 3):

Վ. Գոլմստրեմը, քաջատեղյակ լինելով Չայկական հարցում թուրքական կառավարության գործելակերպին, Թուրքիայում հայերի անազատ և իրավազուրկ վիճակին, ռուս հասարակայնությանը բացատրում էր բարեփոխումների միջոցով հայ ժողովրդի բարելավման մասին ցարական դիվանագիտության և պահպանողական մամուլի ստահող հայտարարությունների միտումնավորությունն ու հայերի համար դրանց կործանարար հետևանքները: «Չայկական վիլայեթների համար թուրքերի հետ հավասար քրիստոնյաների ներկայացուցչությամբ բարենորոգումները ինձ թվում են մինիստրությունների դիվանատներից ելած լիակատար nonsense (անհեթեթություն), ինչպես թուրքական, այնպես էլ Ֆ՛ր առողջ բանականության տեսակետից: Քրիստոնյա «ռայան»,– շարունակում է նա,– որի վկայությունը չի ընդունվում, որը դուրս է ոչ միայն մարդկային, այլև բնական օրենքներից, որովհետև անգն է և չի համարձակվում պաշտպանվել, երբ նրան սպանում են, և այդ իրավազուրկ ու անարգված «ռայան» թուրքի հետ պետք է մասնակցի նիստերի և նրա հետ՝ բաժանի իշխանությունը» (21, 9): Նա նման մտայնությունը իրավացիորեն համարում էր ոչ իրական: Ուրեմն թուրքական իշխանությունները ոչ թե բարենորոգումներով այլ զանգվածային կոտորածներով են վճռում Չայկական հարցը (21, 9):

Ռուս առաջադեմ մամուլը և նրա շուրջը համախմբված մտավորականները, ծավալելով լայնամասշտաբ հայանպաստ գործունեություն, կատարե-

ցին իրենց մարդասիրական առաքելությունը: Դժբախտության մեջ հայտնված «հայ ժողովրդի օգնության կանչը հասցրին Ռուսաստանի անժայրածիր տարածքների բոլոր անկյունները», իսկ 1896 թ. դեկտեմբերի 11–ին արևմտահայ փախստականներին նյութական օգնություն ցույց տալու համար հանգանակություն սկսելու մասին կառավարական հրովարտակի հրապարակումից հետո ռուս հասարակությանը նախկինում համակած անտարբերության ու անորոշության սառույցը կոտրվեց: Օգնության կանչը թափանցեց Արխանգելսկի մարզի Շենկարսկ գյուղի գյուղացիական խրճիթներից ներս, արծազանքվեց հեռավոր Տոբոլսկում ու կայսերական ընտանիքում, պատրաստական օգնություն ցուցաբերեցին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Մոսկվայի քաղաքագուլիս Ս. Գոլիցինը (13, 1898, 302), ուսուցիչներ, ուսանողներ (12, 1896, 158): Տարաբախտ հայ գաղթականների նյութական օգնությունը ստացավ համաժողովրդական բնույթ:

Հասարակական կարծիքի ճնշմանը չդիմացավ նաև պահպանողական ճամբարը: Նրա ծայնափող մամուլի օրգանները մեղմացրին իրենց տոնը հայերի հանդեպ: Նույնիսկ «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագիրը, որին ուղղությունն էր տալիս մեծապետական գաղափարախոսության հետևորդ հրապարակախոս Գրինգմուտը, որը ուներ ոչ հայանպաստ կողմնորոշում, առաջադիմական մամուլի քարոզչության և հասարակական հայանպաստ կարծիքի ազդեցության ներքո աստիճանաբար կովկասահայության, Ռուսաստանում ապաստանած գաղթական արևմտահայերի և ընդհանրապես Չայկական հարցում վերակողմնորոշվեց: «Մշակը», նկատի ունենալով այդ փոփոխությունը, նշում է. «Լինելով պահպանողական և դավանելով ռուս պահպանողականների սկզբունքները, չի կարելի չըվորովվել այն ուղղությունից, որին հետևում է Գրինգմուտը»: Պարզաբանելով նշված լրագրի աշխատակիցների շրջադարձը և այն բնութագրելով որպես ազնիվ արարք՝ «Մշակը» շարունակում է. «Մենք կարծում ենք, որ ռուս պահպանողականները, հետևելով ինքնաքննադատութեան առողջ լոգիկային, երկար չեն մնայ իրենց մոլորութիւնների մէջ, որոնք այնքան արատաւորում են նրանց պատիվը»: Այդ ընթացքում հայ մտավորականները ճշմարտությամբ իրարից տարանջատում էին խավարամիտ ու թթու ազգասերներին «պահպանողական այն մաքուր ուղղությունից, որի ներկայացուցիչն է այժմ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը» (11, 1898, 225), որի սյունակներից հայանպաստ հողվածները չէին իջնում:

Հրապարակախոս Վ. Ռոզանովը, որ երկար ժամանակ «Նովոյե վրեմյա» լրագրում հանդես էր գալիս ոչ հայանպաստ հոդվածներով, սկսած 1897 թվականից, երբ արևմտահայ գաղթականների հարցում Ռուսաստանում աստիճանաբար ձևավորվում էր հայանպաստ հասարակական կարծիք ու պաշտոնական լրատվության միջոցները վերակողմնորոշվում էին ինչպես Հայկական հարցում, այնպես էլ ռուսահպատակ արևելահայության նկատմամբ իրենց մոտեցումներում, նա նույն լրագրի էջերում հանդես եկավ երկրում այլազգիների նկատմամբ կառավարության մեխանիկական համառուսացման քաղաքականության դեմ: «Նրա այդ հետաքրքիր հոդվածը, – նշում է «Եղբայրական օգնությունը», – վերաբերում է վերջին ժամանակներս ռուսահպատակ այլազգի ժողովուրդների սրված դրությամբ, որը որոշակի ազդեցություն ունեցավ ոչ միայն ռուսահայերի գործում, այլ նաև անուղղակիորեն անդրադարձավ դժբախտ թուրքահայերի խնդրի վրա, որոնք բախտի թելադրանքով ստիպված պետք է վերադառնան հայրենիք, սակայն թուրքիան չի թույլատրում» (21, 172): Վ. Ռոզանովը, ի հակադրություն երկար ժամանակ պաշտոնական մամուլի ռուսահայերի դեմ հարձակումների, վճռականորեն հակադրվում է այլազգիներին բռնությամբ կամ մեխանիկական համառուսացման դեմ: Նրա «մեխանիկական համառուսացման առթիվ» խորագիրը կրող հոդվածը առանձնահատուկ և ուշադրության արժանի է ոչ միայն այն բանի համար, որ այն հրապարակվել է «Նովոյե վրեմյա» լրագրում, այլև նրանով, որ հոդվածի հեղինակը պահպանողական ուղղության վճռական հետևորդն է: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռում եզրակացնել, որ հասարակական գիտակցության մեջ ինչպես Արևելքի քրիստոնյաների, այնպես էլ արևմտահայերի նկատմամբ տեղի է ունեցել շրջադարձ դեպի Ռուսաստանի ավանդական բարյացակամ կողմնորոշման բնական հունը:

Քննադատելով ու մերժելով «Մոսկովսկիե վեդոմոստի» լրագրի ռուսահպատակ այլազգիների լեզվի ու մշակույթի ոչնչացման ճանապարհով համառուսացման նկրտումները, Վ. Ռոզանովը գտնում է, որ բռնի ճանապարհով այլազգիների ռուսացումը վտանգավոր է Ռուսաստանի համար: «Նա (Ռուսաստանը – Պ. Ս.) կարող է հպատակեցնել, կարող է կուլ տալ, սակայն այն մնում է ստամոքսում և դրանից ցավում է Ռուսաստանի ներսը» (21, 173), – գրում է Վ. Ռոզանովը: Համառուսացման մեծ բռնի ձևին դեմ արտահայտվելով, նա արդարացիորեն նշում է. «Մենք, աշխատելով վերացնել այ-

լազգիների անհատականությունը և այդ ճանապարհին մեր դժվարությունները անվանում ենք ծայրամասերի «համառուսացման քաղաքականություն»»: Ընդդեմ «Մոսկովսկիե վեդոմոստի»-ի նախկին գաղափարական առաջնորդ Կատկովի համառուսացման միտումների, Ռոզանովը առաջադրում է այլազգիների աստիճանական և քաղաքակիրթ ներգրավումը ռուսական քաղաքակրթության ոլորտը (21, 173): Մինչդեռ «Մոսկովսկիե վեդոմոստի»-ի գաղափարախոսները ցանկանում են բռնությամբ «... երևանցում վերածել մոսկովացու...», – գրում է նա: Ըստ նրա Ռուսաստանն էլ ավելի կիզորանա, եթե հպատակ ազգերի ու ժողովուրդների նկատմամբ հանդես բերի հանդուրժողականություն ու նրանց խաղաղ ու հանգիստ աստիճանական զարգացմամբ ներգրավի համառուսական քաղաքակրթության ոլորտը, սակայն պահպանելով նրանց լեզուն ու մշակույթը (21, 173):

Եթե ռուսական դիվանագիտությունը, նկատի ունենալով կառավարության շահերը և պահպանողական մամուլը, որ իրենց գործունեությամբ խոչընդոտում էին հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորմանը՝ «ապա դա չէր նշանակում, – գրում է «Սիբիրսկի վեստնիկ» լրագիրը, – որ ռուս հասարակությունը կարող է չմտահոգվել դժբախտ հայերի ճակատագրով: Մեր հասարակությունը պետք է շտապի օգնության ձեռք մեկնել դժբախտ հայերին, իսկ մեր կառավարության համար, – շարունակում է լրագիրը, – հասել է ժամանակը ռուսական բարեգործության դռները լայն բացելու համար» (10, 1897, 17):

Կառավարական վերին ոլորտներում արդեն նկատելի էին ռուսահպատակ արևելահայության նկատմամբ դրական տեղաշարժեր: Կառավարական առանձին օղակներում, անգամ բարձր պաշտոն ու աստիճան ունեցող առանձին անհատներ մտահոգվում էին արտասահմանում կրթություն ստացած հայ երիտասարդների Ռուսաստան վերադառնալու և ռուսական պետականության նկատմամբ նրանց հետագա վերաբերմունքի հիմնահարցով (53, փ. 733, Դ. 102, ռ. 2–9):

Հայ երիտասարդության կրթական գործը լավ կազմակերպելու և նրանց Ռուսաստանին մվիրված հպատակներ դաստիարակելու նպատակով կառավարությունը ուսումնական վարչություններին ցուցում էր տալիս «հայկական հոգևոր դպրոցների բարձրագույն ղեկավարությանը ներգրավել ռուսական մշակութային սկզբունքների ոլորտը» (53, փ. 333, Դ. 102, ռ. 6): Առաջարկվում էր, որ եթե նույնիսկ հայ երիտասարդները ցանկանան կրթու-

թյուն ստանալ, «թուլյատրել ու հնարավորություն ստեղծել, որպեսզի ընդունվեն ռուսական համալսարաններ և գիտությունների ուսումնասիրությանը զուգընթաց կատարելագործվեն ռուսաց լեզվի իմացության մեջ» (53, փ. 333, Ժ. 102, և. 6):

Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերատեսչությունում ևս զգացվում էր Հայկական հարցում, ինչպես նաև ռուսահպատակ արևելահայերի նկատմամբ քաղաքական հնչերանգի մեղմացում: Արտաքին գործերի մինիստրությանը հասցեագրած զեկուցագրում Նելիդովը գրում էր. «Մեր դեմ Բալկանները փակ են: Հայերին մեզանից սառեցնելով կփակվեն Փոքր Ասիա տանող ճանապարհները ևս, հարկ է լինել զգուշավոր: Կարիք չկա, որ Կովկասում իշխանությունների կողմից հայերի դեմ բռնությունները խրախուսվեն: Այնուամենայնիվ, նրանք կայսրության ամենահավատարիմ ու ամենահուսալի հպատակներն են» (54, Ժ. 157, և. 15): Այդ հավատարմության գիտակցումով մինչև 19-րդ դարի վերջին քառորդը ռուսական իշխանությունները օգնում էին կայսրության սահմանն անցած հայերին՝ տալով բնակատեղի, ինչպես նաև հողատարածք՝ երկրագործությամբ զբաղվելու համար: Այդ մասին էրգրումի անգլիական հյուպատոս Ռ. Գրեյվսը Ն. Նիկոլսկուն գրում էր. «Փախստականների (հայերի – Պ. Ս.) նկատմամբ ռուսական իշխանությունների կողմից ոչ մի խոչընդոտ չի հարուցվում: Նրանց ժամանակավորապես տեղավորում են գյուղերում և տրամադրում այն հողերը, որոնք լքել են թուրքիա վերաբնակված մահմեդականները» (86, 18):

Զնայած ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ 90-ական թվականներին կատարված ոչ հայանպաստ փոփոխությանը, 1895–1896 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ մյուս վիլայեթներում հայկական զանգվածային ջարդերի ամենաեռուն պահին Կովկասի ռուսական իշխանություններն անկարող էին երկրի սահմանները փակել հոծ խմբերով Ռուսաստան ներթափանցող գաղթականների առջև: Ռուս սահմանապահները իշխանություններից գաղտնի թուլյատրում էին փախստական հայերին հանգրվանել ռուսական կայսրության տարածքներում (64, 1896, 4353):

Իշխանությունները ևս ստիպված էին զբաղվել տասնյակ հազարավոր գաղթական հայերի ճակատագրով: Կառավարությունը, նկատի ունենալով փախստականների մեծ հոսքը, հարկադրված նրանց հարցը քննարկեց վերաբնակեցման հանձնաժողովի միստերում (13, 1897, 39), որոշվեց նրանց

հատկացնել բնակության վայրեր կայսրության ներքին նահանգներում, սակայն առանց անշարժ գույք ունենալու իրավունքի (65, 1, 269, 36): Ռուսաստանի հարավային նահանգներում վաղուց ի վեր գոյություն ունեցող հայկական գաղթօջախները, մասնավորապես Դրինը, Օդեսան, Նովոռոսիյսկը, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի որոշ բնակավայրեր համալրվեցին հազարավոր արևմտահայերով (39, 1899, 9, 21):

Արևմտահայության հանդեպ ցարիզմի կոշտ քաղաքականության մեջ որոշակի մեղմացում նկատվեց, երբ թուրքիայում Գերմանիան սուլթանի վրա մեծ ազդեցություն հաստատեց ու աստիճանաբար սառեցին ռուս-թուրքական հարաբերությունները (55, 1908, 47): Որքան Գերմանիան խորանում էր թուրքիայի տարածքում, այնքան Ռուսաստանը արտամղվում էր Փոքր Ասիայից, ուստի նրա համար այժմ առավել քան երբևէ կարևորվում էր իր սահմանների հարևանությամբ հայկական տարածքներում հայահոծ բնակչության գոյության խնդիրը, իսկ թուրքական կառավարությունը այդ տարածքների հայաթափմամբ ստեղծել էր մահմեդականներով բնակեցված սահմանապատմեջ: Այդ խնդիրն անդրադառնալով՝ Ա. Ամֆիտեատրովը խորաթափանցորեն շեշտում էր, որ ընդդեմ Ռուսաստանի շահերի թուրքական իշխանությունները զազանաբար ոչնչացրին հայ բնակչությանը և ամբողջովին հայաթափեցին Ռուսաստանի սահմանների հարևանությամբ դեպի Փոքր Ասիա ապագայում ռուսական հնարավոր արշավանքների հենարան հանդիսացող տարածքները (2, 7):

Այդ պահից սկսած՝ Ռուսաստանը աստիճանաբար մերձենալով Անգլիայի հետ՝ ընդդեմ Գերմանիայի աշխատում էր ավելի վճռական գործել Հայկական հարցում:

1898 թ., երբ կրկին Վասպուրականում թուրք բարբարոսները նախապատրաստվում էին նոր ջարդեր կազմակերպել, հունվարի 18-ին Ռուսաստանը Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների աջակցությամբ վերջնագիր ներկայացրին սուլթանին, որ եթե Վանում կոտորած սկսվի, ապա տերությունները համատեղ վճռական գործողությունների կդիմեն (33, 1898, 15):

Տերությունների այդ վճռականության հանդիման ընկրկեց արյունարբու սուլթանը: Վասպուրականի հայությունը փրկվեց վերահաս նոր արհավիրքից:

Ցարիզմը այժմ Հայկական հարցն օգտագործում էր սուլթանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաև իր սահմանների հարևանությամբ հայկական տարրի առկայությունը ապահովելու նպատակով:

1898 թ. մարտի 18–ին ռուսական կառավարությունը որոշում ընդունեց 1895–1896 թթ. կոտորածներից մազապուրծ և Ռուսաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների հայրենադարձության մասին (3, 1898, 194):

Թուրքական իշխանությունները, կոտորածների ընթացքում բռնագրավելով հայերի ունեցվածքը, նրանց տները և հողատարածքները հանձնել էին այդ վայրերում վերաբնակված մահմեդականներին, ուստի իրենց պապենական բնակավայրերը վերադարձող հայերը այն ետ ստանալ չէին կարող:

Թուրքական կառավարությունը սվիներով ընդունեց այդ որոշումը (13, 1899, 57)՝ առարկելով, որ հայերի վերադարձը ստեղծում է նոր՝ ավելի ծանր բարդություններ, սկսվելու են նոր կոտորածներ (13, 1899, 151): Նրանք պատճառաբանում էին, որ վերադարձող փախստականների հետ Թուրքիա են թափանցում ազիտատորներ, որոնք ավելի են սրում առանց այդ էլ խիստ լարված իրադրությունը (8, 3441, 12): «Թուրքական իշխանությունները վճռականապես դեն էին,– նշում է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,– և առարկում էին, սակայն շնորհիվ Ռուսաստանի վճռական պահանջի՝ համաձայնվեցին ու պարտավորվեցին պայմաններ նախապատրաստել վերադարձող հայ փախստականների համար» (13, 1899, 151): Այդ խնդրին անդրադառնալով՝ «Մուրճ»-ը նշում է, որ Ռուսաստանը պարտադրեց Թուրքիային «ետ ընդունի և ետ տա նոցա (հայերի – Պ. Ս.) ունեցած հողերը» (47, 1899, 6, 721): Հարցը կարգավորելուց հետո ռուսական իշխանությունները խրախուսում էին հայերի վերադարձը, ցույց տալով նյութական օգնություն (47, 1899, 6, 721): Արևմտահայ փախստականներից շատերը, որոնք չէին ցանկանում վերադառնալ թուրքական բռնակալության տակ գտնվող իրենց պապենական վայրերը, ընդունեցին ռուսահպատակություն և թույլտվություն ստացան հաստատվել կայսրության հարավային շրջաններում (13, 1899, 172):

Հայրենիք վերադարձող հայերին անհրաժեշտ էր նյութական օժանդակություն: Թուրքական կառավարության բացատրությունները, թե իբր նման միջոցները բացակայում են, ռուսական կողմը մատնացույց անելով հույն–թուրքական պատերազմից հետո հունական կառավարության կողմից Թուրքիային վճարվող ռազմատուգանքները, Ռուսաստանը առաջարկում էր վարձահատույց լինել հայերին, նշված ռազմատուգանքներից բաժին հանել փախստականներին (21, 172):

«Արյան գինը» հոդվածում Վ. Գոլմստրեմը, անդրադառնալով հայ գաղթականների հայրենադարձության խնդրին, իրավացիորեն ընդգծում էր, որ հայ

ժողովուրդը չափազանց շատ արյուն է հեղել, մեծ զոհեր ու անհամեմատ կորուստներ է ունեցել: Հետևաբար մեծ տերությունները դիմել են Թուրքիային՝ պահանջելով կոտորածների զոհ հազարավոր հայերի արյան գինը (21, 173):

Գաղթահայերի հայրենադարձության համար ռուսական իշխանությունները տեղերում հրահանգ էին ստացել կազմակերպել նրանց վերադարձը, ապահովել տրանսպորտով, ցույց տալ նյութական օգնություն (13, 1899, 234):

Հատկանշական է, որ ռուսական կառավարությունը այդ օրենքը ընդունելով հանդերձ, փախստականներից շատերին, որոնք ցանկանում էին հաստատվել Ռուսաստանում, իրավունք վերապահեց ունենալու անշարժ գույք (32, 1902, 1–2):

Անժխտելի է այն փաստը, որ գաղթականների հայրենադարձության մասին ռուսական կառավարության ընդունած օրենքը պայմանավորված էր ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կատարված փոփոխությամբ նոր իրադրության մեջ կողմնորոշվելու անհրաժեշտությամբ և դրանով հանդերձ, այդ միջոցառումը համահունչ էր արևմտահայերի իրենց պատմական հայրենիքում վերահաստատվելու ձգտումներին: Հետևաբար պետք է ենթադրել, որ մինչև այժմ տիրապետող կարծիքը, թե ցարիզմը ամխտիր արևմտահայ գաղթականներին արտաքսում էր երկրից նրանց նկատմամբ վաղօրոք տրամադրված լինելով, միակողմանի է և թերի (56):

Ռուս առաջադեմ մտավորականների, հասարակական սոցիալական լայն շերտերի նպատակաուղղված գործունեությունը և դրա արդյունքում ձևավորված հայանպաստ կարծիքը, ժողովրդական Ռուսաստանի հզոր ծայրն ու մերձավորարևելյան քաղաքականության բնագավառում կառավարության նոր կողմնորոշումը, Հայկական հարցում նշանավորում էին նոր ավելի բարենպաստ հանգրվան: Ինչպես նշում է «Պրիագլոսկիյ կրայ» լրագիրը, «Ամբողջ աշխարհի ուշադրությունը գամված է Հայկական հարցի վրա: Այժմ այն գլխավորում է Ռուսաստանը, որը հանդիսանում է հայերի հովանավորը» (29, 1915, 1):

Այսպիսով՝ 19–րդ դարի վերջին և 20–րդ դարի առաջին տասնամյակին, երբ եվրոպական քաղաքակիրթ տերությունները աչքի առջև, նրանց հանցագործ անտարբերության, անշուշտ, նաև համաձայնության պայմաններում, թուրք ջարդարարները քաղաքակրթության հնագույն օրրան Արևմտյան Հայաստանը հայաթափելու, հին ու քաղաքակիրթ հայ ժողովրդին իսպառ բնաջնջելու վերջին և վճռական հարվածն էին նախապատրաս-

տում, ռուս առաջադեմ մտավորականները, հասարակական բոլոր սոցիալական շերտերը առավել ուժգնությամբ հնչեցրին հայ ժողովրդին օգնելու իրենց ծայրը (57), որը արդեն համահունչ էր հայանպաստ կողմնորոշման ավանդական հունը վերագտած իշխանությունների գործողություններին:

Ռուս առաջադեմ մտավորականների հայանպաստ մարդասիրական ու տքնաջան գործունեության արդյունքում ցարական կառավարությունը, նրան հավատարիմ պաշտոնական ու կիսապաշտոնական-պահպանողական մամուլը, նրա շուրջը համախմբված մտավորականների կողմից քաղաքական նկատառումներով դրդված, ինչպես Չայկական հարցում, այնպես նաև ռուսահպատակ արևելահայերի հանդեպ ձևավորված ոչ հայանպաստ կողմնորոշումը աստիճանաբար մեղմվեց և ռուս հասարակական սոցիալական լայն շերտերին համակեց կոտորածներից մազապուրծ գաղթական արևմտահայերին նյութական ու բարոյական օգնություն ցուցաբերելու, հազարավոր մերկ ու սովալլուկ հայ մանուկներին սատար լինելու ձգտումը: Նրանց ազդեցության տակ ռուսական հասարակական որոշ խավերի անտարբերության ու սառնության, քաղաքական մղումով ձևավորված լռության սառույցը սկսեց հալվել: Այնքան հզոր ու արդարացի էր ժողովրդական Ռուսաստանը ներկայացնող մարդասիրական ծայրը, որ պաշտոնական Ռուսաստանը ներկայացնող օրգանները հայ ժողովրդի հանդեպ մեղմացրին իրենց տոնը, նրանց էջերում հրապարակվող հոդվածները սկսեցին կրել հայանպաստ բովանդակություն:

Առանձին պետական բարձր պաշտոնյաներ ու գերատեսչություններ իրենց ակտիվությամբ աջակցեցին ու կողմնորոշեցին հասարակայնությանը, նրան սխալ ճանապարհից ուղղորդեցին դեպի հայանպաստ գործունեության ճիշտ հունը:

Մերձավոր Արևելքում 90-ական թվականների վերջերին թուրք-գերմանական հարաբերությունների առավել ջերմացման ու թուրքիայում Գերմանիայի ազդեցության հաստատման հետևանքով արտաքին քաղաքականության բնագավառում ցարիզմի նոր ընթացքը ավելի նպաստավոր էր արևմտահայության համար: Այդ, ինչպես նաև ռուսական կառավարության 1896 թ. դեկտեմբերի 11-ի հայ գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու համար հանգանակություն սկսելու որոշումն ավելի ամբողջականացրին ու դեպի գործնական հուն ուղղեցին երկրում ձևավորված հայանպաստ հասարակական կարծիքը: Օգնության գործը առաջ ընթացավ ամբողջ թափով:

#### Գլուխ IV Ծանոթություններ

1. Տե՛ս Сказкин С., Конец австро—русско—германского союза, т. 1, М., 1928.
2. Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906.
3. “Биржевые ведомости”.
4. Տե՛ս “Новое время”, 1896, № 7069, “Московские ведомости”, № 56, 1896, “Гражданин”, № 112, 1896.
5. “Московские ведомости”.
6. “Новое время”.
7. “Кремль”.
8. АВПРИ, Ф. “Политархив”.
9. “Русская мысль”.
10. “Сибирский вестник”.
11. «Մշակ»:
12. “Русские ведомости”.
13. “СПб ведомости”.
14. “Новое звено”.
15. ЦГИАМ.
16. “Гражданин”.
17. Киняпина Н. С., Георгиев В. П., Панченкова М. П., Шеремет В. И., Восточный вопрос в внешней политике России (конец 18—ого, начало 20—ого века), М., 1978.
18. “Новое время”.
19. “Вестник Европы”.
20. “Восход”.
21. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898.
22. “Русское слово”.
23. Евреинов Г. А., Национальный вопрос на инородческих окраинах России, СПб., 1908.
24. «Արարատ»:
25. “Новости”.
26. “Русский вестник”.
27. Витте Ю. С., Воспоминания, т. I, М., 2001.
28. “Кавказ”.
29. “Приазовский край”.
30. “Голос минувшего”.
31. “Неделя”.
32. “Россия и Азия”.
33. “Русь”.
34. Будущее устройство Армении (по официальным дипломатическим документам Оранжевой книги трактующей реформы в Армении,



### ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՑՈՒՑԱՐԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴՐՈՂԸ ՌՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Թուրքական յաթաղանից հրաշքով փրկված արևմտահայերը հարկադրված էին թողնել նախնիների արյուն–քրտինքով ոռոգված հայրենի սրբազան հողը, պապերի սուրբ մասունքները, ապաստարան փնտրել օտար երկրներում: Նրանք ամենից առաջ իրենց հայացքը ուղղեցին դեպի հյուսիս, հզոր Ռուսաստանի տարածքը, որը դարեր շարունակ թուրքական բռնակալական լուծը կրող հայ ժողովուրդը իրավամբ դիտում էր իբրև փրկության հուսալի հանգրվան: Նման եզրակացության հանգել էր հայ ժողովուրդը դարերի կենսափորձով: «Ում էլ որ դիմեին հայերը,— գրում է Վանում Ռուսաստանի Հյուսիսային Կամսարականը դեսպան Նովիկովին 1882 թ. մարտի 14—ին,— օգնության համար, մինևույն է, նրանք գործնական պաշտպանություն սպասում են Ռուսաստանից (1, 9): Այդ հավատով համիդյան կոտորածներից մազապուրծ տասնյակ հազարավոր արևմտահայեր անցան ռուսական կայսրության սահմանը և հիմնավորվեցին Անդրկովկասում ու նրա հարակից շրջաններում (2, 1895, 211):

Մերկ ու սովալլուկ, գոյության վերջին միջոցներից զրկված հայ գաղթականների օգնության կանչին արձագանքեցին ռուսական հասարակայնության բազմահազար ներկայացուցիչներ, այդ թվում գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, ուսուցիչներ, ուսանողներ, բանվորներ, պետական ծառայողներ, Ռուսաստանի ամենահեռավոր ու խուլ վայրերում բնակվող գյուղացիներ. նրանցից շատերը երբևէ տեղեկություն չունեին հայ և Հայաստան հակացությունների մասին, սակայն ռուս առաջադեմ մտավորականների հայամետ գործունեության, թուրքիայում արևմտահայության գազանային կոտորածների մասին զգայացունց տեսարանների նկարագրությունները նրանց հոգում արթնացրին մարդասիրական վեհ զգացում, մերձավորին օգնելու, ողբերգության մեջ գտնվող հայերին սատար լինելու, նրանց

հոգսը թեթևացնելու ձգտում: Հայ փախստականները, որ Ռուսաստան էին հասել բոլորովին մերկ ու ոտաբոքիկ (3, 1897, 66), հիվանդ ու սովալլուկ (4, 1896, 88), ցնցոտիների մեջ հազիվ ոտքերը քարշ տալով օգնություն էին աղերսում: «Ռուսսկի լիստոկը» նշում էր. «Վանից Թիֆլիս հասան փախստականների նոր խմբեր, որոնք փրկվել են Թուրքական սրից... Այդ դժբախտների տեսքը առաջացնում է ամենածանր տպավորություն: Կանայք են ու երեխաներ: Բոլորը ամբողջովին մերկ են ու հիվանդ» (4, 1897, 224): Նրանց օգնության կոչով ռուս հասարակությանը դիմեց «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի տնօրեն, իշխան Է. Է. Ուխտոմսկին: «Հայ որբերը» հոդվածում նա գրում էր. «Ի՞նչը կարող է զրկված ու նվաստացած վիճակից մարդու համար ավելի ծանր լինել, ի՞նչը կարող է ավելի տխուր ու վշտալի լինել որբերի համար, քան այն, որ վաղ մանկությունից կորցնելով հորը և մորը, զրկված նրանց քնքուշ փաղաքշանքից ու հոգացողությունից, նրանք ստիպված են ընդառաջ զնալ զանազան կենցաղային այլասերությունների և ապրել բարի մարդկանց պատահական նվիրատվություններով» (5, 1897, 221): Նա հոգու ցավով է արտահայտվում կոտորած ու ավեր տեսած հայ գաղթականների ու ջարդերի հետևանքով որբացած հազարավոր մանկահասակ հայ երեխաների անհույս վիճակի համար, որոնք մատնվել են բախտի դաժան քմահաճույքին: Հայամետ գործիչը, խոսքն ուղղելով իր հայրենիքին, մտահոգությամբ արտաբերում էր. «Բարի և մեծահոգի Ռուսիա, մի՞թե դու կարող ես լուռ ու մունջ մնալ և օգնության ձեռք չպարզել այդ թշվառներից» (5, 1897, 221): «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի»—ի մեկ այլ աշխատակից՝ Վ. Գոլմստրենը, արձագանքելով Է. Է. Ուխտոմսկուն, կոչ էր անում փախստականներին օգնելու գործին տալ կազմակերպված բնույթ, նշելով, որ դրան անհրաժեշտ է կառավարության հոգացողությունը «Արդյոք չի արձագանքելու այդ բարի գործին Ռուսաստանը, մի՞թե,— նշում էր նա,— մեր ուղղափառ մարդիկ, մեր եկեղեցին չեն տեսնում փողոցներում վխտացող դալուկ դեմքերով, փալասներով հազիվ մերկությունը ծածկած մանուկներին ու կանանց: Նրանց օգնելը աստվածահաճո գործ է» (5, 1898, 5):

«Նեղեյա» լրագիրը, կոչ անելով ռուս հասարակությանը օգնելու հայերին, միաժամանակ ճշմարտացի կերպով բացահայտում է մարդկային այդ մեծ ողբերգության նկատմամբ ռուս հասարակության սկզբնական անտարբերության պատճառները (6, 1897, 29): «Ռուս հասարակությունը և հայերը» հոդվածի հեղինակը ճիշտ է նկատում, որ հասարակությունը մտահոգված էր

դժբախտ հայերի ճակատագրով, սակայն զգում էր այդ խնդրում իշխանությունների սառնությունը: «Մենք խղճում ենք հայերին, որոնց կոտորում են թուրքերը, ասում են մարդիկ, կարող ենք նրանց համար զոհաբերել, սակայն քաղաքականությունը հայերին չի համակրում»,— իրավիճակը ճիշտ կռահելով՝ եզրակացնում է հեղինակը: Նա միաժամանակ համարձակորեն կոչ է անում չհետևել քաղաքականությանը, այլ ղեկավարվել բարոյական չափանիշներով և օգնել դժբախտության մեջ հայտնված մարդկանց: «Զի կարելի գրկել իրեն,— գրում է նա,— դժբախտներին օգնելու հաճությից... տանջվում են մարդիկ, կենդանի մարդիկ, որոնք սնվելու ոչինչ չունեն» (6, 1897, 29): «Ռուսական բեսեդա» ամսագիրը մտահոգված դժբախտ հայերի ճակատագրով կառավարությանն առաջարկում է զորք մտցնել Արևմտյան Հայաստան, ստիպել սուլթանին դադարեցնելու կոտորածները (7, 1899, 1270), ցույց տալ նյութական օգնություն: «Արյան գինը» հոդվածով նրան շարունակում է Վլ. Գոլմստրենը՝ ընգծելով որ «Հայերը շատ արյուն են կորցրել» (8, 176):

Հայ ժողովրդի ողբերգության հանդեպ հասարակության սառնությունը նկատի ունենալով՝ «Ռուսկոյե սլովո» ամսագիրը, միաժամանակ մատնացույց անելով անսահման բարի ու կարեկցող ռուս ժողովրդի բնավորությունը, անկեղծ զարմանք է հայտնում այն բանի համար, որ վերջինս հեռավոր Հարեշտանի ժողովրդի նկատմամբ ցուցաբերում է գթառատություն, սակայն նույնպես հավատակից ու մերձավոր հարևան հայ ժողովրդի նկատմամբ սառն է ու անտարբեր: Հոդվածագիրը խոսքն ուղղելով հետադեմ մամուլի օրգաններին, որոնք հանիրավի մեղադրանքներ են բարդում հայերի վրա՝ միանգամայն ճշմարտացի եզրակացություն է կատարում. «Հայերը քաղաքականության զոհերն են» (9, 1896, 88):

«Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը փորձում է թափանցել քաղաքականության ոլորտը և բացահայտել, թե ինչու հեռավոր Կանադայում, ուր նույնպես ապաստան են գտել փախստական հայեր, կառավարությունը հրաման է տվել հայերին օգնելու համար հանգանակություն սկսելու միասին, իսկ ռուսական կառավարությունը լուռ է (10, 1896, 70): Ղեռ ավելին, երկրի ներսում իշխանաձեռ ուժերը, հետադեմ մամուլը արշավանք են ձեռնարկել ոչ միայն փախստական արևմտահայերի, այլ նաև ռուսահպատակ կովկասահայության դեմ: Եթե պետականորեն օգնելը անհնարին է, ապա օգնության գործն իր ձեռքը պետք է վերցնի ռուս հասարակությունը, նրա առաջադեմ սոցիալական շերտերը, եզրակացնում է լրագիրը (10, 1896, 70): Սուլթանա-

կան բռնություններից մազապուրծ փախստական հայերին օգնության կոչով հանդես եկավ գրականագետ Վ. Միխնիչը 1896 թ. «Նովոստի» լրագրում լույս տեսած «Հայկական հեծեժանքները և նրանց արտահայտիչները» հոդվածով: Հեղինակը ճիշտ է նկատում, որ կոտորածները պարբերաբար կրկնվում են, երբ տերությունները հայկական բարենորոգումների համար դիմում են սուլթանին, հետևաբար, եզրակացնում է հեղինակը, կոտորածները կազմակերպվում ու իրագործվում են թուրքական իշխանությունների կողմից, հայերին մեղադրելով իշխանությունները իրականում ցանկանում են կոծկել ջարդերի իսկական մեղավորներին: Վ. Միխնիչը այդ առումով սուր քննադատության է ենթարկում պահպանողական մամուլի օրգաններին, մասնավորապես «Մոսկովսիե վեդոմոստի» և «Նովոյե վրեմյա» լրագրերին, որոնցում տպագրվում են հակահայ բովանդակություն ունեցող հոդվածներ, սակայն նրանք չեն տեսնում, մշում է հեղինակը, որ այդ մեղավոր կոչվածները անտուն են, մերկ, սնունդ չունեն: «Մի՞թե նրանք են հեղափոխականները, ովքեր հագիվ փախել են թուրքական սրից: Հայ փախստականներին օգնություն ցույց տալը,— շարունակում է նա,— բարի ու առաքինի գործ է, և դա ռուս ժողովրդի սրբազան պարտականությունն է» (11, 1896, 320):

Արևմտահայ փախստականների օգնության և կովկասահայությանը պաշտոնական ու հետադեմ մամուլի հարձակումներից պաշտպանելու և հայանպաստ գործունեություն ծավալելու համար «Մշակ»-ը դրվատանքով ու անկեղծ երախտագիտությամբ է արտահայտվում ռուս առաջադիմական մամուլի մասին: «Ռուսական մամուլի ու հասարակութան լավագույն մասի օգնությունը երբեք չի դադարել.— մշում է «Մշակ»-ը,— երբ հնար է եղել պարզել և պաշտպանել մարդասիրութեան գաղափարը առանց քաղաքական միտումների» (12, 1897, 17):

Կոտորածներից մազապուրծ հայ փախստականները, հատելով ռուսական կայսրության սահմանը, Սև ծովով ու Անդրկովկասի տարածքներով ուղղվում էին դեպի Ռուսաստանի ծովափնյա Հարավային ու Հյուսիսային Կովկասի բնակավայրերը, ապաստան էին փնտրում Բաթումի ու Սուխումի շրջաններում (13, 113):

Գաղթականների անհույս ու անհեռանկար վիճակը նրանց մատնել էր հուսահատության: «Պարզ է,— գրում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— որ Թուրքիայից հեռացած հազարավոր փախստականներ նույ-

նիսկ չեն հասել ռուսական սահմանը: Նրանց մի մասը, մասնավորապես կանայք, ծերունիներ ու երեխաներ ցրտից, սովից ու հիվանդություններից մահացել են ճանապարհին, իսկ շատերը սպանվել են նրանց հետապնդող թուրքերի ու քրդերի ձեռքով» (5, 1897, 38): Իսկ նրանց մի մասին հաջողվել է հասնել «մեր տարածքները, ինչպես իրենք են ասում «թուրքական դժոխքից ընկնելով դրախտ», տարածվել Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Եկատերինոդարում, Նովոռոսիյսկում» (5, 1897, 221): Հայասեր մտավորականները հոգեկան հրճվանք էին ապրում, որ Ռուսաստանի սահմանն անցած փախստական մանուկները աստիճանաբար արժանանում էին ռուս հասարակության բարյացակամ հոգածությանը, որ նրանք փրկվում էին տարբեր բնույթի բռնություններից: Հողվածագիրը սրտի ցավով է խոսում սովահար, մերկ ու բոբիկ, բաց երկնքի տակ իրենց մերկությունը միայն փախասերով ծածկած հայ փախստականների մասին: «Նրանք իրենց բնակավայրերից փախել են իրենց սովորական զգեստներով, — նշում է լրագրողը, — որոնք քայքայվել են ճանապարհին ու հազիվ են ծածկում իրենց մերկությունը: Կարելի է համոզված ասել, որ փախստականների 9/10 մասը հասել են մեզ մոտ բացարձակ մերկ, աղքատ ու հիվանդ վիճակում, և նրանք անկարող են իրենց աշխատանքով հայթայթել օրվա հացը» (5, 1897, 38):

Ամեն օր հազարավոր փախստականներ մահվան սարսափով կարողանում էին հատել ռուսական սահմանը: «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի խմբագրությունը տասնյակ նամակներ էր ստանում Կարսի, Վաղարշապատի, Իզդիբի, Բաթումի իր թղթակիցներից, որոնցում սրտածնվիկ տեսարաններով ներկայացվում էին սովահար ու դժբախտ փախստականների վիճակը: Ըստ լրագրողի՝ հայ փախստականների նկատմամբ հասարակայնության սկզբնական անտարբերությունը թուրքական իշխանությունների սարսափազու հայտարարությունների հետևանքն էր: Թուրքական կառավարությունը աշխատելով կոտորածների ընթացքում թույլ չտալ այդ մասին լուրեր տարածվեն երկրի սահմաններից դուրս, իր հյուպատոսների ու դեսպանների միջոցով տեղեկատվություն էր տարածում, որ իբր հայերը «համաշխարհային հեղափոխության մշտական անհանգիստ տարրն են, որ նրանց օգնություն ցույց տվողները պետության կողմից կենթարկվեն դաժան պատիժների» (11, 1895, 228): Թուրք ջարդարարները չբավականանալով միայն Թուրքիայի տարածքում ապրող արևմտահայության դեմ նյութած դավերով ու մասսայական կոտորածներով, հայերին հե-

տապնդում էին նաև երկրի սահմաններից դուրս: Թուրքական յաթաղանից փրկված ու Պարսկաստանում ապաստան գտած փախստականներին ու տեղաբնիկ հայերին ևս ցանկանում էին բնաջնջել: Այդ նենգ ու ստոր նպատակը իրագործելու համար թուրքական գործակալները քրդական ցեղերին տրամադրում էին հայերի դեմ: Արևմտահայության այդ դժբախտ կացությունը նկատի ունենալով՝ Պարսկաստանում ռուսական դեսպան Ա. Պետրովը «գործնական միջամտություն ունեցավ հայերի թշվառ ճակատագրի մեջ, նրանց խոստացավ անհրաժեշտության դեպքում զինվորական ուժեր հրավիրել Ռուսաստանից» (5, 1897, 150): Սակայն ռուս հասարակության ոչ բոլոր խավերն էին, որ ենթարկվեցին թուրքական իշխանությունների այդ սադրանքին: Հայ փախստականներին ռուս հասարակության նյութական օգնությունը սկսվեց առաջին իսկ օրերին, երբ նրանք անցան ռուսական սահմանը, երբ հայամետ լրագրերում ու ամսագրերում եղան առաջին հոդվածները, նրանց դառնադետ ճակատագրի մասին: «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը հայտնում էր, որ Յարոսլավլում մի ուսուցչուհի ջերմորեն արձագանքելով սովահար հայ փախստականներին ռուս առաջադեմ մտավորականների օգնության կանչին, իր խնայողության միջոցներից որոշակի գումար տրամադրեց հայ փախստականների օգնության ֆոնդին (15, 1896, 158): Ցավոք այդ բարեհոգի ու հումանիստ, մերձավորին օգնության պատրաստ ուսուցչուհու անունը չի հիշատակվում: Սակայն հոգ չէ: Երախտապարտ հայ ժողովուրդը անհուն սիրով ու գորովանքով է հիշում իր այն բարերարներին, որոնք այդ դաժան ժամանակաշրջանում իրենց ծայնը բարձրացրին, սատար եղան ու օգնության ձեռք մեկնեցին սովալլուկ, մերկ ու բոկոտն հայ փախստականներին: Մեծահոգի այդ ռուս մանկավարժ կնոջ մեջ ամփոփվում են նրա հետևողությամբ ազնիվ արարք ցուցաբերած ռուս բոլոր կանանց բարությունն ու մարդասիրությունը, ձևավորվում է բարի ու հոգատար, մերձավորին օգնելու պատրաստականությամբ տոգորված արժանապատիվ ռուս կնոջ հավաքական կերպարը, որին իրավամբ ակնածալից հարգանքի տուրք են մատուցում նրանց օգնությամբ անխուսափելի կործանումից փրկված փախստական հայերի սերունդները: Յարոսլավլցի ուսուցչուհու ազնիվ արարքին հետևեցին հազարավոր մարդիկ անձայրածիր Ռուսաստանի ամբողջ տարածքում:

Տվերի նահանգի մի խումբ ուսուցիչներ, հայտնում է «Նաչե վրեմյա» լրագիրը, իրենց համեստ միջոցներից, յուրաքանչյուրը 15 ռուբլի, ընդամեն-

նր 60 ռուբլի, նվիրաբերեցին հայ փախստականների օգնության ֆոնդին (16, 1896, 32), իսկ «Ցերկովնի վեստնիկ» լրագիրը տեղեկացնում է Սամարայի մարզի Բերյոզովկայի «Վանական եղբայրության» կողմից փախստականներին նվիրաբերած օգնության մասին (16, 1897, 42):

Ի հակակշիռ ցարական պաշտոնական շրջանների կողմից հայ ժողովրդի դեմ սանձազերծած մոլեգին հարձակումների՝ ռուսական եկեղեցական մամուլը, մասնավորապես «Ցերկովնի վեստնիկ» հանդեսը ծավալում էր լայն հայանպաստ գործունեություն: Նրա էջերում լույս տեսած հայամետ հոդվածները թարգմանաբար տպագրվում էին Մ. Խրիմյանի ջանքերով աշխուժացած «Արարատ» ամսագրում (51, 379):

Արևմտյան Հայաստանում արյունահեղ ջարդերին ականատես էրգրումի ռուսական հյուպատոսարանում աշխատող մի խումբ ռուս կանայք, վտանգելով իրենց կյանքը, թուրքական յաթաղանից փրկեցին բազմաթիվ հայ կանանց, հյուպատոսարանը դարձնելով նրանց համար ապաստարան: Օրեր շարունակ նրանց ապահովում էին սննդով, ցույց տալիս բժշկական օգնություն: Այդ մասին «Կոտորածները Երզրումում» խորագրով ընդարձակ հոդված տպագրվեց «Լույ» լրագրում, որում դեսպանատան աշխատակիցները իրենց հայրենակիցներին ու ռուսական կառավարությանը կոչ էին անում օգնել բնաջնջվող հայերին (17, 1896, 92):

Եկեղեցական հայտնի գործիչ Վլադիմիրը «Կազբեկ» լրագրի խմբագրությանը հասցեագրած նամակում նշում էր, «հանուն քրիստոնեական սիրո, որ ավետել է մեզ մեր հոգևոր հավատի հիմնադիրը, նվիրաբերել են հայերի օգնության ֆոնդին 25 ռ. ... Հուլյս ունեն,– շարունակում է նա,– որ Վլադիմիրի և Թերեքի հավատացյալները կօգնեն սովյալներին... Կհայտնեն իրենց սերը իրենց տառապյալ եղբայրների նկատմամբ ոչ միայն խոսքով, այլ նաև գործով և ճշմարտությամբ» (18, 1897, 7):

Արևմտահայության օգնության կոչով հեռավոր Կրոնշտադտից իր ծայրը բարձրացրեց ավագերեց Իվան Սերգենը: «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի խմբագրությանը հասցեագրած նամակում դիմելով լրագրի տնօրեն իշխան Է. Է. Ուխտոմսկուն՝ նա խնդրում էր իր թերթի միջոցով հնչեցնել հայերին օգնության մարդասիրական կանչը: «Ողորմած պարոն Է. Էսպերովիչ,– գրում էր նա,– կարդալով լրագրերում հայ ժողովրդին հասած սարսափելի թշվառությունների ու կոտորածից փրկված հայերի ծայրահեղ կարիքների մասին, ես նրանց նկատմամբ ունեցած ջերմ համակրանքով և

ին կարողության չափ նրանց օգնություն հասցնելու նպատակով նվիրում են 200 ռուբլի որպես օրինակ և ի խրախուսանք իմ հայրենակիցների, որպեսզի նրանք ևս համակրանքով արձագանքեն իրենց քրիստոնյա եղբայրներին: Խնդրում են Ձեզ իշխան, հաղորդեք դրա մասին Ձեր լրագրում բարի գործի նպատակով» (5, 1896, 345):

Ավագերեց Ի. Սերգենի այդ արարքը ջերմությամբ ու երախտագիտության զգացումով համակեց հայ հասարակայնությունը: «Մշակ»-ի աշխատակից Խ. Մալումյանը «Օրեցօր» հոդվածում գրում էր «Հայր Իօան Կրոնշտադսկին մեր ժամանակի համար անսովոր ազդեցություն ստացած այդ կրոնաւորը, ինչպես երևում է այսօրևա հեռագրից, արդեն բարձրացրեց իր ծայրը, մի ծայր, որ այնքան դյուքիչ է ռուս ամբոխի և վաճառականութեան շրջաններում: Եվ այժմ,– շարունակում է լրագրողը,– կասկած չկայ, որ արձագանք կը տան և Սուվորին և Գրինգմուտ և Կօմարով իրենց զավառական մանր մուներ կողմնակիցներով, քարոզելով, որ այո, ինչպես չէ, ռուսաց դարևոր քաղաքականութեան նշանաբանն է եղել՝ պաշտպանել արևելյան քրիստոնեաներին, մանավանդ հայերին, որոնց մի մեծ մասը ապրում է ռուսաց պետութեան սահմաններում և ձեռք մեկնել նրանց դժբախտ օրերին...» (12, 1897, 1)

Օգնության ու կարեկցանքի կարոտ հայ ժողովուրդը անհուն երախտագիտությամբ էր ընդունում բարեկամական անկեղծ ու ազնիվ ձեռքմեկնումները, վարձահատույց էր լինում բարությանը և պարտքը հատուցելու պատրաստակամությամբ: Մ. Լազարևան ակնածանքով ու երախտագիտության վեհ զգացումով պատասխանեց Ի. Սերգեն Կրոնշտադսկու՝ հայերին պաշտպանելու նպատակով ռուս ժողովրդին ուղղված նրա բարի ու ազնիվ մարդասիրական կանչի ու հայ ժողովրդին ցուցաբերած նրա բարոյական ու նյութական օգնության համար: «Մեծապատիվ Է. Էսպերովիչ,– գրում էր Մ. Լազարևան «Ս. Պետերբուրսկիե վեդոմոստի» լրագրի տնօրենին,– մեծագույն շնորհակալություն մեծարգո հովիվ, հայր Իոհաննին, նրա հօգուտ թշվառ թուրքահայերի քրիստոնեական խոսքերի համար: Ռուսահայերը՝ զենե-րալները, սպաները և զինվորները շատ անգամ են ապացուցել իրենց հավատարմությունը Ռուսաստանին՝ մեռնելով պատերազմի դաշտում: Թուրքիայի հայ ազգաբնակչությունը միշտ դիմավորել է ռուսներին ինչպես իր ազատարարների: Մինևույնը կլինի և ապագայում: Դրա համար,– շարունակում է նա,– միայն հարկավոր է որքան կարելի է ավելի շատ բարերարու-

թյուն և որքան կարելի է քիչ նախապաշարմունք: Սրա հետ բարի գործի համար ուղարկում եմ 300 ռուբլի» (5, 1897, 2):

Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Ա. Պետրովը իր ուսանողական կրթաթոշակի սուղ միջոցներից 2 ռուբլի նվիրաբերեց հայ փախստականներին ու Արևմտյան Հայաստանում հայերի օգնության ֆոնդին (31, 1, 357, 21):

Անդրկովկասի մի շարք քաղաքներում, այդ թվում Թիֆլիսում, Բաթումում, Երևանում ստեղծվեցին փախստականներին օգնության ընկերություններ, հիմնվեցին ապաստարաններ (21, 1897, 230): Մասնավորապես մերկ ու սովալլուկ մանուկներին օգնում ու ապաստան էին տրամադրում տեղական հասարակայնության ներկայացուցիչները: Միջոցներ տրամադրվեցին մանուկներին ու մեծահասակներին՝ հագուստ և անկողնային պարագաներ գնելու համար (5, 1897, 38):

Հայ փախստականներին օգնելու, հասարակայնության մեջ նրանց դժբախտությանը կարեկցելու համար սկսած տեղաշարժը նկատի ունենալով՝ Ս. Մենշիկովը «Նոր բնագոյներ» հոդվածում գրում էր. «մեր հասարակայնության կողմից վերջին ժամանակներս նկատելի է ուրիշի դժբախտությանը ցավակից լինելու, նրանց օգնելու ձգտումը: Փախստական հայերին օգնելու նպատակով,– շարունակում է նա,– բոլորը պատրաստ են իրենց վերջին կոպեկը նվիրաբերել: Կոպեկների զոհողությամբ օգնությունը թանկ է նրանով, որ կյանքի է կոչվում նոր երևույթ... Այստեղ կարևոր չէ այն, թե որքան և ինչ են զոհաբերում օգնության համար, այլ այն, որ զոհողություն են կատարում, օգնում են բոլորը: Ռուս մարդը չի հրաժարվում դժբախտներին օգնություն ցույց տալու հաճույքից»: Հեղինակը աշխատում է մոռացության մատնել հասարակայնության ցուցաբերած նախկին քար անտարբերությունը, ընդգծում է, որ այժմ «Ռուս մարդը բացել է տառապյալ հայերի դեմ իր շռայլ ու ազնիվ հոգին ու ինչ էլ նվիրաբերում է, կատարում է մարդասիրությամբ ու հաճույքով» (6, 1897, 29):

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի»–ն հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու համար գովեստով է արտահայտվում իշխանության տեղական մարմիններում բարի ու առաքինի վարքով աչքի ընկած որոշ պաշտոնյանների հասցեին: «Մի շարք տեղերում,– նշում է լրագիրը,– տեղական իշխանությունները հնարավոր օգնություն ցույց տվեցին փախստականներին: Այդ իմաստով հատուկ շնորհակալություն պետք է հայտնել

Երևանի քաղաքապետ Տիգենհաուզենին, Կարսի քաղաքապետ Տոմիչին և Թիֆլիսի քաղաքապետ իշխան Շերվաշիձեին»:

Թիֆլիսում ապաստանած գաղթականներին սննդով ապահովելու նպատակով իշխան Շերվաշիձեի ցուցումով Սոլուլակ, Դիդուբե և Հավլաբար թաղամասերում բացվեցին ճաշարաններ (5, 1898, 107):

«Ս. Պետերբուրսկիե վեդոմոստի» լրագրի անհանգստությունը՝ գաղթականներին օգնության կազմակերպման ձևի մասին, վերջապես տվեցին դրական արդյունք: Իշխան Շերվաշիձեի Թիֆլիսում օգնության համար ստացած միջոցների իրացումը ավելի նպատակային կատարելու, չարաշահումները բացառելու, արդեն ծայր առած դժգոհությունները արգելելու նպատակով հանձնարարեց ստեղծել մասնավոր հանձնաժողով, հասարակությանը քաջածանոթ տեղի երևելի անձանց մասնակցությամբ, որի նախագահ նշանակեց Կոստանդին Ռեյտերին (12, 1897, 19): Աստիճանաբար հաղթահարվում էր հասարակությանը համակած ազգայնականության թույնը, խավարամիտ ու հետադեմ մամուլի հակահայ ելույթները աստիճանաբար մարեցին: Հասարակական սոցիալական լայն շերտերի հայանպաստ գործունեությանը, փախստականներին օգնելու, նրանց նկատմամբ կարեկցանքի ու սատար լինելու գործը աստիճանաբար դրվում էր ամուր հիմքերի վրա (22, 1898, 170): Փախստական արևմտահայերի օգնության գործն իր ամբողջ ծանրությամբ ընկած էր հայկական բարեգործական միությունների, մասնավորապես 1881 թ. հիմնված «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» վրա (23, 384–385):

Հայ փախստականներին օգնության գործն ավելի աշխուժացնելու և ակտիվ հունի մեջ դնելու նպատակով ռուս առաջադեմ մտավորականները հանդես էին գալիս հանրային դասախոսություններով, կազմակերպում էին թատերական ներկայացումներ, հայ–ռուսական ընկերություններ: Հայանպաստ գործունեություն ծավալեցին մի շարք անվանի ռուս գրողներ, որոնք իրենց ստեղծագործությունների հրատարակումից ստացված եկամուտը տրամադրեցին արևմտահայերի օգնության ֆոնդին:

Ճանապարհորդ և գրող Ա. Միկլաշևսկին 1895 թ. կազմակերպեց հայ ժողովրդի պատմության նոր շրջանին նվիրված երկու դասախոսություն: Այդ մասին «Արաքս» հանդեսը տեղեկացնում է. «Հայ ընթերցող հասարակութանը ծանօթ երիտասարդ ռուս ճանապարհորդ և գրող պ. Միկլաշևսկին այս տարի երկու անգամ դասախոսութիւն արեց տաճկահայոց մասին իւր

վերջին երկու անգամ արած ճանապարհորդութիւնների առիթով ի Փոքր Ասիա: Առաջին անգամ դասախօսեց գարնանը Կայսեր. Աշխարհագրական ընկերութեան դահլիճում, իսկ երկրորդ անգամ նոյեմբ. 4-ին Տնտեսագիտաց ժողովում» (14, 1894–1895, 338–339):

Գրող Օ. Միրտովը իր «մեռյալ կոհակ» վեպի առաջին հատորի վաճառքից ստացված գումարը՝ 2500 ռ. տրամադրեց Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ի. Ա. Չինովսկին 1896 թ. օգոստոսի 14-ից հետո տեղի ունեցած զանգվածային ջարդերի ընթացքում տուժած հայերին օգնելու համար, իսկ 300 ռ. ուղարկեց Եզրումի ռուսական հյուպատոս Ա. Ի. Բիկովին՝ տուժած հայերին տեղում օգնելու նպատակով (24, 1909, 8, 4):

Հայ փախստականներին օգնության գործը Ռուսաստանում սկսվեց ինքնաբերույթ, առանց իշխանությունների գործնական միջամտության: Ժողովուրդը համակրանքով ու կարեկցանքով էր լցված պապենական երկրից բռնի հալածված, թուրքական գազանությունների զոհը դարձած և ողբերգական կացության մեջ հայտնված սովալլուկ, մերկ ու բոբիկ հազարավոր գաղթականների նկատմամբ: Ռուս մարդու բարեհոգության, մարդասիրության ու գթառատ հոգու, թշվառության մեջ հայտնված գաղթականներին օգնելու նրա պատրաստակամության մասին «Նովոյե վրեմյա» լրագիրը ստիպված արձանագրում էր. «Ռուս հասարակայնությունը անտարբերությամբ չի լսի իր և այլոց տառապյալների (տնքոցը) հառաչանքները, և ամեն մեկն էլ կգտնի մի քանի ռուբլի, որը և ուրախությամբ կտա, միայն թե իմանա, որ իր աշխատանքով վաստակած ներդրումով կօգնի նույնադավան մուրացիկներից գոնե մեկին կերակրելու կամ հագցնելու համար: Նկատի ունենալով «Եղբայրական օգնություն» ժողովածուի բարեգործական ու մարդասիրական նշանակությունը՝ իրավացիորեն ավելացնում էր. «...հինգ ռուբլիանոց գինը ետ չի պահի նրանց, ովքեր անուշադրությամբ չեն վերաբերվում սովալլների ու մրսածներին, որբերին ու թշվառներին» (25, 1898, 2742):

Հայ փախստականներին օգնելու խնդրով, բացի առանձին անհատներից սկսեցին հետաքրքրվել հասարակական կազմակերպություններ: Կայսրության հյուսիսային մայրաքաղաքում 1897 թ. ամռանը ռուս մտավորականների կողմից ստեղծվեց ռուս-հայկական ընկերություն, որի մեջ ընդգրկվեցին Լ. Ա. Կոմարովսկին, Է. Է. Ուխտոմսկին: Կազմվեց ընկերության գործունեության ծրագիրը: «Այդ ընկերությունը նպատակադրված է,–

նշում է լրագիրը,– նպաստել հայերի կյանքի ու պատմության ուսումնասիրության ու ռուս հասարակության մեջ մասսայականացմանը: Ընկերությունը,– շարունակում է լրագիրը,– իր շուրջն է համախմբելու մայրաքաղաքի հասարակական գործիչների, լրագրողների ու հրապարակախոսների» (17, 1897, 59):

«Մշակ»-ը, ողջունելով ռուս մտավորականների հայանպաստ մարդասիրական այդ ձեռնարկումը, գրում է. «Անկեղծ ուրախությամբ կարդացինք Պետերբուրգի «Լույ» լրագրի հետևյալ լուրը. «Պետերբուրգում նախագծվում է հիմնել ռուս-հայկական ընկերություն: Այդ ընկերութեան նպատակը պիտի լինի՝ ուսումնասիրել հայոց անցեալը և ներկայ կեանքը, պաշտպանել հայերին նրանց դեմ եղող անարդար յարձակումներից, օգնել աղքատ, տաղանդավոր հայերին, տարածել ռուս ընթերցող հասարակութեան մեջ կարևոր տեղեկություններ հայերի մասին...» (12, 1897, 33): Ընկերության նախաձեռնող մտավորականները հայտնի էին իրենց հայանպաստ նպատակաուղղված գործունեությամբ ու այդ իմաստով իրենց համար ստեղծել էին մեծ հեղինակություն: Ռուս հասարակայնության սովոր մասը նրանց ճանաչում ու հավատում էր (10, 1896, 280): «Ընկերության ստեղծման հեռանկարը ուրախություն էր պատճառում հայ մտավորականներին, որովհետև այն ունենալու էր «համակրելի հետևանքներ... և մեզ մնում է,– գրում էր «Մշակը»,– ցանկալ, որ այդ լուրը իրագործվի, և ռուս-հայկական ընկերությունը, որքան կարելի է շուտ և որքան կարելի է եռանդուն կերպով հիմք դնի իր գործունեութեանը»:

Հայ-ռուսական ընկերության ստեղծման անհրաժեշտությունը կարևորվում էր առավելապես նրանով, որ իշխանամետ շրջաններն ու նրանց կամակատար խավարամիտ լրագրողները, լայնածավալ արշավանք ձեռնարկելով հայ ժողովրդի դեմ՝ խանգարում էին ու թույլ չէին տալիս ժողովրդական զանգվածներին նյութական ու բարոյական օգնություն ցուցաբերել հազարավոր հայ գաղթականներին: «Այդ ցանկալի է մանավանդ այժմ,– շարունակում է «Մշակ»-ը,– նամանաւանդ ներկայ պայմաններում, երբ խաւարի որդիք, քաղաքական և գրական աֆէրիստները ձեռք ձեռքի տուած ձգտում են ռուսաց մեծ ազգի մէջ ատելութիւն սերմանել դէպի փոքրիկ հայ ազգութիւնը և վերջնականապէս խզել այն կապը, որով շաղկապած է հայոց փոքրիկ, բայց կուլտուրական համայնքը քաղաքակրթութեան կողմից ռուս տարրի հետ» (12, 1897, 33): Կայսրության հյուսիսային մայրաքաղաքում

ման ընկերության ստեղծումը, մանավանդ նրանում նշանավոր գործիչների ընդգրկումը, վերջիններիս կողմից հետադեմ ուժերի դեմ պայքարը գործնականորեն նույն հունի մեջ էր միավորում հայամետ ուժերին, հայնպաստ հասարակական կարծիքը դառնում էր վճռական գործոն, ստիպում էր իշխանություններին արագացնելու արևմտահայերին նյութական օգնության ցուցաբերման գործընթացը: «Եթե պետութեան մայրաքաղաքում հիմնվի մի այդպիսի ընկերութիւն,— գրում է «Մշակ»—ը,— որի մէջ մտնեն ռուսաց գրականութեան, մտքի նշանաւոր ոյժեր, հասարակական աչքի ընկնող գործողներ, նպատակ դնելով մի կողմից ռուսումնասիրել հայ տարրը, իսկ միւս կողմից տարածել ռուսների մէջ ճիշտ տեղեկություններ այդ ընդունակ ժողովրդի մասին, այն ժամանակ, մենք համոզված ենք, որ ռուս մամուլի յետադեմ, ազգութիւնների փոխադարձ ատելութիւն քարոզող օրգանների ճիւղային աղաղակները կմնան ձայն բարբառո յանապատի» (12, 1897, 33):

Արևմտահայության ողբերգական կացությունը և կոտորածներից մազապուրծ փախստականների անհույս վիճակը թեթևացնելու, նրանց սատար լինելու անհրաժեշտությունը ռուսական հասարակայնության առաջադեմ գործիչներին հայնպաստ ակտիվ գործունեության էին մղում: Տաղանդավոր գեղանկարիչ Վ. Վերեջագինը «Բիրժեվիե վեդոմոստի» լրագրին ուղղված նամակում հույս էր հայտնում, որ մեծ տերությունները կօգտագործեն բոլոր հնարավորությունները, թուրք–հունական պատերազմի ավարտից հետո Եվրոպայում խաղաղության հաստատման ու թուրքական կայսրության փոքրասիական տարածքներում խժոժությունների վերացման, կոտորածների դադարեցման համար: Իսկ ռուսական հասարակայնությանը մեծ արվեստագետը կոչ էր անում օգնել հայ գաղթականներին, չխնայել միջոցներ ռուսական քաղաքների փողոցներում վխտացող սովահար ու սարսափած աչքերով, մանկահասակ, սակայն մանկական դեմքը կորցրած հայ որբերին (10, 1897, 198): «Թուրքական բռնություններից,— գրում է «Նովոստի» լրագիրը,— հայերը գտնվում են թշուառ դրության մեջ ու տանջահար են լինում: Քրիստոնեական Եվրոպայի սրբազան պարտքն է հայ ազգաբնակչությանը հովանավորել ու պաշտպանել: Այդ հարցում առաջին խոսքը պատկանում է հզոր Ռուսաստանին» (11, 1896, 242): Միանգամայն իրավացի էր լրագրողը, որովհետև դեպի Փոքր Ասիայի խորքերը ռուսական առաջընթացը պայմանավորող շահերն ու նպատակները համընկնում էին թուրքական դարավոր լծից հայ ժողովրդի ազատագրման ձգտումների հետ: Եվ այս առումով հայ ժողովուրդը,

անկախ ցարիզմի այդ էտապում Հայկական հարցում ունեցած կողմնորոշումից, իր փրկության հույսը կապում էր Ռուսաստանի հետ: Հայկական հարցում, հետևաբար հայ ժողովրդի հետագա ճակատագրի խնդրում կարևորելով Ռուսաստանի առաջնային դերը, լրագրողը ընդգծում էր երկու կարևոր միտք, այն է՝ մի կողմից՝ Ռուսաստանում ապաստան գտած հայ գաղթականների համար այն դառնում էր ազատության ու հույսի խարիսխ, մյուս կողմից՝ կայսրության Հարավային Կովկասի սահմաններում կրոնակից քրիստոնյա ժողովրդի բնակեցմամբ ամրապնդվում էին Ռուսաստանի հարավային սահմանները: Հայերով հոծ բնակեցված տարածքները, ինչպես նաև իրենք՝ հայերը, վերածվում էին դեպի Փոքր Ասիա Ռուսաստանի առաջընթացի ճանապարհին հուսալի ու ամուր հենարանի: Այդ հուսալիությանն ու հայ ժողովրդի անմնացորդ հավատարմությանը ակնհայտ էր եղել ռուս զինվորները և համոզվել են կյանքի փորձով բոլոր ռուս–թուրքական պատերազմների ընթացքում: Այդ անժխտելի ճշմարտության գիտակցումով էին ռուս կայսրերը իրենց շնորհակալական խոսքն ուղղում հայ ժողովրդին (5, 1897, 214):

Քննարկելով Ռուսաստանի՝ դեպի Փոքր Ասիա առաջընթացի ու Անդրկովկասի սահմանների ապահովության, ինչպես նաև ռուս–թուրքական պատերազմների ժամանակ ռուսական բանակներին հայ ժողովրդի ցույց տված օգնության ու ռուս զինվորի նկատմամբ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի հարցը, «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը նշում էր. «Ռուսաստանի շահերը պահանջում են, որպեսզի նրա սահմաններ՝ տարածքներում ու նրանց հարևանությամբ տեղի չունենան կոտորածներ ու թալան, որոնք խոչընդոտում են արդյունաբերության ու առևտրի զարգացմանը: Արևելքում Ռուսաստանի պատմական առաքելությունը թույլ չի տալիս ռուս ժողովրդին անտարբեր լինել քրիստոնյա բնակչության դեմ գործադրվող բռնությունների հանդեպ» (10, 1896, 201):

Անվանի հրապարակախոսներ Վ. Գոլմստերմը, Ա. Սազոնովը, Մ. Մենշիկովը, Գամման, Կոտովիչը, Բուկվան, Սիգման ակտիվ գործունեություն էին ծավալում հայ փախստականներին օգնության գործը արագացնելու, աշխատում էին դրան հաղորդել համաժողովրդական բնույթ: «Մինչև երբ սպասել,— գրում էին նրանք,— ժամանակն է արդեն օգնություն ցույց տալ տառապյալ հայերին» (4, 1897, 66):

«Ռուսսկիե վեդոմոստի», «Ռուսսկոյե սլովո», «Նեդելյա», «Ռուսսկիյ լիստոկ» լրագրերի սյունակներից չէր իջնում հայ փախստականներին նյութա-

կան օգնություն կազմակերպման հարցը: Նրանց մարդասիրական, հայանպաստ բովանդակությամբ գրված հոդվածները ռուս ժողովրդին համակում էին հայերի հանդեպ կարեկցանքով ու համակրանքով: Ժողովուրդը աստիճանաբար թոթափում էր պաշտոնական շրջանների հարուցած կաշկանդումները, սկսում էր հոգատարություն ցուցաբերել արևմտահայ փախստականների հանդեպ (10, 1896, 280): Մատնացույց անելով Անգլիայում և Ֆրանսիայում փախստական արևմտահայերին օգնության նպատակով կազմակերպված ընկերությունների գործունեությունը, ինչպես նաև պետական մակարդակով տրված օգնությունը, հասարակության կողմից Արևմտյան Հայաստանում ստեղծված ապաստարանները հրապարակախոս Գամման կոչ էր անում ռուսական կառավարությանն ու հասարակական կազմակերպություններին հետևել նրանց մարդասիրական օրինակին: «Մի՞թե մենք անհոգաբար մոռացության ենք մատնել մեր հայրենիքի ու ռուսներիս նկատմամբ մշտապես բարեկամաբար տրամադրված հայերին,— գրում էր նա,— որոնք իրավամբ իրենց ազատության հույսը կապում են Ռուսաստանի հետ» (9, 1897, 291): Այդ կարևոր հանգամանքը նկատի ունենալով «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը արդարացիորեն ընդգծում էր. «Ռուսաստանի պատմական առաքելությունը թույլ չի տալիս ռուս ժողովրդին քրիստոնյաների դեմ գործադրվող բռնությունների, մանավանդ դժբախտության մեջ գտնվող հայերի նկատմամբ մնալ անտարբեր դիտող» (10, 1896, 201):

Աստիճանաբար հայ փախստականների նկատմամբ սկսեց հալվել վերևների սառնությունը, նրանք ևս ներգրավվեցին ողջ հասարակայնությանը մտահոգող այդ ոլորտը: Հայ ժողովրդի ողբերգական կացությունը նկատի ունենալով՝ իշխանական շրջաններում ևս գտնվեցին անհատներ, բարձրաստիճան չհնովինիկներ, կայսերական ընտանիքի անդամներ, որոնք կառավարության կողմնորոշումից անկախ սկսեցին զբաղվել հայ փախստականների հարցով (27, 1897, 101): Այդ մասին «Ռուսսկայա միսլ» ամսագիրը հայտնում է, որ «Եղբայրական օգնություն...» ժողովածուի խմբագրությունում պահպանվել են հայ փախստականներին նյութական օգնություն ցուցաբերելու մասին բազում մամակներ, որոնցում հիշատակվում են կայսերական ընտանիքի անդամների անուններ, մինիստրներ, խորհրդականներ, անվանի գիտնականներ, կապիտալիստներ և մարդկանց անուններ, որոնք բարի գործի համար նվիրաբերել են իրենց չնչին միջոցները (24, 1896, 6, 112):

Թուրքիայում պարբերաբար բռնկվող մասսայական կոտորածների հետևանքով, երբ Ռուսաստանում սովարանում էին փախստականների խմբերը, սկսում էր իրական դառնալ հայերի համաժողովրդական օգնության խնդիրը, ռուս ժողովուրդը ավելի հասու էր դառնում հայ ժողովրդի ողբերգությանը և ինքնական, մարդասիրության թելադրանքով, անկախ իշխանությունների ցանկություններից, օգնության և կարեկցանքի ձեռք մեկնեց դժբախտ փախստականներին:

«Փոքր Ասիայում,— գրում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը,— կրկին ծավալվում են ողբերգական իրադարձություններ: Կրկին հոսում է հայկական անմեղ արյունը: Հայ ազգաբնակչությունը,— շարունակում է լրագրողը,— հայացքը հույսով հառել է դեպի հյուսիս, Ռուսիա: Մեր հայրենիքը չպետք է մոռանա, որ իր պատմական առաքելությունը Արևելքում քրիստոնյաների ազատագրումն է: Մեր հասարակական կարծիքը այդ հարցում ասում է իր վճռական խոսքը» (28, 1898, 1, 404): «Մշակ»—ը ի մի բերելով ու բարձր գնահատելով ռուս առաջադեմ մտավորականների ու գործիչների՝ հայ ժողովրդին, մասնավորապես արևմտահայ փախստականներին օգնություն ցույց տալու խնդրում գործադրած եռանդուն ջանքերը, իշխանամետ շրջանների ու նրանց ծայնափող պաշտոնական մամուլի և վերջիններիս շուրջը համախմբված խավարամիտ լրագրողների դեմ նրանց մղած հետևողական ու անհաշտ պայքարը, հայանպաստ բարի ու մարդասիրական լայնամասշտաբ գործունեությունը, գրում էր. «Այդ համակրելի ու զորեղ ծայնի հնչելը հայերի համար կրկնակի նշանակություն ունի: Նախ այն կողմից, որ դա կը նպաստի այն ծայրահեղ թշվառության թեթևացնելուն, որին ենթակա են այժմ 40. 000 հալածականներ և երկրորդ՝ դա մի փոքր կթեթևացնի և մասամբ մոռացնել կտա այն ծանր տպավորությունները,— շարունակում է «Մշակ»—ը,— որը մինչ այսօր էլ ճնշում է հայ հասարակությունը շնորհիվ ռուս մամուլի հայտնի բանակի անտեղի, անդադար և ատելության զգացմունքներով ներշնչված հարձակումների...» (12, 1897, 1):

Արևմտահայ փախստականներին օգնություն ցուցաբերելու խնդրում վճռականությամբ հանդես եկավ ռուսական, «Կարմիր խաչի ընկերությունը»: Այդ մասին «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը նշում է. «Ռուս հասարակությունը արժանապատվությամբ է ցուցադրում իր հոգու մեծությունը, գիտակցելով ու գործնականորեն կատարելով հարևան թշվառ ու հարստահարված փոքրիկ ժողովրդի նկատմամբ իր մարդասիրական պարտակա-

նությունը» (28, 1898, 3, 361): Սկսած 1897 թ. մարտ ամսից, երբ այդ ընկերությունը սկսեց ակտիվացնել փախստականներին օգնություն ցույց տալու աշխատանքները, հասարակայնությունը դիմեց գործնական քայլերի: «Կարմիր խաչի ընկերությունը,– շարունակում է «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը,– մարտի վերջին օրերին կոչ արեց ռուս ժողովրդին ձեռնամուխ լինել Թուրքիայում տուժած հայ ժողովրդին ցույց տալու գործնական օգնություն: Թուրքական դահիճների գազանությունների հետևանքների վերացման համար «Կարմիր խաչի ընկերության» պայքարը կարևոր է ոչ միայն նրանով, որ պահանջում է խոշոր նյութական միջոցներ ու տեղական իշխանության մարմինների պատվասիրության խնդիրն է, այլ նաև այն բանի համար, որ Կարմիր խաչի կոչը այլևս տեղ չի թողնում տուժածների մասին՝ այդքան երկար ժամանակ հասարակությանը անտեղյակության մեջ պահող և նրանց նկատմամբ ակտիվ հոգացողությունը կասեցնող տարակույսների համար» (28, 1898, 3, 361): Ինչպես այդ պահին, այնպես էլ հետագայում, երբ թուրք ջարդարարները իրագործում էին հայ ժողովրդի Մեծ եղեռնը, Կարմիր խաչի ընկերությունը, իր կոչման համաձայն, մարդասիրական մեծ գործ կատարեց, Երևանում ու այլ վայրերում հիմնեց հայ գաղթականների համար սնման կետեր, ցույց տվեց բժշկական օգնություն (29, ֆ. 256, ռ. 1–2): Առանձնապես իրենց հոգատարությամբ ու հայանպաստ գործունեությամբ աչքի ընկան բուժքույր Ե. Մ. Կոլեսնիկովան և բուժակ Պ. Բոգունը: Այդ ընկերության ջանքերով Իգդիրում փախստականներին օգնելու նպատակով բժիշկ Չեյլադինսկու ղեկավարությամբ բացվեց նոր հիվանդանոց (29, ֆ. 257, ռ. 104): Ռուս հայամետ մտավորականները ցավով ու կարեկցանքով էին վերաբերվում հայ գաղթականներին ու արյան բաղնիքներում գտնվող արևմտահայությանը, լավատես էին նրա վաղվա օրվա համար: Պատահական չէր այն փաստը, որ կոտորածներից մազապուրծ փախուստի ճանապարհին հայ կնոջ ծննդաբերության մեծ խորհուրդը նրանք դիտում էին հայ ժողովրդի վերածննդի խորհրդանիշ: Մարդասիրական ջերմությամբ և արևմտահայերի ապագայի նկատմամբ լավատեսությամբ «Նորածինը» հողվածի հեղինակը գրում էր. «Չի մեռնի այն ժողովուրդը, որ արհավիրքի մեջ անգամ կյանքի նոր շունչ է տալիս իր նորածին մանկանը» (30, 1899, 3, 145–150):

Հայ խաղաղ բնակչության գազանային կոտորածների հանդեպ անկարող լինելով աչք փակել՝ Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում

հաստատված ռուսական հյուպատոսարանների աշխատակիցները շրջանցելով ցարիզմի 80–90–ական թվականների Հայկական հարցում որդեգրած չմիջամտելու կողմնորոշումը, ապաստարան էին տրամադրում, օգնում նրանց, ապահովում նյութական միջոցներով, փրկում նրանց կյանքը, նույնիսկ թուրքական իշխանությունների առջև դառնում նրանց երաշխավորը (17, 1895, 192): 1895 թ. հոկտեմբերին Էրզրումում մասսայական կոտորածների ժամանակ ռուս հյուպատոսը բժշկական օգնություն ցույց տվեց տուժած հայերին՝ տրամադրելով դեղորայք ու սնունդ (17, 1895, 192): Վանում փոխհյուպատոս Մասսկին երաշխավորեց ու պայմաններ ստեղծեց հարյուրավոր հայերի անցնելու Ռուսաստանի անդրկովկասյան տարածքները (12, 1896, 120): Կոտորածների ընթացքում ռուսական դեսպանատունն ու հյուպատոսարանները վերածվում էին հայերի համար ապաստարանների: 1895 թ. նոյեմբերին Նելիդովը արտագործախարարությանը տեղեկացնում էր, որ Տրապիզոնում ռուսական հյուպատոսարանը լեփ–լեցուն է կոտորածներից փրկված հայ ընտանիքներով, որոնք երկար ժամանակ մնացին հյուպատոսարանի շենքում: Նրանց տրվում էր սնունդ ու այլ միջոցներ (31, Ժ. 3433, ռ. 63–66): Նույն Նելիդովը հայտնում էր, որ ռուսական «Ազով» նավը, որ գտնվում էր Տրապիզոնի նավահանգստում, իր տախտակամածը տրամադրեց կոտորածից փրկված հայերին (32, 1895, 17, 18), որոնք այնուհետև տեղափոխվեցին Ռուսաստան: «Մուրճ»-ը հայտնում է, որ ռուսական «Չիխաչև» նավը կոտորածից փրկված տասնչորս հայ ընտանիք ապահով հասցրել է Օդեսա (33, 1897, 5, 732): Տրապիզոնի նավահանգստում դեպի շոգենավը լողացող ու մահվան սարսափով համակված անզեն հայերին հետևում էին զինված թուրքերը, սակայն «վրայ կը հասնի նավապետի օգնականներեն Ա. Ի. Կոստանտինով, կկորզէ թուրքի ձեռքէն անոր դաշույնը և նավաստիներու օգնութեամբ կզսպէ այդ սրիկաները և ներս կառնի ապաստան փնտրող հայերը»: Նավում բժիշկ Պասալսկին օգնում է հիվանդ ու տկար հայերին: Այնուհետև, ինչպես հաղորդում է Պասալսկին «եկավ ռուսական մարտանավ «Տերեցը» և ռուսական դրոշին ներքո դուրս բերեց այնտեղ ապաստանող հայերը» (32, 1895, 18):

1896 թ. սեպտեմբերի 14–ին և 17–ին Կոստանդնուպոլսում արյունալի ջարդերի ժամանակ մշում է «Մշակ»-ը, ռուսական դեսպանատանը և նավազնացության ընկերության շենքերում ապաստանել էին բազմաթիվ հայեր, որոնց թիվը հասավ մոտ 600 մարդու: «Կոտորածից փրկված հայերին

Ռուսաստանի դեսպանության միջամտությամբ տրվեց ապաստարան, ուր ռուսական դրոշի հովանու տակ նրանք ապրում էին ազատ ու ապահով» (12, 1896, 104): Ինչպես հավաստում է նույն աղբյուրը Թուրքիայում Ռուսաստանի դեսպան, Մոսկվայի Լազարյան արևելյան լեզուների ճեմարանի նախկին սան Ի. Ա. Ջինովկի անմիջական ցուցումով բազմաթիվ հայեր «Չիխաչև» նավով տեղափոխվեցին ավելի ապահով վայրեր: Ի.Ա. Ջինովկը, ինչպես նաև դեսպանատան աշխատակիցները նյութական օգնություն ցույց տվեցին տուժած հայերին (35, 1): Ի. Ա. Ջինովկը, համագործակցելով «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրության հետ, լայն աշխատանք ծավալեց Արևմտյան Հայաստանում և հայաբնակ մյուս վայրերում խմբագրության կողմից տրված միջոցներով, ինչպես նաև մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆեոդորովնայի, գրող, բանաստեղծ Վ. Միխայլովսկու, Մ. Մորոզովի, Է. Դիլմանի, իշխան Տ. Շչերբատովի, բարոն Կնոպի, Վ. Վիշնևսկու, Բիկովայի, Ջաբելիների, բժիշկ Բելոգոլովի հանգանակությամբ տրված մոտ 5000 ռ. գումար, Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի անմիջական մասնակցությամբ հիմնեցին ապաստարաններ հայ որբերի համար և սնման կետեր (5, 1898, 302):

Դեսպանատան աշխատակիցները հաճախ իրենց կյանքը վտանգում էին հայերին փրկելու համար: Արհամարհելով վտանգը՝ Մաքսիմովը փրկեց իրենց մոտ ապաստանած շատ հայերի կյանքը, նշում է «Մշակ»-ը (12, 1896, 97): Պ. Պեշկովը տուժածներին տրամադրեց 360, Պ. Մանսուրովը՝ 440 օսմանյան լիրա տուժվածների համար սնունդ և դեղորայք ձեռք բերելու նպատակով (15, 1897, 119): Նույն մարդասիրական գործն էին կատարում ռուս սահմանապահ զինվորները, փրկելով հազարավոր փախստականների կյանք, նրանց անցկացնում էին ռուսական տարածքները (34, 1896, 4221): Մեծ ու անձայրածիր Ռուսաստանով մեկ տարածվում էր ռուս առաջադեմ մտավորականներ Վ. Գոլմստրեմի, Յու. Վեսելովսկու, Լ. Ա. Կոմարովսկու, Ա. Ն. Գրենի, Վ. Ի. Գերիեի, Վ. Վերեչազգիների, ավագերեց Ի. Սերգենի, «Ռուսակիե վեդոմոստի» լրագրի աշխատակից Գ. Ն. Անուչինի, «Ռուսկայա միսլ» ամսագրի աշխատակիցներ Ա. Ն. Սազոնովի և Վ. Ա. Գոլցի, երգվյալ հավատարմատար Վ. Ա. Մակլակովի, պրոֆ. Կ. Տիմիրյազևի, դատարանական ռեֆորմի պատմության հայտնի մասնագետներ Ս. Ի. Ջարոդնու, Վ. Ա. Արցիմովիչի, Գ. Պ. Ստարիցկու և այլ երախտավորների ռուս ժողովրդին ուղղված հայ փախստականների և արյան բաղնիքներում գտնվող արևմտահայերին օգնության կանչը:

Պաշտոնական շրջանների ու հետադեմ մամուլի հակահայկական կողմնորոշման հետևողական քննադատության արդյունքում «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Նեդելյա», «Դեն», «Սիբիրսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի», «Ռուսկայա միսլ», «Միր բոժի», «Վեստնիկ Եվրոպի» լրագրերի ու ամսագրերի մշտական ելույթների, հայանպաստ մարդասիրական գործունեության հետևանքով հասարակայնության լայն խավերը հասու եղան կառավարության ու նրա ծայնափող պաշտոնական մամուլի հակահայ գործունեության ելույթներ, և նրանց այդ ազնիվ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ կտորածից մազապուրծ փախստականներին բարոյապես ու նյութապես օգնելու և սատար լինելու խնդիրը առաջ բերեց համընդհանուր հայամետ շարժում: Այդ հարցին է նվիրված «Նեդելյա» լրագրում տպված «Ռուս ժողովրդի կոչումը» հոդվածը: «Ժամանակակից ռուս մարդու խիղճը սկսում է անհանգստանալ,՝ գրում է «Նեդելյան»,՝ երբ թուրքական գազանությունների զոհ հայերը մեռնում են անօգնական, իսկ նրանց որբացած երեխաները անհույս թափառում են օտար քաղաքների փողոցներում: Թուրքահայերը իրենց հուսավառ հայացքը հառել են դեպի Ռուսաստան,՝ շարունակում է լրագիրը,՝ նրանք սպասում են ռուս ժողովրդի կարեկցանքին ու օգնությանը» (6, 1897, 29):

Ռուս հասարակական առաջադիմական շրջանների, հայամետ մտավորականների ու նրանց գործունեությանը հետամուտ մամուլի օրգանների հայանպաստ գործունեության բարերար ազդեցության արդյունքում աստիճանաբար ռուս հասարակության լռությունը և անտարբերությունը տեղի տվեցին, ստեղծվեց հայ ժողովրդի օգնության կանչին արձագանքելու բարենպաստ մթնոլորտ: Իշխանամետ մամուլի որոշ օրգաններ հայերի նկատմամբ սկսեցին մեղմել իրենց տոնը, իսկ շատերը Հայկական հարցում վերակողմնորոշվեցին: Հրապարակախոս Ա. Կոտովիչը, «Հայերի մասին» հոդվածում քննարկելով այդ հարցը, գրում է. «Ցնդեց, վերացավ մեր հասարակությանը կաշկանդող մթնոլորտը, ռուս մարդը այժմ կարող է իր բարությամբ վերաբերվել հավատակից հային» (6, 1897, 117):

Ցարական կառավարությունը, զգալով երկրում ժողովրդական զանգվածների ինքնաբուխ շարժումը, հայ ժողովրդին նյութապես ու բարոյապես օգնություն ցուցաբերելու նրա պատրաստականությունը՝ արդեն ձևավորվող հայամետ հասարակական կարծիքի համակրանքը շահելու, ինչպես նաև թուրք-գերմանական հարաբերությունների աստիճանական ջերմաց-

ման ու դրան զուգընթաց ռուս-թուրքական հարաբերությունների սառեցման հետևանքով արևմտահայերին կրկին իր կողմը գրավելու նպատակով 1896 թ. դեկտեմբերի 11-ին հրամանագիր հրապարակեց արևմտահայ փախստականներին նյութական օգնություն ցույց տալու համար հանգանակություն սկսելու մասին, որը հասարակայնության կողմից ընդունվեց «թեթևացած սրտով ու անթաքույց հրճվանքով» (5, 1897, 32):

Այնչ այդ երկրում հասարակայնությանը համակած անտարբերությունն ու անորոշությունը տեղի տվեց ու հայ փախստականներին օգնության կազմակերպումը սկսվեց կառավարական մակարդակով: Կառավարության այդ մարդասիրական միջոցառման, ինչպես նաև ռուս հասարակայնության կողմից փախստական արևմտահայերին նյութական օգնություն ցույց տալու պատրաստականության հարցերը լայնորեն լուսաբանվեցին հայամետ կողմնորոշում ունեցող մամուլի օրգանների էջերում: Այդ իմաստով առանձնահատուկ արժեք է ներկայացնում հրապարակախոս Ն. Վ. Յակովլևի «Փոքր եղբոր օգտին» խորագիրը կրող հոդվածը, որում հեղինակը մասնավորապես գրում է. «Հասարակության հիմնական հույսը փախստականներին լայնամասշտաբ օգնություն ցույց տալու և հանգանակություն սկսելու խնդրում կապված էր պետության հետ, քանզի չպետք է մոռանալ, որ թուրքական հյուպատոսների սադրանքով անցյալ տարի տեղի ունեցած բազմաթիվ այն անձանց ձերբակալությունները, որոնք իբր թե այս կամ այն կերպ կարեկցանք էին արտահայտել թուրքերի և քրդերի սրից փախած թուրքահայերի ճակատագրի հանդեպ, այն աստիճան վախեցրել էին տեղական բնակչությանը, որ Կովկասում շատերը զգուշանում էին Ռուսաստանում ապաստանած գաղթականներին որևէ օգնություն ցույց տալուց», սակայն այդ հրամանից հետո արդեն անորոշությունը և անտարբերությունը իրենց տեղը զիջեցին հայ գաղթականների նկատմամբ հոգատարությամբ, կարեկցանքով ու համակրանքով, նյութական օգնություն ցուցաբերելու պատրաստականությամբ: Օգնության գործը սկզբում դանդաղ էր ընթանում ու կրում էր տարերային և անկազմակերպ բնույթ: Այդ պատճառով կենտրոնական կառավարության ցուցումով այդ գործի պատասխանատվությունը վերապահվեց իշխանության տեղական մարմիններին, որից հետո «դժբախտ փախստականներին օգնությունը դրվեց լայն ու բանական հիմքերի վրա» (5, 1897, 228):

Կովկասի կառավարչապետը, ելնելով հայերին օգնելու մասին կայսեր հրամանից, ապա 1897 թ. հունվարի 10-ին հրապարակած թիվ 289 շրջաբե-

րականից, ազդարարում էր Կովկասի բոլոր նահանգապետներին ու շրջանների գլխավորներին. «Թագաւոր կայսրը, համաձայն ներքին գործերի մինիստրի ամենահպատակօրէն զեկուցման, անցեալ դեկտեմբեր ամսի 11-ին ամենաողորմածաբար բարեհաճեց թույլատրել բանալ ամբողջ կայսրութեան մէջ նուէրների հանգանակութիւն, Թիւրքիայից մեր սահմանները փախած հայերի վիճակը թեթևացնելու համար, այն պայմանով, որ նուէրները ընդունեն բացառապէս այն կառավարական հաստատությունները և անձերը, որոնք լիազորութիւն ստացած կը լինեն այդ մասին, իսկ հավաքված գումարները տեղական նահանգապետների միջոցով, յանձնվեն Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի և նրա անմիջական հայեցողութեամբ ու կարգադրութեամբ բաշխվեն կարոտեալներին:

Ի նկատի ունենալով այդ բարձրագույն հրամանը, որ յայտնված է ներքին գործերի մինիստրի կողմից անցեալ դեկտեմբերի 18-ին պ. պ. նահանգապետներին, ի կատարումն և հաղորդված է ինձ իսկական գաղտնի խորհրդական Գորտնիկիմի գրութեամբ նույն թուվ թիվ 21702, ես անհրաժեշտ համարեցի.

1. Յանձնել յիշեալ նուէրների ընդունելութիւնը գավառական, քաղաքային և նահանգական ոստիկանական վարչություններին, որի մասին հարկաւոր է հրապարակել տեղական լրագիրներում.

2. Այդ կարգից դուրս չը թույլատրել նուէրների ընդունելութիւն ուրիշ հաստատութիւնների, մասնաւոր անձերի և ընկերութիւնների ձեռքով, և

3. Հաղորդել պարբերաբար, ամեն երկու շաբաթը մի անգամ, կովկասեան գլխաւոր իշխանութեան, ճիշտ տեղեկություններ ոստիկանական վարչությունների մէջ մտած նուէրների քանակութեան, ինչպէս և ամեն մի գավառի կարիքի չափերի մասին, հաստատելով այդ տեղեկութիւնները պատշաճաւոր հաշիւներով և կցելով նահանգի կամ շրջանի իշխանութեան ենթադրութիւնները յիշեալ նուէրները Թիւրքիայից եկած կարօտեալ հայ գաղթականների մէջ բաժանելու մասին, եթէ կան այդպիսիները այդ իշխանութեան գործողութեան շրջանում, և առհասարակ, այդ նուէրների ապագայ գործադրութեան մասին: Վերոգրեալի մասին պատիւ ունեն հաղորդել կովկասեան երկրի պ. պ. նահանգապետներին և շրջանների գլխաւորներին ի պատշաճաւոր տնօրէնութիւն:

Ստորագրեց՝ կառավարչապետի պաշտոնակատար, նրա օգնական, ինֆանտրիայի գեներալ կոմս Տատիշչէվ:

Հաստատեց՝ Դիվանատան դիրեկտոր Միգլեվիչ» (12, 1897, 6):

Արևմտահայ փախստականների օգնությունն ավելի ծավալվեց ու համաժողովրդական բովանդակություն կրեց ռուսական ուղղափառ եկեղեցու միջամտության շնորհիվ (36, 1897, 185): Պետերբուրգի ռուսական եկեղեցական խորհուրդը հայ փախստականների օգնության ֆոնդին տրամադրեց միանվագ 1000 ռուբլի (5, 1897, 21): Հայերին օգնության կոչով իր ծայրը բարձրացրեց համառուսական «Քրիստոնյաների օգնության կոմիտեն»։ Ի վերջո, սկսված մարդասիրական գործին միջամտեցին պետական կառույցները (24, 1902, 6, 48): Վերաբնակեցման կառավարական հատուկ հանձնաժողովը քննության առավ արևմտահայ փախստականներին կայսրության ներքին տարածքներում բնակեցնելու հարցը: Փախստականներին հողահատկացման ու այլ անշարժ գույքի տրամադրման խնդրում հանձնաժողովը մնաց ձեռնպահ, սակայն փախստականների օգնության ֆոնդին տրամադրեց պատկառելի գումար, 1897 թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ 1500, իսկ տարեվերջին՝ 1000 ռուբլի (5, 1897, 290): Կարմիր խաչի կողմից Կովկաս առաքվեցին մեծ քանակությամբ հացահատիկ ու դրամական միջոցներ (5, 1897, 234):

«Ռուսակիե վեդոմոստի» լրագիրը հայտնում է, որ «Մոսկվայի Քաղաքային Դուման, նորին կայսերական մեծության մայրաքաղաքի գեներալ նահանգապետի առաջարկությամբ 1897 թ. հունվարի 20-ի հավաքում որոշեց հանգանակություն սկսել Թուրքիայից փախած հայերի օգտին» (15, 1897, 23): Մայրաքաղաքի իշխանությունների մարդասիրական այդ վճիռը մեծ խորհուրդ ուներ: Բարոյական ու նյութական օգնության խիստ կարիք ունեցող հայ ժողովուրդն իր երախտագիտությունն էր հայտնում այդ ազնիվ արարքի համար: «Դա մի բարոյական պարտք է, - գրում է «Մշակը», - որ փորձում է կատարել Ռուսաստանի հին մայրաքաղաքի ինքնավարութեան մարմինը և հույս ունենք, որ Մոսկվայի տված օրինակը հետևողներ կըգտնի Ռուսաստանի մյուս քաղաքներում» (12, 1897, 12): Եվ, իրոք, կասրության հյուսիսային մայրաքաղաքը շտապեց հետևել Մոսկվայի օրինակին: «Ռուսակայա բեսեդա» ամսագիրը, որը հայանպաստ մեծ գործ կատարեց երկրում հայամետ հասարակական կարծիքի ձևավորման գործում, տեղեկացնում է, որ Պետերբուրգի քաղաքային բարեգործական ընկերությունը նկատի ունենալով կայսերական հրամանը փախստականներին նյութական օգնություն ցուցաբերելու մասին, որոշում է «10000 ռուբլի տրամադրել օգնության

ֆոնդին, ցանկանալով փրկել թեկուզ 50 փախստականի կյանք, ինչպես առաջարկում էր հայր Ի. Ս. Կրոնշտադսկին» (7, 1899, 12, 70):

Թուրքական ենիչերիների ձեռքով գազանաբար կոտորվող արևմտահայությանը, մասնավորապես որբացած հազարավոր երեխաների ու կոտորածից մազապուրծ ռուսական սահմանն անցած փախստականներին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու նպատակով հայազգի նշանավոր մտավորական, պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ Գր. Ա. Ջանշյանի ջանքերով ու հայամետ ռուս մտավորականներ Վ. Գոլստրեմի, Է. Է. Ուխտոմսկու, Կ. Տիմիրյազևի, Ա. Ն. Սազոնովի, Ա. Ն. Գրեմի, Վ. Գերիեի, Մամին-Սիբիրյակի, Վ. Վերեչազինի, Ս. Ի. Ջարոդնու, Ի. Ա. Արցիմովիչի, Գ. Պ. Ստարիցկու, Մ. Նիկոլսկու նյութական օգնությամբ ու ակտիվ մասնակցությամբ լույս աշխարհ եկավ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն, որը միաժամանակ ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական օգնության արժեք ունեցավ հայ տառապյալների համար և զուր չէր, որ առաջադիմական մամուլի օրգանները այն համարեցին կոչ՝ ուղղված ռուս ժողովրդին. «Ժողովածուն պետք է ծառայի այն նպատակին, ինչ նրա վերնագիրն է» (5, 1897, 278):

Ժողովածուի բովանդակությունը համահունչ ու ներդաշնակ էր վերնագրին, համակված էր եղբայրական սիրո ջերմությամբ ու առինքնող էր, ընթերցողներին ևս համակում էր այդ զգացումը: Ժողովածուի առջև դրված նպատակը այնքան պարզ ու հստակ էր, այնքան մարդասիրական ու ջերմ, որ նրա առջև սկսեցին փափկել նույնիսկ ոչ հայամետ որոշ ուժեր ու մամուլի օրգաններ, ստիպված գովեստի խոսքեր շռայլեցին ամենաքմահած քննադատները (8): Հայամետ մամուլի սրտացավ ու բարեկամական վերաբերմունքը հազարավոր ընթերցողներ գտավ, օգնեց ժողովածուի մասսայականացմանն ու արագ իրացմանը, որով նյութական պատկառելի միջոց ստեղծվեց: «Տիֆլիսսկիյ լիստոկ» լրագիրը, նկատի ունենալով ժողովածուի արագ սպառումը, նշում էր. «Եղբայրական օգնություն» ժողովածուի գինը 5 ռուբլի է, թանկ է, սակայն այդ հանգամանքը չի խանգարում հասարակայնությանը այդ ճանապարհով օգնություն ցուցաբերել արյունալի կոտորածներից փրկված հայ որբերին (21, 1897, 239):

«Եղբայրական օգնության» խմբագրությունը ժողովածուի վաճառքից ստացված գումարը 1897 թ. ընթացքում 23000 ֆրանկ փոխանցեց Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանատուն՝ կոտորածի ընթացքում տուժածներին և որբ

երեխաներին խնամելու համար, իսկ գումարի մի մասը իրացվեց Բերայի Սրբ. Երրորդության եկեղեցու ծխական հոգատարության միջոցով (8, E):

Ժողովածուի արժանիքը մեծ է ոչ միայն նրանով, որ վաճառքի արդյունքում կուտակվել է պատկառելի գումար կարոտյալ հայերին օգնելու համար, այլ նաև նրանով, որ ռուս մտավորականների հայամետ կողմնորոշումը աստիճանաբար ընկալվում է ռուս հասարակայնության կողմից և վերջինի կարծիքը մեծ կարևորություն է ներկայացնում: «Վ. Գոլմստրեմի «Յայ եդբայրներ, յօդուածը այնպիսի ջերմ համակրութեամբ և մարդասեր կարեկցութեամբ է գրուած,— նշում է «Արարատը»,— որ չի կարելի առանց յուզուելու և խոր խոցուելու կարդալ: Յոդուածագիրը յորդորում է ռուս հասարակութեանը թողնել հայոց խնդրի մասին ունեցած թիւր կարծիքը, որ արդիւնք է անտեղի սնապաշտութեան, և ուսումնասիրելով փաստերը, այնպէս վերջնական կարծիք կազմել խնդրի մասին» (19, 1897, 11–12, 480): Յայ ժողովրդի մասին անկողմնակալ ու արդարացի կարծիք կազմելու խնդրում մեծ ծառայություն են մատուցում հրապարակախոսներ Ա. Ն. Սազոնովը և Է. Է. Ուխտոնսկին իրենց հայամետ հոդվածներով:

Ժողովածուի արագ սպառումը և ժողովրդական լայն զանգվածների նրա նկատմամբ ցուցաբերած մեծ հետաքրքրությունը խմբագրությանը մղեց նոր գործունեության: Գր. Ջանշյանը, նկատի ունենալով այդ հանգամանքը, «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրին տեղեկացնում էր, թե բացի այն, որ խոշոր գումար է կուտակվել ժողովածուի վաճառքից, կան նաև անհատների կողմից նվիրատվություններ այն վերահրատարակելու համար (5, 1897, 107): Այդ նպատակով կառավարությունը ևս իր մասնակցությունն ունեցավ: «Արևմտյան Յայաստանում և Թուրքիայի մյուս հայաբնակ վայրերում,— գրում էր Գր. Ջանշյանը,— սովյալ հայերին օգնելու նպատակով ռուսական կառավարությունը «Եղբայրական օգնության» խմբագրությանն է տրամադրել 3000ռ. և նույն նպատակով փախստականներին է հատկացրել ժողովածուի խմբագրության կողմից 2000 ռուբլի» (5, 1897, 107):

«Եղբայրական օգնության» խմբագրությունը մարդասիրական հոգատար ու լայնածավալ գործունեություն ծավալեց Արևմտյան Յայաստանում, Կ. Պոլսում կոտորածներից տուժածներին, հայ որբերին, ինչպես նաև Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականներին նյութական օգնության կազմակերպման, նրանց հոգսերը թեթևացնելու, թուրքական վանդալների

մեղքով դժբախտության մեջ հայտնված հայ փախստականներին օգնելու ուղղությամբ: Խմբագրության մտահղացումը՝ Արևմտյան Յայաստանում իր միջոցներով որբանոցների ստեղծման մասին, համակրանքի արժանացավ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ի. Ա. Ջինովսկի և հայոց պատրիարք Ս. Օրմանյանի կողմից: «Ինչպես երևում է,— գրում էր «Ս Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը,— Կոստանդնուպոլսի ռուսական կայսերական դեսպարտությունից խմբագրությունում մոտ օրերս ստացված պաշտոնական տեղեկատվությունից պարոն դեսպան, պետական խորհրդական Ի. Ա. Ջինովսկը լիովին համակրանքով արտահայտվեց ապաստարանների հիմնման մտքի մասին և պատրիարքի հետ որոշեցին առաջին ապաստարանը բացել Դիարբեքիի վիլայեթի Բալուի թեմի Քաղցրահայաց Աստվածամոր վանքում: Ապաստարանին,— շարունակում է լրագրողը,— տրվել է հետևյալ պաշտոնական անվանումը. «Յայ—ռուսական որբանոց հիմնված «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի խմբագրության կողմից կատարված նվիրատվության միջոցներով («Orphelinat Armeno-Russe fonde par souzeizetion souslesnus piees de la redaction du recueil de Moskou» secours fretermel aux Armenies de Turkue») (5, 1898, 302): Այնուհետև նույն աղբյուրից տրված միջոցներով հիմնվեցին ևս յոթ որբանոցներ: Անձնուրաց և անգնահատելի ազգօգուտ գործ կատարեց Գր. Ջանշյանը և արժանիորեն հայ ժողովուրդը պատրիարք Ս. Օրմանյանի շուրթերով իր երախտավոր զավակին «որբերի հովանավոր» պատվավոր կոչումը շնորհեց» (5, 1900, 107): Իր սկսած հայանվեր, դրվատանքի արժանի գործը առաջ տանելով՝ 1898 թ. իրականացրեց ժողովածուի երկրորդ, լրացված ու բարեփոխված հրատարակումը: Գրքի իրացումից, ինչպես նաև ռուս անվանի մտավորականներ Ա. Ա. Շիլինգի, Ա. Պ. Բելոզոլովի, Պ. Պ. Բոտկինի, Ի. Ա. Կրոնշտադսկու, Ի. Ի. Պետրունկևիչի, Լ. Ա. Պոլյակովի, Ե. Կ. Պոպովայի, Ա. Ա. Կարգինկինի, Ն. Ա. Նայդյոնովի և մի խումբ մեծահարուստ հայերի, այդ թվում Ա. Ն. Թաիրյանի, Ծ. Ծատուրյանի, Ի. Ե. Փիթոյանի, Ե. Խ. Աբամեղիք—Լազարևայի, Գ. Ի. Քանանյանի նվիրատվություններից ստացված գումարը տրամադրվեց 1896 թ. Կ. Պոլսում և Արևմտյան Յայաստանում կոտորածների ընթացքում տուժածներին (5, 1897, 303), ինչպես նաև Արևմտյան Յայաստանում ևս նոր երեք որբանոցներ կառուցելու համար (6, 1898, 227): Մուշ քաղաքում կառուցվող որբանոցի համար տրամադրվեց 2500 ռուբլի (6, 1900, 7): Աղջիկ որբերի համար Կ. Պոլսում 1898 թ. կառուցվեց առանձին

որբանոց ռուսական դեսպանատան հովանու ներքո (5, 1900, 4): «Մշակ»-ը, նկատի ունենալով ռուս մտավորականների հայանպաստ գործունեության հետևանքով հայ գաղթականների նկատմամբ ռուս հասարակայնության առանձնահատուկ համակրանքը, նշում է. «Այդ ջերմ համակրութեան արդիւնքն է ներկայումս հիմնված և դեռ հիմնվելի ռուս հայկական որբանոցները Թիւրքաց Չայաստանում» (12, 1898, 224):

Հայ որբերի օգնության խնդրում մեծ գործ կատարեց նշանավոր պատմաբան Մ. Ն. Կարամզինի որդու այրին: Ֆինլանդիայում Աբրահամ Ամիրխանյանի կողմից 280 որբերի համար հիմնված որբանոցին նա նվիրաբերեց նյութական խոշոր միջոցներ (23, 420–421):

Փախստականներին օգնելու վերաբերյալ կայսերական հրամանագրի հրապարակումից հետո հայամետ առաջադիմական լրագրերի, մասնավորապես, «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Ռուսսկիե վեդոմոստի», «Սիբիրսկիյ վեստնիկ» լրագրերի գրասենյակներում ընդունում ու Կովկաս էին առաքում հանգանակած միջոցները և դրամը: Այդ լրագրերի յուրաքանչյուր համարի էջերում տրվում էին հանգանակողների անվանական ցուցակները:

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրում Վ. Գոլմստրեմի հեղինակությամբ «Հայ որբերը» ծավալուն հոդվածի հրապարակումից հետո հետագա բոլոր համարներում տպագրվում էին նյութական օգնություն ցույց տված անձանց ընդարձակ ցուցակները:

Անծայրածիր Ռուսաստանի բոլոր անկյուններում ժողովրդական մասսաները իրենց պատրաստակամությունը հայտնեցին դժբախտության մեջ հայտնված հայ փախստականներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար՝ տրամադրելով դրամական միջոցներ, մթերք, գործվածքեղեն, պատրաստի հագուստ (5, 1897, 221):

Օգնության գործը ավելի լավ ու նպատակային կազմակերպելու և հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը առաջարկում էր իշխանության տեղական մարմիններին կից ստեղծել հեղինակավոր անձանցից բաղկացած հանձնախմբեր, որպեսզի ստացված միջոցները հանձնվեն անմիջապես կարոտյալներին (5, 1897, 38):

Կովկասյան իշխանության մարմինները մինչև օգնության մասին կայսերական հրամանի հրապարակումը արգելում էին հայկական բարեգործական ընկերություններին փախստականներին որևէ օգնություն ցույց տալ

(15, 1897, 26), սակայն հանգանակության թույլտվությունից հետո արգելքը վերացվեց, օգնության գործը ընդունեց կազմակերպված բնույթ: «Թուրքիայից փախստական հայերին օգնության համար,– գրում էր «Կավկաս» լրագիրը,– նահանգապետի օգնական իշխան Ամիրխանյանի առաջարկեց իրականացնել հետևյալը.

ա) փախստականներին Թիֆլիսի ճաշարաններում սնունդ տալու համար ոստիկանության պետին տրամադրել 800 ռուբլի:

բ) փախստականներին հագուստով ապահովելու նպատակով Թիֆլիսի նահանգապետին տրամադրել 500 ռուբլի» (37, 1897, 31):

Միաժամանակ իշխանություններին կից ստեղծվեցին օգնությունը ընդունող և բաշխող հանձնախմբեր: Արևմտահայ գաղթականներին օգնության կոչով, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի հետ համերաշխությամբ հանդես եկան Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները: Նրանք խորապես ընկալում էին դժբախտության մեջ հայտնված արևմտահայ փախստականների անհույս վիճակն ու անհեռանկար ապագան, կարեկցանքով ու համակրանքով էին լցված նրանց նկատմամբ ու իրենց օգնությունն ու համերաշխությունն էին հայտնում հայ ժողովրդին նրա ազատագրական պայքարում: Անջրպետվելով արևմտահայ փախստականների և ընդհանրապես հայ ժողովրդի նկատմամբ պատմական այդ փուլում իշխանությունների անբարյացակամ դիրքորոշումից, ուսանողները բացեիբաց, համարձակորեն հայտնում էին, որ իրենք թուրքական բռնապետության դեմ պայքարի ելած հայ ժողովրդի կողմն են, քանի որ իրենք ևս կրում են բռնության լուծը և ոչ մի կապ չունեն Հայկական հարցում ցարական վերնախավի որդեգրած կողմնորոշման հետ (39, 1–3): Արևմտյան Չայաստանում հայկական կոտորածների բռն շրջանում իրենց բարի վերաբերմունքն ու կարեկցանքը, մերձավորի նկատմամբ անսահման համակրանքը արտահայտելով՝ ռուս ուսանողները դատապարտում էին թուրքական ջարդարարներին ու նրանց հովանավոր, հայկական կոտորածների համար նույնքան հանցավոր եվրոպական տերություններին, որոնք իրենց եսասիրական շահերի թելադրանքով ոչ միայն հայերին չէին պաշտպանում, այլև իրենց անտարբերությամբ խրախուսում էին սուլթանին ու երբեմն համագործակցում նրա հետ հայասպան գործողությունների ընթացքում: Ժողովրդավարության ու ազգերի իրավահավասարության ջատագով ռուս ուսանողները, որոնք իրենց վրա նույնպես զգում էին բռնու-

թյան ու կամայականության տիրապետությունը, համարձակորեն քննադատում էին նաև ռուսական ցարիզմին, որը քաղաքական նկատառումներով պաշտպանում էր ջարդարար սուլթանին: «Պաշտոնական Ռուսաստանը, – գրում էին նրանք, – ևս միացավ մյուս տերությունների հետ և չզլացավ իր կիսապաշտոնական օրգանների միջոցով հայերի գլխին թափելու կեղտոտ ծաղրանքներ ու զրպարտանքներ՝ զգալ տալով, թե որի կողմն է իր համակրանքը» (39, 2):

Նկատի ունենալով հայ ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած ձգտումը, նրա անդավաճան հավատարմությունը՝ ուսանողները հատուկ ընդգծում էին, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը ձևավորվել ու ամրապնդվել է ընդհանուր թշնամու դեմ մղած տևական ու համառ պայքարի ընթացքում: Ռուս ժողովուրդը համակրանքով ու հպարտությամբ է ընդունել ու մեծարել Ռուսաստանի անվտանգության համար մղված պայքարում քաջությամբ աչքի ընկած հայ զորավարներին ու հասարակ գինվորներին, ժողովրդի բոլոր խավերին, որոնք հարազատի ջերմությամբ էին ընդունում Հայաստանում ռուս զինվորներին (39, 3):

Լինելով իրատես ու ճիշտ մեկնաբանելով ժամանակաշրջանը, ընդգծելով Հայկական հարցում ցարիզմի դիրքորոշման մանրամասները, նրանք գրում էին. «Հարկ ենք համարում հավատացնել, որ մենք, ռուս ուսանողներս, ոչ մի կապ չունենք այն ընթացքի հետ, որ բռնել են դեպի ձեզ ու ձեր գործը մեր ընդհանուր «թշնամիները», ազատության և առաջադիմության հակառակորդները, որոնց համար կառավարությունը մի զենք է, իսկ ամբողջ ժողովուրդը, բացառյալ իրենց դասակարգի անձնավորությունների՝ շահագործման նյութ... Մեր ամբողջ համակրանքը Ձեր կողմն է, հանուն ազատության կռիվների կողմը» (39, 3): Ռուս ազատամիտ ուսանողները ավելի համարձակ ու վճռականորեն ցուցադրելով իրենց հակաբռնատիրական, հակացարական կողմնորոշումը՝ միանգամայն տեղին ու արդարացիորեն զուգահեռ էին անցկացնում Հայկական հարցում սուլթանական ու ցարական բռնատիրությունների դիրքորոշումների միջև: Նրանք ճիշտ էին նկատում, որ այդ փուլում ցարիզմը, Հայկական հարցում նահանջելով իր ավանդական ընթացքից ու պաշտպանելով Թուրքիայի տարածքային ամբողջությունը, օբյեկտիվորեն ջուր էր լցնում սուլթանական հայաջարդ ջրաղացին: Սակայն չմեղանչելով պատմական իրականության առջև՝ հարկ ենք համարում ընդգծել, որ ռուս ուսանողները սխալվում էին Հայկական հար-

ցում նույնացնելով ցարական և ողջ Արևմտյան Հայաստանն ու կայսրության հայահոծ վիլայեթները արևմտահայության արյամբ ներկած հայասպան թուրքական իշխանությունների դիրքորոշումները: Որքան էլ ծանր ու դաժան էին ցարական ճնշումն ու շահագործումը, ռուսական բյուրոկրատիայի բռնություններն ու կամայականությունները, անկասկած է այն իրողությունը, որ ցարիզմը երբեք հայ ժողովրդի ֆիզիկական գոյության դեմ որևէ քայլ չի ձեռնարկել: Եվ երբեք էլ պատահական չի այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը արևելյան բռնակալական տերությունների ստրկական լուծը թոթոփելու իր հույսը կապել է Ռուսաստանի հետ:

Ռուս ուսանողները, ինչպես նաև սոցիալական առաջադիմական շերտերը սահմանազատելով հետադեմ, խավարամիտ ուժերից լավատեսությամբ էին նայում հայ ժողովրդի ապագային, քանի որ առաջադիմական ուժերը ազատագրական պայքարում հայ ժողովրդի կողմն էին: «Մենք հավատացած ենք, որ մեր խոսքերի տակ կստորագրեն բոլոր այն երիտասարդները, որոնք դուրս են եկել բանվորական դասակարգից, ինչպես և կմիանան մեզ հետ մնացյալ մասի առաջադիմական տարրերը»: Ազատության համար իրենց արդարացի ծայրը բարձրացրած ռուս ուսանողները աներկբա հայտարարում էին, որ «այժմ պատրաստ ենք սիրով ողջունել այն պահը, երբ նրանք՝ Ազատ Ռուսաստանի և Հայաստանի ուսանողական երիտասարդական կազմակերպությունները իրար օգնության ձեռք կմեկնեն» (39, 3):

Ռուս ժողովրդի լավագույն զավակներն իրենց ծայրը բարձրացնելով հօգուտ արևմտահայ կոտորածից մազապուրծ Ռուսաստանում ապաստանած փախստականների՝ սրտի ցավով կիսում էին սուլթանական ջարդարար քաղաքականության 300–350000 հայ անմեղ զոհերի վիշտը և մտահոգվում էին անտուն ու սովալլուկ որբ մանուկների ճակատագրով:

Արևմտահայ փախստականների օգնության գործը օրեցօր ավելի մեծ թափ էր առնում, մեծանում ու ընդարձակվում էր նրա աշխարհագրությունը՝ իր մեջ ներառելով անծայրածիր Ռուսաստանի ամենահեռավոր շրջանները, հասարակության սոցիալական նորանոր շերտեր:

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի խմբագրությանը հասցեագրած հայամետ բովանդակությունն ունեցող հոդվածները, դրամական, հագուստեղենի, սննդի ձևով հանգանակությունները օրըստօրե բազմանում էին, անհատ օգնողների, ինչպես նաև կազմակերպությունների ցանկը ավելի էր ծավալվում: Յուրաքանչյուր օր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի»,

«Ռուսսկիե վեդոմոստի», «Նովոյե օբոզրենիե», «Սիբիրսկիյ վեստնիկ», «Մշակ» լրագրերի խմբագրություններին կից գրասենյակներում ստացվում էին Ռուսաստանի տարբեր ծայրերից գաղթականների օգնության ֆոնդին կատարված նվիրատվություններ: Ռուս կանանց կոմիտեն հայ փախստականների օգնության ֆոնդին տրամադրեց տաք հագուստ 12 մարդու համար և 5000 ռուբլի (15, 1898, 127): Թիֆլիսում 1897 թ. նոյեմբերին նահանգապետի տիկնոջ, Ն. Բիկովայի գլխավորությամբ կազմված տիկնանց կոմիտեն փախստականներին օգնության վարչությանը հանձնեց 1000 ռուբլի (33, 1897, 11–12, 1669):

Վերը նշված լրագրերի խմբագրությունները յուրաքանչյուր ամիս պարբերաբար հրապարակում էին հաշվետվություններ նվիրատվությունների ու նրանց բաշխման արդյունքների մասին: Փախստականների օգնության կովկասյան գլխավոր վարչության ու նրա մասնաճյուղերի՝ 6–ամսյա գործունեության ստացված միջոցների բաշխման վերաբերյալ հաշվետվությունում նշվում էր, որ ստացվել է 47727 ռուբլի, որով փախստականների համար հայթաթվել է հագուստ, սնունդ և գիշերելու պարագաներ (33, 1897, 11–12, 1136–1137):

Հեռավոր Տոբոլսկում հրապարակվող «Սիբիրսկիյ վեստնիկ» լրագրում Պ. Գորենկոն հանդես եկավ «Հայերի մասին» խորագիրը կրող ծավալուն հոդվածով: «Մեր խմբագրությունը,– նշում էր լրագիրը,– պրն. Գորենկոյից ստացել է 120 ռուբլի՝ փախստական հայերին օգնության նպատակով: Միաժամանակ նվիրատուն խնդրում է մեր թերթի միջոցով կոչ անել և մեր հայրենակիցներին խրախուսել ակտիվ մասնակցություն ցուցաբերել ողբերգության մեջ հայտնված մեր հավատակից հայերին» (40, 1897, 17):

Լրագրի այդ ելույթից հետո հետագա համարներում ընդարձակ տեղեկություններ էին հաղորդվում Տոբոլսկի ու նրա հարակից շրջանների բնակչության կողմից արևմտահայության օգնության ֆոնդին կատարած նվիրատվությունների մասին (40, 1897, 23, 27): Հավաքված գումարը՝ 735ռ., ինչպես նաև գործվածքեղեն ու հագուստ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» գրասենյակի միջոցով, իշխան Է. Է. Ուխտոմսկու անձնական հոգածությամբ ուղարկվեց Կովկասի կառավարչապետության տնօրինությանը (5, 1898, 44):

1896 թ. դեկտեմբերի 11–ին հայերին օգնության նպատակով հանգանակություն սկսելու կայսերական հրամանագրի հրապարակումից հետո

Սամարղանդի նահանգապետ, իշխան Վ. Գ. Ռոստովցի ակտիվ մասնակցությամբ հանգանակությունը ծավալվեց ողջ Թուրքմենստանում (12, 1897, 13):

Արևմտահայ փախստականներին օգնելու նպատակով Կովկասյան վարչությանը կից ստեղծված հանձնախումբը, որը զբաղվում էր նաև Ռուսաստանի տարբեր ծայրերից ստացված հանգանակության միջոցների վերաբաշխման ու իրացման գործով, խոշոր միջոցներ ստացավ հեռավոր Սախալինից, Մոսկվայից, իսկ Աստրախանից՝ սննդամթերք ու հագուստեղեն: Կաղզվանում ապաստան գտած փախստականները Մոսկվայի հասարակությունից ստացան 800ռ. : Օգնության գործին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին զինվորական ու պետական ծառայության մեջ գտնվող անձինք, խոշոր պաշտոնյաներ (12, 1897, 13): «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը հայտնում էր ռուս արվեստի ու գրականության ներկայացուցիչների օգնության մասին (15, 1897, 359): Կովկասյան իշխանությունների տարբեր օղակներում ամեն օր անխափան ստացվում էին դրամական միջոցներ, սնունդ ու հագուստեղեն: «Ռուսսկիե վեդոմոստի», «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրերի խմբագրությունների միջոցով Կովկասում օգնության իրացման հանձնախմբին փոխանցվեց պատկառելի գումար (35, 12):

Ռուսական կայսրության հեռավոր խուլ գյուղական վայրերում ևս ռուս հասարակ գյուղացիները իրենց մասնակցությունը բերեցին, արծազանքեցին արևմտահայերին օգնության մարդասիրական կանչին: Արխանգելսկի նահանգի Շենկարսկ գյուղի համայնքի ժողովում համայնքի ավագ Ի. Ֆեոդորովի կողմից հարց բարձրացվեց հայերին օգնության համար նվիրատվության մասին: «Թուրքիայում,– ասում է ավագը,– կոտորում են քրիստոնյա անմեղ հայերին: Լրագրերը հայտնում են, որ տասնյակ հազարավոր մարդիկ գազանաբար խոշտանգվել են քրդական վայրի ցեղերի և թուրքերի ձեռքով, նրանց մորթել են ինչպես ոչխարներ: Քանդել ու հրդեհել են նրանց տները, ամբողջ գյուղեր հողին են հավասարեցվել: Հրաշքով փրկվածները, հազարավոր կանայք ու երեխաներ անցել են մեր հայրենիքի տարածքը... Նրանք մերկ են ու բոբիկ: Մենք մանրամասնություններին անտեղյակ ենք: Մենք չենք կարող անտարբեր մնալ, երբ մեր հավատակից հայերը գտնվում են դժբախտության մեջ... Հարկ է, որ նրանց օգնության մեր բաժինն ունենանք: Մեր համայնքը թշվառներին կարող է օգնել հագուստով, սննդով, դրամով, ինչով ցանկանա...» (5, 1897, 110): «Ս. Պետերբուրգսկիե

վեղոմոստի» խմբագրությանը հասցեագրած նամակում Ի. Ֆեոդորովը գյուղի համայնքի անունից խնդրում էր հավաքված 50 ռուբլին ուղարկել Կովկաս՝ «դժբախտ հայերին օգնելու համար,– ավելացնելով,– մենք հոգով թեթև կզգանք, երբ իմանանք, որ մեր չնչին օգնությամբ փրկում ենք թեկուզ մի մանկան կյանք» (5, 1897, 110): Ի. Ֆեոդորովի նամակը իր անկեղծությամբ ու դժբախտին օգնելու պատրաստակամությամբ խորապես հուզել էր Վլ. Գոլմստերեմին: «Վերջապես երկար ու ծանր թմբիրից դուրս եկավ ռուս ժողովուրդը,– գրում էր նա,– սկսեց խոսել ու օգնության կանչին արծագանքել ռուս հասարակ գյուղացին: Այդ նշանակում է, որ այժմ օգնության գործն ամբողջ թափով կծավալվի Ռուսաստանով մեկ» (5, 1897, 124):

Վոլինսկի նահանգի պետական ու հասարակական հիմնարկների ծառայողները օգնության ֆոնդին տրամադրեցին 145 ռուբլի, Պոլտավայի նահանգի Լոխվիցկի քաղաքի զեմստվային վարչության և գավառային կատարածուի միջոցով Կրեմենչուգի բնակիչները տրամադրեցին 697 ռուբլի, Յարոսլավլի նահանգի գյուղական համայնքները՝ 207 ռ. 96 կոպ., Օրենբուրգի նահանգից՝ 40 ռ. 76 կոպ., Կուրսկի նահանգից՝ 100 ռ. 48 կոպ., Վլադիմիրյան նահանգի Սուդոգոբ քաղաքից՝ 9 ռ. 75 կոպ., Բախմուտի բնակիչները՝ 175 ռուբ. 70 կոպ., Նովոգորոդի նահանգի Ստարայա Ռուսա քաղաքի բնակիչները՝ 75 ռուբ. (5, 1897, 110), Լոժի քաղաքացիները՝ 78 ռուբ., Կարսի բնակիչները՝ 300 ռուբլի (41, 1897, 2), Սամարայի նահանգի Նովոչուշենսկի քաղաքացիները՝ 22 ռ. 75 կոպ., Ուստ Սիսլովսկի քաղաքացիները՝ 9 ռ. 28 կոպ. (5, 1897, 125):

1896 թ. օգոստոսի 14–ին Կ. Պոլսում սկսված կոտորածների նոր, ավելի հզոր ալիքը տարածվեց Փոքր Ասիայի հայաշատ վիլայեթներում, էլ ավելի դաժանությամբ կատարվեց Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գյուղերում: Ռուս–թուրքական սահմանը հատում էին գաղթականների սովոր խմբեր: Նրանք տարածվում էին ոչ միայն Կովկասի, այլ նաև Ռուսաստանի ամբողջ հարավային շրջաններում ու կենտրոնական քաղաքներում:

Թուրքական իշխանությունների աներևակայելի ոճրագործությունները, անխիղճ ու անխնա գազանային կոտորածների ենթարկվող արևմտահայերի սարսափի աղաղակները կրկին արծագանքվեցին ռուսական կայսրության ողջ տարածքում, թափանցեցին ռուսանոլական լսարանների պատերից ներս: Հայերի նկատմամբ իշխանությունների ու նրանց ծայնափող մանուկ օրգանների, խավարամիտ լրագրողների ստեղծած աննպաստ մթնո-

լորտը կաշկանդում էր ռուսանոլներին ավելի հանգամանորեն ծանոթանալու Հայկական հարցի էությանը, ճիշտ կողմնորոշվելու և գնահատելու հայ ժողովրդի համար ստեղծված ծանր իրավիճակը, սակայն իշխանությունների կողմից քաղաքական նպատակներով ձևավորված անհանդուրժողակամության խավար մթնոլորտում այստեղ, այնտեղ փայլատակում էին ժողովրդական ինքնաբերական հայասիրական բռնկումները: Համալսարաններում ավելի ակտիվ ու առաջադեմ ռուսանոլները փորձում էին իրենց բողոքներով ու ցույցերով հաղթահարել իշխանությունների հարուցած խոչընդոտները, սակայն ժողովրդական պոռթկումի այդ ազնիվ մղումները հանդիպում էին իրավապահ մարմինների դիմադրությանը:

«Լուչ» լրագրում ռուսանոլական մի հավաքի մասին եղած տեղեկատվությամբ կարելի է կարծիք կազմել ոչ միայն Մոսկվայի, այլ նաև Ռուսաստանի մյուս քաղաքների համալսարանական ռուսանոլության հայ ժողովրդի ու Հայկական հարցում ունեցած կողմնորոշման մասին:

«1896 թ. սեպտեմբերի 15–ին,– նշում է լրագիրը, կեսօրին, Մոսկվայի համալսարանի մուտքի առջև հավաքվել էր հոծ բազմություն: Աստիճանների վրա կանգնած երիտասարդը առաջ եկավ ու ձեռքերը վեր պարզեց: Նրան հետևող բազմությունը մի պահ լռեց:

– Մեր կողքին,– սկսեց նա,– մեր շարքերում գտնվող հայ ռուսանոլների հարազատներին, նրանց հայրերին ու մայրերին, եղբայրներին ու քույրերին թուրքիայում կոտորում են: Նրանց սպանում են առանց պատճառի, միայն այն բանի համար, որ նրանք հայ են ու քրիստոնյա, նրանք մեր հավատի եղբայրներն են: Կրոնական մոլեռանդությանը զոհ են գնում ոչ միայն տարեց մարդիկ, այլ նաև հազարավոր մանկահասակ տղաներ ու աղջիկներ:

Թուրքիայում սպանող շարունակվում է, իսկ տերությունները լռություն են պահպանում: Անգլիան, որ հայերին օգնելու խոստումներ է տալիս, վճռական քայլ չի կատարում: Լուռ է նաև մեր հայրենի կառավարությունը, որի հետ հայերը մեծ հույսեր են կապում, որպես հավատակից ու Արևելքի ժողովուրդների ազատարարի: Մեծ տերությունները իրենց լռությամբ պաշտպանում են, ինչպես մեծ մարդասեր Գլադստոնն է անվանել, կարմիր, ես կավելացնեմ, մարդասպան սուլթանին, իսկ մենք՝ ռուս ռուսանոլներս Ձեր կողմն ենք մեր հայ ընկերներ և հավատացած ենք, որ շուտով կցրվի խավարը, և հայ ժողովրդի համար կսկսվի խաղաղության ժամանակը:

Ռուսաստանի խոշոր քաղաքներում,– շարունակում է հռետորը,– ամենուր շատանում են թուրքական գազանության զոհերը, հայ գաղթականները, որոնք արժանի են կարեկցանքի ու նյութական օգնության:

Հզոր Ռուսիա, մի՞թե կարող ես լուռ մնալ: Մենք, ռուսանողներս ևս օգնության մեր բաժինն ունենք»: Ռուսանողական բազմությունը,– շարունակում է լրագրողը,– սովարանում էր, սակայն ռուսանողների շարքերի միջով դժվարությամբ հռետորին մոտեցած ոստիկանը պահանջեց դադարեցնել: Հռետորը աստիճաններով ներքև իջավ: Հավաքվածները դժգոհեցին...

Դժբախտության մեջ հայտնված հավատակից հարևանին օգնելու մարդասիրական բարի զգացումը արդեն համակել է մաս ռուսանողներին» (17, 1896, 212),– ավարտում է լրագրողը:

Ռուսաստանի համալսարաններում սովորող հայազգի ռուսանողների հանդեպ ցուցաբերում էին հոգատար ու բարի վերաբերմունք, ձևավորվում էր բարենպաստ մթնոլորտ: Մոսկվայի համալսարանի վարչությունը որոշում կայացրեց կրթաթոշակ սահմանել հայ ռուսանողների համար: «Մուրճ»–ը այդ մասին գրում է, որ «Պատմա–լեզվաբանական բաժնում ռուսանող հայերից մի թոշակավոր պահելու համար կայացաւ որոշում, այն լինելու է պրոֆ. Վ. Ի. Գերյեի անուն: Թոշակաւորի ընտրութիւնը պատկանելու է պրոֆ. Գերյեին» (33, 1898, 10–11, 1618): Նույն ֆակուլտետի մի խումբ ռուսանողներ հայ որբերին օգնության նպատակով իրենց սուղ միջոցներից նվիրաբերեցին 75 ռ. 50 կոպեկ, որը «Ռուսսկոյե սլովո» լրագրի գրասենյակի միջոցով հանձնվեց Կովկասում գործող փախստականների օգնության համար կազմված հանձնախմբին (9, 1897, 139):

Կարսի մարզում և Երևանի նահանգում, ուր կենտրոնացված էին բազմահազար գաղթականներ, 1898 թ. համաճարակ հիվանդությունների տարածման հետևանքով ստեղծվել էր ծանր կացություն: Ոչ միայն բուժման միջոցների ու դեղորայքի խիստ պակաս կար, այլև բուժող բժիշկների կարիք էր զգացվում: Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով Երևանի նահանգի նահանգապետի օգնականի խնդրանքով զինվորական հիվանդանոցում ծառայության մեջ գտնվող բժիշկներից մի խումբ առանձնացվեց ծանր հիվանդներին օգնություն ցույց տալու համար: Միաժամանակ նահանգի բժշկական ծառայության պետ Կ. Ֆ. Կլյաչինի խնդրանքով Երևանի բժշկական անձնակազմը համալրվեց նոր բժիշկներով: Պետերբուրգից ու Մոսկվայից Երևանի նահանգ ու Կարսի մարզ գործուղվեցին

ռուս բժիշկներ, որոնք տեղերում համագործակցելով հայ բժիշկների հետ, կազմակերպեցին բնակչության բուժման գործը (42, 13–14):

Արևմտահայ փախստականներին օգնության գործին մեծ թափ հաղորդվեց, երբ աստիճանաբար առաջադիմական մամուլի ու մտավորականների հետևողական ու քրտնաջան աշխատանքի հետևանքով հաղթահարվեցին «Հայկական հարցում» պաշտոնական մամուլի ոչ հայանպաստ քարոզչության հետևանքները: 1897 թ. փետրվարի 13–ին Տավրիկյան նահանգի նահանգապետի կողմից հայ փախստականներին օգնության համար հանգանակություն սկսելու մասին հրամանի հրապարակումից հետո կարճ ժամանակամիջոցում նահանգի բնակչության նվիրատվության արդյունքում հավաքվեց 3597 ռ. 96 կոպեկ պատկառելի մի գումար, որը փոխանցվեց Կովկասի կառավարչապետությանը ի տնօրինություն (5, 1897, 128):

1897 թ. ամռան ու աշման ընթացքում Ռուսաստանի հարավային տարածքներում, առանձնապես Դոնի Ռոստովում, Նոր Նախիջևանում, Կրեմենչուգում ավելի համաժողովրդական բնույթ ստացավ օգնության գործը: Ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին քաղաքային ու գյուղական շրջանների բնակիչները, մաս այդ տարածքներում տեղաբաշխված գործամասերի զինվորները: Սնուլենսկի նահանգի բնակիչները և Ռուզավլ քաղաքում տեղաբաշխված առաջին և երկրորդ գնդերի զինվորները, Կամենսկո–Եկատերինովյան երկաթուղագծի բանվորները, Սամարայի, Վոլոգդայի նահանգների և Կուրսկի մարզի բնակիչները օգնության ֆոնդին նվիրաբերեցին 17000 ռուբլի, ինչպես նաև մեծաքանակ սննդամթերք ու հագուստեղեն (5, 1897, 171): Հայ գաղթականների օգնության ֆոնդին 1897 թ. հունվար–մարտ ամիսների ընթացքում «Նովոյե օբզորենիե» լրագրի գրասենյակի միջոցով տրամադրվեց 3340 ռուբլի 82 կոպ. (5, 1897, 145), «Մշակ» լրագրի՝ 2887 ռ. և 449 ռ. 10 կոպ., «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրի՝ 5710 ռ. 75 կոպ. (5, 1897, 145), «Ռուսսկիե վեդոմոստի» լրագրի՝ 4510 ռուբ. (15, 1897, 182): «Մշակ»–ին 1897 թ. հունվարի 30–ին հայտնում էին, որ Մակարով եղբայրների կրկեսային նարկայացումների 50%–ը հատկացվել է գաղթականներին (12, 1897, 36): «Ռուսսկոյե սլովո» լրագիրը հայտնում էր, որ մշամավոր երգահան Իոսիֆ Յոֆմանը փետրվարի 14–ին կազմակերպած համերգից ստացված եկամուտը՝ մի պատկառելի գումար, տրամադրեց փախստականների օգնության ֆոնդին (9, 1897, 14):

Հանգանակության մասին կայսերական հրովարտակից դեռ շատ առաջ, գաղթականների առաջին խմբերի Ռուսաստանի տարածքում ապաստանելու առաջին օրվանից սկսած նրանց նյութական օգնություն էին ցույց տալիս հայկական բարեգործական ընկերությունները և անհատ անձինք (12, 1897, 36), ինչպես նաև առանձին կազմակերպություններ (43, 1897, 11, 92–93): Առանձնապես պետք է ընդգծել «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» ու նրա մասնաճյուղերի կատարած վիթխարի աշխատանքը: Անդրադառնալով այդ խնդրին՝ Ա. Մելքոնյանը իրավացիորեն ընդգծում է. «Բարեգործականի Ախալցխայի և Ախալքալաքի մասնաճյուղերը մեծ ու շնորհակալ աշխատանք կատարեցին հատկապես 1895–1896 թթ. կոտորածներից խույս տված արևմտահայ գաղթականներին օգնություն ցուցաբերելու և նրանց ապաստան տալու գործում» (26, 238, 239): «Ռուսակոյե բոգատստվո» ամսագիրը նշում է, որ հայ փախստականներին օգնության գործը ավելի դժվարացավ 1897–1898 թթ. երկրում սկսված սովի պատճառով: Ռուսական կայսրության ներքին նահանգներում սովյալներին օգնության նպատակով հանգանակված միջոցներից որոշակի մասհանում կատարվեց հայ գաղթականների օգտին (43, 1897, 11, 92–93): Փախստական հայ որբերին հագուստով ապահովելու նպատակով Յարոսլավլի մեծ մանուֆակտուրայի աշխատակիցները տրամադրեցին 3780 արշին գործվածք, ինչպես նաև պատկառելի մի գումար՝ 4890 ռ. (15, 1897, 117), Կուրանի մարզի մանուֆակտուրան՝ 9 փութ գործվածքեղեն, Կոնդրովսկյան մանուֆակտուրայի բանվորները 350 ռ. (5, 1897, 127), Կրասնոդարի բնակիչները 1897 թ. հունվարի 11–ին «Նադեժդա» գրասենյակի միջոցով փախստականներին հանձնեցին հագուստեղեն, ինչպես նաև նյութական այլ միջոցներ (9, 1897, 131): Օգնության ֆոնդին բավականին խոշոր գումար տրամադրեցին Ազովի, Դոնի, ինչպես նաև հաշվային բանկերը (12, 1897, 131):

1897–1898 թթ. Արևմտյան Հայաստանում երաշտի ու անբերրիության հետևանքով սկսվեց սով, որը հազարավոր կյանքեր հնձեց: Սովահար ժողովրդին օգնելու նպատակով կրկին Ռուսաստանում սկսվեց նվիրատվությունը: Իշխանությունները իրավունք վերապահեցին մի շարք վայրերում բարեգործական հիմնարկներ, ինչպես նաև վարկային դրամարկղներ հիմնել: Օգնության ձեռք մեկնեցին Կովկասի բազմազգ բնակչության ներկայացուցիչները, ռուսները, հույները, վրացիները: Կարսում «Աշակերտների համագործակցության ընկերության» կողմից հայ փախստականներին

տրամադրած օգնությունն այնքան ակնհայտ ու ոգևորիչ էր, որ 1898 թ. մայիսի 12–ին ընկերության հավաքում ընթերցվեց երախտապարտ հայերի շնորհակալական նամակը (41, 1897, 6): Նրանում երախտագիտության խոսք էր ասվում նաև հայ երեխաներին կրթության բնագավառում ցույց տված օգնության համար:

Ռուս մտավորականության ներկայացուցիչները, արվեստի գործիչները արևմտահայությանն օգնելու նպատակով կազմակերպում էին բարեգործական ներկայացումներ ու ստացված եկամուտը տրամադրում էին այդ նպատակին: Վլադիկավկազում գործող թատերական խումբը դերասաններ Պ. Նիկոլինի և Ա. Վոլսկու գլխավորությամբ կազմակերպեց երկու ներկայացում: Պ. Նիկոլինը բեմականացրեց «Բագեն և ագռավը» դրաման և «Լռություն» վոդևիլը: Այդ ներկայացումներից ստացված գումարը ընդամենը 600 ռուբլի, տրամադրվեց փախստականների օգնության ֆոնդին (12, 1897, 13): Ա. Վոլսկու թատերական խումբն այդ նպատակի համար նվիրաբերեց 351 ռուբլի, իսկ Թերեքի մարզի թատերական խումբը՝ 403 ռուբ. 50 կոպեկ (5, 1897, 110): Ելիզավետա Ծերեթելու ղեկավարությամբ Սուխումում ռուս և վրացի դերասանների ուժերով բեմականացվեց «Փունջ» վոդևիլը, ինչպես նաև երկու դրամա, որոնցից ստացված եկամուտը տրվեց Կովկասյան իշխանություններին փախստականներին օգնելու համար: Ալեքսանդրապոլում բեմականացրած ներկայացումներից ստացված եկամուտը զավառի իշխանությունների թույլտվությամբ իրացվեց փախստականներին հագուստ և սնունդ ձեռք բերելու նպատակով: «Մեր գավառապետը,– գրում էին «Մշակ»–ին Ալեքսանդրապոլից,– նահանգապետից թույլտվություն ստացավ, որպեսզի եկամուտը մոտ 2000 ռուբլի, օգտագործի մեր քաղաքում եղած փախստականներին օգնելու համար» (12, 1897, 6):

Կովկասի 155–րդ հետևակային գնդի զինվորների ուժերով կազմակերպված թատերական ներկայացումից ստացված գումարը տրամադրվեց օգնության ֆոնդին, նույն նպատակին ծառայեցվեց Ստավրոպոլում և Պյատիգորսկում տեղական սիրողական դերասանների ուժերով կազմակերպված թատերական ներկայացումներից, Մարկով եղբայրների ու Աննա Ուլանովայի կրկեսային խմբերի ելույթներից ստացված գումարը: «Ողորմած պարոն, ընթացիկ հունվարի 13–ին ես Ձեզ ուղարկեցի 55 ռուբլի,– գրում էր Ա. Ուլանովան «Մշակ» լրագրին,– որ ես հավաքել էի դժբախտ հայերին օգնե-

լու նպատակով... Խնդրում եմ այն հանձնել տուժածներին օգնող հանձնա-  
ժողովին» (12, 1897, 8):

Ստավրոպոլի ռուս մտավորականների ուժերով կազմակերպված բարե-  
գործական պարահանդեսի ընթացքում ստացված ողջ եկամուտը, մոտ 400  
ռուբլի, տրամադրվեց հայ փախստականների օգնության ֆոնդին (12,  
1897, 13):

Ռուս առաջադեմ մտավորականության հայանպաստ գործունեության  
հետևանքով հասարակական լայն խավերի հայամետ կողմնորոշումը,  
փախստականների նկատմամբ ցուցաբերած ջերմ համակրանքը, բարոյա-  
կան ու նյութական օգնությունը հայ ժողովրդի հոգում առաջացնում էր ե-  
րախտագիտության արձագանքներ: «Բազմաչարչար հայ ժողովրդի մի բու-  
ռը՝ ի դեմս մեզ՝ Երզրումի հայերի, գրում էին կոտորածից տուժած մի խումբ  
հայեր,– իր անսահման երախտագիտության զգացումն է բերում ձեզ,  
պաշտպանության ու ճշմարտացիության այն բառերի համար, որ դուք հա-  
րաճուն եռանդով արտահայտում եք Օսմանյան կիսալուսնի լծի տակ մեր  
կրած տառապանքների ձայնին զգայուն «Գոլոս»–ի էջերում: Դարերով ճնշ-  
ված ժողովուրդը երախտագիտության արցունքներ է թափում» (44, 280):

Ղրիմում ապաստանած հարյուրավոր հայ փախստականներ իրենց սր-  
տագին շնորհակալական խոսքն էին ուղղում ռուս մտավորականներին, ի  
դեմս նրանց, ռուս ողջ ժողովրդին: «Մեր հայացքներն ու մեր կողմից լքված,  
բզկտված հայրենիքում մնացած մեր հարազատ քույրերի ու եղբայրների  
հույսը,– գրում էին փախստականները,– ուղղված է Հյուսիսին: Ձեզանից,  
մեծահոգի ու մարդասեր մտավորական աշխատակիցներից, ռուս եղբայր-  
ներից, բարեսիրտ Ռուսաստանից ենք սպասում ճշմարտացի օգնություն:  
Չէ որ միայն Ռուսաստանի հզոր ձեռքով մեր տարաբախտ հայրենիքում  
(Արևելյան Հայաստան– Պ. Ս.) հաստատվեց արտաքին խաղաղություն և  
հանգիստ» (30, 1899, 9, 21):

Ողջունելով «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»  
ժողովածուի հրատարակման մարդասիրական նպատակները, հայ փախս-  
տականները նրա խմբագիր Գր. Ջանշյանի միջոցով իրենց երախտագիտու-  
թյունն էին հայտնում ռուս մտավորականներին, նրանց հայանպաստ լայ-  
նածավալ ու հետևողական գործունեությանը, հասարակական հայամետ  
կարծիքի ձևավորման համար: «Պարտքի զգացումով,– գրում էր Գր. Ջան-  
շյան,– ես հաճելի պարտավորություն եմ վերցնում այդ խոր զգայացումն

ողջունները հաղորդել ըստ պատկանելույն. բազմաչարչար հայության ան-  
լուր դժբախտություններին արձագանքող բոլոր բարի մարդկանց ու ռուս  
մտավորականությանը» (30, 1899, 9, 20): Արևմտահայության ազատագրա-  
կան պայքարին իրենց օգնությունն ու համերաշխությունն էին հայտնում  
ռուս բանվորական–աշխատավորական զանգվածները, որոնք պայքարի  
էին դուրս եկել ցարիզմի դեմ: Կովկասի բանվորական զանգվածների շահե-  
րի արտահայտիչ, նրանց պայքարի մարտական օրգան «Պրոլետարիատի  
կռիվ» ամսագիրը գրում էր. «Հղելով մեր սոցիալիստական ողջունը Թուր-  
քական Հայաստանում մարտնչող մեր եղբայրներին՝ մենք ամենքին լսելի  
կերպով հայտնում ենք մեր հարգանքը և մեր անշահախնդիր ցանկությունը  
բազմաչարչար հայ ժողովրդի ազատագրական գործին, որ այդ ազատու-  
թյունը որքան հնարավոր է շուտ կատարվի» (45, 1908, 2–3, 19):

Ռուսական սոցիալ–դեմոկրատները սկզբից կեք հանդես եկան ցարիզմի  
և սուլթանական Թուրքիայի հակահայկական քաղաքականության քննա-  
դատությամբ, համարձակորեն դատապարտեցին թուրքական գազանու-  
թյունները, ցարիզմին արդարացիորեն համարելով սուլթանի համախոհ ու  
աջակից (46, 1913, 13): Նրանք խորապես մտահոգված թուրքահպատակ  
փոքր ժողովուրդների, մասնավորապես, արևմտահայության ճակատագ-  
րով, մերկացնող քննադատության էին ենթարկում եվրոպական տերու-  
թյուններին, Հայկական հարցում նրանց վարած եսամոլ քաղաքականու-  
թյունը:

Ռուսական սոցիալ–դեմոկրատիան թուրքահպատակ արևմտահայու-  
թյան ազատագրության ճիշտ ուղին համարում էր ազգերի ինքնորոշումը:  
«Բանվոր դասակարգը բազմիցս արտահայտել է իր բողոքը թուրքական  
գազանությունների դեմ,– գրում է «Պուտ պրավդի» լրագիրը,– առաջավոր  
բանվորները, գիտակցելով արևմտահայության ծանր վիճակը, գտնում են,  
որ նրա ազատագրումը պետք է կատարվի թուրքական հին կարգերի վերա-  
կառուցմամբ: Դրանով մարքսիստները հայտնում են, որ Արևմտյան Հայաս-  
տանի ճակատագիրը որոշելու խնդրում գլխավոր դերը պատկանում է ի-  
րենց՝ թուրքահայերին» (47, 1914, 10):

Արևմտահայության ճակատագրի իրական ու գործնական լուծման հա-  
մար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1917 թ. նոյեմբերին, երբ Ռու-  
սաստանում ստեղծվեցին խորհրդային կարգեր: Նորաստեղծ կառավարու-  
թյունը խորապես մտահոգված լինելով արևմտահայության ճակատագրով՝

ռուսական բանակի կողմից օկուպացված Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետի նախագիծ մշակելու համար 1917 թ. կազմեց համձնախումբ: Նրա կազմում էին Ի. Վ. Ստալինը, Վ. Ավանեսովը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը, ծախ էսեռ Պ. Պռոշյանը, մենշևիկ Աքսելրոզը, դաշնակցական Ս. Ջորյանը (Ռոստոմ): Համձնախումբը Արևմտյան Հայաստանի մասին դեկրետի դրույթները մշակելուն զուգընթաց կազմեց նաև համառոտ զեկուցագիր, որում նշվում էին հայ ժողովրդի պատմության անցյալի ու ողբերգական ներկայի դառն իրողությունները:

Նախատեսվում էր անհրաժեշտ քանակությամբ ռուսական ռազմական ուժեր թողնել Երզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթներում, մինչև որ ազատ քվեարկությամբ կորոշվեր Արևմտյան Հայաստանի անկախության հարցը, և կկազմակերպվեր հայկական ժողովրդական միլիցիա:

Ռեսուրս ժողովուրդները 1917 թ. դեկտեմբերի 29–ին ընդունեց դեկրետ «Թուրքահայաստանի մասին» պատմական որոշումը (48, 156–157): Նրանում ասվում էր. «Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախությունը»: Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը հաստատեց դեկրետը: Նրանում նախատեսվում էին մի շարք պայմաններ, որոնք պետք է ապահովեին արևմտահայության լիակատար անկախությունը. ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից, հայկական միլիցիայի կազմակերպումը, տարբեր երկրներ գաղթած վտարանդիների, ինչպես նաև բռնիորեն Թուրքիայի խորքերն աքսորված հայերի անարգել վերադարձը Արևմտյան Հայաստան, հայկական ժամանակավոր կառավարության կազմակերպում՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների խորհրդի ձևով (48, 157):

Սակայն մի շարք արտաքին ու ներքին անմապստ պայմանների պատճառով հայ ժողովրդի բաղձանքներին համահունչ այդ դեկրետը չիրագործվեց, մնաց թղթի վրա: Նախ և առաջ խորհրդային Ռուսաստանի վրա հարձակումը վերսկսեց Գերմանիան և նրան պարտադրեց Բրեստ–Լիտովսկի թալանչիական պայմանագիրը, որով խորհրդային Ռուսաստանից անջատվեց մոտ 1 միլիոն քառ. կմ տարածք՝ 46 միլիոն բնակչությամբ: Դրան զուգահեռ 1918 թ. հունվարի վերջերին Արևմտյան Հայաստան ներխուժեցին

թուրքական զորքերը: Ռուսական բանակում ստեղծված դեմոքրիլիզացիոն իրավիճակի պայմաններում խորհրդային Ռուսաստանն ի վիճակի չէր կանխելու թուրքերի առաջընթացը: Բացասական դեր կատարեց նաև Անդրկովկասյան սեյմի հակահայկական դիրքորոշումը:

Չնայած Արևմտյան Հայաստանի մասին Ռեսուրս ժողովուրդների դեկրետը չիրագործվեց, այն ունեցավ պատմական նշանակություն: Դրանով խորհրդային կառավարությունը ճանաչեց հայ ժողովրդի պատմական իրավունքները Արևմտյան Հայաստանում (49, 1987, 3):

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի պատմական նշանակությունն ավելի է ընդգծում ակադեմիկոս Գ. Գալոյանը: «Խորհրդային կառավարության հրովարտակն ինքնին ուներ քաղաքական լուրջ հնչեղություն,– գրում է նա,– քանի որ միջազգային դիվանագիտական փաստաթղթերում առաջին անգամ էր դրվում Արևմտյան Հայաստանին լրիվ անկախություն տալու հարցը: Սրանում էր այդ հրովարտակի պատմական նշանակությունը: Այսուհետև,– շարունակում է Գալոյանը,– անհնար դարձավ Հայաստանին անկախություն տալու հարցի չնկատելն ու շրջանցելը, իսկ հետագայում այն վճռորոշ նշանակություն ունեցավ Սևրում թուրքերի հետ դաշնակիցների պայմանագիրը կնքելիս:

Չի կարելի բացառել նաև այն իրողությունը, որ այդ հրովարտակի ազդեցության տակ դաշնակից պետությունները, այդ թվում ԱՄՆ–ը պետական մակարդակով բազմաթիվ որոշումներ ընդունեցին Հայաստանին անկախություն տալու վերաբերյալ» (50, 21):

Այսպիսով՝ Հայկական հարցի շուրջը տերությունների քաղաքական խաղերի ու խարդավանքների ընթացքում սուլթանական կառավարությունը ծրագրեց ու անարգել իրագործեց 1895–1896 թթ. արևմտահայության ֆիզիկական բնաջնջման միջոցով Հայկական հարցը թուրքական ձևով լուծելու իր դիվային պլանը:

Թուրքական գազանային կոտորածներից մազապուրծ բազմահազար արևմտահայեր ապաստան գտան Ռուսաստանում:

Անկախ ցարիզմի ու նրա կամակատար հետադեմ մամուլի Հայկական հարցում ոչ հայանպաստ կողմնորոշման, ռուս առաջադեմ մտավորականները և ժողովրդական լայն զանգվածները մարդասիրական հոգատար իրենց ձեռքը մեկնեցին, օգնեցին ու սատար եղան դժբախտության մեջ հայտնված արևմտահայ փախստականներին: Այնքան հզոր ու ազդեցիկ էր ժողովրդա-

կան Ռուսաստանի ծայնը, որ նրա բարերար ազդեցության ներքո երկրում ստեղծվեց հայանպաստ մթնոլորտ, ձևավորվեց հայամետ հասարակական կարծիք: Այդ նրա ծայնն էր, որ համահունչ հայ ժողովրդի օգնության կանչին պարտադրեց ցարական կառավարությանը 1896 թ. դեկտեմբերի 11-ին հրամանագիր հրապարակելու արևմտահայ փախստականներին նյութական օգնություն ցույց տալու համար հանգանակություն սկսելու մասին:

Այդ հրամանի հրապարակման պահից սկսած՝ ռուս հասարակությանը համակած անորոշությունն ու անտարբերությունը իսպառ վերացավ, հավելեց կառավարական կաշկանդող սառույցը: Արևմտահայերին օգնության գործը անձայրածիր Ռուսաստանի բոլոր տարածքներում ընդունեց համաժողովրդական բնույթ, հասարակության բոլոր շերտերը, ամենահեռավոր խուլ վայրերի գյուղական խրճիթները, իշխանական պալատները և կայսերական ընտանիքի անդամները իրենց դռները բացեցին ու իրենց մասնաբաժինն ունեցան հայ փախստականների օգնության բարի ու մարդասիրական գործում: Ամմասն չմնաց ռուսական ուղղափառ եկեղեցին: Այդ հարցում նրա կոչմակը եղավ Ի. Ս. Կրոնշտադսկին, որը հեռավոր Կրոնշտադտից հնչեցրեց իր բարի ու ազնիվ ծայնը, ռուս հասարակայնությանը հայ ժողովրդին օգնության կանչով:

Ռուսաստանում ձևավորված հայամետ հասարակական կարծիքը ավելի ազդեցիկ դարձավ հետագայում: Խորհրդային Ռուսաստանի նորաստեղծ կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի մասին դեկրետի ընդունումը այդ հզոր ազդակի արդյունքն էր, որը, սակայն, չիրականացավ միջազգային բարդ ու հայ ժողովրդի համար ստեղծված աննպաստ պայմանների հետևանքով:

Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հայամետ գործունեության արդյունքում պատմական Հայաստանի մի փոքր տարածքի վրա ձևավորվեց Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը: Չլինե՞ր այդ օգնող ձեռքը՝ հայ ժողովրդի այս հատվածը ևս կարժանանար արևմտահայության ողբերգական ճակատագրին:

Ալնհայտ ճշմարտություն է այն, որ եթե չլինե՞ր Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը, չէր լինի նաև նոր, անկախ Հայաստանի Հանրապետությունը:

## Գլուխ V Ծանոթություններ

1. ՏՅ. “Геноцид армян в Османской империи”.
2. “Русь”.
3. “Газета Луч”.
4. “Русский листок”.
5. “СПб. ведомости”.
6. “Неделя”.
7. “Русская беседа”.
8. “Братская помощь пострадавшим в Турции армянам”, М., 1898.
9. “Русское слово”.
10. “Биржевые ведомости”.
11. “Новости”.
12. «Մշակ»:
13. Պատմություն ՍԳ. Հնչակյան կուսակցության, Հ. Ա., Բեյրութ, 1948:
14. «Արար»:
15. “Русские ведомости”.
16. “Наше время”.
17. “Луч”.
18. “Казбек”.
19. «Արարատ»:
20. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 31, Յ. 1, Գ. 357, Թ. 21:
21. “Тифлисский листок”.
22. “Иверия”.
23. Թառոյան Կ. Ջ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-տնտեսական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Երևան, 2001:
24. “Русская мысль”.
25. “Новое время”.
26. Մելքոնյան Ա. Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
27. “День”.
28. “Вестник Европы”.
29. ЦГИА Арм ССР, Ф. 256, оп. 1. д. “Питательный пункт Российского Общества Красного Креста”, лл. 1-2.
30. “Мир божий”.
31. АВПРИ, Ф. “Политархив”.
32. «Դրոշակ»:
33. «Մուրճ»:
34. “Новое обозрение”.
35. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ., ց. 1, Գ. 1:

36. “Православный собеседник”.
37. “Кавказ”.
38. “Закавказье”.
39. ՅՔՓՊԱ, ֆոնդ 4033, ց. 1, գ. 1247:
40. “Сибирский вестник”.
41. “Карс”.
42. ЦГИАМ, Ф. 1297, оп. 3., д. 1118.
43. “Русское богатство”.
44. Ш. В. Мегрелидзе, Закавказье в русско—турецкой войне 1877—1878 гг., Тбилиси, 1972.
45. «Պրոլետարիատի կռիվը»:
46. “Рабочая правда”.
47. “Путь правды”.
48. «Յոկոտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 1960:
49. «Բանբեր Երևանի համալսարանի»:
50. Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները, 1917—1923 թթ., Երևան, 1999:
51. Կոստանդյան Է., Սկրտիչ Խրիմյան, Հասարակական քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:

19-րդ դարի 70-ական թվականներին եվրոպական տարածքների կորստից հետո Օսմանյան կայսրությունը ներքին սոցիալական ցնցումներից ու ազգամիջյան բախումներից թուլացած ու մասնատման տագնապներից ահաբեկված՝ առավել ամուր, քան երբևէ, իր վայրի մոլուցքով պինդ կառչեց ասիական տիրույթներից՝ ձգտելով այնտեղ պահպանել ու հզորացնել իր տիրապետությունը:

Բալկաններից Թուրքիայի վտարումով այդ տարածաշրջանում Արևելյան հարցը մասամբ իրեն սպառեց ու նրա ծանրության կենտրոնն այժմ տեղափոխվեց ավելի արևելք, ուր նոր ուժով բորբոքվեցին եվրոպական տերությունների հակամարտությունները ու այդ շրջապատույտում ներգրավվեց Հայկական հարցը: Տերություններն իրենց շահերին ծառայեցնելով ու ձևախեղելով նրա բովանդակությունը, այն վերածեցին իրենց դիվանագիտական խարդախ խաղերի խաղաքարտի՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, սուլթանի վրա ճնշում գործադրելու միջոցով նրանից հարմար ու շահավետ արտոնություններ կորզելու համար: Տերությունների ուժգնացող ճնշմանը դիմագրավելու և թուլացած կայսրությունը վերակենդանացնելու նպատակով Աբդուլ Համիդ 2-րդը իր առջև խնդիր դրեց թուրքալեզու և թուրքացեղ ժողովուրդների միավորումով ստեղծել համաթուրանական պետություն, կանխել նրա անկման ընթացքը: Նրա ծրագրած նոր ստեղծվող պետության մեջ մահմեդական ցեղերի միավորման ճանապարհին, Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի կազմում եղած թուրքալեզու և թուրքացեղ ժողովուրդները իրարից բաժանող սահմանագծում ընկած էր Արևմտյան Հայաստանը, հետևաբար հայ ժողովրդին սպառնում էր անխուսափելի ֆիզիկական բնաջնջման, մահմեդական համատարած ծովում տարրալուծվելու վտանգը: Իր առջև դրված այդ հրեշավոր նպատակի իրագործման համար սուլթանը 1878 թ. Բեռլինի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ու հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու ստանձնած պարտավորությունները կենսագործելու փոխարեն երկու տասնամյակի ընթացքում հակահայկական քաղաքականության առավել ուժգնացումով տնտեսապես քայքայեց, հողազրկեց ու թուլացրեց արևմտահայության ներուժը: Վարչատարածքային վերաձևումներով ժողովրդագրական վճռական փոփոխության ենթարկեց արմատական հայկական վիլա-

յեթների ազգային կազմը: Հայահոծ շրջանները կամայական կտրատումով վերամիավորվեցին խիտ բնակեցված մահմեդական տարածքներին, արհեստականորեն նվազեցվեց հայ բնակչության տեսակարար կշիռը: Բորբոքելով մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունը, սուլթանը զինեց նրանց, ուղղեց արևմտահայերի դեմ: Այդ ընթացքում թուրքական իշխանությունները հատուկ միտումով ժամանակավորապես նեղացրին հպատակ ժողովուրդների դեմ մղվող պայքարի ճակատը: Մինչ այդ քրդական ամհնազանդ ցեղերին հնազանդեցնելու դաժան գործողություններն աստիճանաբար մեղմվեցին: Սուլթանը որոշեց սիրաշահելով իր կողմը գրավել աշիրեթապետներին: Քրդական վերնախավը, ինչպես նաև թալանի ու ասպատակության սովոր ավազակաբարո քրդական ցեղերը, որոնք ընդգրկվեցին կազմավորվող համիդիե զնդերում, դարձան արևմտահայության դեմ համատարած պատերազմ հայտարարած արյունարբու սուլթանի հայակործան մեքենայի շարժիչ ուժը:

Աբդուլ Համիդ 2-րդը, պաշտպանելով ու հետևողականորեն գործադրելով հպատակ քրիստոնյա ժողովուրդների բռնի ձուլման ու ֆիզիկական բնաջնջման իր նախորդների ջարդարարական քաղաքականությունը, վճռական հարձակման անցավ արևմտահայության դեմ:

1. 19-րդ դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում և թուրքական կայսրության հայահոծ վիլայեթներում սկսեցին մոլեգնել պարբերաբար կրկնվող արևմտահայերի մասսայական կոտորածները: Այդ հարցում իրենց հանցագործ անտարբերությամբ ու թողտվությամբ սուլթանին հովանավորում ու գոտեպնդում էին արևմտյան տերությունները, իսկ նրանցից ոմանք բացահայտ պաշտպանում էին սուլթանին:

Աբդուլ Համիդ 2-րդը խորամանկությամբ թեքվելով մերթ մեկ, մերթ մյուս տերության կողմը, նրանց դարձնում էր իր հովանավորը՝ մյուսի դեմ պայքարելու համար, նրանց համագործակցությամբ ու լռին համաձայնությամբ սուլթանը կոտորում էր հայ բնակչությանը: Այդ ճանապարհով 1894–1896 թթ. թուրքական գազանությունների զոհ դարձան 300–350000 անմեղ հայ գյուղացիներ, արհեստավորներ, մտավորականներ, ծերունիներ ու երեխաներ:

2. Պատմական այդ ժամանակահատվածում որակական փոփոխություններ տեղի ունեցան արևմտահայության ազատագրական պայքարի ձևերի ու մեթոդների մեջ: Ամենից առաջ նախկինում հույսը արևմտյան տերությունների սին ու կեղծ խոստումների հետ կապելու, կրավորական սպա-

սումների փոխարեն աստիճանաբար իր ուղին հարթեց զինված ակտիվ պայքարի գաղափարը: Արևմտահայերը, նկատի ունենալով Բալկանյան ժողովուրդների, ինչպես նաև արևելահայերի ազատագրական պայքարի փորձը, համոզվեցին, որ կարելի է ազատագրվել բռնապետական լծից միայն արտաքին հզոր ուժի օգնությամբ: Սակայն ո՞ր երկիրը, որ պետությունը էր լինելու այդ ուժը: Այդ հարցում հայկական տարբեր քաղաքական ուժեր ունեին տարբեր կողմնորոշում: Հայ ազգային քաղաքական կուսակցությունների որոշ անհեռատես գործիչներ, անտեսելով ու մոռացության մատնելով պատմության դասերը՝ հայ ժողովրդի ազատագրությունը կապում էին արևմտյան տերությունների օգնության հետ, սակայն վերջիններս թուրքիայում ունենալով ռազմաքաղաքական ու տնտեսական շահեր, հանդես էին գալիս թուրքիայի թիկունքում, ընդդեմ հայ ժողովրդի ազատագրական ձգտումների, իսկ թուրքական իշխանությունները, քաջալերվելով նրանց այդ վարքագծից՝ ավելի համարձակ էին գործում ու դաժանությամբ ճնշում հայ ժողովրդի ազատագրական ելույթները, պատճառում մարդկային մեծ զոհեր:

Արևմտահայ աշխատավոր մասսաները և առաջադեմ մտավորականները շարունակում էին հավատարիմ մնալ հայ ժողովրդի ազատագրական շարժման ռուսական կողմնորոշմանը, որը իմաստավորվել էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման և դրա արդյունքում արևելահայության գոյության համար Ռուսաստանի կազմում բարենպաստ պայմանների ստեղծմամբ: Պատմական այդ իրադարձության իրական ու ճշմարիտ փորձով իմաստնացած արևմտահայությունը գործնականորեն գիտակցում էր այն ուժը, այն պետությունը, որի օգնությամբ հնարավոր է ազատագրվել թուրքական լծից: Այդ լուսավառ հավատով պայքար մղելով թուրքական բռնապետության դեմ՝ արևմտահայերը ձգտում էին վերամիավորվել Ռուսաստանի հովանու ներքո գտնվող արևելահայության հետ ու կանգնել զարգացման նոր ուղու վրա:

Անկախ այդ փուլում ցարիզմի ոչ հայանպաստ կողմնորոշումից, հայ ժողովուրդն առավել քան երբևէ, երբ ահագնանում էր նրա ֆիզիկական բնաջնջմանը միտված արտաքին վտանգը, հավատարմությամբ հետևում էր մեր նախնիների նախանշած ու պատմության դաժան փորձություններով իմաստավորված ուղուն, ռուսական կողմնորոշմանը, որին մշտապես սիրով ու ջերմությամբ էին վերաբերվում մեր ազգի իմաստուն այրերը:

3. 19-րդ դարի 90-ական թվականներին կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացման խորապատկերի վրա ավելի պարզորոշ ընդգծվեցին վաճառահանման շուկաների և հումքի նոր բազաների ձեռքբերման տերությունների գաղութային թալանչիական գիշատիչ հատկանիշները: Մեծ տերությունների միջև պայքարը առավել սրվեց այդ հիմքի վրա: Այս փուլում նրանց պայքարի մրցասպարեզը դարձավ Մերձավոր Արևելքը, ուր իրենց գաղութային նպատակների համար սկսեցին շահարկել Հայկական հարցը: Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան ու ցարիզմը թուրքիայի, ինչպես նաև միմյանց միջև հարաբերությունների ընթացքում Հայկական հարցը վերածեցին առ ու ծախի առարկայի, որպեսզի իրենց համար նպատակահարմար պահին աճուրդի հանելով հայկական արյունը՝ թուրքիայից խլեին իրենց համար նոր արտոնություններ: Հայկական հարցը, օրհասական վիճակում գտնվող արևմտահայության ճակատագիրը բնավ չէր մտահոգում այդ տերություններին:

1878 թ. Բեռլինի կոնգրեսում Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի և Իտալիայի կառավարությունների ձեռքով գրվեց արևմտահայության դառնադետ ճակատագրի ամենասև էջը: Ահաբեկված Փոքր Ասիայում Ռուսաստանի ազդեցության հետագա ուժեղացման հեռանկարից ու ձգտելով ոչնչի հավասարեցնել հաղթական պատերազմով Ռուսաստանի ձեռքբերումները և կանխել նրա առաջընթացը դեպի Փոքր Ասիա, նրանք իրենց պաշտպանության տակ վերցնելով թուրքիային՝ դրանով հավերժացրին արևմտահայության վրա թուրքական բռնապետության լուծը:

Օգտվելով թուրքիայում ունեցած իր ազդեցությունից, Անգլիան պաշտպանելով սուլթանին ու մեծ խոստումներ տալով նրան, սկզբում զավթեց Կիպրոս կղզին, ապա Եգիպտոսը և այդ հողի վրա, թուրք-անգլիական հարաբերությունների աստիճանական սառեցման պայմաններում, խարդախ ու եսամոլ անգլիական կառավարությունը, Հայկական հարցը օգտագործելով որպես թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց, մոռացության մատնեց արևմտահայության նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

19-րդ դարի 80-90-ական թվականներին Եվրոպայի կենտրոնում բարձրացող ու հզորացող Գերմանիան, ձգտելով համաշխարհային տիրապետության, Մերձավոր Արևելքը դարձրեց մյուս մեծ տերությունների դեմ վճռական պայքարի հիմնական մրցասպարեզ: Սուլթանի բարյացակամությունը նվաճելու նպատակով Վիլհելմ 2-րդի կառավարությունը թշնամանքով

տրամադրվեց արևմտահայության, ընդհանրապես Հայկական հարցի նկատմամբ: Հայկական կոտորածների ամենաեռուն պահին, հովանավորելով թուրքիային, Գերմանիան դարձավ արևմտահայության ողբերգության գլխավոր ու հիմնական մեղսակիցը:

Ռուս-թուրքական պատերազմների ընթացքում թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրության դրոշը պարզած ցարիզմը պատմության փորձով հանգզվեց, որ ռուսական բանակների հաղթական պատերազմի արդյունքներին տիրանում են թուրքիայի թիկունքում ընդդեմ Ռուսաստանի հանդես եկած Եվրոպական տերությունները, ուստի անկարող լինելով դեպի Փոքր Ասիայի խորքերը իր պատմական առաջընթացն ապահովել պատերազմական գործողություններով թուրքիայի մասնատմամբ, որոշեց դրան հասնել շրջանցիկ, խաղաղ ճանապարհով, այն է՝ սուլթանի վրա ազդեցության հաստատմամբ ամրապնդվել Մերձավոր Արևելքում:

Բեռլինի 1878 թ. կոնգրեսին հաջորդած ժամանակահատվածում ցարիզմը հրաժարվելով թուրքիայի մասնատման իր ավանդական քաղաքականությունից՝ դարձավ նրա տարածքային ամբողջականության պաշտպանը: Մերձավոր Արևելքում ցարիզմի քաղաքական այդ նոր շրջադարձը տրամագծորեն հակադիր էր թուրքական լծից ազատագրվելու արևմտահայության ձգտումներին: Ավելին, իր երկրի ներսում հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումները դաժանությամբ ճնշող ցարիզմը չէր կարող հովանավորել ու օգնել թուրքական բռնապետության դեմ ազատագրական պայքարի ելած արևմտահայերին: Դրանից բացի ցարիզմին առավելապես մտահոգում էր Հայկական հարցի առթիվ իր Անդրկովկասի սահմանների հարևանությամբ անապահով վիճակի ստեղծման վտանգը: Տագնապահարույց էր այն, որ Եվրոպական որևէ տերություն, շահարկելով Հայկական հարցը, կարող էր հաստատվել Ռուսաստանին հարևան Արևմտյան Հայաստանի որևէ տարածքում, որը կդառնար Ռուսաստանի համար վտանգավոր օջախ: Մեր կարծիքով այդ գործոնով էր պայմանավորված քննարկման փուլում սուլթանի նկատմամբ թողտվությունը և Հայկական հարցում ցարիզմի ցուցաբերած անտարբերությունը:

Հայկական հարցում ցարիզմի նոր կողմնորոշումը, որը բնավ էլ չէր արտահայտում ռուս ժողովրդի հավաքական կամքն ու ցանկությունները, անցյալում առանձին պատմաբանների կողմից համիրափի վերագրվել է նաև ռուս ժողովրդին:

4. Ցարական պաշտոնական շրջանները և նրանց խոսափող հետադեմ մամուլի օրգանները, պաշտպանելով Հայկական հարցում ցարիզմի քաղաքական նոր ընթացքը, թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ որդեգրեցին անբարենպաստ դիրքորոշում: Չնայած որոշ ողջամիտ քաղաքական գործիչներ ու տարիների փորձ ունեցող հեռատես դիվանագետներ գտնում էին, որ Ռուսաստանը պետք է շարունակի հավատարիմ մնալ թուրքահպատակ քրիստոնյաների, նաև արևմտահայության հարցում իր ավանդական կողմնորոշմանը, սակայն նրանց ձայնը լսելի չեղավ:

Պաշտոնական մամուլի շուրջ համախմբված հետադեմ լրագրողներն ու հրապարակախոսները գիտակցաբար, քաղաքական նպատակներով խեղաթյուրում էին Հայկական հարցի բովանդակությունը: Քողարկելով Մերձավոր Արևելքում ռուս-անգլիական մրցապայքարի ճշմարիտ բովանդակությունը, այն վերագրում էին Հայկական հարցին: Ցանկանալով Հայկական հարցում ապակողմնորոշել ռուսական հասարակայնությանը, նրանք ծգնում էին հիմնավորել, որ Անգլիան, բարձրացնելով Հայկական հարցը, ցանկանում է սրել ռուս-թուրքական հարաբերությունները, թուրքիային հրահրել պատերազմի Ռուսաստանի դեմ: Ուրեմն, եզրակացնում էին նրանք, Հայկական հարցը Ռուսաստանին հակառակորդ տերությունների ձեռքին հակառուսական գործողություններ ձեռնարկելու միջոց է, ուստի ռուս հասարակայնությանը՝ արևմտահայերի դեմ ուղղելու նպատակով թուրքական իշխանությունների ու արևմտյան թուրքֆիլ ուժերի հետևողականությամբ կեղծ ու մտացածին լուրեր էին տարածում «հայկական անկարգությունների», հայ հեղափոխականների «դաժանությունների», հայերի «ազրեսիվության» ու մահմեդականների դեմ նրանց «նախահարձակ» լինելու մասին: Դեռ ավելին, կովկասահայության դեմ երկրում անվստահության ու անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու նպատակով նրա դեմ ծավալեցին լայնամասշտաբ գաղափարական պայքար:

Պաշտոնական ու նրան հետևող իշխանամետ մամուլի օրգանները արևելահայերին սկսեցին մեղադրել անջատողականության ու հակապետական գործողությունների, Կովկասի իշխանության մարմիններում մեծ թիվ կազմելու, երկրամասի արդյունաբերությունն ու առևտուրը իրենց ձեռքը կենտրոնացնելու մեջ: Հայ ժողովրդի ու Հայկական հարցի մասին արտահայտում էին հակասական, երբեմն իրարամերժ մտքեր ու տեսակետ-

ներ, կատարում ոչնչով չհիմնավորված ենթադրություններ, օրինակ՝ հայկական թագավորության ստեղծման մասին նրանց կողմից շրջանառության մեջ դրված կեղծ վարկածը: Պախարակում էին հայերին, վիրավորելով նրանց ազգային արժանապատվությունը, անվանարկում էին «անխիղճ», «անհոգի առևտրական» նվաստացուցիչ պիտակներով:

Ցարական պաշտոնական շրջանները, գործելով կառավարության արտաքին քաղաքականությանը համահունչ ու ձգտելով հիմնավորել նրա կողմնորոշումը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անիրագործելի լինելու խնդրում, միտումնավոր կերպով բարենորոգումները, մասնավորապես ինքնավարության հարցը, համարում էին հակադիր ու վտանգավոր ձեռնարկում՝ ուղղված Ռուսաստանի շահերի դեմ: Կեղծ ու մտացածին մտավարժանքներով տագնապ էին բարձրացնում, որ նման ինքնավարությամբ Անդրկովկասի սահմանների հարևանությամբ Ռուսաստանի դեմ ստեղծվում է վտանգավոր մի տարածք, որտեղից անգլիացիները իրենց ձեռքը կմեկնեն դեպի Կովկասի ռուսական տիրույթները:

Պաշտոնական ու իշխանամետ մամուլի կողմից արևմտահայության ազատագրական պայքարի, մասսայական կոտորածների ու այսպես կոչված հայկական «արտոնյալ մարզի» մասին տարածած սուտ ու սխալ լուրերի ու հերյուրանքների հետևանքով ռուս հասարակական սոցիալական որոշ շերտեր անտարբերությամբ, հաճախ նաև կասկածանքով էին վերաբերվում Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականներին:

5. Ի հակադրություն ցարիզմի ու նրա ձայնավող հետադեմ մամուլի, ռուս առաջադեմ մտավորականները, գիտնականները, գրողները, արվեստագետներն ու հրապարակախոսները, ռուս առաջադեմ հասարակայնությունը, մտահոգված լինելով հայ ժողովրդի ճակատագրով, քողազերծ անելով ու սուր քննադատության ենթարկելով ցարական պաշտոնական շրջանների ու նրանց ուղեկից հետադեմ մամուլի հակահայկական գործելակերպի շարժառիթներն ու նրանց հետապնդած քաղաքական նպատակները, վճռականորեն պնդում ու պահանջում էին իշխանություններից՝ Հայկական հարցում շարունակել հավատարիմ մնալ ավանդական կողմնորոշմանը, հետևապես պաշտպանել ու հովանավորել արևմտահայերին: Նրանք իրավացիորեն մեղադրում էին արևմտյան տերություններին, ինչպես նաև ցարիզմին հայկական զանգվածային կոտորածների կազմակերպիչ սուլթանին հովանավորելու և նրա ջարդարարական գործողությունների հանդեպ

4. Ցարական պաշտոնական շրջանները և նրանց խոսափող հետադեմ մամուլի օրգանները, պաշտպանելով Հայկական հարցում ցարիզմի քաղաքական նոր ընթացքը, թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ որդեգրեցին անբարենպաստ դիրքորոշում: Չմայած որոշ ողջամիտ քաղաքական գործիչներ ու տարիների փորձ ունեցող հեռատես դիվանագետներ գտնում էին, որ Ռուսաստանը պետք է շարունակի հավատարիմ մնալ թուրքահպատակ քրիստոնյաների, նաև արևմտահայության հարցում իր ավանդական կողմնորոշմանը, սակայն նրանց ծայրը լսելի չեղավ:

Պաշտոնական մամուլի շուրջ համախմբված հետադեմ լրագրողներն ու հրապարակախոսները գիտակցաբար, քաղաքական նպատակներով խեղաթյուրում էին Հայկական հարցի բովանդակությունը: Քողարկելով Մերձավոր Արևելքում ռուս-անգլիական մրցապայքարի ճշմարիտ բովանդակությունը, այն վերագրում էին Հայկական հարցին: Ցանկանալով Հայկական հարցում ապակողմնորոշել ռուսական հասարակայնությանը, նրանք ճգնում էին հիմնավորել, որ Անգլիան, բարձրացնելով Հայկական հարցը, ցանկանում է սրել ռուս-թուրքական հարաբերությունները, թուրքիային հրահրել պատերազմի Ռուսաստանի դեմ: Ուրեմն, եզրակացնում էին նրանք, Հայկական հարցը Ռուսաստանին հակառակորդ տերությունների ձեռքին հակառուսական գործողություններ ձեռնարկելու միջոց է, ուստի ռուս հասարակայնությանը՝ արևմտահայերի դեմ ուղղելու նպատակով թուրքական իշխանությունների ու արևմտյան թուրքոֆիլ ուժերի հետևողականությանը կեղծ ու մտացածին լուրեր էին տարածում «հայկական անկարգությունների», հայ հեղափոխականների «դաժանությունների», հայերի «ազրեսիվության» ու մահմեդականների դեմ նրանց «մախահարձակ» լինելու մասին: Դեռ ավելին, կովկասահայության դեմ երկրում անվստահության ու անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու նպատակով նրա դեմ ծավալեցին լայնամասշտաբ գաղափարական պայքար:

Պաշտոնական ու նրան հետևող իշխանամետ մամուլի օրգանները արևելահայերին սկսեցին մեղադրել անջատողականության ու հակապետական գործողությունների, Կովկասի իշխանության մարմիններում մեծ թիվ կազմելու, երկրամասի արդյունաբերությունն ու առևտուրը իրենց ձեռքը կենտրոնացնելու մեջ: Հայ ժողովրդի ու Հայկական հարցի մասին արտահայտում էին հակասական, երբեմն իրարամերժ մտքեր ու տեսակետ-

ներ, կատարում ոչնչով չհիմնավորված ենթադրություններ, օրինակ՝ հայկական թագավորության ստեղծման մասին նրանց կողմից շրջանառության մեջ դրված կեղծ վարկածը: Պախարակում էին հայերին, վիրավորելով նրանց ազգային արժանապատվությունը, անվանարկում էին «անխիղճ», «անհոգի առևտրական» նվաստացուցիչ պիտակներով:

Ցարական պաշտոնական շրջանները, գործելով կառավարության արտաքին քաղաքականությանը համահունչ ու ձգտելով հիմնավորել նրա կողմնորոշումը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անիրագործելի լինելու խնդրում, միտումնավոր կերպով բարենորոգումները, մասնավորապես ինքնավարության հարցը, համարում էին հակադիր ու վտանգավոր ձեռնարկում՝ ուղղված Ռուսաստանի շահերի դեմ: Կեղծ ու մտացածին մտավարժանքներով տազնապ էին բարձրացնում, որ նման ինքնավարությամբ Անդրկովկասի սահմանների հարևանությամբ Ռուսաստանի դեմ ստեղծվում է վտանգավոր մի տարածք, որտեղից անգլիացիները իրենց ձեռքը կմեկնեն դեպի Կովկասի ռուսական տիրույթները:

Պաշտոնական ու իշխանամետ մամուլի կողմից արևմտահայության ազատագրական պայքարի, մասսայական կոտորածների ու այսպես կոչված հայկական «արտոնյալ մարզի» մասին տարածած սուտ ու սխալ լուրերի ու հերյուրանքների հետևանքով ռուս հասարակական սոցիալական որոշ շերտեր անտարբերությամբ, հաճախ նաև կասկածանքով էին վերաբերվում Ռուսաստանում ապաստանած հայ գաղթականներին:

5. Ի հակադրություն ցարիզմի ու նրա ծայնափող հետադեմ մամուլի, ռուս առաջադեմ մտավորականները, գիտնականները, գրողները, արվեստագետներն ու հրապարակախոսները, ռուս առաջադեմ հասարակայնությունը, մտահոգված լինելով հայ ժողովրդի ճակատագրով, քողազերծ անելով ու սուր քննադատության ենթարկելով ցարական պաշտոնական շրջանների ու նրանց ուղեկից հետադեմ մամուլի հակահայկական գործելակերպի շարժառիթներն ու նրանց հետապնդած քաղաքական նպատակները, վճռականորեն պնդում ու պահանջում էին իշխանություններից՝ Հայկական հարցում շարունակել հավատարիմ մնալ ավանդական կողմնորոշմանը, հետևապես պաշտպանել ու հովանավորել արևմտահայերին: Նրանք իրավացիորեն մեղադրում էին արևմտյան տերություններին, ինչպես նաև ցավազրիզմին հայկական զանգվածային կոտորածների կազմակերպիչ սուլթանին հովանավորելու և նրա ջարդարարական գործողությունների հանդեպ

ցուցաբերած հանցագործ անտարբերության համար: Առանձնակի վճռականությամբ պարսավում էին Գերմանիայի ու Անգլիայի կառավարություններին, քողագերծ էին անում նրանց դիվանագիտական խարդավանքները և ընդգծում, որ նրանք հայկական արյան շուրջը սուլթանի հետ իրենց հանցագործ սակարկություններով հագուրդ էին տալիս իրենց գիշատիչ, թալանչիական նկրտումներին:

6. Հետևողականորեն լուսաբանելով 1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո արևմտահայության համար ստեղծված իրավիճակը, բացահայտելով Հայկական հարցը մասսայական կոտորածներով լուծելու, Հայաստանը հայաթափելու, արևմտահայերին ֆիզիկական բնաջնջման ենթարկելու թուրքական իշխանությունների հրեշավոր ծրագրի մութ ծալքերը, նրանք 90-ական թվականներին ուժգնացող հակահայկական քաղաքականությունը, զանգվածային ջարդերն իրավացիորեն դիտում էին ոչ թե մահմեդական ծայրահեղականների կրոնական մոլեռանդության բռնկման արդյունք, որ իբր կոտորածները սկսվում էին կայսրության ծայրագավառներում քրդական ցեղերի ու մահմեդական խառնամբոխի մոլեռանդության բռնկումով, ինչպես ներկայացնում էին թուրքական իշխանություններն ու նրանց հետևությամբ կրկնում էին ու հիմնավորում ցարական պաշտոնական շրջաններն ու հետադեմ մամուլը, այլ հանդիսանում է սուլթանի գլխավորած ջարդարար կառավարության նպատակաուղղված ծրագրի իրագործումը, որ մասսայական կոտորածներով ցանկանում են վերացնել սուլթանի ու Բ. Դռան կարծիքով թուրքիայի ներքին գործերին արտաքին միջամտության հիմնական պատճառը հանդիսացող Հայկական հարցը:

7. Ռուս առաջադեմ մտավորականները, մերժելով իշխանամետ ուժերի ու խավարամիտ մամուլի այն մտայնությունը, թե հայկական զանգվածային կոտորածների ընթացքում Ռուսաստանը թուրքիայի հետ իր հարաբերությունները չվատացնելու համար պետք է պահպանի չեզոքություն, ընդգծում էին, որ Հայկական հարցում Ռուսաստանն ունի կարևոր դերակատարում, ուստի նա պարտավոր է վճռականորեն գործել և պարտադրել սուլթանին անհապաղ դադարեցնել անզեն բնակչության կոտորածը, որովհետև Ռուսաստանը թուրքապատակ քրիստոնյաների հանդեպ ունի պատմական առաքելություն: Բացի այդ, բոլոր ռուս-թուրքական պատերազմների ընթացքում արևմտահայերը գրկաբաց էին ընդունում իրենց հողի վրա ոտք դրած ռուս զինվորներին, ցույց տալով համակողմանի օգնություն և իրենց

ռուսասիրության համար մշտապես ենթարկվել են մահմեդականների վրեժխնդրությանը, տալով անհամար մարդկային զոհեր:

Ռուս առաջադեմ գործիչները Հայկական հարցում Ռուսաստանի ակտիվ միջամտության անհրաժեշտությունը հիմնավորում էին նաև նրանով, որ Ռուսաստանի կազմում էր գտնվում հայ ժողովրդի մի ստվար հատվածը: Նրանք, պաշտպանելով արևելահայերին խավարամիտ ուժերի հարձակումներից ու մերժելով հայ ժողովրդին նրանց կողմից հանիրավի վերագրվող կեղծ ու ստահող մեղադրանքները, ընդգծում էին, որ համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում մեծ ներդրում ունեցող հայ ժողովրդին բնորոշ են խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, որ հայերին չի կարելի բնութագրել իր պատմական հայրենիքից կտրված ու ինքնապաշտպանության հատուկ բնազդով օժտված իր գոյությունը պաշտպանելու համար առևտրով զբաղվող պատահական անհատների գործունեությամբ, որոնք հաճախ արժանանում են ռուս հասարակության հակակրանքին, այլ անհրաժեշտ է տեսնել իր հայրենիքում ստեղծագործ աշխատանքով զբաղված համակրելի արտաքինով հայ աշխատավորին, ընտանիքի ազնիվ հորը և միայն նրանով կարծիք կազմել հայերի ու հայ ժողովրդի մասին:

8. Ռուս առաջադեմ մտավորականները և ժողովրդական զանգվածները առանձին սիրով ու հիացմունքով էին լուսաբանում ու մասսայականացնում արևմտահայերի ազատագրական ընդվզման հերոսական դրվագները, առանձնապես Սասունում և Ջեյթունում մղած մարտերում հայ մարտիկների անվախ խիզախումները: Միաժամանակ արդարացիորեն քննադատում ու պարսավում էին հայ քաղաքական կուսակցություններին և առանձին գործիչներին, որոնք Հայկական հարցի վրա արևմտյան տերությունների ուշադրությունը գրավելու նպատակով բազում անխոհեմ արարքներով հայ ժողովրդի դեմ հարուցում էին թուրք ջարդարարների մոլեգնությունը, որից ճարակորեն օգտվում էր Աբդուլ Համիդ 2-րդը ու ավելի էր ընդարձակում ու սաստկացնում ջարդերը:

Ռուս առաջադեմ մտավորականները իրավացի էին՝ գտնելով, որ թուրքական վարչակարգի գոյության պայմաններում բարենորոգումներ իրագործել անհնարին էր, ուստի արևմտահայերի ողբերգական վիճակին կարելի էր վերջ դնել միայն թուրքական կայսրության մասնատումով:

Քննադատելով մայիսյան բարենորոգումների, մասնավորապես հայկական ինքնավար մարզի հարցում հետադեմ ուժերի ժխտողական կողմնորո-

շունը; առաջադեմ մտավորականները իրավացիորեն ցույց էին տալիս, որ հայկական ինքնավարությունը ոչ թե հակադրվում, այլ համահունչ է ու օգտակար Ռուսաստանի դեպի Փոքր Ասիա առաջընթացին, որ առողջ բանականությամբ գիտակցված հայկական ինքնավարությունը երբեք էլ չի կարող վնասել Ռուսաստանի շահերին, որովհետև Չայաստանը նույնիսկ ամբողջությամբ ազատագրվելու դեպքում կրկին ծագելու է դեպի Ռուսաստանը, միավորվելու Արևելյան Չայաստանի հետ:

Մենք բոլորովին էլ այն կարծիքին չենք, որ արևելահայությունը Ռուսաստանի կազմում գերծ էր սոցիալական ճնշումներից ու շահագործումից, ընդհակառակը, հայ ժողովուրդը ենթարկվում էր ցարական բյուրոկրատիայի կամայականություններին ու բռնություններին: Չայ առաջադեմ մտավորականները մշտապես ենթարկվում էին ցարական իշխանությունների հալածանքներին ու հետապնդումներին: Սակայն թուրքական բռնակալության հայակուլ քաղաքականության համեմատությամբ, երբ նրա կողմից կյանքի էր կոչվել ու գործադրվում էր արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ծրագիրը, ցարական տիրապետությունը անշուշտ գերադասելի էր, մանավանդ որ տրվում էր կյանքի ու գույքի ապահովության երաշխիք, և ամենակարևորը՝ վերանում էր ֆիզիկական բնաջնջման վտանգը:

9. Չայկական հարցում ռուսական հասարակայնության առաջադիմական ու հետադիմական թևերի միջև գաղափարական սուր բախման, մամուլում ծավալված լայն քննարկումների, հայ ժողովրդի պատմության, գրականության լուսաբանման, արևմտահայության ողբերգական վիճակի բացահայտման ու Ռուսաստանում ապաստանած գաղթականների անհույս վիճակի, թշվառ կացության ու քաղաքական նպատակներով արևելահայերի դեմ խավարամիտ ուժերի կողմից հարձակումների ամբողջական մեկնաբանությամբ ժողովրդական լայն զանգվածները հասու եղան Չայկական հարցի էությանը, որից հետո նրանց համակեց դժբախտության մեջ հայտնված արևմտահայերին նյութական օգնություն ցույց տալու և բարոյական աջակցության մարդասիրական զգացումը:

Ռուս առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանների հայանպաստ գործունեության հետևանքով Արևմտյան Չայաստանում ծավալվող կոտորածների մասին մանրամասն տեղեկությունները տարածվեցին ռուսական կայսրության անձայրածիր տարածքներում, ամենահեռավոր ու խուլ վայրերում: Ալեկոծվեց հասարակական միտքը: Ռուսական հասարա-

կայնության բոլոր սոցիալական շերտերը, նույնիսկ ծայրահեղ աղքատության մեջ գտնվող չքավոր գյուղացիները և բանվորները հեռավոր Կանչատկայում, Արխանգելսկի մարզի Շենկարսկ գյուղում, Սիբիրում, Միջին Ասիայում, Կրոնշտադտում ու Պոլտավայում, Ուրալում ու Պետերբուրգում իրենց վերջին միջոցները նվիրաբերեցին արևմտահայ գաղթականների դրությունը բարելավելու համար: Նյութապես օգնելու արևմտահայերին և նրանց սատարելու հարցը դարձավ ողջ ռուս ժողովրդի, նրա սոցիալական բոլոր շերտերի մտահոգության խնդիրը: Մեկ ամբողջության մեջ միացավ ռուս ժողովրդի հավաքական կամքը, և ձևավորվեց երկրում հայանպաստ հասարակական կարծիք:

Այնքան ազդու և այնքան հզոր էր արևմտահայերին օգնության կանչին արձագանքած ռուս ժողովրդի ձայնը, որ նրա բարերար ազդեցության ներքո պաշտոնական մամուլի մի շարք օրգաններ բարյացակամությամբ տրամադրվեցին հայ ժողովրդի նկատմամբ: Նման գործունեության սկիզբը դրեց «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը:

Անկախ ցարիզմի ու նրա կամակատար հետադեմ մամուլի Չայկական հարցում ոչ հայանպաստ կողմնորոշման, ռուս առաջադեմ մտավորականները և ժողովրդական լայն զանգվածները իրենց հոգատար ու մարդասիրական ձեռքը մեկնեցին, օգնեցին ու սատար եղան դժբախտության մեջ հայտնված արևմտահայ փախստականներին: Այնքան հզոր ու ազդեցիկ էր ժողովրդական Ռուսաստանի ձայնը, որ նրա բարերար ազդեցության ներքո երկրում ստեղծվեց հայանպաստ մթնոլորտ, ձևավորվեց հայանետ հասարակական կարծիք: Այդ նրա ձայնն էր, որ համահունչ հայ ժողովրդի օգնության կանչին, պարտադրեց ցարական կառավարությանը 1896 թ. դեկտեմբերի 11-ին հրամանագիր հրապարակելու արևմտահայ փախստականներին նյութական օգնություն ցույց տալու համար հանգանակություն սկսելու մասին:

Այդ հրամանի հրապարակման պահից սկսած՝ ռուս հասարակայնությանը նախապես համակած անորոշությունն ու անտարբերությունը իսպառ վերացան, հալվեց կառավարական կաշկանդող սառույցը: Արևմտահայերին օգնության գործը ողջ Ռուսաստանում ընդունեց համաժողովրդական բնույթ, հասարակության բոլոր սոցիալական շերտերը, գյուղական խրճիթները, իշխանական պալատները և կայսերական ընտանիքի անդամները իրենց դռները լայնորեն բացեցին ու իրենց մասնաբաժինն ունեցան հայ

փախստականների օգնության բարի ու մարդասիրական գործում: Անմասն չմնացին ռուսական եկեղեցին ու Կարմիր խաչի ընկերությունը: Այդ հարցում նրա կոչնակը եղավ Ի. Ս. Կրոնշտադսկին, որը հեռավոր Կրոնշտադտից հնչեցրեց իր բարի ու ազնիվ ձայնը՝ հայ ժողովրդին օգնության կանչով:

Հանգանակությամբ հավաքված նյութական միջոցները կենտրոնացնելու և ճիշտ տեղաբաշխելու համար «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Լուչ», «Սիբիրսկիյ վեստնիկ», «Նեդելյա», «Նովոստի», «Ռուսսկիե վեդոմոստի», «Մշակ» լրագրերի խմբագրություններին կից ստեղծվեցին հատուկ բաժիններ, ուր հավաքված միջոցները առաքվում էին Կովկասի իշխանություններին արևմտահայ գաղթականներին բաժանելու համար:

Պրոֆեսիոնալ և սիրողական թատրոնները, ինչպես նաև շրջիկ թատերական խմբերը իրենց ներկայացումներից ստացված գումարը հաճախ ամբողջությամբ նվիրաբերում էին արևմտահայերի օգնության ֆոնդին, որով մերկ ու սովալլուկ փախստականների համար տեղերում ձեռք էին բերվում սնունդ ու հագուստ, մի շարք վայրերում նրանց համար բացվեցին ճաշարաններ, ինչպես նաև հիվանդանոցներ:

10. Ռուսական առաջադիմական մտքի ներկայացուցիչները արևմտահայերին օգնելու նպատակով հրապարակեցին երկու ծավալուն ժողովածուներ՝ «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թ. տերությունների միջամտությունը» և «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին», որոնք իրոք դարձան եղբայրական օգնություն, ոչ միայն Ռուսաստանում ապաստանած հայ փախստականների, այլ նաև Արևմտյան Հայաստանում տուժածների համար: Այդ ժողովածուների վաճառքից գոյացած գումարը հանձնվեց Կովկասի իշխանություններին՝ արևմտահայ փախստականներին օգնելու, իսկ մի մասը առաքվեց Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Ա. Ջինովսկին՝ տեղերում տուժածներին օգնելու և որբերի համար ապաստարաններ հիմնելու համար:

Շնորհիվ ռուս ժողովրդի բարոյական աջակցության ու նյութական անշահախնդիր օգնության տասնյակ հազարավոր արևմտահայեր, փրկվելով թուրքական ջարդարարների յաթաղանից՝ ապաստան գտան ռուսական հյուրընկալ հողում:

11. Հայ ժողովրդի դառնաղետ ու ողբերգական ճակատագիրը մշտապես իր վրա է բևեռել ռուս ժողովրդի լավագույն ու ազնիվ զավակների ուշադրությունն ու հուզել է նրանց պատմության բոլոր շրջադարձերի ընթացքում:

Ռուսաստանում ձևավորված հայանպաստ հասարակական կարծիքը ավելի ազդեցիկ դարձավ հետագայում: Ռուսաստանում հաստատված նորաստեղծ խորհրդային երիտասարդ կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի մասին հատուկ դեկրետի ընդունումը այդ հզոր ազդակի արդյունքն էր: Սակայն նրանում նախատեսված միջոցառումները, որոնք արևմտահայերին հնարավորություն կընձեռեին իրենց պատմական հայրենիքում նոր կյանք կառուցել, չիրականացավ՝ գերտերությունների դիվանագիտական խարդավանքների, ինչպես նաև միջազգային բարդ ու հայ ժողովրդի համար ստեղծված աննպաստ պայմանների պատճառով:

Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հայանպաստ գործունեության հետևանքով պատմական Հայաստանի մի փոքր տարածքի վրա ձևավորվեց Հայաստանի խորհրդային հանրապետությունը, ուր արևելահայերի հետ միասին իրենց նոր կյանքը կերտեցին թուրքական ջարդարարներից հրաշքով փրկված արևմտահայ բեկորները:

Դարերի արհավիրքներ տեսած ու բազում դժվարություններ հաղթահարած հայ ժողովրդի համար, եթե չլիներ ռուս ժողովրդի մարդասիրական օգնող ձեռքը, հայ ժողովրդի արևելյան հատվածը ևս կարժանանար արևմտահայության ողբերգական ճակատագրին: Ուստի ամենայն վստահությամբ կարող ենք ընդգծել ու հիմնավորել, որ եթե չլիներ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը, չէր լինի նաև նոր, անկախ Հայաստանի Հանրապետությունը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### I. Սկզբնաղբյուրներ, արխիվային ֆոնդեր

1. Архив внешней политики Российской империи, (АВПРИ), фонд “Политический архив”, д. 407, 563, 710, 985, 1625, 1630, 3431, 3433, 3435, 3439, 3440, 3441, 3443, 3448, 3449, 3447, 3455, 3460, 3495, 3442, 3248, 1629, 1627, 1636, 1631, 1632, 3442, 1628, д. 220, “Инструкции А. И., Нелидову, 1896”, д. 118, “Отчеты министерства иностранных дел, 1899”, д. 2117, “Разные документы и общая переписка за 1897—1898 гг.”, д. 154, “Турция. Армянские события 1895—1896 гг.”, фонд “Главный архив”, д. 119, фонд “Армянское дело”, д. 142, фонд “Канцелярия”, д. 24, 26, фонд “Секретный архив”, д. 78, фонд “Посольство в Константинополе”, д. 3184, 3176, 3194, фонд “Турецкий стол”, д. 2882, фонд “ГА. 11—3”.
2. Центральный государственный военно—исторический архив в г. Москве, (ЦГВИАМ), фонд “2000”, д. 749, 991, фонд “ВУА”, д. 56518, 366, 78758.
3. “Центральный государственный архив в г. Москве (ЦГИАМ).
4. ՀՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 1, 48, 21, գ. 42, 66, 28, 357, 256, ֆոնդ «Քաղվածքներ», գ. 34, 50, 1:
5. Հասարակական քաղաքական կազմակերպությունների ու փաստաթղթերի ուսումնասիրման պետական կենտրոնական արխիվ (ՀԲԿՓՈՒՊԿԱ), ֆոնդ 4033, գ. 1247:
6. ՀՀԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, գ. 129, 134, 139, 133, 134, 132, 141, 73, 145, 146, 154, 157, 153, 151, 170, 199, 269, 262, 395, 416:

## II. Պարբերական մամուլ

1. «Արարատ» (ամսագիր), գիրք 11, 12, 1897 թ., գիրք 12, 1899 թ.:
2. «Ալիք» (ամսագիր, Շտուտգարտ), բ. տարի, թիվ 11, 18:
3. «Արոր» (ամսագիր), 1910, թիվ 6—7:
4. «Արաքս» (ամսագիր), Ս. Պետերբուրգ, 1894—1895, գ. 1:
5. «Անահիտ» (ամսագիր), Փարիզ, 1889, թիվ 4:
6. «Արձագանք», 1883, թիվ 3, 1889, թիվ 36, 1891, թիվ 3, 1894, թիվ 107, 135, 1895, թիվ 12, 19:
7. «Արևելք», 1889, թիվ 403:
8. «Բյուզանդիոն», 1909, 23/2:
9. «Դրոշակ», 1896, թիվ 13, 1905, թիվ 2, 17, 18:
10. «Երկրի ձայն», 1906, թիվ 10:
11. «Իրավունք», 1906, թիվ 14:
12. «Լրաբեր» (ամսագիր), 1946, թիվ 11, 12, 1964, թիվ 7, 1989, թիվ 1:
13. «Կոհակ», 1909, թիվ 17:
14. «Կարմիր դրոշակ», 1919, թիվ 13:
15. «Հնչակ», 1889, թիվ 3, 1891, թիվ 12, 34, 1892, թիվ 4, 1867, 14/10:
16. «Հորիզոն», 1913, թիվ 7, 19:
17. «Մասիս», 1867, 14/10:
18. «Սուրճ» (ամսագիր), 1896, թիվ 5, 1897, թիվ 5, 2—3, 7—8, 11—12, 1898, թիվ 10—11, 1899, թիվ 5, 6, 1900, թիվ 1, 2, 3, 1901, թիվ 10, 1905, թիվ 8:
19. «Մեղու», 1881, թիվ 128, 129, 138:
20. «Մշակ», 1877, թիվ 166, 1878, թիվ 49, 59, 134, 156, 189, 1879, թիվ 8, 26, 69, 189, 207, 1880, թիվ 5, 64, 67, 70, 138, 152, 161, 1882, թիվ 216, 1885, թիվ 137, 1892, թիվ 11, 1893, թիվ 8, 1895, թիվ 9, 23, 33, 35, 43, 48, 91, 98, 100, 116, 200, 1896, թիվ 9, 18, 43, 53, 82, 43, 104, 109, 120, 125, 1897, թիվ 1, 6, 7, 12, 19, 20, 21, 22, 24, 33, 36, 37, 40, 1898, թիվ 198, 223, 224, 225, 236, 1907, թիվ 23/10:
21. «Նոր դար», 1894, թիվ 213, 1895, թիվ 25:
22. «Պատմության հարցեր», թիվ 1, 1978:
23. «Սովետական մանկավարժ», թիվ 1, 1987:
24. «Նորք» (հանդես), 1926, գիրք 1, 2:
25. «Նոր կյանք» (ամսագիր), 1897, թիվ 19:

26. «Նոր հասանք» (ամսագիր), 1913, գիրք 1–5:
27. «Պատմաբանասիրական հանդես», 2000, թիվ 1:
28. «Պրոլետարիատի կռիվը» (ամսագիր), 1908, թիվ 2–3:
29. «Ուազմիկ», 1906, թիվ 68:
30. «Փորձ» (ամսագիր), 1878, թիվ 7–8, ր. ռուսերեն:
31. “Альманах Россия и Азия”, 1899, кн. 2.
32. “Армянский вестник”, 1916, № 4, 5, 6, 10.
33. “Армяне и война”, 1917, № 11, 12.
34. “Вестник Европы”, 1889, кн. 205, 1894, кн. 2, 1895, кн. 4, 7, 8, 9, 11, 12, 1897, кн. 3, 1898, кн. 3, 1913, кн. 12, 13, 1917, кн. 7, 8.
35. “Вестник Московского государственного императорского университета”, 1895, т. 4, 6.
36. “Вестник Ереванского государственного университета”, 1988, № 2–3.
37. “Вестник архивов Армении”, 1979, № 3.
38. “Голос минувшего”, 1916, № 2–3.
39. “Древний восток”, 1896, № 3.
40. “Жизнь и искусство”, 1897, т. 12, 15.
41. “Землеведение”, 1895, т. 11.
42. “Известия министерства иностранных дел”, 1913, кн. 1, 11.
43. “Исторические записки”, 1946, т. 8.
44. “Историк–марксист”, 1928, 1930.
45. “Красный архив”, 1931, т. 3, 1933, т. 4–5.
46. “Летопись”, 1916, кн. 4.
47. “Еженедельник”, 1897, кн. 49.
48. “Мир божий”, 1892, кн. 2, 1894, кн. 10, 1895, кн. 11, 12, 14, 1896, кн. 1, 2, 1897, кн. 1, 12, 14, 1898, кн. 8, 9, 10, 1899, кн. 3, 9, 11, 12, 1900, кн. 7, 8, 1905, кн. 11, 12.
49. “Новый восток”, № 7, 1925.
50. “Новая и новейшая история”, № 6, 1959.
51. “Наблюдатель”, 1895, кн. 6.
52. “Новое звено”, 1914, кн. 1–15, 40.
53. “Новая жизнь” 1915, кн. 2.
54. “Новый восток”, 1924, т. 6.
55. “Новое слово”, 1896, кн. 2, 3, 1897, кн. 3, 7, 1915, кн. 2.

56. “Православный собеседник”, 1897, кн. 7.
57. “Русский архив”, 1892, кн. 12, 1895, кн. 14, 1896, кн. 3.
58. “Русская беседа”, 1895, кн. 2, 1896, кн. 7, 8, 9, 1899, кн. 12, 1902, кн. 4, 1915, кн. 10.
59. “Русская Мысль”, 1890, кн. 11, 1891, кн. 9, 1892, кн. 7, 1894, кн. 3, 12, 1895, кн. 4, 5, 10, 11, 1896, кн. 1, 2, 3, 4, 5, 6, 9, 10, 11, 12, 1897, кн. 1, 3, 4, 7, 11, 12, 14, 1898, кн. 11, 12, 1899, кн. 3, 1905, кн. 11, 1906, кн. 1, 12, 1908, кн. 4, 1909, кн. 8, 1914, кн. 2, 4, 1915, кн. 9.
60. “Русское богатство”, 1897, кн. 2, 11, 1896, кн. 10.
61. “Русский вестник”, 1890, кн. 206.
62. “Северный вестник”, 1894, кн. 4, 1897, кн. 22.
63. “Русский труд”, 1898, кн. 40.
64. “Биржевые ведомости”, 1895, № 39, 115, 258, 259, 260, 264, 280, 292, 291, 293, 298, 300, 311, 312, 317, 318, 1896, № 26, 28, 32, 34, 40, 78, 86, 242, 248, 261, 281, 1897, № 201, 257, 274, 280, 295, 16, 198, 243, 1898, № 194, 218, 235, 280.
65. “Варшавский дневник”, 1895, № 29.
66. “Голос” 1878, № 34, 1879, № 220, 1880, № 217, 1895, № 61, 62, 1897, № 55, 72, 236.
67. “Газета лучь”, 1896, № 176, 142, 1897, № 67.
68. “Гражданин”, 1895, № 176, 142, 1896, № 4, 14, 67, 72, 112, 178, 228, 1897, № 112, 138.
69. “День” 1897, № 12, 14, 12.
70. “Ըրջ”, 1897, № 16, 17, 19.
71. “Закавказье”, 1905, № 97, 1908, № 42, 47, 48, 72, 75.
72. “Иверия”, 1898, № 170.
73. “Карс”, 1897, № 2, 6, 1899, № 11.
74. “Кавказ”, 1882, № 42, 241, 1881, № 236, 1897, № 31, 125.
75. “Казбек”, 1897, № 7.
76. “Кавказское слово”, 1918, № 272.
77. “Кремль”, 1895, № 17, 1896, № 136, 1899, № 6, 27, 47.
78. “Киевлянин”, 1895, № 339.
79. “Лучь”, 1895, № 76, 86, 88, 87, 85, 92, 132, 284, 1896, № 10, 27, 44, 46, 88, 76, 91, 271, 295, 302.

80. "Московские ведомости", 1895, № 38, 86, 191, 192, 210, 214, 215, 271, 291, 287, 296, 325, 1896, № 39, 56, 91, 47, 125, 224, 275, 157, 257, 325, 326, 1897, № 141, 175, 253, 255, 1898, № 112.
81. "Неделя", 1894, № 7, 1895, № 7, 13, 31, 21, 42, 45, 46, 41, 72, 217, 232, 260, 347, 36, 274, 1896, № 4, 17, 31, 47, 74, 1897, № 29, 31, 32, 41, 1898, № 227, 1900, № 7, 1906, № 44.
82. "Новости", 1893, № 330, 1895, № 12, 37, 38, 72, 84, 189, 259, 269, 1899, № 37, 118, 272.
83. "Новое время", 1894, № 7072, 7092, 7027, 1895, № 6912, 6772, 7014, 7033, 7078, 6868, 1896, № 7069, 22745, 7071, 7128, 7134, 7148, 1897, № 7424, 7445, 7412, 7427, 1898, № 8140, 8241, 1913, № 3117, 3110.
84. "Наше время", 1896, № 32.
85. "Новое обозрение", 1896, № 4221, 4353.
86. "Правда", 1914, № 76.
87. "Путь правды", 1914, № 10.
88. "Приазовский край", 1898, № 171, 1915, № 1, 149.
89. "Правительственный вестник", 1878, № 112, 1895, № 124, 174, 166, 215, 187, 1896, № 54, 214, 189.
90. "Русское обозрение", 1895, № 128, 1896, № 7.
91. "Россия", 1895, № 14, 1897, № 72, 84, 175, 1899, № 137.
92. "Русский листок", 1895, № 5, 305, 1896, № 5, 31, 88, 360, 1897, № 66, 86, 213, 224.
93. "Русские ведомости", 1895, № 31, 1896, № 158, 178, 1897, № 11, 23, 24, 26, 17, 27, 70, 78, 102, 112, 117, 118, 119, 182, 215, 352, 1898, № 127, 1915, № 101.
94. "Рабочая правда", 1913, № 113.
95. "Русское слово", 1895, № 211, 226, 228, 317, 1896, № 25, 29, 30, 216, 222, 229, 249, 250, 290, 296, 1897, № 14, 27, 131, 139, 291, 1912, № 7.
96. "Россия и Азия", 1897, № 1, 1898, № 15—16, 19—20, 1899, № 15—16, 10, 1902, № 1—2.
97. "Русское обозрение", 1895, № 128.
98. "Русь", 1895, № 14, 111, 112, 113, 114, 213, 214, 217, 221, 253, 1896, № 44, 229, 235, 1897, № 9, 24, 44, 50, 106, 235, 1898, № 15, 17, 1899, № 278.
99. "Свет", 1895, № 43, 1896, № 12, 1897, № 194, 1899, № 32.
100. "Сибирский вестник", 1895, № 41, 42, 17, 1896, № 40, 50, 74, 75, 78, 92, 1897, № 35, 48, 22, 17, 75, 141.
101. "С.-Петербургские ведомости", 1880, № 301, 1890, № 75, 39, 212, 1894, № 14, 347, 1895, № 13, 18, 35, 39, 42, 69, 74, 101, 108, 179, 260, 222, 265, 267, 172, 258, 264, 298, 291, 272, 266, 268, 296, 303, 300, 308, 305, 347, 1896, № 8, 14, 15, 28, 22, 47, 52, 31, 74, 114, 227, 243, 237341, 345, 1897, № 9, 12, 13, 14, 24, 21, 29, 32, 2, 4, 7, 20, 10, 5, 6, 20, 30, 38, 55, 62, 75, 78, 87, 89, 100, 107, 110, 92, 166, 167, 145, 171, 181, 124, 55, 42, 150, 222, 228, 234, 128, 100, 240, 234, 221, 278, 168, 250, 259, 236, 117, 284, 274, 231, 350, 1898, № 9, 234, 297, 298, 183, 184, 251, 227, 302, 341, 1899, № 33, 57, 151, 1900, № 41, 107
102. "Тифлисский листок", 1894, № 14, 274, 1896, № 63, 1895, № 39, 132, 1897, № 239.
103. "ცნობის ფურცელი", 1898, № 107.

### III ზოლვაკრიტიკონები

1. Милютин Д. А., Дневник, т. 3, М., 1948.
2. Милюков П. Н., Воспоминания, т. 3, М., 1948.
3. Бисмарк О., Мысли и воспоминания, т. 1, М., 1940.
4. Витте Ю. С., Воспоминания, т. 1, М., 2001.
5. Ламздорф В. Н., Дневник, 1894—1896, М., 1991.
6. Из дневника В. Н. Ламздорфа, "Вопросы истории", 1977, № 6.
7. საყუან რ., ზოლვები, 1960:

#### IV Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), сборник (составитель, отв. ред. автор предисловия В. Микаелян, Ер. 1995).
2. Армянский сборник (Ю. Веселовский, А. Дживелегов, Кара—Мурза С.), М., 1911.
3. Англо—германское сближение в 1898 г., “Красный архив”, 1931.
4. Акты собранные кавказской археологической комиссией, т. 10, Тифлис, 1895.
5. “Братская помощь пострадавшим в Турции армянам”, М., 1898.
6. “Будущее устройство Армении (по официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующие реформы в Армении), Петроград, 1915.
7. Геноцид армян в Османской империи, документы и материалы под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.
7. Դիվան հայոց պատմության, Հարստահարությունները Տաճկահայաստանում, զիրք ժգ, վավերագրեր, 1801—1888 թթ., Թիֆլիս, 1915:
8. Документы из секретного архива министерства иностранных дел, М., 1922.
9. Die Grosse Politik Europäischer Kabinette 1871—1914, Sammlung der diplomatischen Akten des auswärtigen Amtes, Bd. 10, 11, 12, Berlin, 1924—1926.
10. Внешняя политика России XIX начала XX века (документы российского министерства иностранных дел), М., 1925.
11. История международных отношений 1871—1972, ч. 1, М., 1924.
12. Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959.
13. Колониальный восток, М., 1924.
14. Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին, Ժնն, 1907:
15. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, «Թուրքական աղբյուրներ», հ. IV, Երևան, 1972:
16. Международные отношения в эпоху империализма, серия 3, т. 1, М., 1931.

17. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896.
18. «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960:
19. Русско—германские отношения 1873—1914 гг., М., 1922.
20. Сборник дипломатических документов, Петроград, 1915.
21. Турецкий сборник, СПб., 1909.
22. Տեղեկագիր գավառական հարստահարությանց, Կ. Պոլիս, 1876:
23. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828—1929 թթ., Երևան, 1972:
24. “Сборник материалов по русско—турецкой войне 1877—1878”, вып. 1, СПб., 1896.
25. “Русские писатели об Армении”, Ереван, 1946.

#### V Մենագրություններ

1. Արրահամյան Ա. Գ., Էջեր Անդրկովկասի ժողովուրդների և հայ—ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:
2. Արզումանյան Մ., Դարավոր զոյամարտ, Երևան, 1989:
3. Արզումանյան Մ., Հայաստան 1914—1917, Երևան, 1969:
4. Աղոնց Ե., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:
5. Ա-դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912:
6. Աճառյան Հր., Տաճկահայոց հարցի պատմություն, Նոր Նախիջևան, 1919:
7. Ակնունի Էդ., Կովկասյան վերքեր, Ժնն, 1903:
8. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 1, Բազու, 1916, հ. 2, Էջմիածին, 1922, հ. 3, Վենետիկ, 1926:
9. Ավետյան Մ., Յիսնամեայ հուշամատեան հայ ազատագրական շարժման 1870—1920 թթ. և զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954:

10. Արծրունի Գր., Արևելյան հարցը, Թիֆլիս, 1876:
11. Արծրունի Գր., Թուրքահայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894:
12. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
13. Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 1981:
14. Ամֆիտեատրով Ա., Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906:
15. Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ, Գահիրե, 1927:
16. Անտոնյան Ա., Ընդարձակ պատմություն Պակկանյան պատերազմի, Կ. Պոլիս, 1912:
17. Անանիկյան Բ., Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը, Երևան, 1974:
18. Ամիրյան Ա., Դաշնակցության ճգնաժամը, Վիեննա, 1907:
19. Բյուրատ Սմբատ, Արյունի ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911:
20. Բերնշտայն է., Հայկական տանջանքները և Եվրոպան, Ժնև, 1906:
21. Բինոն Ռոնե, Հայերու բնաջնջումը, Կ. Պոլիս, 1919:
22. Բադալյան Խ., Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում, Երևան, 1955:
23. Բայրամյան Լ., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Երևան, 1982:
24. Բրանդեն Գ., Հայաստանը և Եվրոպան, Ժնև, 1903:
25. Գաբրիելյան Ս., Հայկական ճգնաժամն և վերածնունդ, Բոստոն, 1905:
26. Գաբրիելյան Խ., Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ, Պեյրուս, 1962:
27. Գանգրունի Հր., Հայ հեղափոխությունը Օսմանյան բռնապետության դեմ (1880-1910), Պեյրուս, 1973:
28. Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978:
29. Գեղամյան Եղ., Հայերի ազատագրական շարժումները ժԹ դարում կամ հայկական հարցի 5-րդ շրջանը, Բագու, 1915:
30. Գեղամյան Եղ., Ռուս բյուրոկրատիան և հայերը, Բագու, 1917:
31. Սապահզուլյան, Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915:

32. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947:
33. Դիլոյան Վ. Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
34. Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965:
35. Եազճեան Գ., Աբդուլ Համիդ 2-րդ Կարմիր սուլթան, Բեյրութ, 1980:
36. Զարևանդ, Միացյալ անկախ Թուրանիա, 1926:
37. Թառոյան Կ., ժողովրդական շարժումները Սասունում 1890-1904, Երևան, 1966:
38. Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դ. վերջին և XX դարի սկզբներին, Երևան, 1980:
39. Թառոյան Կ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Երևան, 2001:
40. Թունայան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցին, Լոնդոն, 1900:
41. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, ք. մաս, Թիֆլիս, 1882:
42. Թոփչյան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, 1-ին մաս, Թիֆլիս, 1909:
43. Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, Պոսթոն, 1947:
44. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
45. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության բուրժուազիան, Երևան, 1977:
46. Իզմիրլյան Մ., Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Պեյրուս, 1962:
47. Լյուդվիգ դը Քոնտանսոն, Հայկական հարցին վերջին փուլը, Կ. Պոլիս, 1911:
48. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
49. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
50. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա., Փարիզ, 1934:
51. Խաժակ, Հարկերը Տաճկաստանում, Բագու, 1905:
52. Խաժակ, Հայերը Թուրքիայում, Բագու, 1907:

53. Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը, Երևան, 1977:
54. Խաթանասյան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965:
55. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:
56. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Երևան, 1978:
57. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, 1980:
58. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. I, Երևան, 1982, գ. II, Երևան, 1983:
59. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999:
60. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:
61. Կիտուր Ա., Հնչակյան գլխավոր ցույցերը, Բեյրութ, 1954:
62. Կիտուր Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Բեյրութ, 1949:
63. Համբարյան Ա., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914 թթ.), Երևան, 1965:
64. Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990:
65. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Երևան, 1999:
66. Հովհաննիսյան Ա. Գ., Հայ-ռուս օրիննադատի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921:
67. Հովհաննիսյան Ա. Գ., Ղրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, 1957, գ. 2, Երևան, 1959:
68. Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:
69. Ղազարյան Հ. Մ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967:

70. ճանկուլյան Հ. Կ., Յիշատակներ Հայկական ճգնաժամին, Կ. Պոլիս, 1913:
71. Մխիթարյան Ա., Հայկական հարցը, Փարիզ, 1968:
72. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը XIX դ վերջին, Երևան, 1968:
73. Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, մաս 1, Կ. Պոլիս, 1919:
74. Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965:
75. Մկրտչյան Լ., Ձեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ., Երևան, 1995:
76. Մելքոնյան Ա. Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:
77. Միքայելյան Ք., Հեղափոխականի մտքեր, Ժնև, 1906:
78. Նավասարդյան Վ., Նեղուցներ. Հայ դատը, Գահիրե, 1947:
79. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:
80. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002:
81. Ներսիսյան Մ. Գ. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982:
82. Ներսիսյան Մ. Գ. Պատմության կեղծարարները, Երևան, 1998:
83. Նշկյան Հ., Առաջին կայծեր, 1930:
84. Շահպազեան Յ., Քուրդո-Հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911:
85. Շահիրկյան Հ., Հայկական ռեֆորմները Թուրքիայում, 1926:
86. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, հ. Դ, Բեյրութ, 1975:
87. Չոպանյան Ա., Հայաստանը Թուրք լուծին տակ, Պոստոն, 1918:
88. Պողոսյան Ս, Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1969:
89. Պողոսյան Ս. Կ., Քրդերը և հայկական հարցը, Երևան, 1991:
90. Պողոսյան Հ. Մ., Սասունի պատմությունը, Երևան, 1985:
91. Պողոսյան Հ. Մ., Ձեյթունի պատմությունը, Երևան, 1968:

92. Պարսամյան Վ. Ա., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, Երևան, 1978:
93. Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան, 1927:
94. Ռուբեն, Հայ-թուրքական կնճիռը, Գահիրե, 1924:
95. Ռուբեն, Հայաստան միջցամաքային ուղիներու վրա, Բեյրութ, 1948:
96. Ռեկյուլ Էլիզե, Լազիստան, Հայաստան, Քուրդիստան, Փոքր Ասիա, Միջագետք և Պաղեստին, Վաղարշապատ, 1893:
97. Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963:
98. Սիմոնյան Հ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:
99. Սիմոնյան Հ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
100. Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
101. Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948:
102. Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրութ, 1937:
103. Սարուխան Ա., Հայկական հարցը և ազգային սահմանադրությունը Թուրքիայում 1860-1910, Թիֆլիս, 1912:
104. Սասունի Կ., Քուրդ ազգային շարժումները և հայ քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1969:
105. Վարդանյան Հ., Արևմտահայության ազատագրության հարցը, և հայ հասարակական քաղաքական հոսանքները, Երևան, 1967:
106. Վարանդյան Մ., Հ. Յ. Ղազնակցության պատմություն, հ. 1, Պարիզ, 1932, հ. 2, Գահիրե, 1950:
107. Տաշեան Վ. Հ. Յակոբոս, Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին պատմական-ազգագրական հարևանցի ակնարկ մը, Վիեննա, 1921:
108. Տարոնցի Գլակ, Ապստամբ Սասունը, Ժնև, 1903:

109. Տեր-Վարապետյան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մեջ, Վ. Պոլիս, 1911:
110. Րաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1895:
111. Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը թուրք-քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:
112. Քարամյան Կ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրինաչափության հարցի շուրջը, Երևան, 1969:
113. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927:
114. Օրմանյան Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929:
115. Օրմանյան Մ., Թուրքահայ աղետը, Էջմիածին, 1919:
116. Аверьянов Т. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб., 1912.
117. Аверьянов Т. И., Курды в войнах России с Персией и с Турцией, Тифлис, 1908.
118. Алавердянц М., Идеология освобождения турецких армян, Петроград, 1915.
119. Аракелян А. А., Статистика армянского населения Малой Азии, Тифлис, 1913.
120. Амфитеатров А., Повелитель правоверных, СПб., 1903.
121. Амфитеатров А., Армянский вопрос, СПб., 1906.
122. Амфитеатров А., Страна раздора, СПб., 1903.
123. Ананикян И., Судьба Армении, М., 1918.
124. Анучин Н., Берлинский конгресс 1878, СПб., 1912.
125. Алексеев М., Война 1877—1878 гг. на Азиатском театре, М., 1892.
126. Герцог Аргайлский, Ответственность Англии в Восточном вопросе, СПб., 1908.
127. Аветян А., Германский империализм на Ближнем Востоке, М., 1966.
128. Ахов М., Россия и армяне, СПб., 1897.
129. Баранов Е., Война с Турцией и Армения, М., 1915.
130. Бекгульянц Р., По турецкой Армении, Ростов на Дону, 1914.
131. Баев А., Ближний Восток в внешней политике Франции, Киев, 1914.
132. Беляев И., Русско-турецкая война 1877—1878 гг., Москва, 1889.

133. Борьян Б., Армения. Международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928, ч. II, М.—Л., 1929.
134. Бондаревский Г., Багдадская железная дорога и проникновение германского империализма на Ближнем Востоке (1883—1893), Ташкент, 1965.
135. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1989.
136. Бутаев И., Проблемы Турции, М.—Л, 1928.
137. Брандес Георг, Армянский вопрос, М., 1906.
138. Brandenburg E., Von Bismark zum Weltkrieg, Leipzig, 1939.
139. Вандаль А., Армяне и турецкие реформы, СПб., 1908.
140. Вадим Владимир, Кавказские наброски, СПб, 1907.
141. Веселовский Ю., Трагедия турецкой Армении, Москва, 1911.
142. Веселовский Ю., Очерки армянской литературы, и жизни, Армавир, 1906.
143. Веселовский Ю., Очерки армянской литературы истории и культуры, Ереван, 1972.
144. Галеви Э., История Англии в эпоху империализма, т. I, 1937.
145. Гасратян М., Орешкова С., Петросян Ю., Очерки истории Турции, М., 1983.
146. Готлиб В., Тайная дипломатия во время Первой мировой войны, М., 1960.
147. Голобородько И., Старая и новая Турция, М., 1912.
148. Горяинов С., Босфор и Дарданеллы, СПб., 1907.
149. Гарковенко П., Война России с Турцией, М., 1879.
150. Градовский Г., Война в Малой Азии в 1877—1878 году, М., 1878.
151. Граве Б., Внешняя политика царизма в конце XIX и к началу XX веков, Л., 1936.
152. Грен А., Династия Багратидов в Армении, М., 1898.
153. Гурко—Кряжин В., Ближний Восток и державы, М., 1924.
154. Гирс А., Россия и Ближний Восток, СПб., 1906.
155. Гиппиус А., Статистические таблицы вилаетов турецкой империи ближайших к Закавказью, Тифлис, 1889.
156. Гуч Г. П., История современной Европы, М.—Л., 1925.

157. Джемал—паша, Записки 1913—1914. Армянский вопрос, Тифлис, 1923.
158. Данциг Б. М., Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965.
159. Дармштетер П., История раздела Африки (1870—1917), М.—Л, 1925.
160. Дранов Б. А., Черноморские проливы, М., 1948.
161. Евреинов Г., Национальный вопрос на инородческих окраинах России, СПб., 1908.
162. Ерусалимский А. С., Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX века, М.—Л., 1948.
163. Ерусалимский А. С., Бисмарк как дипломат, М., 1940.
164. Элизе Реклю, Турция и Восточный вопрос, Балканские государства, СПб., 1906.
165. Жузе П. К., Положение христиан в мусульманских государствах, Казань, 1897.
166. Жюль Леклерк, Поездка на Арарат. Курды, езиды, армяне и Армянский вопрос, СПб., 1899.
167. Жирарден Э., Позор Европы, СПб., 1897.
168. Жюль Камбон, Дипломат, М., 1946.
169. Жигарев С. А., Русская политика в восточном вопросе, М., 1896.
170. Игнатъев Н. П., Сан—Стефано, Петроград, 1916.
171. Игнатъев Н. П., Записки, Петроград, 1911.
172. История внешней политики России второй половины XIX века, М., 1999.
173. История дипломатии, т. 2, М., 1945.
174. История дипломатии, т. 2, М., 1963.
175. Иоаннисян А. Р., Иосиф Эмин, Ереван, 1945
176. Иоаннисян А. Р., Россия и армянское освободительное движение в 80—ые годы XVIII столетия, Ереван, 1947.
177. Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
178. Комаровский Л. А., Восточный вопрос, М., 1896.
179. Ковалевский Е. П., На горах Араратских, М., 1889.

180. Ковалевский М., Армянский вопрос, Женева, 1906.
181. Кочар М. Р., Армяно—турецкое общественно—политические отношения и армянский вопрос в конце XIX—начале XX веков, Ереван, 1988.
182. Киняпина Н. С., Балканы и проливы во внешней политике России в конце XIX века ( 1878—1898), М., 1994.
183. Киняпина Н. С., Георгиев Б. П., Панченкова М. Т., Шеремет В. И., Восточный вопрос во внешней политике России (конец XVIII—начало XX вв), М., 1978.
184. Киняпина Н. С., Блиев М. И., Дегоев В. В., Кавказ и Средняя Азия во внешней политике России, М., 1984.
185. Киракосян А. Дж., Великобритания и Армянский вопрос (90—ые годы XIX века), Ереван, 1990.
186. Киракосян А. Дж., Армянский вопрос на страницах журналов Великобритании (сер. 90—х гг. XIX века), Научно информационный бюллетень, ЦНИОН, Арм ССР, Ереван, 1980.
187. Карцев В. О., За кулисами дипломатии, т. I, II, М., 1998.
188. Ключников Ю. В., Сабинин И. А., Международная политика новейшего времени в договорах и декларациях ч. I, М., 1925.
189. Карлайль Мак—Коан, Наш новый протекторат, М., 1884.
190. Косик В. И., Время разрыва. Политика России в болгарском вопросе 1886—1894 гг., М., 1993.
191. Кишмишев С. Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884.
192. Кази—бек Ю., Современная Турция, СПб., 1897.
193. Лазарев М. С., Курдистан и курдская проблема, М., 1964.
194. Лазарев М. С., Курдский вопрос (1891—1917), М., 1972.
195. Лазарев Я. Д., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1898.
196. Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 1, 2, М., 1957.
197. Лукин—Антонов Н. М., Очерки по новейшей истории Германии 1890—1914 гг., Л.—М., 1925.
198. Логов Н. М., Армения. Очерки прошлого, природы, культуры, Петроград, 1915.

199. Лузшувейт Е., Турция в годы Первой мировой войны, М., 1966.
200. Линч Ф. Х. Б., Армения. Путевые очерки и этюды, т. 2, Тифлис, 1910.
201. Лависс и Рамбо, История XIX века, т. 7, М., 1939.
202. Линниченко И., Общественная роль армян в прошлом юго—западной Руси, Киев, 1895.
203. Людовик де Контансон, Реформы в азиатской Турции. Армянский вопрос, М., 1914.
204. Лемонон Эрнест, Англия и Германия, М., 1925.
205. Мак—Коль Мелькольм, Султан и державы, СПб., 1897.
206. Манфред А. З., Внешняя политика Франции 1871—1891, М., 1952.
207. Мнацаканян Г., Разрешение армянского вопроса, М., 1914.
208. Мелик—Каракозов Г., Выступление Германии в Турции после великих армянских погромов 1895—1896 г., Тифлис, 1915.
209. Маевский В. Г., Ванский вилает, Тифлис, 1901.
210. Мандельштам А., Русская консульская юрисдикция в Турции и его реформа, СПб., 1906.
211. Мандельштам А., Младотурецкая держава, Петроград, 1915.
212. Миллер А. Ф., Краткая история Турции, М., 1947.
213. Миллер Ф., Очерки новейшей истории Турции, М., 1948.
214. Мезер В. В., Турция, СПб., 1907.
215. Меликсетян В. Г., Зейтунская эпопея, Ереван, 1967.
216. Немирович—Данченко В. И., Год войны, дневник корреспондента 1877—1878 гг. т. III, СПб., 1879.
217. Немирович—Данченко В. И., После войны, М., 1896.
218. Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937.
219. Новикова О. А., Депутат от России, СПб., 1909.
220. Найт Э. Ф., Революционный переворот в Турции, СПб., 1914.
221. Никольский М. В., Клинообразные надписи ванских царей в пределах России, “Древний Восток”, 1896, т. 3.
222. Никольский М. В., Клинообразные надписи Закавказья, “Материалы по археологии Кавказа”, вып. 5, М., 1986.
223. Норден А., Уроки германского империализма, М., 1948.

224. Ошеровский Л., Трагедия армян—беженцев, СПб., 1916.
225. Освобождение Болгарии от турецкого ига, т. II, М., 1961.
226. Покровский М. Н., Дипломатия и войны царской России в XIX в., М., 1923.
227. Папоян С., Армяне, Ростов Дон, 1912.
228. Петросян Ю., Младотурецкое движение, М., 1971.
229. Прежевальский А. М., Вилает Эрзерум, т. II, Тифлис, 1904.
230. Ротштейн Ф. А., Международные отношения в конце XIX в., М., 1960.
231. Ротштейн Ф. А., Захват и закабаление Египта, М.—Л., 1925.
232. Редин Е. К., Диптих Эчмиадзинской библиотеки, СПб., 1891.
233. Рибаченок А. М., Союз с Францией во внешней политике России в конце XIX в., М., 1993.
234. Грязнов Ф., Военное обозрение азиатской Турции, СПб., 1903.
235. Саркисян Е. К., Аграрная политика османского правительства в Западной Армении, Ереван, 1957.
236. Саркисян Е. К., Политика Османского правительства в Западной Армении и великие державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972.
237. Соловьев В. С., Духовные основы жизни, Избр. сочинения, СПб., 1911.
238. Соловьев В. С., Национальный вопрос в России, СПб., 1891.
239. Скальковский К., Внешняя политика России и положение иностранных государств, СПб., 1897.
240. Силин А. С., Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне Первой мировой войны, М., 1976.
241. Степанян С. С., Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.
242. Сказкин С. Д., Конец австро—русско—германского союза 1879—1884, М., 1928.
243. Тарле Е. В., Европа в эпоху империализма 1871—1919 гг., М., 1928.
244. Татищев С., Из прошлого русской дипломатии, СПб., 1890.
245. Татищев С., Из прошлого русской дипломатии. Исторические исследования и политические статьи, СПб., 1911.

246. Тенишев В., Позор цивилизации по поводу турецких дел, СПб., 1897.
247. “Турецкий сборник”, СПб., 1909.
248. Хальгартен Г., Империализм до 1914 года, М., 1961.
249. Хевролина В. И., Власть и общество. Борьба в России по вопросам внешней политики 1878—1894 гг., М., 1999.
250. Хвостов М. В., История дипломатии, т. 2, М., 1957.
251. Хвостов М. В., Ближневосточный кризис 1895—1897 гг., М., 1929.
252. Чалхушян Г., Армянский вопрос и армянские погромы в России, Ростов на Дону, 1905.
253. Чемерзина А., Турция. Ее могущество и распадение, т. I, СПб., 1878.
254. Чихачев П., Письма о Турции, М., 1960.
255. Чихачев П., Великие державы и Восточный вопрос, М., 1970.
256. Широкоград, Русско—турецкие войны (1676—1918 гг.) М., 1993.
257. Шпилькова В. И., Империалистическая политика США в отношении Турции (1914—1920), М., 1960.
258. Шпилькова В. И., Младотурецкая революция 1908—1909 гг. М., 1977.
259. Шебунин А. И., Россия на Ближнем Востоке, Л., 1925.
260. Шуф В., Сворогов (роман в стихах), М., 1898.
261. Яценко А. Я., Русские интересы в Малой Азии, М., 1916.

## VI Հողվածներ

1. Բայրամյան Լ., Հայկական հարցը և Անգլիան 1890—ական թթ., «Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 1:
2. Թառոյան Կ. Զ., Ռուսաստանի օգնությունը արևմտահայերին XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Միջբուհական գիտական աշխատությունների ժողովածու, «Պատմության հարցեր», հ. I, Երևան, 1978:
3. Թունամյան Հ., Հայկական հարցը և իր լուծումը, «Հորիզոն», 1913, թիվ 7—19:

4. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում (19-րդ դարի 90-ական թթ.) ՀՀԳԱԱ «Լրաբեր», 1984, թիվ 1:
5. Կիրակոսյան Ա., Հայկական հարցի գրականության մատենագրություն (1890-1900), ՀՀԳԱԱ հասարակական գիտությունների ինֆորմացիայի կենտրոն, 1983, հ. 9:
6. Կարինյան Ա., Հին Թուրքիան և թուրքահայերը, «Նորք», գիրք 1, 2, 1926:
7. Համբարյան Ա., Արևմտահայությունը և ռուս առաջադեմ հասարակայնությունը, «Սովետական մանկավարժ», 1987, թիվ 1:
8. Մելիքյան Վ., Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և հայկական հարցը, «Պատմաբանասիրական հանդես», 1994, թիվ 1-2:
9. Ներսիսյան Մ. Գ., Հայ-ռուսական քաղաքական հարաբերության մի քանի հարցերի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1994, թիվ 1-2:
10. Ներսիսյան Մ. Գ., Հայոց հարցը, «Պատմաբանասիրական հանդես», 1991, թիվ 2:
11. Ներսիսյան Մ. Գ., Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին, «Պատմության կեղծարարները», Երևան, 1998, էջ 151-163:
12. Պարսամյան Վ. Ա., Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը, «Լրաբեր», 1946, թիվ 11-12:
13. Սահակյան Ռ. Գ., Հայկական հարցը և ֆրանսիան (1870-1890 թթ.) «Պատմաբանասիրական հանդես», 1994, թիվ 1-2:
14. Վարդանյան Հ. Գ., Արևմտահայերի սոցիալ-քաղաքական ճնշման ուժեղացումը Բեռլինի կոնգրեսից հետո, «Պատմաբանասիրական հանդես», 1964, թիվ 3:
15. Փափազյան Ա. Հ., Թուրքական պետական և քաղաքական գործիչները արևմտահայության մասին «Սերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (Թուրքիա)» ժողովածու, հ. 12, Երևան, 1985:
16. Ананун Д., Армянский вопрос в России в кн. "Сборник армянской литературы", Петроград, 1916.
17. Аболтин В., Национальный состав Турецкой республики, "Новый Восток", 1925, № 7.

18. Армянский вопрос, "Тифлисский листок", 1896, № 63.
19. Аванесов С., О некоторых вопросах национальной политики правящих кругов Турции, «Լրաբեր», 1964, թիվ 7:
20. Армяне-переселенцы в России, "СПб. ведомости", 1897, № 3.
21. Англо-русское соперничество в Персии 1890-1901 гг., "Красный архив", т. 56 1933.
22. Арутюнян Г. М., Англия и Армянский вопрос в середине 90-их годов XIX века, "Новая и новейшая история", 1959, № 6.
23. Арутюнян Г. М., Политика Англии в армянском вопросе в 90-их годах XIX века и позиция великих держав "Вестник Ереванского государственного университета, Общественные науки", 1988, № 2-3.
24. Адамов К., К вопросу об исторического перспективах. развития восточного вопроса, "Колониальный Восток", М., 1924.
25. Армения и отношение русского народа, "Правительственный вестник", 1895, № 187.
26. Веселовский Ю., На заре русского армянофильства, "Армянский Вестник", 1916, № 4, 5, 6.
27. И. И. Воронцов-Дашков, Об армянском вопросе, "Армяне и война", 1917, № 11-12.
28. Гольмстрем В., Он не может сказать, "СПб. ведомости", 1896, № 196.
29. Гольмстрем В., Распятые. "СПб. ведомости", 1897, № 274.
30. Гольмстрем В., Цена крови. "Братская помощь", стр. 170.
31. Гладстон В., Речь ( 26-07-1895 г.) в сб. "Положении армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896.
32. Германия и Армения, "Новое время", 1914, 18-ого января.
33. Губер А. А., Международные отношения на Дальнем Востоке (1894-1904), "Ученые записки Тихоокеанского института", т. 1, 1947.
34. Гусин Вячеслав, Судьба Турецкой Армении, "Новая жизнь", 1915, кн. 2.
35. Герье А. И., Призвание России на Востоке, сб. "Братская помощь пострадавшим в Турции армянам", отд. II, М., 1898.
36. Грен А., Армяне, "Киевлянин", 1895, № 97.
37. Гаренко, Об армянах, "Сибирский вестник", 1895, № 17.

38. Долгоруков П. Д., Армянский вопрос и русское общество, "Армянский вестник", 1915, № 16.
39. Дживелегов А. М., Ковалевский М., и Армения, "Армянский вестник", 1916, № 10.
40. Истягин Л., Экспансия Германского империализма в Турции и германо-русские противоречия по армянскому вопросу 1912—1914 гг., в кн. "Из истории агрессивной внешней политики германского империализма", М., 1959.
41. Комаровский Л. А., О реформах в Турции, в сб "Положение Армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896
42. Комаровский Л. А., Новая книга о восточном вопросе, "Вестник Европы", 1896 кн., 7—8
43. Киракосян А., Из истории русско-английских отношений по армянскому вопросу, "Вестник архивов Армении", 1979 № 3.
44. Малькольм Макколь, Ответственность Англии перед Арменией, сб. "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М., 1896.
45. Нарочницкий А. Л., Балканский кризис 1875—1878 гг. и великие державы, "Вопросы истории", 1976, № 11.
46. Никольский М. В., Древняя страна Урарту (Арагат) и следы ассиро-вавилонской культуры на Кавказе, "Землеведение", кн. 11, М., 1895.
47. Плененный народ, "Неделя", 1895, № 41.
48. Пейдж Н. В., Армянский вопрос в середине 90-ых годов XIX века (в книге "Проблемы истории СССР", вып. 9), М., 1974.
49. "Проблемы истории", М., 1974.
50. Реутов Г. И., Из истории захвата Египта Англией, "Вопросы истории", 1958, № 3.
51. Сазонов А. Н., Европа и Турция в Армянском вопросе, "Русская мысль", кн. 11, 12, 1896.
52. Сазонов А. Н., Еще об армянах, "Русская мысль", 1895, № 10.
53. Сафонов П., Крестьянские движения в конце XIX в (1881—1894), "Красный архив", т. 4—5, 1933.

54. Теплов В. А., Князь, А. Б. Лобанов Ростовский, "Русский архив", кн. 3, 1896.
55. Турецкие зверства в Армении, "Русская мысль", 1895, кн. 11.
56. Хвостов В. М., Ближневосточный кризис 1895—1897 гг. "Историк-марксист", т. XVIII, 1928.
57. Хвостов В. М., Проблема захвата Босфора в 90-ых годах XIX века, "Историк-марксист", т. XX, 1930.
58. Хвостов В. М., Россия и Германская агрессия в дни Европейского кризиса 1887 г., "Исторические записки", № 8, 1946.
59. Хвостов В. М., Записки А. И. Нелидова в 1882 г. о занятии проливов, "Красный архив", т. 3 (46 ), 1931.
60. Шувалов П. На Берлинском конгрессе, "Красный архив", т. 59, 1933.

#### VII Այլ լեզուներով

1. Kamuran Gurun, La Dossier Armenien, Istanbul, 1984.
2. Soral Ahmet Hulk, Ermeni Meselessi, Istanbul, 1969.
3. Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselessi, Istanbul, 1976.
4. Genel Kurmay yayni, Tarih Boyunga Ermeni meselessi, Ankara, 1979.
5. Hocoglu Mehmet, Tarihte Ermeni Mezalimi ve Ermeniler, Istanbul, 1976.
6. Sadi Kocas, Tarih Boyunca Ermeniler ve Turk-ermeniler iliskuleri. Ankara, 1967.
7. Yemal Kutay, Karabekir Ermenistan nasıl yok etti, Istanbul, 1956.
8. Bilal Simsir, The Genesis of the Armenian Question, Ankara, 1984.
9. Bilal Simsir, British Documents on Ottoman Armenians, vol. I, Ankara, 1982.
10. Necip Fazil, Ulu Hakan Abdul Hamid han, Istanbul, 1965.
11. Gark I. Turk devlet Hizmetinde Ermeniler 1453—1953, Istanbul 1953.
12. Enver Zija Karal, Osmanli tarih, Cilt. 8, Ankara 1962.
13. Edwin M. Bliss, Turkey and the Armenian Atrocities, London, 1896.
14. The Armenian Genocide Documentation, Vol. I, München, 1987.
15. The Diplomacy of Imperialism, New York, 1951.
16. Cuinet V, La Turque d'Asie, Vol. 2, Paris, 1894.
17. Mandelstam A., Le Societe des Nations et les Puissances devant le Probleme Armenien, Paris, 1926.

18. Mandelstam A., Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917.
19. Brandenburg E., Von Bismark zum Weltrzieg, Leipzig, 1939.
20. Rohrbach P., Die wirtschaftliche Bedeutung Westasiens, Halle, 1902.
21. Schreiner A., Zur Geschichte der Deutschen Aussenpolitik 1871–1945, Teil I, Berlin, 1955.
22. Abott L. F., The Ottoman Turkey, Greece, and the Great Powers, New York, 1917.
23. Freman E., Power in Europe London, 1978.
24. Hassert K., Das Türkische Reich, Tübingen, 1918.
25. Herferich K., Die deutsch-türkische Politik, Berlin, 1912.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՎԱՅԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒԺԳՆԱՅՈՒՄԸ 1880-1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ..... 37

1. Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի վատթարացումը, ազգային ու կրոնական հալածանքների ուժեղացումը ..... 37
2. Արևմտահայության ֆիզիկական բնաջնջմանը միտված միջոցառումները ..... 62
3. «Հայկական համընդհանուր ապստամբության» մասին թուրքական վարկածը որպես միջոց հայկական զանգվածային ջարդերը հիմնավորելու համար ..... 106

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1894-1896 ԹԹ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԶԱՐԴԵՐԸ ՈՌԻՍ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ..... 123

1. Հայկական կոտորածների ժխտման թուրքական վարկածը և ռուս հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշումը ..... 123
2. Հայկական կոտորածների լուսաբանումը ռուսական մամուլում ..... 159
3. Հայկական բարենորոգումների մայիսյան ծրագիրը և տերությունների տարածայնությունների լուսաբանումը ռուսական մամուլում ..... 173
4. Չեյթունահայության հերոսական ընդվզման դրվատումը ռուսական մամուլում ... 200

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԶԱՐԴԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՈՂՄՈՐՈՇՄԱՆ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ ՈՌԻՍԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ..... 217

**ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ**

ՌՈՒԽ ԱՌԱՋԱԴԵՄ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՆՊԱՍՏ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՋԱՏԱԳՈՎ ..... 272

- 1. Ռուս առաջադեմ մտավորականությունը ընդդեմ ոչ հայամետ ուղղությունների . . . 272
- 2. Ռուս առաջադեմ մամուլի և հրապարակախոսության դերը հայանպաստ  
հասարակական կարծիքի ձևավորման գործում ..... 293

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՌՈՒԽԱՍՏԱՆԻ  
ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՌՈՒԽ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՈԼՈՐԸՈՒՄ ..... 362

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 407

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԵԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ  
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 420

**ՄԻՄՈՆՅԱՆ ՊՈՐՈՍ ՄԻՄՈՆԻ**

**ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՌՈՒԽ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ  
19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Հրատարակչության տնօրեն՝	ՄԱՇԱ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԵԱՑԱԿԱՆՅԱՆ
Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝	ԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝	ԼԱԼԱ ՇԱՎԱՐՇԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Կազմի ձևավորող՝	ԱՐԵՎԻԿ ՏԱՐԻԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆ
Սրբագրիչ՝	ՆԱՐԻՆԵ ՇԱԼԻԿՈՅԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գրքում օգտագործված է Մոսկվայի գիտնականների 1898 թ. հրատարակված «Եղբայրական օգնություն» գիտական-գրական ժողովածուի կազմը, որ պատկերում է հարազատներին կորցրած և բնավեր դարձած այրի հայուհուն՝ որք երեխաների հետ:

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,  
չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 28 տպ. մամուլ,  
տպաքանակը՝ 250:

Երևան 375010, Վարդանանց փակուղի 8, «Զանգակ-97» հրատարակչություն  
Դեռ. 54-89-32, ֆաքս 54-06-07, E-mail: zangak@arminco.com,  
URL: www.zangak.am